Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ԲԵՐԴՆԻԿՈՎ ՅԵՎ Ֆ. ՍՎԵՏԼՈՎ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա. մաս.

ՁԵՌՆԱՐԿ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ, ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼ-
ՏԵՏՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.
1926—ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք:

Ա. ԲԵՐԴՆԻԿՈՎ ՅԵՎ Ֆ. ՍՎԵՏԼՈՎ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա. մաս.

ՁԵՌՆԱՐԿ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ, ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼ-ՏԵՏՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ.

3856

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.

1926—ՅԵՐԵՎԱՆ

ՌՈՒՍԵՐԵՆ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

«Քաղաքագիտության» այս Ա. մասի թարգմանությունը կատարված է 1925 թ. հրատարակությունից, որի մեջ որոշ հատվածներ այժմ արդեն հնացած են։ Այս վերաբերում է հատկապես ԽՍՀՄ պետական կառուցվածքին վերաբերող VIII գլխին։ Հարկավոր փոփոխությունները և լրացումները ինչպես այդտեղ, այնպես էլ մյուս տեղերում կատարված է Պետհրատի Խմբագրական Կոլեգիայի կողմից։ Իբրև հատուկ հավելված թարգմանության կցված է Անդրկովկասի Խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության սահմանադրության շարադրանքը, ապա նաև Հայաստանի Կենտ. Գործ. Կոմ. կողմից 1925 թ. մարտին ընդունված Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմանադրության նախագծի շարադրանքը։

Հնարավոր չեղավ այս մասում տալ Հ. Կ. Կ. XIV-րդ համագումարի որոշումները, որոնք իբրև հավելված կկցվեն գրքիս Բ. մասին։

Պետհր. Խմբ. Կոլեգիա

1926 թ. 9 մարտի
Յերևան

Գրառեպվար № 414 (բ.) № 252 Տիրաժ 8,000

Պետհրատի յերկրորդ տպարան—Յերևանում—պ. 2.

ԳԼՈՒԽ I

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

1. Ի՞ՆՉ Է ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքատնտեսությունն այն գիտությունն է, որ ուսումնասիրում ու պարզաբանում է կապիտալիստական հասարակության տնտեսական կյանքի օրենքները։ Այս գիտությունը լուսաբանում է մարդկանց այն հարաբերությունները, որոնք ծագում են կապիտալիստական արտադրության ու փոխանակության հիման վրա։

Կարծիք կա, թե քաղաքատնտեսությունը մի գիտություն է, որ ուսումնասիրում ու պարզաբանում է մարդկանց (մարդկային հասարակության) տնտեսական կյանքի օրենքներն ընդհանրապես, այսինքն անկախ այս հարաբերությունների բնույթից։ Այս կարծիքի համաձայն քաղաքատնտեսությունը պիտի հայտնագործե մարդկային հասարակության պատմության ամբողջ ընթացքի շարժիչ ուժերը նախնական կոմունիզմից մինչև սոցիալիզմն էլ հետը։ Այս կարծիքը ճիշտ չէ։

Այն պայմանները, որոնց ժամանակ կատարվում է մարդու գոյության համար անհրաժեշտ կենսական բարիքների արտադրությունն ու փոխանակությունը, տարբեր ժամանակներում տարբեր են լինում։ Նախնադարյան շրջանում, երբ մարդիկ պարապում էին որսորդությամբ և փոխանակության ծանոթ չէին նրանց միջև եղած հարաբերություններն ուրիշ էին։ Հետագայում, երբ մարդիկ սկսեցին պարապել հողագործությամբ և առարկաների, արդյունքների ու մարդկանց սեփականության սկիզբն առավ (ստրկատիրական-ճորտատիրական շրջան), մարդկանց միջև եղած հարաբերությունները փոխվեցին։ Յեվ վերջապես, երբ մեքենան արտաքսեց ձեռքով կատարվող աշխատանքը և դարձավ սեփականություն ոչ թե աշխատողի, այլ մեքենայի տիրոջ, նույն և ինքն աշխատավորի բանվորական ույժն էլ ապրանք դարձավ, այն ժամանակ մարդկանց հարաբերությունները նորից ու շատ հիմնովին փոփոխվեցին։ Յեվ հենց միևնույն ժամանակվա մեջ զանազան յերկիրներում, որոնք կանգնած են տնտեսական զարգացման տարբեր աստիճանների վրա, մարդկանց հարաբերությունները տարբեր են լինում։

Ահա հենց այս պատճառով էլ չի կարող լինել միակ մի գիտություն, որ զաներ զանազան ժամանակներում գոյություն ունեցող մարդկանց հարաբերությունները լուսաբանող մի ընդհանուր օրենք։ Գիտությունը հարկադրված է լինում ուսումնասիրելու զանազան պատմական շրջաններ։ Այն գործ ունի պատմության ընթացքում փոփոխվող տնտեսության հետ։

Տոհմական համայնքում, վորտեղ դեռ գոյություն ունի ընդհանուր հոգատիրություն ու բնատնտեսություն, մարդկանց հարաբերությունները պարզ ու դյուրըմբռնելի յեն։ Բայց ժամանակի ընթացքում, յերբ առաջ են գալիս փոխանակությունը և սեփականությունը, տնտեսական հարաբերությունները բարդանում են։ Բնատնտեսությունը փոխվում, դառնում է պարզ ապրանքային տնտեսություն, իսկ հետո էլ կապիտալիստական-ապրանքային տնտեսության։ Այս ապրանքային-կապիտալիստական տնտեսությունը արտադրական ու փոխանակային գործառնությունների մի անծայր, բարդ խճճված ցանց է, ուստի և առանձնապես դժվար է գտնել այդ տնտեսությունը ղեկավարող տնտեսական որենքները։

Յեթե առնենք այնպիսի այլազան շրջաններ, ինչպես, որինակ, տոհմային համայնականն ու կապիտալիստականը, փորձենք յերևան հանել տնտեսական այն որենքները վորոնք ղեկավարում են մարդկանց հասարակական-աշխատանքային հարաբերությունները թե մեկ և թե մյուս դարաշրջանում, ապա վոչինչ չեյինք ստանա, բացի ամենաընդհանուր խոսքերից։ Վորովհետև յերբ ուսումնասիրում ենք այլազան շրջաններ, մենք սահմանում ենք նրանց միջի յեղած ամենից ընդհանուր, մակերևույթային կապակցությունը միայն, վորը հնարավորություն չի տալիս լրիվ կերպով ճանաչելու այն որենքները, վորոնցով ղեկավարվում է մի վորևե հասարակություն։ Այս պատճառով յեթե ուզում ենք ըստ կարելվույն խոր ու բազմակողմանի կերպով ճանաչել կապիտալիստական հասարակության եությունն ու շարժիչ ուժերը, մենք պիտի դիմենք միայն այդ մի հասարակության ուսումնասիրելու գործին, այս նպատակի համար մի կողմ դնելով մինչ կապիտալիստական հասարակությունները։ Հենց այն գիտությունը, վոր ուսումնասիրում է միայն կապիտալիստական հասարակության առանձնահատկությունները, այս տարբերելով ուրիշ հասարակություններից, կոչվում է քաղաքատնտեսություն։ Կապիտալիզմի տնտեսական ամբողջ մեխանիկան պարզաբանելու գործում ամենամեծ ու բացառիկ դերը կատարել է Կ. Մարքսը[1])։

2. Վ՞ՈՐՈՆՔ ԵՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Գլխավոր հատկանիշները յերեք են. 1) արտադրության ապրանքային բնույթը, 2) արտադրության միջոցների (հող, ֆաբրիկաներ, գործարաններ, հանքեր, հում նյութեր, վառելիք և այլն), մասնավոր սեփականությունը, վոր կենտրոնացած է կապիտալիստ փոքրամասնության ձեռքում և 3) վարձու աշխատանքը։

[1]) Մարքսն ամենից վորոշ է ընդգծել քաղաքատնտեսության պատմական բնույթը ու նրա որենքների հարաբերական լինելը։ «Ամեն մի պատմական պարբերաժամ (период) ունի իր որենքները... Բայց հենց վոր կյանքն անցնում է զարգացման տվյալ շրջանից, դուրս է գալիս տվյալ աստիճանից ու թևակոխում հետևյալը, ապա սկսում է ղեկավարվել արդեն ուրիշ որենքներով»։ Կապիտալ, հատ. I. Հմմտ. նաև Ն. Բուխարին, «Политическая Экономия рантье», եջ 45—50։

Հարկավ սրանից չի կարելի յեզրակացնել, թե մինչկապիտալիստական տնտեսության յերևույթները մարքսիստի համար վոչ մի նշանակություն չունեն։ Ընդհակառակը, լինելով վերին աստիճանի պատմական մի ուսմունք, մարքսիզմը պատմության ուսումնասիրության վրա յե հիմնում իր ներկայի իմացությունը և ցույց է տալիս լավագույն ապագայի ուղիները։ Մարքսիզմի տեսակետն այն է միայն, վոր տնտեսության մինչկապիտալիստական ձևերը մի առանձին, քաղաքատնտեսությունից տարբեր, գիտության ուսումնասիրության առարկա պիտի դառնան։

3 ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ Ի՞ՆՉ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՆ ՀԱՅՏՆԻ

Յերկու տեսակ. 1) պարզ ապրանքային տնտեսություն և 2) կապիտալիստական ապրանքային տնտեսություն։

4. Ի՞ՆՉ ԲԱՆ Է ԱՊՐԱՆՔԸ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Ապրանք կոչվում է աշխատանքի ամեն մի արդյունքը, վոր բավարարում է հասարակության մի վորևե պահանջը և գնում է շուկա մի այլ ապրանքի կամ փողի հետ փոխանակվելու համար։

5. Վ՞ՈՐՆ Է ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ

Ապրանքային տնտեսության հիմքը կազմում են փոխանակային գործառնությունները (արդյունքների փոխանակությունը), վորոնք առաջ են յեկել, վորպես հետևանք աշխատանքի հանրային բաժանման և մասնավոր սեփականության։ Ապրանքային տնտեսությունը հակադրությունն է բնատնտեսության. վերջինս բնորոշվում է նրանով, վոր ապրում է իր սեփական արտադրության արդյունքներով, և վոչ թե շուկայի միջոցով իր արդյունքներն ուրիշների հետ փոխանակելով։ Վորչափ վոր հասարակության մեջ առաջ եր գալիս աշխատանքի բաժանում տնտեսությունների միջև և սրանք սկսում եյին արտադրել արդյունքներ վոչ միայն սեփական սպառման համար, այլև փոխանակելու կամ ծախելու համար, այն չափով այն տնտեսության արտադրած արդյունքները դառնում եյին ապրանք, իսկ ինքը տնտեսությունն էլ ապրանքային տնտեսություն։

6. Ի՞ՆՉ Է ՊԱՐԶ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Պարզ ապրանքային տնտեսություն ասելով հասկանում ենք մի տնտեսություն, վոր հիմնված է արտադրող գյուղացու կամ արհեստավորի՝ իր արտադրած արդյունքի վրա ունեցած սեփականության վրա, մի տնտեսություն, վոր վարձու աշխատանք չի գործադրում. փոխանակում է իր արդյունքները վոչ թե կուտակելու նպատակով այլ իր պահանջները բավարարելու համար։

Քանի դեռ արտադրության միջոցները (պարզ գործիքները, հողը) գտնվում են անկախ մանր գյուղացիների կամ արհեստավորների մեծամասնության ձեռքում, վորոնք շուկայի միջոցով փոխանակում են իրենց արդյունքները (ապրանքները) իրար հետ՝ հետևաբար, քանի դեռ արտադրության միջոցները չեն անջատված արտադրողից, քանի դեռ այդ արհեստավորների և աշխատավոր գյուղացիության տնանկացման շնորհիվ առաջ չեն յեկել բավարար քանակությամբ այնպիսի մարդիկ, վորոնք արտադրության միջոցներից զուրկ են և վորոնք այս պատճառով ստիպված են ծախելու իրենց բանվորական ուժը,—մինչ այդ այս տնտեսությունը պարզ ապրանքային տնտեսություն է։

7. Ի՞ՆՉ Ե ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիստական ապրանքային տնտեսության հիմքն այն ե կազմում, վոր արտադրության միջոցներն անջատված են արտադրողից և դարձել են կապիտալիստի մասնավոր սեփականություն։ Կապիտալիստական ապրանքային տնտեսության ժամանակ ապրանքատերը փոխանակում կամ ծախում ե ապրանքները վոչ թե իր պահանջները բավարարելու համար, այլ վաստակ (прибыль) ստանալու, կապիտալ կուտակելու նպատակով։

Կապիտալիստական տնտեսությունն առաջացել ե պարզ ապրանքային տնտեսությունից։ Անկախ արտադրողի՝ արտադրության միջոցներից զրկելը կապիտալիստական տնտեսության անհրաժեշտ պայմանն ե։ Կապիտալիստական տնտեսության մեջ տարբերում ենք մի կողմից՝ արտադրության միջոցների սեփականատեր-կապիտալիստներին, վորոնք անձամբ արտադրությանն անմիջապես չեն մասնակցում, իսկ մյուս կողմից՝ վարձու բանվորներին, պրոլետարներին, վորոնք չունեն վոչ մի այլ «սեփականություն», բացի իրենց բանվորական ձեռքերից։ Նրանք այս ձեռքերը կամ, այլ խոսքով, իրենց բանվորական ուժն ստիպված են ծախելու արտադրության միջոցների սեփականատերերին, վորոնք այդ գնումից վորոշ հասույթ (ДОХОД) են կորզում։ Այսպիսով կապիտալիստական ապրանքային տնտեսության ժամանակ հենց ինքը բանվորական ուժն ել արդեն ապրանք ե դարձել։

8. ԱՊՐԱՆՔԻ Ի՞ՆՉ ՅԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐ ԵՆՔ ՏԱՐԲԵՐՈՒՄ

Ապրանքի մեջ տարբերում ենք մի կողմից՝ սպառողական արժեքն, իսկ մյուս կողմից՝ փոխանակային արժեքը։

9. Ի՞ՆՉ Ե ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Ամեն մի ապրանք, վոր մի վորևե ոգտակարություն ունի իբրև սպառման միջոց, կամ իբրև արտադրության միջոց, ունի սպառողական արժեք, այսինքն՝ արժեք սպառման համար։ Սպառողական արժեք ունեն վոչ միայն ապրանքներն, այլև սոսկ հանրոգուտ առարկաներն, ինչպիսիք են՝ ոդը, ջուրը, կուսական հողը, մարգագետինը և այլն։ Սակայն կապիտալիստական կարգը շահագրգռված ե վոչ թե սպառողական արժեքով, այլ փոխանակային։

10. Ի՞ՆՉ Ե ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

Ապրանքային հասարակության մեջ արդյունքներն արտադրվում են վոչ թե սեփական սպառման, այլ ծախելու համար, փոխանակելու համար փողի հետ վորն իր հերթին, կարող ե փոխանակվել ամեն մի ուրիշ ապրանքի հետ։ Ահա այստեղ արդյունքը, վոր սպառողական արժեք ունի, փոխանակային արժեք ե ստանում։ Ուրեմն ապրանքի փոխանակային արժեքը՝ նրա այն ընդունակությունը կամ հատկությունն ե, վորով կարող ե փոխանակվել ամեն մի ուրիշ ապրանքի հետ։ Բայց այստեղ մի հարց ե ծագում. յեթե փոխանակային արժեքը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ ապրանքի փոխա-

նակվելու ընդունակություն, ուրեմն փոխանակային արժեքը կախում չունի՞ արդյոք փոխանակությունից։ Վո՛չ, կախում չունի։ Փոխանակային արժեքը կախում ունի մի այլ բանից։ Ուրեմն ինչի՞ց։—Նրանից, վոր փոխանակվող ապրանքներն ունեն մի ինչ վոր ընդհանուր հատկություն, մի այնպիսի բան, վոր հնարավորություն ե տալիս համեմատելու նրանց իրար հետ։ Այս ընդհանուր հատկությունը վոչ թե ապրանքների ոգտակարությունն ե, այլ մարդկային աշխատանքը, վոր գործադրված ե ապրանքների արտադրության համար։

Մենք չենք կարող համեմատել, որինակ, խոլերային շիճուկի և մի ֆունտ յուղի ոգտակարության մեծությունները, վորովհետև հակախոլերային պատվաստի և մի ֆունտ յուղի մեջ պարունակվող սննդարար կալորիաների[1]) քանակի ոգուտները տարբեր են վորակով։ Սպառողական արժեքը չի կարող համեմատության ու փոխանակության հիմք ծառայել։ Վորպեսզի յերկու ապրանքը համեմատենք իրար հետ, վորպեսզի կարելի լինի ասել, թե մի գրամ խոլերային շիճուկը հավասար ե մի ֆունտ յուղի, անհրաժեշտ ե յերկու ապրանքներն ել համեմատել մի ուրիշ, մի յերրորդ մեծության հետ, վոր ընդհանուր ե այդ յերկու ապրանքների համար ել առանձին առանձին։ Այս յերրորդ մեծությունը, վոր ընդհանուր ե այդ յերկու ապրանքների և այլ ամեն տեսակ ապրանքների համար ել, մարդկային աշխատանքն ե հենց։

Այսպիսով, յեթե ապրանքները չի կարելի համեմատել ըստ սպառողական արժեքի, ապա ուրեմն, սպառողական արժեքը չի կարող փոխանակային արժեքի հիմք ել լինել։ Մի գրամ խոլերային շիճուկն ու մի ֆունտ յուղը, վորոնց ոգտակարությունը բոլորովին տարբեր ե, կարող են համեմատվել ու հավասարեցվել լոկ այն պատճառով, վոր յերկուսի մեջ ել հավասարաչափ մարդկային աշխատանք ե դրված։

11. Ի՞ՆՉՈՎ Ե ՉԱՓՎՈՒՄ ԱՊՐԱՆՔԻ ՓՈԽԱՆԱԿԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ

Ապրանքի փոխակային արժեքը չափվում ե հանրորեն անհրաժեշտ աշխատանքի այն քանակով, վոր պահանջվում ե նրա արտադրության համար։

Շուկայում փոխանակվում են զանազան ապրանքներ։ Իբրև մարդկային աշխատանքի արգասիքներ, իբրև այս կամ այն պահանջը բավարարող բաներ, ապրանքներն եյապես հավասար են իրար։ Բայց քանակորեն նրանք հավասար չեն, վորովհետև զանազան ապրանքներ իրենց արտադրության համար տարբեր քանակի աշխատանք են պահանջում մի դեպքում շատ, իսկ մյուս դեպքում՝ ավելի քիչ։ Հարց ե առաջ գալիս թե ուրեմն ինչպես ե, վոր աշխատանքի քանակից կախում ունի ապրանքի արժեքը։ Յեթե մի ավելի ճարպիկ գործավոր (работник) գործադրել ե մի առարկա պատրաստելու համար հինգ ժամ, իսկ մի ուրիշ ծույլը՝ տասը ժամ, մի՞թե վերջինիս իրը յերկու անգամ ավելի թանգ պիտի գնահատվի լոկ այն պատճառով, վոր նրա վրա գործադրված ե յերկու անգամ ավելի շատ ժամ։ Իհարկե վոչ։ Հասարակության գործը չե, թե ով ինչպես ե աշխատում։ Հասարակությունն

[1]) Կալորիաներով չափվում ե բուսական և կենդանական սննդի մեջ պարունակվող եներգիան։ Կալորիա կոչվում ե ջերմության եներգիայի այն քանակը, վոր ծախսվում ե մի գրամ ջուրը մի աստիճան (ըստ Ցելսիուսի) տաքացնելու համար։

ուշադրության է առնում վոչ թե առանձին արտադրողի աշխատանքի յեղանակն, այլ այն, թե արտադրողականության ինչ մակարդակի է հասել հասարակությունն ամբողջությամբ առած։

Յեթե, օրինակ, ձեռքի աշխատանքով մի ժամում պատրաստվում է հարյուր գլանիկ (папироса), իսկ մեքենայով նույն այս հարյուրը պատրաստվում է հինգ րոպեյում, ապա ձեռքով շինած գլանիկները չպետք է 12 անգամ ավելի գնահատվեն, վորովհետև հարյուր գլանիկը միայն հինգ բանվորական րոպեյի փոխանակային արժեքն է։ Ահա հենց այս հինգ րոպեյի աշխատանքն է աշխատանքի հանրորեն անհրաժեշտ այն քանակը, վորով վորոշվում է իրի,—ներկա դեպքում հարյուր գլանիկի,—փոխանակային արժեքը։ Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր աշխատանքի այս քանակը մշտական չէ։ Նոր գյուտն, աշխատանքի հնարների բարվոքումն, աշխատանքի արտադրողականության ավելացումը և այլն պատճառ են դառնում, վոր ապրանքի արտադրության համար անհրաժեշտ աշխատանքի քանակը նվազում է, վորի հետևանքով ապրանքի փոխանակային արժեքը (կամ, յեթե այս արտահայտենք սովորական ընդունված դրամական ձևով, նրա գինը) իջնում է։

Պարզ է, վոր աշխատանքն է փոխանակային արժեքի աղբյուրը։

Իսկ ապրանքի փոխանակային արժեքը չափվում է այն հանրորեն անհրաժեշտ աշխատանքով, վոր գործադրվում է ապրանքն արտադրելու համար։

12. Ի՞ՆՉ Է ԳԻՆԸ

Ապրանքի գինը նրա փոխանակային արժեքի դրամական արտահայտությունն է։ Ուրիշ խոսքով, ապրանքի գին ասում են դրամի այն քանակին, վոր ստացվում է այն ծախելիս կամ փոխանակելիս։

Յեթե յես ուզում եմ մի վորևե իրի փոխանակային արժեքը վորոշել, ասում եմ. 10 արշին կտավի փոխարեն յես կարող եմ ստանալ մի բաճկոն, կամ 10 ֆունտ թեյ, կամ մի փութ յերկաթ, կամ 2 փութ բամբակ և այլն։ Այստեղ մի բաճկոնը, կամ 10 ֆունտ թեյը, կամ մի փութ յերկաթը, կամ 2 փ. բամբակը կարտահայտեն 10 արշ. կտավի արժեքը։ Այս օրինակով յես արտահայտում եմ մի առարկայի (10 արշ. կտավի) արժեքը մի շարք ուրիշ առարկաների (1 բաճկոն, 10 ֆ. թեյ, և այլն) արժեքով։ Իսկ յեթե յես վորոշակի ասեմ, թե 10 արշ. կտավի փոխարեն ստացա մի բաճկոն, այստեղ արդեն բաճկոնը կլինի 10 արշ. կտավի գինը։ Սովորաբար ապրանքի գինն արտահայտում են մի այնպիսի ապրանքով, վոր հատկապես ծառայում է, վորպես միջոց ընդհանրապես բոլոր ապրանքների արժեքներն արտահայտելու համար։ Այսպիսի հատուկ ընդհանրական (всеобщий) ապրանք է փողը։

13. Ի՞ՆՉ Է ՓՈՂԸ

Այն ապրանքը, վոր ընդունում ու գործածում են բոլոր ապրանքատերերն իբրև նրանց բոլոր տարբեր ապրանքների գնահատիչ, կոչվում է փող։ Փողն արժեքի ընդհանրական չափանիշն է, փոխանակության ընդհանրական միջոցը, վորովհետև նրա միջոցով կարելի յե փոխանակել ամեն մի ապրանք։

Բնական փոխանակությունն, այսինքն առանց փողի միջնորդության արդյունքի փոխանակությունն արդյունքի հետ, դեռ հին ժամանակներում մեծ անհարմարությունների ու դժվարությունների յեր հանդիպում։ Միայն նախնադարյան ժողովուրդները, վորոնց պահանջները շատ պարզ են և ապրանքները՝ շատ քիչ, կարող եյին գոհանալ ապրանքն ապրանքի հետ պարզապես փոխանակելով։ Սակայն մարդիկ շատ վաղ հասկացան, վոր յեթե կարելի յե մի ապրանքի արժեքն արտահայտել մի շարք ուրիշ ապրանքների արժեքով, օրինակ. հացի արժեքը բրդի, ճարպի, մետաղների և այլ ապրանքների արժեքով, ապա կարելի յե գտնել մի այնպիսի ապրանք, վոր հատկապես ծառայեր իբրև ընդհանրապես բոլոր ապրանքների արժեքները մշտապես արտահայտելու միջոց։ Միայն հարկավոր է, վոր ապրանքներից մեկը դառնա արժեքի ընդհանրական չափանիշ, վոչ թե պատահաբար, այլ այս սովորույթ դառնա և վոր նրա փոխարեն կարելի լինի ստանալ այն ամենն, ինչ վոր պետք է։ Այնպիսի ընդհանրական ապրանք յեղավ փողը։

14. Ի՞ՆՉ ՏԵՍԱԿԻ ՓՈՂԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Հին ժամանակներում ժողովուրդները զանազան տեսակ փողեր են ունեցել, գազանների մորթիներ, տավար, աղ, խեցիներ։ Սակայն կամաց կամաց այն փողերը դադարեցին փոխանակության նպատակներին բավարարություն տալուց և սկսեցին փոխարինվել մետալե փողերով (յերկաթից, պղնձից, անագից), վորոնք իրենց հերթին վերածվեցին վոսկե և արծաթե փողերի։ Վոսկին ու արծաթն այն պատճառով արժեքի ընդհանրական չափանիշ, այսինքն փող, դարձան, վոր բոլոր մյուս մետալներից ավելի ունեյին հետևյալ յերեք անհրաժեշտ հատկությունները. 1) վոսկի ու արծաթն այնպիսի ապրանքներ են, վորոնք, ինչ ձևի ել վոր լինեն, միևնույն հատկություններն ունեն, 2) վոսկին ու արծաթը կարելի յե մասերի բաժանել և այս մասերը նորից միացնել առանց դժվարության արժեքից վոչինչ չկորցնելով, 3) վոսկու և արծաթի փոքր քանակները մեծ արժեք ունեին։ Զարգացած ապրանքային հասարակության մեջ, բացի մետալե փողերից, շրջանառության մեջ են լինում նաև թղթադրամներ։

15. Ի՞ՆՉ Է ԹՂԹԱԴՐԱՄԸ

Վոսկին ու արծաթը փող են այն պատճառով, վոր իրենք ել ապրանք են, այսինքն աշխատանքի, այն ել մեծ աշխատանքի, արդյունք են։ Սակայն դրամական մեծ շրջանառություն ունեցող հասարակության համար մետալե փողը—վոսկե դրամն ու մանավանդ արծաթադրամը, բավական անհարմար, դժվար շարժելի միջոց է փոխանակության համար. մեծ գումարներով դժվար է ճարել, դժվար է տեղափոխել, դժվար է գործադրել, իբրև անմիջական վճարամիջոց։ Հասարակության շատ ձեռնտու ու հարմար կը լիներ յեթե մարդիկ հնարեյին այնպիսի փողեր, վորոնք լոկ պայմանական նշաններ լինեյին և շատ եժան նստեյին։ Թղթադրամներն հենց համապատասխանում են այս պահանջին։

Հիմա հարց է առաջ է գալիս թե ինչպես կարող են թղթադրամները

իբրև արժեքի չափանիշ ու վճարամիջոց ծառայել, յեթե իրենք գրեթե արժեք չունեն։ Թղթադրամներն նշանակություն են ստանում այն պատճառով, վոր փոխարինում են համապատասխան քանակությամբ վոսկու, վոր գտնվում է պետության ձեռքում կամ շրջանառության մեջ։ Իսկ յեթե թղթադրամներն ապահովված չեն վոչ շրջանառության մեջ գտնվող և վոչ էլ պետության գանձարանում պահված վոսկով, այն ժամանակ նրանց շրջանառությունը (хождение) դժվարանում է, նրանց գինն ընկնում է և նրանք նույնիսկ բոլորովին արժեքազուրկ են լինում։ Այս դեպքում նրանց շրջանառությունը կարող է պայմանավորվել պետության ստիպողական կարգադրությամբ։

16. Ի՞ՆՉ Է ՓՈՂԻ ԴԵՐԸ

Բացի իր գլխավոր դերից, այն է՝ բացի ընդհանրապես բոլոր ապրանքների չափանիշ լինելուց, փողը կապիտալիստական հասարակության մեջ կատարում է նաև հետևյալ դերը. նախ՝ ծառայում է վորպես շրջանառության միջոց, յերկրորդ՝ վորպես վճարամիջոց և յերրորդ՝ վորպես կուտակման միջոց։

Փողը կատարում է իր դերը, վորպես շրջանառության միջոց, ծառայելով, իբրև միջնորդ ապրանքների շրջանառության պրոցեսսում։ Ապրանքն արդեն փոխանակվում է վոչ թե պարզապես մի ուրիշ ապրանքի հետ, այլ նախ փողի հետ, իսկ հետո փողը հատուցվում է ուրիշ ապրանքի փոխարեն։

Յերբ ապրանքային արտադրությունն հետագայում զարգանում է, փողի դերը դուրս է գալիս ապրանքային շրջանառության սահմաններից, և փողով արտահայտվում են արդեն վոչ միայն ապրանքների արժեքներն այլև ամեն տեսակ պարտավորություններ ու ծառայություններ։ Որինակ՝ ասենք թե պետությունը հարկեր է դնում ժողովրդի վրա։ Ինչո՞վ են սրանք արտահայտվում։ Կամ վորևէ արդյունքով կամ փողով։ Հասկանալի է, վոր յերբ փողը սկսեց ընդհանրական արժեքի դեր կատարել, այսինքն նրանով կարելի յեղավ ձեռք բերել ամեն մի ապրանք, բավարարել ամեն պահանջ, պետության համար ավելի հարմար յեղավ հարկերն ստանալիս փող ընդունել։ Միևնույնը կատարվեց նաև ամեն տեսակ ծառայողների, պաշտոնյաների, ամեն տեսակ պետական ծառայությունների. վարձատրության գործում, և այլն։ Այսպիսով փողը դառնում է վճարամիջոց։

Յեվ, վերջապես, փողը դառնում է կուտակման միջոց։ Բնական արժեքների, որինակ՝ մսի, կաթի, յուղի, յերկաթի, հացի, ածուխի, և այլն խնայողությունն ու կուտակումը կամ շատ մեծ դժվարություններ ունի, կամ պարզապես անկարելի յե, փչանալու պատճառով։ Այլ բան է, յերբ հանդես է գալիս փողը։ Նրա միջոցով կարելի յե տնտեսել, պահել ամեն մի արժեք, հետևաբար և կարելի է կուտակել այս արժեքները։

17. Ի՞ՆՉ Է ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Վարձու աշխատանքը բնորոշվում է նրանով, վոր գործավորների բանվորական ուժը՝ նախ քան կապիտալիստական արտադրության և ընդհանրապես տնտեսության մեջ ոգտագործվելը դառնում է մի ապրանք, վոր գնում

է կապիտալիստը և վորը վաճառում է բանվորական ուժի տերը, այսինքն գործավորը այսինքն՝ կապիտալիզմի ժամանակ բանվորական ուժն ապրանք է։

Պարզ ապրանքային տնտեսության ժամանակ, յերբ արտադրության գործիքների սեփականատերը նաև արտադրության արդյունքների սեփականատերն է կան աշխատավոր արհեստավորներ, գյուղացիներ, բայց չկա վարձու աշխատանք։ Բանվորական ուժն այն ժամանակ գործադրվում էր գործավորի սեփական տնտեսության մեջ, բայց կողմնակի մարդկանց չէր ծախվում։ Կապիտալիստական ապրանքային տնտեսության ժամանակ առաջ են գալիս մեծ քանակությամբ մարդիկ, վորոնք չունեին արտադրության սեփական միջոցներ, և վորոնք հարկադրված են ծախելու իրենց բանվորական ուժը նրանց, վորոնք սեփականացրել են այս արտադրության միջոցները։ Այս բանվորական ուժն արդեն ապրանք է, վորովհետև նախ քան կապիտալիստական արտադրության մեջ ոգտագործվելն այս ուժը պիտի գնե կապիտալիստ-ձեռնարկողը և պիտի ծախե բանվորական ուժի տեր բանվորը։ Այս բանվորական ուժի առուծախն է, վոր կոչվում է վարձումն (наем)։ Ուստի և հենց ինքն կապիտալիզմի շրջանում աշխատանքն էլ վարձու աշխատանք է։

18. Ի՞ՆՉ Է ՊՐՈԼԵՏԱՐԸ

Այն գործավորը, վոր զուրկ է արտադրության միջոցներից և իր ապրուստը հայթայթելու համար ստիպված է իր բանվորական ուժը ծախելու և, ուրեմն, վարձվելու և ապրելու վարձու աշխատանքով, կոչվում է պրոլետար։

19. Ի՞ՆՉ Է ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Աշխատավարձ կոչվում է կենսամիջոցների այն քանակը (վորը սովորաբար տրվում է փողի ձևով, վորով ձեռք են բերվում ուտելիք, շոր, հատուցվում է բնակարանի վարձը և բավարարվում են այլ պահանջները), վորը ստանում է բանվորն իր ծախսած ուժերի վերականգնման համար, ինչպես վոր ձին ստանում է այնքան վարսակ ու խոտ, վորքան անհրաժեշտ է նրա աշխատունակությունը պահպանելու համար։

20. Ի՞ՆՉ ՈԳՈՒՏ ՈՒ՞ՆԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԸ, ՅԵՐԲ ԲԱՆՎՈՐԻՆ ՍՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈԽԱՐԵՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ Է ՏԱԼԻՍ

Բանվորական ուժն, իբրև ապրանք, ունի սպառողական արժեք, վորովհետև արտադրության մեջ վորոշ ոգուտ է տալիս։ Բայց բանվորական ուժի պես մի ապրանքի սպառողական արժեքն, այսինքն նրա ոգուտը մի վորոշ, էյական տարբերություն ունի մյուս բոլոր ապրանքների սպառողական արժեքներից։ Իսկ ի՞նչ տարբերություն ունի։

— Այն, վոր այս ուժն ընդունակ է արժեքի աղբյուր լինելու և այն էլ աղբյուր ավելի մեծ արժեքի, քան վոր ինքն ունի։

Ինչպես ամեն ապրանքի, այնպես և բանվորական ուժի արժեքը վորոշվում է նրա արտադրության համար հանրորեն—անհրաժեշտ ժամանակի քանակով, հետևաբար, այս դեպքում վորոշվում է բանվորական ուժի պահ-

պանման ու վերարտադրության համար անհրաժեշտ ծախքերով (издержки) այն ուժի, վոր բանվորը մի վորոշ ժամանակի ընթացքում ծախսում է աշխատելով կապիտալիստի մոտ։ Բանվորն իրեն է ծախում իբրև ապրանք, այսինքն ծախում է իր բանվորական ուժը և այս անելով, ապրանքային փոխանակության որենքների համաձայն, տալիս է իր բանվորական ուժի սպառողական արժեքը։ Բանվորական ուժ կոչվող այս ապրանքի փոխանակային արժեքի մեջ պարփակված է անցյալ, այս ապրանքը ստեղծող աշխատանքը, այսինքն, ներկա դեպքում բանվորի ապրուստի ծախքերը։ Իսկ սպառողական արժեքը, վոր ձեռք է բերում կապիտալիստը ի դեմս բանվորի, կամ կենդանի աշխատանքն այլևս բոլորովին այլ մեծություն է և այն էլ ավելի խոշոր մեծություն (իսկ այս՝ էլ հենց ամենագլխավորն է)։ Այս կենդանի աշխատանքը ծածկում է վոչ միայն բանվորի ապրուստի ծախքերն, այսինքն նրա բանվորական ուժի փոխանակային արժեքն, այլև ստեղծում է ավելցուկ, գերարժեք կամ հավելյալ արժեք, վոր մնում է բանվորական ուժ կոչված ապրանքը գնող կապիտալիստի ձեռքում։ Պրոլետարն աշխատում է կապիտալիստի համար, որինակ, 12 ժամ. 6 ժամվա ընթացքում նա վերաստեղծում է այն փոխանակային արժեքը, վորով կապիտալիստը գնել է նրա բանվորական ուժը, մնացած 6 ժամում ստեղծվում է արդեն հավելյալ արժեքը, վորն իբրև վաստակ, մտնում է կապիտալիստի գրպանը։

«Բանվորական ուժի սպառողական արժեքը, նույն ինքն աշխատանքը, նույնքան քիչ է պատկանում այն ծախողին, վորքան ծախված յուղի սպառողական արժեքը պատկանում է յուղ ծախողին։ Փողատերը վճարել է բանվորական ուժի որական արժեքը, ուստի նրան է պատկանում այս ուժի սպառումը մի որվա ընթացքում, այսինքն որական աշխատանքը։ Այն հանգամանքը, վոր բանվորական ուժի որական ծախքերի արժեքը հավասար է միայն կես բանվորական որվա, թեպետ բանվորական ուժը կարող է գործել, այսինքն աշխատել ամբողջ որը, այն հանգամանքը, վոր այս պատճառով այն արժեքը, վոր ստեղծում է բանվորական ուժի գործադրությունը մի որվա ընթացքում, կրկնակի մեծ է նույն ինքն բանվորական ուժի սեփական արժեքից,—գնողի մասնավոր հաջողությունն է, բայց վոչ մի դեպքում անարդարություն չե ծախողի վերաբերմամբ»,—հեգնորեն վերջացնում է Մարքսը։

21. ԻՆՉ Է ԿԱՊԻՏԱԼԸ

Կապիտալ կոչվում են արտադրության միջոցներն ու գործիքները կամ փողը, յերբ վոր սրանք տերն ոգտագործում է վարձու աշխատանք կիրառելու միջոցով անաշխատ հասույթ ստանալու համար (այսինքն այնպիսի հասույթ, վոր ստացվում է առանց վորևե աշխատանքի, լոկ այն փաստի շնորհիվ, վոր մեկն արտադրության միջոցների տեր է։

Կապիտալ չեն կոչվում արտադրության այն միջոցներն ու գործիքները կամ փողը, յերբ սրանք տերն ոգտագործում է իր սեփական տնտեսության մեջ՝ առանց վարձու աշխատանք կիրառելու, վոչ թե ավելադիր (добавочный) հասույթ ստանալու նպատակով, այլ իր ապրուստի պահանջները բավարարելու համար։

Արտադրության միջոցներն,—աշխատանքի գործիքները, նաև փողը,—շատ հին ծագում ունեն, սակայն վորոշ պատմական պայմանների ժամանակ՝ այն է կապիտալիստական պայմանների ժամանակ է միայն, վոր նրանք դառնում են կապիտալ։ Այնպես էլ մարդիկ, իբրև աշխատող էակներ, էլ ավելի հին ծագում ունեն, բայց միայն պատմական վորոշ աստիճանի վրա յեն նրանք դառնում վարձու բանվոր-պրոլետարներ։

Ըստ բուրժուական տնտեսագետների վորոշման, կապիտալն այն միջոցների գումարությունն է (СОВОКУПНОСТЬ), վորոնք ստեղծված են նախկին աշխատանքով (կուտակված աշխատանք) և նշանակված են տնտեսական նոր գործունեյության համար (նոր արտադրության համար)։ Այս վորոշումը նրանք հանգում են՝ կապիտալն աշխատանքի գործիքների, հում նյութերի ու կենսական մթերքների գումարություն համարելով։ Այս վորոշումը սխալ է։ Ինքն ըստ ինքյան վոչ աշխատանքի գործիքները, վոչ հում նյութերը, վոչ կենսական մթերքներն և վոչ էլ գործարաններն ամբողջությամբ առած չեն կարող հասույթ բերել, այսինքն չեն կարող ինքնուրույնաբար նոր արժեքներ ստեղծել։ Միայն այն դեպքում աշխատանքի գործիքները, հում նյութերը, և այլն, կարող են հասույթ բերել, յերբ նրանց վրա գործադրվի վարձու աշխատանք, պրոլետարի աշխատանք, վորը արտադրության միջոցների տիրոջը բացի անհրաժեշտ արժեքից նաև հավելյալ աշխատանք (կամ հավելյալ արժեք), տալով ստեղծում է նաև նոր արժեքներ։ Այս նոր (հավելյալ), արժեքի վերաբերմամբ, վոր ստեղծվում է աշխատանքի միջոցով, աշխատանքի գործիքները, հում նյութը և այլն, կապիտալ են հանդիսանում։ «Կապիտալի տարբերիչ նշանն,—ասում է Մարքսը,—այն չե, վոր կուտակված աշխատանքը (աշխատանքի գործիքները, հում նյութերը, սննդամթերքները) ծառայում է կենդանի աշխատանքին (բանվորական ուժին), իբրև միջոց նոր արտադրության համար, այլ այն, վոր կենդանի աշխատանքը ծառայում է կուտակված աշխատանքին, իբրև միջոց պահպանելու և ավելացնելու վերջինիս փոխանակային արժեքը»։

22. ԿԱՊԻՏԱԼԻ ԻՆՉ ՁԵՎԵՐ ԿԱՆ

Կապիտալի սկզբնական, ամենանախնական ձևը առևտրական ու վաշխառվական կապիտալն է, հետո զարգանում է արդյունաբերական ու դրամական կապիտալը։

23. ԻՆՉ Է ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

Ընդհանրապես կապիտալն առաջանում է ապրանքային արտադրության վորոշ աստիճանի ժամանակ։ Նրա հիմքը մասնավոր սեփականությունն է։ Վորպեսզի ապրանքային տնտեսություն հնարավոր լինի, անհրաժեշտ է յերկու պայման. 1) առանձին տնտեսությունները պիտի արտադրեն տարբեր արդյունքներ, այսինքն հասարակության մեջ պիտի գոյություն ունենա աշխատանքի բաժանում, 2) արդյունքներն, ինչպես արդեն մատնանշել ենք, պիտի մասնավոր սեփականություն լինեն։ Աշխատանքը վորքան ավելի յե տրոհվում առանձին ճյուղերի, վորքան ավելի յե տարածվում մասնավոր սեփականությունը, այնքան ավելի յե ապրանքային ար-

տադրությունը վտարում սեփական սպառման համար նշանակված արտադրությունը։ Աշխատանքի բաժանումն այնտեղ ե հասցնում, վոր առքն ու վաճառքը նույնպես դառնում ե առանձին պարապմունք, վորով բացառապես զբաղվում ե մի առանձին առևտրական դասակարգ, վոր այդ զբաղմունքից վաստակ ե կորզում։

Այսպիսով առևտրական կապիտալ կոչվում են այն միջոցները (լինեն ապրանք կամ փող), վորոնք ծախսվում են ապրանք գնելու համար, նրանց վերավաճառքի միջոցով վաստակ ստանալու նպատակով։

24. Ի՞ՆՉ Ե ՎԱՇԽԱՌՎԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

Վաշխառվական կապիտալն այն կապիտալն ե (ապրանք, իսկ ավելի հաճախ փող), վորի վաստակն ստացվում ե տոկոսի ձևով, վոր կապիտալիստն առնում ե պարտք տված ապրանքների կամ փողի համար։

Քանի դեռ կապիտալը լոկ առևտրական ու վաշխառվական կապիտալի կերպարանք ունի մինչ այդ դեռ գերակշիռ դեր չի կատարում հանրային տնտեսության մեջ և ամբողջ հասարակական տնտեսությունն ել դեռ կապիտալիստական չե։ Այն ժամանակ միայն, յերբ կապիտալիստական հարաբերություններն ընդգրկում են նաև արդյունքների արտադրության ասպարեզը, յերբ կապիտալը հանդես ե գալիս իբրև արտադրական կապիտալ, մենք անցնում ենք տնտեսության կապիտալիստական սիստեմի դարաշրջանը։

25. Ի՞ՆՉ Ե ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

Արդյունաբերական կապիտալ կոչվում ե այն կապիտալը, վոր դրվում ե արտադրության մեջ և ծախսվում ե բանվորական ուժ կոչվող ապրանքը գնելու համար այն նպատակով, վոր այս բանվորական ուժն արտադրության մեջ կիրառելով հավելյալ արժեք ստացվի։

26. Ի՞ՆՉ Ե ԴՐԱՄԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

Դրամական կապիտալը (կամ ուրիշ խոսքով վարկային կապիտալը) վաշխառվական կապիտալ ե, վոր զարգանալով կապիտալիստական հասարակության մեջ հասել ե իր բարձրագույն ձևին։ Արդի դրամական կապիտալն ավելի վաղորյա կապիտալից — վաշխառվականից տարբերվում ե հետևյալ հատկություններով. 1) այս կապիտալի գլխավոր փոխառուներն արդյունաբերական կապիտալիստներն են և վոչ թե մանր արտադրողները, 2) այս առևտուրն անում են ուրիշների փողերով, վոր հավաքվում են բանկերի միջոցով, 3) արդյունաբերությունը կառավարում են առանձին վարկային-դրամական հարաբերությունների հիման վրա։

27. Ի՞ՆՉ ԲԱՂԱԴՐԻՉ ՄԱՍԵՐ ՈՒՆԻ ԿԱՊԻՏԱԼԸ

Ամեն մի ձեռնարկության կապիտալ բաժանվում ե յերկու մասի. մշտական կապիտալ և փոփոխական կապիտալ։

Մշտական կապիտալ ասելով պետք ե հասկանալ կապիտալի այն մասը, վոր ծախսվում ե արտադրության միջոցներ, հում նյութ, վառելիք ձեռք բերելու համար, շինություններ շինելու համար, մի խոսքով, մշտական կապիտալի մեջ մտնում են արտադրության բոլոր ծախքերը, բացի աշխատանքի վարձման ծախքերից։ Կապիտալի այս մասը չի փոփոխում իր մեծությունն արտադրության պրոցեսում, ուստի և կոչվում ե մշտական կապիտալ։

Փոփոխական կապիտալ ասելով պետք ե հասկանալ կապիտալի այն մասը, վոր ծախսվում ե բանվորական ուժ ձեռք բերելու համար, աշխատանքը վարձատրելու համար։ Կապիտալի այս մասը փոփոխում ե իր մեծությունն արտադրության պրոցեսում, կապիտալիստին տալիս ե հավելյալ բաժին (արժեք), ուստի և կոչվում ե փոփոխական կապիտալ։ Մարքսն այս մասը կոչում ե նաև ակտիվ մաս, վորովհետև այս մասն ե արտադրում հավելյալ արժեք։

28. Ի՞ՆՉ Ե ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԸ

Հավելյալ արժեք կոչվում ե արժեքի այն մասը, վոր ստանում ե կապիտալիստը, յերբ բանվորական որն «անհրաժեշտ» (բանվորական ուժի արժեքի փոխարեն համարժեք ստեղծելու համար անհրաժեշտ) բանվորական որվա սահմաններից ավելի յե յերկարացնում։

29. Ի՞ՆՉՊԵՍ Ե ԳՈՅԱՆՈՒՄ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԸ

Հավելյալ արժեքը գոյանում ե բանվորական ուժի կիրառմամբ։ Ի՞նչ ե պատահում նրան։

Յերևակայենք մի կապիտալիստ, վոր ունի մի վորոշ գումար։ Ստանալով նա շինում ե գործարան, գնում ե մեքենաներ, հում նյութ, վառելիք, ոժանդակ նյութեր և ուզում ե բանեցնել գործարանը։ Բայց գործարանը չի բանում։ Մի ինչ վոր բան պակասում ե նրան։ Պարզ ե, պակասում ե բանվորական ուժը։ Գնված ե բանվորական ուժ ել։ Գործարանն սկսեց բանել։ Ի՞նչ ե դուրս գալիս — գործարանը (շենքը), վորի վրա ծախսված ե, որինակ, կապիտալի $^{1}/_{10}$-ը, չի ավելացնում արտադրության մեջ այն ծախսված գումարը. հում նյութը չի աճում արտադրության ընթացքում, այլ փոխում ե իր ձևը, վառելիքը նույնպես չի շատանում, այլ վոչնչանում ե՝ առաջ բերելով շարժում կամ լույս, բանվորն ել, յեթե աշխատի այնքան ժամանակ, վոր հանի միայն իր ապրուստի ծախսերը, նույնպես վոչինչ նոր արժեք չի տա։ Ուրեմն դուրս ե գալիս, վոր կապիտալիստն ապարդյուն գործի յե ձեռնարկել։ Սակայն իրոք այսպես չե։ Շենքը, հում նյութը, վառելիքն իրենց արժեքով մտնում են՝ պատրաստված ապրանքի արժեքի մեջ։ Աշխատավարձը նույնպես մտնում ե ապրանքի արժեքի մեջ։ Իսկ բանվորին կապիտալիստը ստիպում ե աշխատելու ավելի յերկար ժամանակ, քան հարկավոր ե աշխատավարձը ծածկելու համար։ Այս ավելորդ ժամերում բանվորն աշխատում ե առանց կապիտալիստից բան ստանալու, մինչդեռ այս ավելորդ ժամանակի ընթացքում նա պատրաստում ե վորոշ քանակությամբ ապրանք։ Աշխատավարձի հենց այն մասը, վոր կապիտալիստը պիտի վճարեր, յեթե լրիվ վարձատրեր բանվորի աշխատանքը, բայց վորը նա պա-

նում է իրեն, կազմում է հավելյալ արժեքը։ Ուրեմն հավելյալ արժեքն ըստացվում է բանվորի ավելորդ աշխատանքից և ստեղծվում է արտադրության պրոցեսում[1]։

30. Ի՞ՆՉ Է ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԻ ՆՈՐՄԱՆ

Բանվորի վճարված ու անվճար աշխատանքների հարաբերությունը կամ, այլ խոսքով, աշխատավարձի ու հավելյալ արժեքի հարաբերությունը կոչվում է հավելյալ արժեքի նորմա։ Այս հարաբերությունը մեզ ցույց է տալիս բանվորների շահագործման աստիճանը։ Առնենք մի օրինակ։ Յեթե բանվորներն աշխատում են գործարանում և ստանում են աշխատավարձ օրական յերկու ռուբլի, նրանք վերադարձնում են այս վարձը (վերարտադրում են այն), ասենք հինգ ժամվա աշխատանքով։ Սակայն գործարանում աշխատանքը տևում է վոչ թե 5, այլ 10 ժամ։ Պարզ է, վոր վերջին 5 ժամում բանվորները կվերարտադրեն դարձյալ 2-ական ռուբլի, վոր ամբողջովին մտնում է կապիտալիստի գրպանը, վորպես հավելյալ արժեք։ Ամեն մի բանվորից կորզած այս յերկու ռուբլին կազմում են 100% այն յերկու ռուբլու վերաբերմամբ, վոր վճարվում է առաջին 5 ժամ աշխատանքի համար։ Ուրեմն այս դեպքում հավելյալ արժեքի նորման հավասար է 100%-ի։

31. Ի՞ՆՉ Է ԲԱՑԱՐՁԱԿ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԸ

Բացարձակ հավելյալ արժեք ասելով հասկացվում է այնպիսի հավելյալ արժեք, վոր ստանում է կապիտալիստը բանվորական օրը յերկարացնելով։

Բացարձակ հավելյալ արժեքը մի այնպիսի յերևույթ է, վոր վերաբերում է կապիտալիզմի զարգացման ավելի սկզբնական շրջանին կամ հետամնաց յերկրների կապիտալիզմին։ Կապիտալիզմի վաղորդյան շրջանում արդյունաբերական ձեռնարկությունները դեռ համեմատաբար փոքր մշտական կապիտալ ու համեմատաբար մեծ փոփոխական կապիտալ ունեին. մեքենաները դեռ քիչ են, կենդանի բանվորական ուժը՝ շատ։ Այս պարագաներում կապիտալիստը տեսնում է հավելյալ արժեքը, վոր հնարավոր է

1) Այստեղ, սակայն հարկ ենք համարում մատնանշել, վոր իսկապես, բանվորական ուժը գնելիս կապիտալիստը կարող է լրիվ վճարել. այսինքն վճարել այս բանվորական ուժի շուկայական լրիվ արժեքը և այնուամենայնիվ ստանալ հավելյալ արժեք։ Այդ խորամանկ կապիտալիստական մեքենայությունը բացահայտեց Կ. Մարքսը, և հենց այս է նրա մեծագույն յերախտիքը։ Նա բոլորովին պարզ ցույց տվեց, վոր տարբերություն կա կապիտալիստի գնած աշխատանքի արժեքի և բանվորական ուժի արժեքի միջև, վոր ստանում է բանվորը և վոր համապատասխանում է նրա գոյությունը պահպանելու համար անհրաժեշտ արդյունքների գնին։

Բանվորական ուժը վոչ՝ միայն հանդիսանում է այն աշխատանքի, վոր գործադրվել է նրա արտադրության վրա. այսինքն՝ բանվորի ու նրա ընտանիքի սնունդի և այլն արտադրության վրա, այլև աղբյուր է աշխատանքի։ Այս մեծությունները, այսինքն՝ բանվորական ուժի արտադրության վրա ծախսված աշխատանքի քանակը և բանվորական ուժի մատակարարած աշխատանքի քանակը սովորաբար տարբեր են լինում, օրինակ՝ բանվորական ուժի արտադրության համար կարող է գործադրվել միայն 6 ժամ օրական, իսկ ինքը բանվորական ուժը կարող է գործել 12 ժամ օրական։ Ուրեմն, կապիտալիստը՝ լրիվ վճարելով բանվորական ուժի արժեքն, այնուամենայնիվ ստանում է իր օգտին օրական 6 ժամ չվարձատրված աշխատանք, վոր և տալիս է նրան հավելյալ արժեք։

ավելացնել բանվորական ժամանակն յերկարացնելով։ Այս աստիճանի հաճախ է պատահում 12, 14, 16 ու նույնիսկ 18 ժամ տևողությամբ բանվորական օր։ Կապիտալիստների այս ձգտումը, վոր նպատակ ունի բացարձակ հավելյալ արժեք ստանալ, առաջ է բերում բանվոր դասակարգի առանձնապես ուժեղ դիմադրություն և տանում է դեպի համառ գործադուլային կռիվ։

32. Ի՞ՆՉ Է ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՎԵԼՅԱԼ ԱՐԺԵՔԸ

Հարաբերական հավելյալ արժեք կորզում է կապիտալիստն աշխատանքի ինտենսիֆիկացիայի միջոցով (մեքենային տեխնիկայի զարգացմամբ), այսինքն նրանով, վոր աշխատանքն ավելի մեծ լարվածությամբ է կատարվում ժամանակի միավորի ընթացքում։

Բանվորական օրը պարզապես յերկարացնելը, ինչպես ասացինք վերևում, բանվոր դասակարգի դիմադրության է հանդիպում։ Կապիտալիստը փորձով գալիս է այն յեզրակացության, վոր մեքենաների գործածությունը, վոր հնարավորություն է տալիս լայնորեն կիրառել աշխատանքի բաժանում, նկատելի կերպով շատացնում է ապրանքային հարստությունը։ Ըսկսվում է մեքենային տեխնիկայի կատաղի արագությամբ հառաջադիմությունը, վորը չափազանց բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, բայց վորը միաժամանակ ստիպում է բանվորներին աշխատելու թեև ավելի կարճ ժամանակ, բայց ավելի լարված մեքենայի շարժման արագության համապատասխան։

Այսպիսով ստանում է հավելյալ արժեքի ավելացում մյուս ծայրից, այն է քամելով բանվորի ուժն ավելի կարճ ժամանակվա մեջ, և այս դեպքում ստացվում է հարաբերական հավելյալ արժեքի ավելացում։

Հարաբերական հավելյալ արժեքի արտադրությունը զարգացած կապիտալիզմի էական հատկանիշներից մեկն է[1]։

33. Ի՞ՆՉ Է ԿԱՊԻՏԱԼԻՑ ՍՏԱՑԱԾ ՀԱՍՈՒՅԹԸ (ՁԵՌՆԱՐԿՈՒԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ)

Առաջվա ժամանակներում կապիտալի զանազան տեսակները—առևտրական կապիտալը, վաշխառուական կապիտալը—տարբեր կերպ եյին ստանում իրենց հասույթը։ Յերբ առաջ յեկավ արդյունաբերական կապիտալը, այս էլ նրանցից տարբեր կերպ սկսեց ստանալ իր հասույթը, այսինքն սկսեց ըստանալ այն բանվորներից, վորոնք զուրկ են արտադրության միջոցներից ու ստիպված են ծախելու իրենց բանվորական ուժը։ Արտադրության կապիտալիստական ձևի զարգացման հետ միասին՝ բանվորների ստեղծած հավելյալ արժեքը սաստիկ աճում էր և ավելի ու ավելի դառնում այն ամ-

1) Հարաբերական հավելյալ արժեքի ավելացում տեղի յե ունենում նաև այն ժամանակ, յերբ առանց արտադրության համար էական վնասի, ավելի թանկարժեք բանվորական ուժն, օրինակ տղամարդունը, փոխարինվում է ավելի էժանագին աշխատանքով. այն է՝ կանանց կամ յերեխաների աշխատանքով, կամ յերբ ամերիկական բանվորներին փոխարինում են չինացիներ և այլն։ Այս դեպքերում, բացի հարաբերական հավելյալ արժեքի ավելացումից, կարող է շատանալ բացարձակ հավելյալ արժեքն էլ շնորհիվ նրա, վոր պրոլետարիատի այս հետամնաց ու կազմակերպված դիմադրության ավելի քիչ ընդունակ տարրերի բանվորական օրը յերկարացնում են։

նամեծ աղբյուրը, որտեղից կապիտալիստների ամբողջ դասակարգը կորզում է իր հասույթը։ [Արդյունաբերական կապիտալիստների ստացած հասույթը կոչվում է ձեռնարկուական վաստակ։ Հավելում հայ թարգմ.]։ Սակայն արդյունաբերական կապիտալիստները մենակ չեն օգտվում այն հասույթից, որ իրենք ստանում են բանվորների շահագործումից։ Նրանք հարկադրված են բաժին հանելու սրանից հողատերերին, որոնցից նրանք վարձակալում կամ գնում են հող՝ արդյունաբերական կամ առևտրական ձեռնարկությունների համար, այլև բանկիրներին, բանկերին, որոնցից նրանք փոխ են առնում իրենց ձեռնարկությունները վարելու կամ ընդլայնելու համար։ Այն հասույթը, որ ընդամին ստանում են հողատերերը, կոչվում է ռենտա, իսկ այն հասույթը, որ ստանում են բանկերը, կոչվում է տոկոս։

34. Ի՞ՆՉ Է ՌԵՆՏԱՆ

Երբ գերիշխում էր մանր գյուղացիական հողագործությունը և ամեն մի գյուղացի ուներ իր սեփական արտը, տունն ու տեղը, և երբ մյուս կողմից մեծ քանակությամբ դեռ չմշակված հող կար, այն ժամանակ ռենտա գոյություն չուներ։ Ռենտա կարող էր առաջանալ միայն այն ժամանակ, երբ ապրանքային տնտեսություն զարգացավ, հողի մասնավոր սեփականություն լրիվին գերիշխեց և երբ հողագործության արդյունքներն ապրանք դարձան։ Ռենտան սկսեց զարգանալ ու մեծանալ մանավանդ այն ժամանակ, երբ որ հողը մեծ քանակությամբ սկսեց կենտրոնանալ խոշոր սեփականատերերի, կալվածատերերի ձեռքում և սրանք դարձան հողային մոնոպոլիստներ (մենաշնորհատերեր)։ Երբ հողի մեծագույն ու լավագույն մասը գտնվում է կալվածատերերի ձեռքում, երբ ազգաբնակության աճեցողության հետ հողի պահանջն ավելի ու ավելի մեծանում է և երբ որ արտադրության կապիտալիստական ձևի զարգացմամբ՝ կապիտալիստների դասակարգի հողի պահանջն էլ է ավելանում, երբ կալվածատերն իր հողը վարձակալության տալով՝ նրանից անընդհատ աճող հասույթ է ստանում առանց որևէ ավելադիր աշխատանքի, այն ժամանակ հողը տալիս է հարաճուն հասույթ, որ ընդհանրապես կոչվում է ռենտա։ Տարբեր հողամասեր, իհարկե, տարբեր մեծության ռենտա յեն տալիս՝ ըստ հողի որակի, հանքերի, անտառների, ջրերի հարստության, ըստ արևի նկատմամբ ունեցած դիրքի, այլև ըստ այն հեռավորության, որ ունեն հողերը քաղաքներից, գործարաններից, ճանապարհներից և այլն։

Հողագործական արտադրության արդյունքների գինը որոշվում է ոչ թե ամենալավ կամ միջակ որակի հողի վրա կատարված արտադրության արժեքով, այլ այն հողի, որ ամենավատն է թե որակի և թե շուկա փոխադրելու պայմանների կողմից։ Այն տարբերությունը, որ գոյություն է ունենում ամենավատ ու ավելի լավ հողերի արդյունքների արտադրության գների միջև, տալիս է դիֆֆերենցիալ (կամ տարբերական) ռենտա։

35. Ի՞ՆՉ Է ՏՈԿՈՍԸ

Ժամանակակից բանկերն իրենց մեջ կենտրոնացնում են վիթխարի կապիտալներ, որ հավաքում են մի հատուկ գործառնության միջոցով, այսինքն՝ մի որոշ տոկոս վճարելով ավանդատուներին։ Եթե մի մարդ որոշ գումար ունի, որ անմիջապես չպիտի ծախսի մի բան գնելու համար, այս մարդու համար ավելի շահավետ է հանձնել այդ գումարը բանկին, որովհետև գումարն այնտեղ կաճի։ Հարց է առաջ գալիս, թե ինչ օգուտ ունեն բանկերը փող (տոկոս) վճարելու ստացած փողի համար, որն հարկավ բանկում պառկած մնալուց չի աճում։ Օգուտն այն է, որ ավանդատուներից ստացած փողերը բանկերը պտույտի (оборот) յեն հանում այսինքն՝ տոկոսով տալիս են խոշոր կապիտալիստներին և, իհարկե, ավելի մեծ տոկոսով քան ինչ որ իրենք են վճարում ավանդատուներին։ Ահա այս տարբերությունը, որ բանկերի զուտ վաստակն է կազմում և սովորաբար շատ խոշոր վաստակ է լինում, կոչվում է բանկային վաստակ կամ տոկոս։

36. Ի՞ՆՉ Է ՎԱՐԿԸ

Արտադրության կապիտալիստական ձևի զարգացման հետ զարգանում ու ձևափոխվում է նաև նախկին վաշխառուական կապիտալը։ Եթե առաջ դիմում էին վաշխառուին միայն կարիքից ստիպված, արտադրության կապիտալիստական ձևի ժամանակ վաշխառուին դիմում են արդեն ձեռնարկությունները ընդլայնելու կամ նորերը բանալու համար, այսինքն՝ հավելյալ արժեքն ավելի մեծացնելու համար։ Անհատ-վաշխառուն—որ այնքան ատված ու արհամարհված մի տիպար էր—անցնում է արդեն անցյալ ավանդությունների շարքը և նրան փոխարինում է վաշխառուական (կամ ուրիշ խոսքով ասած՝ վարկային) հիմնարկությունը—բանկը։ Ժամանակակից կապիտալիստական բանկերը այն հատկությունն ունեն, որ կապիտալ են դարձնում ոչ-կապիտալիստների ամեն տեսակ միջոցները՝ սկսած մի որևէ դռնապանի կամ խոհարարուհու խնայողություններից մինչև վանքերի խնայողությունները։ Բացի սրանից բանկերում հավաքվում են նաև այն միջոցները, որոնք ժամանակավորապես ազատ են մի որևէ ձեռնարկության մեջ և որոնք բանկերի միջոցով մատչելի յեն դառնում այն հիմնարկություններին, որոնք ընդհակառակն, այդ միջոցների կարիքն են զգում։ Այդ գործառնությունների հետևանքն այն է լինում, որ կապիտալը չափազանց աճում է կապիտալիստների ձեռքում և կապիտալիստական արտադրությունն ուժգին զարգանում է։ Ուրեմն, բանկային գործառնությունները, որոնք արդյունաբերական ու առևտրական ձեռնարկություններին դրամական միջոցներ են մատակարարում և սրանով նպաստում նրանց ուժեղ զարգացման—կոչվում են վարկ։

A 3856

37. Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՎՈՒՄ ՇՈՒԿԱՆԵՐԸ

Շուկաները ստորաբաժանվում են ներքին և արտաքին շուկաների։

38. Ի՞ՆՉ Է ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՆ

Բառիս սովորական առումով ներքին շուկա (կամ ընդհանրապես շուկա) ասելով հասկանում են այն տեղերի գումարությունը (совокупность), որտեղ ապրանքներ են վաճառում։ Այսպիսի որոշումը չի ընդգրկում ամբողջ գաղափարը և ոչինչ չի պարզաբանում։

Շուկան մի յերևույթ է, որ կապ ունի ապրանքային տնտեսության

հետ, իսկ վերջինիս հիմքն աշխատանքի հասարակական բաժանումն ե: Աշխատանքի բաժանման շնորհիվ հողագործությունից աստիճանաբար մինը մյուսի յետեվից բաժանվում են հում նյութի մշակման զանազան տեսակները ու կազմում արդյունաբերության անկախ ճյուղեր, վորոնք իրենց արտադրանքները, ներկա դեպքում ապրանքները, փոխանակում են հողագործության արտադրանքների հետ: Այս կերպ առաջացող վոչ հողագործական (արդյունաբերական) տնտեսությունը շարունակ ավելի ու ավելի յե բնակչությունը հեռացնում հողագործությունից և մղում դեպի մշակող արդյունաբերությունը: Անմիջական արտադրողի անջատումն արտադրության միջոցներից, այսինքն նրա զրկվելն անկախությունից՝ ցույց ե տալիս, վոր անցում ե տեղի ունենում պարզ ապրանքային արտադրությունից դեպի կապիտալիստականն, և ստեղծում ե ներքին շուկա: Ապրանքային տնտեսությունն ընդհանրական տիրապետության ե հասնում միայն կապիտալիստական կարգի ժամանակ,—ահա թե ինչու շուկան ել բացառիկ նշանակություն ե ստանում միայն կապիտալիզմի ժամանակ:

Պարզ ապրանքային տնտեսությունից կապիտալիստականին անցնելու ժամանակ՝ ներքին շուկա ստեղծելու պրոցեսը յերկու ուղիով ե ընթանում. մի կողմից՝ արտադրության միջոցները, վորոնք առաջ ծառայում եյին մանր արտադրողին նրա ապրուստի համար, նոր տիրոջ ձեռքում դառնում են կապիտալ, ծառայում են իբրև միջոց ապրանք արտադրելու համար և, հետևաբար, հենց իրենք ապրանք են դառնում: Այսպիսով ստեղծվում ե արտադրության միջոցների շուկա: Մյուս կողմից՝ կենսամիջոցներըն առաջ մանր արտադրողը պատրաստում, ճարում եր սեփական տնտեսությամբ, իսկ այժմ՝ զրկված արտադրության միջոցներից՝ նա հարկադըրված ե ապրուստի միջոցները ձեռք բերելու դրսից՝ աշխատավարձն իրացման (реализация) յենթարկելով: Այսպիսով ստեղծվում ե սպառման առարկաների շուկա:

Այստեղից պարզ ե, վոր ներքին շուկան առաջանում ու զարգանում ե ապրանքային տնտեսության հետ միասին: Կապիտալիստական տնտեսության համար ներքին շուկա ստեղծում ե հենց ինքը զարգացող կապիտալիզմը, վոր խորացնում ե աշխատանքի հանրային բաժանումն ու անմիջական արտադրողին տրոհում՝ դարձնելով բանվոր կամ կապիտալիստ: Կապիտալիզմի զարգացման աստիճանը յերկրում վորոշում ե նաև ներքին շուկայի զարգացման աստիճանը: Արդյունաբերության արագ զարգացումը կապիտալիստական յերկրներում ստեղծում եր արտադրության միջոցների ու սպառման միջոցների հսկայական ու հարաճուն պահանջ, այսինքն ստեղծում եր հսկայական շուկա:

Ուրեմն՝ ապրանքների այն քանակը, վոր կարող ե կլանվել յերկրի ներսում տվյալ մոմենտում, կազմում ե նրա շուկան:

39. Ի՞ՆՉ Ե ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՆ.

Կապիտալիստական արտադրության աճումը կատարվում ե վոչ այնքան սպառման առարկաներ շատացնելով, վորքան արտադրության միջոցներն ավելացնելով, այսինքն՝ արտադրության միջոցների աճումը գերազանցում ե սպառման առարկաների աճումից: Բայց արտադրության միջոց-

ների աճումն, այսինքն՝ արտադրող ուժերի զարգացման բարձր աստիճանն, առանց սպառման համապատասխան ընդլայնման, հարկադրում ե կապիտալիզմին միշտ ընդլայնելու իր տիրապետության սահմանները, գաղութացնելու (колонизировать) նոր յերկիրներ և վոչ-կապիտալիստական յերկիրները համաշխարհային տնտեսության հորձանքի մեջ քաշելու:

Ընդ սմին կապիտալիզմը զարգանում ե մի կողմից՝ խորության գծով, այսինքն՝ մեծացնելով իր արտադրությունը պետության տվյալ վորոշ տերրիտորիայի վրա, մյուս կողմից՝ լայնության գծով, այսինքն՝ տարածելով իր ազդեցությունը նոր, տվյալ պետության սահմաններից դուրս գտնվող, տերրիտորիայի վրա: Հենց այս նոր յերկիրներն են, վոր տվյալ յերկրի կապիտալիզմի համար կազմում են արտաքին շուկա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ I ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. Дикштейн, „Кто чем живет“, изд. Моск. Рабочий, 1922 г. (կան հայերեն թարգմանություններ. Դիկշտեյն. «Ո՞վ ինչով ե ապրում»):
2. К. Каутский, „Очерки и этюды по политической экономии“.
3. А. Богданов, „Началный курс политической экономии в вопросах и ответах“.
4. А. Богданов, „Краткий курс экономической науки“, под ред. Дволайцскаго- (Կա նախկին հրատարակությունների հայերեն թարգմանություն. Ա. Բոգդանով. «Տնտեսական գիտության համառոտ դասընթաց» թարգմ. Աշոտ Չիլինկարյանի):
5. Корш. „Сущность марксизма“, изд. „Красная Новь“.
6. Ф. Михалевский, „Закон трудовой стоимости“. изд. „Московский Рабочий“. 1923 г.
7. Л. Любимов, „Курс политической экономии“ т. I (Հայերեն—պրոֆ. Լև Լյուբիմով. Քաղաքատնտեսության դասընթացը», թարգմ. Գ. Ալթունյանի, Լենինական, 1924 թ.):
8. М. Бэр, „К. Маркс, его жизнь и учение“. Стр. 67—87.
9. К. Маркс. Наемный труд и Капитал“. (Հայերեն հին թարգմանությունները հազվագյուտ են. պետք ե օգտվել Հայպետհրատի վերջին հրատարակությունից. Կարլ Մարքս. «Վարձու աշխատանք ու կապիտալ» Ենգելսի ներածությամբ, թարգմ. Ս. Ջահումյանի, Յերևան, 1921 թ.
10. К. Маркс, „Заработная плата, цена и прибыль“.
11. К. Каутский—„Экономическое учение К. Маркса“, (Հայերեն՝ Կ. Կաուցկի. «Կարլ Մարքսի տնտեսական ուսմունքը», թարգ. Ա. Չիլինգարյանի, խմբ. Հ. Գուսիկյանի, Մոսկվա 1922 թ.:
12 Ю. Борхардт, „Капитал К. Маркса“.

ԳԼՈՒԽ II

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

1. Ի՞ՆՉՊԵՍ Է ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԿԱՆՈՐԵՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ԻՐ ԾՐԱԳԻՐԸ—ԿՈՄՈՒՆԻԶՄԸ ՈՒ ԻՐ ՏԱԿՏԻԿԱՆ (ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ)—ԱՅՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ԿՌՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՎՈՐ ՄՂՈՒՄ ՈՒ ՆԻՐԱՐԿՈՒՄ Է ՀԱՆՈՒՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

—Ուսումնասիրելով մարդկության ամբողջ պատմությունը և, մանավանդ, ուսումնասիրելով կապիտալիստական կարգի հիմնական հատկությունները, գլխավոր օրենքներն ու զարգացման ընթացքը:

Ուսումնասիրելով մարդկային նախընթաց հասարակությունների պատմությունը և, մանավանդ, կապիտալիզմի կազմությունն ու զարգացումը, կոմունիստական կուսակցությունն ապացուցում է, թե կոմունիզմը, վորի համար նա պայքարում է, իր հնարածը չէ, այլ մի նպատակ է, դեպի վորն անխուսափելիորեն տանում է ինքը՝ կյանքն ու ներկա հասարակական դասակարգերի կռիվը: Ապացուցել կոմունիզմի գալստյան և նրա համար մղվող բացորոշ կռվի այն անհրաժեշտությունը՝ նշանակում է հենց գիտականորեն հիմնավորել կոմունիստական կուսակցության ծրագիրն ու տակտիկան:

Իսկ այս բանի համար անհրաժեշտ է վոչ թե իր գլխից մի բան հորինել, այլ ամենաուշադիր կերպով ուսումնասիրել կապիտալիզմի օրենքներն ու զարգացման ընթացքը, վորին փոխարինելու պիտի գա կոմունիզմը:

Անհրաժեշտ է կապիտալիզմի ու սրա շարժիչ զսպանակների ու հակասությունների ուսումնասիրության միջոցով ցույց տալ, վոր կապիտալիզմն իր զարգացման ընթացքում ստեղծում է այնպիսի ուժեր, վորոնք աճելով, հասցնում են մի վիճակի, յերբ կապիտալիզմը սնանկանալով, վերջիվերջո կործանվում է և նրան փոխարինում է կոմունիստական հասարակությունը:

2. ՎՈ՞ՐՈՆՔ ԵՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Կապիտալիստական կարգի կազմության ու զարգացման մեջ կարելի յե սահմանել բազմաթիվ տարբեր օրենքներ կամ կանոններ, վորոնք արտահայտում են կապիտալիզմին հատուկ բազմազան փոխհարաբերությունները: Այսպիսի բազմաթիվ օրենքների մեջ շատ չեն գլխավոր օրենքներն, այսինքն՝ այն ամենակարևոր օրենքները, վորոնց միջոցով կարելի յե ըմբռնել կապիտալիզմի բոլոր այն օրենքներն ու յերևույթները: Այս գլխավոր օրենքները կարելի յե վերածել հետևյալ յերկսի. առաջին՝ **պրոլետարիատի բանվորական ուժի շահագործման օրենք, յերկրորդ՝ անարխիայի (անկազմակերպության) ու սրանից առաջացող մրցության օրենք (մրցության, վոր տեղի յե ունենում կապիտալիստների միջև)**: Այս յերկու ամենագլխավոր օրենքները հատուկ են կապիտալիզմին ու գործում են նրա մեջ միշտ նրա գոյության ամբողջ ընթացքում, մինչև նրա վերջնական վոչընչացումը:

3. Ի՞ՆՉ Է ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՔԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՕՐՈՎ

Կապիտալիզմի օրով շահագործման օրենքն այն է, վոր կապիտալիստների դասակարգն, օգտագործելով արտադրության մեջ պրոլետարներից գնած բանվորական ուժն, այսինքն՝ աշխատեցնելով նրանց, աշխատանքից կորզում է ավելի շատ արդյունքներ ու ավելի մեծ արժեք, քան այն, վոր ծախսվում է աշխատավարձի վրա, և այս տարբերությունը, վոր կոչվում է հավելյալ արժեք, կապիտալիստները յուրացնում են ու գործադրում իրենց կապիտալի մեծացնելու, կուտակելու, այսինքն՝ շահագործումը շարունակելու և շատացնելու համար:

Այս հավելյալ արժեքի ու վաստակի յետևից վազելը կապիտալիզմի հիմնական շարժիչ ուժն է: Մշտական ու անսահման վազքը վաստակի յետևից, կուտակման անհագ ծարավը, կապիտալիզմի պատահական հատկանիշը չէ, այլ մի անհրաժեշտություն է նրա համար, վոր բացատրվում է նրանով, վոր կապիտալիստական արտադրությունն ապրանքային է, անարխիկ (անկազմակերպ) և կապիտալի ամբողջ կյանքը կախված է շուկայից ու այստեղ կատարվող մրցումից վորտեղ հաղթանակն ուժեղինն է, այսինքն ավելի խոշոր կապիտալինը, վոր կարողացել է ձեռք ձգել վաստակի մեծագույն քանակը:

4. ԻՆՉՈ՞Ւ ՅԵ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՅԵՆԹԱՐԿՎԵԼՈՒ ՀԱՐԿԱԴՐՎԱԾ

Վորովհետև պրոլետարները հնարավորություն չունեն ապրել այլ կերպ, քան վարձվելով միայն կամ ծախելով իրենց բանվորական ուժն արտադրության միջոցների ու գործիքների սեփականատիրոջը, այն է՝ կապիտալիստին, և այս վարձման պրոցեսում բանվորը կողմերից ավելի թույլն է, վորին կապիտալիստը թելադրում է իր կողոպտիչ պայմանները, ստիպելով պրոլետարին համաձայնելու ցած աշխատավարձի, յերկար 10—12 և ավելի ժամ ունեցող բանվորական օրվա, աշխատանքի ծանր, հաճախ սպանիչ պայմանների, առանց վստահ լինելու վաղվան օրվա մասին, յեթե տերը նրան արձակե, և այլն:

Բայց նույնիսկ այս կողոպտիչ պայմաններով էլ պրոլետարիատի մի մասը չի կարողանում աշխատանք գտնել ու ստիպված է տանել գործազրկության ու սովի բոլոր տանջանքները կամ սինլքորական (басяческий) կյանք վարել (լյումպեն-պրոլետարներ, բոսյակներ), պոռնկությամբ պարապել և այլն:

5. Ի՞ՆՉ Է ԱՆԱՐԽԻԱՆ (ԱՆԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ) ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՕՐՈՎ

Կապիտալիզմին հատուկ անարխիան, այն է, որ ամեն մի առանձին կապիտալիստական ձեռնարկություն (ֆաբրիկա, գործարան, առևտրական հաստատություն և այլն) կամ նրանց մի խմբակ աշխատում է միշտ անկախ առանձին ու մյուս բոլորից մեկուսացած, առանց մի ընդհանուր ծրագրի ու հաշվառքի աշխատում է անորոշ շուկայի համար՝ առաջուց չիմանալով այս շուկայի պահանջը և մանավանդ, որ գլխավորն է, առանց իմանալու այն առաջարկը, որ կլինի շուկայում իրարից անկախ աշխատող մյուս բոլոր կապիտալիստական ձեռնարկությունների կողմից։ Ընդ սմին ամեն մի կապիտալիստական ձեռնարկություն ձգտում է ստանալու ամենամեծ վաստակըն ու ամենանպաստավոր պայմաններով վաճառելու իր ապրանքները շուկայում։ Զարմանալի չէ, որ այս պայմաններում՝ կապիտալիզմի անարխիայի (անկազմակերպության) շնորհիվ՝ առանձին կապիտալիստների ու նրանց խմբակների միջև շուկայում միշտ գոյություն ունի մրցում։

Այս մրցման էությունն այն է, որ առանձին կապիտալիստներն ու նրանց խմբակները կռիվ են մղում շուկայում իրար դեմ՝ իրենց ապրանքների կամ կապիտալների վաճառքի համար, կամ այլ խոսքով, շուկայի տիրապետության համար։

6. Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՀԱՄԱՐ ԱՅՍ ՅԵՐԿՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ. ՄԻ ԿՈՂՄԻՑ՝ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՕՐԵՆՔԸ ՅԵՎ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ— ԱՆԱՐԽԻԱՅԻ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՄՐՑՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Կոմունիզմն, ուսումնասիրելով այս յերկու գլխավոր օրենքների մշտական ազդեցությունն, իբրև հետևանք այս ուսումնասիրության սահմանում է այն հիմնական ու խոր հակասություններն ու հակադրությունները, որոնք խարխլում և պայթեցնում են կապիտալիզմը ներսից։

Բանվորական ուժի շահագործումը հիմք է ծառայում բանվոր դասակարգի հարաճուն ու սրվող պայքարին՝ ընդդեմ կապիտալիստների ու կապիտալիզմի տիրապետության։

Մյուս կողմից՝ անարխիան ու կապիտալիստների միջև յեղած մրցումը շուկայի համար՝ առաջ են բերում հասարակության արտադրող ուժերի անխնա վատնում ու փչացում և, այս պայքարի ու սրա քայքայիչ հետևանքների (ճգնաժամներ, պատերազմներ, և այլն) ուժեղացմամբ, տանում են դեպի կապիտալիզմի փլուզում ու խորտակում և հասցնում կապիտալիստական տնտեսակարգը նոր, կոմունիստական տնտեսակարգով փոխարինելու անհրաժեշտության։

Սակայն, նախ քան անկման ու խորտակման այս վիճակին հասնելը, կապիտալիզմն անցնում է մի շարք աստիճաններ, յերբ արտադրող ուժերը առաջին անգամ այս տնտեսության շրջանակում մարդկության պատմության մեջ ամենից ուժեղ զարգացում են ստանում՝ ճիշտ այն հիմնական գործոնների,—բանվոր դասակարգի շահագործման ու կապիտալիստների մրցման,—զարգացման շնորհիվ, որոնք հետո պիտի տանեն նրան դեպի անխուսափելի խորտակում։

7. Ի՞ՆՉ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ԵՆ ՍՏԱՑՎՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԱՏՈՒԿ ԱՆԱՐԽԻԱՅԻՑ ՈՒ ՄՐՑՈՒՄԻՑ

Այս հետևանքները բազմաթիվ ու այլազան են։ Մենք կանգ կառնենք միայն ամենագլխավոր հետևանքների վրա, որոնք ամենից ավելի էական են կապիտալիզմի զարգացման համար։

Սրանք են, արտադրության կոնցենտրացիան, (խոշորացումը), տեխնիկայի ու մանավանդ մեքենականության (машинизм) *ուժեղ զարգացումը, կապիտալի կոնցենտրացիան (համակենտրոնացումը) ու կենտրոնացումը* (централизация) *և անհատների ու խմբերի կռվի սրվելը հասարակության մեջ։*

Բացատրենք կապիտալիզմին հատուկ այս յերևույթներից յուրաքանչյուրն առանձին առանձին։

8. Ի՞ՆՉ Է ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆ (ԽՈՇՈՐԱՑՈՒՄԸ) ՅԵՎ Ի՞ՆՉՈՒ ԱՅՍ ՅԵՐԵՎՈՒՅԹՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ Է ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՕՐՈՎ

Արտադրության կոնցետրացիան այն է, որ միջակ ու խոշոր կապիտալիստական արտադրությունը հաղթում ու վտարում է մանր ու աշխատավորական արտադրությունը, իսկ միջակ ու խոշոր կապիտալիստական ձեռնարկությունների միջից էլ հաղթում ու վանում են մյուսներին միշտ ավելի ու ավելի խոշորները։

Ժամանակակից խոշոր կապիտալիստական ֆաբրիկաներն ու գործարաններն ունեն յերբեմն տասնյակ հազարից ավելի աշխատող բանվորներ ու ծառայողներ՝ հսկայական մեքենաներով ու կառուցվածքներով։ Սակայն նրանք առաջացել են, համեմատաբար նորերումս և բուսել են իրենց տրորած մանր ու միջակ ձեռնարկությունների դիակների վրա։ Այս բացատրվում է նրանով, որ շուկայում մրցության մեջ հաղթում են միայն այն ձեռնարկությունները, որոնք ընդունակ են արտադրելու ավելի էժանագին ու ավելի լավ ապրանք՝ այն էլ գնորդի համար ամենամեծ հարմարություններով, իսկ այս ամենից հեշտ կարող է անել ավելի խոշոր արտադրությունը։

Խոշոր արտադրությունը, մանր ու ավելի քիչ համակենտրոնացած (խոշորացած) արտադրության հետ համեմատած՝ ունի մի շարք առավելություններ, որոնց վրա հենվելով նա վտարում է մանր ու միջակ տնտեսությունը։ Ռուսաստանում խոշոր արտադրության աճումն ուժեղանում էր այն պատճառով, որ օտարյերկրյա կապիտալը մի անգամից խոշոր ձեռնարկություններ էր կազմակերպում։ Արդեն 1902 թ. ամենախոշոր ձեռնարկություններում աշխատում էր Ռուսաստանի բոլոր արդյունաբերական բանվորների գրեթե կեսը։

9. ԽՈՇՈՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՅԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ Ի՞ՆՉ ԵՆ

Նախ և առաջ՝ առավելությունն այն է, որ ինչքան ավելի խոշոր է արտադրությունն, այնքան ավելի շուտ կարելի յե այնտեղ մուծել ու օգտագործել լավագույն, ամենակատարելագործված, բայց միևույն ժամանակ խոշոր ու թանկարժեք մեքենաներ, գործիքներ ու արտադրության բարե-

փոխված հնարներ։ Իսկ վորքան ավելի կատարյալ է տեխնիկան, այնքան ավելի հաջողակ է աշխատանքը, և այնքան ավելի էժան է նստում ապրանքի միավորը կապիտալիստ-ձեռնարկողին։

Յերկրորդ՝ վորքան արտադրությունն ավելի խոշոր է, այնքան ավելի շուտ և լայնորեն կարելի յե նրա մեջ կիրառել աշխատանքի միացման ու բաժանման (մասնագիտացման) հնարները, վորոնք անմատչելի յեն մանր արտադրությանը։ Իսկ այս հնարները, մանավանդ աշխատանքի բաժանման (մասնագիտացման) հնարը,—շատ մեծ չափով են բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը։

Յերրորդ՝ խոշոր արտադրությունը հնարավորություն ունի խնայելու, տնտեսելու այն ծախսերը, վոր անում են շինությունների, նրանց սարք ու կարգի ու պահպանության, լուսավորության ու տաքության, բանվորական ուժի ոգտագործման, արտադրության ավելցուկների ու թափթփուկների վրա, հում նյութեր ու ամեն անհրաժեշտ բան գնելու ժամանակ, վարկ ստանալիս, վաճառքի միջոցին, և այլն։

Վերջապես չորրորդ՝ մանր ու միջակ ձեռնարկություններին բնավ մատչելի չեն արտադրության մի շարք ճյուղեր, վորտեղ կարելի յե մի բան կառուցել միայն շնորհիվ ուժեղ ու բարձր տեխնիկայի, վոր հնարավոր է ամենախոշոր ձեռնարկությունների մեջ, որինակ՝ շոգեկառքեր, զրահակիրներ, ժամանակակից հսկայական մեքենաներ շինելը և այլն։

10. ՈՒՐ Է ՏԱՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆ (խոշորացումը)

Խոշոր արտադրության հաղթանակի ամիջական հետևանքը լինում է կապիտալիզմի ժամանակ մանր ու միջակ սեփականատերերի, առաջին հերթին արհեստավորների ու մանր ձեռնարկուների, քայքայումն ու պրոլետարացումը, այսինքն նրանց՝ վարձու բանվորների ու ծառայողների, պրոլետարիատի շարքերն անցնելը։

Այս հանգամանքն իր հերթին աննպաստ ազդեցություն է ունենում այն կռվի վրա, վոր բանվոր դասակարգը մղում է աշխատանքի պայմանների համար, քանի վոր ավելանում է աշխատանք փնտրողների թիվ ու աճում է գործազուրկների քանակը։

11. ԻՆՉՈՒ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՏԵՂ ՅԵ ՈՒՆԵՆՈՒՄ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒ ՄԱՆԱՎԱՆԴ ՄԱՇԻՆԻԶՄԻ (Մեքենաների գործածության) ԶԱՐԳԱՑՈՒՄ

Տեխնիկան ու մեքենաները զարգանում եյին կապիտալիզմից առաջ, էլ, բայց մինչկապիտալիստական տնտեսության բնական (սպառողական) բնույթի պատճառով այս զարգացումը կատարվում եր դանդաղ, վորովհետև սահմանափակ եյին վաճառքի շուկաները և փողն աննշան դեր եր խաղում։ Իսկ յերբ շուկան զարգացավ ու փողի դերը մեծացավ, այն ժամանակ վոչ միայն առաջ յեկավ անսահման կուտակման հնարավորություն, այլև ամեն մի առանձին կապիտալիստի համար անհրաժեշտություն ծագեց առաջ մղելու տեխնիկան ըստ կարելվույն արագ, վորովհետև ավելի կատարելագործված մեքենաների ու տեխնիկական հնարների ոգնությամբ ամեն մի կապիտալիստ մյուսներից ավելի յե վաստակ ստանում և հաղթում իր մրցակիցներին։

12. ԻՆՉ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՅԵ ՀԱՍՑՆՈՒՄ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՈՒ ՄԱՆԱՎԱՆԴ ՄԱՇԻՆԻԶՄԻ ՈՒԺԵՂ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Մեծացնելով արտադրողականությունն ու էժանացնելով ապրանքների գները, ոգնելով խոշոր կապիտալիստներին վտարելու մանր սեփականատերերին ու միջակ ձեռնարկուներին, տեխնիկայի ու մանավանդ մաշինիզմի արագ աճումը ցույց է տալիս միաժամանակ, վոր կենդանի բանվորական ուժի կիրառումն հարաճուն կերպով վտարվում և կրճատվում է։

Ամեն մի նոր, ավելի կատարելագործված խոշոր մեքենա գործի մեջ է մտցվում կապիտալիզմի ժամանակ այն դեպքում միայն, յեթե կրճատում է արտադրության ծախքերն ու կապիտալիստական ավելի մեծ վաստակ է խոստանում, իսկ այս, սովորաբար, կատարվում է ի հաշիվ բանվորների թվի նվազման, նրանց աշխատավարձի իջեցման, բանվորական որվա յերկարացման և այլն։ Ուստի և՝ մաշինիզմի ու տեխնիկայի զարգացումը գործազրկության աղբյուր է դառնում և բանվորական պահեստազորի (резервная армия) աճման պատճառ։ Յեվ վորովհետև մեքենաները միշտ մտցվում են արդարության մերթ այս ճյուղի մեջ, մերթ այն, յերբեմն այս ձեռնարկության մեջ, յերբեմն այն, ուստի պարզ է, վոր գործազրկությունը միշտ գոյություն պիտի ունենա կապիտալիզմի ժամանակ, վորովհետև կապիտալն անընդհատ փողոց է շպրտում իրեն համար ավելորդ բանվորներին և նրանցից ստեղծում է իրեն համար պահեստի բանվորական ուժեր։

Բոլոր կապիտալիստական յերկրներում տեսնում ենք, վոր խոշոր քաղաքներում միշտ կա գործազուրկների մի հսկայական քանակություն։ Այս բանվորական պահեստազորի գոյությունը հնարավորություն է տալիս կապիտալիստներին սաստկացնելու բանվոր դասակարգի կախումն ու ճնշումը։

Մաշինիզմի զարգացումը կապիտալիզմի ժամանակ առաջ է բերում աշխատանքի հսկայական բաժանում և հիմնավորապես փոխում է բանվորի հարաբերությունն աշխատանքի գործիքների նկատմամբ։ Մանուֆակտուրայի ու արհեստի մեջ ամբողջ արտադրության հիմքը կազմողը ձեռքի աշխատանքը, բանվորի հմտությունը, ճարպիկությունն ու ուժն է մնում։ Մանուֆակտուրայի ու արհեստի մեջ բանվորը հարկադրում է գործիքին ծառայելու իրեն։ Իսկ գործարանում բանվորը ծառայում է մեքենային։ Մանուֆակտուրայի ու արհեստի մեջ աշխատանքի գործիքի շարժումը բխում է բանվորից, իսկ գործարանում բանվորը պարտական է հետևելու մեքենայի շարժումներին և միշտ հարմարվելու նրանց։ Գործարանում մեռյալ մեխանիզմը գոյություն ունի բանվորներից անկախ, և բանվորները միացված են մեքենային վորպես կենդանի կցորդներ, վորոնք հպատակվում են գործիքների ու մեքենաների միապաղաղ շարժողությանը։

Մաշինիզմի զարգացումը կապիտալիզմի ժամանակ սաստիկ ավելացնում է կանանց ու յերեխաների աշխատանքի կիրառումը կապիտալիստական ձեռնարկություններում։ Առաջ, նախքան մեքենաներն ու բարձր կապիտալիստական տեխնիկան, պետք եր մի վորոշ հմտություն, վոր ձեռք եր բերվում հաճախ յերկարատև վարժությամբ, կամ մեծ լարում՝ արդյունաբերական ձեռնարկություններում աշխատելու համար։

Մաշինիզմի լայն զարգացումն ու աշխատանքի՝ ընդարձակորեն կիրառված բաժանումը կապիտալիզմի ժամանակ չափազանց պարզ դարձրին աշխատանքը, շատ դեպքերում մկանային ույժն ավելորդ արին և առաջին անգամ հնարավորություն ստեղծեցին կանանց ու յերեխաների աշխատանքը շահագործելու հսկայական չափերով:

Կանայք ու յերեխաները չեն կարող կապիտալիստին այնպիսի դիմադրություն ցույց տալ, ինչպես հասակավոր տղամարդիկ, ուստի և կապիտալիստը, հետամուտ լինելով եժանագին ու խոնարհ բանվորական ուժ ձեռք բերելու, աշխատում է տղամարդկանց ու հասակավորներին փոխարինել կանանցով ու յերեխաներով՝ սրանցից ավելի մեծաքանակ հավելյալ աշխատանք քամելու համար:

Փոխանակ մի հասակավոր բանվորի, վոր առաջ կերակրում եր ամբողջ ընտանիքը, հիմա կապիտալիստների համար աշխատում են ընտանիքի բոլոր անդամները, և հաճախ տղամարդը զրկվում է դատումից (заработок) և ստիպված է լինում դառնալու կնոջ ու յերեխաների խնամքի առարկա:

Ամենախոշոր կապիտալիստական յերկրների կանանց աշխատանքի վիճակագրությունը տալիս է հսկա ու հարաճուն թվեր: Մասնավորապես Ռուսաստանում բանվոր կանանց թիվը նույնպես աճել է միշտ: Յեթե 1900 թ. կանայք կազմում եյին բոլոր ֆաբրիկային ու գործարանային բանվորների 25% (մի քառորդը), 1908 թ. արդեն գտնում ենք 31%, այսինքն՝ գրեթե մի յերրորդը, իսկ 1912 թ.—45%, այսինքն՝ մոտ կեսը: Գործարանային արդյունաբերության մի քանի ճյուղերում կանայք մեծամասնություն են կազմում. որինակ՝ մանածագործական արտադրության մեջ: Պատերազմի տարիներում բանվոր կանանց թիվը ամեն տեղ ավելացավ մեծ չափով: Իսկ ինչ վերաբերում է յերեխաների աշխատանքին, չնայած զանազան արգելումներին ու սահմանափակումներին, այս եվ կիրառվում է լայնորեն բոլոր կապիտալիստական յերկրներում, վորոնց թվում նաև ամենազարգացած յերկրներում (Ամերիկա):

Յերբ կենդանի բանվորական ուժը մեքենաներով է փոխարինվում և գործազրկությունը ծավալվում է այս յերևույթներին հարակից՝ կապիտալիստական յերկրներում ամեն տեղ զարգանում ու մեծ նախճիր է գործում պոռնկությունը, յերբ կարիքը ստիպում է ապրելու կամ փող դատելու իր մարմինը ծախելով: Այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսին են Համբուրգը, Լոնդոնը և այլն, պոռնկության զոհերն հաշվում են տասնյակ հազար: Կապիտալը դարձնում է նրանց վաստակի ու հարստացման աղբյուր կառուցելով խոշոր, կապիտալիստորեն կազմակերպված հասարակաց տներ:

Այսպես մեքենան ու տեխնիքական հառաջադիմությունը, փոխանակ աշխատավորների համար բարիք լինելու, կապիտալիստական պայմաններում դառնում են բանվոր դասակարգի պատուհասը, այն գործիքը, վոր նրանց ստրկացնում է կապիտալի ձեռքի տակ ու միջոց է դառնում աշխատանքի պայմանները վատթարացնելու:

Սրանով է բացատրվում այն հանգամանքը, վոր չնայած հարստությունն առասպելական չափերով է աճում հասարակության մեջ, այնուամենայնիվ բանվորի ստացած բաժինը չի ավելանում և նրա իրական աշխատավարձը մնում է մոտավորապես միևնույն մակարդակի վրա, իսկ յերբեմն

(պատերազմների ու կրիզիսների, գործազրկության սաստկանալու ժամանակ) շատ տեղ դեռ պակասում եվ է:

Յեվ այս կատարվում է այն ժամանակ, յերբ մի խումբ կապիտալիստներ հարստանում են անլուր չափերով և անբաժանորեն հափշտակում տեխնիքական հառաջադիմության բոլոր արդասիքները:

13. ԻՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՄԱՇԻՆԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մաշինիզմի զարգացումը, վտարելով մարդկային բանվորական ուժը, կրճատում է այն ծախքերը, վոր կապիտալիստն անում է աշխատավարձի համար (կապիտալի փոփոխական մասը) և ավելացնում է կապիտալի այն մասի վրա արվող ծախսերը, վոր կոչվում է մշտական (և վորը գնում է մեքենաների, հում նյութերի և այլ բաների): Կապիտալի մշտական մասի այս աճումը՝ նրա փոփոխական մասի համեմատությամբ՝ կոչվում է կապիտալի որգանական կազմության բարձրացում և խոշոր նշանակություն ունի կապիտալիզմի կյանքում: Բանն այն է, վոր հավելյալ արժեքը ստեղծում է միայն բանվորական ուժով, այսինքն՝ կապիտալի փոփոխական մասով, ուստի և կապիտալի կազմության մեջ աշխատավարձի մասի կրճատումը ստիպում է կապիտալիստներին ավելի արագ զարգացնել մաշինիզմն ու մտցնել նոր տեխնիքական կատարելագործություններ՝ ավելի մեծ վաստակ ստանալու համար:

14. ԻՆՉ Ե ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆ (ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ) ՈՒ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ

Կոնցենտրացիան կապիտալի մեծացումն կամ աճումն է, վոր տեղի յե ունենում, նրա մշտական կուտակման հետևանքով:

Կապիտալն աճում է անընդհատ, վորովհետև քանի գնում, այնքան ավելի ու ավելի յե մեծանում հավելյալ արժեքի քանակը կապիտալիստների ձեռքում, վորոնք այդ շատացող մասը գործադրում են արտադրությունն ընդլայնելու, հետևաբար և կապիտալն եվ ավելի աճեցնելու համար:

Կապիտալի համակենտրոնացումից պետք է զանազանել նրա կենտրոնացումը: Կենտրոնացում ասելով հասկացվում է հարաճուն կապիտալի հավաքումն ավելի ու ավելի սակավաթիվ կապիտալիստների ձեռքում, այսինքն՝ կապիտալիստների թվի կրճատումն ու կապիտալի մեծացումը նրանցից ամեն մեկի ձեռքում:

Կապիտալի այս կենտրոնացումը շարունակ ավելի ու ավելի նվազող թվով կապիտալիստների ձեռքում առաջանում է մրցումից, շնորհիվ այն հանգամանքի, վոր մանր ու միջակ ձեռնարկուները սնանկանում են և կլանվում խոշոր կապիտալիստների կողմից, նույնպես և այն պարագայի շնորհիվ, վոր բազմաթիվ առանձին կապիտալիստների կապիտալներ միացնում, հավաքում են մի ձեռքում՝ սկզբում ակցիոներական ընկերությունների, իսկ հետո եվ սինդիկատների ու տրեստների ձևով:

Կապիտալի համակենտրոնացումն ու կենտրոնացումը հասնում են իրենց զարգացման ամենաբարձր աստիճանին կապիտալիզմի գոյության յերկրորդ շրջանում, ֆինանսական կապիտալի ժամանակ, յերբ տարածվում են կապիտալիստական սինդիկատներն ու տրեստները:

15. Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄՆ ՈՒ ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄԸ

Նրանց նշանակությունը նախ՝ այն է, որ համակենտրոնացման ու կենտրոնացման հետևանքով, կապիտալի աճման ու կապիտալիստների թվի նվազման հետ միասին, աճում է պրոլետարական բանակը, իսկ մյուս կողմից—պրոլետարական մասսաները կուտակվում են ավելի ու ավելի խոշոր ձեռնարկություններում ու արդյունաբերական խոշոր կենտրոններում։

Այդ հանգամանքն ուժեղացնում է լայն բանվորական մասսաների համախմբումը, կազմակերպությունը, հեղափոխականացումն ու կապիտալի դեմ մղած կռիվը։

16. Ի՞ՆՉ ԵՆ ԿՐԻԶԻՍՆԵՐԸ ԵՎ Ի՞ՆՉՈՒ ԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Կրիզիսները սնանկացման ու անկման կամ լճացման (застой) ըերիոդներ են արդյունաբերության մեջ, որոնք առաջանում են ապրանքների մի մասի կամ մեծ մասի չծախվելուց ու այս ապրանքների գերարտադրությունից։ Կրիզիսների միջոցին պահեստներն ու շուկաները լիքն են լինում ապրանքներով, բայց սրանք մնում են պառկած, առանց շարժողության, որովհետև գնող չկա, թեև լայն աշխատավոր մասսաները այս ապրանքների մեծ կարիք են զգում։ Սրա հետևանքն այն է լինում, որ ապրանքների գներն ընկնում են, թույլ, մանավանդ մանր ու միջակ կապիտալիստական ձեռնարկությունները սնանկանում և փակվում են, իսկ ավելի հզորներն ու խոշորները կրճատում կամ ժամանակավորապես դադարեցնում են իրենց արտադրությունը։

Բանվորները մեծ քանակությամբ փողոց են շպրտվում, և աշխատավարձն ընկնում է։ Կրիզիսները կանոնավորապես կրկնվում են որոշ ժամանակամիջոցներից հետո—սովորաբար 10-11 տարին մի անգամ։ XIX դարու յերկրորդ կիսում հակում է նկատվում, որ այս պարբերաժամը (период) յերկարում է։

Ուրեմն կրիզիսները կապիտալիզմի ժամանակ տեղի յեն ունենում պարբերաբար (կանոնավորապես կրկնվելով) և հարվածում են յերբեմն ամբողջ կապիտալիստական աշխարհը, յերբեմն նրա մեծ կամ փոքր մասը։ Կապիտալիզմի պատմության մեջ առաջին կրիզիսը, որ ծավալվեց, առանձին կապիտալիստական պետության սահմաններից դուրս, տեղի ունեցավ 1825—1826 թ. թ. այս կրիզիսը հաջորդեց այն տենդային չարաշահությանը, որ հետևանք եր հարավային ամերիկական շուկաների հայտնագործման։

Հետևյալ ընդհանուր կրիզիսը տեղի ունեցավ 1836—1837 թ. թ.։ Նրան նախորդում եր վիթխարի փթթումն անգլիական արդյունաբերության ու արտահանության, հատկապես դեպի Հյուսիսային Ամերիկա կատարած արտահանության։

Յերրորդ կրիզիսը ծավալվեց 1847 թ.։ Այս անգամ կապիտալը հատկու յեռանդով ձեռնարկել եր յերկաթուղիների շինության։ Կրիզիսի պատճառով աշխատանքից զրկվեցին 50,000-ից ավելի յերկաթուղային

բանվորներ։ Բացի դրանից չարաչար տուժեց բամբակեղենի, յերկաթեղենի և քարածխի արդյունաբերությունը։

XIX դարու յերկրորդ կիսի գլխավոր կրիզիսները տեղի ունեցան 1857, 1873, 1891—1892 և 1901 թվերին՝ ունենալով իրենց միջոցներում քիչ թե շատ տևողությամբ արդյունաբերական ու վարկային լճացման ու անկման շրջաններ առանձին յերկրներում։

XIX դարու յերկրորդ կիսի կրիզիսները ավելի լայնածավալ ու սուր են, քան XIX դարու սկզբներինը. նրանք ընդգրկում են ոչ միայն Յեվրոպան, այլև Ամերիկան, իսկ մյուս կողմից կրիզիսների տևողությունը մեծանում է. Նրանց սկզբնական վաղանցուկ բնույթը ավելի ու ավելի փոխվում, դառնում է տևական, խրոնիկական և սրանով էլ ավելի մեծ անկում ու քայքայում է մտցնում ամբողջ կապիտալիստական աշխարհի մեջ։

1914 թ. պատերազմից առաջ վերջին սուր ու խոշոր կրիզիսը յեղավ 1907 թ., այս անգամ ամենից ավելի ծավալվելով Ամերիկայում։ Այս կրիզիսի ընթացքը նկարագրվում է հետևյալ կերպով։

1907 թ. հոկտեմբերին գործիմաց (деловой) մարդկանց խոշոր մեծամասնության համար բոլորովին անսպասելի կերպով, նախ և առաջ Նյու-Յորկում ծագում է խուճապ։

Սրանից հետո մի շարք բանկեր թե Նյու-Յորկում և թե ամերիկական ուրիշ քաղաքներում դադարեցրին իրենց վճարումները։ Առաջ է գալիս ընդհանուր խուճապ, որի չափերը կարելի յե հասկանալ այն իրողությունից, որ հոկտեմբերի վերջին Նյու-Յորկում կանխիկ փողով փոխատվության տոկոսը հասնում է 125-ից ավելի բարձրի։ Բայց նույնիսկ այս հրեշավոր տոկոսներով էլ անհնար է լինում վարկ ստանալ։ Այսպիսով, վարկը դադարում է գործելուց, իսկ սրա հետ միասին արդյունաբերությունն ու առևտուրն իրենց ամբողջ ճակատով յենթարկվում են հսկայական կրճատման ու ցնցման։ Սրա հետևանքով ոչ միայն 1907, այլև ամբողջ 1908 թվականին Միացյալ Նահանգներում տիրեց ծայրահեղ արդյունաբերական լճացում ու մասսայական գործազրկություն, որ ի միջի այլոց արտահայտվեց նրանով, որ Յեվրոպայից յեկած հարյուր-հազարավոր գաղթականներ, աշխատանքի բացակայության պատճառով, ստիպված յեղան վերադառնալ հայրենիք։

Ամերիկական ծանր կրիզիսը չվարանեց անդրադառնալու նաև Անգլիայի ու ընդհանրապես Արևմտյան Յեվրոպայի վրա։

Ամերիկայի դրամական ու վարկային խուճապը ոսկու չափազանց մեծ պահանջ առաջացրեց Յեվրոպայում։

Ամերիկական կրիզիսի հետևանքով Յեվրոպայում էլ խոշոր ֆիրմաներ սնանկացան, մանավանդ Գերմանիայում։

Անգլիայում, որտեղ մի շարք տարիներում բանկերի մեջ կապիտալի տոկոսը համեմատաբար ցած եր, 1907 թ. վերջին նկատվում է տոկոսի սաստիկ բարձրացում, որի նպատակն եր կապիտալը դեպի բանկերը քաշել, բայց ապարդյուն. բանկերի ոսկու պաշարները սպառվում եյին, իսկ բանկերի դրամարկղները ոսկի չեր մտնում։ Սրա հետևանքով ամբողջ արդյունաբերությունն ու առևտուրը խոր խանգարման յենթարկվեցին և ամբողջ տնտեսական ճակատը սաստիկ անկում ունեցավ, որ տևեց ամբողջ

1908 թ։ Անգլիայում 1908 թ. սաստիկ ընկան թե ապրանքների ներմուծությունը (8,1%) և թե արտահանությունը (11,4%) մանավանդ դեպի Ամերիկա, Գերմանիա ու Յապոնիա, վորոնք ամենից ավելի են տուժել 1907-1908 թ. թ. համաշխարհային կրիզիսից։

Ապրանքների գները նույնպես ընկան (անգլիական «Եկոնոմիստ»-ի թվերի համաձայն, վորոնք այս են ցույց տալիս)—1907 թ. մայիսի 2, 601-ից մինչև 2,197 1908 թ. դեկտեմբերին։

Ավելի ևս ընկավ աշխատավարձը։ Մինչդեռ 1906-1907 թ. թ. աշխատավարձն ավելանում եր և այն էլ բավական նկատելի չափով, 1908 թ.թ. այն ընկավ $^1/_3$-ի չափ։

Աշխատավարձի այս անկումը առաջ բերեց իրենց յերկարատևությամբ սաստիկ համառ գործադուլներ, ընդ վորում գործադուլի ընթացքում կորցրած բանվորական օրերի ընդհանուր թիվը 1907 թ. 2 միլ. 162 հազարից բարձրացավ 1908 թ. մինչև 10 միլ. 783 հազար միմիայն Անգլիայում։

1909 թ. ապրանքային ու դրամական շուկաների դրությունը բավական լավանում է, կրիզիսը տեղի յէ տալիս, նկատվում է արդեն բարձրացման ձգտում, սակայն բանվորական շուկան 1909 թ. դեռ մնում է ճնշված դրության մեջ, և գործազրկությունը մնում է շարունակ մեծ չափով նաև 1909 թ. ընթացքում։

Կրիզիսների միջոցին կապիտալիզմը խեղդվում է ապրանքների հսկայական քանակությունից, վորոնք չեն ծախվում նրա համար, վոր պահանջ չի լինում, այլև բազմաթիվ սնանկությունների պատճառով, վորոնք սկսվում են կապիտալիստական տնտեսության զանազան ասպարեզներում։ Կրիզիսները առավելապես ուժեղ հարվածում են կապիտալիզմին այն պատճառով, վոր նրանց նախորդում են արդյունաբերության ու առևտրի վերելքի, կենդանացման ու ծաղկման ավելի կամ պակաս տևական շրջանները։

Կապիտալիզմը մաքառում է կրիզիսների դեմ մի կողմից՝ նոր շուկաներ նվաճելով և գներն իջեցնելով, և վերջինս կատարում է շահագործումը սաստկացնելով ու տեխնիկան զարգացնելով, իսկ մյուս կողմից՝ նրանով, վոր արտադրությունը վիթխարի չափերով կրճատում է ու մեծ քանակությամբ արտադրած արդյունքներ ու արտադրող ույժեր գիտակցաբար վոչնչացնում է։

Կրիզիսների մեջ, ինչպես ֆոկուսի մեջ, կենտրոնանում են ու ամենամեծ լարման են հասնում կապիտալիստական կարգի ներքին հակասությունները. աղքատությունն ու քայքայում ծայրահեղ առատության մեջ, կապիտալիստների կատաղի կռիվ իրար դեմ, մանր ու թույլ ձեռնարկությունների սնանկացում, աշխատանքի ու կապիտալի սուր բնույթ ստացող կռիվ, վոր հետևանք է սաստկացող անգործության և բանվոր դասակարգի աշխատանքի ու կյանքի պայմանների վատթարացման։

Կրիզիսներն իրենց ամբողջ ծանրությամբ ամենից ավելի ուժգին հարվածում և ընկնում են բանվոր դասակարգի ուսերին, հեղափոխականացնում են նրա գիտակցությունը և սրում պրոլետարիատի դասակարգային կռիվը բուրժուազիայի դեմ։ Մյուս կողմից՝ կրիզիսները ցույց են տալիս, վոր կապիտալիզմի տիրապետության ժամանակ արտադրող ուժերն ավելի ու ավելի մեծ արգելքի են հանդիպում իրենց զարգացման գործում և պահանջում են հանրային նոր հարաբերություններ։

Կրիզիսների պատճառը կապիտալիստական կարգին հատուկ անարխիան (անկազմակերպությունն) է։ Ամեն մի կապիտալիստական ձեռնարկություն աշխատում է անհայտ շուկայի համար, ինքն իրեն իր բախտին վստահացած, և շատ բնական է, վոր վաղ թե ուշ այսպիսի աշխատանքը, վոր կատարվում է կուրորեն, առանց ընդհանուր ծրագրի ու վորևէ փոխադարձ համերաշխման (согласование), պիտի հանգի մի քանի ապրանքների այսպես կոչված գերարտադրության ու մյուսների թերարտադրության (недопроизводство), վորոնցից և սկսվում է ամեն մի կրիզիս։

17. Ի՞ՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Պարբերական կրիզիսները և արդյունաբերության ճգնաժման ու անկման շրջանները կապիտալիստական կարգի անխուսափելի ուղեկիցներն են։

Նրանք աշխատանքի շուկայի վրա անդրադառնում են առաջացնելով գործազրկության սաստկացում և կապիտալիզմի պահեստազորի մեծացում։

Բուրժուական վիճակագրությունը գործազրկությունը հաշվառքի չի յենթարկում, և նրա չափն ու ձևերը ճիշտ վորոշել անկարելի յէ։

Մի քանի մասնակի վիճակագրությունների տվյալների համաձայն արդյունաբերական կենտրոններում գործազուրկ տղամարդ բանվորների քանակը հասնում է 20—17%-ի (1887—1894 թ. թ. Լոնդոնում)։

Ընդմին աշխատանքի մի քանի տեսակների մեջ գործազուրկների %-ը առանձնապես բարձր եր. այսպես՝ նավ նորոգող բանվորների 55%-ը գործ չուներ, նավակառույց բանվորներից՝ 44%-ը. հյուսներից ու քարտաշներից՝ 37%-ը, ներկարարներից՝ 33%-ը, մեխանիկներից՝ 20%-ը, դարբիններից 26%-ը, կարասիք շինող բանվորներից՝ 20%-ը, ծխախոտագործներից 27%-ը, և այլն։

Բացի մշտական պահեստազորից ու նրա աճումից, վոր տեղի յէ ունենում կրիզիսների ու ճգնաժման շրջաններում, նորագույն կապիտալիզմի պայմաններում հատկապես զարգանում է այն գործազրկությունը, վոր առաջ է գալիս շնորհիվ այն հանգամանքի, վոր բանվորական ուժը վաղաժամ քամում սպառում են և բանվորին, վորպես անպետքի դուրս են շպրտում՝ ավելի թարմ ույժերով փոխարինելու պատճառով։

Աշխատանքի շատ ճյուղերում,—նույնիսկ բուրժուական գիտնականների տվյալների համաձայն—օրինակ՝ լեռնային արհեստագործության (промысел) մեջ նավթի մետաղագործ ու մեքենաշին բանվորների մեջ և այլն. 45 տարեկան մարդու համար արդեն գործնականապես անկարելի յէ ապահով աշխատանք գտնել. Նրա ճարպկությունն ու փորձառությունը չեն կարող փրկել նրան յերիտասարդ սերնդի մրցակցությունից, վոր գերազանց է նրանից աշխատանքի արագությամբ ու մկանային ուժով։

Այս պայմաններում վաղաժամ հարկադրական հեռացումը գործից, վորին հաջորդում է ծերության հասակում ապրուստի չնչին ու պատահական միջոցների համար մուրացկանի ստորացուցիչ պայքար մղելը, արտահայտություններից մեկն է լայնատարած ու ընդհանրական գործազրկության, վորն անհրաժեշտորեն հատուկ է կապիտալիզմի գիշատիչ աշխարհին։

Ուստի և գործազրկությունը շատ զանազան ձևերով, ինչպիսիք են՝ ժամանակավոր գործազրկություն՝ աշխատանքից զրկվելիս ու նորը փնտրելիս, տևական գործազրկություն, վոր քաշում է շատ ամիսներ և ամբողջ տարիներ, գործազրկություն լճացման ու կրիզիսների շրջաններում, գործազրկություն ամենից թույլերի ու ծերունիների՝ մի շարք տարիներ ուցման, վորոնց կապիտալը տորրել, դուրս է նետել աշխատանքի աշխարհից,—կապիտալիզմի բնորոշ տարբերիչ գիծն է, վոր վոչ միայն չի նվազում այլ ավելի ու ավելի սաստկանում է, քանի կապիտալիզմը զարգանում է ու մոտենում քայքայման ու խորտակման շրջանին։

18. Ի՞ՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՈՒՄ ՄՐՑՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՆՀԱՏՆԵՐԻ ՈՒ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿՌՎԻ ՎՐԱ

«Մրցումն ամենալրիվ արտահայտությունն է ներկա բուրժուական հասարակությունների մեջ գոյություն ունեցող այն պատերազմի, վոր ամենքը մղում են ամենքի դեմ։ Այս պատերազմը, վոր պատերազմ է կյանքի, գոյության ու ամեն բանի համար, և վորը հետևաբար, անհրաժեշտության դեպքում, կյանքի ու մահու կռիվ է, մղվում է վոչ միայն հասարակության տարբեր դասակարգերի միջև, այլև միևնույն դասակարգի առանձին անդամների միջև։ Մեկը կանգնած է մյուսի ճանապին և ամեն մեկն աշխատում է վանելու բոլոր իր ճանպի վրա կանգնածներին ու գրավելու նրանց տեղը։ Մրցում են իրար հետ թե բուրժուաները և թե բանվորները։ Բանվորների մրցումն իրար հետ բանվորների կացության վատթարագույն յերևույթն է կապիտալիզմի ժամանակ և լավագույն զենքն է բուրժուազիայի ձեռքում պրոլետարիատի դեմ» (Էնգելս)։

Կապիտալիզմի դեմ մղած կռվի ընթացքում պրոլետարիատն սկսում է վարել այս կռիվն ավելի ու ավելի կազմակերպված, վորով և թուլացնում է այն մրցման կորստաբեր ազդեցությունը, վոր տեղի յե ունենում բանվոր դասակարգի շարքերում։

19. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ՆՎԱԶՈՒՄ ԵՆ, ԹԵ՞ ՍԱՍՏԿԱՆՈՒՄ ԱՆԱՐԽԻԱՆ, ՄՐՑՈՒՄԸ, ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆ ՈՒ ԿԵՏՐՈՆԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Վոչ միայն չի նվազում, այլ ընդհակառակն, անընդհատ աճում է։

Վորքան ավելի են խոշորանում կապիտալիստական ձեռնարկությունները, այնքան ավելի ուժեղ ու կատաղի յե լինում նրանց միջև մղված մրցումն ու կռիվը, այնքան ավելի արագ է կատարվում մանր ու միջակ կապիտալիստական ձեռնարկությունների վտարումը և այնքան ավելի է աճում բանվոր դասակարգի կապիտալի միջոցով շահագործվելը, վորովհետև ավելի ու ավելի մեծ քանակությամբ հավելյալ արժեք են յուրացնում կապիտալիստները և յետ դնում, հավաքում կապիտալ կուտակելու համար։

Հատկապես մեծ չափերի յեն հասնում այս բոլոր յերևույթները կապիտալիզմի զարգացման յերկրորդ, նորագույն շրջանում, ֆինանսական կապիտալի ժամանակ, յերբ իրենց վերջին սահմանին են հասցնում կապիտալիզմին հատուկ հիմնական հակասությունները։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ II ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. А. Богданов. ,,Начальный курс политической экономии в вопросах и ответах".
2. К. Каутский. ,,Экономическое учение К. Маркса".
3 К. Каутский. ,,Эрфуртская программа".
4. А. Богданов. ,,Краткий курс экономической науки под ред. Дволайцкого".
5. К. Маркс и Ф· Энгельс. ,,Коммунистический Манифест" с введением и примечаниями Д. Рязанова. (Հայերեն՝ Կ. Մարքս և Ֆ. Էնգելս ,,Կոմմունիստական Մանիֆեստ" Թարգմ. Գ. Մակինցյանի, Յերևան, 1922։ Ռյազանովի ծանոթություններով—Մոսկվա, խմբ. Դ. Սիմոնյանի, 1924.)։
6. Ф. Энгеьлс. ,,Положение рабочего класса в Англии".
7. Ф. Энгеьлс. ,,От утопии к научной теории".
8. В. Ильин (Ленин). "Развитие капитализма в России".
9. Н. Ленин ,,Аграрный вопрос к концу XIX века".
10. К. Каутский ,,Аграрный вопрос".

ԳԼՈՒԽ III.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՆ ՈՒ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ.

1. Ի՞ՆՉ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ ԵՆ ԲՆՈՐՈՇՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՈՒՄ —ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԾԱԳՄԱՆ ՈՒ ԱՃՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Նախ և առաջ՝ կապիտալիստների ու կապիտալիստական ձեռնարկությունների զանազան տեսակ միավորությունների լայն զարգացումը, յերկրորդ՝ բանկային կապիտալի և բանկերի դերի աճումը, յերրորդ՝ բանկային կապիտալի միավորությունն (об'единение) արդյունաբերական կապիտալի հետ, չորրորդ՝ արտաքին շուկաների, հում նյութերի աղբյուրների և համաշխարհային տիրապետության համար մղվող կռվի սաստկանալը։

2. ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՆՉՈ՞Ւ ՅԵՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ

Յերբ կապիտալը զարգանում, համակենտրոնանում ու կենտրոնանում է և մանր ու միջակ ձեռնարկները վոչնչանում են, այս յերևույթներին զուգընթաց՝ կապիտալիստների թիվը ձեռնարկությունների ամբողջ ծավալի ու բնակչության թվի հետ համեմատած՝ ավելի և ավելի նվազում է։ Արդյունաբերության ամեն մի առանձին ճյուղի մեջ կապիտալիստները, վորոնց թիվը աննշան մեծության է հասել, սկսում են միանալ իրար հետ, վորպեսզի իրենց կապիտալները միացնելով, ավելի լավ վաստակ կորզեն և միասին կռվեն բանվորների, գնորդ-սպառողների և հակառակորդ-մրցակիցների դեմ։ Կապիտալիստներին այսպես վարվելու հարկադրում է մրցումը ու ավելի ու ավելի մեծագումար կապիտալ գոյացնելու աճող պահանջը, կապիտալ, վոր անհրաժեշտ է ժամանակակից խոշորագույն ձեռնարկությունները կառուցելու ու վարելու համար։

3. ՎՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Առաջին՝ ակցիոներական ընկերությունները, յերկրորդ՝ կապիտալիստական ձեռնարկությունների զանազան միավորություններ, վորոնցից գլխավորներն են կոմբինացիաները (համակցումները), կարտելները, սինդիկատներն ու տրեստները։

4. Ի՞ՆՉ ԵՆ ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սրանք այնպիսի խոշոր կապիտալիստական ձեռնարկություններ են, վորոնք հիմնվում ու վարվում են ի մի հավաքելով կապիտալները մի քանի կամ բազմաթիվ անձանց. վերջիններս դառնում են ակցիոներական ձեռնարկության փայատերեր ու ստանում են իրենց մուծած փայերի դիմաց հասանելի վաստակը։ Ակցիոներական ձեռնարկություններն առաջանում են այն ժամանակ, յերբ արտադրության ու կապիտալի կոնցենտրացիան (համակենտրոնացումը) հասնում է բավական մեծ չափերի և յերբ այս պատճառով նոր հաստատուն ու խոշոր ձեռնարկություններ բանալու համար պահանջվում են խոշոր կապիտալներ. այս կապիտալներն ստացվում են մի շարք կապիտալիստների գումարներ միացնելով ու նրանց հրատարակած մի տեսակ թղթերից—ակցիաներից, վորոնք գնում են հարուստ անձինք՝ ակցիոներական ձեռնարկությունների վաստակին (դիվիդենդ—վաստակամաս) մասնակից լինելու համար։

Նորագույն վիթխարի կապիտալիստական ձեռնարկությունները, մանավանդ յերկաթուղային, նավային, մետաղային, ածխա-նավթային, մեքենա-շոգեկառային ու նավաշինարարական, բանկային ու այլ ձեռնարկությունները վորպես մասնավոր-կապիտալիստական ձեռնարկություններ ծագում առնելու և գոյություն ունենալու հնարավորություն ստացան ակցիոներական ձևի շնորհիվ, վորը թույլ է տալիս խոշոր կապիտալիստներին վոչ միայն միացնելու իրենց կապիտալներն, այլև ոգտագործելու շատ մարդկանց մանր կապիտալները, մանավանդ բանկերի միջոցով։

Ակցիոներական ընկերության էությունն այն է, վոր այստեղ մի քանի խոշոր կապիտալիստներ ոգտագործում են մանր կապիտալներն ու նույնիսկ բազմաթիվ վոչ-կապիտալիստական խմբակների (ծառայողների, պաշտոնյաների, գյուղացոց և այլն) փոքրիկ խնայողությունները։ Ակցիոներական ընկերության ամեն մի փայատեր մուծում է մի կամ մի քանի փայեր և իր տված փողի տեղ ստանում է մի կամ մի քանի ակցիաներ—արժեթղթեր, վորոնք նրան իրավունք են տալիս ակցիոներական ձեռնարկության վաստակից հասույթ ստանալու։

Այսպես է առաջանում խոշոր ակցիոներական կապիտալը, վոր մնում է ձեռնարկության տնորենների, գլխավոր փայատերերի ու գործարարների (делец) տրամադրության տակ։

Ակցիոներական ձեռնարկությունների ծագման ժամանակ բուրժուական գիտնականներն ու ռեֆորմիստները (սոցիալ-դեմոկրատներից) ասում եյին, թե բոլոր բանվորներն ու ծառայողներն ակցիաներ գնելով կարող են կապիտալիստ դառնալ, մասնակցել կապիտալիստական տնտեսության վաստակներին ու վարչության գործերին և այդպիսով իբր թե կանհետանար կապիտալիստների ու պրոլետարիատի կռիվը ու տարբերությունը։

Իհարկե, այսպիսի բան չկատարվեց բնավ։ Միայն այն յեղավ, վոր ակցիոներական ընկերությունների միջոցով խոշոր կապիտալիստներն ի շահ իրենց ոգտագործում են մանր կապիտալիստներին ու աշխատավորների մի վորոշ մասի խնայողությունները, վորովհետև մանր փայատերերը շնորհիվ իրենց անկազմակերպության, ցրվածության ու գործերի մեջ ունեցած չըն-

չին կչռին չեն կարողանում քիչ թե շատ լուրջ ազդեցություն գործել ակցիոներական ձեռնարկությունները վարելու վրա։ Փորձը ցույց տվեց, թե բավական է, վոր խոշոր փայատերերը տիրեն բոլոր ակցիաների մի յերրորդ մասին, և նրանք արդեն լիակատար տեր ու տնօրեն են դառնում ակցիոներական ձեռնարկությունների մեջ։

Ակցիոներական ձեռնարկություններն արդյունաբերության ու բանկային ասպարեզներում սկսում են լայնորեն զարգանալ XIX-րդ դարու կեսից և այն էլ մանավանդ Անգլիայում, Ամերիկայում, Գերմանիայում, իսկ հետո նաև մյուս կապիտալիստական պետություններում։ Այսպես, օրինակ, Անգլիայում արդեն 1904 թ. հաշվում էին 37 հազարից ավելի ակցիոներական ընկերություն՝ վորոնց կապիտալը հավասար եր մոտ 2 միլիարդ ֆունտ ստերլինգի կամ 18 միլիարդից ավելի վոսկի ռուբլու։

5. Ի՞ՆՉ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՕԳՏԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻՆ ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՆՁՆՅԱ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

Ակցիոներական ձեռնարկությունների տերն ակցիոներներն են, այսինքն՝ տերերն են ակցիաների կամ արժեթղթերի, վորոնք իրավունք են տալիս ակցիոներական ձեռնարկության վաստակից հասույթ ստանալու։ Այլ խոսքով՝ ակցիոներական ձեռնարկությունների տերերը տարբերվում են միանձնյա ձեռնարկությունների տերերից նրանով, վոր առաջինները լոկ սեփականատեր են ակցիոներական ձեռնարկությունների, և ձեռնարկու չեն, այլև իրենց գույքով պատասխանատու չեն ակցիոներական ձեռնարկությունների պարտքերի համար։ Այսպիսով՝ ակցիոներական ձեռնարկությունների մեջ չքանում են կապիտալիստ-ձեռնարկուները, և մնում են միայն ակցիաների տեր կապիտալիստները, վորոնք հանդես են գալիս, վորպես դրամական կապիտալիստներ, վորոնք իրավունք ունեն ձեռնարկության հասույթների վրա։ Այս հասույթը, վոր ավելի նվազ վտանգի յենթակա յե, քան անհատ կապիտալիստ-ձեռնարկուինը, ավելի պակաս չափով է լինում, քան անհատ կապիտալիստ-ձեռնարկուի կապիտալի սովորական վաստակը և այդպիսով՝ մրցման մեջ ակցիոներական ձեռնարկությունն այն առավելությունն ունի անհատ ձեռնարկուների հանդեպ, վոր հնարավորություն ունի իր ապրանքներն ավելի եժան գնով ծախելու։

Մյուս կողմից՝ ակցիոներական ձեռնարկությունն ավելի մեծ կապիտալ ունի յուր տրամադրության տակ, քան միանձնյա կապիտալիստականը, այն ավելի մեծ վարկ է ստանում բանկերից և հնարավորություն ունի մեծացնելու իր կապիտալը՝ նոր ակցիաներ հրատարակելով։ Այս բոլորի հետևանքն այն է լինում, վոր ակցիոներական ձեռնարկությունները սովորաբար նաև տեխնիքապես ամենից լավ են կազմակերպված ու սարքի դրված, այդ պատճառով էլ նրանք սովորաբար հաղթող են հանդիսանում այն կռվում, վոր մղում են կապիտալիստական միանձնյա ձեռնարկությունների դեմ։

Սակայն, կապիտալիզմի զարգացումն ու կապիտալի կոնցենտրացիան կանգ չի առնում ակցիոներական ձեռնարկությունների վրա, թեկուզ և սրանք շատ խոշոր լինեն։ Կապիտալիզմի հետագա զարգացմամբ՝ անրաժա-

բար է դառնում այն կոնցենտրացիան, վոր արտահայտվում է ակցիոներական ձեռնարկությունների ձևով, և սրանց կողքին ու սրանց միջից սկսում են առաջանալ ու աճել ավելի ևս ուժեղ կապիտալիստական միավորություններ։ Այսպիսի միավորություններ են կապիտալիստական կոմբինացիաները (համակցումները), կարտելները, սինդիկատներն ու տրեստները։

6. Ի՞ՆՉ ԵՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՄԲԻՆԱՑԻԱՆԵՐԸ

Սրանք տարբեր ճյուղերի պատկանող ու սովորաբար թվով յերկու-յերեք ձեռնարկությունների միավորություններ են, վորոնցից վոմանք մյուսներին մատակարարում են հում նյութ կամ վառելիք։

Կոմբինացիայի օրինակ կարող է ծառայել թիթեղի գործարանի, դոմենի վառարանի (доменная печь) ու քարածուխի հանքերի միավորությունը մետաղագործության մեջ կամ մանածային (прядильная) մանածագործական (ткацкая) ու չիթ դրոշմող գործարանների միավորությունը մանածագործական արդյունաբերության մեջ։

Կոմբինացիաների օգտավետությունն այն է, վոր նրանց մեջ դրված կապիտալն ավելի բարձր ու ավելի կայուն վաստակ է տալիս, այն պատճառով, վոր նախ՝ միացյալ ձեռնարկությունների արանքում վերանում է առևտուրը և կրճատվում են արտադրության այլ ծախքերը, յերկրորդ՝ մրցման ու կրիզիսների միջոցին ձեռնարկությունների միավորությունը նրանց բոլորին էլ հնարավորություն է տալիս ավելի հաստատուն մնալ, քան այն ժամանակ, յերբ նրանք իրարուց բաժան անհատական ձեռնարկությունների ձևով գոյություն ունենային։

Վերջապես՝ յերբ մի քանի ձեռնարկություններ միանում են և կազմում մի բարդ արտադրական ձեռնարկություն, այս դեպքում հնարավոր է լինում ավելի լավ կիրառել աշխատանքի բաժանումը և մտցնել զանազան տեխնիքական կատարելագործություններ։

Ե՛լ ավելի ուժեղ ձևակազմություններ (образование) են ստացվում, յերբ առաջ են գալիս կապիտալիստական կարտելները, սինդիկատներն ու տրեստները։

7. Ի՞ՆՉ ԵՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐՏԵԼՆԵՐԸ, ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐՆ ՈՒ ՏՐԵՍՏՆԵՐԸ ՅԵՎ Ի՞ՆՉ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ ՍՐԱՆՑ ՄԻՋԵՎ

Այս անուններն են տալիս կապիտալիստական ձեռնարկությունների գլխավորապես արդյունաբերական կամ բանկային ձեռնարկությունների զանազան յերկարատև միավորություններին անկախ այն հանգամանքից, թե քանի և վորպիսի ձեռնարկություններ են մտնում միավորության մեջ։

Կարտելների, սինդիկատների ու տրեստների տարբերությունն այն է, վոր նրանց միավորությունն ավելի կամ պակաս չափով կայուն է լինում, ընդ վորում կարտելներն ու սինդիկատներն այնքան սերտ միավորություն չեն, վորքան տրեստները։

Կարտելներն ու սինդիկատները հիմնված են միացող ձեռնարկությունների գլուխը կանգնած անձանց համաձայնության վրա. այս համաձայնությունն ամրապնդվում է հատուկ պայմանագրով, վոր կնքվում է վորոշ

ժամանակով, ընդ որում կարտելների ու սինդիկատների մեջ մտնող ձեռնարկությունները կորցնում են իրենց նախկին լիակատար անկախությունը, բայց ձևականորեն այս կամ այն չափով պահպանում են իրենց ինքնուրույնությունը և պայմանաժամը լրանալուց հետո նորից կարող են դառնալ անկախ ու դուրս գալ միավորությունից։

Ընդհակառակը՝ միանալով տրեստ կազմելիս ձեռնարկություններն ամբողջովին ու ընդ միշտ կորցնում են իրենց անկախությունն ու ինքնուրունությունը և ձուլվելով կազմում են միակտուր կապիտալիստական ձեռնարկություն։

Կարտելների ու սինդիկատների դեպքում՝ միացող ձեռնարկությունների առանձին կապիտալիստ-ձեռնարկուները մնում են, իսկ տրեստներում առանձին կապիտալիստ-ձեռնարկուներն անհետանում են ու դառնում են ակցիաների տերեր այն դիմազուրկ կապիտալի, որ պատկանում է բոլոր ձուլված ձեռնարկությունների տրեստին։

Այս կապիտալիստական կարևորագույն միավորություններից ամեն մեկի էությունն ավելի մանրամասնորեն կըպարզվի, երբ սրանք դատ-դատ-քննության առարկա դառնան։

8. Ի՞ՆՉ ԵՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐՏԵԼՆԵՐՆ ՈՒ ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐԸ

Կարտելները կապիտալիստական ձեռնարկությունների այնպիսի միավորություններ են, որոնք հիմնված են պայմանագրի կամ համաձայնության վրա, որոշ ժամկետով և որոնց նպատակն է վաստակը շատացնել բարձրացնելով ապրանքների գները և սահմանափակելով կամ բոլորովին վերջացնելով մրցումը շուկայում, ընդ որում կարտելների մեջ միացող ձեռնարկություններն ամբողջովին չեն ձուլվում, այլ որոշ չափով պահպանում են իրենց գործողությունների ինքնուրունությունը։

Իր ամենապարզ ու տարածված ձևով կարտել կազմող ձեռնարկությունների պայմանագիրը որոշում է, թե կապիտալիստները պարտավորվում են ինչ գներից ցած չծախելու իրենց ապրանքները։ Հետո պայմանագիրը սահմանում է, թե որ ձեռնարկությունը որքան ապրանք պիտի արտադրե ու շուկա հանե, որպեսզի առաջարկը պահանջից չգերազանցե։ Հետո՝ պայմանավորվում են պատվերներն իրար միջև բաժանելու, վաճառքի շուկաները բաշխելու, գնվող հում նյութի գների մասին և այլն։

Հենց այս միջոցներով էլ հասնում են այն հետևանքին, որ մրցումը բավականաչափ սահմանափակվում է կամ նույնիսկ լիովին վոչնչացնում, գները բարձրանում են, կարտելը տեր է դառնում շուկային և այսպիսով՝ միացած կապիտալիստների վաստակն ավելանում է։

Որպեսզի պայմանագիրն ավելի լավ կիրառվի և առանձին ձեռնարկուներ զանցառություն ու խաբեբայություն չանեն, ծախելով նշանակված գնից բարձր կամ վոչ ըստ սահմանված գների, կարտելի մեջ գոյություն ունի վերահսկողություն, որին ենթակա են առանձին ձեռնարկությունները, իսկ շատ դեպքերում ամբողջ առևտուրը կատարվում է մի ընդհանուր գրասենյակի միջոցով։

Այս դեպքում կարտելը վերածվում է մի առևտրական ամբողջության,

որտեղ վերանում է միացող ձեռնարկությունների առևտրական ինքնուրունությունը։ Այդպիսի կարտելը կոչվում է սինդիկատ։

Հետևաբար՝ կապիտալիստական սինդիկատն առանձին ձեռնարկությունների մի այնպիսի տևական ու սերտ միավորություն է՝, որ հիմնված լինելով պայմանագրի վրա ու նպատակ ունենալով գների բարձրացումը՝ վոչնչացնում է միացող ձեռնարկությունների առևտրական ինքնուրունությունն՝ ամբողջ առևտուրը կատարելով մի ընդհանուր գրասենյակի միջոցով։

Սինդիկատը մի բարձր աստիճան է ձեռնարկությունների միավորության ճանապարհին, բայց ամենաբարձր աստիճանը չէ։

Միավորության այսպիսի բարձրագույն ձևը տրեստն է (որ այլապես կոչվում է նաև ֆուզիա—ձուլում)։

9. Ի՞ՆՉ Է ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՐԵՍՏԸ

Կապիտալիստական տրեստը կապիտալիստական ձեռնարկությունների մի այնպիսի միավորություն է, երբ նրանք ամբողջովին ու կատարելապես ձուլվում ու կազմում են մի տնտեսական ամբողջություն և բոլորն առանց հնացորդի լուծվում են մի հսկա ձեռնարկության մեջ՝ ամբողջովին կորցնելով ամեն մի ինքնուրունություն։ Երբ տրեստ է կազմվում, այն ժամանակ բոլոր ձուլվող ձեռնարկությունների կապիտալները դիմազըրկվում են, այսինքն՝ դառնում են մի կապիտալ, որ գտնվում է տրեստի գըլուխը կանգնած ու տրեստի խոշորագույն փայատերերից կամ ակցիոներներից բաղկացած միակ վարչության տրամադրության տակ։ Ընդ սմին առանձին կապիտալիստ-ձեռնարկուներն անհետանում են և դառնում տըրեստի ակցիոներներ։

Տրեստի առաջացումը նշանակում է ձեռնարկությունների ոչ միայն առևտրական, այլև տեխնիքական լիակատար ձուլում։ Արտադրողականությունը բարձրացնելու ու վաստակն ավելացնելու նպատակով տրեստը միջամտում է բոլոր ձեռնարկությունների արտադրությունը կազմակերպելու գործին ու տեխնիքական կողմին, նրանց մեջ կատարում է կրճատում, ընդլայնում ու վերախմբում (աշխատանքի բաժանում և այլն) և հարկավոր դեպքում փակում է այն ձեռնարկությունները, որոնք վատ սարքի դըրված լինելու շնորհիվ կամ ուրիշ պատճառով ավելի քիչ օգտավետ են։

Սրա հետևանքով տրեստը հնարավորություն ունի ապրանքներն ավելի էժան գներով ծախելու և այսպիսով շուկայում հաղթելու իր մրցակիցներին ի դեմս չմիացած կամ թույլ միացած կապիտալիստական ձեռնարկությունների։

10. Ի՞ՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ՞Ն ՄՐՑՄԱՆ ՎՐԱ ԿԱՐՏԵԼՆԵՐԸ, ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐՆ ՈՒ ՏՐԵՍՏՆԵՐԸ

Հենց որ կարտելները, սինդիկատներն ու տրեստները կազմվում են, նրանց միջև յեղած մրցումը վերջանում է։ Միևնույն ժամանակ նրանք նվազեցնում կամ նույնիսկ բոլորովին վերացնում են մրցումը նմանապես այն շուկաներում, որտեղ հրապարակ են գալիս իրենց ապրանքներով։ Նու-

կայի այս տիրապետությունը կախված է նախ և առաջ նրանից, թե արդյունաբերության այս կամ այն ճյուղի քանի՞ ձեռնարկություն է մտել զանազան միավորությունների մեջ, քանի՞ այսպիսի միավորություն կա և արդյոք դեռ շատ ձեռնարկություններ կան միավորությունից ու ձուլումից դուրս մնացած։

Կապիտալիստների ոգուտը վերջիվերջո հասցնում է նրանց այն բանին, վոր արդյունաբերության ամեն մի ճյուղի մեջ ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը միանում և ձուլվում է կազմելով մի կամ մի քանի տրեստներ կամ սինդիկատներ, և վերջիններն այս դեպքում շուկայի լիակատար մոնոպոլիստ տերերն են դառնում և ամենալայն հնարավորություն ունեն գնորդների վզին իրենց գները փաթաթելու։

Այսպիսի տրեստներն ու սինդիկատները, վորոնք բռնած ունեն իրենց ձեռքում շուկան ու թելադրում են սրան իրենց գները, կոչվում են մոնոպոլ (մենաշնորհյալ) այսինքն՝ շուկայի անսահմանափակ կարգադրող։

Սկզբում սինդիկատներն ու տրեստները սովորաբար միատեսակ ձեռնարկությունների, այսինքն արդյունաբերության միևնույն ճյուղին պատկանող ձեռնարկությունների (օրինակ՝ պողպատաձուլական, նավթային, շաքարի և այլն) միավորություն ու ձուլում են։

Այս աստիճանի ժամանակ արդյունաբերության տարբեր ճյուղերին պատկանող սինդիկատների ու տրեստների միություն դեռ չկա, ուստի և ամեն մի առանձին կապիտալիստական յերկրի ներսում սինդիկատների ու տրեստների միջև կռիվ է մղվում գների ու վաստակի համար։

Իրենց զարգացման հետագա աստիճանի ժամանակ սինդիկատներն ու տրեստները դառնում են բարդ կամ համակցական (комбинированный), այսինքն՝ միանում են արդյունաբերության տարբեր ու նույնիսկ մի քանի ճյուղերի պատկանող ձեռնարկություններ ու ձեռնարկությունների խմբեր։ Վորպես այսպիսի համակցական տրեստների օրինակ կարող է ծառայել, օրինակ՝ այն տրեստը, վոր միացնում է մետաղագործային գործարանները (չուգունաձուլային, պողպատաձուլային և այլն) քարածխի հանքերի հետ, վորոնք ածուխ են մատակարարում մետաղագործական ձեռնարկություններին ու մեքենաշեն գործարանների հետ, վորոնք ստանում են մետաղագործային գործարաններից իրենց մշակման անհրաժեշտ մետաղը։

Համակցումը հաճախ կատարվում է նաև այն ուղղությամբ, վոր միացվում են փոխադրական ու արդյունաբերական ձեռնարկությունները։ Օրինակ՝ նավթային կամ ածխային տրեստների մեջ մտնում են յերկաթուղային կամ ջրային փոխադրության հսկա ձեռնարկություններ, վորոնք անհրաժեշտ են հեղուկ ու կարծր վառելիքի խոշոր քանակություններ փոխադրելու համար։

Համակցական սինդիկատներն ու տրեստները կապիտալի կոնցենտրացիայի ու կենտրոնացման ավելի բարձր աստիճանն են ներկայացնում։

Տրեստներն, ինչպես նաև սինդիկատները կազմվում են հաճախ այն կատաղի կռվի հետևանքով, վոր կապիտալիստական ձեռնարկություններն ու նրանց խմբերը մղում են իրար դեմ։

Ներկայումս ամենազարգացած կապիտալիստական յերկրներում տրեստներն ու սինդիկատները շատ տարածված են և գրեթե ամբողջովին տիրում են շուկային խոշորագույն բուրժուական պետությունների մեջ։

Ծագելով մրցության դեմ մղած պայքարից՝ տրեստներն ու սինդիկատները ներքին շուկաներում ճնշեցին մրցումը և վերջինիս փոխարինեցին կապիտալիստական մենաշնորհյալ հիմնարկները, այսինքն շուկայում տիրող կարտելները, տրեստներն ու սինդիկատները։

Ամերիկայի Միացյալ Նահանգները տրեստների ու սինդիկատների մեծագույն զարգացման հայրենիքն են։ Միացյալ Նահանգներում դեռ 1900 թ. սինդիկատներն ու տրեստներն ընդգրկում էին արտադրության հետևյալ տոկոսները. յերկաթագործական ու պողպատաձուլական արդյունաբերության մեջ—84%, քիմիականում—81%, բամբակագործականում—60% և այլն։

Փաստորեն այժմ Ամերիկայում ամբողջ արտադրությունը կենտրոնացած է յերկու տրեստների ձեռքում—նավթային ու պողպատային տրեստների ձեռքում։ Մոտավորապես նույնը տեսնում ենք նաև ուրիշ յերկրներում։

Գերմանիայում 1913 թ. ածխահանությունը խոշորագույն (Հռենոս-Վեստֆալյան) ածխային շրջանում ավելի քան 92%-ով կենտրոնացած էր մի սինդիկատի ձեռքում։ Պողպատային սինդիկատը պատրաստում էր յերկրում արտադրվող ամբողջ պողպատի մոտ կեսը։ Շաքարի տրեստը ընդգրկում էր ամբողջ ներքին վաճառքի 70% ու արտաքինի 80%, և այլն։

Ռուսաստանում պատերազմից առաջ արդյունաբերության մի շարք ճյուղեր նույնպես գտնվում էին սինդիկատականների ձեռքում։ Այսպես, օրինակ՝ ամենից ուժեղ ռուսական սինդիկատը—Прадамет—պատերազմի նախօրյակին ընդգրկում էր Ռուսաստանի կարևորագույն մետաղագործային շրջանները և կենտրոնացնում էր կայրության ամբողջ տեսակավոր յերկաթի 81% ու թիթեղ յերկաթի 74%։ Հետո “Продуголь„ սինդիկատը կենտրոնացնում էր ամբողջ Դոնի շրջանի ածխի 60%, “Кровля„ սինդիկատը—ամբողջ ծածկային յերկաթի (Кровелное железо) 60%, պղնձի սինդիկատը—արտադրության 90%, շաքարինը—շաքարի ամբողջ արտադրությունը և այլն։

XX դարու սկզբին վերաբերող տվյալներով՝ ամբողջ աշխարհի բոլոր կապիտալների կեսը դեռ հենց այն ժամանակ գտնվում էր սինդիկատների ու տրեստների ձեռքում։

Կապիտալիստական տրեստների ու սինդիկատների զարգացման հետեվանքով, ինչպես վերևն ասացինք, նրանց միջև յեղած մրցումը և մասամբ էլ ամեն մի բուրժուական պետության ներքին շուկաներում գոյություն ունեցող մրցումը վերանում է կամ գոնե զգալիորեն կրճատվում ու փոխարինվում է կապիտալիստական մոնոպոլների տիրապետությամբ։

II. ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կապիտալիստական մոնոպոլիաների (այսինքն շուկայում տիրապետող կապիտալիստական կարտելների, սինդիկատների ու տրեստների) ծագումն ու զարգացումը ցույց է տալիս կապիտալիզմի կյանքի ու պատմության նոր պարբերաշրջանի սկիզբը։ Սկզբնական շրջանում կապիտալիզմն ապրում և զարգանում է ներքին կատաղի մրցման պայմաններում։ Կապիտալիստական ձեռնարկությունների այս կռիվը մահ է բերում թույլ ու հետամնաց

ձեռնարկություններին և նրանց վտարում ու փոխարինում է ավելի ու ավելի ուժեղ ու ամուր միավորություններով, վորոնք ունեն ամենաբարձր տեխնիկա կապիտալիստական տնտեսության բոլոր ճյուղերում։ Կապիտալիզմի ժամանակ մրցումը տեխնիկայի զարգացման հզոր շարժիչն է և նպաստում է առանձին կապիտալիստ-ձեռնարկուների կապիտալիստական ձեռներեցության ու հնարագիտության զարգացման։

Սրա հետևանքով բոլոր յերկրների մանր տնտեսության ավերակների ու դիակների վրա, բազմամիլիոն բանվորական մասսաների արյուն քրտինքի գնով, կապիտալիստական պետություններում տեղի յե ունենում արտադրող ուժերի հսկա ու արագ աճում։

Կապիտալիստական մոնոպոլիաների զարգացմամբ՝ պատկերը սկսում է փոխվել, և յերևան են գալիս հակառակ յերևույթներ։ Կապիտալիստական սինդիկատների ու տրեստների մոնոպոլիան սպանելով մրցումը, վոչնչացնում է նաև այն հզոր շարժիչ ուժը, վորը նրանց ձեռնարկությունների վոչնչացման սպառնալիքով ու մրցակից-հակառակորդներին հաղթելու համար, ստիպում եր կապիտալիստներին անընդհատ զարգացնելու տեխնիկան, հնարագիտություն ու ձեռներեցություն ցույց տալու և բարձրացնելու արտադրող ուժերը։

Կապիտալիստական մոնոպոլիայի գոյության դեպքում կապիտալիստներն սկսում են հասնել իրենց հիմնական նպատակին, այն է—վաստակը մեծացնելուն ու հարստանալուն վոչ թե տեխնիկայի բարվոքումով, այլ իրենց ապրանքների գները բարձրացնելով, բանվորների աշխատավարձը նվազեցնելով և սաստիկ շահագործելով հողագործ մասսաները, հետամնաց յերկիրների, մանավանդ գաղութների, վորտեղից ստացվում են բազմատեսակ հում նյութեր (բամբակ, ճակնդեղ, բուրդ և այլն) կապիտալիստական խոշոր պետությունների համար։

Այսպիսով կապիտալիզմի նորագույն շրջանում առաջ են գալիս այնպիսի պայմաններ, վորոնք կասեցնում ու լճացնում են արտադրող ուժերի զարգացումը։

Մյուս կողմից՝ ակցիոներական ձեռնարկությունների, և մանավանդ տրեստների, տարածմամբ՝ արդյունաբերության մեջ գտնված կապիտալը նըկատելի չափով ազատվում է վորոշ անձանց, այն է՝ կապիտալիստ-ձեռնարկուների հետ ունեցած կապերից։ Առանձին կապիտալիստ-ձեռնարկուների փոխարեն ավելի ու ավելի բազմանում ու նրանց տեղն են գրավում ակցիաների տեր կապիտալիստներն, այսինքն դրամական կապիտալի ներկայացուցիչները, ժամանակակից վաշխառու մակաբույծները (պարազիտ)։ Նրանք, քանի գնում այնքան ավելի են դադարում կապիտալիստական ձեռնարկություններն անմիջապես կառավարելուց։ Նրանց դերը քանի գնում ավելի վերածվում է մի գործունեյության, վորի եյությունն է կտրոններ խուզել ու ակցիաներից դրամական հասույթ ստանալ։ Այստեղից ծագում է նորագույն կապիտալիզմի համար անխուսափելի մի յերևույթ, այն է բազմացումը «ռանտյե» կոչված խավի, այսինքն՝ այն մարդկանց, վորոնք ապրում են «կտրոն խուզելով» և բոլորովին անջատված են կապիտալիստական ձեռնարկությունների ղեկավարության մեջ վորև է մասնակցություն ունենալուց։

Այդ խավի արհեստն է՝ անգործ մակաբուծություն անել, կատաղի թափով հարստանալ ու փչությամբ կյանքը վատնել։

Այդ գիծը, այն է՝ նորագույն կապիտալիստ ակցիոներների մակաբուծությունը, կապիտալիզմի արդի աստիճանի բնորոշ հատկանիշն է և նրա այս մակաբուծական բնույթն, արտադրող ուժերի զարգացման կասեցումների հետ միասին, վորոնք նորագույն մոնոպոլիաների հետևանք են՝ հանգում է այն վախճանին, վոր կապիտալիզմը, սկսած մոտավորապես XX դարուց, թևակոխում է իր նեխման ու ներքին քայքայման շրջանը։

Յեվ քանի վոչնչանում է մրցումը կապիտալիստների միջև, քանի աճում են մոնոպոլիաները և սաստկանում է կապիտալիստների ակցիոներ այսինքն՝ մակաբույծ-ռանտյե դառնալը, արտադրող ուժերի լճացման (застой) ու կապիտալիզմի նեխման այս միտումներն ավելի ու ավելի են գերակշռում և բանվոր դասակարգի առաջ դնում են կապիտալիստական հասարակությունը տապալելու պահանջն ու այս մի նոր, առանց մասնավոր սեփականության ու շահագործման, հասարակությամբ փոխարինելու անհրաժեշտությունը։

12. Ի՞ՆՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՄՐՑՄԱՆ ՈՒ ԱՆԱՐԽԻԱՅԻ ՎՐԱ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Կապիտալիստական մոնոպոլիաները (կապիտալիստական տրեստները, սինդիկատներն ու կարտելները), ինչպես վերևում ասացինք, կրճատում ու վոչնչացնում են այն մրցումը, վոր լինում է կապիտալիստական տնտեսության առանձին ճյուղերի ներսում այլ և առանձին կապիտալիստական պետությունների մեջ։ Բայց այս չի նշանակում, թե կապիտալիստական մոնոպոլիաների զարգացմամբ բոլորովին վերանում են կապիտալիզմին հատուկ անարխիան և մրցումը։ Այս մասին խոսում ու դրա վրա հույս են դնում պարոնայք կապիտալիստական գիտնականներն ու համաձայնողականները սոցիալ-դեմոկրատների շարքերից։ Այն ինչ իրոք՝ կապիտալիստական աշխարհը ժամանակակից կապիտալիստական ամենախոշոր մոնոպոլիաների ժամանակ ել ներկայացնում է մի պատկեր, վորում ցոլանում են վոչ միայն ամենախելառ ու դեռ աշխարհում նմանը չտեսնված տնտեսական կռիվը, այլև կապիտալիստների առանձին խմբերի ու կապիտալիստական պետությունների բացահայտ զինված ընդհարումները։ Այս բացատրվում է նրանով, վոր կարտելների, սինդիկատների ու տրեստների զարգացմամբ մրցումն սկսում է բորբոքվել ու նախճիրներ գործել կապիտալիստական սինդիկատների ու տրեստների միջև, մանավանդ համաշխարհային շուկայում, վորտեղ շարունակում է իշխել անարխիան. և այս մրցումն այնքան ավելի կատաղի ու ավերիչ է, վորքան ավելի ուժեղ են խոշորագույն կապիտալիստական պետությունների այն հսկա սինդիկատներն ու տրեստները, վորոնք ընդհարվում են իրար՝ կռվելով համաշխարհային շուկայի տիրապետության ու առանձին յերկիրների շուկաների վերջնական գրավման համար։

Ճիշտ է, XX դարու յերկրորդ տասնամյակում սկսում են առաջանալ կարտելներ ու սինդիկատներ համաշխարհային մասշտաբով, վորոնք կենտրոնացնում են իրենց ձեռքում ամբողջ յերկրագնդի ամենագլխավոր կապի-

տալիստական յերկրների արդյունաբերության ճյուղեր։ Կապիտալի այս միջազգայնացումը, այսինքն՝ կապիտալի կենտրոնացումը համաշխարհային մասշտաբով, հատկապես լայն զարգացում ե ստացել մետաղային (ու ամենից առաջ մետաղագործային) արդյունաբերության ասպարեզում։ Միջազգային մետաղային կարտելներն ու սինդիկատները, վորոնք գոյացել են պողպատի, յերկաթի, պլատինի, կապարի, պղնձի, նիկկելի, ալյումինիյի ու այլ մետաղների մշակման ու վաճառքի ասպարեզում—կապիտալիստական արդյունաբերության առանձին ճյուղերի միջազգայնացման առաջին ուժեղ արտահայտություններն եյին։ Այդ համաշխարհային կապիտալիստական մոնոպոլիաների հետևանքն այն յեղավ, վոր այս բոլոր մոնոպոլ ապրանքների գները հսկա չափերով բարձրացան և տնտեսության բոլոր ճյուղերը լիակատար կախում ունեցան ծանր, մետաղային արդյունաբերության այս արքաներից։

Սակայն այս համաշխարհային կապիտալիստական մոնոպոլիաները չվոչնչացրին մրցումը և չվերացրին ամենակատաղի կռիվը կապիտալիզմի աշխարհից։ Այս բանն ամենից ակնհայտնի ցույց տվեց 1914—1918 թ. թ. համաշխարհային իմպերիալիստական սպանդանոցը, վորը համաշխարհային կապիտալիստական մոնոպոլիաները վոչ միայն չկանխեցին, այլ և, ընդհակառակն, ավելի սրեցին ու ձգձգեցին այն։

Վորքան ավելի են կապիտալիստական սինդիկատներն ու տրեստները տարածվում համաշխարհային մասշտաբով, այնքան ավելի դաժան են դառնում ընդհարումները հսկայական կապիտալիստական պետությունների միջև, վորոնք մաքառում են համաշխարհային շուկայում առասպելական վաստակներ ձեռք բերելու ու այնտեղ գերիշխելու համար։

Այսպիսով մրցումն ու անարխիան չեն վերանում կապիտալիզմի միջից, այլ միայն փոխադրվում են համաշխարհային շուկա, դառնում են ավելի դաժան ու ավերիչ և կռվի ասպարեզ են նետում արդեն վոչ թե առանձին կապիտալիստների, այլ խոշորագույն կապիտալիստական պետությունները։

13. ԻՆ՞Չ ԴԵՐ Է ԽԱՂՈՒՄ ԱՌԵՎՏՈՒՐԸ, ՅԵՐԲ ԶԱՐԳԱՆՈՒՄ ԵՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐՏԵԼՆԵՐԸ, ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐՆ ՈՒ ՏՐԵՍՏՆԵՐԸ

Կապիտալիզմի զարգացման սկզբում առևտրական կապիտալը, ինչպես հայտնի յե, գլխավոր դեր ե կատարում և իշխում ե արդյունաբերության վրա, վերջինս յուր բռի մեջ պահելով։ Կապիտալն այն ժամանակ հանդես ե գալիս առևտրային (торговый) կապիտալի դերում ի դեմս խոշոր վաճառականների, առևտրականների։ Հետագայում՝ քանի զարգանում ե արդյունաբերական կապիտալը, այնքան ավելի ե նվազում առևտրային (торговый) վաճառականական (купечсикй) կապիտալի, այլև կապիտալիստական առևտրի դերը։

Հրապարակի վրա առաջին շարքն են դուրս գալիս արդյունաբերական կապիտալն ու նրա ներկայացուցիչները—կապիտալիստ-արդյունաբերողները, ազատվելով վաճառականներից ունեցած կախումից։ Կապիտալիստական սինդիկատների ու տրեստների զարգացման դարաշրջանում կապիտալիստական առևտրի դերը շարունակում ե գահավիժորեն նվազել և վերջիվերջո

այս ընկնում ե սինդիկատներից ու տրեստներից բոլորովին կախյալ վիճակի մեջ և այսպիսով բոլորովին կորցնում ե յուր ազդեցությունն ու ինքնուրույն դերը։

Կապիտալիստական միավորությունների ու մոնոպոլիաների առաջացման սկզբի շրջանում առևտուրը նույնպես փորձում ե վոտք դնել առևտրային, վաճառականական կարտելներ ու սինդիկատներ ստեղծելու ճանապարհը։

Սակայն արդյունաբերական սինդիկատների ու տրեստների հետագա զարգացումը վերջնականապես խլում ե հողը ինքնուրույն կապիտալիստական առևտրի վոտքերի տակից, և արդյունաբերական սինդիկատներն ու տրեստներն ընդլայնվելով իրենց ձեռքն են առնում առևտուրը և մեծաքանակ առևտրականներին ու վաճառականներին դարձնում են իրենց առևտրական ներկայացուցիչ ու գործակալ-կոմիսիոներ՝ նրանց ապրանքները վաճառելու ու տարածելու։

Ինքնուրույն առևտուրն, այսպիսով, վոչնչանում ե։

Յեթե վաճառականները դեռ շարունակում են իրենց գոյությունը, սակայն և այնպես սինդիկատներն ու տրեստներն արդեն թելադրում են նրանց, թե սրանք ինչ ապրանքներ և ինչ գնով պիտի գնեն ու ծախեն, և վորտեղ ինչ վայրերում պիտի կատարվի վաճառքը։

Բացի սրանից, սինդիկատներն ու տրեստներն իրենք բաց են անում իրենց ապրանքները վաճառելու և տարածելու համար սեփական առևտրական հիմնարկների մի ամբողջ ցանց (որինակ՝ ծխախոտի տրեստն ու այլք) և այդպիսով իրենց ձեռքն են առնում վոչ միայն մեծածախ, այլև մանրածախ առևտուրը։ Անկախ կապիտալիստական առևտուրն ու նրա նշանակությունը նսեմանում ե նաև այլ կողմից, այն ե՝ կոոպերատիվ կազմակերպությունների ու կոոպերատիվ առևտրի լայն զարգացման հետևանքով, վորոնք միացնում են բազմամիլիոն աշխատավոր մասսաներ։

Այսպիսով, կապիտալիզմի զարգացումը վերջ ի վերջո հասցնում ե այն վիճակին, վոր առևտրական կապիտալի կատարած ինքնուրույն դերն ընկնում ու վոչնչանում ե, և սրա ոգուտներն ամբողջովին կլանում են սինդիկատներում ու տրեստներում միացած արդյունաբերական կապիտալն ու նրա հետ միաժամանակ զարգացող բանկային կապիտալը։

14. ԻՆ՞ՉՈՒ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՏ ԱՃՈՒՄ Է ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ

Բանկերն իրենց քաշելով ու հավաքելով մեծաքանակ կապիտալ խոշոր կապիտալիստներից ու մանր սեփականատերերից՝ տրամադրում են այն կապիտալիստական ձեռնարկություններին (նույնպես փոխարինաբար խոշոր կապիտալիստական ձեռնարկություններին և պետություններին)՝ սրանց հիմնարկության և ուժեղացման համար։

Խոշոր բաժնետիրական ձեռնարկությունների և կապիտալիստական սինդիկատների ու տրեստների տիրապետության շրջանում արդյունաբերությունը պահանջում ե յուր գոյության ու զարգացման համար հսկայական կապիտալներ, վորոնք շատ գերազանցում են առանձին արդյունաբերական կապիտալների սեփական կապիտալներից։ Ուստի և վերջիններս ավելի ու ավելի յեն ստիպված լինում դիմելու բանկերին՝ կապիտալ ստանալու համար։ Մյուս

կողմից՝ բանկերը, վորոնք ունեն իրենց տրամադրության տակ հսկայական դրամական գումարներ ու մեծաքանակ կապիտալներ, շահագրգռված են, վոր այս կապիտալներն ըստ կարելվույն վստահելի ու ապահով զետեղում (помещение) ունենան, և այս պատճառով նրանք գերադասում են հիշյալ գումարներն ու կապիտալները տալ ամենախոշոր կապիտալիստական ձեռնարկություններին ու նրանց միություններին (նույնպես և բուրժուական-կապիտալիստական պետություններին)։ Սրա հետևանքով կապիտալիզմի զարգացման զուգընթաց ուժեղանում է բանկերի դերն ու արդյունաբերության կախումը բանկերից։

Սկզբում, յերբ ազատ կապիտալներ քիչ կային, և բանկերը համեմատաբար չնչին գումար ունեյին, սրանք այդ գումարները բարձր տոկոսներով մեծ քանակությամբ դնում եյին առևտրի մեջ, և փոխ եյին տալիս՝ գրավ առնելով զանազան անշարժ կայքեր (հողեր, տներ և այլն)։

Հետագայում, յերբ դրամի ու ազատ կապիտալների քանակը շատացավ, բանկերը՝ իրենց ավանդատուներին (вкладчик) ու բաժնետերերին մեծ ու վստահելի տոկոսներ ապահովելու համար՝ ավելի ու ավելի սկսում են զետեղել իրենց կապիտալներն արդյունաբերական ձեռնարկությունների մեջ և այն էլ սրանցից ամենախոշորների մեջ, վորոնք շատ մեծ վաստակ են խոստանում։ Այսպես, մյուս կողմից, բանկերն իրենք էլ ստիպված են լինում իրենց կապիտալների աճող մասը տեղավորել արդյունաբերության ու, մանավանդ, բաժնետիրական ձեռնարկությունների մեջ, կարտելներում, սինդիկատներում ու տրեստներում։

Իբրև հետևանք այս յերևույթների՝ առաջ է գալիս այն յերևույթը, վոր բանկային կապիտալը հարաճուն կերպով հյուսվում ու միանում է արդյունաբերական կապիտալի հետ, մի կողմից՝ վորովհետև բանկերում կապիտալի հսկա կուտակումն է տեղի ունենում, իսկ մյուս կողմից՝ շնորհիվ այն կապիտալի հսկա քանակի, վոր անհրաժեշտ է կապիտալիստական խոշոր ձեռնարկություններ առաջացնելու և վարելու համար։ Ընդսմին արդյունաբերությունը հարաճուն կախում է ունենում բանկերից, իսկ բանկերն ավելի ու ավելի շահագրգռվում նրանով, վոր ամենասերտ մերձեցում ունենան արդյունաբերության հետ և խոշորագույն կապիտալիստական ձեռնարկությունների նկատմամբ իրենց վերահսկողությունն ու ղեկավարությունը լինի։ Այսպես, նախապատրաստվում են բոլոր տվյալները այն կապիտալի ծագման ու զարգացման համար, վոր կոչվում է ֆինանսական կապիտալ։

15. Ի՞ՆՉՊԵՍ Ե ԻՐԱԳՈՐԾՎՈՒՄ ԲԱՆԿԵՐԻ ՍԵՐՏ ԿԱՊԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Մեծ կապիտալներ դնելով խոշորագույն կապիտալիստական ձեռնարկությունների մեջ, մանավանդ մեծ բաժնետիրական ընկերությունների, կարտելների, սինդիկատների, ու տրեստների մեջ, բանկերը շահագրգռված են այս ձեռնարկությունների կայունությամբ ու ապահովությամբ։ Իրենց ազդեցությունն ու հսկողությունն ապահովելու համար բանկերն ուղարկում են և մտցնում կապիտալիստական ձեռնարկությունների վարչությունների մեջ իրենց լիազորներին, ներկայացուցիչներին, վորոնք հետագայում դառնում են այդ ձեռնարկությունների վարիչներ ու բարձրագույն հսկիչ խորհուրդների անդամներ։ Այնուհետև բանկերը ձեռք են բերում արդյունաբերական ձեռնարկությունների ավելի ու ավելի մեծաքանակ ակցիաներ և այդպիսով մեծ մասամբ դառնում են խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունների իսկական տերերն ու ղեկավարները։

Բացի սրանից, այս ձեռնարկությունները քանի գնում այնքան ավելի են բաժնետիրական ընկերությունների ձև ընդունում, այսինքն՝ նրանց կապիտալը բաղկանում է ակցիաներից, իսկ սրանց հրատարակումն ու տարածումը սովորաբար կատարվում է բանկերի միջոցով։ Այսպիսով, բանկերը վոչ միայն կապիտալներ են փոխ տալիս արդյունաբերական ձեռնարկություններին այլ և անմիջապես մասնակցում են նրանց ստեղծման, ապահովելով կապիտալների գոյացումը ակցիաներ տարածելու միջոցով։

Սրա հետևանքն այն է լինում, վոր բանկային կապիտալն ամենախոր կերպով թափանցում է արդյունաբերության մեջ։ Սակայն այս չի նշանակում, թե կապիտալիստ-արդյունաբերողները, սրանցից ամենախոշորները, արդյունաբերության այսպես կոչված մագնատները կամ արքաները, բաժնետիրական ընկերությունների, սինդիկատների ու տրեստների գլխավոր սեփականատերերն ու ղեկավարները, կախում ունեն բանկային ջոջերից ու մագնատներից։ Բանն այն է, վոր վերջ ի վերջո դուրս է գալիս, վոր բանկերն ու արդյունաբերությունը լիովին միացել ու կպել են իրար և միևնույն անձինք են կարգադրողը, թե այնտեղ և թե այստեղ։

Մի կողմից բանկերի վարչություններում, մյուս կողմից սինդիկատների, տրեստների և խոշոր բաժնետիրական ընկերությունների վարչություններում ավելի ու ավելի հաճախ բազմում են միևնույն խոշոր կապիտալիստները, վորոնցից ամեն մեկը զուգապաշտոնության (Совместителсьство) շնորհիվ միաժամանակ թե սեփականատեր է ու թե վարիչ-վերահսկիչ մի շարք արդյունաբերության ու բանկային ձեռնարկությունների մեջ։

Առաջ է գալիս վոչ միայն բանկային կապիտալի ձուլում, միացում արդյունաբերականի հետ այլ և ղեկավար անձանց զուգապաշտոնություն թե այնտեղ և թե այստեղ, մի զուգապաշտոնություն, վոր օգտագործում է արդյունաբերական ու բանկային կապիտալի խոշորագույն մագնատների մի չնչին խմբակ։

Սրա հետևանքը լինում է այն, վոր ամեն մի խոշոր կապիտալիստական պետության մեջ ստեղծվում է վերջ ի վերջո այսպիսի դրություն. ամբողջ յերկրի արդյունաբերությունը միացած է կարտելներում, սինդիկատներում, տրեստներում ու համակցած (комбинированный) ձեռնարկություններում։ Այս բոլորը միացած են բանկերի հետ։ Ամբողջ տնտեսական կյանքի գլուխ կանգնած են մի խումբ խոշորագույն բանկիրներ ու արդյունաբերական մագնատներ, վորոնք ամեն ինչ պահում են իրենց բռում, ամբողջը կառավարում են և քանի գնում այնքան ավելի հարստանում են, ստանալով անթիվ օգուտներ։ Իսկ պետական իշխանությունն ամբողջովին կատարում է այս բանկային ու արդյունաբերական մագնատների կամքը։

Հենց այս է ֆինանսական կապիտալի պատկերը։

16. ԻՆՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԿՐՈՒՄ ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՐՏԵԼՆԵՐԻ, ՍԻՆԴԻԿԱՏՆԵՐԻ ՈՒ ՏՐԵՍՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՆՈՐՀԻՎ

Քանի ավելի յեն շաղկապվում բանկերն արդյունաբերության հետ և թափանցում բոլոր խոշորագույն ակցիոներական ընկերությունները, կարտելները, սինդիկատներն ու տրեստները, այնքան ավելի յեն նրանք ըսկսում իրենց հերթին մոտենալ ու միանալ իրար հետ: Բանն այն է, վոր նորագույն կապիտալիստական հսկա ձեռնարկությունները (մեծակառույց յերկաթուղիներ, նավային ընկերություններ, հսկայական արդյունաբերական տրեստներ ու համակցումներ) վարելու ու միջոցներով օժտելու համար անհրաժեշտ են այնպիսի խոշոր դրամագլուխներ, վոր կարող են գըտնվել միայն մի քանի բանկերում և վոչ թե նրանցից մեկում: Միևնույն արդյունաբերական ձեռնարկությունների մեջ, քանի գնում այնքան ավելի են դրվում տարբեր բանկերի կապիտալներ և բանկերն այդպիսով մոտենում են իրար՝ ժամանակակից խոշոր կապիտալիստական ձեռնարկություններին կապիտալ մատակարարելու և նրանց նպաստելու ասպարեզում:

Նախկին մրցման ու բաժանվածության փոխարեն, վոր գոյություն ուներ բանկերի միջև, ավելի ու ավելի զարգանում է նրանց միավորությունն ու ձուլումը և այսպիսով կապիտալի կոնցենտրացիայի ու կենտրոնացման օրենքը լրիվ կերպով կիրարկվում է նաև բանկային կապիտալի ասպարեզում:

Սրա հետևանքն այն է լինում, վոր բազմաթիվ ու իրարից անջատ գործող բանկերի տեղ ժամանակակից յուրաքանչյուր կապիտալիստական պետության մեջ գոյանում են մի քանի խոշոր բանկեր, վորոնք միացած են իրար հետ բազմաթիվ կապերով ու սերտ զոդված են արդյունաբերական ակցիոներական ընկերությունների, կարտելների, սինդիկատների ու տրեստների հետ:

17. ԻՆՉ Է ՈՒՐԵՄՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

Այս ամբողջ վերոգրյալի հիման վրա այժմ դժվար չէ վորոշել, թե ինչ է գաղափարը ֆինանսական կապիտալի, վորը նորագույն կապիտալիզմի շարժիչ ույժն ու եյությունն է:

Ֆինանսական կապիտալը սակավաթիվ խոշորագույն մոնոպոլիստ բանկերի բանկային կապիտալն է, վոր միացած է արդյունաբերական կապիտալիստների մոնոպոլ միությունների—տրեստների, սինդիկատների, կարտելների ու ժամանակակից խոշոր ակցիոներական ընկերությունների կապիտալի հետ:

Ֆինանսական կապիտալը, ուրեմն, կապիտալիզմի նորագույն արտադրանքն է և յենթադրում է համակենտրոնացման շատ բարձր աստիճան թե բանկային և թե արդյունաբերական կապիտալների. սրանք նախ պետք է զարգացնեն իրենց ներսում մոնոպոլ կազմակերպություններ, վորոնք ազատ լինեն մրցումից և անբաժան տիրապետող հանդիսանան իրենց գրաված շուկաներում:

Ֆինանսական կապիտալի հայրենիքն ու տիպիկ յերկիրներն են Ամերիկան ու Գերմանիան:

Այդ յերկիրներում առաջին անգամ և ամենից ուժեղ զարգացան արդյունաբերական կապիտալիստների զանազան մոնոպոլիստական միությունները մի կողմից, իսկ մյուս կողմից այստեղ ամենից ավելի լրիվ կատարվեց բանկերի միացումն ու նրանց ձուլումն արդյունաբերության հետ:

Ֆրանսիան, վորտեղ սաստիկ զարգացած է և գերակշռում է բանկային կապիտալը, բայց վորտեղ դրա համեմատությամբ անբավարար չափով է զարգացած արդյունաբերական կապիտալը,—դեռ չի հասել ֆինանսական կապիտալի այն աստիճանին, վորի վրա գտնվում են Ամերիկայի Միացյալ Նահանգները: Պատերազմից առաջ Ֆրանսիան ամբողջ աշխարհի բանկիրն էր, այժմ էլ այնտեղ բանկային կապիտալը գերակշռող դեր է խաղում, բայց արդյունաբերական կապիտալը դեռ չի զարգացած այն աստիճան, վոր բանկային կապիտալն առավելապես արդյունաբերության մեջ զետեղվի:

Անգլիան ֆինանսական կապիտալի զարգացման տեսակետից ավելի մոտ է Ամերիկային, քան Ֆրանսիան:

Ֆինանսական կապիտալը հաճախ նույնացնում են բանկային կապիտալի հետ, ըստ վորում ֆինանսական կապիտալի առանձնահատկությունը համարում են արդյունաբերության յենթարկումը բանկային կապիտալին և կարծում են, վոր վերջինիս զարգացումը նորագույն կապիտալիզմի մեջ նըկատվող յերևույթների սկզբնապատճառն է:

Ֆինանսական կապիտալի այս ըմբռնումը սխալ է: Ֆինանսական կապիտալի ժամանակ արդյունաբերական կապիտալը վոչ թե յենթարկվում, այլ ձուլվում է բանկային կապիտալի հետ և ընդսմին այս ձուլումն իրագործվում է այն ժամանակ, յերբ բանկային կապիտալը կենտրոնանում է մի կամ մի քանի սակավաթիվ բանկերի ձեռքում, իսկ արդյունաբերական կապիտալը հասած է լինում կոնցենտրացիայի (համակենտրոնացման) բարձր աստիճանի՝ հանդես գալով խոշոր տրեստների, սինդիկատների, կարտելների ու խոշորագույն ակցիոներական ձեռնարկությունների ձևով, վորոնք մոնոպոլիստ են արդյունաբերության մեջ ու շուկայում:

Ընդսմին, թեպետ կապիտալի կոնցենտրացիան ու մոնոպոլիաները զարգանում են ինչպես արդյունաբերության մեջ, այնպես էլ բանկային գործում, բայց սկզբնապատճառն ու շարժիչ ույժն այնուամենայնիվ վոչ թե բանկերն են, այլ արդյունաբերությունը:

Գոյություն ունեցող արդյունաբերական կապիտալիստական ձեռնարկությունները, վորոնք առաջ են գալիս միանգամից հսկա չափերով, մի կողմից իրենց տերերին վիթխարի չափերով վաստակ են տալիս, վոր գըտնում է բանկերը, իսկ մյուս կողմից իրենց հիմնարկեքի (основание) ու զարգացման համար ժամանակակից ձեռնարկությունները պիտի ունենան իրենց տրամադրության տակ հսկա կապիտալ: Հենց այդ է պատճառը, վոր բանկային կապիտալի ու բանկերի դերն աճում է: Ուստի և բանկային կապիտալն ու սրա միավորությունը արդյունաբերական համակենտրոնացման հետևանքն ու գործիքն են և ծառայում են նրա շահերին: Արդյունաբերական կապիտալի արդի մագնատներն, այս բոլոր Մորգանները, Ռոկֆելլերները, Ռատենաուները, Արմստրոնգները, Վիկկերսները, Կրուպները, Շնայդերները, Ստիննեսներն ու ժամանակակից արդյունաբերության այլ

արքաները բնավ յենթարկված չեն բանկերին ու բանկային մագնատներին, այլ ավելի շուտ ծառայեցնում են բանկային կապիտալներն ու ապարատներն իրենց ոգտին և բանկերի տեր ու տնորենների հետ միասին ղեկավարում են կապիտալիստական պետությունների ամբողջ տնտեսական ու քաղաքական կյանքը:

Ֆինանսական կապիտալի ժամանակ հրամանատար խմբակ են հանդիսանում վոչ թե բանկերն առանձին-առանձին և վոչ էլ արդյունաբերական կապիտալիստները, այլ ֆինանսական գիշատիչների մի փոքրիկ խմբակ (ֆինանսական ազնվականությունը կամ ոլիգարխիան), վորում համախմբված են լինում արդյունաբերության ու բանկերի արքաները:

Այսպես, օրինակ, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1912 թ. կային 18 խոշոր բանկային հիմնարկություններ, վորոնց տերերն ու վարիչներն ընդհանուր առմամբ ընդամենը 180 մարդ, վարում են հետևյալ հրամանատարական պաշտոններն ավելի փոքր բանկերում և այլ զանազան, գլխավորապես արդյունաբերական ու փոխադրական ձեռնարկություններում:

«385 դիրեկտորի պաշտոն 41 բանկերում ու տրեստներում, վորոնք ունեյին 3 832 միլիոն դոլլար կապիտալ ու 2,834 միլիոն դոլլար ավանդ (депозид):

40 դիրեկտորի պաշտոն 11 ապահովագրական ընկերություններում, վորոնք ունեյին իրենց տրամադրության տակ 2 – 6 միլիարդ դոլլարի ակտիվ:

155 դիրեկտորի պաշտոն 31 յերկաթուղային ընկերությունների մեջ 12,193 միլիոն դոլլար ընդհանուր կապիտալով ու 271,120 կիլոմետր յերկաթուղով:

6 դիրեկտորի պաշտոն ճեպընթաց գնացքների 2 ընկերությունների մեջ և 4 դիրեկտորի պաշտոն մի նավային ընկերության մեջ՝ 245 միլիարդ դոլլար կապիտալով ու 87 միլիոն դոլլար տարեկան հասույթով:

98 դիրեկտորի պաշտոն 28 արդյունաբերական ու առևտրական ընկերությունների մեջ՝ 3,583 միլիոն դոլլար ընդհանուր կապիտալով ու 1,145 միլիոն դոլլարից ավելի տարեկան հասույթով:

48 դիրեկտորի պաշտոն քաղաքների կարիքները հոգացող (ջրմուղ, ելեկտրականություն և այլն) 19 միություններում՝ 2,826 միլիոն դոլլար ընդհանուր կապիտալով ու 428 միլիոն դոլլար տարեկան հասույթով:

Ընդամենը 180 հոգի բանկերի տերերն ու նրանց դիրեկտորները գրավում են 746 դիրեկտորի պաշտոն 134 ձեռնարկություններում՝ 25,325 միլիոն դոլլար (50 միլիարդ ր. ավելի) ընդհանուր կապիտալով: Այս գումարը համարյա կեսն է ամբողջ ամերիկական ժողովրդական գույքի:

Ահա թե ինչ պատում են ֆինանսական կապիտալի դիկտատորներն Ամերիկայում: Միլիարդերների ու նրանց արբանյակների մեկ յերկու հարյուրյակ տնօրինում են 50 միլիարդը՝ ունենալով իրենց ձեռքում տնտեսական կյանքի բոլոր գլխավոր ճյուղերը:

Ֆինանսական կապիտալի այդ մի բուռ մագնատները պահում են իրենց բռում վոչ միայն ամենից արդյունաբերական յերկրի—Ամերիկայի բախտը, այլև նրա միջոցով ամբողջ աշխարհի բախտի մի նշանավոր մասը[1]:

Նմանապես Ֆրանսիայում էլ 1910 թվի տվյալներով՝ 50—60 հոգի խո-

[1]) Г. Зинокьев «Война и кризис Социаллизма» եջ 160, Պետհրատ, Պետրբուրգ 1920 թ.:

շոր ֆինանսական գայլաձկներ (ակուլա) տեր են 108 բանկերի ու ծանր արդյունաբերության 105 խոշորագույն ձեռնարկությունների, 101 յերկաթուղային ընկերությունների և 117 այլ կարևորագույն արդյունաբերական ու ֆինանսական ձեռնարկությունների, ընդամենը 431 ձեռնարկությունների, վորոնցից ամեն մեկը տնօրինում է հարյուրավոր միլիոններ:

Նույն պատկերը նկատվում է ի հարկե թե Անգլիայում և թե Գերմանիայում:

Վերջ ի վերջո ընդամենը մի 500 հոգի բանկերի ու արդյունաբերության խոշորագույն մագնատներ պահում են իրենց բռերում ամբողջ աշխարհն ու տնօրինում են նրա բախտը:

18. ԻՆՉՊԵՍ Է ԱՆԴՐԱԴԱՌՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻՆ ՀԱՏՈՒԿ ՄՐՑՄԱՆ ՈՒ ԱՆԱՐԽԻԱՅԻ ՎՐԱ

Ֆինանսական կապիտալը կապիտալի զանազան տեսակների ու մասերի միավորությունն է ֆինանսական ազնվականության ձեռքում: Այս միավորության հիմքն ու առաջին պայմանն է մրցության վերացումը, վորը զանազան կապիտալիստական գիշատիչների, խոշոր մոնոպոլիստական միությունների զարգացման ու տիրապետության հետևանքն է: Մրցման ու անարխիայի փոխարեն առաջանում է կապիտալիստական կարգավորումն ու թալանը, վոր կատարում են մի բուռ խոշորագույն կապիտալիստական գայլաձկներ փոխադարձ համաձայնությամբ՝ ամեն մի բուրժուական պետության ներսում: Այսպիսով կապիտալիստական պետությունները ֆինանսական կապիտալի զարգացմամբ հետզհետե ավելի ու ավելի դառնում են տնտեսապես իրար հետ միավորված կապիտալիստների համախմբված միություններ:

Բայց այս չի նշանակում, թե կապիտալիզմը բոլորովին ազատվում է մրցումից ու անարխիայից:

Մրցումն ու անարխիան շարունակում են իրենց գոյությունը համաշխարհային շուկայում, վորտեղ ավելի ու ավելի ուժգնորեն են սկսում բախվել իրար ժամանակակից խոշորագույն կապիտալիստական պետությունները: Սրանց կռիվը համաշխարհային շուկայում այնքան ավելի դաժան ու քայքայիչ է դառնում, վորքան ավելի յե զարգացած լինում ամեն մի կապիտալիստական յերկրի ներսում ֆինանսական կապիտալը:

Ֆինանսական կապիտալի հետ, վորը կապիտալի կոնցենտրացիայի բարձրագույն աստիճանն է, սերտ շաղկապված է ամեն մի խոշոր կապիտալիստական պետության արտադրող ուժերի հսկա զարգացումը:

Յերբ ֆինանսական կապիտալը տիրապետող է դառնում, այն ժամանակ ամեն մի կապիտալիստական յերկրի բուրժուազիային իր պետության սահմանները նեղ են թվում, անկարելի յե դառնում այս սահմանների շըրջանակում զարգացումը շարունակել, ուստի և նա ձգտում է ըստ կարելվույն լայնացնել այն շրջանակները:

Այսպես ահա, ֆինանսական կապիտալի աճման շնորհիվ բոլոր՝ առաջավոր կապիտալիստական պետություններում սկսում է զարգանալ մի առանձին ներքին ու արտաքին քաղաքականություն, վոր հատուկ է տիրող ֆինանսական կապիտալի շահերին: Այդ քաղաքականությունը ղեկավա-

րում է նախ և առաջ այն նպատակը, վոր մաքսերի միջոցով արգելք դըրվի ուրիշ պետությունների կապիտալի՝ տվյալ պետության ներքին շուկան մտնելու, վոր ներքին շուկան բացառապես իր սեփական, հայրենի կապիտալին վերապահվի և դրանով վերջինս հիմնովին ապահովի ներքին մրցումից:

Իսկ մյուս կողմից՝ այդ քաղաքականությունը ղեկավարում է այն նըպատակը, վոր ամեն մի պետության տվյալ սահմաններ մեծագույն տընտեսական, իսկ հետո նաև քաղաքական ընդլայնման յենթարկվեն, վոր ըստ կարելվույն ընդարձակ մի այնպիսի տնտեսական տերրիտորիա ստեղծվի, վորի ներսում կարողանա միահեծան տիրապետել ու վստահ զիջել պետության ֆինանսական կապիտալը՝ պաշտպանվելով ոտարյերկրյա մրցումից մաքսային պարիսպներով:

Այսպիսով ֆինանսական կապիտալի տիրապետության ժամանակ առաջ է գալիս մի կողմից յուրահատուկ պրոտեկցիոնիզմ (հովանապաշտություն), յերբ հօգուտ հայրենի կապիտալի շահերի, բարձր մաքսային պարիսպներ են քաշում՝ ոտարյերկրյա կապիտալի մրցման առաջն առնելու համար, իսկ մյուս կողմից՝ զարգանում է իմպերիալիզմը, շնորհիվ այն հանգամանքի, վոր ֆինանսական կապիտալի համար բավական չե իր պետության բանվորների ու գյուղացիների շահագործումը միայն և այն ձըգտում է տարածելու այս շահագործումն աշխարհի միացած բոլոր յերկիրների ու ժողովուրդների վրա:

19. Ի՞ՆՉ ԴԵՐ Է ԿԱՏԱՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՊՐՈՏԵԿՑԻՈՆԻԶՄԸ

Պրոտեկցիոնիզմի ժամանակ պետություններն անջրպետվում են իրարից՝ ոտարյերկրյա ապրանքների վրա բարձր մաքս նշանակելով, վորպեսզի դժվարացնեն կամ բոլորովին արգիլեն նրանց մուտքը տվյալ պետության ներքին շուկան: Շնորհիվ այսպիսի մաքսային բարձր պարիսպների՝ մի կողմից ամեն մի պետության ֆինանսական բուրժուազիան ապահովում է իրեն ոտարյերկրյա կապիտալի մրցության վորևե վտանգից, իսկ մյուս կողմից՝ ֆինանսական կապիտալը լրիվ հնարավորություն է ձեռք բերում ուռցընելու, բարձրացնելու բոլոր ապրանքների գները և այսպիսով, ամենաստիկ յեղանակով կողոպտելու ժողովրդական լայն աշխատավոր մասսաներին: Հենվելով պրոտեկցիոնիզմի վրա, պետությունն, ի հաշիվ ժողովըրդական մասսաների, հասույթ է ստանում բարձր մաքսերից, իսկ սինդիկատներն ու տրեստներն ավելորդ վաստակ (добовочная прибыль) չափից ավելի, վորին հասնում են գների վրա հավելումներ դնելով:

Ունենալով իրենց տրամադրության տակ այս ավելադիր վաստակը, սինդիկատներն ու տրեստները, ի հաշիվ ներքին սպառողների, հնարավորություն են ստանում ավելի եժան գներով արտահանելու և ծախելու ոտարյերկրյա շուկաներում նույն ապրանքները, ինչ վոր պետության ներսում ծախում են բարձր գներով: Հայտնի յե, օրինակ, վոր շաքար արդյունաբերողների ռուսական սինդիկատը Ռուսաստանում շաքարի գինը շատ բարձր եր պահում, իսկ այս նույն շաքարը ծախում եր արտասահմանում շատ չնչին գնով—լոկ նրա համար, վոր իր արտադրությունն ընդարձակե

և իր մրցակիցներին տապալե: Այսպիսով, օգտվելով բարձր մաքսերից, սինդիկատներն ու տրեստները հնարավորություն են ստանում սրտներն ուզածի չափ կողոպտելու մասսաներին իրենց պետությունների ներսում, վորպեսզի ոտարյերկրյա գնորդներին ու արտաքին շուկաներն իրենց տիրապետության տակ առնեն:

Բացի յերկրի ներսում լայն ժողովրդական մասսաներին կողոպտելուց ու արտաքին շուկաները մուտք գործելուց, պրոտեկցիոնիզմն ամենասաստիկ յեղանակով սրում է թշնամությունն ու կռիվն առանձին կապիտալիստական պետությունների միջև, վորոնցից ամեն մեկն աշխատում է անջըրպետվել մյուսներից, ըստ կարելվույն բարձր մաքսային պարիսպներով և մըղում, հասցնում է սրանց ամենակատաղի ընդհարումների, իսկ վորոշ դեպքերում նաև պատերազմների: Թշնամության ու կռվի այս սրվածությունն ավելի ևս ուժեղանում է իմպերիալիզմի զարգացման հետևանքով:

20. Ի՞ՆՉ Է ԱՐԴԻ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ

Իմպերիալիզմ բառը ծագում է լատինական «իմպերիում» բառից, վոր նշանակում է կայսրություն: Հին ժամանակ մի քանի ամենահզոր պետություններ կամ կայսրություններ ձգտում եյին, գլխավորապես նվաճումների միջոցով, իրենց յենթարկելու բոլոր այլ յերկիրներն ու ազգերը և այսպիսով ստեղծելու ամբողջ աշխարհն ընդգրկող մի պետություն այն է՝ կայսրություն:

Խոսելով արդի իմպերիալիզմի մասին, վորի սկիզբն ընկնում է 19-րդ դարի 80-ական թվականների վերջին, մենք ի նկատի ունենք ամեն մի կապիտալիստական յերկրի ֆինանսական կապիտալի ձգտումը՝ ծավալվել իր պետության սահմաններից դուրս և տիրապետել ամբողջ աշխարհը. այս անհրաժեշտաբար բղխում է ֆինանսական կապիտալի շահերից, ինչ չափով վոր այս կապիտալն աճում և զարգանում է:

Ֆինանսական կապիտալի շրջանում կապիտալիզմը, նույնիսկ լայնորեն օգտագործելով պրոտեկցիոնիզմի բարենպաստ արգասիքները, չի կարող բավականանալ լոկ այն շահագործումով ու թալանով, վոր կատարում է ամեն մի տվյալ պետության ներսում: Սրա գլխավոր պատճառները հետևյալներն են.

1) Ֆինանսական կապիտալն իր զարգացման ընթացքում ավելի ու ավելի կարիք է զգում արտաքին շուկաների, վորպեսզի յուր զանազան ապրանքների հարաճուն քանակը վաճառե:

Ապրանքների արտահանությունը, քանի գնում, այնքան ավելի հրամայական անհրաժեշտություն է դառնում նորագույն բարձր զարգացման հասած կապիտալիզմի համար:

2) Քանի աճում է արտադրությունն, այնքան ավելի յե սկսում արդի կապիտալիզմը չբավականանալ իր սեփական յերկրի հում նյութով ու վառելիքով, ուստի և հարկադրվում է հում նյութ ու վառելիք վորոնելու ուրիշ յերկիրներում, մանավանդ դեռ յետամնաց ու հետամնաց յերկիրներում (գաղութներում), վորտեղ շատ կան ամեն տեսակ չօգտագործված բընական հարստություններ:—Այսպիսով զարգանում է այն արշավը, վորով կապիտալիստներն ընկնում են վոչ միայն վաճառքի, այլև հում նյութի ու վառելիքի շուկաների հետևից:

3) Ֆինանսական կապիտալի շրջանում վոչ միայն ապրանքների, այլ և կապիտալների ավելցուկ է գոյանում։ Հարուստ կապիտալիստական պետությունները չեն կարողանում իրենց ներսում օգտագործել այն հսկա կապիտալները, վորոնք գտնվում են սակավաթիվ կապիտալիստների ձեռքում, ուստի և սկսվում է վազքն ու կռիվն ուրիշ յերկիրներ նվաճելու համար, ուր կարելի լիներ արտահանել ավելորդ յեղած կապիտալները և նրանց շնորհիվ շինել ու բանեցնել գործարաններ, յերկաթուղիներ ու այլ կապիտալիստական ձեռնարկություններ։ Սովորաբար կապիտալիստներին նաև այն հանգամանքն է դրդում կապիտալներն արտահանել, վոր ուրիշ, ավելի հետամնաց ու աղքատ յերկիրներում, նրանք կարող են արտահանված կապիտալներից ավելի մեծ վաստակ վաստակել, ավելի բարձր նորմա ստանալ, քան թե զարգացած արդյունաբերություն ունեցող պետություններում։ Այս յերևույթը բացատրվում է նրանով, վոր ուրիշ, ավելի հետամնաց ու յերիտասարդ յերկիրներում (գաղութներում) կան շատ բնական հարստություններ, եժանագին հում նյութ և, վոր գլխավորն է, առատ, եժանագին ու տոկուն բանվորական ուժ։ Այսպիսով կապիտալիստները ձգտում են ուրիշ յերկիրների տիրելու նաև այն նպատակով, վոր իրենց կապիտալներն այնտեղ արտահանեն։

Վերջապես՝ 4) մեծ ու հին բուրժուական պետությունների կապիտալիստները ձգտելով այն բանին, վոր ըստ կարելվույն եժան ու հլու բանվորական ուժ ունենան և գիշատիչ կերպով նրա քրտինքն ու ամբողջ հյութը քամելով փող դիզեն, այլև վորպեսզի բանվորական կազմակերպությունների դեմ հաջողությամբ կռվեն դիմում են դեպի հետամնաց յերկիրները, (Չինաստան, Աֆրիկա և այլն) այստեղ իրենց համար ձեռնտու եժանագին ու հլու բանվորական ուժ ձեռք բերելու համար։ Հետամնաց յերկիրները, վորտեղ պրոլետարիատը թույլ է կազմակերպված, կամ ուժեղ բանվորական կազմակերպություններ բնավ չկան, հատկապես հարմար ասպարեզ են բանվորական ուժի ամենահրեշավոր շահագործման համար։

Իբրև հետևանք այս բոլորի, հենց շնորհիվ այն հանգամանքի, վոր ֆինանսական կապիտալը վազում է վաճառքի շուկաների, հում նյութի աղբյուրների, կապիտալի արտահանության վայրերի ու աժանագին բանվորական ուժի հետևից,—զարգանում է արդի իմպերիալիզմը, վոր ֆինանսական կապիտալի անհրաժեշտ ծնունդն է։

Այսպես ուրեմն, արդի իմպերիալիզմը կարող ենք վորոշել հետևյալ կերպով.

Արդի իմպերիալիզմը ֆինանսական կապիտալի նվաճողական կամ հափշտակողական քաղաքականությունն է, վորի ընթացքում այս կապիտալը կռվում է պարենների վաճառքի, հում նյութերի ու վառելիքի շուկաների, իր կապիտալներն ամենաձեռնտու կերպով ուրիշ յերկիրներում տեղավորելու ու այնտեղ ավելի աժանագին բանվորական ուժ ձեռք բերելու համար և այս նպատակին դիմում է նրանով, վոր մյուս յերկիրներն ու ազգերն իրեն է յենթարկում և համաշխարհային վիթխարի պետություններ ստեղծում։ Իմպերիալիզմն, ուրեմն, ծագում է ֆինանսական կապիտալից և անխուսափելիորեն կապված է նրա հետ։

Ընդ սմին, ֆինանսական-կապիտալիստական պետություններից ամեն մեկը ձգտում է վերջ ի վերջո տիրելու ամբողջ աշխարհն ու կազմելու համաշխարհային մի կայսրություն, վորտեղ միահեծան իշխեն հաղթող պետության մի բուռը կապիտալիստներ։

21. ԻՆՉ ՏԵՂ Է ԳՐԱՎՈՒՄ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

Ասացինք, վոր ժամանակակից իմպերիալիզմը տվյալ պետության ֆինանսական կապիտալի նվաճողական, հափշտակողական քաղաքականությունն է, վոր նպատակ ունի մյուս յերկիրներն ու ազգերին հպատակեցնելու և մի հսկա համաշխարհային պետություն ստեղծելու։ Ժամանակակից իմպերիալիզմն ավելի լրիվ ըմբռնելու համար անհրաժեշտ է պարզ կացուցանել այն տեղը, վոր բռնում է այս իմպերիալիզմը կապիտալիզմի զարգացման մեջ, այլև այն բնորոշ յերևույթները նորագույն կապիտալիզմի կյանքում, վոր իմպերիալիզմի ասատան են կազմում։

Տնտեսական կողմից, իմպերիալիզմի ամենակարևոր գիծը մոնոպոլիստական կապիտալիզմն է, ուրիշ խոսքով իմպերիալիզմը կապիտալիզմի զարգացման նորագույն մոնոպոլիստական շրջանը կամ աստիճանն է։ Կապիտալիստների մոնոպոլիստական միությունների, կարտելների, սինդիկատների ու տրեստների տիրապետությունը, վորոնք բաժանում են իրենց միջև նախ և առաջ ներքին շուկաները, իսկ հետո գալիս են միջազգային կարտելներ ու սինդիկատներ կազմելու, կապիտալիզմի նորագույն աստիճանի գլխավոր առանձնահատկությունն է։ Այս նորագույն աստիճանը հաջորդեց կապիտալիզմի նախորդ աստիճանին, յերբ տիրում էր ազատ մրցումը։ Կապիտալիստական մոնոպոլիան ազատ մրցումի ճիշտ հակադրությունն է և ցույց է տալիս արդեն, թե կապիտալիզմն սկսում է անցնել վոչ թե դեպի մասնավոր-սեփականատիրական, այլ հասարակական տնտեսության ավելի բարձր կարգերին։ Կապիտալիստական մոնոպոլիան ժամանակակից իմպերիալիզմի տնտեսական ամենախոր հիմքն է։ Այդ մոնոպոլիան կապիտալիստական է, այսինքն՝ նա ծագում է կապիտալիզմից և գոյություն ունի դեռ կապիտալիզմի ընդհանուր միջավայրում, այսինքն՝ ապրանքային արտադրության, անարխիայի, մրցության պայմաններում և մի մշտական ու լրիվ հակասության մեջ, վոր ունի մոնոպոլիան միջավայրի նկատմամբ։

Իմպերիալիզմի դարաշրջանում այս մոնոպոլիան անխուսափելիորեն կապված է մի կողմից՝ կապիտալիզմի լճացման ու փտության հետ, իսկ մյուս կողմից՝ կապիտալիստների պարազիտիզմի հետ։

Իմպերիալիզմն, այսպիսով, տնտեսական կողմից վոչ միայն կապիտալիզմի նորագույն, մոնոպոլիստական աստիճանն է, այլև միաժամանակ նրա վերջին, անկման աստիճանն է, յերբ կապիտալիզմը հասնելով մոնոպոլիաների ու ակցիոներական պարազիտային կապիտալի ձև ընդունելով՝ սկսում է կորցնել արտադրող ուժեր զարգացնելու իր ներքին զսպանակները և թևակոխում է ներքին քայքայման ու փտության շրջանը։ Ուրեմն՝ իմպերիալիզմը, վորպես կապիտալիզմի նորագույն ու միևնույն ժամանակ վերջին աստիճանը, տնտեսական կողմից յենթադրում է հետևյալ 4 հատ-

կանիչների գոյությունը, վորոնք տալիս են մեզ իմպերիալիզմի լրիվ ըմբռնումը. 1) բարձր զարգացում կապիտալիստական մոնոպոլիաների, վորոնք վճռական դեր են կատարում առանձին կապիտալիստական պետությունների տնտեսական կյանքում և սկսում են նվաճել նաև համաշխարհային տնտեսությունը, 2) ֆինանսական կապիտալի ու ֆինանսական ազնվականության կամ ոլիգարխիայի (խմբակի) գոյություն, վոր տնօրինում է բոլոր գործերը կապիտալիստական պետությունների մեջ, 3) կապիտալների՝ դեպի ուրիշ յերկիրներ արտահանելու հսկա զարգացում, 4) յերկրագնդի տերրիտորիաները խոշորագույն կապիտալիստական պետությունների միջև բաժանելու ավարտումը։ Այդպես ուրեմն, **իմպերիալիզմը**, տընտեսական կողմից և կապիտալիստական զարգացման ընդհանուր ընթացքի մեջ, **նորագույն կապիտալիզմն է՝ յուր զարգացման այն վերջին աստիճանի ժամանակ, յերբ առաջ է յեկել կապիտալիստական մոնոպոլիաների ու ֆինանսական կապիտալի տիրապետությունը, յերբ խոշոր նշանակություն է ստացել կապիտալների արտահանությունը, յերբ սկսել է աշխարհի բաժանումը միջազգային տրեստների միջև և ավարտվել է յերկրագնդի ամբողջ տերրիտորիայի բաժանումը խոշորագույն կապիտալիստական պետությունների միջև։**

22. ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻ ՎՈ՞Ր ԽՄԲԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎՈ՞Ր ՃՅՈՒՂԵՐՆ ԵՆ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ՇԱՀԱԳՐԳՌՎԱԾ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՈՎ

Քննելով կապիտալիզմի զարգացումը նորագույն ժամանակում, նկատում ենք, վոր քանի գնում է ժամանակակից կապիտալիստական պետությունների մեջ գլխավոր դերը ավելի կատարում է այսպես կոչված ծանր արդյունաբերությունն, այսինքն մետաղային (մանավանդ մետաղագործական, հետո փոխադրական-կառուցողական, մեքենաշինական և ռազմական արդյունաբերությունը), այլև ածխային ու նավթային արդյունաբերությունը։ Ընդ սմին առաջնակարգ նշանակություն ունի մետաղագործությունը։ Ամենուրեք վերջինս դառնում է, և ամենից առաջավոր կապիտալիստական յերկիրներում արդեն դարձել է այն գլխավոր արդյունաբերությունը, վորից կախված են կապիտալիստական տնտեսության շատ ուրիշ կարևվորագույն ճյուղեր։ Յերկաթե ու պողպատե նյութեղենները (материал) այն հիմնական տարրերն են, վորոնցից պատրաստվում են բոլոր մեքենաները ու գործիքները և կապիտալիզմի զարգացման պրոցեսն անխուսափելի տանում է դեպի մի վիճակ, վորի ժամանակ մետաղագործական արդյունաբերության դերը մեծանում է թե ազգային և թե համաշխարհային տնտեսության մեջ։

Մետաղագործական արդյունաբերությունը ժամանակակից արդյունաբերության հիմքն է։ Ժամանակակից արդյունաբերության բոլոր վիթխարի մեքենաներն իրենց պտուտակներով ու ատամնավոր անիվներով, իրենց շարժիչներով (մոտոր) ու շոգեմուրճերով, արտադրության բոլոր ճյուղերը շարժման մեջ դնող ամբողջ հզոր ապարատը, յերկաթուղիների ու օվկիանոսային և ծովային ռազմական ու առևտրական հսկա նավատորմի ամբողջ զարգացումը — այս բոլորը յուր սկիզբն առնում է մետաղագործական

գործարանների դոմնի հալոցներում (доменная печь), վորտեղ հալվում է չուգունը և ձուլվում յերկաթն ու պողպատը։

Մետաղագործությունը մի հսկա դարբնոց է, վորտեղ կոփվում է այն յերկաթե հիմքը, վորի վրա խարսխված է արդի կապիտալիստական տնտեսության ծանր, բազմահարկ շինությունը։

Մետաղագործությունն ամենասերտ կերպով կապված է արդի ռազմական արդյունաբերության հետ, բոլոր թնդանոթային ու նավաշեն տըրեստների ու սինդիկատների հետ, վորոնք այնքան ազդեցիկ են կապիտալիստական պետությունների մեջ։

Վերջապես մետաղագործությունը մյուս արդյունաբերություններից ավելի հզոր է նաև այն պատճառով, վոր մյուս բոլորից ավելի վաղ եր ընթացել կարտելներ, սինդիկատներ ու տրեստներ կազմելու ուղիով, այլ և այն պատճառով, վոր կապիտալիստական մոնոպոլիաներն են դարձյալ մետաղագործության մեջ ամենից ավելի ընդարձակ ու մեծածավալ չափերով զարգացել, և յերկաթի ու պողպատի արքաներին ավելի ու ավելի յեն յենթարկվում արդյունաբերության միացած ճյուղերը։ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում ամենահզոր ու իր կազմակերպվելու ժամանակով առաջին տրեստը հռչակավոր պողպատի տրեստն է, վոր հիմնվել է 1901 թվին։ Այս պողպատե հսկան, ըստ 1912 թ. տվյալների, տիրում ու վերահսկում է 785 ձեռնարկությունների և սրա հիմնական կապիտալը գերազանցում է միացած 5 ամենախոշոր տրեստների կապիտալների գումարից։ Այս պողպատի տրեստը փաստորեն Ամերիկայի բոլոր հանքաբեր (рудоносный) հողամասերի 80%-ի տնօրենն է, սրա ձեռքումն է գտնվում Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների կոքսի ամբողջ արտադրությունը. այս տրեստն արտադրում է բոլոր մետաղե խողովակների 90%-ը, սև ու սպիտակ թիթեղի 80%-ը, պողպատե ռելսերի 70%-ը։ Այս տրեստը մի քանի տասնյակ հազար մղոն յերկարություն ունեցող յերկաթուղիների ցանցի տեր է, և այլն։

Պողպատի տրեստի փաստական հսկողության տակ է այն ամբողջ յերկաթուղային ցանցը, վոր ծառայում է այն ռայոնի պետքերին, վորտեղ գտնվում են տրեստին պատկանող հանքերն ու գործարանները։ Այդ համակցած (комбинированный) պողպատե հսկայի անմիջական տնօրինության տակ է գտնվում նրան անհրաժեշտ ածխային ամբողջ արդյունաբերությունը. իսկ վերջին ժամանակներս նրան են յենթարկվում արդյունաբերության ելի մի շարք բազմազան ճյուղեր (շոգեկառք-վագոնաշինարարականը, նավաշինարարականը, ելեքտրականը, ցեմենտայինը և այլն)։

Նույն պատկերը տեսնում ենք նաև Գերմանիայում, վորտեղ ամենահզոր միավորություններից մեկն է 1904 թ. կազմված պողպատի վիթխարի սինդիկատը, վոր միացրել էր 31 արդյունաբերական ընկերություններ, վորոնց թվում նաև Կրուպպի, Շտումի, Տիսենի, Վենդելի, Կիրդորֆի գործարանները։

Մետաղագործությունից հետո, կարևորության տեսակետից, հաջորդ ճյուղն է ածխային, իսկ վերջին ժամանակներս՝ նավթային արդյունաբերությունը, վոր շատ մեծ նշանակություն ունի թե արդյունաբերության և թե մանավանդ արդի առևտրական ու ռազմական նավատորմի համար։ Ածուխն ու նավթը հաց ու ջուր են ժամանակակից արդյունաբերության,

այլև թե նավատորմի, թե յերկաթուղային փոխադրության համար։ Սակայն կապիտալիզմի զարգացումը տանում է դեպի այն, վոր խոշորագույն կապիտալիստական պետությունների վիթխարի ածխային արդյունաբերությունը քանի գնում, ամբողջովին կուլ է գնում մետաղագործության բերանը, վոր ածուխի ամենաառաջին սպառողն է, կամ համենայն դեպս ուղղակի ու հարաճուն կախումն է ունենում նրանից։

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում, օրինակ, ածխային շուկա բնավ գոյություն չունի, վորովհետև ածուխն ամբողջովին կլանողը պողպատի շուկան է և բոլոր ածխահանքերը պատկանում են պողպատի արքաներին։ Ածխային շուկայի նույնպիսի կլանում տեղի յե ունենում նաև Գերմանիայում, Անգլիայում, Ֆրանսիայում ու այլ պետությունների մեջ։

XIX դարի վերջին յերկու տասնամյակները նշանավոր դարձան նավթային արդյունաբերության անօրինակ զարգացմամբ ու նրա ազդեցության սաստկացմամբ, վոր սկսում է հսկայական դեր կատարել մետաղագործության ու ածխային արդյունաբերության հետ։ Վորպես աղբյուր շարժիչ ուժի ու իբրև վառելիք՝ նավթն ավելի ու ավելի դուրս է մղում ածուխը, և հակառակ XIX դարին, վոր շոգեմեքենայի և ածխի դար եր, XX դարը դառնում է նավթի և ներկեզ (внутреннего сгорания) շարժիչների ու ելեկտրականության դար։

Ածխի նկատմամբ ունեցած նավթի տեխնիկական ու տնտեսական առավելությունն է պատճառ, վոր սա լայն տարածված է արդյունաբերության մեջ ու մանավանդ նավատորմում։ Մի տոնն (61 փութ) նավթը փոխարինում է 4 տոնն ածուխին։ Նավթով բանող նավատորմը վճռական առավելություն ունի ածուխով բանողից՝ արագընթացության ու այլ տեսակետներից։ Այս պատճառով էլ, նավթ ունենալը ծովին ու ցամաքին տիրելու կարևորագույն պայմաններից մեկն է։

Ծանր արդյունաբերության այս հիմնական ճյուղերը—պողպատը, ածուխն ու նավթը, կենտրոնում ունենալով մետաղագործությունը—ժամանակակից կապիտալիզմի հենց այն ճյուղերն են, վորոնք մի կողմից ամենագլխավոր ու վճռական դերն են կատարում կապիտալիզմի աշխարհում, իսկ մյուս կողմից ժամանակակից իմպերիալիզմի հիմքն ու ամենագլխավոր շարժիչ զսպանակն են։

XIX դարի վերջը բնորոշ է կապիտալիզմի զարգացման մեջ նրանով, վոր տնտեսական կյանքում մանածագործային, մասնավորապես բամբակեղենի արդյունաբերությունն ու, այսպես կոչված, թեթև արդյունաբերության այլ տեսակները կորցնում են իրենց գլխավոր նշանակությունը և ծանրության կենտրոնն անցնում է ծանր արդյունաբերության, մանավանդ մետաղագործության կողմը։ Միայն այս վարկյանից է ահա, և ամենից առաջ հենց ծանր արդյունաբերության շահերի համար է, վոր սկսվում է իմպերիալիզմի դարաշրջանն ու զարգացումը։ Ուստի և ծանր արդյունաբերությունն ու նրա արքաների շահերը ժամանակակից իմպերիալիզմի գլխավոր շարժիչ զսպանակներն են։ Իմպերիալիզմի քաղաքականության ամենաեյական բովանդակությունը կազմում է այն կռիվը, վոր այս մղում է մետաղի, ածուխի ու նավթի հանքատեղի (месторождение) ու հանքաշերտերի (залежи) համար, ինչպես և յերկաթի ու ամեն տեսակ

պողպատի վաճառքի շուկայի համար, այլ և այն վազքը, վորով ընկնում է նոր յերկիրների հետևից ու նրա այն պայքարը, վոր առաջ է տանում վերաբաժանելու համար յերկրագունդը, վոր արդեն գրավել են կապիտալիստական գիշատիչները։ Չսահմանափակվելով գաղութների գրավմամբ ու շահագործմամբ, իմպերիալիզմը ձգտում է մանավանդ այն տեղերը, թեկուզ սրանք գտնվելիս լինեյին հենց հին Յեվրոպայի մեջ, վորտեղ առատ են յերկաթի, ածուխի ու նավթի հանքատեղեր ու հանքաշերտեր (Ֆրանսիայի յերկաթի հանքերով հարուստ Ելզաս-Լոտարինգիան Գերմանիայից խլելը, նույնպես և գրավումը Հաննոսի ու Ռուրի շրջանների, վորոնք հայտնի յեն ածխային, յերկաթային ու այլ հանքային խոշոր հարստությամբ. Գերմանիայի կռիվը 1914—18 թ. թ. հյուսիսային Ֆրանսիայի յերկաթահանքերն ու ածխահանքերը գրավելու համար. Անգլիայի ու Ամերիկայի պայքարը Միջագետքի ու Բագվի նավթի համար և այլն)։

Այս պատճառով, ծանր արդյունաբերության, ու առաջին հերթին մետաղագործության շահերն են, վոր թելադրում են ժամանակակից իմպերիալիզմի քաղաքականությունը, և մետաղագործությունն ավելի, քան տնտեսության մի այլ ճյուղ, հենց իրեն մետաղ ու ածուխ մատակարարելու, ինչպես նաև յուր ապրանքները վաճառելու տեսակետից, շահագրգռված է ուժեղացնելու իմպերիալիզմը, սրելու միջազգային հարաբերությունները, առաջ բերելու և նախապատրաստելու իմպերիալիստական պատերազմներ, վորոնցից հրեշավոր հարստություններ են հնձում առավելապես ծանր արդյունաբերության, մանավանդ յերկաթի ու պողպատի արքաները։

23. ՅԵՐԿՈՒ Ի՞ՆՉ ԱՍՏԻՃԱՆ Է ԱՆՑՆՈՒՄ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ

Ամեն մի իմպերիալիստական պետության ֆինանսական կապիտալ սկզբում ձգտում է հասնելու յուր նպատակներին առանց ուղղակի զենքի ուժի ու պատերազմների դիմելու և գործելով գլխավորապես մրցման միջոցով։ Բայց հետո, շուտով, ֆինանսական կապիտալը դառնում է մարտնչող իմպերիալիզմ, վորը զենք է բանեցնում, վորը յուր հափշտակությունների համար դիմում է պատերազմների ու հենվում է միլիտարիզմի ու մարինիզմի քաղաքականության վրա։

Շատ բնական է, վոր ֆինանսական կապիտալը զենքով ու պատերազմներով (կամ պատերազմի սպառնալիքներով) մարտնչող իմպերիալիզմի ճամբան է բռնում, յեթե նկատի ունենանք այն կատաղի պայքարը, վոր մղում են իրար դեմ խոշորագույն կապիտալիստական գիշատիչները՝ ուրիշների յերկիրները գրավելու և ժողովուրդներին իրենց հպատակեցնելու համար, մանավանդ, այսպես կոչված գաղութներում՝ այսինքն խոշոր բնական հարստություններ ունեցող այն յերկիրներում, վորոնց դեռ քիչ է դիպել կամ բնավ չի դիպել կապիտալիզմը։

Գաղութների համար մղված պայքարը, նոր յերկիրների նվաճումն ու այլ ժողովուրդների ստրկացումն ավելի ևս սուր կերպարանք են ընդունում նաև այն պատճառով, վոր ֆինանսական կապիտալի ծագումից անմիջապես հետո, XIX դարու 80-ական թվականներին, ամբողջ աշխարհն արդեն գրավված ու բաժանված եր ամենախոշոր ու ամենահին բուրժուական պետությունների միջև, և այս թալանին ուշացած մյուս իմպերիալիստական

գիշատիչներն անհրաժեշտորեն ստիպված պիտի լինեյին պատերազմների ու զենքի ուժի դիմելու՝ մնացորդներն իրենց պոկելու կամ ուրիշի տակից այս ու այն տաքուկ տեղը գրավելու համար:

Ընդհանուր առմամբ՝ կապիտալիստական Յեվրոպայի այսպես կոչված «մեծ պետությունները» 1876 թվից մինչև 1914 թ. հափշտակել են ուրիշների հողերից մոտ 25 միլիոն քառակուսի կիլոմետր (կիլոմետրը — 0,9 վերստ) այսինքն ամբողջ Յեվրոպայից յերկու անգամ ավելի մեծ տարածություն:

Ընդ որին, ամենից ավելի հափշտակել են Անգլիան ու Ֆրանսիան և այն էլ հսկա յերկիրներ ու հարյուրավոր միլիոն բնակչություն՝ աշխարհի բոլոր մասերում: 1914 թ. պատերազմից առաջ յեղած տվյալներով, Անգլիայի գաղութները մոտավորապես 100 անգամ ավելի մեծ եյին, քան ինքն՝ Անգլիան. ֆրանսիական գաղութները 20 անգամ ավելի մեծ եյին, քան ինքը Ֆրանսիան: 1914—18 թ. թ. իմպերիալիստական պատերազմից և Գերմանիայի ու Ավստրիայի կործանումից հետո Անգլիայի ու Ֆրանսիայի գաղութային կողոպուտներն ավելի ևս մեծացան:

Ընդհանուր առմամբ՝ 6 մեծ պետությունները 1914 թ. սկզբին ունեյին 16 միլիոն քառակուսի կիլոմետր բնիկ հողեր (коренная земля) 437 միլիոն բնակչությամբ և 81 միլիոն քառակուսի կիլոմետր, այսինքն 5 անգամ ավելի մեծատարած գաղութային հափշտակած հողեր՝ մոտ 930 միլիոն բնակչությամբ, և հենց աշխարհի վերջնական բաժանման և վերաբաժանման համար է միայն, վոր մաքառում են իրար դեմ այս վիթխարի ավազակային պետությունները[1]:

[1]) 90-ական թվականների կեսից սկսվում է աշխարհի ամենագլխավոր յերկիրների ձեռքով գաղութների տենդագին գրավումը: 1885-ից մինչև 1900 թ. 15-ամյակի ընթացքում Անգլիան «ձեռք է բերել» 4 միլիոն քառակուսի կիլոմետր տարածություն՝ 60 միլիոն ազգաբնակչությամբ, այսինքն՝ մի տարածություն, վոր 20 անգամ գերազանց է ամբողջ Ֆրանսիայից, վորն ուներ (պատերազմից առաջ) 39 միլիոն բնակչություն: 1885 թ. Անգլիան գրավեց Նիգեր գետի շրջանն ու արևելյան Աֆրիկայի մի մասը, 1897 թ. մտավ Աֆրիկայի խորքերը և 1899 թ. միացրեց յուր հողերին Բուրերների հանրապետությունները, վոր կազմել եյին հարավային Աֆրիկայում հոլանդական գաղթականները. 1904 թ. Անգլիան Ֆրանսիայից ստանում է իրավունքներ Յեգիպտոսում ու Նյուֆաունդլենդում (սրա փոխարեն Ֆրանսիան թալանում ու տիրում է Մարոկկոյին). 1913 թ. Անգլիան գրավում է Կովեյտ քաղաքը Պարսից ծոցում, վոր Միջագետքի բանալին եր և գրանով ապահովում է իրեն Գերմանիայի ազդեցությունից, վորը պատրաստվում եր Պարսկաստանի վրայով Բեռլին—Բաղդադ յերկաթուղի անցկացնելու: Ընդհանուր հաշվով՝ Անգլիան գրավել եր իր սեփական յերկրից գրեթե 100 անգամ ավելի ընդարձակ գաղութներ:

Գաղութներ գրավելու գործում յետ չեյին մնում նաև մյուս յերկիրները: Գերմանիան 1885 թ. գրավեց արևելյան-Աֆրիկական կալվածները, 1897 թ.— հարավային-Աֆրիկական հողերը, Նոր-Գվինեյան, Կամերունը և Սամոան. 1899 թ. Չինաստանի միատեղ թալանից Գերմանիան ստացավ Կյաո-Չաոն: Գերմանիայի գաղութները 5 անգամ գերազանցում եյին մայրենիքից (метрополия): Ֆրանսիան 1885 թ. գրավեց Տոնգոն, 1895 թ. յուրացրեց Մադագասկարը, 1904 թ.— Մարոկկոն, 1913 թ. ընդարձակում է յուր ազդեցությունը Սիրիայում և այլն: Ֆրանսիայի գաղութային տերիտորիան 25 անգամ մեծ է մայրենիքից: Փոքրիկ Բելգիան ուներ գաղութներ, վորոնք 80 անգամ ավելի ընդարձակ եյին, քան բուն պետությունը:

Համաշխարհային բաժանքից յետ չեյին մնում նաև Ամերիկան ու Ճապոնիան: Ամերիկան 1894 թ. Չինաստանին «հաղթելուց» հետո, գրավում է Հավայան կղզիները, իսկ Ճապոնիան՝ Ֆորմոզա կղզին: 1895 թ. Ամերիկան շարունակում է թալանը և միացնում յուր հողերին Ֆիլիպպյան կղզիները, Կուբան, Պորտորիկոն, իսկ 1900 թ. նաև ուրիշ կղզիներ: Իսկ Ճապոնիան 1905 թվին, Ռուսաստանի հետ պատերազմելուց հետո գրավեց Կորեյան, Լյաոթունգ թերակղզին և Մանջուրիան:

Այսպես՝ XX դարի շեմքին մի քանի խոշոր իմպերիալիստական յերկիրներ բաժանեցին աշխարհն իրենց միջև, ժողովուրդներին կողոպտելու, հարստահարելու և շահագործելու համար:

Այդ թալանը ծանրանում եր, իհարկե, նախ և առաջ փոքր ու թույլ յերկիրների ու ազգերի ուսերին: Իսկ յերբ գրավվեցին բոլոր գաղութները և յերևաց, վոր ամբողջ աշխարհը բաժանված է իմպերիալիստական գիշատիչների միջև, սրանց մեջ սկսեց պատրաստվել մի մեծ տուր ու դմբոց՝ աշխարհը վերաբաժանելու և իրար ձեռքից ամենահարուստ բնիկ հողերը խլելու համար,— կյանքի ու մահու մի կռիվ, վոր տեղի ունեցավ կապիտալիստական վիթխարի պետությունների միջև:

1914—1918 թ. թ. այն մեծ իմպերիալիստական սպանդանոցին նախորդում եր միլիտարիզմի ու մարինիզմի հսկայական զարգացումը բոլոր կապիտալիստական յերկիրներում:

24. ԻՆՉ Է ՄԻԼԻՏԱՐԻԶՄԸ ՅԵՎ ՄԱՐԻՆԻԶՄԸ

Այս՝ սաստկացրած ու հարաճուն զինումների քաղաքականությունն է արդի կապիտալիստական պետությունների, վորոնք ստեղծում ու պահպանում են միլիոնանոց վիթխարի բանակներ, հրեշավոր ռազմական նավատորմիղներ և հսկա ծախսեր են անում սրանց վրա, վոր սրանք լավ ծառայեն մարտընչող միլիտարիզմի հափշտակիչ քաղաքականությանը:

Միլիտարիզմ ասելով հասկանում ենք բանակի վրա արած իմպերիալիստական պետությունների խելագար ծախսերը. մարինիզմ ասելով հասկանում ենք այն հրեշավոր ծախսերը, վոր անում են ռազմական նավատորմի վրա (մանավանդ Անգլիայում): Վերջին ժամանակներս սրան ավելանում են նաև ռազմական ոդատորմի (воздушный флот) հսկա ծախսերը:

Զինումների այս արշավի մեջ մի պետություն հետապնդում է մյուսին և ձգնում է գերազանցել նրան: Սրա շնորհիվ աճում են թնդանոթային արքաների (Պուտիլովների, Կրուպպների, Արմստրոնգների, Վիկերսների, Շնայդերների և այլոց) ռազմական վիթխարի ձեռնարկություններն ու տրեստները, վորոնք հսկա վաստակներ ու հարստություններ են դիզում զինումների այդ արշավից և շահագրգռված են, վոր պատերազմներ հրահրվեն ու պատերազմներ մղվեն:

Պատերազմական ծախսերն ավելի ու ավելի յեն սկսում կլանել կապիտալիստական պետությունների բյուջեները, սակայն վերջիններս միջոց չունենալով ու հարկերն անբավարար մուծելու պատճառով, վիթխարի պարտքեր են անում և հսկա տոկոսներ վճարում բանկերին փոխառությունների համար: Պատերազմական պատրաստությունների ծախքերը խլում են կապիտալիստական պետությունների մեջ ժողովրդական միջոցների հսկա ու հարաճուն մասը: Անգլիայում, որինակ, 1904 թ. պետական բյուջեյի ամեն մի 100 ռուբլուց 53 ռ. 80 կ. գնում եր բանակի ու նավատորմի վրա, 22 ռ. 50 կ. պետական պարտքերի ու փոխառությունների տոկոսները հատուցելու և միայն 23 ռ. 70 կ. մնում եր բոլոր քաղաքացիական հիմնարկություններին: Ցարական Ռուսաստանը նույնպես հսկա գումարներ եր ծախսում ռազմական պետքերի վրա: 1914 թ. միայն ռազմա-ծովային մինիստրության նախահաշիվը հասնում եր 975 միլիոն ոսկի ռուբլու, այսինքն ամբողջ պետական բյուջեյի մի յերրորդից բավական ավելի յեր:

1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի նախորյակին, նախապատրաստելով մոտալուտ արյունահեղ սպանդանոցը, խոշոր իմպերիալիստա-

կան պետությունների սպառազինման արշավը առանձնապես տենդային դարձավ։

1912 թվից սկսած Անգլիան, որինակ, Գերմանիայի շինած ամեն մի զույգ զրահակիրների դիմաց շինում եր յերեք հատ։

Զինումների այս արշավը, վոր կատարվում եր աշկարա, բոլորի աչքի առաջ, պարզ ասում եր, վոր իմպերիալիստական վիթխարի սպանդանոցը վրա յե հասնում, մոտենում և արագորեն։

25. Ի՞ՆՉ ԵՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Սրանք այն պատերազմներն են, վոր մղում և բուրժուական պետությունների ֆինանսական կապիտալն ուրիշների յերկիրները գրավելու և ուրիշ ազգերին իրեն հպատակեցնելու նպատակով, վորպեսզի նրանց մեջ գտնի և իրեն համար ապահով պահի վաճառքի ու հում նյութերի շուկաներ, եժանագին բանվորական ուժի աղբյուրներ, այլ և այնպիսի տեղեր, ուր կարողանա յուր ավելորդ կապիտալները զետեղել։ Սովորաբար նըվաճման յենթարկվում են սկզբում փոքր ու գաղութային ազգերն ու յերկիրները, իսկ հետո ուժեղագույն գիշատիչների թալանն ու հափշտակությունը տարածվում և խոշոր պետությունների վրա ել։

Հրեշավոր պատերազմները մղելու համար կազմվում են իմպերիալիստական պետությունների կոալիցիաներ (միություններ)։ Սրանցից գլխավորների որինակներն են—այժմ կործանված ու քայքայված միջին-յեվրոպական կոալիցիան (Գերմանիայի, Ավստրիայի և այլոց նախկին միությունը) և հետո նըրան կողոպտող Անտանտան (Անգլիան, Ֆրանսիան և այլն)։ Կոալիցիաներից ամեն մեկի կենտրոնում կանգնած են վորևե մեկ կամ յերկու խոշորագույն իմպերիալիստական պետություններ, վորոնք պատերազմով՝ զենքի ուժով վճռում են իրենց շահերի ընդհարումներն ու հակասությունները համաշխարհային տիրապետության համար մղվող պայքարի ասպարեզում։ Այսպես՝ 1914—1918 թ. թ. պատերազմի մեջ կոալիցիաներից մեկի—Անտանտայի—գլուխ եր կանգնած և գլխավոր դերն եր կատարում Անգլիան՝ դաշնակցած Ֆրանսիայի ու ցարական Ռուսաստանի հետ, իսկ հակառակորդ կոալիցիայի կենտրոնն եր Գերմանիան, վորի ֆինանսական կապիտալը ձգտում եր համաշխարհային տիրապետության և ընդ սմին հանդիպում եր յուր մրցակցին—անգլիական կապիտալիզմին, վոր ուներ ամենախոշոր ու բազմաթիվ գաղութներ։ Իմպերիալիստական պատերազմը յուր հիմքում յերկու գլխավոր կապիտալիզմների—գերմանականի ու անգլիականի—կռիվ եր, վորի մեջ, ինչպես հայտնի յե, վերջինս հաղթող հանդիսացավ։

1914—1918 թ. թ. ամենախոշոր իմպերիալիստական պատերազմն ուներ իր նախորդները. սրանք գաղութների համար մղված պատերազմներն եյին։ Այսպես եր 1898 թ. իսպան — ամերիկյան պատերազմը, վոր մղըվում եր Կուբայի ու Ֆիլիպպյան կղզիների համար, ինչպես նաև անգլո-բոյերական պատերազմը XX դարու սկզբին, յերբ «դեմոկրատիկ Անգլիան» գազանաբար խեղդեց յերկու փոքրիկ բոյերական հանրապետություններ հարավային Աֆրիկայում։ Այսպես եյին՝ քաղաքակիրթ պետությունների արշավանքը Չինաստանի վրա, 1904 թ. ռուս-յապոնական պատերազմը Մանջուրիայի, Պորտ-Արտուրի ու Կորեյայի համար, 1912 թ. թուրք-իտալական պատերազմը (Աֆրիկայում Տրիպոլի գաղութը գրավելու համար) և այլն։

26. Վ՞ՈՐՆ Է ԽՈՇՈՐ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Սրանց առանձնահատկությունը պատերազմող պետությունների հըսկայական ավերումներն են, քանդումները և ուժասպառումը, վորոնք բացատրվում են կապիտալիստական պետությունների չափազանց բարձր տեխնիկայով ու հարստությամբ ֆինանսական կապիտալի դարում։ Խոշոր իմպերիալիստական պատերազմները ցնցում են ամբողջ աշխարհը, խլում են տասնյակ միլիոնավոր զոհեր և ձգում են մարդկությունը տանջանքների ու զրկանքների անդունդը։

27. Ի՞ՆՉ ԿԵՐՊ ՅԵՎ Ո՞ՒՄ ՎՐԱ Է ԱՄԵՆԻՑ ԱՎԵԼԻ ԱՆԴՐԱԴԱՌՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՈՒ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատավորական լայն մասսաների ու նախ և առաջ՝ բանվոր դասակարգի դրության ու բախտի վրա։ Տնտեսական հողի վրա վերջինս անզոր և դառնում յերկրի խոշորագույն կապիտալիստների կառավարող ավազակախմբերի հանդեպ, վորոնք միանալով սերտ միություններ են կազմում և հենվում զինվորական ուժի վրա։

Միլիտարիզմի քաղաքականությունը չափազանց շատացնում և պետությունների անարտադրողական ծախսերը և հարաճուն հարկերի ձևով իբրև ծանր բեռ, ընկնում և ժողովրդի լայն խավերի ուսերին։

Վերջապես՝ վիթխարի (պատերազմները ջնջում կամ հաշմանդամ են դարձնում բանվոր դասակարգի ու գյուղացիության շարքերից տասնյակ միլիոններ, և արտադրող ուժերի հսկա քայքայում են առաջ բերում մի շարք խոշոր պետությունների մեջ։

28. ԱՐԴՅՈՔ 1914—1918 Թ. Թ. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՅԵՂԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԵ՞Ց

1914—1918 թ. թ. պատերազմի հետևանքն այն չեղավ միայն, վոր խոշորագույն իմպերիալիստական գիշատիչները վերախմբվեցին, բայց ֆինանսական կապիտալի ու իմպերիալիզմի աշխարհի հիմնական հակասությունններն ու կատաղի կռիվը չվերացավ ամենևին։

Իմպերիալիստական Գերմանիան ու Ավստրիան դուրս են շպրտված խոշորագույն կապիտալիստական պետությունների շարքերից և լիակատար տնտեսական ու քաղաքական ստրկացման են յենթարկվել Ֆրանսիայի ու Անգլիայի կողմից։ Գերմանիայի ու Ավստրիայի ջախջախմամբ և ցարական ու բուրժուական Ռուսաստանի վոչնչացմամբ նոր իմպերիալիստական հակասություններ ու քաղաքական խմբավորումներ են հասունանում ու զարգանում կապիտալիստական հաղթող պետությունների մեջ։

Յեվրոպայում զարգանում են շահերի հակասությունները, և սրվում են հարաբերությունները Անգլիայի և Ֆրանսիայի միջև, չնայած, վոր նրանց

մրցությունը շարունակվում է։ Հեռավոր Արևելքում ավելի ևս ակնհայտնի ու սաստիկ թշնամություն կա Ամերիկայի ու Ճապոնիայի միջև, վորոնք ի վիճակի յեն ամեն վարկյան իրար վրա հարձակվելու և Չինաստանում գերիշխելու համար իրենց հին վեճը լուծելու մի հրեշավոր պատերազմով, վորին յերկուսն էլ պատրաստվում են անընդհատ ու աշխույժ։ Այս տուրու-դմփոցին անխուսափելիորեն պիտի մասնակցի ամբողջ կապիտալիստական Յեվրոպան և իմպերիալիստական պատերազմի հրդեհը նորից սպառնում է բռնելու ամբողջ կապիտալիստական աշխարհը։

Վերջապես՝ շահերի խոշոր հակասություններ են զարգանում մի կողմից Անտանտայի, մանավանդ Անգլիայի ու մյուս կողմից՝ Ամերիկայի միջև, վոր հարստացել է 1914—1918 թ. թ. պատերազմի շնորհիվ։

Կապիտալիստական աշխարհը 1914—1918 թ. թ. պատերազմի հետևանքով լի յե էլ ավելի սուր հակասություններով, վորոնք անլուծելի յեն բուրժուազիայի համար և վորոնց յելքը կարող է լինել կապիտալիստական ամբողջ կարգի տապալումը միայն։

29. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՈՒ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՀԵՏԱԳԱ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՉ Է ՍՊԱՍՈՒՄ

Նոր, ու էլ ավելի ավերիչ ու քայքայող պատերազմներ, պրոլետարիատի հետագա ու ավելի սաստիկ ստրկացում, ամբողջ մարդկության բոլոր արտադրող ուժերի էլ ավելի հսկայական վոչնչացում ու քայքայում, մինչև վոր կապիտալի տիրապետությունն անխուսափելիորեն տապալվի։

30. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ԽՈՐՏԱԿԵԼՈՒ ՅԵՎ ՍՐԱ ԳԵՐԵԶՄԱՆԱՓՈՐԸ ԼԻՆԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ Ո՞ՒՄ ՎՐԱ ՅԵ ԴՆՈՒՄ

Բանվոր դասակարգի, պրոլետարիատի վրա, վորովհետև անմիջապես ու ամենից ավելի սա յե տանջվում կապիտալի ու իմպերիալիզմի լծի տակ և հասարակական զարգացման ամբողջ ընթացքը սրան է կանխապատրաստում բուրժուազիայի գերեզմանափորը լինելու։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ III ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. Богданов. „Начальный ку   политической экономии в вопросах и ответах“.
2. А. Богданов. „Краткий курс экономической науки“ под ред. Двола́йцкого
3. К. Маркс и Ф. Энгельс. „Коммунистический манифест“ с введением и примечаниями Д.. Рязанова.
4. П. Лафарг. „Американские тресты“
5. Цыперович. „Тресты и синдикаты в России“
6. И. Ленин. „Империализм, как новейший этап капитализма“
7. Л. Каменев. „Экономическая система империализма“
8. Павлович. „Что такое империализм“ и „Сущность империализма“
9. Н. Бухарин. „Мировое хозяйство и империализм“
10. Павлович. „Милитаризм“ маринизм и война 1914—1918 г. г.“
11. Н. Лукин. „Милитаризм“
12. Зиновьев. „Война и кризис социализма“
13. Зиновьев. Тройственный союз и тройственное согласие“
14. „Против течения“ (сборник)
15. Варга. „Кризис мирового хозяйства
16. Султан-Заде. “кризис мирового хозяйства и мировеы войны“
17. Р. Гильфердинг. „Финансовый капитал“

Յերրորդ գլխի խնդիրների համար այս գիրքը հիմնական աշխատություն է, բայց բոլորովին անմատչելի յե հեղինակած։ Սրա ժողովրդականացրած շարադրանքը տես Л. Каменев. „Экономическая система империализма“։

ԳԼՈՒԽ IV

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

1. Ի՞ՆՉԻ ՀԵՏԵՎԱՆՔ ԵՐ 1914-1918Թ.Թ. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

1914-1918թ.թ. իմպերիալիստական պատերազմը հետևանք եր այն տնտեսական ընդհարման (շահերի ընդհարման), վոր տեղի ունեցավ Յեվրոպայի խոշորագույն կապիտալիստական յերկրների միջև (գլխավորապես՝ մի կողմից Անգլիայի ու Ֆրանսիայի, իսկ մյուս կողմից՝ Գերմանիայի միջև)։ Այս յերկրներն ի վիճակի չեյին «խաղաղ» ճանապարհով լուծելու իրենց այն վեճը, վոր վերաբերում եր գաղութային ու կիսագաղութային յերկրների շահագործման ասպարեզներն իրենց մեջ բաժանելուն, ինչպես և կենտրոնական Յեվրոպայի ածխային ու յերկաթային հարստությունները բաժանելուն, ուստի և դիմեցին փորձված միջոցին—զենքին։

Իմպերիալիզմի դարաշրջանում առանձին կապիտալիստների միջև տեղի ունեցող ազատ մրցմանը փոխարինում ե արդյունաբերության հիմնական ճյուղերի, բանկային գործի ու խոշոր առևտրի կապիտալիստական մոնոպոլիան։ Առանձին կապիտալիստը զիջում ե յուր տեղը կապիտալիստական միավորություններին (սինդիկատներին ու տրեստներին)։ Արդյունաբերության ամբողջ ճյուղեր միանալով, կենտրոնանում են սակավաթիվ ֆիրմաների կամ նույնիսկ մի ֆիրմայի ձեռքում։ Առանձին կապիտալիստների իրար դեմ մղած մաքառումին փոխարինում ե այն պայքարը, վոր գլխավոր կապիտալիստական յերկրներում կապիտալիստական միավորությունները վարում են իրար դեմ։

Մոնոպոլիստական միավորությունները (այսինքն՝ այն միավորությունները, վորոնք արդյունաբերության մի վորևե ճյուղում իշխանությունը պահում են իրենց միակ ձեռքերում) իրենց մրցման միջոցին չեն սահմանափակվում պետությունների սահմաններով։ Նրանք մի կողմից՝ մեծանում և դառնում են միջազգային միավորություններ, իսկ մյուս կողմից՝ մրցումը փոխադրում են ազգային պետական շրջանակներից դուրս, միջազգային պայքարի ընդարձակ ասպարեզը։ Բանկային կապիտալը, յուր հերթին կուտակվում ե ամենախոշոր բանկերում, վորոնք կենտրոնանում են ավելի ու ավելի փոքրաթիվ ձեռքերում։ Այս կապիտալը թափանցում ե մոնոպոլիստացած արդյունաբերության մեջ, մասնակցում ե սրա վարչական ու վերահսկողության գործերին։ Ընդհակառակն, արդյունաբերական կապիտալը մուտք ե գործում բանկերի գործունեության շրջանը։ Այսպիսով ստացվում ե արդյունաբերական ու բանկային կապիտալների ավելի ու ավելի սերտ հյուսում, ձուլում, ֆինանսական կապիտալի կերպարանքով։

վրա յե հասնում այն դարաշրջանը, յերբ խոշոր արդյունաբերության ու բանկերի փոքրաթիվ ու սերտ միացած մոնոպոլիստական իշխանները տիրապետում են այս կամ այն յերկրի տնտեսության։ Մի քանի հարյուր բանկային ու տրեստային արքաներ, ֆինանսական ու արդյունաբերական օլիգարխիան, տիրում են համաշխարհային տնտեսությանը։ Պաշտպանողական բարձր մաքսերը մոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանում հատուկ միջոց են կապիտալիստական պետությունների ձեռքում՝ այն բանի համար, վոր ներքին շուկայում գերշահույթ (сверхприбыль) *ապահովեն, իսկ գաղութային յերկրներում՝ դժվարացնեն կամ բոլորովին անկարելի դարձնեն իմպերիալիստական ախոյանների մրցությունը։*

Յեվ ահա կապիտալիզմի ընդլայնման այս բարձրագույն աստիճանը հանդիսանում ե միաժամանակ նաև կապիտալիստական կարգի բոլոր հակասությունների սրվելու բարձրագույն աստիճան։ Այս աստիճանն առաջ ե բերում ավելի ու ավելի խոշոր ու սուր սոցիալական, քաղաքական և տնտեսական կրիզիսներ ու աղետներ շնորհիվ այն հանգամանքի, վոր իմպերիալիզմի շրջանում սրվում ե հանքային հարստությունների—ածխի, յերկաթի, նավթի—համար մղված պայքարը, ինչպես գաղութներում, այնպես ել Յեվրոպայում, այլ և համաշխարհային շուկան դառնում ե առանձին պետությունների կապիտալիստական խմբակների անընդհատ մրցման ասպարեզ։

Այս ընդհարումների հետևանք եր, ի միջի այլ փոքր պատերազմների, 1914-1918 թ.թ. պատերազմն ել։

Վոր արդյունաբերական և ֆինանսական միավորություններն են համաշխարհային ընդհարումների սկզբնապատճառները, այս բանը ներկայումս այնքան պարզ ե, վոր չի ժխտում նույնիսկ բուրժուազիայի այնպիսի ցայտուն ներկայացուցիչը, ինչպիսին ե Ֆրանսիայի մինիստրների խորհրդի նախկին նախագահ ու ֆինանսների մինիստր Կայոն, վորը յուր «Ո՞ւր ե գնում Յեվրոպան» գրքի մեջ ապացուցում ե, թե համաշխարհային պատերազմի գլխավոր հանցավորներն ազգային ու միջազգային տրեստները, սինդիկատներն ու կարտելներն եյին, վորոնք առանձին կապիտալիստների պայքարը փոխարինեցին ազգային, պետական ընդհարումներով և միջազգային պատերազմն անխուսափելի դարձրին։

2. Ի՞ՆՉ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՍՑՐԵՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Պատերազմը տևեց 4 տարուց ավելի։ Զորքի շարքերից դուրս ընկան 11 միլիոն մարդ, վորոնք ամենից աշխատունակ տարիքին եյին պատկանում։ Հարստությունների կուտակումը Յեվրոպայում գրեթե դադարեց։

Պատերազմից առաջ, պատերազմին մասնակցողների ազգային սեփականությունը, այսինքն՝ բոլոր քաղաքացիների ու պետությունների գույքը միասին հաշվում եյին մոտավորապես 1,440 միլիարդ ռուբլի վոսկով։ Այս յերկրների տարեկան հասույթն, այսինքն՝ տարվա ընթացքում նրանց արտադրած արդյունքների քանակը հաշվում եյին 200 միլիարդ ռուբլի։ Յեվ ահա պատերազմը վոչնչացրեց ազգային սեփականության կեսը, այսինքն 720 միլիարդ ռուբլի։ Պատերազմի ծախսերն ինարկե, ծածկվում եյին նախ և առաջ պատերազմի ժամանակվա ընթացիկ հասույթներով։ Բայց յեթե ի-

նկատի առնենք, վոր ամեն մի յերկրի ազգային հասույթը կրճատվել եր առնվազն 1/3-ով, շնորհիվ այն հանգամանքի, վոր աշխատող ձեռքերի թիվը կրճատվել եր, և հետևաբար բոլոր յերկրների տարեկան հասույթը հավասարվել եր 140 միլլիարդ ռուբլու, յեթե, բացի սրանից, հաշվի առնենք, վոր պատերազմի ժամանակ բոլոր վոչ-պատերազմական ծախսերը կլանում եյին այս հասույթի կեսը, այն ժամանակ կպարզվի, վոր ընթացիկ հասույթներից կարելի յեր պատերազմական ծախսերին հատկացնել միայն 70 միլլիարդ ռուբլի: Պատերազմի 4 տարվա ընթացքում այս կը կազմի 280 միլլիարդ ռուբլի: Յեթե պատերազմը վոչնչացրել եր 720 միլլիարդ ռուբլու ազգային սեփականություն, իսկ այս կորուստի դիմաց ընթացիկ հասույթները կարող եյին կազմել միայն 280 միլլիարդ ռուբլի, ուրեմն պակասորդ 440 միլլիարդ ռուբլին պիտի առնվեր պատերազմող յերկրների հիմնական կապիտալից:

Այսպիսով՝ յերբ պատերազմը վերջացավ կռվող յերկրների (իհարկե յեվրոպական) ընդհանուր գույքը արդեն վոչ թե 1,440 միլլիարդ եր, այլ միայն 1,000 միլլիարդ: Պատերազմող յերկրների տնտեսական հիմնական ապարատից այդպիսի մեծ գումարի պակասելն այն հետևանքն ունեցավ, վոր հենց ինքը տնտեսությունը թուլացավ, դարձավ պակաս վստահելի ու կրիզիսների նկատմամբ ավելի զգայուն[1]):

3. ՎՈ՞ՐՈՆՔ ԵՆ ՆԱԽԱՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

Պատերազմից առաջ յեղած կապիտալիստական տնտեսությունը բնորոշող հիմնական գծերը հետևյալներն եյին. 1) միջազգային տնտեսական կենդանի հարաբերությունները, վորոնք կանոնավորվում եյին առևտրական պայմանագրերով, 2) համաշխարհային առևտրի հսկայական զարգացում, վոր ամենակարևոր ցուցիչն ե կապիտալիստական տնտեսության արտադրական ուժի (պատերազմին անմիջապես նախորդող 12 տարվա ընթացքում համաշխարհային ապրանքապտույտի (товарооборот) ընդհանուր գումարը 92 միլլիարդ գերմանական վոսկի մարկից բարձրացել, դարձել ե 178 միլլիարդ մարկ, այսինքն աճել ե 94%-ով), 3) յեվրոպական խոշորագույն յերկրների՝ Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի հասույթների հսկայական աճումը, վոր ստանում եյին իրենց կապիտալները դեպի մյուս յերկրներն արտահանելուց (1913 թվին այս յերկրներն ստացել են մոտ 160 միլլիարդ մարկ հասույթ, չհաշված առևտրական նավատորմից և գաղութների շահագործումից ստացած վաստակները), 4) արդյունաբերական արտադրության ուժի ու լարվածության վիթխարի աճումը, վորը հատկապես համոզիչ չափով նկատելի յե ածխի, յերկաթի, չուգունի ու պողպատի արտադրության մեջ:

[1]) Կայոյի հաշիվների համաձայն, վորն այս հարցին այնպես հմուտ մի անձ ե, համաշխարհային պատերազմի շնորհիվ բոլոր կապիտալիստական յերկրների պարտքերը, վորոնք պատերազմի նախօրյակին հավասար եյին 220 միլլիարդ ֆրանկի, կռվից հետո հասան 1,500 միլլիարդ ֆրանկի, այսինքն՝ ավելացան 1,300 միլլիարդ ֆրանկով, վոր ծախսված ե բացառապես ավերիչ նպատակների համար: Կայոն նկատում ե, թե այս ումա՛ [illegible] ածության մասին կարելի յե դատել նրանով, վոր յերկրագնդի բոլոր ձեռնարկությունների ըն[illegible]ռնուր գումարը նկատելի չափով պակաս ե այդ վիթխարի թվից, այն ե 1,300 միլլիարդ ֆրանկից: Տոկոսների միջին քանակը, վոր վճարում եյին պետական փոխառությունների համար, բարձրացավ 3-ից մինչև 6 տոկոս: Սրա հետևանքով տոկոսների վճարման համար այժմ պահանջվում ե տարեկան 80 միլլիարդ ֆրանկ ավելի, քան 1914 թ.:

20 տարվա ընթացքում Գերմանիան ավելացրել ե իր ածխի արդյունահանությունը (добыча) 300%-ով, Անգլիան 58%-ով Ամերիկան 300%-ով. յերկաթի արդյունահանությունն ավելացել ե Գերմանիայում 380%-ով, Անգլիայում՝ 50%-ով, Ֆրանսիայում՝ 500%-ով. Ամերիկայում՝ 400%-ով. չուգունի արտադրությունն ավելացել ե Գերմանիայում 400%-ով, Անգլիայում՝ 54%-ով, Ֆրանսիայում՝ 250%-ով, Ամերիկայում՝ 350%-ով. 5) գաղութային վիթխարի հափշտակությունները[1]), վորոնք կապիտալիստական յերկրներին ապահովում են թե՛ վաճառքի շուկա, թե՛ հում նյութ են մատակարարում, և թե՛ հնարավորություն են տալիս գործադրելու իրենց կապիտալները վաստակի ավելի բարձր նորմա ստանալու համար. 6) հոյակապորեն կազմակերպված միջազգային վարկային ապարատ, վոր ծառայում եր թե՛ ներքին և թե՛ միջազգային վարկի կարիքներին և նպաստում եր արդյունաբերության և առևտրի զարգացման. 7) հարստության հսկայական կուտակում, վոր կենտրոնանում եր կապիտալիստների ձեռքում և այս հարստության մի մասի՝ արդյունաբերական վորակյալ բանվորներին բաժին ընկնելը, վորը թեև շատ դանդաղ, այնուամենայնիվ բարձրացնում եր բանվորների կենսական մակարդակը և կապիտալիստական հասարակության հարաբերական կայունության հիմնական պատճառ եր հանդիսանում:

4. ՎՈ՞ՐՈՆՔ ԵՆ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐԸ

Յեվրոպական իմպերիալիստական պատերազմը զանազան յերկրների վրա տարբեր ազդեցություն ունեցավ: Ներքևում մենք կը լուսաբանենք, թե ինչպիսի ազդեցություն ունեցավ պատերազմը յերկրների առանձին խմբակների վրա, իսկ այս հատվածում տեսնենք այն ընդհանուր գծերը, վորոնք փոխեցին կապիտալիզմի դիմանկարը պատերազմից հետո:

Այս գծերը հետևյալներն են. 1) միջազգային ապրանքապտույտի նկատելի նվազում բոլոր յեվրոպական յերկրներում. 2) սուր տնտեսական պատերազմ, ծայրահեղ պրոտեկցիոնիզմ (հովանավորչություն), հրաժարում հին պայմանագրերի վերանորոգումից, մեծագույն նպաստավորության սիստեմից (систем[illegible] наибольшего благоприятствования), համաշխարհային մաքսային պատերազմ բոլորի, ընդդեմ բոլորի[2]). 3) արտադրության անկումը Յեվրոպայում թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության[3]) ասպարեզում. 4) իրական հարստությունների կուտակման դադարում և, ընդհակառակը, արտադրության անբավարարություն՝ պահանջի համեմատությամբ, ընդ վորում անկման վիճակի ե հասնում հենց ինքը՝ ար- [illegible] -ական ապպարատն

[1]) Տես «կապիտալիզմի զարգացումը մինչև ֆինանսական կապիտալի դ[illegible]ուխը» 23-րդ հարցում:

[2]) Տես 16-րդ գլուխ- «Առևտուր և կոոպերացիա», «Արտաքին առևտուր» հատվածը:

[3]) Նկատվում ե, վոր կրճատվում են, այն ել շատ զգալի չափերով, արտադրական սպառման հիմնական նյութերը՝ ածխի, չուգունի, յերկաթի, պողպատի, բամբակի, կտավատի, թղթի ու սննդառության կարևորագույն մթերքների՝ հացի, շաքարի, մսի, յուղի, կաթի ու թաշնարու[illegible] արտադրությունը: Քարածխի արդյունահանության արդյունքների արտահանությունն (добыча) [illegible] ... հանությունը կրճատվել ե 25%-ով, չուգունինը՝ 50%-ով, պողպատինը՝ 45%-ով, պղնձինը՝ 50%-ով. Գյուղատնտեսական մթերքների համար ունենք հետևյալ ցենկերը՝ 55%-ով, կարտոֆիլը՝ 25%-ով: Գյուղատնտեսական մթերքների (առանց Ռուսաստանի) 1909-13 թ.թ. կազմվածները. ցորենի արտադրությունը Յեվրոպայում կազմում եր համաշխարհային արտադրության 25,2%, իսկ 1919-21 թ.թ. միայն 28,8%:

նել։ Այս ապպարատը, որ կապված է կենդանի բանվորական ուժի հետ, տուժում է աշխատանքի արտադրողականության նվազումից և բանվորների ֆիզիքական ուժի պակասելուց, որ հետևանք է անբավարար սննդառության. իսկ նյութական արտադրական ապպարատը մաշվում է՝ բավարար չափով չվերաշինվելով. 5) քայքայում ներքին վարկային ապպարատի, որ ինարկե, գլխավորապես վերաբերում է այն յերկիրներին, որոնց մեջ կատարվում է վալյուտայի(արժույթի)արժեքազրկման պրոցես. տուժեց և խանգարվեց նաև միջազգային վարկը, սրանցից պետական վարկն՝ այն պատճառով, որ այն պետությունները, որտեղ կա կրիզիս, չեն կարողանում վարկ ձեռք բերել, իսկ մասնավոր վարկն՝ այն պատճառով, որ հսկայական տարբերություն կա հաստատուն ու արժեքազուրկ վալյուտա ունեցող յերկիրների միջև. 6) համաշխարհային փոխանակության ու Յեվրոպայի պարենավորման ծանրության կենտրոնի փոխադրումն Ամերիկա, այլև թուլացում գաղութային հողագործական յերկիրների տնտեսական այն կախման, որ ունեյին սրանք յեվրոպական արդյունաբերական յերկիրներից, իսկ այս առաջ է բերում միջազգային աշխատանքի բաժանման թուլացում և միջազգային ապրանքափոխանակության նվազում. 7) պետական ու նրա հետ նաև տնտեսական վերաձևում (перекроика) միջին ու արևելյան Յեվրոպայի, որի շնորհիվ նախկին մի քանի տնտեսապես ուժեղ պետական միավորների փոխարեն ստեղծվեցին տասնյակից ավելի մանր միավորներ, հակասական շահերով, նոր մաքսային պատնեշներով և բազմազան արժեքազուրկ վալյուտաներով. 8) ամենասաստիկ ավելացում կեղծ (фиктивный) կապիտալի թղթե, ֆոնդային և պետական փոխառությունների ձևով, որոնց զուգընթաց եր իրական արտադրական կապիտալի նվազումը։

Ահա այս է հետպատերազմյան կապիտալիզմի բնույթագիրն ընդհանուր գծերով։

5. ՆԱԽԱ- ՈՒ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆ Ի՞ՆՉ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ Է ԲԵՐՈՒՄ ՄԵԶ

Յեվրոպական կապիտալիզմի նախա-ու հետպատերազմյան դրության համեմատությունից յերևում է, որ համաշխարհային պատերազմը կապիտալիզմն ամեն կողմից դեպի անկում է տարել։

6. Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՆԱՅԵԼ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԿՐԻԶԻՍԻՆ

Համաշխարհային պատերազմը տարբեր ազդեցություն ունեցավ պատերազմին մասնակցող յերկիրների վրա մի կողմից և չեզոք կապիտալիստական յերկիրների վրա, ինչպես նաև Ամերիկայի ու Յապոնիայի վրա՝ մյուս կողմից։ Բացի սրանից, պատերազմն առանձնահատուկ ազդեցություն ունեցավ գաղութային յերկիրների վրա։ Ահա թե ինչու, կապիտալիզմի կրիզիսի մասին խոսելիս, պետք է նկատի ունենալ յերկու հիմնական դրություն. 1) կրիզիսը դիպավ գլխավորապես Յեվրոպայի պատերազմող յերկիրներին և սրանց մեջ էլ միակերպ չշոշափեց միջին ու արևելյան յեվրոպական յերկիրներն և այնպիսի յերկիրներ, ինչպիսիք եյին Անգլիան ու

Ֆրանսիան. 2) կրիզիսի, կամ ընդհակառակը՝ վերելքի ինչպիսի շրջանում էլ գտնվի մի կապիտալիստական յերկիր, կրիզիսի ու վերելքի այս յերևույթները տեղի յեն ունենում կապիտալիզմի շրջանակներում, կապիտալիզմի, որ քայքայվում է իբրև մի ամբողջություն, չնայած որ կոնյունկտուրայի մասնակի բարձրացում հնարավոր է։

7. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԿՐԻԶԻՍԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՅԵՐԿԻՐՆԵՐՆ Ի՞ՆՉՊԻՍԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՅԵՆ ԲԱԺԱՆՎԵԼ

Համաշխարհային պատերազմն՝ արտադրող ուժերը հավասար չափով չվոչնչացրեց։ Ամենից ավելի տուժեց արևելյան ու միջին Յեվրոպան, որի նյութական ու արտադրական ապպարատը չափազանց սեղմվեց։ Անգլիան ու վոչ յեվրոպական յերկիրներն, ընդհակառակն, ընդլայնեցին իրենց արտադրությունն ու ավելացրին նյութական հարստությունը։

Կապիտալիզմը, որ մինչև պատերազմը զարգանում եր հավասարաչափ և իր ուժերը համախմբել եր արևմտյան Յեվրոպայի ամենազարգացած կենտրոնի շուրջը, պատերազմից հետո բաժանվեց յերկու անհավասար շըրջանների։ Կապիտալիզմի ծանրության կենտրոնը փոխադրվեց Ամերիկա ու Յապոնիա։ Մինչդեռ միջին ու արևելյան Յեվրոպայի արտադրությունը բավական չէ ընթացիկ սպառումը ծածկելու համար, կրիզիս ու անկում չտեսած յերկիրների արտադրությունն, ընդհակառակը, չի վաճառվում համաշխարհային շուկայում։ Այս յերևույթը բնորոշում են, ասելով, թե աշխարհը բաժանվել է յերկու շրջանների—Ամերիկան, Յապոնիան, Անգլիան և չեզոք յերկիրները գերարտադրության շրջան են կազմում, իսկ միջին ու արևելյան Յեվրոպան՝ թերարտադրության (недопроизводство)։ Այդ բաժանման ամենից արտահայտիչ ցուցանիշն այն է, որ թերարտադրություն ունեցող պետությունների վալյուտաները շարունակ ավելի ու ավելի արժեքազրկվում են։ Համաշխարհային շուկան, որտեղ ամեն ինչ կառուցված եր ապրանքափոխանակության վրա և որն առաջ շաղկապված մի ամբողջություն եր կազմում շնորհիվ ոսկի վալյուտայի, որպես համաշխարհային դրամական միավորի, բաժանվեց մասերի, որոնք տարբեր տնտեսական հարաբերություններ ունեն։

8. Ո՞ՒՐ Է ՏԱՆՈՒՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՐՈՀՈՒՄԸ

Համաշխարհային միաձույլ շուկայի՝ յերկու հիմնական շրջանների տրոհվելը, որ վերևում մատնանշեցինք, տանում է դեպի տնտեսական կրիզիս, որ ինարկե, միատեսակ չի անդրադառնում այս շրջաններից յուրաքանչյուրի վրա։

Թերարտադրություն ունեցող յերկիրներում մենք նկատում ենք կրիզիս, որ առաջ է գալիս քանակով անբավարար արտադրությունից, իսկ վերջինիս պատճառը նախ և առաջ հենց արտադրության միջոցների պակասն է։ Իսկ ընդհակառակն, այն յերկիրներում, որոնք պահպանել են իրենց արտադրական ապպարատը, մենք տեսնում ենք գերարտադրության ճգնաժամ, որ թերարտադրություն ու արժեքազուրկ արժույթ ունեցող յերկիրների անբավարար գնողունակության (покупательная способностч) հետևանք է։

Սրան հարակից նկատվում է գյուղատնտեսական ու արդյունաբերական տևական կրիզիս նաև գաղութային յերկիրներում, վորոնք համաշխարհային շուկայում չեն կարողանում վաճառել իրենց հում նյութերը և ի վիճակի չեն պաշտպանելու իրենց մատաղ արդյունաբերությունը հին արդյունաբերական յերկիրների մրցումից։

Համաշխարհային շուկայի այդ տարբեր բնույթ կրող կրիզիսներն այն հետևանքին են հասցնում, վոր արտադրության ընդհանուր անկումը դառնում է խրոնիկական (մշտական)։ Թերարտադրություն ունեցող յերկիրներում կապիտալի (արտադրության միջոցների) պակասության պատճառով աշխատավարձը ցած ու անընդհատ ընկնող մակարդակ է ունենում, բանվորական մասսաները վատ են սնվում և իբրև սրա հետևանք, աշխատանքի արտադրողականությունը նվազում է։ Ընդլայնված արտադրական ապարատ ունեցող յերկիրներում արտադրության շատ ճյուղեր դադարեցնում են աշխատանքը, միլիոնավոր բանվորներ պարբերաբար զրկվում են աշխատանքից և այս ամենն առաջանում է նրանից, վոր մեռնող կապիտալիզմը շուկա չի գտնում իր արտադրանքների բավարար վաճառքի համար։

9. Ի՞ՆՉՈՎ Է ԲՆՈՐՈՇՎՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Տնտեսական կողմից՝ հետպատերազմյան կապիտալիզմի եյական գծերը հետևյալներն են.

1) Կապիտալիզմի աշխարհագրական սահմանները նեղանում են, վորովհետև կապիտալիստական յերկիրների շրջանից դուրս է գալիս Ռուսաստանը (յերկրագնդի $^1/_6$ մասը) դաշնակից խորհրդային հանրապետությունների հետ միասին. 2) առանձին կապիտալիստական յերկիրների ներսում յերևան է գալիս վերադարձ դեպի տնտեսության մինչկապիտալիստական ձևերը (գյուղացիական տնտեսության սպառողական դառնալը, արդյունաբերության մեջ չզետեղված կապիտալի անարտադրական-առևտրական ձև ընդունելը). 3) աշխատանքի միջազգային բաժանումը կրճատվում է, բարձր զարգացում ունեցող կապիտալիստական յերկիրները ներքին շուկայի պաշտպանության համար մաքսերի բարձրացման ուղին են բռնել. գաղութային ու հողագործական յերկիրները պաշտպանում են իրենց մատաղահաս արդյունաբերությունը, վոր զարգացել է պատերազմի ընթացքում, նույնպես բարձր մաքսերով ու ներմուծումն արգելելով։ Յեվրոպայում առաջ են յեկել մի շարք գաճաճային պետություններ, վորոնցից ամեն մեկը վարում է յուր ինքնուրույն մաքսային քաղաքականությունը. մյուս կողմից՝ հին կապիտալիստական յերկիրները ձգտում են զարգացնելու իրենց գյուղատնտեսությունը —այս բոլորը հանգում է այն բանին, վոր միջազգային ապրանքափոխանակությունը սաստիկ նվազում է. 4) արդյունաբերության ու գյուղատնտեսության արտադրանքների գները միատեսակ շարժում չունեն գերարտադրության կարևորագույն ռայոնում—Ամերիկայում, մի յերևույթ, վոր խախտում է քաղաքի ու գյուղի հավասարակշռությունը[1])։ Այդ հան-

[1]) Սկսած 1919 թ. Ամերիկայում նկատվում է գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքների գների տարբերություն։ Թեպետ ֆերմերներն արտադրում են գրեթե նույնքան ապրանք, ինչքան և 1913 թ., բայց գտնվում են անբարենպաստ պայմաններում, հետև ար-

գամանքն է պատճառ ամերիկյան արդյունաբերական կրիզիսի, միաժամանակ և ամբողջ համաշխարհային տնտեսության կրիզիսի. 5) արտադրությունը հարմարեցրած չէ հասույթի արդեն փոփոխված բաշխմանը, վոր արտահայտվում է նրանով, վոր մասսայական սպառման (վոչ առաջնակարգ անհրաժեշտություն ունեցող) արդյունքներ արտադրվում են ավելի, քան վոր կարող են գնել բանվորներն ու ծառայողները իրենց պակասած իրական դատուծով (заработок)։ Այս հանգամանքն առանձնապես ուժեղ արտահայտվում է միջին և արևելյան Յեվրոպայում, վորտեղ ամենից ավելի սաստիկ է իջել բանվորների ու ծառայողների լայն մասսաների գնողունակությունը (покупательная способность). 6) գործազրկությունը ծավալվում է, մանավանդ գերարտադրության յերկիրներում—Ամերիկայում, Անգլիայում ու Յեվրոպայի փոքրիկ չեզոք յերկիրներում։ Թերարտադրություն ունեցող յերկիրներում գործազրկությունն առայժմ արվեստական կերպով թուլացնում են զանազան միջոցներով. 7) Յեվրոպական յերկիրների հսկայական պարտաբեռնությունը (задолженность) ու Անտանտայի տնտեսությունը վերականգնելու վերաբերող հանձնառությունների իրացումը Գերմանիայի կողմից, մի իրացում (реализация), վոր համաշխարհային տնտեսության հավասարակշռության վերականգնումը կասեցնող մի գործոն է[1])։

դյունաբերական ապրանքների գներն զգալի չափով բարձրացել են։ Իրենց բերքի փոխարեն ֆերմերներն արդեն կարող են ստանալ վոչ թե ամբողջ 100%-ը, այլ արդյունաբերական արտադրության միայն 70%-ը. (յեթե վերցնենք 1921 և 1922 թ. թ. գների հարաբերությունը)։ Սրա հետևանքն է մի կողմից՝ ֆերմերների ճնշված դրությունը, իսկ մյուս կողմից արդյունաբերության գործունեյության նվազումը։

Գյուղատնտեսության և արդյունաբերության արդյունքների գների ընթացքի այսպիսի տարբերությունը բացատրվում է նրանով, վոր գյուղատնտեսության մեջ չկան մենոպոլ կազմակերպություններ, ուստի և արդյունքների գները գոյանում են վորոշ չափով ազատորեն, լոկ շուկայի ազդեցության տակ, մինչդեռ արդյունաբերության ու փոխադրության մեջ գոյություն ունի մենապոլիա։ Ուժեղ տրեստներն ու սինդիկատները, միացած յերկաթուղիների հետ, արգելք են լինում արդյունաբերական ապրանքների գների անկմանը։ Փոխանակ իջեցնելու գները մինչև գյուղատնտեսական արդյունքների գների անկման մակարդակը, նրանք կրճատում են արդյունաբերական արտադրությունը, վոր սրում է կրիզիսը և ավելի մեծ հակամարտություն է մտցնում ֆերմերների (գյուղացիության) ու կազմակերպված արդյունաբերական ու բանկային կապիտալի միջև։

[1]) Հետպատերազմյան պարտքերի հատուցումը տնտեսական կրիզիսի պայմաններում շատ դժվարանում է, վորովհետև Յեվրոպայի գրեթե բոլոր յերկիրներն (բացի Անգլիայից) անցել են թղթե անընդհատ արժեզրկվող վալյուտայի, ուստի և փոխադարձ պարտքերի հատուցումը հնարավոր է կամ ապրանքների ներմուծման ձևով, կամ ծախված ապրանքից ստացած վոսկով։ Յեթե Անգլիան պարտք է Ամերիկային մոտ 10 միլլիարդ ռուբլի, իսկ յեվրոպական յերկիրների ամբողջ պարտքը Ամերիկային հասնում է 30 միլլիարդ ռուբլու—ապա այս նշանակում է, թե Ամերիկան իրավունք ունի պահանջելու այս պարտքի հատուցումը վոսկով։ Բայց վորտեղից կարող են առնել յեվրոպական յերկիրներն այս վոսկին։ Սրա համար պարտք ունեցող պետությունները պետք է ունենան մի տնտեսություն, վոր հնարավորություն տար ստեղծելու հասույթաբեր (доходный) բյուջե, վորի մի մասն այն ժամանակ կարող է գործադրվել պարտքերի հատուցման համար։

Բայց այսպիսի բան գոյություն չունի։ Գրեթե բոլոր պարտապան յերկիրների բյուջեները պակասորդով են (վնասով)։ Մինչդեռ նույն Ամերիկան, իսկ սրա հետ նաև բավական գնողունակություն ունեցող մյուս յերկիրները, մաքսի օգնությամբ փակում են յերկրի դռները դրսի ապրանքների ներմուծման առաջ և այսպիսով դժվարացնում են պարտապան յերկիրների ապրանքների իրացումը (реализация)—վաճառքը։ Սրանք ստիպված են փոխարենը մի ճար անել գներն էժանացնելով, արտադրության ծախքերի վրա ավելացնել նաև մաքսերը. այսինքն՝ մի կողմից ավելացնել պարտքի հատուցման համար պահանջված ապրանքների քանակն, իսկ մյուս կողմից վնասը հանել բանվորների ջանից՝ իջեցնելով աշխատավարձը և յերկարացնելով բանվորական օրը։ Այսպիսով, ժողովրդական տնտեսության և պրոլետարիատի համար ստեղծվում է շատ ծանր վիճակ՝

10. ԻՆՉՈ՞Վ Է ԲՆՈՐՈՇՎՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Հետպատերազմյան շրջանը վոչ միայն դեպի քաղաքական հավասարակշռություն չտարավ կապիտալիստական յերկրները, այլ և զգալիորեն սրեց համաշխարհային քաղաքական դրությունը։ Իմպերիալիստական «հաշտության» դաշնագրությունները—Վերսալյինը, Սեվրինը[1]) և այլն—տնտեսության ու քաղաքականության ասպարեզում, ըստ եյության շարունակությունն են 1914-1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի։ Այս դաշնագրությունները, վորոնք հաղթողների հափշտակողական քաղաքականության հակասությունները ի հաշիվ հաղթվածների հաշտեցնելու փորձեր են, լոկ վառելանյութ են պատրաստում նոր իմպերիալիստական պատերազմի համար։

Բաժանությունն ու ձեռք առնված այն միջոցները, վորոնց նպատակն է ապահովել հաղթողների համար այնպիսի ավարներ, ինչպիսին են Գերմանիան, Ավստրիան, Թյուրքիան,—հաղթողներին թշնամական բանակների յեն բաժանում։

Մինչդեռ Անգլիան, վոր սերտ կապված է համաշխարհային տնտեսության հետ և մյուս բոլոր յերկիրներից ավելի է տուժում համաշխարհային տնտեսական ճգնաժամից, նայում է պարտահատուցման (репарационный) հարցին, այսինքն՝ իմպերիալիստական պատերազմի առաջացրած բոլոր քայքայումները Գերմանիայի հաշվին վերականգնելու հարցին, գլխավորապես տնտեսական տեսակետից և նույնիսկ պատրաստ է այս կրիզիսի լուծման համար խոշոր նյութական զոհաբերություններ անելու,—Ֆրանսիան, ընդհակառակը, նախ և առաջ հրապարակ է մղում իմպերիալիստական իղձեր։ Ֆրանսիայի այս իմպերիալիստական ձգտումների արմատը թաղնված է նրա բանկային կապիտալի և սրա հետ սերտ կապված պողպատի ու ածխի տրեստների խոշոր քաղաքական ույժի մեջ, նմանապես և ֆրանսիական միլիտարիզմի ազդեցության մեջ, վոր յերազում է ամբողջ յեվրոպական ցամաքում գերիշխելու մասին։

[1]) Վերսալի դաշնագրությունը թելադրվեց Գերմանիային 1919 թվին, 1914-1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմից հետո, չորս պետությունների—Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի և Իտալիայի—կողմից։ Այս դաշնագրությամբ նախատեսված են այն բոլոր միջոցները, վորոնք կարող եյին քայքայել Գերմանիայի բարօրությունը ներկայումս և կասեցնել նրա զարգացումն ապագայում. Գերմանիայից կտրեցին ընդարձակ ու յեվրոպայում ամենահարուստ մի յերկրամաս և խլեցին խոշոր գաղութները. նրան զրկեցին հացից, հսկա քանակությամբ ածխից ու այլ հանքերից, նրանից խլեցին նրա ռազմական ու առևտրական նավատորմիղը և հարկադրեցին վճարել միլիարդավոր ռազմատուգանք (контрибуция)։

1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի դաշինքը մի համաձայնություն է Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի միջև՝ Թյուրքիային պատկանող Փոքր-Ասիան դաշնակիցների միջև բաժանելու մասին։ Այս դաշնագրով Ֆրանսիան ստացավ վոչ միայն Սիրիան, այլ և բամբակով հարուստ Կիլիկիան ու հյուսիսային Միջագետքի նավթաբեր հողերը։ Իտալիան ստացավ Միջերկրական ծովի Ալեքսանդրետայի ծոցին սերձակից տերիտորիայի մի մասը և այլն։ Բացի սրանից Իտալիան ստացավ Հերակլիայի հարուստ ածխային շրջանի շահագործման բոլոր կոնցեսիաները։ Անգլիան ստացավ Միջագետքի մանդատ (այսինքն՝ բացառիկ շահագործման իրավունք)։ Թյուրքիայի յեվրոպական հողերի մի նշանավոր մասը, ներառյալ արևելյան Թրակիան և Գալիպոլի թերակղզին, անցավ Հունաստանին։

Այս դաշնագրով փորձեցին Թյուրքիան դարձնել պետության մի փոքրիկ ասիական բեկոր։

Ֆրանսիական իմպերիալիզմի այս ձգտումները, վոր հատկապես ակնհայտնի արտահայտվեցին 1923 թ. Ռուրի արկածի ժամանակ, իհարկե, յերբեք այդպիսի ազդեցություն ձեռք չեյին բերի յերկրում, յեթե չլիներ Ֆրանսիայի ամենախոր ֆինանսական կրիզիսը, վոր տանում է դեպի պետական տնտեսության հարաճուն պակասորդավորություն (дефицитность) և յերկիրը սնանկանալու վտանգի յե յենթարկում։ Ֆրանսիայի ներքին պարտքը ներկայումս հասնում է 100 միլիարդ վոսկի ֆրանկի, իսկ նրա պարտքը Անգլիային ու Ամերիկային գնահատվում է մոտ 30 միլիարդ ֆրանկ։ Այս պարտքի վրա ավելանում է նաև այն փաստը, վոր հյուսիսային Ֆրանսիայի քանդված շրջանների վերականգնումը, չնայած Գերմանիայի արդեն վճարած միլիարդներին, կը պահանջե դեռ հսկայական ծախսեր, գլխավորապես շնորհիվ այն հանգամանքի, վոր պարտահատուցման վճարումների մեծագույն մասը գործադրվեց ֆրանսիական միլիտարիզմն ուժեղացնելու վրա կամ հալվեց կապիտալիստական սպեկուլյանտների այն խավի գրպաններում, վոր վաստակ է գտնում պարտահատուցումներից նույնքան լավ, վորքան և պատերազմներից։

Այստեղից պարզ է, թե ինչու ֆրանսիական ծանր արդյունաբերության ղեկավարները ձգտում են խլելու Գերմանիայից նրա տերիտորիայի մի մասը—մերձ-Հռենոսյան շրջանը։ Բացի սրանից՝ տեսնելով, վոր վերաշինության համար Գերմանիայի արած վճարումները գնում են վոչ ըստ պատկանելույն, այլ և դիմադրության հանդիպելով Գերմանիայի կողմից, վորի ույժից վեր է ռազմատուգանքի այն բեռը, վոր դրել են նրա վրա հաղթողները,—ֆրանսիական ծանր արդյունաբերության տեր կապիտալիստները հափշտակեցին նաև Ռուրի ավազանը, վորպեսզի ֆրանսիական տրեստի բռում ամուր պահված լինի յեվրոպական մոնոպոլիան, վորովհետև Ռուրի գրավմամբ ֆրանսիական ծանր արդյունաբերությունը կունենա յուր տրամադրության տակ Յեվրոպական ցամաքում պատրաստվող յերկաթի ամբողջ արտադրության 65%-ն ու ածխի ամբողջ արտադրության 70%-ը։

Այդպիսով՝ ոգնելով վոչնչացնելու Յեվրոպայում յուր ամենավտանգավոր ախոյանին—ի դեմս Գերմանիայի, Անգլիան միևնույն ժամանակ ստեղծեց յուր համար մի ավելի վտանգավոր ախոյան՝ ի դեմս Ֆրանսիայի[1])։

[1]) 1923 թ. Պարիզի կոնֆերենցիայի վիժումից հետո ակնհայտնի յեղավ, թե անգլիական առաջին մինիստր Բոնար Լոույի և Ֆրանսիայի մինիստր նախագահ Պուանկարեյի միջև գերմանական հարցի վերաբերմամբ կայանալիք համաձայնության գլխավոր արգելքն այն եր, վոր Ֆրանսիան ձգտում եր գերմանական հանքերի վրա հսկողություն ձեռք բերելու։

Դեռ չխոսելով այն մասին, վոր այս տարաձայնությունը բղխում է ֆրանսիական ու անգլիական կապիտալիզմի տարբեր բնույթից, այս խնդրում կարևոր է նաև այն, վոր Անգլիան Ֆրանսիայի քաղաքականությունը համարում է մի նոր աստիճան այն նպատակների իրագործման ճանապարհին, վոր իրեն առաջադրել է Ֆրանսիան, այն է՝ գերիշխանություն ձեռք բերել Յեվրոպական ցամաքի վրա։

Բացի սրանից՝ Ֆրանսիայի քաղաքականությունը մոտավոր Արևելքում, նրա խաղարկությունը (заигрывание) քեմալիստական Թյուրքիայի հետ (հեղափոխական—ազգային շարժում), Ֆրանսիայի սերտ կապը Փոքր-Անտանտայի, մանավանդ Լեհաստանի հետ, և նրա խաղարկությունները Իտալիայի հետ,—այս բոլորը պարզ ցույց են տալիս այն խոր հակասությունը, վոր կա Ֆրանսիայի և Անգլիայի քաղաքական ընթացքների միջև։

Պարիզի կոնֆերենցիայի վիժումից հետո, Անտանտան ներքին խոր քաղաքական կրիզիսի մեջ է։ Այդ կովում, վոր մղում է Անգլիան՝ Ֆրանսիայի անընդհատ աճող ազդեցության դեմ, առաջինն ստիպված է դիմելու Միացյալ Նահանգների ոգնության ու ձգտելու, վոր անգլո-սաքսոն պետությունները միանան։

Իր տնտեսական ու քաղաքական հզորությամբ Ֆրանսիան գրեթե առաջին տեղը գրավեց Յեվրոպայում. բայց յուր այս դիրքը, այլ և յուր ռազմական գերազանցությունը պահպանելու համար ստիպված է հանձն առնելու այնպիսի ծախսեր, վորոնք Ֆրանսիայի նախկին ֆինանսական գերակշռությունը վեր են ածում սնանկության մոտեցող ֆինանսական հպատակեցման:

Սեվրի դաշնագրով Թյուրքիայի բաժանելը նույնպես ստեղծեց լուրջ հետևանքներով հղի մի քաղաքական հանգույց և սաստիկ սրեց անգլո-ֆրանսիական հարաբերությունները: Թյուրքիայի բաժանմանը մասնակցում եյին Անգլիան, Ֆրանսիան ու Իտալիան, բայց այս բաժանմամբ շահագրգռված եր գլխավորապես Անգլիան (Մոսուլի նավթը): Ֆրանսիան և Իտալիան թալանի գործում Անգլիային հետևում եյին մասամբ այն նպատակով, վոր թույլ չտան նրան ամբողջ ավարը յուր ձեռքն առնելու, ընդ վորում Ֆրանսիան գլխավորապես աշխատում եր թույլ չտալ, անգլիական գերիշխանություն ստեղծվի, այսինքն՝ չթողնել, վոր Անգլիան կատարելապես տիրե Միջերկրական ծովին:

Վորովհետև պետք եր վոչ մայն կողոպտել Թյուրքիան, այլ և պահել կողոպուտը յուր ձեռքում, իսկ սրա համար հարկավոր եր նախորոք կոտրել Թյուրքիայի դիմադրությունը, ուստի Անգլիան օգնության հրավիրեց Հունաստանին, վորին խոստացել եյին Փոքր-Ասիայի արևմտյան ափն Զմյուռնիա քաղաքի հետ միասին: Հունաստանը զորք հավաքեց և ներս խուժեց Փոքր-Ասիա: Այսպիսով քաղաքական ու ռազմական բարդությունները սկսեցին խաղաղություն կնքելուց անմիջապես հետո: Այս ամբողջ արկածը վերջացավ նրանով, վոր Հունաստանը ջախջախվեց և ամբողջ Անատոլիան միացավ Անգորայի ազգային ժողովի իշխանության ներքո:

Մյուս կողմից՝ հեռավոր Արևելքում Յապոնիան մեկնում է թաթը չինական հողերին, բայց ընդ սմին հանդիպում է ուժեղ մրցակցի, ի դեմս Ամերիկայի: Ամերիկան դուրս յեկավ պատերազմից առանց յուր տերրիտորիան ավելացնելու, բայց տնտեսապես ամրապնդում է յուր իշխանությունը Խաղաղ Ովկիանոսում, Արևելյան Ասիայում, Ավստրալիայում ու Հարավային Ամերիկայում, ընդ վորում Խաղաղ Ովկիանոսի վրա ու Արևելյան Ասիայում ընդհարվում է յերիտասարդ իմպերիալիստական Յապոնիայի շահերին:

Վերոհիշյալ պայմաններն անընդհատ քաղաքական ճգնաժամ են ստեղծում Յեվրոպայի բոլոր բուրժուական յերկիրներում: Ունևոր դասակարգերի շարքերի ավելի սուր շերտավորումն առաջ է բերում բուրժուական պարլամենտական կուսակցությունների անջատություն. նրանք անընդունակ են հանդիսանում ինքնուրույն քաղաքականություն վարելու և նրանց մեջ ստեղծվող համաձայնությունները արագ փոփոխվում են: Այս առաջ է բերում արդեն վոչ թե իշխանության փոփոխում՝ պարլամենտական մեծամասնության համաձայն, այլ իշխանության հակահեղափոխական հափշտակություն (ֆաշիզմը Իտալիայում, իշխանության հափշտակությունը Հունաստանում, Բուլղարիայում): Այս քաղաքական անկայունությունը տանում է դեպի կրիզիսի աճում կապիտալիստական յերկիրներում, մի աճում, վոր նորանոր պատերազմներ է սպառնում:

Այս բոլորը միասին առած՝ դասակարգային կռվի սրման ու կապիտալիստական յերկիրների պետական փլուզման ակներև հատկանիշներն են:

11. ԻՆՉՈՎ Է ԲՆՈՐՈՇՎՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Դասակարգային հակասությունները կապիտալիզմի հետպատերազմյան շրջանում վոչ միայն չթուլացան, այլև անսովոր սրության հասան, չընայած այն բոլոր փորձերին, վոր բուրժուազիան անում եր այս հակասությունները թուլացնելու համար:

Կապիտալիզմն ի վիճակի չե ապահովելու պրոլետարիատին՝ գոյության մշտական, կայուն ու բավարար մակարդակ (ինչպես վոր այդ չեր կարողանում տալ կապիտալիզմը նույնիսկ պատերազմից առաջ): Բանվոր դասակարգի կենսական մակարդակի վայրեջքն ընթանում է այժմ ավելի արագ, բայց արտահայտվում է տարբեր ձևերով: Գերարտադրության ու կայուն վալյուտայի յերկիրներում այս վայրեջքն ստանում է հսկա գործազրկության ձև (ընդհանուր առմամբ՝ յեթե չհաշվենք գործազուրկների քանակի մի քանի տատանումները, վորոնք առաջանում են զանազան պատճառներից, գործազուրկ մասսայի քանակը, իբրև մշտական միջին մեծություն, կանգնած է մի քանի միլիոնի մակարդակի վրա). Թերարտադրություն և ընկնող վալյուտա ունեցող յերկիրներում գլխավոր դեր է կատարում վոչ այնքան գործազրկությունը, վորքան հարաճուն թանկությունը, վորի յետևից չի հասնում աշխատավարձի բարձրացումը: Աղքատացման պրոցեսն առանձին ուժգնությամբ ընդգրկում է պաշտոնյաների ու ինտելլիգենցիայի լայն խավերը. կրիզիսը հարվածում է նաև մանր ու միջակ բուրժուազիային, սրան էլ քայքայելով,—մի խոսքով սոցիալական դժգոհությունը կուտակվում է:

Սակայն վճռական պայքար տեղի յե ունենում միայն բուրժուազիայի և պրոլետարիատի միջև: Կապիտալիզմը բանվոր դասակարգի շահագործումը սաստկացնելու միջոցով է ձգտում կրիզիսի առաջն առնելու, ամեն տեսակ միջոցներ գործադրելով սրա համար. յերկարացնում է բանվորական օրը և վորտեղ վոր հնարավոր է, վերջ է տալիս 8-ժամյա բանվորական օրվան, վոր բանվորները ձեռք եյին բերել հեղափոխության ու զորացրման օրերում, աշխատում է բարձրացնել աշխատանքի լարվածությունը, ձգտում է պակասեցնելու աշխատավարձը՝ նախապատերազմյան ժամանակի իրական մակարդակից շատ ու շատ ցած իջեցնելով այն:

Պրոլետարիատի շարքերում դասակարգային դժգոհության աճումը, դասակարգային պայքարի սրումը հասցնում են մի չեղած յերևույթի—այն բանին, վոր բուրժուազիան կորցնում է յուր սեփական պետության հզորության վրա ունեցած վստահությունը: Բուրժուազիան վստահ չե, թե իր դիրքը հաստատ է—Խորհրդային Ռուսաստանը նրան հիշեցնում է մահը: Բուրժուազիան արդեն ի վիճակի չե վստահելու յուր շահերի պաշտպանությունն ուրիշ դասակարգի պատկանող վարձկաններին, տատանվում է յուր բախտը վստահելու զինված պրոլետարիատի կամ չքավոր գյուղացիության մի մասին և հույս չունի, թե սրանց օգնությամբ կարող է պրոլետարիատի ու գյուղացիության մյուս մասի ապստամբությունը ճնշել: Բուրժուազիան ստիպված է ինքը զինվելու: Պրոլետարիատի առաջին ընդհարումները բուրժուազիայի հետ տեղի ունեցան արդեն բուրժուազիայի դասակարգային

զորքերի օգնությամբ (Որոշ կազմակերպություններ Գերմանիայում, ֆաշիստները՝ Իտալիայում, ազգայնական լիգան՝ Ճապոնիայում, ֆաշիստները՝ Լեհաստանում և այլն)։ Չնայած հսկա դժվարություններին, պրոլետարիատը ցույց է տալիս կապիտալի գրոհին թեև անհամաչափ, սակայն ավելի ու ավելի աճող դիմադրություն և առանց չափազանցության կարելի է ասել, որ միայն սոցիալ-դեմոկրատիայի օգնությամբ է, որ բուրժուազիային հաջողվում է առայժմ պահպանել յուր տիրապետությունը։

Այսպիսով՝ կապիտալիզմի հետպատերազմյան շրջանը սոցիալական տեսակետից բնորոշվում է դասակարգային ընդհարումների սաստիկ աճումով ու լարվածությամբ, որոնց թուլացումը հնարավոր է միայն ժամանակավորապես, բայց որոնց վերացումն անկարելի է կապիտալիզմի անկման ներքո զարգացումում։

12. Ի՞ՆՉՈՒ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՀԱՐՑԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼԻՍ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԵՐԿԻՐՆԵՐԸ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼ

Վերոհիշյալ 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմը համաշխարհային տնտեսության մեծ մասի շահերին դիպավ և մեծ մասի զարգացումը խանգարեց. իսկ այդ համաշխարհային տնտեսության մեջ կան զանազան երկիրներ — թե շատ զարգացած կապիտալիստական, թե կիսակապիտալիստական, թե գաղութային-հողագործական երկիրներ, որոնց արտադրական ու սոցիալական հարաբերությունների զարգացումը շատ հեռու է միատեսակ լինելուց։ Պատերազմն իր հերթին առաջ բերեց երկիրների խմբավորում ըստ նրանց պատերազմական գործողություններին մասնակցելու աստիճանի և ըստ նրանց կրած նյութական զոհողությունների քանակի։ Պատերազմի պատճառած արտադրության կրճատումը, անհամաչափ է բաշխված զանազան երկիրների միջև. կան երկիրներ, որտեղ արտադրական ապարատը պատերազմից հետո ամրացած է, արտադրական ունակությունն ավելի բարձր է, քան պատերազմից առաջ (Ամերիկան և Ճապոնիան) և ընդհակառակը, երկիրներ էլ կան, որոնք գտնվում են տնտեսական խորին քայքայման (Գերմանիա) ու կատարյալ անկման մեջ (Ավստրիա)։

Սակայն՝ այս կամ այն չափով, այս կամ այն ձևով, բոլոր երկիրներն էլ քարշվել ընկել են կրիզիսի շրջանը. ամենուրեք գոյություն ունի (թեև անհավասար չափով) սոցիալ-տնտեսական հարաբերությունների անկայունություն։

Պարզ է, որ կրիզիսի հետագա զարգացման ուղիները ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է երկիրները խմբակների բաժանել և նրանցից ամեն մեկի ուսումնասիրությամբ առանձին հետախուզել, թե ինչպես և ինչ չափով են արտահայտվում նրանց մեջ կապիտալիզմի քայքայման հիմնական նշանները։

13. Ի՞ՆՉ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԵԼԻ Է ԲԱԺԱՆԵԼ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՇՂԹԱՅԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ԵՐԿԻՐՆԵՐԸ՝ ԸՍՏ ԻՐԵՆՑ ԿՐԱԾ ԿՐԻԶԻՍԻ ԲՆՈՒՅԹԻ

Այն բոլոր պետությունները, որոնք արդեն պատերազմից առաջ մտել էին համաշխարհային տնտեսության շղթայի մեջ, ըստ ընկնող (упадочный) կապիտալիզմի այն կրիզիսի բնույթի, որ նրանք կրում են, կարելի է բաժանել երեք խմբի. 1) պետություններ, որոնք ունեն լիովին զարգացած, ըստ էության՝ դեռևս առողջ կապիտալիզմ, 2) պետություններ, որոնք ունեն լիովին չզարգացած կապիտալիզմ ու 3) պետություններ, որոնց մեջ կապիտալիզմի անկումը արտահայտվում է կատարյալ անկենդանությամբ։

14. Ի՞ՆՉՈՎ Է ԲՆՈՐՈՇՎՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀԱՋՈՐԴՈՂ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՈՆՔ ՈՒՆԵՆ ԼԻՈՎԻՆ ՉԶԱՐԳԱՑԱԾ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ

Լիովին չզարգացած կապիտալիզմ ունեցող պետությունների տնտեսությունը բնորոշվում է նրանով, որ վերջինս որոշ կերպով մեկուսի է մնում կապիտալիզմի յեվրոպական կրիզիսից, ուստի և ավելի կայուն է այն անկման միտումների հանդեպ, որ համակել է հին կապիտալիստական երկիրները։

Ինչո՞վ է այս բացատրվում։ Այս բացատրվում է այն երկիրների ներքին տնտեսական դրության առանձնահատկություններով, այսինքն նրանով, որ այս երկիրները գտնվում են դեռ կապիտալիստական զարգացման շատ սկզբնական աստիճանի վրա, կամ նույնիսկ մինչկապիտալիստական դրության մեջ են, մինչդեռ կապիտալիզմը, համաշխարհային մասշտաբով, արդեն թևակոխել է իր անկման շրջանը։ Այսպիսի երկիրների շարքին են պատկանում նախ և առաջ Անգլիային, Ֆրանսիային, Բելգիային ու Իտալիային պատկանող գաղութներն Աֆրիկայում։ Այս երկիրները գտնվում են տնտեսական զարգացման ամենացած աստիճանի վրա. այստեղ դեռ ամբողջովին տիրապետում է օտարերկրյա գաղութային կապիտալը յուր ամենավատ ձևով (առևտրական կապիտալ և պլանտացիաների շահագործում)։ Բնակչությունը, որը շատ քիչ է շերտավորված, գտնվում է զարգացման ստոր աստիճանի վրա։

Երկրորդ՝ հյուսիսային Աֆրիկայի, առաջավոր Ասիայի գաղութները, նույնպես և Հնդկաստանը։ Այս մասում արդեն բավականաչափ զարգացած կապիտալիզմ ու տեղական կապիտալիստների արագ զարգացող դասակարգ կա։ Այս երկիրների բնակչությունն արդեն բռնել է շերտավորման ուղին, բայց սրանց միացնում է այն անելությունը, որ սրանք ունեն դեպի ճնշողները, այն է՝ դեպի գաղութային պետությունները։ Թեպետ կապիտալիզմի համաշխարհային մասշտաբով անկումը վնաս է տալիս նրանց տնտեսական զարգացմանը՝ դժվարացնելով հում նյութի վաճառքը, սակայն մյուս կողմից այս երկիրները բավական մեծ հառաջադիմություն են արել արդյունաբերացման (индустриализация) գործում։ Նր-

րանց քաղաքական ու տնտեսական ազատագրումը, վորի ճանապարհին նրանք արդեն էական հաջողություններ են ունեցել, քանդում է իմպերիալիզմի հիմքերից մեկը։

Յերրորդ՝ այս նույն խմբակին են պատկանում ձևականորեն անկախ գաղութային պետությունները. Ասիայում—Չինաստանը, Պարսկաստանը, Աֆղանիստանը, Թյուրքիան. Ամերիկայում—Մեքսիկան և հարավային Ամերիկյան պետությունները։ Այս պետությունների ընդհանուր գիծն այն է, վոր սրանց մեջ կան դեռ չօգտագործված բնական հարստություններ, հեռանկար և արագ կապիտալիստական զարգացման հնարավորություն։ Այս յերկիրները համեմատաբար քիչ են փչացած յեվրոպական կապիտալիստական տնտեսության անկումից։

15. Ի՞ՆՉՈՎ Է ԲՆՈՐՈՇՎՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՋՈՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐՈ՞ՆՔ ՈՒՆԵ՞Ն ԼԻՈՎԻՆ ԶԱՐԳԱՑԱԾ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ

Պետությունների այս խմբակին պատկանում են հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները, Յապոնիան, հետո Անգլիան ու յեվրոպական չեզոք պետությունները։ Վորովհետև սրանք պատկանում են այն սակավաթիվ պետությունների թվին, վորոնց պատերազմը վոչ միայն վնաս չտվեց, այլև ընդհակառակը, ուժեղացրեց նրանց նյութական-տնտեսական կարողությունը, ուստի և այս յերկիրների տնտեսությունը բնորոշվում է նրանով, վոր ընդհանուր ու ամբողջական առմամբ ավելի կայուն է կապիտալիստական կրիզիսի հանդեպ։

Միացյալ Նահանգները պատերազմի ընթացքում գլխավորեն ավելացրին իրենց արտադրական ապպարատը և կապիտալի կարիք զգացող ու ներմուծող յերկրից դարձան կապիտալ արտահանող յերկիր։ Միացյալ Նահանգների բնորոշ գիծն այն է, վոր շատ բարձր արդյունաբերական զարգացման հետ միասին նրանք ունեն շատ զարգացած և այնքան խոշոր գյուղատնտեսություն, վոր գյուղատնտեսական հում նյութեր են արտահանում։ Միացյալ Նահանգների տնտեսական ապպարատը ձևված է հսկայական արտադրության, այլև արդյունաբերական առարկաների ու գյուղատնտեսության արտադրանքների արտահանության համար, ուստի և այս հատկանիշն էլ հենց պատճառ է այն հանգամանքի, վոր պատերազմից անմիջաբար օգուտ ստացած այս յերկիրն, այնուամենայնիվ հաղորդակից է կապիտալիզմի անկման պրոցեսին։ Ի հարկե, այս անկումը շոշափում, վնասում է Ամերիկային ավելի թեթև, քան յեվրոպական յերկիրներին, վորովհետև Ամերիկան կայունություն է ձեռք բերում ի հաշիվ իր ներքին շուկայի, այլև այն հանգամանքի, վոր կապիտալ է արտահանում դեպի հարավային Ամերիկայի անզարգացած յերկիրները, Չինաստան, Կանադա և ուրիշ արտաեվրոպական յերկիրներ։

Յապոնիան, մանավանդ պատերազմի շնորհիվ, զարգացավ ու դարձավ ուժեղ, կապիտալիստական, խիստ իմպերիալիստական մի յերկիր։ Կապիտալիզմի անկումն անդրադարձավ նրա զարգացման թափի վրա. սակայն նրա արտադրական ապպարատը չի վնասված, դրամական ու վարկային սիստեմն առողջ է. կապիտալի կուտակումը շարունակվում է։ Այս տվյալ-

ներից յելնելով կարելի յե ասել, թե Յապոնիան վորոշ տնտեսական հիմքեր ունի դեռ պահպանելու յուր կապիտալիզմն՝ անկախ միջին Յեվրոպայի սաստիկ քայքայումից։

Նույն կարգին են պատկանում Կանադան, Ավստրալիան, Նոր-Զելանդիան։ Սրանք կատարելապես զարգացած կապիտալիստական պետություններ են, վորոնք ընդ նմին ունեն խոշոր ու զարգացած գյուղատնտեսություն, վոր կապիտալիզմին զարգանալու հնարավորություն է տալիս ներքին շուկայի վրա հիմնվելով։ Կապիտալիզմի անկումը տանում է այս յերկիրները դեպի ինքնափակ (замкнутый), ինքնաբավ (самодовлеющий) տնտեսության կազմակերպում։

Ինչ վերաբերում է Անգլիային ու յեվրոպական չեզոք պետություններին (Շվեյցարիա, Սկանդինավյան յերկիրներ)՝ ապա այս յերկիրների արտադրական ապպարատն ընդհանուր առմամբ քիչ է տուժել։ Բայց Անգլիան ու այս յերկիրները բավարար չափով սեփական գյուղատնտեսություն չունեն, ուստի և ավելի սերտ են կապված պարենի ու հում նյութերի համաշխարհային շուկայի հետ։ Մյուս կողմից՝ սրանց արտադրության նշանավոր մասը պիտի վաճառվի համաշխարհային շուկայում, վորպեսզի նրանք կարողանան խուսափել գործազրկությունից ու տնտեսական կյանքի քայքայումից։ Անգլիայի վերաբերմամբ պետք է նկատել նաև, վոր սրա տիրապետությունը գաղութներում ավելի ու ավելի յե վտանգվում՝ շնորհիվ ազատագրական շարժման, վոր տեղի յե ունենում Հնդկաստանում, առաջավոր Ասիայում ու Աֆրիկայում։ Այսպիսով՝ այս յեվրոպական պետություններն ավելի քիչ կայուն են կապիտալիզմի անկման պրոցեսի նկատմամբ, քան անդրովկիանյան յերկիրները։

16. Ի՞ՆՉՈՎ Է ԲՆՈՐՈՇՎՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՋՈՐԴ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐՈ՞ՆՔ ՈՒՆԵՆ ԸՆԿՆՈՂ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ

Յերկիրների այս խմբակն ընդհանուր առմամբ միատեսակ չե, թեպետ նրա մեջ են մտնում այն բոլոր յերկիրները (բացի Անգլիայից), վորոնք մասնակից են յեղել պատերազմին, այսինքն՝ Ֆրանսիան, Բելգիան և Իտալիան մի կողմից, և Գերմանիան, Ավստրիան, Լեհաստանը, Չեխո-Սլովակիան և արևելյան-յեվրոպական մանր պետությունները մյուս կողմից։

Այս յերկիրների տնտեսությունն ընդհանուր առմամբ բնորոշվում է նրանով, վոր գտնվում է այս կամ այն չափով անկման վիճակում և վոր այս յերկիրներն արդեն ի վիճակի չեն, կապիտալիզմի շրջանակում, զարգացնելու իրենց սեփական արտադրող ուժերը։

Առաջին հայացքից թվում է, վոր առաջին յերեք պետությունները գտնվում են, իբր թե ավելի լավ վիճակում, մանավանդ Ֆրանսիան։ Այս յերկիրն ունի բավականաչափ լայն գյուղատնտեսական պատվանդան. հնարավորություն ունի, մի վորոշ ճիգ գործ դնելով, ինքն իրեն կերակրելու և այս հանգամանքը նրան դարձնում է ավելի պակաս զգայուն դեպի այն բոլորը, ինչ վոր կատարվում է համաշխարհային շուկայում։ Այսուհետև Ֆրանսիան, շնորհիվ Էլզաս-Լոտարինգիայի միացման, դարձավ ծանր արդյունաբերական մի յերկիր, վոր արտահանում է։ Այս հանգամանքներն ու

ընդարձակ գաղութների գոյությունը Ֆրանսիան դարձնում են ամենախոշոր իմպերիալիստական պետություններից մեկն աշխարհում։ Սակայն ավելի ուշադիր վերլուծությունը ցույց է տալիս, վոր Ֆրանսիայի տնտեսական հիմքը թույլ է։ Անշարժ բնակչությունը, թույլ զարգացած ու մնացած արտադրական ապարատը, խարխլված դրամական տնտեսությունը, պետական ֆինանսների վատթար վիճակը,—այս բոլորը չափազանց թույլ հիմք են Ֆրանսիայի վիթխարի իմպերիալիստական մեքենայի համար։ Ընդ սմին, Ֆրանսիայի պարտքը չափազանց մեծ է, այնպես վոր նույն իսկ առաջիկա տարիներում ամբողջ պետական հասույթը հազիվ պիտի բավե պետական պարտքի տոկոսների վճարման համար։ Այս հակասությունները հիմք չեն տալիս յենթադրելու, թե Ֆրանսիան գտնվում է համեմատական կրիզիսի ու անկման ազդեցությունից դուրս, ուստի և կատաստրոֆը նրա համար էլ անխուսափելի յե։ Ինչ վերաբերում է Իտալիային՝ կապիտալիզմի անկումը նրա մեջ շատ հեռուն է գնացել, և այս յերկիրը պրծնում չունի մշտական կրիզիսներից, գործազրկությունից, պակասորդներից և այլն։

Ինչ վերաբերում է Գերմանիային, Ավստրիային, Լեհաստանին ու Չեխո-Սլովակիային, սրանց մեջ, մանավանդ առաջին յերկրի մեջ, անկման յերևույթները արտահայտվում են առանձնապես պարզ։ Գերմանիայի արտադրությունը ծայրահեղորեն լարված է, բայց այս լարումը չի հարստացնում, այլ, ընդհակառակն, ուժասպառ է անում Գերմանիային, վորովհետև յուր արտադրության առյուծի բաժինը հարկադրված է տալու ռազմատուգանքի վճարումներին, վոր հասնում է 132 միլիարդ վոսկի մարկի։ Թղթադրամի շրջանառությունը Գերմանիայում սաստիկ արագ է մեծանում, և սրա հետևանքը լինում է վոչ միայն պետության դեֆիցիտի ավելացում, այլ և հարաճուն թանկություն։ Պետական պարտքի ընդհանուր գումարը, վոր 1922 թ. հասնում եր 368 միլիարդ վոսկի մարկի, թղթադրամների սաստիկ ու հարաճուն հրատարակման պայմաններում, քայքայում է Գերմանիայի ժողովրդական տնտեսությունը, չավելացնելով պետության միջոցները։ Կապիտալիզմի հանգամանքներում պարտքի այս աճումը նշանակում է ժողովրդական տնտեսության աղքատացում, բանվորական մասսաների կենսական մակարդակի վայրէջք ու կապիտալի նահանջ՝ արտադրությունից դեպի չարաշահական առևտուր։ Գերմանիան ի վիճակի չե նորմալ հասույթներով ծածկելու պետության պահպանման ծախսերը, սրանց մեջ հաշվելով նաև փոխառությունների տոկոսների հատուցումն ու ռազմատուգանքը։ Շնորհիվ գերմանական վալյուտայի ցած կուրսի՝ բարձր վալյուտա ունեցող յերկիրները (Անգլիան, Ֆրանսիան, Շվեյցարիան, Սկանդինավյան յերկիրները, Ամերիկան և այլն) հնարավորություն ունեն ապրանքներ գնելու գերմանական շուկայում ավելի եժան, քան իրենց սեփական յերկրում։

Գերմանիան ի վիճակի չե լուրջ արգելքներ դնելու, վոր կապիտալը չարտահանվի դեպի արտասահման՝ ապրանքների ձևով։ Այն ինչ՝ արտահանողները, ապրանքներն արտասահման հանելով՝ ստանում են կայուն ոտարերկրյա վալյուտա և, թողնելով այս վալյուտան արտասահմանում, ազատ են մնում յերկրի ներքին հարկային քաղաքականության ծանրությունից։ Այսպիսով՝ աստիճանաբար տեղի յե ունենում գերմանական կապիտալի տեղատվություն դեպի ոտար յերկիրներ։ Սակայն՝ այս անորմալ արտահանությունն էլ արդեն մոտենում է վախճանին. արտադրությունը

շարունակելու համար անհրաժեշտ է գնել արտասահմանյան նյութ և կիսաֆաբրիկատներ, վորոնց համար նրանք ստիպված են վճարելու համաշխարհային բարձր գներով ու ոտարերկրյա կայուն վալյուտայով։ Այս հանգամանքն ազդում է գերմանական արտադրանքների վրա՝ վերջիններս թանկացնելով և նրանց գներն ավելի ու ավելի հավասարվում են համաշխարհային գներին։ Իսկ այս պիտի սաստիկ հարված հասցնե գերմանական արտահանությանը [1])։

---

[1]) Փողի արժեքի անկումը, վոր առաջ յեկավ Ֆրանսիայի անմտորեն բարձր ռեպարացիոն (վերաշինական) պահանջներից, մի անկում վոր ընդսմին ուժեղացավ կապիտալիստների, վաճառականների ու գյուղական տնտեսների թեթևամիտ վաշխառուական քաղաքականության ազդեցության շնորհիվ, ինչպես նաև անխոհեմ ֆինանսական ու հարկային քաղաքականության հետեվանքով, Գերմանիայում ամենասուր ճգնաժամ առաջացրեց։

Վորովհետև Գերմանիան արտասահմանից վոչ միայն յերկաթ ու այլ հում նյութեր է ստանում, այլ նույն իսկ հաց ու ծխախոտ (վերջինը Ֆրանսիայի հանդեպ ունեցած վերաշինական -ռեպարացիոն- հանձնառությունների այլ և Ռուրի ավազանի գրավման շնորհիվ), ուստի և դա առաջ բերեց յերկրի մեջ գների հսկայական բարձրացում։ Բայց արդյունաբերականներն ու գյուղատնտեսական արտադրողները չեն բավականանում իրենց արտադրանքների գներն այն չափ բարձրացնելով միայն, վոր չափով ավելի արժեն նրանց մեջ պարունակված ոտարերկրյա հում նյութերը, այլ բոլոր ուժով աշխատում են հավասարեցնել Գերմանիայի բոլոր գները համաշխարհային շուկայի գներին, ուստի և չնայած այն հանգամանքներին, վոր գերման բանվորական ուժն ավելի եժան է, քան բարձր վալյուտա ունեցող յերկիրների բանվորական ուժը. Գերմանիայում 1922 թ., մանավանդ սկսած ոգոստոսից, մեծ թանկություն յեղավ։ Այս թանկությունից գլխավորապես տուժեցին բանվորներն ու ծառայողները։ Նրանց դատումն (заработок) այս միջոցին ավելացել է լավագույն դեպքում 100 անգամ, մինչդեռ մթերքների գներն ավելացել են 400—500 անգամ։

Վորովհետև անհրաժեշտ յեղավ, վոր պրոլետարիատը յուր սպառումը սահմանափակե, ուստի վրա հասավ նաև առաջնակարգ կարևորություն ունեցող առարկաների արտադրության սահմանափակում։ Գյուղատնտեսական արտադրությունը նույնպես յետ մնաց նախապատերազմական չափերից։ Շնորհիվ փողի արժեքի անընդհատ անկման և արտասահմանի անբավարար մրցության, սպառողները հարկադրված են այնպիսի գներ վճարել, վոր կկամենան վաճառողները։ Իսկ այն արտադրության կրճատումը, վորը ներքին շուկայի կարիքներն է բավարարելու՝ ձեռնտու յե արդյունաբերողների ու գյուղական տնտեսների համար, վորոնք առաջարկության անբավարարության շնորհիվ ստանում են ամենաբարձր գները, ուստի և ձգտում չունեն ավելացնելու ներքին սպառման առարկաների արտադրությունը։ Այսպիսով՝ քանի տևում է ներկա տնտեսական դրությունը, Գերմանիան դատապարտված է խրոնիկական, այսինքն մշտական անբավարար արտադրության։

Ընդ սմին պրոլետարիատն ու քաղաքային միջակ դասը մեծ մասամբ ավելի ու ավելի յեն աղքատանում։ Սակայն արդյունաբերությունն էլ, չնայած մեծ շահերին, քանի գնում, ավելի դժվար կացության մեջ է ընկնում։ Յեվ այս լինում է վոչ միայն այն պատճառով, վոր մարկի կուրսի արագ անկման շնորհիվ, նրան սպառնում է թղթե մարկի՝ արտասահմանում ունեցած գնողունակությունը կատարելապես կորցնելու վտանգը, մի յերևույթ, վոր շատ կդժվարացնի հում նյութի գնումը,—այլ և այն պատճառով, վոր շրջանառու կապիտալ գտնելու հնարավորությունը, փողի արժեզրկության հետ միասին, քանի գնում, դժվարանում է։

Ավստրիայում փողի արժեզրկությունը հասել է այն աստիճանի, վոր արդեն վոչ մի կերպ չի կարելի առաջն առնել։ Այս պատճառով Ավստրիան վորոշել է չորս ոտարերկրի—Ֆրանսիայի, Անգլիայի, Իտալիայի ու Չեխո-Սլովակիայի վարկից ոգտվել, վորոնք տալիս են նրան 650 միլիոն վոսկի կրոն, չափազանց վաշխառուական պայմաններով։

Սակայն՝ ֆինանսներն ու ժողովրդական տնտեսությունն «առողջացնելու» այս ձեռ պիտի ամբողջովին ծանրանա բանվոր դասակարգի ուսերին, վորովհետև այս առողջացումը պիտի կատարվի ամբողջովին ու բացառապես ի հաշիվ աշխատավորների։ Այն սկսվում է աշխատավարձի տարիֆական սակացույցի վերացմամբ, այսինքն՝ բանվորների ու ծառայողների վարձատրությունը վատթարացնելով. որան կը հաջորդե բանվորական օրվա յերկարացումն ու աշխատանքի լարվածության ավելացումը։

Անկասկած էլ ավելի վատթար վիճակի մեջ է գտնվում Ավստրիան։ Չնայած այն հանգամանքին, որ Ավստրիայի վերաշինական հատուցումները հետաձգված են 20 տարով, ֆինանսական կատաստրոֆն այստեղ այնպիսի չափեր է ընդունել, որ այս յերկիրը կարող է ապրել միայն Ֆրանսիայի, Անգլիայի ու Իտալիայի խղճուկ վողորմություններով, իսկ այս շատ ծանր վճար է այն բանի համար, որ հիշյալ յերկրները կատարելապես ստրկացրել են Ավստրիան։

Լեհական պետությունը, որ ստեղծվեց Վերսալյի խաղաղությամբ, բաղկացած է մի շարք զոռով կցված մասերից[1])։ Տեշեն գավառը, փոքրն Սիլեզիան, Դանցիգ ազատ քաղաքը, արևելյան Գալիցիան, այս բոլորը կիզանյութ է (горючий материал), որ ամեն րոպե պատրաստ է բռնկվելու։ Ահա թե ինչու մի մեծ զինված բանակատեղ է հանդիսանում Լեհաստանը, որ պահում է մի այնպիսի բանակ, որ բանակով Եվրոպական ցամաքի վրա յետ է մնում միայն ֆրանսիականից։ Այստեղից բղխում է Լեհաստանի ֆինանսական ծանր դրությունն ու նրա ծանրագույն կախումը Ֆրանսիայից ու այլ յերկրներից։ Նրա արտադրությունը կրճատվում է, կուտակում չի կատարվում, դրամական ու վարկային սիստեմը խախտված է, պետական ֆինանսները խանգարված, գյուղատնտեսության և արդյունաբերության միջև կապ չի ստեղծված։ Պետական իշխանությունը Լեհաստանում սաստիկ տատանված է, դասակարգային շահերի հակասությունները սրված են, յերկրի տնտեսականությունն (экономика) անընդհատ ցած է իջնում։

Ինչ վերաբերում է Չեխո-Սլովակիային, վերջինս կապիտալիստական առանձնահատուկ ճակատագիր ունի։ Իմպերիալիստական պատերազմի պատճառով կենտրոնական և հարավ-արևելյան Եվրոպան, փոխանակ տնտեսապես միանալու, բաժան-բաժան է յեղած և վերածված է մի շարք մանր պետությունների, առանց սրանց ազգային ու տնտեսական շահերը վորևէ կերպ համաձայնեցնելու։ Այս պետություններն ուզում են հասնել տնտեսական կատարյալ անկախության և ձգտում են մեկուսանալ իրարից։ Նրանցից ամեն մեկն աշխատում է յուր սահմաններում զարգացնել արդյունաբերության բոլոր ճյուղերը, վորոնց թվում նաև այնպիսիները, վորոնց զարգացման համար տվյալ պետության մեջ չկան անհրաժեշտ բնական պայմաններ և վորոնց արտադրանքները նրան ավելի ձեռնտու պիտի լիներ ստանալ կանոնավոր միջազգային ապրանքափոխանակության միջոցով։ Այս հանգամանքն առաջ է բերում արտադրող ուժերի հսկա կորուստ։

[1]) Փոխանակ լեհական ազգության պատկանող 18 միլիոն բնակչության, լեհական պետությունն ունի 31 միլիոն բնակիչ։ Լլոյդ-Ջորջը դեռ 1919 թվին ասել էր, թե մի քանի միլիոն գերմանացիների և այլ ազգերի լեհացիներին հպատակվելը, մի քանի տարուց հետո պատճառ կը դառնա այն բանին, որ արևելյան Եվրոպայում նոր պատերազմ ծագե։ Յուր կես միլիոնից ավելի զորքով ու արտաքին քաղաքականության ասպարեզում ունեցած վիթխարի ծրագրերով Լեհաստանը վաղ թե ուշ անհրաժեշտորեն կատաստրոֆի պիտի հանգի։ Անկարելի յե, որ նրա կազմի մեջ մտնող ժողովուրդները խաղաղ կենակցություն ունենան։ Մանավանդ որ, ինչպես նկատում է իտալական նախկին պրեմյեր Նիտտին, իր «Խաղաղությունից զուրկ Եվրոպան» գրքում, Ներկայումս, շնորհիվ Վերսալյում հնարված անհեթեթության, ով որ ճանապարհորդում է Գերմանիայի մի մասից մյուսը, պիտի կտրի «Դանցիգի միջանցքը»։ Ուրիշ խոսքով, Գերմանիան բաժանված է յերկու մասի, և հենց բուն իսկ Գերմանիայում նա, ով ուզում է Բեռլինից Կյոնիգսբերգ գնալ, ստիպված է անցնելու լեհական տերիտորիայով։

Չեխո-Սլովակիան էլ նույնպես, ձևված լինելով Վերսալյի հաշտության դեղատոմսի համաձայն, տեր դարձավ մի արտադրական ապարատի, որ հինգ անգամ գերազանց է իր 14 միլիոնանոց բնակչության կարիքներից (Նրա արդյունաբերական ապարատը հարմարեցված է ծառայելու 60 միլիոն բնակչություն ունեցող նախկին Ավստրո-Հունգարական միապետության կարիքներին)։ Այսպիսով, Չեխո-Սլովակիային պետք են շուկաներ, որ և չի գտնում, ուստի չի յել պրծնում կրիզիսային դրությունից։

Բուրժուազիան, Արևելքի յերկրների ու Միջերկրային Ծովաստանի հետ միաձուլվելու միջոցով, տնտեսական մեկուսացման վիճակից մի յելք գտնելու փոխարեն, հպատակվելով Անտանտայի պահանջներին՝ կրճատում է յուր արտադրական ապարատը և արտադրությունից դուրս է շպրտում բանվորական մասսաներին։ Այսպիսով աշխարհիս հզորներն ստիպված են խեղդելու այն, ինչ որ իրենց գոյության հիմքն է կազմում։ Այստեղից շատ պարզ է, որ բուրժուազիայի, որպես դասակարգի, գոյությունը կատարելապես հակասում է արտադրող ուժերի զարգացմանը։

17. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԽՄԲԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԻՆՉ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ Է ԾԱԳՈՒՄ

Հիշյալ յերկրների՝ ըստ սրանց տնտեսական կազմության բնույթի և ըստ սրանց տնտեսական կայունության աստիճանի՝ խմբավորումը (группировка), որ վերևում լուսաբանեցինք, կապիտալիզմի համար անհաղթելի կրիզիսների աղբյուր է հանդիսանում։

Եվ իրոք, գերարտադրություն ունեցող յերկրների կապիտալիստները կանգնած են այսպիսի յերկընտրանքի առջև. կամ յուր բախտին թողնել քանդվող միջին ու արևելյան Եվրոպան, կանգնեցնել իրենց շուրջը մաքսային պատնեշներ և թույլ տալ, որ Եվրոպայի այն մասի կապիտալիզմը խեղդվի, իսկ, ընդ սմին, կապիտալիստական տնտեսության սիստեմի մեջ առնել այնպիսի յերկրներ, վորոնց մինչև այժմ կապիտալիզմը քիչ էր շոշափել, այսինքն՝ գաղութները, Չինաստանը, հարավային Ամերիկան, —կամ հոժարել վերականգնելու թերարտադրող յերկրների (միջին ու արևելյան Եվրոպայի) տնտեսությունը՝ նրանց խոշոր վարկ տալով ու իրենց սահմանները բացելով նրանց արտադրանքների առաջ։

Առաջին ճանապարհն, անկասկած, տանում է դեպի սոցիալական հեղափոխություն Եվրոպայում, դեպի պրոլետարիատի դիկտատուրա, այսինքն՝ 300 միլիոն կուլտուրական բնակչություն ունեցող յերկրների տնտեսական ազատագրում։ Եվրոպայի հեղափոխությունից հետո անհրաժեշտարեն հեղափոխական շարժում կծագեր գաղութների մի մասում, վորոնց վրա կարող էր հույսեր ունենալ Ամերիկան, և այն ժամանակ, Ամերիկայի՝ իմպերիալիզմի դեմ մղած կռիվը կարող էր ճակատագրական հետևանք ունենալ Ամերիկայի համար։

Ինչ վերաբերում է մյուս ճանապարհին, ինչքան էլ այս հրապուրիչ լինի կապիտալիզմի համար, նրա իրագործման հնարավորությունն անպայման կասկածելի յե։ Գերմանիայի, Ավստրիայի, Լեհաստանի, փոքր Ասիայի Բալկանների և այլ յերկրների տնտեսական վերականգնումը նախ և առաջ իրեն-

գիր կը հարուցանեն, վոր միջդաշնակցային պարտքերը վոչնչացնեն և Գերմանիայի վերաշինական հատուցումները կրճատվեն։ Սրա համար այնպիսի տնտեսական ու ֆինանսական լարումն է պահանջվում Ֆրանսիայից, վորին վերջինս հազիվ թե ընդունակ լինի ներկայումս։

Մյուս կողմից՝ յեվրոպական յերկրների հնարավոր տնտեսական զարգացումն, այն դեպքում, յեթե սրանց վարկ տրվեր, կարող եր ունենալ մի հետևանք. կուժեղանար նրանց արտադրանքների արտահանությունը ճիշտ դեպի այն յերկրները, վորոնք գերարտադրություն ունեն և վորոնք, հենց իրենք էլ տուժում են ապրանքների առատությունից։ Ուրեմն ինչ կստացվեր։ Այս յերկրներին վարկ բանալով, որինակ Ամերիկան ու Անգլիան պիտի ստանային տոկոսներ ու չեջուցում, (погашение) այսինքն՝ իրենց գումարները յետ պիտի ստանային ապրանքի ձևով. իսկ այս չեն կարող թույլ տալ վոչ Ամերիկան ու վոչ Անգլիան, վորոնք առանց այն էլ տառապում են գերարտադրության շնորհիվ։ Դրության հակասությունը պարզ յերևում է որինակ նրանից, վոր Ամերիկան, թեյև պնդում է, վոր դաշնակցային պարտքերը հատուցվեն, կամ Ֆրանսիան, պահանջում է, վոր Գերմանիան վերաշինական վճարումները կատարե, սակայն միաժամանակ ամեն կերպ արգելում են ապրանքների ներմուծումը մաքսային պատնեշներով։ Ամերիկան փակում է և յուր շուկան դաշնակից յերկրների հանդեպ, Ֆրանսիան՝ Գերմանիայի, Անգլիան՝ Գերմանիայի ու Ֆրանսիայի հանդեպ։

Ուրեմն՝ վոչ առաջին և վոչ յերկրորդ ճանապարհը չեն կարող հասցնել այն նպատակին, վորին ձգտում է բուրժուազիան ու սոցիալ-դեմոկրատիան, այն է՝ կապիտալիզմի վերականգնման։

18. Ի՞ՆՉ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԵՆ ՓՈՐՁՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԸ ԿՐԻԶԻՍԻ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼ

Բոլոր կապիտալիստական յերկրներից ամեն մեկը, վոր կանգնած է համաշխարհային կրիզիսի առաջ, աշխատում է նրա առաջն առնել յուրահատուկ կերպով, ի հաշիվ յուր բարեկամ թե թշնամի հարևանների։

Նախ և առաջ գործ են դրվում ներքին ընտանեկան միջոցներ, յերկարացնում են բանվորական որը, իջեցնում են աշխատավարձը և բարձրացնում աշխատանքի լարվածությունը։ Այս անում են թե թերարտադրություն և թե գերարտադրություն ունեցող յերկրներում։ Թվում է, թե բոլորովին անիմաստ բան է ձգտել աշխատանքի լարվածությունը բարձրացնելու և բանվորական որը յերկարացնելու մի այնպիսի ժամանակ, յերբ միլիոնավոր գործազուրկներ կան և յերբ կրիզիսն արտահայտվում է նախ և առաջ նրանով, վոր ապրանքները չեն վաճառվում համաշխարհային շուկայում։ Բայց Անգլիայի և Ամերիկայի կապիտալիստները կրիզիսը թուլացնելու իրենց քաղաքականությամբ միայն ավելի սրում են կրիզիսը։ Այս յերկրների կապիտալիստներն այն կարծիքին են, թե իրենց ապրանքները չեն վաճառվում այն պատճառով, վոր իրենց արտադրության ծախքերը չափազանց մեծ են Գերմանիայի, Ավստրիայի կամ Լեհաստանի արդյունաբերության արտադրության ծախքերի համեմատությամբ։ Բանվորական որվա յերկարացնելը, կամ աշխատավարձի կրճատումը, նրանց կարծիքով, նշանակում է համաշխարհային շուկայում իրենց մրցունակությունը (способность конкуривать) բարձրացնել։ Վոր բանվորական որը յերկարացնելն ու աշխատանքի լարվածություն շատացնելը գերարտադրություն ունեցող յերկրներում կարող է էլ ավելի մեծ գործազրկության ու ճգնաժամի սրման հասցնել,—կապիտալիստների հոգը չէ։

Այսպիսով առաջին ուղին—կրիզիսի առաջն առնելու, ի հաշիվ պրոլետարիատի—տանում է լոկ դեպի կրիզիսի ուժեղացում և կապված է բանվոր դասակարգի հարաճուն դիմադրության հետ։

Ըստ սմին, կապիտալիստները մաքառում են ուժեղացնելու համար իրենց դիրքերն իրենց յերկրից դուրս։ Ներսում նրանք բանվոր դասակարգի կենդանի ուժերը զոհաբերելու գնով տնտեսելու քաղաքականություն են վարում, յերկրի սահմաններից դուրս նրանք մղում են ակտիվ (մինչև վորոշ ժամանակ դիպլոմատիական) կռիվ ընդլայնելու իրենց տիրապետությունն աշխարհի վրա[1])։

Այս պայքարը մղվում է չորս խոշորագույն իմպերիալիստական պետությունների—Ամերիկայի, Անգլիայի, Յապոնիայի ու Ֆրանսիայի միջև, վորոնք ստեղծում են զանազան խմբավորումներ։ Ռուսաստանի մեկուսացման և միջին Յեվրոպայի անկման շնորհիվ, տիրապետության շրջանների բաժանումն այս իմպերիալիստական պետությունների միջև, մանավանդ առաջին յերեքի միջև, քանի գնում այնքան ավելի դժվար բան է դառնում։ Այս պայքարն արդեն սկսված է, ընդ վորում հարձակվող յերկիրն Ամերիկան է, վոր պատերազմի ընթացքում դարձավ աշխարհիս ամենահզոր յերկիրը։

Ի՞նչն է պատճառն Անգլո-Ամերիկյան մրցության։ Նախ և առաջ հրապարակ է գալիս պատերազմական պարտքերի հարցը։ Ամերիկան, կանխատեսությամբ, անմիջապես Անգլիային եր փող տալիս՝ պատերազմ մղելու համար և հետո, արդեն սրա միջոցով եր կատարվում մյուս դաշնակից պետությունների մատակարարումը։ Այսպիսով վոչ թե Ամերիկան, այլ Անգլիան է Յեվրոպայի վարկատուն (кредитор), այսինքն վարկատու յե շատ անբարեհույս պարտապանների, վորոնք են՝ Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան և ուրիշները։ Իսկ Ամերիկայի առաջ պարտապան է հանդիսանում Անգլիան։ Հույս չունենալով այնքան շուտ գանձելու յուր պարտապաններից, Անգլիան կիսապաշտոնական ձևով դիմեց Ամերիկային և առաջարկեց վոչնչացնել յուր հանձնառությունները Ամերիկայի առաջ այն պայմանով, վոր Անգլիան վոչնչացնի յեվրոպական յերկրների պարտավորությունները յուր հանդեպ, իսկ Ֆրանսիան կրճատի այն պահանջները, վոր անում է Գերմանիայից։ Այս միջոցը կարող եր ժամանակավորապես մի քիչ առող-

[1]) Այս հետպատերազմյան իմպերիալիստական կռվի նմուշներից մեկն է նավթի համաշխարհային աղբյուրների համար մղված կռիվը։ Ամերիկան, վոր պատերազմից առաջ գրեթե մենապոլիստ եր նավթի արտադրության ու բաշխման ասպարեզում, պատերազմից հետո Անգլիայից յետ մնաց։ Հաղթական պատերազմից հետո Անգլիային հաջողվեց ապահովաբար ձեռք բերել ամենահարուստ նավթահանքերի շահագործումը փոքր-Ասիայում և, բացի դրանից, միանալով հոլանդական ֆիրմայի հետ, վորի տրամադրության տակ գտնվում են նավթահանքեր աշխարհի այլ մասերում, Անգլիան շատ ուժեղացրեց յուր դերը, վորպես մի նավթային պետություն, վոր յերազում է արդեն համաշխարհային նավթի մեծագույն քանակի տիրապետությունն յուր բաժ մեջ առնելու մասին։ Վորովհետև նավթի սպառումն Ամերիկայում սաստիկ աճել է, իսկ նրա սեփական հանքերը նվազում են, ուստի և այս հողի վրա նրանց միջև մղվում է մի խուլ պայքար, վորին միանում է նաև Ֆրանսիան։

ջացնել յեվրոպական կապիտալիզմը։ Բայց Ամերիկան շահագրգռված չի սրանով, ուստի և Անգլիայի առաջարկությունը մերժեց։

Մի ուրիշ Անգլո-Ամերիկյան հանգույց գոյացավ նավթով հարուստ Միջագետքի շուրջը։ Ամերիկան դժգոհ է նրանից, որ Ազգերի Լիգան, որ պարզ գործիք է Անգլիայի ձեռքում, Միջագետքի շահագործման իրավունքն Անգլիային է տվել և դրանով է Անգլիայի համար համաշխարհային մոնոպոլիա կանխապատրաստում՝ նավթային գործի ասպարիզում։ Այս դժգոհությունն ուժեղանում է Անգլո-Յապոնական զինակցություն կնքելու ազդեցությամբ։ Մյուս կողմից՝ Ամերիկան դժգոհ է նրանից, որ նույն Ազգերի Լիգան (իմա Անգլիան) իրավունք է տվել Յապոնիային տիրելու նախկին գերմանական Կաբելային կայարանին (Кабельная станция), որ գտնվում է Խաղաղ ովկիանոսի Յապ կղզում։ Բացի դրանից, Ամերիկան ձգտում է ապահովելու իրեն բացառիկ ազդեցությունը Չինաստանում, բայց այստեղ հանդիպում է Յապոնիային, որի համար Չինաստանն այնքան անհրաժեշտ ու համեղ պատառ է, որ չի հրաժարվի նրանից՝ հօգուտ Ամերիկայի։ Այս հողի վրա ծագում ու սրվում են հակասությունները։ Յապոնիան մերժեց Ամերիկայի առաջարկությունը՝ պատերազմական կառույցները մի տարով դադարեցնելու մասին, և Ամերիկայի նավաշինական ծրագիրը շարունակում է իրագործվել մեծ թափով։ 1924 թ. վերջին ամերիկական նավատորմիղը պիտի գերակշռի թե Անգլիայի և թե Յապոնիայի ծովային ուժերը, ընդ որում տենդային աշխատանք է թափվում նաև ցամաքային բանակ կանխապատրաստելու համար, որով Ամերիկան ուզում է հասնել Յապոնիային։ Վերջապես՝ տենդային թափով օդատորմ (воздушный флот) են կառուցում պատերազմ մղելու համար, ընդ որում այս յերկիրներից ամեն մեկն աշխատում է գերազանցել բոլոր մյուսներից։ Այսպիսով օդային միլիտարիզմի ուժերը չափազանց մեծանում են, իսկ այս դեռ չտեսնված մի վտանգ է աշխարհի համար, որը, պատերազմ ծագելու դեպքում, պիտի յենթարկվի ավելի մեծ ավերածությունների, քան անցյալ 1914—1918 թ. թ. պատերազմի ժամանակ.

Սակայն Յեվրոպայի սահմաններում էլ իմպերիալիստական հակասությունները չեն թուլանում։ Անգլիան զինվելով Ամերիկայի դեմ, ձգտում է միջին ու արևելյան Յեվրոպան, նույնպես և Ֆրանսիան, յուր գաղութները դարձնելու։ Ի հարկե, Անգլիան ժամանակավորապես պիտի հաշտվի Ֆրանսիայի ուժեղ դիրքի հետ, բայց այս միայն սրում է ծածուկ պայքարն այս յերկիրների միջև, որովհետև, յուր համաշխարհային գերիշխանությունն ապահովելու համար, Անգլիան պետք է Ֆրանսիային հասցնի յերկրորդական յերկրի աստիճանին։

Այսպիսով՝ աշխարհի բախտը տնօրինող յերկիրների կռիվները վերացնելու փորձերը ոչ միայն չեն թուլացնում ճգնաժամը, ոչ միայն առողջացման սկզբունք չեն պարունակում իրենց մեջ, այլ և ընդհակառակն, ավելի ևս սրում են իմպերիալիստական մրցությունը։

19. ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆ ՈՒ՞Ր Է ՏԱՆՈՒՄ

Խոշոր կապիտալիստական յերկիրների միջև տեղի ունեցող հարաճուն մրցումը տանում է նախ և առաջ դեպի այն, որ սպառազինումներն աճում են, զգալիորեն ավելի մեծ ծախսեր են լինում պատերազմական նպատակների համար, քան մինչև 1914—1918 թ. թ.։ Չնայած Ազգերի Լիգային, Խաղաղության Լիգային, Վաշինգտոնի կոնֆերենցիային, Գերմանիայի բռնի զինաթափման, համաշխարհային բուրժուազիան ու մանավանդ Ամերկայի, Անգլիայի, Յապոնիայի ու Ֆրանսիայի բուրժուազիան, սպառազինման գործն ավելի մեծ արագությամբ է առաջ տանում և այժմյան խաղաղ ժամանակվա բանակները քանակով շատ ավելի մեծ են, քան մինչև պատերազմը։

Արտաքին պատերազմներն եյական հատկանիշն են ամեն մի դասակարգային հասարակության։ Այս պատերազմները բորբոքվում են մանավանդ տվյալ դասակարգային հասարակության անկման շրջանում և կործանման նախօրյակին։ Այս օրենքից չեն կարող շեղվել ներկայումս աշխարհին տիրող չորս իմպերիալիստական պետությունները ել։ Անզուսպ թափով սրանք սլանում են դեպի նոր համաշխարհային պատերազմ։ Յեվ յեթե պրոլետարական հեղափոխությունն ավելի շուտ չհաղթե, այն ժամանակ գալիք պատերազմը, մատնելով մարդկությունը ամենադաժան զոհերի ու զրկանքների, կը թաղե կապիտալիզմն ու սկիզբ կը դնե ապադասակարգային հասարակության։

20. Ի՞ՆՉ ԴԵՐ Է ԿԱՏԱՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՆԿՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Խորհրդային Ռուսաստանի յոթ տարուց ավելի գոյություն ունենալն ակնհայտնի ապացույց է կապիտալիզմի ռազմա—հարձակողական ուժի անկման, ապացույց է այն բանի, որ կապիտալիզմը թույլ է Խորհրդային Հանրապետության միացյալ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական ուժի հանդեպ։ Կասկած չկա, որ մենք շատ զգալի չափով հենց այս ուժին ենք պարտական, որ տեխնիկապես ուժեղ իմպերիալիստական պետությունների ռազմական հարձակումը Խորհրդային Ռուսաստանի վրա շատ վտանգավոր է նրանց համար։

Խոշոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ մինչդեռ կենտրոնական ու արևելյան Յեվրոպան գնում է դեպի անկում, չնայած որ ավելի ուժեղ տնտեսական հիմք ունի, Խորհրդային Ռուսաստանը դիմում է դեպի վերելք, ավելի թույլ տնտեսական հիմք ունենալով հանդերձ։ Տնտեսական տեսակետից կազդուրվող Խորհրդային Ռուսաստանը զգալիորեն ամրացած է նաև սոցիալական տեսակետից. գյուղի և քաղաքի կապը խարսխված է այժմ ավելի ամուր հիմքի վրա, քան նախկին տարիներում. պրոլետարական իշխանությունն ավելի ամուր է, քան մի որևէ ուրիշ յերկրում, աշխատավորների կյանքի մակարդակն աստիճանաբար բարձրանում է։

Ռուսաստանը միակ յերկիրն է յեվրոպական ցամաքի վրա, որ ունի

արտադրության չորս հիմնական տարրերը — ածուխ, յերկաթ, բամբակ, և բացի սրանից հարուստ է սննդի գլխավոր տարրով — հացով: Բացի Ամերիկայից չկա մի այլ յերկիր, վորտեղ այնպես հաջողությամբ միանային այն բոլոր պայմանները, վոր անհրաժեշտ են սեփական ուժերով յուր գոյությունը պաշտպանելու համար: Ահա թե ինչու միջազգային հարաբերությունների ասպարեզում խոշոր շարժիչ ուժ է Ռուսաստանը, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը հանդիսանալով առայժմ ավելի հեղափոխական ուժ, իսկ քանի մյուս յեվրոպական կապիտալիստական յերկիրներում իշխանությունն անցնե բանվոր դասակարգի ձեռքը, կդառնա նաև տնտեսական ուժ:

Ռուսաստանի այս հաջողությունները ու նրա սոցիալական ու տնտեսական ուժի աճման աչքի ընկնող պրոցեսն արդեն այժմ էլ ավելացնում է յեվրոպական պրոլետարիատի գիտակցության ուժն՝ այն կռվի մեջ, վոր բանվորությունը մղում է կապիտալի հարձակման դեմ: Քանի վեր բարձրանա Խորհրդային Ռուսաստանն յուր տնտեսական բարօրության սանդուխի վրայով, — իսկ նրա ուժերն ու հնարավորությունն, ինչպես ասացինք արդեն, այս տեսակետից անսահման են, — այնքան յեվրոպական պրոլետարիատը քիչ հակված կը լինի զոհաբերություններ անելու կապիտալիզմի վերականգնման համար:

Այսպիսով, յեվրոպական պետությունների մեջ սոցիալական հարաբերությունների փոփոխության համար մղված կռվին մեծապես օգնում է Խորհրդային Ռուսաստանի գոյությունը, վորն այսպիսով հանդիսանում է կապիտալիզմի կործանման մի ուժեղ գործոն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ IV ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. Л. Троцкий. Новый этап.
2. Е. Варга. „Кризис мирового империализма“. Гос. Изд.
3. Е. Варга „Период упадка капитализма“, Доклад к IV конгрессу Коминтерна“ изд. Коминтерна.
4. М. Павлович. „Империализм“, изд. „Кр. Новь. стр. 52—63, 79—83, 147—150 219—222, 227—229.
5. К. Павлович. „Ф. Нитти. Европа без мира«. „Печать и революция“, книга I. 1923. г.
6. К. Бронский. „Проблемы мирового хозяйства“. Сб. „За 5 лет“ изд. „Кр. Новь“ 1922 г.
7. Кейнс. „Экономические последствия версальского мирного договора“. изд. «Кр. Новь, 1922 г.
8. Проф. М. И. Боголепов. „Европа после войны“ (*կարելի յե օգտագործել իբրև նյութ: Հեղինակի յեզրակացություններին համաձայնել չի կարելի*):
9. С. А. Фалькнер. „Послевоенная коньюнктура мирового хозяйства“.
10. С. А. Фалькнер. „Перелом в развитии мирового промышленного кризиса“.
11. Султан-Заде. „Кризис мирового хозяйства и новые войны“.
12. Профессор И. М. Кулишер. “Обзор мирового хозяйства за время войны и после войны, и состояние его к началу 1923 г. (*կարելի յե օգտագործել իբրև ամենահարուստ փաստական նյութ*):
13. Шульце. „Развал мирового хозяйства« (*Կարելի յե օգտագործել իբրև փաստական նյութ, վոր գեղեցիկ ու սիստեմաբար մշակված է*):

ԳԼՈՒԽ V

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1. ԻՆՉ ԳԻՏԵՆՔ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այժմ հաստատված է համարվում, վոր իրենց գոյության առաջին աստիճանների ժամանակ մարդկային հասարակություններն իրենց գործունեությամբ քիչ էին տարբերվում շրջապատող կենդանական աշխարհից: Այս գործունեության նպատակը գոյության կռիվ մղելն էր: Այդ կռվի մեջ մարդիկ գործում են յերկու ուղղությամբ. մի կողմից՝ նրանք դեռ շատ նախնական աստիճանի վրա կազմում են հանրային խմբակներ, մյուս կողմից՝ զարգացնում են կիրառությունը գործիքների, վորոնք ուժեղացնում ու գործածության համար ավելի հարմար են դարձնում նրանց սեփական օրգանները (քարը սաստկացնում է հարվածի թափը, փայտը ծառայում է իբրև ձեռքը յերկարացնող առարկա և այլն): Բայց, յեթե իրենց գործունեությամբ, իրենց գոյության ամենանախնական աստիճանի վրա, մարդիկ քիչ էին տարբերվում կենդանական աշխարհից, ապա գործիքների կիրառումը գոյության կռվում շատ վորոշակի զատեց մարդկային հասարակությունը կենդանականից: Կենդանին հարմարվելով իր ապրած միջավայրին, փոփոխում է իր օրգանները, ընդ վորում հառաջադիմությունը (զարգացումը), բուսական ու կենդանական աշխարհում, արտահայտվում է բնական օրգանների կատարելագործությամբ: Բայց այս կատարելագործությունն ընթանում է շատ դանդաղ, ընդ վորում կենդանական աշխարհն աչքի յե ընկնում նրանով, վոր համառորեն կառչում է կատարելության մի անգամ ձեռք բերած աստիճանից:

Բոլորովին տարբեր է կատարվում մարդկային հասարակության զարգացումը: Մարդու բնական օրգանները քիչ են կատարելագործվում. շատ հազարամյակների ընթացքում մարդու ձեռքերը, վոտքերն, աչքերն ու այլ օրգանները փոխվել են շատ աննշան չափով և այն էլ հազիվ թե ընթանալով դեպի ավելի մեծ զարգացում: Բայց, սրա փոխարեն, կուլտուրայի վորոշ աստիճանի վրա, շատ արագ է կատարվում նրա արհեստական օրգանների՝ գործիքների զարգացումը: Փայտը մարդու ձեռքին մի արհեստական գործիք է, վոր այսպես ասած, ծառայում է իբրև շարունակություն նրա բնական օրգանի՝ ձեռքի, իբրև նրա տեխնիքական կցորդը: Պարզ է, վոր բոլոր մյուս գործիքներն էլ — մուրճն ու կացինը, հերյունն ու սղոցը, դանակն ու քերիչը, փոցխն ու յեղանը, աքցանն ու լծակը, շոգեմեքենան ու ջուլհակի հաստոցը (станок) հեռախոսն ու հեռագիրը, էլեկտրական մեքենան ու մանրադիտակը, — գործիքների բարդացող այս ամբողջ սիստեմը ծառայում

է այն նպատակին, վոր աշխատանքի մեջ փոխարինեն մարդու բնական որգաններին և սրանց ուժեղացնեն։ Յեվ ահա՝ այս գործիքների կիրառումը, սկսած փայտից ու քարից մինչև ռադիո կայանը, մարդկային հասարակության ամբողջ զարգացումը բոլորովին այլ հողի վրա դրեց։ Կենդանին բնության ստրուկն է, մարդը նրա տերն է։

Իսկ ինչն է մարդուն դարձրել իշխող, ինչն է նրան բարձրացրել կենդանական աշխարհից վեր։ Գործիքները, տեխնիկան—ահա սրանք են նրան հասցրել կենդանի ու անկենդան բնության վրա իշխելու աստիճանին։

Մարդկային հասարակության գոյության առաջին աստիճանների վրա գործիքների կիրառությունը մեծ դեր չեր խաղում, վորովհետև մարդ ճարում եր իր սնունդն այն ձևով, ինչպես վոր այն տալիս եր բնությունը, և նրա պահանջներն էլ մեծ չեյին։ Սակայն նույնիսկ այն սահմանափակ պահանջները, ինչպես նաև նրան շրջապատող գիշատիչներից պաշտպանվելու կարիքը, մարդ կարող եր բավարարել միայն աշխատակցության միջոցով, միայն հասարակության մեջ, վորտեղ և կատարվում եր նրա ամբողջ տնտեսական գործունեյությունը։

Այսպիսով՝ դեռ իր գոյության առաջին աստիճանների վրա, մարդկային հասարակությունները շաղկապված են յեղել աշխատանքային տնտեսական գործունեությամբ ու գոյության կռվով, յեվ աշխատանքային գործունեության այս ընդհանրությունը ծնունդ է տվել այն ուժեղ սոցիալական զգացմունքներին, վորոնք մարդկային հասարակության մեծագույն նվաճումների աղբյուր են յեղել։

2. Ի՞ՆՉ ԵՐ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՄԲԱԿԸ

Նախնադարյան մարդկային խմբակը տոհմական միություն, համայնք եր։ Յուր տնտեսական գործունեյության ասպարեզում նախնադարյան տոհմային համայնքը դեռ ծանոթ չեր աշխատանքի բաժանմանը, վորովհետև աշխատանքի շատ պարզ գործիքները (քարը, փայտը, բրիչը) միատեսակ հնարավորություն եյին տալիս ոգտվելու նրանցից թե՛ տղամարդուն և թե՛ կնոջը։ Վորովհետև նախնադարյան համայնքում աշխատանքի բաժանում չկար, ուստի այնտեղ չկար նաև վորևե տիրություն ու հպատակություն. այն հիմնված եր հավասարության վրա։ Աշխատանքը, ընդհանուր բնակարանը, ընդհանուր սպառումը տոհմային համայնքը դարձնում են կոմմունիստական կազմակերպություն։ Առանձին մարդը սերտ կապված է և կախում ունի հորդայից (орда), ցեղից, արյունակից ազգականներից, և նրա մտքով էլ չի անցնում յուր անձնական սեփականությունը համարել վորսորդական հողամասը, խրճիթը կամ գործիքը. նա ոգտվում է այս բոլորից ուրիշների հետ միասին։ Այս նախնադարյան կոմմունիզմը պետք է համարել դեռ շատ անկատար, վորովհետև նրա հիմքը կազմում եր այն, վոր անհատը դեռ թույլ եր զարգացած, նրան ամբողջովին կլանում եր տոհմը։ Նախնադարյան կոմմունիզմի հավասարությունը, շահագործության բացակայությունը կապված է այն բանի հետ, վոր պահանջները չափազանց ցածր մակարդակի վրա յեին կանգնած և աշխատանքն շատ ցածր արտադրողականություն ուներ. տոհմական համայնքի ամբողջ հարստությունը տունն եր, հագուստը, կոպիտ զարդերն ու գործիքները, վորոնք հեշտու-

ցնում են սննդի հայթայթումն ու պատրաստումը (զենք, նավակ և պարզ տնային կարասիք)։ Պաշարներ չկային, սնունդը հայթայթվում եր որեցոր։ Այստեղից էլ ծագում եր ստրկության բացակայությունը. բանվորական ուժի պահանջ չկար, ուստի և նվաճված ցեղերի անդամներին ստրուկ չեյին դարձնում, այլ պարզապես վոչնչացնում եյին նրանց։ Ուրեմն նախնական տոհմային կոմմունիզմը մի հասարակություն եր, վոր կանգնած եր մարդկային զարգացման ամենացածր աստիճանի վրա և վորի արտադրող ուժերն ամենաթույլ չափով եյին զարգացած։

3. Ի՞ՆՉՊԻՍԻ ՏԵԽՆԻԿԱ ՈՒՆԵՐ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թեև մարդկային առաջին հասարակության գործունեյությունը սերտ կապված է գործիքների կիրառության հետ, բայց, յուր գոյության առաջին աստիճանների ժամանակ, այն հասարակությունը գործածում եր շատ չնչին քանակությամբ գործիքներ։ Գործիքները դեռ մարդը չեր շինում. նա գործածում եր միայն այն, ինչ վոր պատահմամբ ընկնում եր նրա ձեռքը, վորի շնորհիվ տեխնիկայի զարգացումն ընթանում եր շատ դանդաղ։ Կրակի գործածությունը վերաբերում է մարդկային հասարակության զարգացման շատ նախնական աստիճանին։ Կրակը գտնվել է պատահմամբ, ուստի և սկզբում կրակ չեյին կարողանում անել, այլ միայն պահպանում ու փոխադրում եյին։ Կրակ ստանալը պետք է վերագրել արդեն մարդկային հասարակության զարգացման ավելի հետագա շրջանին։

Նախնադարյան կոմմունիստական կազմակերպության աշխատանքը գրեթե բացառապես գործադրվում եր սնունդ հայթայթելու և վայրի գազանների դեմ կռվելու վրա. հենց այս էլ կազմում եր նախնադարյան կոմմունիստական հասարակության տնտեսական գործունեյության հիմքը։ Շնորհիվ այն հանգամանքի, վոր պահանջները չափազանց սահմանափակ եյին, տեխնիկան էլ սաստիկ ցած եր, ուստի և բնության իշխանությունը նախնական մարդկանց հասարակության վրա անսահման եր։ Ուրեմն՝ նախնադարյան տոհմային կոմմունիստական հասարակության մեջ վոչ թե մարդն է տիրում բնությանը, այլ ընդհակառակը, նա ինքը լիովին կախումն ունի բնությունից, և նրա՝ բնության ստրկացումից ազատագրվելը, քայլ առ քայլ տեղի յե ունենում աշխատանքի գործիքների զարգացման հետ միասին։

4. Ի՞ՆՉՊԵ՞Ս Է ԶԱՐԳԱՆՈՒՄ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՏՈՀՄԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Արտադրության հաջողությունները աստիճանաբար փոփոխում եյին տոհմային համայնքի կյանքի կազմակերպությունը։ Կենդանիների ընտելացումն ու հոտերի բազմացումը՝ հարստության մինչ այդ անծանոթ մի աղբյուր բացին և կյանքի կոչեցին բոլորովին նոր սոցիալական հարաբերություններ։ Հանձին այս հոտերի, խաշնարած ժողովուրդները ձեռք բերին մի այնպիսի սեփականություն, վոր յետ մղեց սննդի հայթայթման բոլոր նախկին աղբյուրները—վորսորդությունն ու ձկնորսությունը։ Սկզբում հո-

տերի այս սեփականությունը տոհմային եր, բայց շուտով դարձավ անհատական։ Անհատական սեփականությունը ծագում ե նաև ավելի վաղ, յերբ աշխատանքի բաժանման առաջին սաղմերն են գոյանում. բայց այն ժամանակ այս սեփականությունը վերաբերում ե միայն անձնական գործածության առարկաներին—զենքերին, զարդերին, հագուստին։

Կենդանիների ընտելացման ու խնամելու հետ ե միայն, վոր զարգանում ե նաև կենդանիների, իսկ հետո նաև մարդկանց վրա ունեցած անձնական սեփականության իրավունքը։ Բանն այն ե, վոր տոհմային համայնքի գոյության նախնական շրջանում, ինչպես արդեն մատնանշել ենք, ըստրկություն գոյություն չուներ, վորովհետև բանվորական ուժն ոգուտ չեր տալիս։ Բայց այս փոխվեց, յերբ ծագեցին խաշնարածությունը, հողագործությունը, մետաղների ու գործվածքների մշակումը։ Բանվորական ուժը դարձավ անհրաժեշտ, մանավանդ այն ժամանակվանից, յերբ հոտերը դարձան մասնավոր սեփականություն, իսկ ընտանիքները բազմանում եյին դանդաղ։ Հենց այդպիսի բանվորական ուժ հանդիսացան ռազմագերիները, վորոնց ստրուկ դարձրին։ Յերբ հոտերի ու ստրուկների ձևով գոյություն ունեցող հարստությունները դարձան մասնավոր սեփականություն, ապա նրանք արագ աճում եյին ու տանում դեպի հասարակության հետագա զարգացում, դեպի նրա մի վիճակ, յերբ հարուստներ ու աղքատներ են առաջ գալիս և զատվում իրարից։ Այսպես ե կատարվում տոհմային-համայնական կազմակերպության արագ կազմալուծությունը։

5. ԻՆՉՈ՞Ւ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՍ ՔԱՅՔԱՅՎԵՑ ՈՒ ԿՈՐԾԱՆՎԵՑ ՏՈՀՄԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԸ

Տոհմային-համայնական կարգի գոյության անհրաժեշտ պայմաններն եյին՝ քիչ զարգացած արտադրություն, ընդարձակ տարածության վրա նոսր բնակչություն և մարդու լիովին յենթարկվելը իրեն շրջապատող արտաքին բնությանը։ Յերբ այս պայմանները փոխվեցին՝ համայնական կյանքի նախկին շրջանակները նեղ հանդիսացան։ Այս շրջանակներն արգելք եյին դնում հասարակության հետագա զարգացման, ուստի և տոհմային կենցաղը (быт) պիտի անհետանար։

Հենց միայն սննդառության մթերքների հայթայթման բարելավումն արդեն հասցնում ե այն բանին, վոր արտադրական հարաբերությունները փոփոխվում են տոհմային համայնքի մեջ։ Յեթե ավելի վաղ ժամանակներում համայնքի մեջ աշխատանքային պրոցեսների միակերպություն ե իշխում, ապա քանի մեծանում ե տոհմը՝ նրա տնտեսական գործունեյությունն ավելի բազմազան ե դառնում և առաջ ե բերում աշխատանքի բաժանում։ Աշխատանքի բաժանման հետ միասին՝ տեղի յե ունենում նաև այն, վոր հատուկ-կազմակերպչական ֆունկցիան (գործը) բաժանվում ե անմիջական արտադրական աշխատանքից։ Տոհմապետի այս կազմակերպչական աշխատանքը, քանի գնում, ավելի անհրաժեշտ ու ազդեցիկ ե դառնում՝ կապ ունենալով արտադրության բարդանալու, խաշնարածության ու նստակյաց հողագործության անցնելու հետ։ Այն սահմանված կարգը, վոր վորդիներին իրավունք եր տալիս „հայրերի գույքը ժառանգելու, այն հետևանքն ունեցավ, վոր հարստությունները սկսեցին կուտակվել առանձին

ընտանիքների ձեռքում, և վերջիններիս նշանակությունն աճում եր ի հաշիվ տոհմի միացած մասի։ Իհարկե, կազմակերպիչ-տոհմապետն, ոգտվելով տոհմի մեջ ունեցած յուր դիրքից, սեփականում ե համայնքի աճող հարստության մի մասը։ Առաջ ե գալիս անհավասարություն տոհմային համայնքի մեջ, և այս անհավասարությունն, իհարկե, ազդում ե համայնքի հասարակարգի վրա. այս անհավասարությունը դասակարգերի—սեփականատերերի ու ստրուկների, հարուստների ու աղքատների—առաջացման սկիզբըն եր։

Ստրկությունն այս շրջանում սահմանափակվում ե ռազմագերիներով, բայց արդեն կան նշաններ, թե այն կանգ չի առնի այս կետի վրա։ Յեվ իրոք՝ ցեղերի միջև տեղի ունեցող նախկին պատերազմները փոխվեցան սիստեմատիկ ավազակության, վոր մղվում եր անասուններ, ստրուկներ ու զանազան հարստություն ձեռք բերելու համար։ Ձեռք բերվածը համարվում եր որինական սեփականություն։ Տոհմային համայնքը, վոր այնուամենայնիվ պահպանել եր կոմմունիստական անցյալի ավանդը, և վորի անդամների մի մասն աղքատացած եր՝ չեր կարող այդ թալանի ու տոհմային կարգերի չարարկության (злоупотребление) համար ամուր հենարան հանդիսանալ։ Զարգացող սեփականության հիմունքներից սկիզբն առավ և հանդես յեկավ մի այնպիսի հիմնարկություն ստեղծելու պահանջ, վորը բավականաչափ հարգանքով վերաբերվեր մասնավոր սեփականության ինստիտուտին, հանձն առներ նրա պաշտպանի դերը և որենքով սրբագործեր թալանի հետագա նոր ձևերը—սեփականության յուրացումը։ Պետք եր մի այնպիսի հիմնարկություն, վոր ամրապնդեր դասակարգի նորածագ բաժանումը, պահապան կանգներ չքավորների շահագործման՝ հարուստների կողմից և հաստատեր հարուստների տիրապետությունը։ Յեվ այսպիսի հիմնարկություն գտնվեց։ Ծագումն առավ պետությունը։

6. Ի՞ՆՉՊԵՍ Ե ԾԱԳԵԼ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն ասել ենք վերևում, տոհմային-համայնական տնտեսության զարգացման մի վորոշ աստիճանի վրա՝ հովվական ցեղերը զատվել են այն մյուս ցեղերից, վորոնք պարապում եյին վորսորդությամբ, ձկնորսությամբ ու հողագործությամբ, և այդ զատումն առաջ բերեց աշխատանքի առաջին նկատելի բաժանումը, վոր տեղի ունեցավ հասարակությունների միջև։ Հովվական ցեղերի հոտերը մի այնպիսի հարստություն եյին, վոր հեշտությամբ բազմանալով՝ քիչ աշխատանք թափելով, տալիս եր վոչ միայն առատ կաթնեղեն ու մսեղեն սնունդ, այլ և կողմնակի արդյունքներ—կաշի, բուրդ, մազ, վորոնցից սկսեցին պատրաստել զանազան իրեր։ Այս աշխատանքի բաժանումն առաջ բերեց արդյունքների կանոնավոր փոխանակություն, վոր կատարվում եր առանձին ցեղերի միջև։

Անասնապահության, հողագործության ու տնային արհեստի մեծացած արտադրողականությունը հնարավորություն տվեց մթերքների մի այնպիսի քանակություն ստանալու, վոր գերազանցում եր նրանց հասարակական պահանջից։ Միևնույն ժամանակ շատացավ աշխատանքի այն քանակը, վոր բաժին եր ընկնում տոհմի կամ առանձին ընտանիքի ամեն մի անդամին։ Բանվորական ուժն, ի դեմս ռազմագերիների, վոր առաջ

գին չունեին, ուստի և վոչնչացվում էր, այժմ աշխատանքային արժեք է ստանում համայնքի աչքին և համայնքները սկսում են ձգտել, վոր ռազմագերիներ ձեռք բերեն։ Պատերազմներն էլ, վոր այն ժամանակ անպակաս էին, դարձան այն աղբյուրը, վորտեղից ստացվում էին ռազմագերիներ, վորոնք դառնում էին ստրուկներ և աշխատում էին համայնքի ու առանձին ընտանիքների տնտեսության մեջ՝ ստանալով միայն ապրուստ (содержание)։

Այսպիսով, աշխատանքի առաջին նկատելի բաժանումը, վոր գոյություն ուներ հասարակությունների միջև, այն է՝ անասնապահության ու հողագործության բաժանվելը — ավելացնելով աշխատանքի արտադրողականությունը, հետևաբար նաև հարստությունն — այն ժամանակվա պատմական պայմաններում անխուսափելիորեն հանգեց ստրկության հաստատմանը։ **Աշխատանքի առաջին նկատելի հասարակական բաժանումից առաջ յեկավ հասարակության առաջին բաժանումը դասակարգերի՝ տերերի ու ստրուկների, շահագործողների յեվ շահագործվողների։ Ծագելով դեռ տոհմային կենցաղի պայմաններում, ստրկությունը քանդում է տոհմային-համայնական տնտեսության ու կենցաղի ինքնամփոփ կազմակերպությունը յեվ սկիզբ է դնում նոր՝ ստրկատիրական հասարակության գոյացմանը։**

7. Ի՞ՆՉ ՏԵԽՆԻԿԱ ՈՒՆԵՐ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱ՞Ն ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒ՞ՆԸ

Տնտեսության մեջ հողագործության գերակշռող նշանակություն, յերբ անասնապահությունն արդեն ստորադաս դեր է կատարում, այլ և նստակյաց կյանք՝ յերբ դեռ բավականաչափ հողային ազատ տարածություններ կան, — ահա ստրկատիրական հասարակության տեխնիկական պայմանները։

Ստրկատիրական հասարակությունը կարող էր ծագել աշխատանքի արտադրողականության զարգացման վորոշ աստիճանի վրա միայն։ Վորսորդական ժողովուրդները, վորոնց աշխատանքի արտադրականությունը շատ ցածր էր, չէյին կարողանում պաշար պատրաստել։ Թափառական կյանքի ժամանակ ուտելիքի պահպանությունն առհասարակ շատ դժվար է։ Վորսորդական աշխատանքի ժամանակ՝ ծախսված էներգիան տեղն ու տեղն էլ վերականգնվում էր ձեռք բերված սննդի գործադրությամբ. հավելյալ արդյունքի ու հավելյալ աշխատանքի կարիք չէր կարող լինել։ Պարզ է, վոր վորսորդական ժողովուրդների մեջ ստրկություն չէր կարող լինել, ուստի և այն շատ քիչ էր տարածված։ Հովվական ժողովուրդների մեջ ստրկությունը պատահում է արդեն ավելի հաճախ, բայց դեռ լայն տարածում չի ստանում։ Ստրկությունը դառնում է հատուկ հասարակարգ միայն այն ժամանակ, յերբ աշխատանքի արտադրողականությունն այնքան է շատանում, վոր աշխատավորը կարող է արտադրել ավելցուկ, ավելի քան այն, ինչ վոր անհրաժեշտ է նրա սեփական կյանքի պահպանության համար։ Յերբ աշխատանքը սկսում է այսպիսի ավելցուկ տալ, առաջ է գալիս մարդու բանվորական ուժն ոգտագործելու դրդապատճառ, մի ուժ, վոր այն ժամանակ կարելի էր աշխատանքի լծել միայն ստիպողաբար, (գործավորի ռազմագերու ստրուկ դարձնելը)։

Այն աշխատանքը, վոր գործադրվում էր վորսորդական ու ձեռքի հավաքական տնտեսության վրա, չէր կարող դեռ բավականաչափ արտադրողական լինել, վորովհետև այստեղ գործիքների կիրառումը շատ սահմանափակ էր։ Միայն յերբ հողագործությունը զարգանում է, այսինքն՝ յերբ նստակյաց հողագործական կուլտուրա յե առաջ գալիս, գործիքների կիրառման շնորհիվ հնարավորություն է ստացվում աշխատանքի արտադրողականությունը զարգացնելու։ Բնակչության բազմացումը պահանջում է վոր կենսամիջոցների (жизненные средства) այն ժամանակվա գլխավոր աղբյուրը այսինքն՝ հողն ավելի ու ավելի ոգտագործվի։ Այդ ոգտագործումը կարող էր իրագործվել յերկու կերպ. 1) մշակելի հողի մակերեսն ընդլայնելով և 2) հողի միևնույն մակերեսի մշակումը բարելավելով։ Քանի բավական քանակությամբ ազատ հող կար, բնականաբար ոգտագործումն ընթանում էր ի հաշիվ մակերեսի ընդլայնման։ Այդ ընդլայնումը պահանջում էր մեծ քանակությամբ աշխատող ձեռքեր, վոր ցեղի անդամները կարող էին ունենալ միայն ի դեմս այն բանվորական ուժի, վոր նրանց տնտեսության համար կողմնակի անձեր էին, այսինքն՝ ի դեմս ստրուկների, վորոնք արտադրության միջոցների հետ միասին տնտեսության պետի սեփականությունն էին կազմում։

Ուրեմն՝ ստրկությունը զարգացել է հիմք ունենալով նստակյաց հողագործական կուլտուրան։ Հետագայում, յերբ ազատ հողերը նվազում են ու յերևան է գալիս հողը լավ մշակությամբ ոգտագործելու անհրաժեշտությունը, ստրկական աշխատանքն արդեն սկսում է արգելք դառնալ հողագործության արտադրական ուժերի զարգացման համար. ուստի և ստրկատիրական հասարակությունը պիտի քայքայվեր՝ զիջելով յուր տեղը նոր հասարակարգին — ֆեոդալականին (ավատականին)։

Ստրկությունը կարող է գոյություն ունենալ թե բնական և թե փոխանակային տնտեսության պայմաններում։ Սակայն ստրկությունը յուր զարգացման գագաթնակետին հասնում է գլխավորապես բնատնտեսության ժամանակ։

8. Ի՞ՆՉՊԻՍԻ ԱՐՏԱԴՐԱԿԱ՞Ն ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՅԻ՞Ն ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱ՞Ն ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱ՞Ն ՄԵՋ

Արտադրական հարաբերությունները, այսինքն՝ մարդկանց աշխատանքի պրոցեսում ունեցած հարաբերությունները փոխվում են հասարակական տեխնիկայի փոփոխության զուգընթաց։

Տոհմային-համայնական կացությունից ստրկատիրականին անցնելիս, հանրային տնտեսության տեխնիկական հիմքերի փոփոխությունն այն էր, վոր տնտեսության մեջ գերակշռող նշանակություն ունեցավ հողագործությունը, վորը հիմնված էր հողի բավականաչափ ազատ տարածության վրա։ Դեռ ևս թույլ զարգացած տեխնիկայի և աշխատանքի թույլ բաժանման շնորհիվ հողագործությունը կարող էր հանրորեն-արտադրողական (общественно-производительный) լինել միայն այն ժամանակ, յերբ մասսայորեն ստրկական աշխատանք կիրառվեր։ Ստրկական աշխատանքի մեջ մարդ դառնում է մի առարկա, վոր կազմում է յուր տիրոջ կատարյալ սեփականությունը. այստեղ վոչ թե մարդու բանվորական ուժն է ապ-

րանք հանդիսանում (ինչպես կապիտալիստական տնտեսակարգի մեջ), այլ ինքը մարդը, ամբողջ նրա անձն անբաժան կերպով։

Այսպիսի պայմաններում արտադրական հարաբերությունները ստրկատիրական հասարակության մեջ հիմնված եյին յերկու դասակարգերի սուր հակադրության վրա. ստրկատերերի դասակարգի, վորոնք անխղճորեն շահագործում եյին ստրուկներին, քամելով նրանցից հավելյալ աշխատանք, և իրավազուրկ ստրուկների դասակարգի, վորոնք դրված եյին միևնույն մակարդակի վրա, վորի վրա գտնվում եյին աշխատանքի գործիքները։

9. Ի՞ՆՉ ԵՐ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱ՛Ն ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒ՛ՆԸ

Թեև ստրուկներ կային նաև տոհմային—համայնական հասարակարգի մեջ, բայց սրա տնտեսական կյանքում ստրկությունը քիչ թե շատ աչքի ընկնող դեր չեր խաղում։ Ստրկությունն արտադրության մեջ վորոշիչ դեր սկսում ե կատարել տնտեսության ստրկատիրական սիստեմի ժամանակ միայն։

Այս հասարակության մեջ, ստրկատիրական տնտեսության հետ միասին, կային բավական թվով մանր հողագործական տնտեսություններ, վորոնց մեջ ստրուկ չկար, կամ գրեթե չկար։ Ստրկության ծաղկյալ շրջանում գյուղացիական տնտեսությունները բավական տարածված եյին։ Սակայն՝ այդ դարաշրջանի կյանքի ընդհանուր բնույթը վորոշում եր վո՛չ թե հասարակության այդ մասը, վո՛չ թե գյուղացի-հողագործներն, այլ ստրկատերերը. վորոնք ստրկատիրական հասարակության խոշորագույն տնտեսական ույժն եյին հանդիսանում։

Յեվ այդ հասկանալի յե, յեթե ուշադրության առնենք, վոր ստրկության ծաղկյալ շրջանում ստրուկների քանակը գերազանցում եր ազատ բնակչության քանակից։ Այսպես, որինակ, Հռովմեյական կայսրության մեջ, ստրկության ամենածաղկյալ շրջանում, հաշվվում եր 13—14 միլիոն ստրուկ, մինչդեռ ազատ քաղաքացիների թիվը 6—7 միլիոնից ավելի չեր։ Ստրուկների թվի նույնպիսի գերազանցություն՝ ազատ քաղաքացիների թվի նկատմամբ, կար նաև հին Հունաստանի մեջ, սրա վորոշ դարաշրջանում։ Այս պայմաններում, ի հարկե, ստրկատիրական տնտեսությունը տիրապետող եր տնտեսապես և բոլորովին իրեն եր յենթարկում մանր գյուղացիական տնտեսությունը։

Ստրկատիրական հասարակության մեջ արհեստը, վորպես ինքնուրույն պարապմունք, գոյություն չուներ։ Ստրկատիրական տնտեսությունը փակ տնային տնտեսության ամենակատարյալ տիպարն ե. մանավանդ վոր ինքը՝ ստրկությունն ել միջոց եր նախորդ տոհմային-համայնական շրջանի փակ տնտեսությունը քայքայումից պահպանելու, այն զանազանությամբ, վոր այս անում եր վերջին տնտեսության պահանջները լայնացնելով ու արտադրող ույժերը զարգացնելով։ Վորքան շատ ստրուկ կար տնտեսության մեջ, այնքան ավելի ընդարձակ եր ինքը՝ տնտեսությունը և այնքան ավելի բազմազան եր նրա մեջ նյութեղենների հայթայթման ու մշակման տեխնիկան։ Այսպես եր հույների, կարթագենացոց, հռոմայեցոց ու այլ ժողովուրդների տնտեսությունը։ Ստրկական աշխատանքի վրա խարսխված ստրկատիրական տնտեսության այս տնտեսական ինքնավարությունը, այսինքն ինքնամփոփությունը, բավական մեծ դեր ե կատարել ստրկատիրական հասարակության ու մանավանդ հին Հռոմի տնտեսական ու սոցիալական պատմության մեջ։

Ստրկատիրական շրջանի տնտեսությունը, վոր հիմնվում եր ստրկական աշխատանքի վրա, պահանջում եր, վոր ստրուկների թիվը մշտապես ավելանա, հետևաբար և մշտական պատերազմներ մղվեն։ Պատերազմներն, ուժեղացնելով ստրկատիրական տնտեսությունը, ամենավնասակար կերպով եյին անդրադառնում մանր հողագործների տնտեսության վրա, վորոնք կազմում եյին գլխավոր ռազմական ույժը։ Մի կողմից՝ կրելով պատերազմի ծանրությունները, իսկ մյուս կողմից՝ քայքայվելով եժանագին բանվորական ույժ (ստրկական) ունեցող խոշոր ստրկատիրական տնտեսության մրցումից,— մանր գյուղացիները տնտեսապես թուլանում եյին, և հարուստ ստրկատերերը վտարում եյին նրանց իրենց հողաբաժիններից։ Հողազուրկ, թեև ազատ, գյուղացիք զրկված եյին գոյության վորևե հնարավորությունից, վորովհետև տնային փակ տնտեսությունից դուրս, արդյունաբերություն, վորպես ինքնուրույն պարապմունք, գոյություն չուներ. չկար վարձով բանվորական ույժ գնող ձեռնարկուական կապիտալ. այն ժամանակվա արհեստավորական արտադրությունը վո՛չ թե արհեստավորների ազատ աշխատանք եր, այլ մի վորևե արտադրության մեջ մասնագիտացած ստրուկների աշխատանք եր լոկ։ Այսպիսի պայմաններում հողազուրկ գյուղացիք պիտի կամ ստրուկ դառնային, կամ պրոլետար, այսինքն՝ այնպիսի մարդիկ, վորոնք սեփականություն չունեն, բայց միաժամանակ նաև հնարավորություն չունեն վորևե տեղ արտադրականորեն գործադրելու իրենց աշխատանքը (փակ ստրկատիրական տնտեսությունից դուրս)։

Ստրկատիրական հասարակության այդպիսի կազմությունը յուր վոչընչացման սկզբունքները պարունակում եր յուր մեջ։ Ստրկական աշխատանքը, վորը յուր արտադրողականությամբ ամենացած աշխատանք եր, այս պատճառով չեր կարող անվերջ աղբյուր լինել հասարակական հարստության, վորովհետև այս հարստությունը կարող եր ավելանալ միայն ստրկական աշխատանքի մասսայական ու հարաճուն կիրառությամբ։ Սակայն ստրուկների քանակի ավելացմանը սահման եր դրված, իսկ չափազանց շահագործությունը քանի գնում, ստրուկների աշխատանքն ավելի քիչ արտադրողական եր դարձնում. ստրուկների ամենասաստիկ մահացությունը, նրանց՝ շահագործությանը ցույց տրվող դիմադրությունը, վոր արտահայտվում եր ստրուկների փախստով, ապստամբություններով և այլն, այն տեղը հասցրեց, վոր հասարակական հարստությունը սկսեց ընկնել և ստրկատիրական հասարակարգն սկսեց տնտեսապես հետադիմել (քայքայվել)։ Այսպիսով՝ **ստրկական աշխատանքը, վոր նպաստել եր ստրկատիրական հասարակության ծաղկմանը, ինքն իսկ դարձավ այն հասարակության կործանման պատճառը։**

10. Ի՞ՆՉ ԴԵՐ Ե ԿԱՏԱՐԵԼ ՍՏՐԿՈՒԹՅՈՒ՛ՆԸ ՄԱՐԴԿՈՒԹՅԱ՛Ն ՊԱՏՄՈՒԹՅԱ՛Ն ՄԵՋ

Տոհմային կոմմունիստական հասարակությունը, վոր յերկար դարաշրջանի ընթացքում գոյություն ուներ, շատ դանդաղ զարգացող մի տնտեսական կազմակերպություն եր։ Այդ հասարակության բնատնտեսությունը,

վորի տեխնիկան շատ ցածր էր և վորի մեջ աշխատանքի թույլ հասարակական բաժանում գոյություն ուներ, այլ և համայնքի անդամների պահանջները սահմանափակ էին, այնպիսի մի տնտեսական կազմակերպություն էր, վոր մի վորոշ սահմանից դուրս չէր կարող զարգանալ: Միայն շնորհիվ աշխատանքի հասարակական այն բաժանման, վոր գոյություն ուներ ըսպառման արդյունքների արտադրությամբ զբաղված բնակչության մասսայի ու արտոնյալների փոքրաթիվ խմբի միջև, վորոնք զբաղված էին աշխատանքի ու փոխանակության կազմակերպությամբ, ինչպես նաև ռազմական ու պետական գործերով, իսկ ավելի հետո գիտությամբ ու արվեստով,—կարելի յեր դուրս գալ տոհմային-համայնական տնտեսության փակ շրջանակից և անհատական աշխատանքի ցածր արտադրողականությամբ հանդերձ հասնել արտադրող ուժերի ու կուլտուրայի այն զարգացման, վոր այն ժամանակվա համար կարելի յե վիթխարի համարել:

Ստրկությունն աշխատանքի բաժանման ձևերից մեկն էր, ընդ սմին մի այնպիսի ձև, վոր հնարավորություն տվեց աշխատանքի այս բաժանումը մեծ չափով կատարելու վոչ միայն տնտեսության միևնույն ճյուղի սահմանում, այլ և հողագործական ու արդյունաբերական տնտեսությունների միջև: Վորքան ավելի ընդարձակ էր ստրկատիրական տնտեսությունը, վորքան ավելի շատ ստրուկ ուներ, այնքան ավելի լայնորեն էր նրա մեջ կիրառվում աշխատանքի բաժանումն ու մասնագիտացումը: Այսպիսի տնտեսությունների մեջ հնարավոր յեղավ ստրուկների ամբողջ խմբերով մեծ հողաբաժիններ մշակել. վորոշ տեխնիկական աշխատանքներ, ինչպես որինակ հացահատիկներ կալսելը, հաց թխելը, մանելը, գործելը, տնասուն պահելը, գործիքներ պատրաստելը, հագուստ կարելը, դարբնի ու հյուսնի աշխատանքները և այլն, հանձնարարվում էին առանձին ստրուկների և այս դառնում էր նրանց համար ցմահ պարապմունք, վորի շնորհիվ, ցածր տեխնիկա ունենալով հանդերձ, աշխատանքի աչքի ընկնող կատարելություն էր ձեռք բերվում:

Ստրկությունը հնարավորություն տվեց հանդես գալու պատմության մեջ ազատ ու հարուստ դասակարգին, վոր ազատ ժամանակ ուներ և միաժամանակ սկզբում կապված էր արտադրության հետ: Սրա շնորհիվ, ստրկության շրջանում, շատ կարևոր գյուտեր են արված. զանազան տեսակ հասարակական ու մասնավոր շինություններ շինելու, ճանապարհներ, կամուրջներ, ջրանցքներ, ջրմուղներ կառուցելու, արհեստական վոռոգման ճարտարապետական աշխատանքների, նավաշինության, մետաղների մշակության, գործվածքների ու վոտնաման պատրաստելու ասպարեզում գյուտերը մեծ ծավալման հասան: Հողագործության մեջ նույնպես բավականաչափ բարելավումներ կատարվեցին, թե գյուղատնտեսական կուլտուրայի կազմակերպության և թե տեխնիկայի ասպարեզում[1]:

[1]) Ստրկության՝ հասարակության զարգացման պատմության մեջ ունեցած նշանակությունը Ֆ. Էնգելսը գնահատում է հետևյալ խոսքերով (Անտի-Դյուրինգ. էջ 98, հրատ. „Московский Рабочий“). «Միայն ստրկության է պարտական յուր ծաղկումը հին աշխարհը՝ հելլենիզմը: Առանց ստրկության, գոյություն չէր ունենա հունական պետությունը, հունական արվեստն ու գիտությունը, գոյություն չէր ունենա նաև հռոմեական կայսրությունը: Հունական ու հռոմեական աշխարհի հիմքերի վրա չի զարգացել ժամանակակից Եվրոպան. հետևաբար, առանց ստրկության չէր կարող զարգանալ նոր քաղաքակրթությունը: Մենք չպետք է մոռանանք, վոր

Հնարավորություն տալով հին աշխարհին կուլտուրայի բարձր աստիճանի հասնելու, ստրկությունը նաև ստրկատիրական կարգի գերեզմանափորի դերը կատարեց, վորչափ վոր արտադրական ուժերի զարգացումը, վոր հիմնված էր ստրկական աշխատանքի վրա, վորոշ սահմանից այն կողմն անցնել չէր կարող[1]:

11. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ Ի՞ՆՉՊԻՍԻ ՁԵՎԵՐԻ ՀԱՍՑՐԵՑ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ԱՆԿՈՒՄԸ

Ստրկական տնտեսության անկումը հատկապես ցայտուն կերպով արտահայտվեց Հռոմեական կայսրության մեջ: Ստրկատիրական տնտեսության ձեռք բերած տնտեսական հառաջադիմությունը հասան ազատ գյուղացիության պրոլետարացման (пролетаризация), սրա՝ արտադրության միջոցներից—հողից զրկվելու գնով: Հռոմեական կայսրության մեջ մանր հողագործը կործանվեց այն պատճառով, վոր, մի կողմից՝ նրա վրա դրված պետական պարտականությունները, ինչպես որինակ՝ զինվորական ծառայությունը, նրա ուժից վեր էին, իսկ մյուս կողմից պատերազմներն ու սովը նրան ձգեցին պարտային ծառայագրության (долговая кабальность) ու աղքատության մեջ: Գյուղացիության տնավերությունն արագանում էր նաև խոշոր գյուղական տնտեսության զարգացմամբ: Հողագործության մեջ հարյուրավոր ստրուկների աշխատանքը կիրառելով, խոշոր հողատերը շուկա յեր հանում մեծ քանակությամբ էժանագին հացահատիկ. հաղթված ազգերը, հաճախ իբրև տուգանք, Հռոմին մեծ քանակությամբ ձրի հացահատիկ էին մատակարարում: Այսպիսով, մանր հողագործին բոլորովին ձեռնտու չէր լինում ծախելու համար հացահատիկ արտադրելը:

Մյուս կողմից՝ սկսում է նկատվել նաև խոշոր գյուղական տնտեսության անկում: Հողատերերը, վորոնց լատիֆունդիաները (խոշոր հողային կալված) ստրուկների ուժերով մշակելն ավելի ու ավելի դժվարանում էր, վորովհետև ստրուկների թիվը պակասում էր ու սրանց աշխատանքը ցածր արտադրողականություն ուներ, բնականաբար իրենց հողերն ոգտագործելու համար պիտի նոր ձևեր փնտրեին: Սկզբում նկատվում է, վոր լատիֆունդիաներում հողագործության փոխարինում է խաշնարածությունը, վորպես տնտեսության մի ճյուղ, վոր ավելի քիչ թվով ստրուկներ է պահանջում: Բայց հողագործական տնտեսության անկումն այս կետի վրա չի կանգնում. բերքը նվազում է, դաշտերը լքվում են, հողի կոլեկտիվ մշակությունն ստրկական աշխատանքով, արդեն չի դրդում տնտեսություն վարելու: Այսպիսի դրդապատճառ պետք էր փնտրել այն բանի մեջ, վոր արտադրողը շահագրգռված լիներ յուր աշխատանքի արդյունքներով:

մեր ամբողջ տնտեսական, քաղաքական և մտավոր զարգացումն իրեն նախապայման է ունեցել մի հասարակարգ, վորի մեջ ստրկությունն անհրաժեշտ տարր էր հանդիսանում»: Ստրկատիրական հասարակության այսպիսի սուր և բարդ յերևույթին ճիշտ գնահատություն տվել է Ֆ. Էնգելսը բանակռիվ մղելով մանր-բուրժուական սոցիալիստ Դյուրինգի դեմ, վոր խեղաթյուրված կերպով էր բացատրում պատմական զարգացման պրոցեսը:

[1]) Այսպես է պատմության օրենքը. պրոլետարիատը, վորի ուսերի վրա բարձրացել է ամենից ուժեղ ու փարթամ կապիտալիստական կուլտուրան, միևնույն ժամանակ միակ դասակարգն է, վոր կապիտալիզմին կործանում է պատրաստում, վերջինիս արտադրական ուժերի ավելի բարձր զարգացման հիման վրա ստեղծելու ավելի բարձր կոմմունիստական կուլտուրա:

Այս անհրաժեշտության դրդմամբ՝ հռոմեական կայսրության կառավարությունն աշխատում էր գաղթականներ բնակեցնել լքյալ հողերի վրա, տալով սրանց հողամասեր ձեռնտու պայմաններով, վորպեսզի սրանք վորոշ տուրքեր ու հարկեր վճարեին։ Նույն ուղին բռնեցին նաև մասնավոր հողատերերը, վարձակալության տալով հողերն այն հողագործներին, վորոնք հոժարում եյին վերցնելու այն հողերը վորոշ մյուլք (оброк) վճարելու պայմանով։ Այսպես, առաջ յեկավ ազատ կոլոնատը (կոլոն նշանակում է ազատ հողագործ)—մանր հողատերերի դասը, վորոնք վարում եյին իրենց սեփական տնտեսությունը՝ պետական կամ մասնավոր հողի վրա, վորոշ չափով պարտավորություններ հանձն առնելով։

Խոշոր հողագործության անկումը, ազատ գյուղացիության կողքին՝ առաջ բերեց նաև անազատ գյուղացիություն, յերբ վարձակալ-հողագործ եյին դառնում ստրուկները, վորոնք հողաբաժիններ եյին ստանում օգտվելու՝ իբրև մյուլք վճարելով բերքի մի մասը կամ դրամ և յերբեմն էլ հողատիրոջ տնտեսության մեջ աշխատանքով ծառայելու պայմանով (կոռ—барщина)։ Այսպիսով հողագործական տնտեսության խոշոր ստրկատիրական սիստեմի անկումը հասցրեց այն վիճակին, վոր հողն անհատական մշակության առարկա դարձավ, իսկ այս բանն առաջին պահին ուժեղացնում էր աշխատանքի արտադրողականությունը՝ ստրուկի չափազանց ցածր աշխատանքի համեմատությամբ։

Սակայն գյուղացիական մանր տնտեսության այս ձևն էլ անբավարար դուրս յեկավ։ Գյուղացիների, մանավանդ նախկին ստրուկների ու պրոլետարների միջից դուրս յեկածների մյուլքային ու կոռային աշխատանքը յուր տեխնիկայով ու արտադրողականությամբ չէր կարող բարձր լինել։ Հողի ընկնող հասութաբերությունը (доходность) հարկադրում էր հողատերերին ավելացնելու գյուղացոց պարտավորությունները, վորով նրանց աշխատանքը գրեթե բացառապես գնում էր տերերի օգտին, և նրանք դատապարտվում եյին աղքատ կյանքի։ Գյուղացիների մեջ սկսեց նկատվել փախուստ հողից, գավառներում հաճախ լինում եյին ապստամբություններ։ Բանակի կարիքներն ու մշտական պատերազմներն իրենց ամբողջ ծանրությամբ նույնպես ծանրանում եյին գյուղացիների ուսերին։ Այսպիսի պայմաններում գյուղական տնտեսությունը չէր կարող վերածնվել կոլոնատի միջոցով։ Ստրկատիրական կուլտուրան ու տնտեսական սիստեմը վերջնականապես պիտի վերանային պատմության ասպարեզից։

12. ԻՆՉ ՀԱՍԱՐԱԿԱՐԳ ՀԱՋՈՐԴԵՑ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆԻՆ

Յերբ ստրկական աշխատանքի վրա հիմնված խոշոր արտադրությունն անհնարին դարձավ, այն ժամանակ հողագործության մեջ խոշոր արտադրության տեղը բռնեց կոլոնատը, վորի զարգացումը հասցրեց միջնադարյան ճորտական-կալվածային կամ ֆեոդալական[1]) տնտեսության։ Յեթե յերևակայենք մի ամբողջ գյուղի տնտեսություն, իբրև մի ամբողջություն՝ հենված կալվածատիրոջ դաստակերտի (усадьба) վրա, վորն այս տնտեսության կազմակերպչական-արտադրական կենտրոնն էր, այն ժամանակ գաղափար կստանանք միջնադարյան կալվածային կամ ֆեոդալական հասարակարգի մասին, վոր առաջ յեկավ անմիջապես ստրկատիրական հասարակարգի զարգացումից։

[1]) „Ֆեոդ“ բառը նշանակում է կալված, այստեղից՝ ֆեոդալ նշանակում է կալվածատեր, ֆեոդալական հասարակարգ—մի հասարակարգ, վորտեղ տիրապետում է կալվածատերերի դասակարգը։

13. ԻՆՉՊԻՍԻ ՏԵԽՆԻԿԱ ՈՒՆԵՐ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ

Ստրկատիրական հասարակության ու նրա տնտեսության քայքայումը, տնտեսություն, վոր հիմնված էր խոշոր, բայց տեխնիկապես հետամնաց հողագործության վրա, այլ և նրա անցումը դեպի ֆեոդալական տնտեսակարգը կապված է արտադրության տեխնիկայի փոփոխությունների հետ։ Այդ փոփոխությունները գլխավորապես կատարվում են վոչ թե հողագործության ասպարեզում, վոչ թե գյուղում, այլ քաղաքում, արհեստային աշխատանքի շրջանում։

Ձեռագործ, ֆեոդալական հասարակության տեխնիկական հիմքն այն է կազմում, վոր այնտեղ տիրում է ձեռքով աշխատանքը, վորը թույլ տարբերացման (դիֆֆերենցիայի) է յենթարկված, այսինքն՝ թույլ է բաժանված առանձին բաղադրիչ մասերի, յեվ շաղկապված է սերտորեն առանձին փոքրիկ արհեստանոցներում ձեռքի գործիքների միջոցով բանելու հետ։

Արհեստային տեխնիկայի բնորոշ գիծն այն է, վոր այն ամենասերտ կերպով կապված է արհեստավորի անձնավորության հետ, պրակտիկայի վարժության հետ, վորոնք փոխանցվում են սերնդե սերունդ։ Արհեստային աշխատանքի ձևերի մեջ վարժության այս տիրապետությունը տանում է դեպի ռուտինա, լճացում, վորովհետև այս ձևերի ծանոթությունն անբաժան է արհեստավորի անձնավորությունից և այս ծանոթությունը ձեռք է բերվում լոկ հասարակ սովորելու ընդօրինակության միջոցով։ Մյուս կողմից՝ արհեստը, այսինքն՝ ձեռքի աշխատանքը վորոշ, բավական նեղ սահման է դնում արտադրող ույժերի զարգացման համար, վորովհետև ամեն մի արհեստավոր ընդհանրապես արտադրում է մի արդյունք ամբողջապես, նրա մշակության առաջին աստիճանից մինչև վերջինը։

Ճիշտ է, ֆեոդալական շրջանի արհեստին էլ ծանոթ էր վորոշ ուրվական նկատելի մասնագիտացում. արհեստի մեջ էլ կար, արտադրության պրոցեսում՝ աշխատանքի բաժանում, յուր ամենապարզ ձևով. ֆեոդալական հասարակարգը բավական առաջ է ընթացել ճանապարհների, քաղաքների բարեկարգման և այլոց զարգացման ուղիով, սակայն նույնիսկ ամենախոշոր աշխատանքներն այն ժամանակ կատարվում եյին արհեստավորների ձեռքով. այսինքն՝ ձեռքի մեծաքանակ աշխատանք գործադրելով։ Այդպիսի պայմաններում, ֆեոդալական հասարակության մեջ, արտադրող ույժերի զարգացման առաջ վորոշ սահման էր դրված։

14. ԻՆՉՊԻՍԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՅԻՆ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ֆեոդալական հասարակության մեջ բանվորական ույժը դադարում է արդեն պարզապես ստրկատիրոջ սեփականությունը լինելուց, բայց վերջինս շատ թե քիչ իրավունքներ ունի գործավորի (работник) աշխատանքի նկատմամբ. (գործավորը գյուղացին է, վորն աշխատում է կալվածատիրոջ հա-

մաք, ունենալով յուր տնտեսությունը): Այս իրավունքները բղխում են գյուղացիների ճորտացումից (закрепощение), այսինքն՝ այն վիճակից, երբ գյուղացին պարտական է ստիպողական աշխատանք կատարելու հողատեր կալվածատիրոջ։ Կալվածատերերի (ֆեոդալների) և գյուղացոց միջև եղած ճորտային հարաբերություններն արտահայտվում էին կամ անձնական աշխատանք կատարելով հողատեր կալվածատիրոջ (կոռ), կամ որոշ (գլխավորապես դրամական) տուրքեր վճարելով (մյուլք)։ Կալվածատիրոջ հողագործական տնտեսությունը գլխավորապես խոշոր տնտեսություն է, որն առաջ է բերում խոշոր հողային սեփականատերերի դասակարգ. գյուղացոց հողագործական տնտեսությունը մանր տնտեսություն է, որը տնտեսապես լրիվին կախված է խոշոր կալվածատերերից և որն առաջ է բերում ճորտերի դասակարգ։ Ճորտերի դասակարգը, ֆեոդալական հասարակության մեջ, այլ դիրք է բռնում, քան ստրուկներն ունեյին ստրկատիրական կարգի մեջ։ Ճորտերը, պարտական լինելով զանազան հարկեր վճարելու և ծառայություններ ու կոռ անելու, այնուամենայնիվ որոշ իրավունքներ ունեն, որոնցից ստրուկը զուրկ էր. հողին ամրացված գյուղացին (ճորտը) ապրում է նույնպես գյուղացիների մեջ, ինչպես որ ինքն է ապրում համայնքի մեջ, որը մի ուժեղ հենարան էր գյուղացիների համար՝ իրենց իրավունքները պաշտպանելու գործում։ Այսպիսով՝ ճորտ գյուղացիները կարող էին ավելի կազմակերպված դիմադրություն ցույց տալ հողատիրոջը քան ստրուկները, մի դիմադրություն, որին նրանք հաճախ դիմում էին։ Ֆեոդալիզմի շրջանում դասակարգային կռիվը երբեմն շատ սուր ձևեր էր ստանում, որոնց հետևանքն էր լինում կալվածատերերի կողմից ճորտերի վրա դրված ծանրությունները թեթևացնելը, նույնպես և գյուղացիների լրիվին ազատությունը ճորտային կախումից։

Ֆեոդալական հասարակության զարգացման ավելի հետագա շրջանում, երբ առաջ են գալիս քաղաքներն ու սրանց մեջ արհեստավոր դաս է գոյանում՝ դասակարգային կռիվն անցնում է քաղաքները և մղվում է, մի կողմից՝ արհեստավորների, իսկ մյուս կողմից՝ հողային սեփականատերերի միջև։

Ուրեմն՝ ֆեոդալական հասարակության տնտեսական կազմակերպության գլուխ կանգնած էր կալվածատերը, ֆեոդալը, որ իրեն էր յենթարկում մյուս բոլոր դասակարգերը, տնտեսապես գերիշխելով նրանց վրա։ Կալվածքը կենտրոնն էր գյուղի ամբողջ տնտեսական կյանքի, նրա մեջ կենտրոնացած էին ամեն տեսակ տնտեսական հիմնարկներ, որոնք ծառայում էին գյուղացիական տնտեսության պետքերին. ջրաղացներ, փռեր, սառցարաններ, պահվում էին ազնվացեղ անասուններ և այլն. բացի սրանից, հարձակումից պաշտպանվելու կենտրոնն էլ այստեղ էր։ Նույն այս կալվածներն սկզբում իրենց դրոշմն էին դնում նաև քաղաքի կյանքի վրա։ Արհեստն ու առևտուրը սկզբում կալվածի տնտեսության մասն էին։ Ֆեոդալական հասարակարգի գոյության այս աստիճանի ժամանակ նրա տնտեսական կյանքը գրեթե սպառվում էր կալվածի կյանքով։

Սակայն՝ քանի արհեստը զատվում է հողագործությունից, այնքան առաջինն սկսում է հատուկ տեղ գրավել ֆեոդալական հասարակության մեջ։ Կալվածատերը սկսում է ավելի ու ավելի զգալ արհեստավորի աշխատանքի, վերամշակող արդյունաբերության արտադրանքների կարիքը, թե յուր տնտեսության և թե փոխանակության համար։ Արհեստավորներն ստանում են

որոշ ազատություն, դրվելով միայն նյութական կախման մեջ ֆեոդալից, այսինքն հարկ վճարելով նրան։ Աստիճանաբար ֆեոդալական-գյուղական համայնքներից առաջանում են քաղաքային շենանոցներ, (носеления), որոնք լցվում են գլխավորապես արհեստավոր ու առևտրական բնակչությամբ։ Զատվելով կալվածատերերից, ազատվելով նրանցից՝ հարկ վճարելով, արհեստավորներն սկսում են գիտակցել առանց նրանց օգնության կենցաղավարելու հնարավորությունը, մանավանդ այն ժամանակվանից, երբ առևտրի զարգացմամբ քաղաքներն ամրապնդվեցին։ Ձգտելով ազատության՝ արհեստավորները միանալով կազմակերպում են համքյարություններ և առևտրականների կողքին կազմում են ինքնուրույն դաս, ավելի ու ավելի կտրվում են բնական-տնտեսական հարաբերություններից և կապում են իրենց գոյությունը փոխանակային հարաբերությունների զարգացման հետ։ Այսպիսով, քաղաքային դասակարգերը բոլորովին թոթափում են իրենց վրայից այն տնտեսական կախումը, որ ունեյին կալվածատերերից։

Սկզբում արհեստային համքյարությունները միատարր են լինում։ Սակայն՝ քանի քաղաքներն աճում ու հարստանում են, համքյարություններն էլ սկսում են արտոնյալ (մեծ իրավունքներ ունեցող) դասակարգային կազմակերպություններ դառնալ, որոնք շահագործում են վարպետացուների (подмастерье) աշխատանքը, նրանց լիակատար տնտեսական կախման մեջ դնելով իրենցից։ Գյուղացիական տնտեսության նվազումը, ֆեոդալ-կալվածատերերի լծից ազատվելու փորձերը, մղում են գյուղացիներին դեպի քաղաքները, որտեղ նրանք դառնալով ազատ՝ կախումն են ունենում արհեստավորների արդեն ձևավորված դասակարգից, արհեստավորներ, որոնց մի մասն ուներ արդեն բավական մեծ միջոցներ։ Յեթե առաջ համքյարություններն ուրախությամբ էին ընդունում իրենց մեջ յեկվորներին, ձգտելով ուժեղացնել իրենց դասակարգը, արհեստի արդեն զարգացած շրջանում նրանք աշխատում են ազատվել մրցումից և օգտվում են իրենց տնտեսական ու քաղաքական հզորությունից՝ դժվարացնելու համար նոր, մանավանդ գյուղից յեկողների համար՝ արհեստին հասնելու ուղին։

Մի քանի արհեստավորներ այնքան էին հարստանում, որ արդեն կարողանում էին մշակներ (батрак) պահել, որոնց թիվը քանի գնում, այնքան ավելանում էր։ Վարպետացուներն էլ իրենց կողմից, քանի բազմանում են, կազմում են միություններ, որոնք փորձում են կռվել արհեստավորների դեմ։ Սակայն՝ այս կռիվը քիչ թե շատ նկատելի զարգացում չի ստանում և հեղափոխական բնույթ չի կրում, շնորհիվ արհեստավոր դասի անբավարար շերտավորման, նեղ կաստայական վոգու, որով սնված էին վարպետացուների միությունները և նրանց այն ձգտման, որով աշխատում էին անջրպետվել մշակներից, պրոլետարներից՝ ֆեոդալական հասարակության վարձու բանվորներից, որոնք հավաքվում էին գլխավորապես հողից կտրված (բանվորացած) գյուղական բնակչությունից։

15. Ի՞ՆՉՊԵՍ ԷՐ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Ֆեոդալական հասարակության տնտեսությունը յուր գոյության առաջին նախնական աստիճանների վրա գլխավորապես տնտեսության հողագործական տիպ է՝ ըստ յուր արտադրության բնույթի՝ բնատնտեսական, որ

փակված ե կալվածքի սահմաններում: Փոխանակային յերևույթները գտնվում են սաղմային վիճակում, ուստի և շրջանառության մեջ դեռ փող չկա: Գյուղական համայնքի, գյուղական բնակչության հարաբերությունները կալվածատերերի հետ, վորոնց կալվածների բաղադրիչ մասն եյին կազմում գյուղացոց հողերը, հիմնված եյին բնավճար (натуральный) ծառայությունների վրա: Վարելահողը առանձին գյուղական յերդերի (двор) սեփականությունն ե, ընդ վորում այս գյուղացիական հողերը փոքր չափեր ունեյին. հողի մեծ մասը կենտրոնացած եր խոշոր կալվածատերերի ու յեկեղեցու ձեռքում: Գյուղացիների կախումը խոշոր կալվածատերերից, վորոնք տալիս եյին նրանց մշակելու փոքրիկ հողամասեր, արտահայտվում եր նրանով, վոր գյուղացիք մյուլք եյին վճարում հողատիրոջը կամ կոռ եյին քաշում, այսինքն՝ շաբաթվա մի մասն աշխատում եյին կալվածատիրոջ հողերի վրա: Մյուլքը սովորաբար տանվում եր բնարդյունքով (натура), հացահատիկով, ընդեղենով, կտավատով, ընտանի թռչուններով, ձվերով, վոչխարներով և այլն. կոռը սովորաբար յեռորյա յեր: Ինչպես կալվածատիրոջ, այնպես ել գյուղացոց հողերը մշակվում եյին յեռադաշտային սկզբունքով:

Կալվածատիրոջ տնտեսությունը բնատնտեսություն լինելով, բավական բազմազան եր, վորովհետև կալվածատերը գրեթե յուր բոլոր պահանջները պիտի բավարարեր սեփական արտադրությամբ կամ թե չե՝ ճորտ-հողագործների արտադրությամբ: Ունենալով յուր տրամադրության տակ բավական մեծ քանակությամբ բանվորական ուժ, կալվածատերը կարող եր իր տնտեսության մեջ աշխատանքի վորոշ բաժանում մտցնել, վոմանց պարապել տալով հյուսնի արհեստով, մյուսներին՝ թամբագործությամբ, յերրորդներին՝ շինություններ շինելով, մի քանիսներին՝ զինագործությամբ և այլն: Այսպիսով՝ կալվածներում ծագում են միջնադարյան արհեստի սաղմերը:

Ֆեոդալական հասարակության այդ աստիճանի ժամանակ քաղաքային տնտեսություն դեռ չկա: Հռոմեական կայսրության քաղաքները, գերմանացոց ներխուժման շրջանին ապրելով, տնտեսական ու քաղաքական տեսակետից սաստիկ ընկան և կորցրին իրենց նախկին նշանակությունը, այն ե՝ նշանակությունը մի այնպիսի վայրի, վորտեղ կատարվում եր ապրանքափոխանակություն, վորտեղ կար մշտական շուկա: Քաղաքների մեծ մասն ընկնում ե մինչև գյուղի մակարդակը և քաղաքային հողամասը դառնում ե վարելահող: Բայց նույնիսկ այնտեղ, վորտեղ քաղաքները պահպանվել եյին, ինչպես որինակ՝ Իտալիայում ու հարավային Ֆրանսիայում և վորտեղ մընացել եյին քաղաքային ազատ արհեստի հետքերը, ֆեոդալական կալվածների արհեստի հետ համեմատած՝ այն ազատ արհեստը չնչին դեր եր կատարում: Այս քաղաքային արհեստավորները բավարարում եյին իրենց պահանջների մեծ մասն իրենց սեփական տնտեսությամբ, վոր նույնպես բընատնտեսություն եր. նրանք ունեյին այգիներ ու փոքրիկ հողամասեր, սեփական անասուններ, վոր արածացնում եյին հասարակական արոտներում. նրանք իրենք եյին մանում, գործում և այլն:

Այսպես եր ֆեոդալական հասարակության տնտեսությունը յուր գոյության առաջին դարերում:

16. ԻՆՉՊԵՍ ԵՐ ԶԱՐԳԱՆՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԸ

Կալվածատիրական փակ բնատնտեսությունը յուր հետագա զարգացման ընթացքում փոխվում ե ու դառնում անմիջական փոխանակության տնտեսություն. անձնական սպառման համար կատարվող արտադրությունը փոխարինվում ե անմիջապես սպառողի համար տեղի ունեցող արտադրությունը: Զարգացման այս շրջանը կապված ե քաղաքային տնտեսության շրջանի հետ, վոր նորից յերևան ե գալիս VIII դարի վերջում գերմանական պետությունների մեջ, իսկ մի քիչ ուշ ել՝ մյուս պետությունների մեջ:

Կալվածատիրական տնտեսությունը, միավորելով գյուղական համայնքի տնտեսությունը, և զգալի չափով նրանից սնունդ ստանալով, նպաստում եր վերջինի զարգացմանը: Գյուղական տնտեսության տեխնիկան, թեև դանդաղ, այնուամենայնիվ զարգանում եր. ճորտ արհեստավորների թիվը աճում եր, աշխատանքի մասնագիտացումը զարգանում եր տնտեսական ու անձնական պահանջների ավելացմանը զուգընթաց և այս բոլորը նպաստում եր արտադրող ուժերի շատանալուն, կալվածատերերի ձեռքում յեղած ավելցուկների կուտակման: Այսպիսի կուտակման ու կալվածատերերի միջև աշխատանքի աստիճանական բաժանման հետևանք յեղավ փոխանակության ծագումը, մանավանդ յերբ ծովային ճանապարհների բացումով հնարավորություն ստեղծվեց փոխանակություն կատարելու հեռավոր յերկիրների, գլխավորապես արևելքի յերկիրների հետ, վորոնք ունեյին հեքյաթային հարստություններ ու արտադրություն, վոր Յեվրոպային անծանոթ եր մնացել:

Մի քանի խոշոր կալվածներ, զանազան պատճառներով, հանդիսանում եյին իբրև ձգող կետեր, վորտեղ հավաքվում եր շրջակա բնակչությունը և վորտեղ կատարվում եր ապրանքափոխանակություն: Հենց այս կալվածներն ել բնականաբար յեղան առաջին շուկաները, վորոնց հետ կապ եյին հաստատում այն մարդիկ, վորոնք հատկապես պարապում եյին ապրանք տանելով այս շուկաները, այսինքն՝ վաճառականները: Այս տեղերում բընակչություն եր հաստատվում, նրա հարստությունն ավելանում եր, վորի շնորհիվ մեծանում եր նաև այս տեղերի դերը, վորպես ամրացրած քաղաքների: Այսպիսով, Գերմանիան, դեռ VIII դարից սկսած, սկսեց ծածկվել խոշոր կալվածներից գոյացած քաղաքներով:

Քանի քաղաքները դառնում եյին առևտրական կենտրոններ, նրանց մեջ ավելի ու ավելի ապրանք եր կուտակվում և մշտական ապրանքափոխանակություն եր կատարվում: Այս հանգամանքը վճռական հեղաշրջում ե առաջ բերում մինչ այդ տիրող տնտեսական պայմանների մեջ: Վաճառքի համար արտադրելն ընդհանուր բնույթ ե ստանում. տնտեսությունն ապրանքային ե դառնում, գրավելով թե կալվածատիրական և թե գյուղացիական ու արհեստավորական տնտեսության ավելի լայն շրջաններ: Քանի դեռ փոխանակությունը կատարվում եր անմիջապես գյուղացու և արհեստավորի միջև, այս վոչ այլ ինչ եր, յեթե վոչ ապրանքի փոխանակություն ապրանքի հետ: Սակայն, աստիճանաբար, յուր սեփական պետքերի համար փոխանակելուն հաջորդում ե վերավաճառքի (перепродажа) համար գնելը,

և այս աստիճանի ժամանակ, վորպես փոխանակության գործիք, արդեն հանդես ե գալիս փողը։

Փողի հրապարակ գալն ավելի ևս արագ ե վերակազմում ֆեոդալական հասարակության տնտեսությունը։ Փողը կարող ե ծառայել վոչ միայն իբրև փոխանակության միջոց, այլ և կուտակման միջոց։ Բնավճար մյուլքը դրամականով փոխարինելու հնարավորությունն, այլ և սրա վրա հիմնված այն հանգամանքը, վոր տնտեսության հետ անմիջապես կապ չունենալով ապրել կարելի յե, աստիճանաբար անջատում ե կալվածատիրոջը յուր կալվածից. քաղաքները դառնում են խոշոր իշխողների բնակության կենտրոն, միևնույն ժամանակ նաև՝ տնտեսական կյանքի կենտրոն, վորոնց շնորհիվ հետին շարքն են մղվում ֆեոդալական կալվածները։ Գյուղական տնտեսությունը, վոր այժմ պետք ե դրամով մյուլք վճարեր, հարկադրված ե յուր արդյունքների ավելի ու ավելի մեծ քանակություն շուկա հանելու, վորով և ավելի արագ ե քաշվում-մտնում ապրանքային ու դրամական հարաբերությունների շրջանը։

Այսպիսով յուր զարգացման ընթացքում ֆեոդալական տնտեսությունը փակ բնատնտեսությունից դառնում ե ապրանքային. շուկան տեղայինից դառնում ե համաշխարհային. փողը դառնում ե փոխանակության գլխավոր միջոցը. տեղի յե ունենում կապիտալների հսկա կուտակում՝ առևտրով պարապող դասակարգի ձեռքում. տնտեսական ծանրության կենտրոնը ֆեոդալական կալվածից փոխադրվում ե քաղաքները, իսկ գյուղացիական տնտեսությունը, վոր հարկադրված եր ավելի ու ավելի մեծ մյուլք վճարել և կրում եր գինվորական ծառայությունների զգալի ծանրությունը, ընկնում ե՝ զուգընթաց խոշոր կալվածատիրական տնտեսության անկմանը։

17. Ի՞ՆՉ ԵՐ ՖԵՈԴԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան քաղաքի առաջանալու մասին յեղած ամենաստույգ տվյալներն ասում են, թե քաղաքների մեծամասնության տնտեսակարգը ֆեոդալական կալվածի կամ գյուղական համայնքների տնտեսական զարգացման հետևանք ե (գերմանական քաղաքներ)։ Քաղաքներն սկզբնապես վոչ այլ ինչ եյին, յեթե վոչ ֆեոդալի հայրենական կալված, կամ գյուղացիական շեներ, վորոնք գյուղերից տարբերվում եյին իրենց ամրություններով միայն (քաղաքը պարսպապատ վայր եր, ամրոց)։ Շուտով քաղաքները դառնում են շուկայի վայրեր։

Հին աշխարհի քաղաքներում քաղաքի բնակիչը միաժամանակ և հողագործ եր, վորը գյուղական տնտեսությունը տանում եր ստրուկների կամ վարձականների միջոցով։ Քաղաքի և գյուղի միջև աշխատանքի բաժանում դեռ չկար։ Միջնադարյան յեվրոպական քաղաքները, վորոնք ծագել են VIII դարում, ամենից առաջ մեկուսանում են իրենց տնտեսական գործունեության ասպարիզում։ Գյուղը հայթայթում ե հում նյութ ու սննդի մթերքներ, իսկ քաղաքը զբաղված ե հում նյութեղենի մշակությամբ, և առևտրի միջոցով սկսում ե մյուս յերկրներից դեպի ինքը քաշել այն, ինչ վոր ինքն արտադրել չի կարող։ Գյուղացիներն ու քաղաքացիք իրենց արդյունքները

փոխանակում են քաղաքային շուկայի միջոցով։ Տարբերվելով հնադարյան քաղաքից, վորը գլխավորապես սպառողական կենտրոն եր, միջնադարյան քաղաքը վոչ միայն սպառողական, այլ և արտադրական ու առևտրային կենտրոն եր։ Միջնադարյան քաղաքի քաղաքացիները ստրուկների աշխատանքով կամ նվաճած բնակչության հարկերով չեն ապրում, ինչպես վոր այս լինում եր հույն-հռոմեական քաղաքներում։ Միջնադարյան քաղաքացիները, յեթե կալվածատեր եյին, ապրում եյին իրենց գյուղացիների մյուլքով ու կոռով, կամ յեթե արհեստավորներ եյին, ապրում եյին արհեստային աշխատանքի արդյունքների արտադրությամբ, կամ, յեթե առևտրականներ եյին, արդյունքների փոխանակությամբ՝ այս արդյունքները տվյալ քաղաքի սահմաններից դուրս վաճառելով։

Այսպիսով, քաղաքի ներսում զարգանալով առաջ են գալիս յերկու դասակարգ, վորոնք անհայտ եյին նախկին հասարակություններին.—անկախ արհեստավորների դասակարգն ու առևտրականների դասակարգը։ Այս դասակարգերը ծագում են փոխանակային տնտեսության վրա հիմնվելով, մի տնտեսություն, վոր շատ ավելի եր ընդունակ զարգանալու, քան միջնադարյան կալվածների ինքնամփոփ բնատնտեսությունը։ Կալվածատիրոջից ավելի քիչ կախում ունենալը, վորից արհեստավորն ազատվում եր հարկ վճարելով, և հետևաբար համեմատաբար ազատ աշխատանքը, աշխատանքի մասնագիտացման աճումը, հաղորդակցության ճանապարհների ու առևտրային կապերի զարգացումը, տեխնիկական կատարելագործումների հետևանքով աշխատանքի արտադրողականության բարձրացումը,—այս բոլորը նպաստում եյին, վոր քաղաքները հարստանան և քաղաքային յերկու գլխավոր դասակարգի, այն և արհեստավորների ու վաճառականների տնտեսական ազդեցությունն ու հզորությունը մեծանա։

Այն ժամանակ, յերբ մի քանի դարերի ընթացքում քաղաքները զարգանալով դառնում եյին տնտեսական և քաղաքական վիթխարի ուժ, նրանց սահմաններից դենը գյուղական վայրերում լճացում ե նկատվում։ Այստեղ հողատիրությունը գույքի միակ ձևն եր, իսկ գյուղական տնտեսությունը՝ գլխավոր ու համարյա միակ զբաղմունքը։ Հողը կալվածատերերի ու յեկեղեցու սեփականությունն եր, իսկ հողագործական աշխատանքը ծանրացած եր հողին ամրացված գյուղացիների (ճորտերի) ուսերին, վորոնք անձնապես ազատ չեյին, զուրկ եյին տեղաշարժության իրավունքից, ծանրապես ճնշված եյին և քաղաքացիների լիակատար հակադրությունն եյին ներկայացնում. վերջիններս յեռանդուն, ժիր եյին և ազատագրված ֆեոդալների իշխանությունից, ուստի և արագորեն նվաճել եյին բացառիկ ազդեցություն ամբողջ տնտեսական կյանքի ընթացքի ու զարգացման վրա։

Թեև քաղաքը, յուր գոյության առաջին դարերում, դեռ լրիվին չի ազատվել յերկրագործությունից, սակայն նախ՝ յերկրագործությունը քաղաքներում ընդունել ե ավելի ինտենսիվ ձևեր, ինչպիսիք են՝ հատուկ կուլտուրաների, այգեգործության ու գինեգործության զբաղմունքները, իսկ յերկրորդ՝ քաղաքում զարգանում ե և արագորեն ծաղկման վիճակի յե հասնում աշխատանքի անկախ բազմազան մի ճյուղ—արհեստը։ Այսպիսով, քաղաքը հանդիսանում ե արդյունաբերական գործունեության կենտրոն, փոխանակության կենտրոն, շուկա, այսինքն մի վայր, վորտեղ առաջին անգամ կիրառվում ե և զարգանում ե դրամական շրջանառությունը։ Այդ դրամական շըր-

ջանառությունը փոխանակության հորձանքի մեջ ե քաշում նաև գյուղը, նպաստում ե, վոր վերջինիս միջից վերանա բնատնտեսությունը, վոր սահմանափակ հնարավորություններ եր ընձեռում արտադրող ուժերի զարգացման համար։

ԺԶ. Ի՞ՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԶԱՐԳԱՆՈՒՄ ՔԱՂԱՔՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

Միջնադարյան քաղաքների, իբրև ամրացված վաճառանոցային կենտրոնների, ծագման պայմաններն այն բանին հասցրին, վոր քաղաքներում իշխանությունն սկզբնապես կենտրոնանում եր խոշոր կալվածատերերի ու վաճառականների ձեռքում, վորոնցից վաճառականները միանալով ստեղծել եյին հատուկ կազմակերպություններ ու առևտրական գիլդիաներ։ XIII դարու վերջից սկսած՝ արհեստն սկսում ե քաղաքներում աշխատանքի կարևորագույն ճյուղը դառնալ, վորը յուր նշանակությամբ հետզհետե ավելի ու ավելի յե գերազանցում վոչ միայն յերկրագործությունից, այլ և առևտուրից։ Արհեստը զարգանում եր, արհեստավորները հարստանում եյին, իսկ նրանց կազմակերպությունները—համքյարությունները — վաճառականների գիլդիական կազմակերպությունների կողքին, դառնում եյին ավելի ու ավելի հզոր։ Իտալիայում համքյարությունները ծագում են դեռ X—XI դարերում, Ֆրանսայում՝ XI—XII դարերում, Անգլիայում՝ XII—XIII դարերում, Գերմանիայում՝ XII—XIV դարերում։

Համքյարային կազմակերպությունների մեջ միացած արհեստավորները սկզբում միայն, յերբ հարկավոր եր կռվել ֆեոդալների դեմ իրենց ազատագրության համար ու առևտրական գիլդիաների դեմ՝ քաղաքում, գերիշխանություն ձեռք բերելու համար,—աչքի եյին ընկնում ազատասեր վոգով ու դեմոկրատիզմով, ձգտում եյին իրենց ուժերը շատացնելու և սիրով եյին իրենց համքյարությունների մեջ նորեկներ ընդունում։ Իսկ յերբ համքյարությունները անկախություն ձեռք բերին և քաղաքային գործերը կառավարելու ասպարեզում վաճառականներին հավասար մասնակցության իրավունք ստացան, այն ժամանակ սկսեցին ավելի ու ավելի ինքնամփոփ դառնալ և արգելքների պարիսպներով անջատվել գյուղական վայրերից հասած յեկվորներից՝ վերջիններիս իրենց մրցորդ համարելով։ Համքյարությունների հզորությունը, վոր հիմնված եր նրանց թվական բազմության ու համերաշխության վրա, սկսեց փոխարինվել մի նոր հզորությամբ, վոր հիմնված եր արդեն կապիտալի մեծության վրա։

Քանի դեռ արհեստի տեխնիկան շատ պարզ եր և չեր պահանջում նույնիսկ հասարակ կոոպերացիա, այսինքն մի քանի մարդու միատեղ աշխատանք, ամեն մարդ կարող եր իրեն համար գործիքներ ձեռք բերել ու աշխատել իբրև անկախ արհեստավոր։ Սակայն, արդյունաբերության առարկաների մեծացող պահանջի, արհեստի տեխնիկայի և վորոշ չափով մասնագիտացման հետևանքով, անկախ արհեստը պահանջում եր նախնական վարժություն ու արդեն ավելի կամ պակաս չափով նշանավոր կապիտալ՝ արտադրության գործիքներ ու հում նյութ ձեռք բերելու համար։ Հասկանալի յե, վոր այն բոլոր մարդիկ, վորոնք արտադրության ասպարեզում հմտություն ու կապիտալներ չունեյին, պետք ե կախումն ունենային արհեստավոր վարպետներից, պետք ե դառնային աշկերտ—վարպետացու։ Այն չափով, ինչ չափով վոր համքյարություններն ավելի ու ավելի եյին դառնում միայն անկախ վարպետների կազմակերպություն, վորոնք ճանաչում եյին միայն իրենց համքյարային տնտեսական նեղ շահերը, վոր չափով վոր վարպետները սկսում եյին իրենց արտոնյալ դիրքն ու ուժն ոգտագործել վարպետացուներին (подмастерье) շահագործելու համար, այն չափով էլ վերջիններս սկսում եյին միանալ ու կազմակերպել իրենց սեփական միությունները՝ ըստ արհեստի առանձին տեսակների։ Այս միությունները «ընականաբար» կռվի եյին մտնում վարպետների համքյարությունների հետ, մի կռիվ, վոր ծավալվելով՝ վերածվում եր ընդարձակ ու հետզհետե ավելի սրվող գործադուլների, վորոնք տեղի եյին ունենում արդեն XIV դարից սկսած։ Վարպետացուների ու աշակերտների աշխատանքն ոգտագործելու հնարավորությունն՝ այն վարպետին, վոր սկզբում աշխատում եր կամ մենակ, կամ յուր վարպետացուի հետ միասին, աստիճանաբար դարձնում ե ձեռնարկու, վորը միայն կազմակերպում ե արտադրությունը, իսկ ինքն անձամբ չի աշխատում։ Այս յերևույթը արհեստի տնտեսական կազմակերպության մեջ մի նոր առանձնահատկություն ե մտցնում։ Վորքան ավելի յեր անջատվում վարպետն անմիջական արտադրությունից, այնքան ավելի յեր աշխատում վարպետացուների ու աշակերտների բանվորական որը յերկարացնել և հավելյալ աշխատանքի ավելի ու ավելի մեծ քանակություն դուրս կորզել նրանցից։ Սակայն համքյարային կազմակերպության ներսում շահագործումն այնուամենայնիվ անսահման չեր, վորովհետև համքյարային զանազան կազմակերպություններն իրենց կանոնադրություններն ունեյին, վորոնք սահմանափակում եյին շահագործումը։

Արհեստավոր վարպետների ձեռքում կուտակված կապիտալները պահանջում եյին, վոր այս կապիտալների ոգտագործման համար ավելի ազատ պայմաններ ստեղծվեն, վոր արհեստավորների դրությունն ավելի անկախ լինի, քան այս թույլատրում եր համքյարային կազմակերպությունը, վորը յուր վոգով ու գործունեյության յեղանակներով, նեղ ու պահպանողական կազմակերպություն եր։ Յեվ կապիտալիստ-արհեստավորը յուր համար գործունեության համար ասպարեզ ե գտնում համքյարային կազմակերպություններից դուրս։

Դրամատնտեսության ծավալմանը գյուղում ուղեկից եր դրամավճար ծառայությունների ու հարկերի աճումը, վորոնք գյուղացիական տնտեսությունն անկման եյին հասցնում, այլև պատճառ դառնում, վոր գյուղացիների նշանավոր մասը մասնակի ու լիակատար հողազրկության յենթարկվի։ Ավելի ու ավելի հաճախ ե սկսում քայքայվող գյուղացին ոժանդակ զբաղմունքների ու դատումների դիմել, ի թիվս վորոնց դիմում ե նաև արհեստային աշխատանքին։ Սակայն, չունենալով վոչ սեփական արհեստանոց, վոչ էլ միջոցներ՝ արտադրական գործիքներ ու հում նյութ ձեռք բերելու համար, այսպիսի գյուղացին ծառայագրական կախումն ե ունենում կապիտալիստ-վարպետից, վորը դառնում ե կապիտալիստ ապրանքառու (скупщик), կամ թե չե նույն գյուղացին ծառայագրվում ե առևտրային կապիտալին, վորը նրան մատակարարում ե հում նյութ, նյութեղեններ, յերբեմն նաև արտադրության գործիքներ և հարկադրում ե նրան աշխատելու իրենից ստացած պատվերների համաձայն։ Այսպիսի գյուղացին յուր տանն աշխատում եր կամ մենակ ինքը, կամ յուր ընտանիքի հետ միասին՝ յուր աշ-

խատանքի համար ստանալով վորոշ վարձատրություն, վոր առանձնապես ցածր ե լինում այն ժամանակ, յերբ ձեռնարկուն նրան մատակարարում ե յուր նյութեղենն ու գործիքները և աշխատելու համար նրան կանխավճար ե տալիս։

Հենց այս ճանապարհով ե առաջ գալիս միջնադարյան տնայնագործական կամ տնային արդյունաբերությունը, վորը սովորաբար գտնվում ե քաղաքներից դուրս, մերձակա գյուղերում ու շեներում և այս պատճառով էլ ազատ եր այն սահմանափակումներից, վոր դնում եյին համքարային կազմակերպությունները, և այն հետապնդումներից, վորոնք կարող եյին լինել համքարությունների կողմից։ Վորովհետև բանից դուրս յեկավ, վոր տնային արդյունաբերությունը շատ ձեռնտու յե ձեռնարկուների համար, քանի վոր վերջիններիս մեծ հասույթներ եր տալիս, այն պատճառով, վոր ազատ եր համքարությունների կաշկանդիչ ձևականություններից և թույլ եր տալիս ընդարձակ չափերով շահագործել տնայնագործի ու նրա ընտանիքի մինչև անգամ մանկահասակ յերեխաների աշխատանքը, ուստի այս տնային արդյունաբերությունը շատ արագ զարգանում եր, մանավանդ վոր վաճառքի շուկաների ընդարձակումը ավելի ու ավելի մեծաքանակ ապրանքներ եր պահանջում։ Վաճառականներն ամենաձեռնտու գործ համարում եյին իրենց կապիտալները բազմապատկել՝ արհեստանոցներ կազմակերպելով, վորոնք աշխատում եյին նրանց պատվերներով։

19. Ի՞ՆՉ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ՈՒՆԵՑԱՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Միջնադարյան քաղաքների տնտեսական կյանքի զարգացումը հասցրեց հետևյալ ամենագլխավոր հետևանքների. 1) ճորտությունն, իբրև ֆեոդալական հասարակարգի տնտեսական հիմք, խախտվեց, իսկ հետո նաև կործանվեց. 2) համքարական-արհեստային կարգերը քայքայվեցին. 3) արհեստը, վոր արագորեն առաջադիմել եր զարգացած փոխանակության վրա հիմնվելով, առևտրային ու վաշխառուական կապիտալի տնտեսական ազդեցության տակ ընկավ և նրանից կախում ունեցավ. 4) վորովհետև կապիտալը թափանցել եր արհեստի համքարային կազմակերպության մեջ և քայքայել վերջինս, ուստի և ծագում առավ, զարգացավ տնային կապիտալիստական արդյունաբերությունը. 6) քաղաքներում աճեց և զորացավ նոր դասակարգ—առևտրային բուրժուազիան։

20. ՔԱՂԱՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ Ի՞ՆՉՊԵՍ ՀԱՍՑՐԵՑ ՃՈՐՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՏԱԿՄԱՆԸ

Քաղաքների, իբրև տնտեսական կազմակերպության, գլխավոր առանձնահատկությունն այն ե, վոր աշխատանքի հանրային բաժնման շնորհիվ նրանք կարող են գոյություն ունենալ միայն փոխանակային հարաբերությունների վրա հիմնվելով, ուստի և քաղաքները, հենց իրենց գոյությամբ, խարխլում են այն ինքնափակ բնատնտեսական կազմակերպությունների հիմքերը, վորոնք ամեն անհրաժեշտ իր արտադրում են տանը և փոխանակության կարիք չունեն։ Յեթե գյուղերն ու կալվածները հացահատիկ ու

սննդի այլ մթերքներ չփոխադրեն քաղաքները, ապա քաղաքներում ապրելն անհնարին կլինի։ Ահա թե ինչն ե պատճառը, վոր քաղաքային տնտեսակարգը կռիվ ե մղում կալվածների ու գյուղերի ինքնամփոփ տնտեսության ու հետամնացության դեմ՝ կալվածներն ու գյուղերն աստիճանաբար յուր տնտեսական իշխանության յենթարկելով։

Սակայն այս դեռ բոլորը չե։ Քանի դեռ շուկաներ չկան, կալվածային տնտեսությունն ամեն անհրաժեշտ պիտույք արտադրում ե տանը և չի ձգտում ավելցուկներ ունենալ, վորովհետև այս ավելցուկները, միևնույն ե, վոչ մի տեղ վաճառելու հնար չկա։ Տնտեսության այս կացությունը խարխլվում և փոփոխության ե յենթարկվում յերկու կողմից։ Մի կողմից՝ պատերազմներն ու հեռավոր Խաչակրաց արշավանքներն ընդարձակում եյին յերկրագործ դասակարգի պահանջները, Յեվրոպայի արևմտյան յերկիրները մոտեցնում հարուստ Արևելքին ու էլ ավելի հեռավոր յերկրներին (ինչպես, որինակ, Հնդկաստանն եր՝ յուր հեքյաթային հարստությունով), այս յերկրագործ դասակարգին հաղորդակից եյին դարձնում պերճ կյանքին և այսպիսով մեծացնում պահանջը փողի, վոր այդ ժամանակ սկսում եր արդեն փոխանակության մեջ գլխավոր դեր կատարել։ Մյուս կողմից՝ դրամական հասույթները շատացնելու ձգտումը կարող ե բավարարվել այն ժամանակ միայն, յերբ քաղաքային շուկաներն առաջ գային, վորտեղ կարելի լիներ գյուղական տնտեսության արդյունքները ձեռնտու գներով վաճառել։ Այս արդյունքները վաճառելու հնարավորությունը մեծացնում եր սրանց արժեքը կալվածատիրոջ աչքում և հարկադրում սրան միջոցներ ձեռք առնելու, վորպեսզի գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականությունը բարձրանա։

Այսպիսի պայմաններում կալվածատիրոջ համար դժվար չեր գալ այն յեզրակացության, թե նրան հպատակվող գյուղացիների աշխատանքի արտադրողականությունը շատացնելը նրա բարեկեցության հիմնական աղբյուրն ե և վոր, մյուս կողմից, ճորտի, այսինքն անձնապես ծառայագրված գյուղացու աշխատանքը չի կարող տնտեսապես ձեռնտու լինել, վորովհետև ճորտի աշխատանքի արտադրողականությունը ազատ մարդի աշխատանքի արտադրողականությունից ցածր ե։ Այս միտքը հարկադրում ե հողատերերին, վոր ճորտային կախումը թուլացնեն և անցնեն գյուղացիների հետ այլ տեսակի հարաբերություններ ունենալու սիստեմին. այսինքն այնպիսի հարաբերությունների, յերբ գյուղացին ազատագրվելով՝ հանձն ե առնում բացառապես դրամական պարտավորություններ։ Այսպիսով հողատեր դասակարգի տնտեսական պահանջների աճումը, վոր կապ ունի քաղաքային տնտեսության առևտրի զարգացման հետ, աստիճանաբար թուլացնում ե, իսկ հետո և վերջ տալիս ճորտությանը։ Փողի կարիքը կալվածատերերին հարկադրում եր յերբեմն ամբողջ գյուղերով իրենց ճորտերին ազատ արձակելու՝ վորոշ փրկանք ստանալով, վոր հատուցվում եր միանվագ կամ տարեց տարի։

Իտալիայում այսպիսի ճորտազատություն (раскрепощение) տեղի ունեցավ XII ու XIII դարերում։ Ֆրանսիայում, XIV դարի վերջին, ճորտերի 75%-ը դարձավ ազատ վարձակալ կամ դրամական մուլք վճարող, վորոնք, սակայն, անձնապես ու հողովին անկախ գյուղացիներ եյին։ Նույն այս յերևույթը նկատվում եր Անգլիայում, Գերմանիայում ու Ռուսաստանում։

Գերմանիայում, մանավանդ Ռուսաստանում, այս պրոցեսն ավելի դանդաղ եր ընթանում (Ռուսաստանում բնական (натуральный) տնտեսությունների ու գյուղական մյուլքը գոյություն ունեյին մինչև XIX դարու յերկրորդ կեսը)։

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր գյուղացիների ճորտատիրությունը լիովին հակառակ եր ֆեոդալական տնտեսակարգի հիմքերին։ Արտադրության նոր, այն ե արդյունաբերական յեղանակի ու նոր արտադրական հարաբերությունների զարգացումը հարկադրում եր ֆեոդալական տնտեսակարգին դիրք դիրքի յետևից զիջելու տնտեսական նոր կազմակերպություններին, վորոնց շարքում քաղաքներն եյին, վոր ֆեոդալիզմի քայքայման գործիք յեղան և նոր կապիտալիստական կազմակերպությանն անցնելու աստիճանը հանդիսացան։

21. ԻՆՉ՞ՈՒ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՍ ՔԱՅՔԱՅՎԵՑԻ՞Ն ՀԱՄՔՅԱՐԱԿԱ՞Ն ԱՐՀԵՍՏԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԸ

Ինքնամփոփ, կալվածային տնտեսության տիրապետության դարաշրջանում արհեստն, իբրև անկախ, ազատ զբաղմունք, գոյություն չուներ։ Արհեստային աշխատանքն անազատ մարդկանց եր բաժին ընկնում և նյութեղենների յուրաքանչյուր մշակում հիշյալ անազատ մարդիկ կատարում եյին կալվածատիրոջ սեփական տնտեսության մեջ ու նրա կարիքների համար։

Սակայն մեկը մյուսի յետևից արհեստները չքանում եյին կալվածատերերի դաստակերտներից (усадьба) և բացառապես քաղաքային զբաղմունք դառնում։ Արհեստի համքյարային կազմակերպությունն իբրև վարպետների, այսինքն անկախ արհեստավորների միավորություն, առաջ ե յեկել հենց փոխօգնության համար, այլև այն նպատակով, վոր կռիվ մղեն ֆեոդալական ճնշումից քաղաքներն ազատագրելու ու քաղաքական իրավահավասարություն ձեռք բերելու համար։

Այս ընդհանուր, հաջողակ կռվի մեջ համքյարությունների հզորությունն աճում ե, նրանց տնտեսական ուժն ամրապնդվում, սակայն, ընդ սմին, մրցման պատճառով զարգանում ե համքյարային ինքնամփոփություն ել։ Համքյարությունները դուրս եյին շպրտում իրենց միջից այն գործավորների խմբակները, վորոնք չեյին կարող սեփական տնտեսություն հիմնել ու վարել և վորոնք դեռ կարիք ունեյին արհեստին հմտանալու։ Այս խմբակները, այն ե վարպետացուներն ու աշկերտները, համքյարություններից դուրս մնալով ավելի ու ավելի մեծ շահագործման են յենթարկվում, իսկ այս հարկադրում ե նրանց սեփական միություններ կազմելու։ XIV դարից սկսած՝ արդեն տեղի յե ունենում կռիվ վարպետացուների ու համքյարությունների վարպետների միջև, մի կռիվ, վոր առանձնապես սրվում ե XV դարում ու XVI դարի սկզբում։ Իրենց միակուռ ու ավելի բազմամարդ լինելու հետևանքով վարպետացուների միությունները հաճախ հաջողություններ եյին ունենում այս կռվում։ Սակայն այս կռիվը բանվորական ամբողջական շարժում չեր կարողանում ստեղծել, վորովհետև իրենք, վարպետացուները, հզորանալով մեծամիտ ու անբարյացակամ վերաբերմունք եյին ցույց տալիս գյուղական վայրերից յեկածներին, անվարժ բանվորներին, օրամշակներին, մշակներին (батрак), վորոնք կամ ամենևին չունեյին իրենց կազմակեր-

պություններ կամ շատ թույլ եյին կազմակերպված։ Այս կռիվը, վոր տեղի յեր ունենում արհեստային համքյարությունների ու վարպետացուների միությունների միջև, այլև մշակների դաժան շահագործումը՝ ներքուստ քայքայում եյին համքյարային կարգերը։

Սակայն համքյարային կազմակերպության քայքայման համար շատ ավելի մեծ նշանակություն ունեյին արտահամքյարային (внецеховый) արհեստական պատճառները։ Ինչպես արդեն մատնանշել ենք, վարպետների վորոշ մասը, հնարավորություն ունենալով, հակառակ համքյարային կանոնադրության, շահագործելու թվով մինչև 10—15 վարպետացուների ու մշակների աշխատանքը,—հարստության նշանավոր մակարդակի հասավ մեծ կապիտալների տիրանալով։ Սակայն համքյարային կազմակերպությունը կաշկանդում եր այս վարպետ-կապիտալիստների ձեռնարկչական գործունեության զարգացումը, նեղացնելով, սեղմելով նրանց շահագործման թափը, ուստի և ձեռնարկչական կապիտալը յուր գործունեության համար ընդարձակ ասպարեզ ե փնտրում և վերջինս գտնում ե հանձին եժանագին գյուղական աշխատանքի։ Կազմակերպել տնային արդյունաբերությունը և յուր կապիտալներով մասնակցություն ունենալ այս արդյունաբերության մեջ,—ահա այն ասպարեզը, վորում տնտեսապես ծավալում ե յուր գործունեությունը ձեռնարկչական կապիտալը՝ տնային աշխատանքների բանվորական օրը հասցնելով մինչև 16-18 ժամի և առանց վորևե մեկի կողմից դիմադրություն գտնելու, շահագործելով կանանց ու մանուկների աշխատանքը, մի բան, վոր քաղաքների արհեստային համքյարությունների կանոնադրությունները արգելում եյին կամ համենայն դեպս սահմանափակում։

Այսպիսի տնայնագործական կամ տնային արդյունաբերությունն այն հետևանքն եր ունենում, վոր ապրանքներն արագ կուտակվում եյին, իսկ առևտուրը՝ տեղական շուկայի սահմաններից ել այն կողմը զարգանալը հնարավորություն ե տալիս, վոր առևտրային արագ ու օգտավետ շրջանառություն առաջանա։ Այս պայմանների ազդեցության շնորհիվ, գյուղական, տնային ու տնայնագործական արդյունաբերությունն աճում ե. այս արդյունաբերական գյուղերի ազգաբնակչությունը շատանում ե. քաղաքային արհեստը, վոր կաշկանդված ե համքյարային շրջանակներով, չի դիմանում տնային արտադրության ավելի եժանագին արդյունքի մրցմանը և տնտեսապես ավելի անձեռնտու յե դառնում։

Սրանից անկախ, արհեստավորները, վորոնք դեռ կառչած են մնացել համքյարային կազմակերպությունից և կործում են արհեստային կանոնադրությունների վրայով, ավելի ու ավելի յեն կտրվում շուկայի հետ անմիջական կապ ունենալուց, իսկ այս անջատումը կատարվում ե կապիտալիստ-ապրանքատուի ձեռքով։ Առևտրային կապիտալը, վոր առևտրի շրջանակներն ընդարձակել ե շատ ավելի հեռու, քան տեղական շուկայի սահմաններն եյին, արդեն դրության տերն ե հանդիսանում, վորովհետև միայն այս կապիտալը կարող ե ամենաձեռնտու կերպով վաճառքի հանել այն արդյունքները, վորոնք բավական չափով չեն վաճառվում արտադրության տեղին. մաս վայ-բերում, վորովհետև միայն այս կապիտալը կարող ե սպասել, վոր շուկայի կացությունը բարենպաստ դառնա և այլն։ Մանր արտադրող արհեստավորն ապրանքատուից կախում ունենալով՝ արդեն կատարում ե նրա կամքը։ Արհեստավորն արտադրում ե այն, ինչ վոր թելադրում ե ապրանքատուն, վորը

հաճախ, նրան մատակարարում է թե՛ հում նյութ, թե՛ նյութեղեն և թե՛ փող։ Յուր աշխատանքի ընթացքում արհեստավորն, անխուսափելի կերպով արդեն, սկսում է սովորել կապիտալիստ վաճառականի տնտեսապես հարկադրական պատվերները կատարել և վոչ թե համքյարային կանոնադրության մեռյալ թելադրանքները։

Այսպիսով, տնայնագործական ու տնային արդյունաբերական զարգացումը, մանր արտադրող արհեստավորի՝ շուկայի հետ անմիջական կապ ունենալուց զրկվելը, արհեստի՝ ապանքառուական կապիտալին յենթարկվելը, վարպետների ու վարպետացուների միջև տեղի ունեցող դասակարգային կռիվը, խարխլեցին համքյարական-արհեստային կարգերը և վերջիններս քայքայման հասցրին։

22. Ի՞ՆՉ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ ՈՒՆԵՑԱՎ ԱՐՀԵՍՏԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Ցամաքային ու ծովային առևտրի աճումը, վոր ընդգրկում էր վոչ միայն Յեվրոպայի, այլ և Ասիայի ու Աֆրիկայի նորանոր յերկիրներն, արտադրության առաջ այնպիսի պահանջներ է դնում, վորոնց չէր կարող արդեն բավարարել արհեստային համքյարական տնտեսակարգը։ Շուկաների նոր ու մեծացած կարիքներն արտադրության այնպիսի կազմակերպություն եյին պահանջում, վորի ժամանակ աշխատանքն ավելի արտադրողական լիներ։

Քաղաքը գյուղից մեկուսացավ, արդյունաբերությունը յերկրագործությունից բաժանվեց. արհեստավորը գյուղացուց անջատվեց, այլև նույն ինքն արհեստի ներսում տեղի ունեցավ աշխատանքի բաժանում, իսկ այս բոլորին ուղեկից էր աշխատանքի արտադրողականության արդեն ավելի նշանավոր չափով բարձրացումն ու հետևաբար՝ ապրանքային հարստության աճումը։ Սակայն արհեստային արտադրության մեջ աշխատանքի բաժանումը վոչ այլ ինչ է գլխավորապես, յեթե վոչ աշխատանքի մասնագիտացում, այսինքն մի զբաղմունքի տրոհումը մի քանի զբաղմունքների։ Որինակ, XIV—XV դարերում դերձակության արհեստից առաջ յեկան մահուդ խուզողի, ասեղնագործողի, մուշտակագործի, ճոնի, կոճկատան անողի արհեստները, վորոնք դարձան տղամարդու գործ, այն ինչ կանացի զգեստներ պատրաստելը, սպիտակեղեն կարելը վիճակվեց կանանց։

Աշխատանքի այսպիսի մասնագիտացման ժամանակ աշխատանքի վորակը նշանավոր չափով լավանում է, բավական նեղ սահմաններ են դըրվում տեխնիկական հառաջադիմությանը, հետևաբար նաև աշխատանքի արտադրողականությանը։

Տեխնիկայի արագ հառաջադիմությունն սկսվում է այն ժամանակ միայն, յերբ մի վորոշ մասնագիտության մեջ աշխատանքի մասերի բաժանում է տեղի ունենում, իսկ սրա էյությունն այն է, վոր շատ բանվորական ձեռքեր միատեղ են գործում, միևնույն ձեռնարկության մեջ կատարում են միևնույն մասնակի աշխատանքը, պատրաստելով վոչ թե մի ամբողջ արդյունք, այլ արդյունքի մի մասը միայն և ընդ սմին կիրառելով մեքենան, վոր տնտեսում է աշխատանքը և բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը։

Այսպիսով, նոր պահանջները խլում եյին հողն արհեստային արտա-

դրության վոտքերի տակից և ավելի ձեռնտու եյին դարձնում նույն իսկ տնային արտադրությունը, այսինքն այն արտադրությունը, վորի մեջ ամբողջական արհեստավորին փոխարինում էր արդյունքի այս կամ այն մասը, այս կամ այն մանրամասնությունը։

Սակայն, տնային արդյունաբերության մեջ, թեև արտադրողներին միացնում է կապիտալիստ-վաճառականից ունեցած ընդհանուր կախումը, վորը յուր կամքն էր թելադրում նրանց, այնուամենայնիվ արտադրության պրոցեսի մեջ արտադրողներն իրար բաժան-բաժան եյին մնում և հանդես եյին գալիս իբրև առանձնացած գործավորներ, վորոնցից յուրաքանչյուրն աշխատում է յուր տանը։ Պարզ է, վոր տնային բաժան-բաժան արտադրության պայմաններում, աշխատանքի տեխնիկական բաժանումն ու աշխատանքի արտադրողականությունը նույնպես վորոշ սահմաններ ունեն։ Վորքան էլ մեծանա մանր արտադրողների շահագործումը, վոր կատարվում է կապիտալիստ-ձեռնարկուի ձեռքով, այնուամենայնիվ վերջինս չի կարող ցանկալի չափերով շատացնել աշխատանքի արտադրողականությունը։ Սրա համար անհրաժեշտ էր մի նոր հետագա քայլ էլ անել՝ արհեստը պառակտելու ճանապարհին, այն է՝ պետք էր հավաքել (կենտրոնացնել) արտադրության բաժան-բաժան յեղած միջոցները միատեղ և ավելի խորացնել աշխատանքի բաժանումը։ Այս բանն այլ կերպ կատարել չէր կարելի, բայց յեթե հանելով արտադրության միջոցներն առանձին արտադրողների միջոց լինելու վիճակից և դարձնել կապիտալիստի սեփականություն՝ այս միջոցները կենտրոնացնելով միատեղ և նույն վայրում հավաքելով բանվորների մեծ կամ փոքր քանակություն։ Ահա թե ինչու կապիտալիստ ձեռնարկուն էլ ավելի յե առաջ գնում և փոփոխում է արտադրության կազմակերպությունը. փոխանակ հում նյութը, նյութեղեններն ու արտադրության գործիքները բաժանելու և տալու, վոր տուն տանեն արտադրողները, նա հավաքում է արտադրող բանվորների խմբակները մի գործանոցի մեջ, այստեղ կենտրոնացնելով այն ամենը, ինչ անհրաժեշտ է արտադրության համար և այսպիսով արտադրության այս նոր կազմակերպությունը յենթարկելով յուր լիակատար ղեկավարությանն ու վերահսկողությանը։

Այս ճանապարհով է, ահա, վոր արհեստից, տնային, տնայնագործական արտադրության միջոցով, ստեղծվում է արտադրության կապիտալիստական մի կազմակերպություն, վոր կոչվում է մանիֆակտուրա։

23. Ի՞ՆՉ Է ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՆԻՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Մանիֆակտուրա ասելով սովորաբար հասկացվում է բանվորների աշխատակցությունը (միատեղ աշխատանքը), վոր հիմնված է աշխատանքի բաժանման վրա, իսկ այս աշխատանքը գլխավորապես ձեռքի աշխատանք է։

Մանիֆակտուրան (մանիֆակտուրային արդյունաբերությունը) միջնորդ օղակ է մանր ապրանքային տնտեսություն ունեցող արհեստի ու խոշոր ֆաբրիկայի միջև։ Մանիֆակտուրան արհեստին մոտ է նրանով, վոր մանիֆակտուրայի հիմքը միևնույն արհեստային ու ձեռքով բանեցնելու տեխնիկան է։ Մանիֆակտուրան ֆաբրիկային մոտ է նրանով, վոր արդեն

մեծ կամ փոքր չափով խոշոր ձեռնարկություն է այն, վոր հիմնված է աշխատանքի տեխնիկական բաժանման վրա, կիրառում է վարձու աշխատանք և մի ասպարեզ է, վորտեղ կարող են զետեղվել խոշոր կապիտալներ և փոքրն աշխատում է խոշոր շուկայի համար։ Ինքն ըստ ինքյան հասկանալի յէ, վոր միջնորդ ողակի այս վիճակը պատճառ է լինում այն բանին, վոր ինչքան էլ մեծ լինի մանուֆակտուրան, վերջինս չի կարողանում իսպառ վըտարել մանր (արհեստային կամ տնային) արտադրությունը։ Այն ոգուտները, վոր տալիս է կապիտալիստին մանուֆակտուրան, մանր արտադրողն աշխատում է լրացնել նրանով, վոր արտասովոր չափով լարում է յուր աշխատանքը և ամենադաժան շահագործման է յենթարկում յուր ընտանիքը, բավականանալով աշխատավարձի ամենացածր մակարդակով։ Յեվ վոր չափով մանուֆակտուրային արտադրությունը հանդիսանում է թեև բավականաչափ զարգացած, սակայն, այնուամենայնիվ, ձեռքով կատարվող մի արտադրություն, այդ մանուֆակտուրային արտադրությունը չունի այն արմատական առավելությունները, վորպեսզի վերջնականապես դուրս մղի մանր արհեստային արտադրությունը։

Տնային արդյունաբերության վորոշ աստիճանի ժամանակ, մենք տեսնում ենք, վոր արդեն կապիտալիստական հարաբերություններ են գոյանում հանձին այն հարաբերությունների, վորոնք առաջ են գալիս յուր տանն աշխատող տնայնագործի ու կապիտալիստների, ապրանքառուի կամ հում նյութ տարաբաշխողի (раздатчик) *միջև։ Սակայն այս կապիտալիստական հարաբերությունները, տնային արդյունաբերության հիշյալ աստիճանի ժամանակ դեռ քիչ են զարգացած. Նրանք սուր հակադրություններ չեն ստեղծում արտադրությանը մասնակցող անհատների միջև։ Այստեղ վոչ խոշոր կապիտալիստներ կան և վոչ էլ պրոլետարիատի աչքի ընկնող մեծ շերտեր։ Մանուֆակտուրան այս տեսակետից բավական առաջ է գնացել. մանուֆակտուրան խորացնում և ընդլայնում է կապիտալիստական հարաբերությունները՝ գործի մեջ քաշելով ավելի խոշոր կապիտալներ ու ավելի մեծաքանակ բանվորներ[1])։ Մանուֆակտուրիստի, այսինքն ձեռնարկատիրոջ ու գործավորի շահերի միջև յեղած տարբերությունը և նրանց միջև մղվող կռիվը խորանում է։ Յերբ մանուֆակտուրային արտադրության ծագման ու զարգացման հետևանքով լուծվում է այն կապը, վոր միացնում է արտադրությունը յերկրագործության հետ, մի կապ, վոր բնորոշ է մանր ապրանքային արտադրության համար, այն ժամանակ գոյանում է մի հատուկ դասակարգ—մանուֆակտուրայի վարպետների* (мастеровой) *դասակարգը։ Սա դեռ ևս խոշոր մեքենային արդյունաբերության բանվորը չէ. մանուֆակտուրայի մեջ դեռ նկատում ենք անձնական կախման զանազան ձևերի մնացորդներ, մնացորդներ այնպիսի հարաբերությունների, վորոնք կապիտալիստական տնտեսության պայմաններում առանձնապես վատացնում են բանվորների դրությունը։*

Տարբերվելով արհեստից, վորը պահանջում է մեծ կամ փոքր չափերով նախնական վարժություն, մանուֆակտուրային բանվորների կատարած գործողությունները, վոր նրանք անում են աշխատանքի տեխնիկական բաժանման շնորհիվ, աչքի յեն ընկնում նրանով, վոր ավելի հասարակ են և հնարավորություն են տալիս ոգտագործելու անվարժ բանվորների աշխատանքը, նմանապես և կանանց ու դեռահասների ավելի եժանագին աշխատանքը։ Այս պատճառով էլ արտադրության մանուֆակտուրային կազմակերպությունը կապիտալիստների համար շատ ավելի ձեռնտու յէ, քան արտադրության ամեն այլ տեսակի կազմակերպություն, վոր գոյություն է ունեցել մանուֆակտուրայից առաջ։ Մանուֆակտուրայի ժամանակ հնարավոր է աշխատանքի արտադրողականությունը նշանավոր չափերով մեծացնել, եժանագին բանվորական ձեռքերն ոգտագործել և լայնարձակ շուկա դուրս գալ։ Ահա այս առավելությունների շնորհիվ մանուֆակտուրան առանց դժվարության հաղթում է արհեստին և ամենուրեք, վորտեղ հայտնըվում է, վաղ թե ուշ կործանման է հասցնում արհեստը։

[1]) *Ֆրանսիայում XVII ու XVIII դարերում, Անգլիայում XVI դարում կային մանուֆակտուրաներ, վորոնք ունեյին մինչև 1000 ու ավելի բանվորներ։ Սակայն, այնուամենայնիվ, այսպիսի խոշոր մանուֆակտուրաները միայն բացառություն եյին։*

24. Ի՞ՆՉ ՀԵՏԵՎԱՆՔԻ ՀԱՍՑՐԵՑ ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ներքին ու միջազգային առևտրի արտասովոր արագությամբ աճելը, վոր կապ ուներ մանուֆակտուրային արտադրության զարգացման հետ, արդյունաբերական ապրանքների մասսայական արտադրության պահանջ առաջ բերեց։

Սակայն արտադրության մանուֆակտուրային յեղանակը, վոր անքակտելիորեն կապված է կենդանի բանվորական ուժի կիրառման հետ, վորոշ սահմաններ եր դնում արտադրության ընդլայնմանը ու աշխատանքի արտադրողականության վերելքին, այն չափով, վորչափով մարդու ույժերն իրենց սահմանն ունեն և վորչափով ձեռքի աշխատանքը, վորքան էլ բարձր աստիճանի հասնի, այնուամենայնիվ աշխատանքի տեխնիկական բաժանման սահմանափակ հնարավորություն է միայն ընձեռում։ Մանուֆակտուրային արտադրությունը կատարեց յուր պատմական գործը. ձեռքի աշխատանքի զարգացումը հասցրեց այն վերջին սահմաններին, վորից հետո անխուսափելի յեր տեխնիկական ճգնաժամը։ Այն ժամանակ պատմության առաջ ծառացավ մարդու մկանային աշխատանքը մեքենայի գործունեյությամբ փոխարինելու խնդիրը, մեքենայի, վորը շարժման մեջ կը դրվեր բնության ուժերի քամու, ջրի ու շոգու միջոցով։ Մեքենաների կիրառումը նշանավոր չափով կանխապատրաստված եր դեռ մանուֆակտուրային շրջանում, աշխատանքի տեխնիկական բաժանման շնորհիվ, վորը լայնորեն կիրառվում եր և յուրաքանչյուր առանձին բանվորի դարձնում եր աշխատանքի այս կամ այն մշտական մասը մեխանիկորեն կատարող մի եյակ։ Այստեղից դժվար չեր հասնել այն մտքին, թե կարելի յե այսպիսի «մասնակի» բանվորին փոխարինել վորևե մեխանիզմով, մեքենայով։ Այսպիսի հնարավորություն հանդես յեկավ, յերբ տեղի ունեցան XVIII դարու վերջի մեծ գյուտերը, վոր թելադրել եյին տնտեսական զարգացող պահանջները։

Այսպիսով, արտադրության մանուֆակտուրային յեղանակի զարգացումը հող կանխապատրաստեց մեքենաների ու արտադրության մեքենային սիստեմի յերևան գալու հնարավորության համար, իսկ այս՝ վիթխարի հեղաշրջում առաջ բերեց ամբողջ տնտեսակարգի մեջ։

25. ԻՆՉ ԵՅԻՆ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ՄԵԾ ԳՅՈՒՏԵՐԸ

Առաջին գյուտերն արվել են բամբակեղենի գործվածքի արտադրության ասպարեզում, մի ճյուղի մեջ, վորը նախընթաց արհեստային ու մանուֆակտուրային դարաշրջանում ամենաբարձր զարգացումն եր ստացել:

Մինչև XVIII *դարի կեսը, ջուլհակները բամբակեղեն գործվածքներ արտադրում եյին ձեռքով, բամբակը գզում եյին ձեռքի սանդերքով և մանում վոտքով շարժվող ճախարակի ոգնությամբ, վորը միաժամանակ միայն մի թել եր մանում. այս յեղանակով ստացված մանվածքը անցնում եր ջուլհակին, վորը գործվածք եր հյուսում ձեռքի հաստոցի* (станок) *վրա:*

1765 թվականին Անգլիայում Խարգրիվսը հնարեց մանելու մեքենան (հայտնի յե «Ջեննի» անունով), վոր միաժամանակ ութը թել եր մանում: 1769 թվականին նույն Անգլիայում Արկրայտը հնարեց մանելու մի մեքենա, վորի մեջ մանողի մատներին փոխարինում եյին դուրս քաշող առանձին գլանիկներ:

Այս մեքենային տվին Վատեր մաշինա—ջրային մեքենա—անունը (անգլիերեն Water *ջուր բառից), վորովհետև այս առաջին մեքենան եր, վոր շարժվում եր ջրի միջոցով: Այս յերկու գյուտերը շատ մեծ զարկ տվին բամբակեղենի արդյունաբերության զարգացմանն Անգլիայում, վորտեղ նրանք առաջին անգամ գործածության մեջ մտան:*

Այս գյուտերից հետո, ջուլհակ Կրոմպտոնը այս մեքենաների մեջ մտցրեց յուր նորամուծությունը. թելերի այն ամրությանն ու կայնությանը, վոր ստացվում եր Արկրայտի մեքենայի շնորհիվ, այլև աշխատանքի այն արագությանը, վոր հաղորդում եր Խարգրիվսի մեքենան, Կրոմպտոնն ավելացրեց մի նորամուծություն, վոր հնարավորություն եր տալիս մեքենային յեղանակով պատրաստել վոչ միայն հաստ, այլև բարակ թելեր. իսկ այս՝ չափազանց մեծացնում եր մանվածքի արտադրությունը: Վերպեսզի մանվածքն ոգտագործելն արգելքի չհանդիպեր, մանվածքի արտադրության մեծանալն անհրաժեշտ դարձրեց գյուտեր անել նաև մանածագործական ասպարեզում. այսպիսի մի գյուտ է հենց Կարտրայտի մեքենական մանածագործային հաստոցը, վորի հանդես գալը տեղի յե ունեցել 1789 թվականին:

Սակայն վորքան էլ այս գյուտերը մեծ գյուտեր լինեյին, նրանց ոգտագործումը չեր կարող տեղի ունենալ, քանի մեքենաները շարժման մեջ եյին դրվում մարդու ձեռքով, կենդանու կամ ջրի միջոցով: Վորպեսզի հնարավոր լիներ մեծամեծ քանակությամբ՝ բամբակ վերամշակել, անհրաժեշտ եր ավելի կատարյալ շարժիչ ուժ, վորպիսին հանդիսանում եր շոգու ուժը: Շոգեմեքենայի գյուտի այն մասը, վորը կարելի յեր իբրև շարժիչ հարմարեցնել ամեն տեսակի աշխատանքի համար, պատկանում է Ջեմս Ուատտին, վորը յուր մեքենան ոգտագործեց 1774 թվականին գործարանում, վիթխարի հաջողությամբ [1]*: Մեծ գյուտերի շարքում պետք է դասել շոգեմեքենայի համար ածուխն ոգտագործելը, առանց վորի դժվար թե շոգեմեքենան կարողանար ընդարձակ նշանակություն ստանալ: Հենց այս առաջին մեծ գյուտերն եյին, վորոնք հիմք դրին տեխնիկայի հետագա անհավատալիորեն արագ զարգացմանը:*

Մեքենաների գյուտը Անգլիայի, իսկ հետո նաև ուրիշ յերկրների տնտեսական կյանքում այնպիսի վիթխարի ու խիստ փոփոխություններ առաջ բերեց, վոր XVIII *վերջի շրջանը իրավամբ համարվում է արդյունաբերական հեղափոխության դարաշրջան:*

[1]) Շոգին, իբրև շարժիչ ուժ ոգտագործելու առաջին փորձը պետք է վերագրել դեռ 1690 թվականին, յերբ ֆրանսիացի բժիշկ Դ. Պապենը հնարեց շոգեկաթսան: 1704 թվականին Անգլիայում, ածխահանքերից մեկում, ջրհան մեքենաների վրա աշխատող մի բանվոր, Նյուկոմեն անունով, մի մեքենա հնարեց՝ առաջին անգամ կիրառելով շոգու արհեստական սեղմումը: Ուատտը Նյուկոմենի մեքենայի մոդելն ուղղելով՝ նրա մեջ այնպիսի եյական փոփոխություն մտցրեց, վոր հենց նրա գյուտերն եյին, վորոնք XIX *դարը դարձրին գլխավորապես շոգու դար:*

26. ԻՆՉ ԴԵՐ ԽԱՂԱՑԻՆ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻ ՄԵԾ ԳՅՈՒՏԵՐԸ

XVIII *դարի վերջի գյուտերն արտադրության մեքենային* (машинной) *յեղանակի սկիզբը դրին: Յեթե դեռևս մանուֆակտուրան զորեղ հարված եր հասցրել արհեստին՝ մանր արտադրողների մասսան տնտեսական անկախությունից զրկելով, ապա մեքենաների յերևան գալը վերջնականապես խլեց հողը արհեստի ու մանուֆակտուրայի վոտքի տակից, իբրև արտադրության այնպիսի յեղանակների, վորոնք հիմնված եյին ձեռքի աշխատանքների վրա: XIX դարի սկզբում արդեն բամբակամանածային արտադրության մեջ մեքենաներ կիրառելը վերջնականապես հրապարակից դուրս է մղում մանր արհեստանոցները: Մանածագործական արդյունաբերության մեջ մանուֆակտուրայի կռիվը մեքենային արտադրության դեմ ավելի յերկարատև ու սուր յեղավ, սակայն հետևանքը նույնն եր, այն է՝ լիակատար հաղթություն տարավ ֆաբրիկան:*

Տնային ջուլհակները, վորքան էլ կրճատեյին իրենց պահանջները, վորքան էլ յերկարացնեյին իրենց բանվորական որը, վորքան էլ շահագործեյին իրենց ընտանիքի աշխատանքը, այնուամենայնիվ մեքենային արտադրության մրցումը սպանիչ եր նրանց համար: Նրանք վերջի վերջո հարկադրված եյին թողնելու իրենց արհեստանոցը և գնալու մանածագործարան՝ արագորեն շատացնելով պրոլետարիատի խմբերը, ստեղծելով պահեստազոր (резервная армия) այն չափով, վորչափով վոր արդյունաբերությունը չեր կարողանում ծծել ու յուր ներսն առնել մանր արտադրողների այն ամբողջ մասսան, վոր պրոլետացել եր:

Մեծ գյուտերն ու հայտնագործությունները չեն սահմանափակվում բամբակեղենի արդյունաբերության ասպարեզով. նման գյուտեր տեղի յեն ունենում նաև յերկաթե հանքանյութի մշակման, չուգուն հալելու, յերկաթ պատրաստելու, պողպատի արտադրության և այլ ասպարեզներում: Այս գյուտերին զուգընթաց՝ սկսում են վիթխարի ֆաբրիկաներ ու գործարաններ առաջանալ, վորոնք ոգտագործում են ամեն մի գյուտ ու կատարելագործություն, վոր կատարվում է մեքենային տեխնիկայի ասպարեզում՝ արտադրությունը մեծացնելու համար:

Արտադրության վիթխարի աճումն այն հետևանքն է ունենում վոր առաջ է գալիս բանվոր ձեռքերի պահանջ, և գյուղացիական համայնական հողերը կողոպտվում են, գյուղացիական բնակչության մասսան բռնի կերպով հողազրկվում է, իսկ այս բնակչությունը, վորը բանվորացած արհեստավորների ու տնայնագործների հետ արդյունաբերությանը եժանագին բանվորական ձեռքեր եր մատակարարում, հասնում է հսկա չափերի: Սա-

կայն չնայած արտադրության արագ աճումին ու վաճառքի շուկաների ընդարձակմանը, բանվորների ամբողջ բանակը չեր կիրառվում արդյունաբերության մեջ։ Բանվորական վիթխարի պահեստազորն արդյունաբերական կապիտալիստներին հնարավորություն եր տալիս բանվորների շահագործումը հասցնելու վիթխարի չափերի։ Արդյունաբերական կապիտալիզմի առաջին քայլերին ուղեկից եյին պրոլետարիատի անլուր չարչարանքներն ու տասնյակ հազարավոր տղամարդկանց, կանանց ու յերեխաների կորուստը։ Այնուամենայնիվ այս շահագործումը չեր դադարում, այլ ընդհակառակը, միջոցներ եր ընձեռում ել ավելի վիթխարի թափով զարգացնելու արդյունաբերությունը, վորը չտեսնված արագությամբ առաջադիմում եր շնորհիվ այն հանգամանքի, վոր արտադրության տեխնիկայի մեջ անընդհատ կատարելագործություններ եյին տեղի ունենում, հաղորդակցության ճանապարհներն արագ հառաջադիմում եյին և կապիտալիստական արդյունաբերությանը ծառայող շուկաներն ընդարձակվելով հասնում եյին համաշխարհային չափերի։

Այսպիսով, XVIII դարի վերջի մեծ գյուտերն ու հայտնագործությունները վճռական ազդեցություն ունեցան այն ուղղությամբ, վոր խոշոր մեքենային արտադրությունը դուրս մղե մանր, ձեռքով կատարվող արտադրությունը։ Այս խոշոր մեքենային արտադրությունը ստեղծում է վիթխարի կապիտալիստական արդյունաբերություն, վորն և կապիտալիստական կարգի հիմքն է հանդիսանում։

27. Ի՞ՆՉՊԻՍԻ ՏԵԽՆԻԿԱ ՈՒՆԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կապիտալիստական հասարակության տեխնիկայի տարբերիչ գիծն այն է, վոր այս տեխնիկան արտադրության համար գործ է ածում մեքենաների սիստեմներ։ Մանիֆակտուրայից ֆաբրիկայի անցնելուն ուղեկից է տեխնիքական լիակատար հեղաշրջումը, վոր տապալում է ձեռքով կատարվող աշխատանքի դարավոր արվեստը։ Այս տեխնիքական հեղաշրջմանն անխուսափելիորեն հաջորդում է նաև հանրային հարաբերությունների խորքին հեղաշրջումը։

Մեքենան, իբրև այսպիսին, մարդկանց ծանոթ եր մեքենային կապիտալիզմի հայտնվելուց դեռ շատ առաջ ել։ Դեռ ևս ստրկատիրական դարաշրջանում տնտեսության մեջ օգտվում եյին ջրաղացներից, դուրս ծծող մեքենաներից. ջրհաններից։ Միջին դարերում հայտնի յեն հողմաղացներն ու ամենահասարակ գործողություններ կատարելու մեքենաներ։ Սակայն, չնայած մեքենաների կիրառմանը, մենք, այնուամենայնիվ, կապիտալիստական հասարակությունից առաջ, մեքենային արտադրություն չունեյինք, վորովհետև, յուր սիստեմով, նախընթաց դարաշրջանի արտադրությունը ձեռքի արտադրություն եր։ Միայն այն ժամանակ, յերբ մարդիկ գտնում են շոգու շարժիչ ուժը և հնարում այնպիսի մեքենաներ, վորոնք փոխարինում են մարդու աշխատանքը և վիթխարի չափով արագացնում մարդու գործն՝ այլև բոլորովին անտես առնելով մարդկային օրգանիզմի հատկությունները, միայն այս պայմաններում մեքենան լիակատար տիրապետությու

է ձեռք բերում և արտադրության ամբողջ սիստեմը ձևափոխում ընդարձակ չափերով օգտագործելով գիտությունն այս նպատակի համար։

Այսպիսով, կապիտալիստական հասարակության տեխնիկան բնորոշվում է հետևյալ գծերով.

1) Արտադրության մեքենային յեղանակը զարգանում է ինչպես յերկրագործության մեջ, այնպես յեվ (հատկապես վիթխարի չափերով) արդյունաբերության ասպարեզում. 2) աշխատանքի տեխնիկական բաժանումը, արտասովոր լայն չափեր է ընդունում. 3) ընդարձակ չափերով կիրառվում է շոգին, իբրեվ շարժիչ ուժ, իսկ հետագայում, նույն նպատակով գործ են ածում ելեկտրականությունը. 4) վիթխարի չափերով զարգանում յեվ կատարելագործվում են հաղորդակցության ու կապի միջոցները (հաղորդակցության յերկաթուղային ու ջրային, հետագայում նաեվ օդային ճանապարհները, հեռագիրը, հեռախոսն ու ռադիոն)։

28. Ի՞ՆՉԸ ՆՊԱՍՏԵՑ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՂ ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ

Մինչև 1914—18 թվականների իմպերիալիստական պատերազմը կապիտալիստական հասարակության արտադրող ուժերի՝ արտասովոր չափերով հզոր ու արագորեն զարգանալու պատճառը գլխավորապես տեխնիկայի վիթխարի զարգացման հետևանքն եր։

Կապիտալիստական հասարակության արտադրող ուժերի զարգացմանը նպաստել են նաև հետևյալ պայմանները. 1) կապիտալիզմի աշխարհագրական սահմանների հսկա ընդարձակումը, այսինքն այն, վոր կապիտալիստական շահագործման շրջանակի մեջ են ներս քաշվել Ավստրալիայի, Աֆրիկայի ու Ասիայի վիթխարի տարածությունները իրենց հոծ բնակչությամբ, վորոնց թիվը հասնում է հարյուրավոր միլիոնների. 2) աշխատանքի միջազգային բաժանումը, այսինքն այն, վոր յերկրները բաժանվել են տնտեսապես կախյալ, առավելապես հողագործական, յերկրների, մեծ չափերով հում նյութի հարստություն ունեցող յերկրների ու տնտեսապես իշխող, այն է՝ արդյունաբերական յերկրների։ Աշխատանքի այս միջազգային բաժանումը նպաստեց այն բանին, վոր արտաքին առևտուրը վիթխարի չափերով զարգացավ և արդյունաբերական, կապիտալիստական յերկրները հարստացան ի հաշիվ հետամնաց յերկրագործական յերկրների. 3) համաշխարհային միաձույլ տնտեսության ստեղծումը, մի տնտեսություն, վոր ունի «կենտրոնական» յեվրոպական կորիզ, այլև այն, վոր ամբողջ մնացած աշխարհը յենթարկվում է բացառապես այս կենտրոնական կապիտալիստական կորիզի ազդեցությանը. 4) գյուղական տնտեսության կապիտալիզացիան, այսինքն գյուղատնտեսության արագ աճումն ու համաշխարհային շուկա դուրս գալը. 5) ընդլայնված վերարտադրության արագ պրոցեսը, այսինքն՝ արտադրության միջոցների, այն է՝ ամեն տեսակ մեքենաների անընդհատ բազմացումը պատերազմից առաջ. 6) սրա հետ զուգադրված բուն իսկ կապիտալի կազմության փոփոխությունը դեպի ավելի բարձր կազմության կողմը, այսինքն այն, վոր մեծանում է կապիտալի մշտական մասը, վորը կազմում է արտադրող ուժերի զարգացման հիմքը. 7) բանվոր դասակարգի ու սրա աշխատանքի արտադրողականության քանակային, վիթխարի աճումը և 8) ներքին ու միջազգային վարկի հսկա զարգացումը, վոր նպաստում է կապիտալի կուտակմանը։

29. Ի՞ՆՉ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻ՛Ն ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒ՛Ն ՈՒ՛ՆԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱ՛Ն ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒ՛ՆԸ

Կապիտալիստական հասարակության մեջ մենք տարբերում ենք յերկու հիմնական դասակարգեր. մի դասակարգը, վոր միայն բանվորական ուժ ունի և հարկադրված է այն վաճառել, պրոլետարիատն է, և մյուս դասակարգը, վոր տեր է արտադրության բոլոր միջոցներին, կապիտալիստներն են (բուրժուազիան)։

Արդյունաբերական կապիտալիզմի ծագման դեռ առաջին որերից սկսել է խոշոր արտադրության կռիվը մանրի դեմ, մեքենային արտադրության կռիվը արհեստային արտադրության դեմ։ Այս կռվի մեջ հաղթությունը տարավ խոշոր մեքենային արտադրությունը, մի հաղթություն, վորի հետևանքը յեղավ արհեստավորների տնանկությունն ու նրանց մասսայորեն պրոլետար դառնալը։

Սակայն, թեև մարդկային հասարակությունների պատմության մեջ դասակարգերից վոմանք չքանում են, մյուսները նոր ծնվում, նայած արտադրության յեղանակների փոփոխությանը, այնուամենայնիվ հին, իրենց ժամանակն անցկացրած դասակարգերի չքանալը արտադրության յեղանակների ծագման ու զարգացման հետ քայլ առ քայլ զուգընթաց չի գնում։ Հին դասակարգերը զրկվում են իրենց իշխող դիրքերից, սակայն այնպես արագ չեն չքանում։ Այսպես էլ կապիտալիստական հասարակության մեջ, մանավանդ այն դեպքերում, յերբ վերջինս բավականաչափ չի զարգացել, յերկու գլխավոր դասակարգերի կողքին, վորոնք համապատասխան են կապիտալիստական արտադրական հարաբերություններին, այսինքն պրոլետարիատի ու բուրժուազիայի կողքին, դեռ պահպանվել են ուրիշ դասակարգեր էլ, վորոնք ունեն ավելի պակաս պայծառությամբ գծված և վոչ լրիվին կայուն դասակարգային գծեր։ Այս միջնորդ ողակ հանդիսացող դասակարգերը (վորոնք միջնորդ ողակ են այն պատճառով, վոր նրանց չի կարելի վոչ պրոլետարիատին վերագրել ամբողջովին և վոչ էլ խոշոր բուրժուազիային), գլխավորապես մանր բուրժուական են, ինչպես և պետք է լինեյին նրանք, վորովհետև համապատասխանում էյին նախընթաց դարաշրջանին, նախակապիտալիստականին։ Այս դասակարգերի շարքում պետք է դասել մանր սեփականատեր գյուղացիներին, վորոնք իրենց սովորաբար փոքրիկ տնտեսությունը վարում են ընտանիքի բոլոր ուժերով։ Այս գյուղացիները պրոլետարներ չեն, վորովհետև նրանք սեփականության իրավունքով հողի ու այլ տնտեսական արժեքների տեր են հանդիսանում և տնտեսությունը վարում են անհատաբար։ Սակայն նրանք կապիտալիստներ էլ չեն, վորովհետև ընդհանրապես չեն շահագործում ուրիշի աշխատանքը, այլ, ընդհակառակը, իրենք էյին շահագործվում կալվածատերերի ու կապիտալիստների կողմից։

Գյուղացիների դրությանը մոտ տեղ են գրավում տնայնագործները։ Քաղաքում այս դասակարգին համապատասխանում են՝ արհեստավորները, մանր առևտրականները, այլև ինտելիգենցիան, վոր ծառայում է բուրժուազիային։

Յերկու գլխավոր դասակարգերի միջև տեղի ունեցող ամենօրյա կռվի մեջ այս միջին դասակարգերն ու խմբակները քիչ մասնակցություն են ունենում գլխավորապես։ Իսկ յերբ բանվոր դասակարգի ու բուրժուազիայի միջև տեղի ունեցող ճակատամարտը սրվում է վճռական է դառնում, այն ժամանակ նրանք տատանվող դիրք են բռնում՝ ավելի թեքվելով բուրժուազիայի կողմը, մանավանդ այն ժամանակ, յերբ կռվի հետևանքները պարզ չեն և միայն վորոշ պայմաններում բռնում են պրոլետարիատի կողմը (ամենաչքավոր գյուղացիությունը Ռուսաստանում)։

30. Ի՞ՆՉ ՀԻՄՆԱԿԱ՛Ն ՀԱՏԿԱՆԻՇՆԵ՛Ր ՈՒ՛ՆԻ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱ՛Ն ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒ՛ՆԸ

Կապիտալիստական հասարակության հիմնական հատկանիշներն են՝ 1) արտադրության ապրանքային բնույթը. 2) բնակչության փոքրամասնության — կապիտալիստների դասակարգի՝ արտադրության միջոցներին մոնոպոլ տիրելը ու 3) վարձու աշխատանքը։

Ապրանքային արտադրությունը կապիտալիստական հասարակության հիմնական հատկանիշ է այն պատճառով, վոր կապիտալիստական հասարակության մեջ ամբողջ արտադրությունը կատարվում է վոչ թե արտադրողի սպառման համար, այլ շուկայի համար։ Ապրանքային արտադրությունն, իբրև տնտեսության հիմք, այն ժամանակ միայն կարող էր ընդհանրական բնույթ ստանալ, յերբ արտադրության միջոցները բաժանվել էին արտադրողից և անհատական միջոց լինելուց դադարելով դարձել էին հանրային, սակայն գտնվում էին կապիտալիստների մոնոպոլ տիրապետության ներքո։ Այսպիսով, կապիտալիստական հասարակության մեջ ապրանքային տնտեսությունը հիմնված է հանրային արտադրության ու կապիտալիստական յուրացման վրա։ Հենց այս է, վոր պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև դասակարգային հակասություն է առաջ բերում։

Սակայն ապրանքային արտադրությունը հատուկ է վոչ միայն կապիտալիստական հասարակությանը, այլ և մասամբ ավելի նախնական ժամանակաշրջաններին, վորոնք գոյություն են ունեցել կապիտալիստական հասարակությունից առաջ։ Յեվ յեթե, այնուամենայնիվ կապիտալիստական հասարակության մեջ ապրանքային արտադրության բնույթը բոլորովին այլ է, քան ասենք, որինակ, ֆեոդալականի մեջ, ապա այս առաջ է գալիս գլխավորապես նրանից, վոր իմպերիալիստական հասարակության մեջ ապրանքը շուկա յե գալիս վոչ թե յեզակի, անկախ արտադրողների կողմից, այլ կոլլեկտիվորեն արտադրողների — վարձու բանվորների կողմից, վորոնք զուրկ են արտադրության միջոցներից և վորոնց ֆաբրիկաներում ու գործանոցներում հավաքողը կապիտալի տնտեսական ուժն է, այն կապիտալը, վորը միայն տիրապետում է արտադրության միջոցների վրա։ Արտադրության միջոցների ահա հենց այս բացառիկ մոնոպոլ տիրապետությունն է կապիտալիստական հասարակության յերկրորդ հատկանիշը։

Յեվ վերջապես յերրորդ հատկանիշը — վարձու աշխատանքը — ասում է մեզ, վոր կապիտալիստական հասարակության մեջ բանվորական ուժը վոչ թե բանվորի սեփականությունն է, այլ կապիտալիստի սեփականությունն է, քանի վոր կապիտալիստն է գնել այն, այսինքն վճարել՝ աշխատեցնելու համար։ Ուրիշ խոսքով կապիտալիստական հասարակության մեջ բանվորական ուժը նույնպիսի ապրանք է, ինչպիսին է բամբակը, յերկաթը, ածու-

խը է այլն, սակայն մի այնպիսի ապրանք, վորը կապիտալիստի համար հատուկ նշանակություն ունի[1])։ Ընդ սմին, բանվորական ուժի, իբրև ապրանքի, բնորոշ հատկությունն այն է, վոր շուկայում վաճառվում է վոչ թե մարդը, (ինչպես ստրկատիրական դարաշրջանում), այլ հենց ինքը, բանվորական ուժը, ընդ վորում ինքը, գործավորը անմիջապես ազատ մարդ է մնում։ Այսպիսի բանվորը, վոր յուր գոյությունը պահպանելու համար հարկադրված է վաճառելու յուր բանվորական ուժը, և հետևաբար վարձվելու, ապրելու վարձու աշխատանքով, կոչվում է պրոլետար։ Վարձու աշխատանք ու հետևաբար նաև պրոլետարիատ չի յեղել նախնադարյան տոհմային կոմունիզմի հասարակության մեջ։ Չեն լինելու նաև կոմունիստական հասարակության մեջ, վորը գալու յե փոխարինելու կապիտալիստականին։ Ստրկատիրական ու ֆեոդալական հասարակությունների մեջ էլ աշխատանքը, իբրև ընդհանուր օրենք, չէ յեղել վարձու աշխատանք և հետևաբար այն ժամանակ էլ գոյություն չէ ունեցել պրոլետարիատ՝ բառիս վերը մատնանշված իմաստով։

31. ԱՐԴՅՈՔ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՆՓՈՓՈ՞Խ Է ՄՆՈՒՄ

Վո՛չ, անփոփոխ չէ մնում։ Յուր զարգացման պրոցեսի ընթացքում, այն ժամանակ, յերբ արդյունաբերական կապիտալիզմը ձգտում է սահմանափակել կամ վոչնչացնել մրցումը և ամենամեծ վաստակը կենտրոնացնել փոքրաթիվ ձեռքերում, վերոհիշյալ կապիտալիզմը յելնում է ավելի բարձր աստիճանի վրա, վորին տալիս են ֆինանսական կապիտալիզմ անունը։

Արդյունաբերական կապիտալիզմի զարգանալու ու ֆինանսական կապիտալիզմ դառնալու ընթացքը պատկերանում է այս կերպ։ Ձեռնարկությունների միջև տեղի ունեցող մրցումը, վորի ժամանակ խոշոր ձեռնարկությունները կուլ են տալիս մանրերին, այն հետևանքն է ունենում, վոր կապիտալները համակենտրոնանում (կոնցենտրացիա) ու կենտրոնանում են, այսինքն նրանց թիվը քչանում է, սակայն նրանք ավելի խոշոր միավորներ են կազմում (առանձին կապիտալիստները դադարում են անհատաբար գործելուց և անցնում են ձեռնարկությունների ակցիոներական ձևին)։ Սակայն վորքան էլ արագ էր ընթանում կապիտալի աճումը առանձին ձեռնարկությունների միավորության միջոցով, այնուամենայնիվ կապիտալիստական զարգացման պայմանները կապիտալի ձուլման էլ ավելի բարձր ձևեր մղեցին հրապարակ։

Ինչպես անհատ կապիտալիստներն, այնպես և ակցիոներական ընկերություններն իրար դեմ կատաղի կռիվ են մղում, վորի ընթացքում հզորը հաղթում է թույլին. այս հաղթությունը հաճախ պատճառ է լինում նրանց թուլանալուն, վորովհետև մրցման կռիվն այն հետևանքն է ունենում, վոր ապրանքների գներն ընկնում են։ Այս յերևույթն առանձնապես խիստ արտահայտվեց անցյալ դարի 80-ական թվականներին, յերբ պայթեց և շատ յերկար տևեց կապիտալիստական արդյունաբերության կրիզիսը։ Հենց այս հանգամանքն էր, վոր պատճառ դարձավ կապիտալի կազմակերպության նոր

[1]) Տես 1 գլուխ 20-րդ հարց։

ձևերի առաջանալուն, այն է՝ սինդիկատների ու տրեստների կազմակերպվելուն։

Սինդիկատների ու տրեստների խնդիրն այն էր, վոր առևտրային կամ արտադրական մենաշնորհի միջոցով վերացնեն մրցումը, այլև վերջինիս հետ կապ ունեցող տատանումը գների, վոր տեղի յեն ունենում ներքին շուկայում։ Յերբ ձեռնարկություններն անցնում են փոքրաթիվ, բայց ավելի հզոր կապիտալիստների ձեռքը, սրան զուգընթաց՝ կապիտալներն էլ կենտրոնանում են բանկերում։ Այնպիսի վիթխարի կապիտալիստական կազմակերպություններ, ինչպիսին են տրեստները (վորոնք միացնում են միասեռ ձեռնարկություններ, որինակ՝ նավթային ձեռնարկությունը նավթային՝ ձեռնարկության հետ) կամ էլ ավելի խոշոր կոմբինատները (վորոնք միացնում են այլասեռ ձեռնարկություններ, որինակ՝ չուգունաձուլային ձեռնարկությունները, ածուխ արտադրող, պողպատաձուլային, մեքենաշինարարական, յերկաթուղային և այլն ձեռնարկությունների հետ), կարիք են զգում դրամական հսկա միջոցների, վորոնք հաճախ գերազանցում են նրանց կապիտալներից։ Այս պայմաններում, այսպիսի արդյունաբերական ձեռնարկությունները—ակցիոներական ընկերությունները, տրեստներն ու սինդիկատները—հարկադրված են լինում դիմելու բանկերի օգնությանը, վորոնք իրանց ձեռքում կենտրոնացած են ունենում բնակչության մասսայի միջոցները, այն էլ վոչ միայն մեկ յերկրի, այլև շատ յերկրների։ Բանկերը, վորոնք փողի առուտուր են անում, այսինքն վարկով փող են տալիս տոկոսով, խոշոր արդյունաբերական միավորություններին միջոցներ են մատակարարում։ Յերբ բանկում նրանց փող են տալիս, ապա շահագրգռված են լինում վոր առանձին ձեռնարկությունների ու նրանց միավորությունների միջև տեղի ունեցող մրցումը նրանցից վոմանց դեպի կործանումը չտանի։ Վորպեսզի ձեռնարկությունների մեջ դրած փողերը կորցնելուց խուսափեն, վորպեսզի ձեռնարկությունների միջև կապ ստեղծեն ընդհանուր օգտի համար և նրանց իրենց ազդեցությանը յենթարկեն, բանկերը մի քայլ էլ առաջ են գնում։ Այս կամ այն ձեռնարկության ակցիաները կամ օբլիգացիաները[1]) գնելու միջոցով նրանք վճռական ազդեցություն են ձեռք բերում հիշյալ ձեռնարկությունների գործերի ընթացքի վրա։ Բացի սրանից, կապիտալիզմի զարգացման վորոշ աստիճանի ժամանակ, յերբ նոր ձեռնարկությունների կազմակերպությունը պահանջում է համեմատաբար վիթխարի միջոցներ, վոչ մի ձեռնարկություն ընդհանրապես չի կարող գոյություն ունենալ առանց բանկերի գոյության։ Այսպիսով բանկերի դրամական կապիտալն աստիճանաբար, հետզհետե ավելի ու ավելի յե հոսում ու լցվում արդյունաբերության մեջ, այստեղ բացառիկ իշխող դեր է նվաճում և ստեղծում է կապիտալի նոր, այն է՝ ֆինանսական կապիտալի ձև։

Ֆինանսական կապիտալիզմը մեկն է այն ամենաբարձր աստիճաններից, վորոնց հասել է կապիտալիզմն իր զարգացման ընթացքում։ Այս աստիճանի ժամանակ կապիտալի հզորությունը վիթխարի յե, մանավանդ այն պատճառով, վոր մեծ քանակությամբ այն կենտրոնանում է ավելի ու ավելի փոքրաթիվ, խոշոր տրեստների ու բանկերի ձեռքում։ Որինակ՝ Ֆրանս-

[1]) Ֆինանսական կապիտալի, այլև ֆինանսական ու արդյունաբերական կապիտալների միջև յեղած փոխհարաբերության մասին ավելի մանրամասն տես Գլ. III, 14, 15, 16-րդ հարցերը։

սիայում, պատերազմից առաջ, միայն չորս բանկ իշխում էին, ինչպես յերկրի ներսում, այնպես և նրա սահմաններից շատ հեռու վայրերում, և համաշխարհային տնտեսության հրապարակի վրա միահեծան տեր էին հանդիսանում։

32. Ի՞ՆՉ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՅԵ ՀԱՍՑՆՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԳՈՅԱՑՈՒՄԸ

Ֆինանսական կապիտալիզմի գոյացումն անխուսափելի կերպով խոշորագույն կապիտալիստական յերկիրներն այն բանին է հասցնում, վոր սրանք ձգտում են իրենց տիրապետությունն ամրապնդելու համաշխարհային տնտեսական տերրիտորիայի ըստ կարելույն մեծ մասի վրա, այսինքն՝ հասցնում է իմպերիալիզմին։ Այս ձգտումն իր հերթին պատճառ է լինում, վոր սպառազինությունն անընդհատ աճում է և կատարելագործվում, այսինքն՝ առաջ է գալիս միլիտարիզմ, իսկ միլիտարիզմը հասցնում է պատերազմների, վորոնք տեղի յեն ունենում առանձին կապիտալիստական հըսկաների ու սրանց միությունների միջև։

Ֆինանսական կապիտալիզմն ինչո՞ւ յե հասցնում պատերազմների։ Ի՞նչ շարժիչ ուժեր են գործում այս ուղղությամբ։

Ֆինանսական կապիտալն ամենից առաջ աշխատում է թուլացնել կամ վոչնչացնել այն մրցումը, վոր տեղի յե ունենում արդյունաբերական միավորների ու առանձին խոշոր ձեռնարկությունների միջև, ձգտելով, հենց այս միջոցով, լիակատար տիրապետություն ձեռք բերելու շուկայում։ Ֆինանսական կապիտալը մեծ կամ փոքր հաջողակությամբ, այնուամենայնիվ, կարողանում է հասնել այս նպատակին, ազգային տնտեսության սահմաններում, այսինքն՝ յուրաքանչյուր առանձին յերկիրների տնտեսության ասպարիզում, սակայն, արդյո՞ք վերանում է այս միջոցով մրցումն ընդհանրապես։ Վո՛չ, չի վերանում, այլ հասնում է ել ավելի բարձր աստիճանի, ել ավելի մեծ լարման, ընդգրկելով համաշխարհային շուկան։ Այս անգամ արդեն մրցումը տեղի յե ունենում վոչ թե միևնույն յերկրի կապիտալիստների միջև, այլ զանազան յերկիրների խոշոր կապիտալիստական միավորությունների, այն է՝ պետությունների միջև։ Այն հանգամանքը, վոր միջազգային տնտեսական հրապարակի վրա աշխատանքի բաժանումն է նկատվում, այսինքն՝ յերկիրները տրոհվում են ագրարային (հողագործական) ու արդյունաբերական խմբերի, այն հետևանքն է ունենում, վոր յուրաքանչյուր արդյունաբերական յերկիր ձգտում է իր համար ամենանպաստավոր պայմաններ ստեղծել՝ սեփական արդյունաբերությունը զարգացնելու նպատակով, վորպեսզի ամենից ոգտավետ շահագործման յենթարկի հետամնաց ագրարային յերկիրները։ Այս ձգտումը կապիտալիստական յերկիրներին հասցնում է հովանավորական քաղաքականության (պրոտեկցիոնիզմ), այսինքն՝ այնպիսի քաղաքականության, յերբ մի յերկրի կապիտալիստներն իրենց վաստակները պաշտպանում են մի պատնեշի ոգնությամբ, վոր կոչվում է մաքս։ Այս մաքսերը թանկացնում են ոտարերկրյա ապրանքը և կապիտալիստներին հնարավորություն են տալիս իրենց պետության ներսում իրենց ապրանքների գները ավելի բարձր պահելու։

Թերևս կապիտալիստները հենց շատ լավ զգային իրենց, յեթե, ուրիշ

յերկիրների կապիտալիստների մրցումից պատնեշներով պաշտպանվելով, կարողանային ապրել ու զարգանալ ներքին շուկայի հաշվին միայն։ Սակայն այս չկա։ Աշխատավոր մասսայի գնողունակությունը (покупательная способность) ցած է, իսկ կապիտալիստական խոշորագույն յերկիրների արտադրողականությունը բարձր է և հետզհետե ավելի ու ավելի յե աճում։ Ապա ի՞նչ պետք է անեն սրանք ապրանքների ավելցուկը։ Այս ապրանքները հարեվան կապիտալիստական յերկիրներն արտահանելը թե՛ դժվար է և թե անպաստ, քանի վոր այս յերկիրներն իրենց շրջափակել են բարձր մաքսերով։ Նշանակում է, պետք է շուկաներ վորոնել ավելի հեռու վայրերում, այն էլ այնպիսի շուկաներ, վորտեղ ներմուծումը չի արգելված։ Պետք է այս շուկաները յենթարկել իր ազդեցությանը և յեթե այս բանը չի կարելի անել խաղաղ, տնտեսական ճանապարհով, ապա պետք է անել ռազմական ուժով։ Սակայն, հո՛ մենակ մեկ կապիտալիստական գայլաձուկը չէ այսպիսի հեռավոր ու ոգտավետ շուկաներ փնտրում։ Շուկաներն իրենց անբաժան ոգտագործության համար նվաճելու ձգտման ու վորոնումների միջոցին մի շարք խոշոր կապիտալիստական պետությունների շահեր են բախվում իրար։ Ի՞նչպես պետք է հաշտեցնել շահերի այս տարբերությունը, մրցողների այս ձգտումը, վոր կամենում է այս կամ այն շուկայի հարստությունները մեկ պետության բացառիկ ոգտագործման առարկա դարձնել։ Պետությունները, սկզբում, փորձում են այս բանն անել խաղաղ, այսպես ասած դիպլոմատիական, ճանապարհով։ Սակայն մրցումն, այնուամենայնիվ, սրվում է. մի քանի գայլաձկների խաղաղ համակեցությունը չափազանց դժվարանում, և հասունանում է զենքի ուժով հարցը լուծելու անհրաժեշտությունը. զենքի, վոր այնքան առատորեն ունեն կապիտալիստական պետությունները։

Սակայն ֆինանսական կապիտալիզմն, իր համաշխարհային տիրապետությունն ամրապնդելու համար, քանի գնում, այնքան ավելի յե ընդհարվում մի ուրիշ արգելքի էլ։ Հետամնաց յերկիրների գնողունակությունը բավական դանդաղորեն է աճում, իսկ կապիտալները կուտակվում են արագ։ Հարց է առաջ գալիս, ի՞նչ պետք է անել այս կապիտալները։ Պե՞տք է արդյոք մտցնել արտադրության մեջ և վերջինս ընդարձակել։ Վո՛չ, այս չի կարելի անել, վորովհետև յերբ վաճառքն անբավարար չափերով է կատարվում (իսկ մենք արդեն ասել ենք, վոր ամենահարուստ, կապիտալիստորեն զարգացած յերկիրներն են հենց, վոր շրջափակված են ու պաշտպանվում են իրարուց մաքսային պատնեշով, այսինքն մաքսային պատնեշով շրջափակված են հենց այն յերկիրները, վորոնք ամենաբարձր գնողունակություն ունեն), այն ժամանակ արտադրությունը մեծացնելը տանում է դեպի գերարտադրություն, դեպի կրիզիսներ, վորոնք սաստիկ վնասներ են հասցնում կապիտալիստ դասակարգի գրպանին։ Այսպիսի պայմաններում մնում է արդեն վոչ թե ապրանքներ արտահանել, այլ դրամ և սրանով ոտար յերկրում ֆաբրիկաներ, գործարաններ, յերկաթուղիներ ու այլ ձեռնարկություններ կառուցել և հենց այս միջոցով էլ ոգտվել այն բոլոր հարմարություններից, վոր ընձեռում է տվյալ յերկրի պրոտեկցիոն (հովանավորական) սիստեմը[1])։ Սակայն կապիտալի արտահանությունն իր հեր-

[1]) Պրոտեկցիոն սիստեմի մասին տես գլուխ XVI։

թին առաջ է բերում մրցում խոշոր, բանկիր յերկիրների միջև, իսկ այս կրկին պարզված է լինում վիճելի խնդիրները զենքի միջոցով լուծելու։ Համաշխարհային տիրապետության վիճելի խնդիրներն ուժով լուծելու այս անհրաժեշտությունը նախատեսելը պատճառ է լինում, որ ռազմական պատրաստություններն անընդհատ զարգանում են, ռազմական նպատակներով կատարված ծախսերն անընդհատ մեծանում, բանակներն ու նավատորմիղները հզորանում են, այսինքն տենդագին աճում է միլիտարիզմը։

Սակայն իմպերիալիզմն ուրիշ կործանարար շարժիչ ուժեր էլ ունի։ Արտադրության ընդլայնումը և ավելի ու ավելի սրվող համաշխարհային մրցումը պահանջում են ավելի ու ավելի մեծաքանակ հում նյութ ու բանվորական ձեռքեր։ Վորտեղից պետք է ձեռք բերել սրանք։ Յեվրոպական կապիտալիստական յերկիրներն ընդհանրապես հարուստ չեն հում նյութով և վերջինս էլ թանկ է նստում. մյուս կողմից, յերբ կապիտալիզմը դեռ այնպես զարգացած չէր, տարբեր յերկիրների կապիտալիստների առանձին խմբակներն առանց հատուկ դժվարությունների ու ընդհարումների, կարող էին հում նյութ ձեռք բերել գաղութային յերկիրներում։ Յերբ կազմակերպվեցին տրեստները, այսինքն արդյունաբերական խոշորագույն մոնոպոլ կազմակերպությունները, սրանց ախորժակները մեծացան և նրանք ըսկսեցին ձգտել, վորպեսզի ամբողջովին իրենց ձեռքն առնեն հում նյութի այս կամ այն աղբյուրը, այս կամ այն տերիտորիան՝ անվերահսկողաբար ու մոնոպոլ շահագործելու նպատակով (այս տեսակետից բնորոշ է նավթի համար մղվող կռիվը)։ Յուրաքանչյուր յերկիր ձգտում է իր համար ամենից ընդարձակ տերիտորիա ստեղծելու, վորի վրա կարողանա տարածել իր տիրապետությունը և նրա այս ձգտումն ընդհարում է նրան ու կապիտալիստական հսկաներին իրար հետ, վորոնց համար անհրաժեշտություն է դառնում խնդիրները պատերազմի միջոցով վճռելը, վորովհետև միլիտարիզմի բեռը նրանց էլ է ճնշում և նրանք այն պատրանքին են յենթարկվում, այն սին հույսն են տածում, թե զենքի ուժով հնարավոր է վերջնականապես խեղդել մրցումը և հենց սրանով էլ ազատվել սպառազինությունների անընդհատ աճումից։

Յեվ այսպես, ապրանքների վաճառքի շուկաների, հում նյութի շուկաների համար մղվող պայքարում, այն յերկիրների համար մղվող պայքարում, ուր կարելի յե կապիտալ արտահանել ոգտավետ կերպով, նպաստավոր կոնցեսիաներ և այլն ձեռք բերելու համար մղվող պայքարում, ընդհարվում են աշխարհի վրա իշխող առանձին կապիտալիստական հսկաների շահերը։ Շահերի այս ընդհարումը նրանց դրդում է միմյանց դեմ սպառազինվելու, իրար հետ պաշտպանողական ու հարձակողական դաշինքներ կնքելու և կանխապատրաստելու ժողովուրդների սպառազեն սպանդանոցը, վորի անունն իմպերիալիստական պատերազմ է։

Այսպիսով, ֆինանսական կապիտալիզմի առաջ գալն անխուսափելի կերպով հասցնում է պատերազմների, վորոնք ավելի ու ավելի ավերիչ են դառնում՝ իրենց մեջ քաշելով հողագնդի ավելի մեծաքանակ յերկիրներ։

33. ԻՆՉ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ Է ՈՒՆԵՆՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այն յերկիրներում, վորոնք ունեն ամենից ավելի զարգացած կապիտալիզմ, պետության քաղաքականության ուղղությունն է տալիս ֆինանսական կապիտալը, վոր սերտորեն կապված է ծանր արդյունագործության (ինդուստրիա) հետ։ Այս կապիտալի շահերը պահանջում են վոչ թե իր մրցորդների հետ խաղաղ պայքարել համաշխարհային հրապարակում, այլ նվաճել և մոնոպոլ կերպով տիրանալ ըստ կարելույն ընդարձակ տերիտորիայի՝ իր կապիտալներն արտահանելու համար։ Այս նվաճողական քաղաքականությունը հասցնում է պատերազմների (այսպիսի պատերազմներից մեկն էր 1914—1918 թվականների իմպերիալիստական պատերազմը)։

1914—18 թվականների պատերազմը պատահական յերևույթ չէր, այլ մի փորձ, վորով զարգացման բարձր աստիճանի հասած կապիտալիզմը կամենում էր զենքի ուժով լուծել այն հակասությունները, վոր հենց ինքն էր ստեղծել։ Սակայն պատերազմն այս հակասությունները չլուծեց, այլ լարման ավելի բարձր աստիճանի հասցրեց՝ այժմ արդեն ընդգրկելով աշխարհում տիրապետող չորս իմպերիալիստական պետություն միայն, վորոնք են՝ Ամերիկան, Յապոնիան, Անգլիան ու Ֆրանսան։

Այսպիսով իմպերիալիստական քաղաքականությունը հասցնում է պատերազմների, իսկ պատերազմներն էլ ավելի պինդ են կապկպում կապիտալիստական անլուծելի հակասությունների հանգույցը և կապիտալիզմը տանում դեպի կործանում։ Յեթե 1914—18 թվի իմպերիալիստական պատերազմի հետևանքով տնտեսության կապիտալիստական սիստեմը միայն Ռուսաստանում խորտակվեց, ապա կապիտալիստական աշխարհի մյուս մասի մեջ, վոր պահպանել է իր գոյությունը, տնտեսության այնպիսի քայքայում, արտադրող ուժերի այնպիսի անկում է նկատվում, վորոնք վկայում են, թե կապիտալիզմը համենայն դեպս յեվրոպական կապիտալիստական յերկիրների մեծամասնության մեջ, իբրև տնտեսության սիստեմ պատմականորեն արդեն անց է կացրել իր դարը։

Իմպերիալիստական պատերազմի հետևանքները, քայքայվող կապիտալիզմի պայմանները բանվոր դասակարգի համար անհնարին են դարձնում այս պարագաներում իր տնտեսական դրության շատ կամ քիչ չափով նշանավոր ու հարատև բարելավումը։ Այս պայմաններում դասակարգային կռիվը սրվում է, իսկ սա արագացնում է կապիտալիզմի կործանումը։

34. ԱՐԴՅՈ՞Ք ԱՆԿՄԱՆ ՀԱՍԱԾ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԻՆՔՆ ԻՐԵՆ ՀԵՌԱՆԱԼ ՔԱՇՎԵԼ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻՑ

Գնահատելով այս վիճակը, վոր ունի կապիտալիզմը պատերազմից հետո, միջազգային մենշևիզմը պնդում է, վոր կապիտալիզմի գոյության վորոշ աստիճանի ժամանակ նրա կործանումն անխուսափելի յե (մենշևիկների կարծիքով, կապիտալիզմը դեռ չի հասել այդ աստիճանին)։ Այս պատ-

ձևով էլ մենշևիզմը հնարավոր է համարում հանգիստ կերպով սպասել կապիտալիզմի կործանման այս, իբր թե, անխուսափելի վարկյանին։

Հեղափոխական մարքսիզմն անթույլատրելի յե համարում խնդիրն այսպես դնելը։ Հեղափոխական մարքսիզմը ելնում է այն թեզիսից, թե կապիտալիզմը, նույնիսկ նրա անկման ժամանակ, խորտակելու համար անհրաժեշտ է ակտիվ շարժիչ ուժ, հանձին բանվոր դասակարգի, վոր կատաղի դասակարգային պատերազմ է ծավալում կոմմունիստական կուսակցության ղեկավարությամբ։ Առանց այսպիսի կռվի կապիտալիզմը չի հանձնի յուր դիրքերը, անկման ինչպիսի աստիճանի վրա էլ նա գտնվելիս լինի։

Հեղափոխական մարքսիզմը յերբ պնդում է, թե կապիտալիզմն անց է կացրել իր դարը, ի նկատի ունի այն հանգամանքը, վոր յերկրագնդի կապիտալիստական յերկրների մեծամասնության մեջ արտադրող ուժերի ու տնտեսության կապիտալիստական սիստեմի միջև յեղած հակասությունները այնքան են սրվել, վոր պրոլետարիատի դասակարգային կռիվը կարող է արդեն հաղթությամբ պսակվել, յեթե այս կռվում բանվորությունը հանդես գա իբրև անկախ ակտիվ ուժ, վոր բուրժուազիայի հետ վոչ մի համաձայնության գալու չի հոժարում։ Կապիտալիստական հասարակարգը կխորտակվի այն հեղափոխական գրոհի թափից, վոր կտա, իբրև միջազգային ուժ կազմակերպված, բանվոր դասակարգը։

35. Ի՞ՆՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵ՛Ն ԴԱՍԱԿԱՐԳԵՐՆ ՈՒ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻ՛Ն ԿՌԻՎԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱ՛Ն ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱ՛Ն ՄԵՋ

Կապիտալիստական հասարակության հիմնական դասակարգերի—բուրժուազիայի ու պրոլետարիատի—առանձնահատկություններն այն են, վոր այս դասակարգերն ամենալիակատար կերպով անջատված, մեկուսացած են իրարից, վոր նրանց շահերը խիստ հակադիր ու անհաշտելի յեն և վոր այս դասակարգերն իրենց շահերի գիտակցության բավական բարձր մակարդակի վրա յեն կանգնած։

Յերբ կապիտալիստական հասարակությունը հասել է իր զարգացման բարձր աստիճանին, այն ժամանակ նրա մեջ տեղի ունեցող դասակարգային կռվի առանձնահատկությունն այն է, վոր 1) այս կռիվն ընդգրկում է կռվող դասակարգերի—բուրժուազիայի ու պրոլետարիատի—մեծածավալ ուժերը, 2) վոր այս կռիվը մղվում է կազմակերպված ձևով (բանվորական մասսաներն ավելի ու ավելի յեն իրար հարում և միություններ ու քաղաքական կուսակցություններ կազմում, իսկ բուրժուազիան ստեղծում է բացի պետության բանակից, իր դասակարգային բանակը—ֆաշիզմ), 3) վոր իր զարգացման ընթացքում դասակարգային կռիվն անխուսափելիորեն քաղաքացիական պատերազմի յե վերածվում և 4) վոր այս կռվի նպատակը վոչ թե բարենորոգությունններն են, այլ կապիտալիզմի ամբողջ տնտեսակարգի արմատական փոփոխությունը։

Կապիտալիստական հասարակարգում մղվող դասակարգային կռիվը տնտեսակարգի արմատական փոփոխության հասնում է նրանով, վոր բանվոր դասակարգն ու գյուղացիության ամենաչքավոր շերտերն իշխանություն

են նվաճում, առաջապահ ունենալով պրոլետարիատի հեղափոխական ու ամենագիտակից մասը, վոր կազմակերպված է կոմմունիստական կուսակցության մեջ։

36. Ի՞ՆՉ Ե ԴԱՍԱԿԱՐԳԸ

Մարքսիզմի տեսակետից, մարդկանց միջև դասակարգային բաժանում կատարելու հիմնական հատկանիշը մարդկանց կենսամիջոցներ հայթայթելու յեղանակն է, այսինքն այն տեղը, վոր մարդիկ գրավում են արտադրության մեջ։ Այն մարդիկ, վորոնց ապրուստի գլխավոր աղբյուրն աշխատավարձն է, այսինքն այն մարդիկ, վորոնք արտադրության միջոցներ չունեն, վաճառում են իրենց բանվորական ուժը և զբաղված են հանրորեն օգտակար ու հետևաբար արտադրողական աշխատանքով, այդ մարդիկ կազմում են բանվոր դասակարգը։ Այն մարդիկ, վորոնք ապրուստի միջոցներ են հայթայթում կապիտալի միջոցով (հող, կառուցումներ, արդյունաբերական ձեռնարկություններ և այլն), վորոնք մարդու բանվորական ուժից օգտվում են վաստակ կորզելու համար, այդ մարդիկ կազմում են կապիտալիստների դասակարգը։

Այսպիսով, դասակարգը հասարակության մի մասն է (մարդկանց միավորությունը), վորը կապված է արտադրության մեջ իր գրաված տեղի ընդհանրությամբ, վորից բղխում են նրանց ընդհանուր շահերը և ընդհանուր վերաբերմունքը՝ հանդեպ մյուս դասակարգերի։

37. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱ՛Ն ՄԵՋ ՄԻ՞ՇՏ ԵՆ ԳՈՅՈՒԹՅՈՒ՛Ն ՈՒՆԵՑԵԼ ԴԱՍԱԿԱՐԳԵՐ ՈՒ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻ՛Ն ԿՌԻՎ

Վո՛չ. վոչ միշտ։ Նախադարյան տոհմական կոմմունիզմի հասարակության մեջ, վորտեղ մասնավոր սեփականությունը դեռ անհայտ եր կամ դեռ քիչ եր զարգացած, հասարակության անդամների միջև տարբերություններ չըկային, շահերի հակադրություն չկար, շահագործում չկար, դասակարգային տիրապետություն չկար, հետևաբար դասակարգային կռիվ էլ չկար։

Սակայն, յերբ, տոհմային համայնքի քայքայման ու փոխանակության զարգացման հետևանքով, մասնավոր սեփականությունն սկսում է արագ զարգանալ հասարակության մեջ, առաջ են գալիս ունևորների ու չքավորների դասակարգերը։ Դասակարգերի հայտնվելու հետ ծագում է առնում դասակարգային կռիվն էլ, վոր արտահայտվում է ամենաբազմազան ձևերով։ Դասակարգային կռիվն ուղեկցում է յուրաքանչյուր հասարակարգի զարգացմանը մինչև այն ժամանակ, յերբ այդ կռվի հետևանքով նույն հասարակարգը կործանվում է։ Յեթե հին հասարակության տեղը հանդես է գալիս մի այնպիսի նոր հասարակություն, վորտեղ շարունակում է գոյություն ունենալ սեփականությունը, ապա հայտնվում են նոր դասակարգեր էլ, վորոնք համապատասխանում են նոր արտադրական հարաբերություններին, և դասակարգային կռիվը շարունակվում է։

Այսպիսով, դասակարգային կռիվը, վոր ծնունդ է առել սեփականությունից, կարող է վերանալ միայն այն ժամանակ, յերբ մասնավոր սեփականությունն իր տեղը կզիջի տնտեսության հանրային սիստեմին, վորտեղ

արտադրության բոլոր միջոցներն ու գործիքները կպատկանեն ամբողջ հասարակությանը, այսինքն դասակարգային կռիվը կվերանա այն ժամանակ, յերբ կհաստատվի կոմմունիստական հասարակություն։

38. Ի՞ՆՉ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՀԱՍՆՈՒՄ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Կոմմունիստական հասարակություն կազմելու առաջին քայլը կապիտալիստական կարգի հեղափոխական տապալումն ե ու պրոլետարիատի ձեռքով իշխանությունը նվաճելը։ Կապիտալիստական հասարակությունը կոմմունիստականի վերածելու ճանապարհին անհրաժեշտ ե, վոր մարդկությունը անցնի անցման շրջանի հասարակարգով, վոր հիմնված ե պրոլետարիատի դիկտատուրայի վրա[1])։ Կապիտալիզմից դեպի կոմմունիզմ տանող անցման հասարակարգը բնորոշվում ե նրանով, վոր կալվածատերերի ու կապիտալիստների արտադրության բոլոր միջոցները դառնում են պրոլետարիատի դիկտատուրայի պետության սեփականություն։ Այս պետությունը տնտեսությունը վարում ե կամ բացառապես իր ուժերով ու միջոցներով, կամ վորոշ պայմաններով գործի յե կոչում կապիտալիստներին իր վերահսկողության ներքո, ու պահպանելով իր տիրապետող դիրքերը՝ ոգտագործում ե նրանց միջոցները, նախաձեռնությունը, փորձառությունն ու գիտելիքները։

Անցման հասարակարգի ժամանակ դեռ պահպանվում ե պետությունը, վորովհետև սոցիալիստական հեղափոխությունը բոլոր յերկիրներում մի անգամից չի կատարվում և դեռ մնում են դասակարգերն ու դասակարգային կռիվը։

Անցման հասարակարգը, վոր գալիս ե փոխարինելու անկյալ կապիտալիզմին իր գոյության առաջին շրջանում, քաղաքացիական պատերազմի ժամանակ, անխուսափելիորեն կապված ե լինելու արտադրող ուժերի ժամանակավոր քայքայման ու անկման հետ։ Իշխանությունն իր ձեռքն առնող պրոլետարիատի անելիքն այն ե, վոր տապալված դասակարգերի դիմադրությունը չեզոքացնելով՝ վերականգնե արտադրող ուժերը, սակայն արդեն ավելի բարձր տեխնիքական հիմքի վրա դնելով և ելեկտրականության հզոր եներգիան ոգտագործելով իբրև ամենահաստատուն պատվանդան խոշոր ու բարձր աստիճանի արտադրողական տնտեսության։

Այսպես ուրեմն, դեպի կոմմունիզմ տանում ե պրոլետարիատի դիկտատուրան, վոր անցման շրջանում խոշոր, կազմակերպված, պլանային տընտեսության հիմքն ե կերտում ելեկտրոֆիկացիայի վրա հենվելով[1])։

[1]) Պրոլետարիատի դիկտատուրայի մասին տես գլուխ VII։
[1]) Ելեկտրոֆիկացիայի մասին տես գլուխ XIV։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ V ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. Карл Бюхер. „Возникновение народного хозяйства“. Изд. „Сотрудничество“ Петроград 1918 г.
2. Ф. Энгельс. „Происхождение семьи, собственности и государства“.
3. А. Богданов. „Краткий курс экономической науки“. Под ред Дволайцкого.
4. Тюменев. „История труда“. (Հայերեն՝ Ցյումենև «Աշխատանքի պատմություն». Թարգմ. Թադ. Ավդալբեգյանի)։
5. Лоренский. „История труда“.
6. Маркс и Энгельс „Коммун. Манифест“ с прим. Рязанова. Изд· „М. Раб.“ 1922 г. стр. 18—48 и примеч.
7. В. Ильин. (Ленин) „Развитие капитализма в России“.
Глава 5-ая „Первоначальная стадия развития капитализма в промышленности“.
„ 6-ая „Капиталистич. мануфактура“.
„ 7-ая „Развитие крупной машинной индустрии“.
8. Богданов и Степанов. „Курс политической экономии„.
9. К. М. Тахтарев. „Очерки по истории первобытной культуры“.
10. Рожицын. „Первобытный коммунизм“.
11. П. Маслов. «Общедоступный курс истории народного хозяйства«.
12. М. И. Покровский. «Очерки истории русской культуры' часть I· стр. 23—179

ԳԼՈՒԽ VI

ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՆՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ

1. ՈՐՆ Է ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Ամբողջ աշխարհում կոմմունիզմը կյանքի մեջ իրագործելը, այսինքն կոմմունիստական հասարակություն ստեղծելն ու ամրապնդելը։

2. ԻՆՉ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ (ԳԾԵՐ) ՈՒՆԻ ԱՊԱԳԱ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ապագա կոմմունիստական հասարակությունը մի հասարակություն է, առանց մասնավոր սեփականության, առանց մարդու ձեռքով մարդու շահագործման ու ճնշման, առանց դասակարգերի ու առանց պետության։

Կոմմունիստական հասարակության մեջ նախ՝ տնտեսության բոլոր գործիքներն ու միջոցները գտնվելու յեն ամբողջ հասարակության և վոչ թե մասնավոր անհատների կամ առանձին խմբակների տրամադրության ներքո. յերկրորդ՝ տնտեսությունն ու աշխատանքը բոլոր ասպարեզներում կազմակերպվելու յեն հանրային-պլանաչափ յեղանակով ու խոշոր մասշտաբով, յերբ ամենամեծ չափերով կիրառվելու յեն մեքենաներն ու գիտական տեխնիկայի բոլոր ցուցումները։ Յերրորդ՝ յուրաքանչյուր գործավոր ազատորեն է ընտրելու աշխատանք և յուրաքանչյուրն աշխատելու յե ըստ յուր ունակությունների և ուժերի այնքան, վորքան ցանկանում է։ Չորրորդ՝ բոլորի աշխատանքի արդյունքներն ու արգասիքները պատկանելու յեն ամբողջ հասարակությանը և բաշխվելու յեն նրա բոլոր անդամների միջև ըստ կարիքների, լիովին բավարարելով հասարակության յուրաքանչյուր անդամի բոլոր պահանջները։ Այս բոլոր չորս հատկանիշներն են հենց, վորոնք միասին առած և վոչ թե առանձին-առանձին, տարբերում են ապագա կոմմունիստական հասարակությունը մյուս բոլոր հասարակություններից. ուստի և կոմմունիզմն ըմբռնելու համար մեզ հարկավոր է անմիջապես զատ-զատ ու մանրամասնորեն քննել կոմմունիստական հասարակության հիշյալ հատկանիշներից յուրաքանչյուրը, այլ և կանգ առնել կոմմունիզմի մասին գոյություն ունեցող մի քանի սխալ հայացքների վրա։

Շատ հաճախ ի պատասխան այն հարցին, թե ինչ է կոմմունիզմը և ինչ առանձնահատկություն ունի կոմմունիստական հասարակությունը, մատնանշում են կոմմունիզմի վորևե մեկ հատկանիշը, ուստի և ստացվում է թերի, անբավարար պատասխան։

Ընդ սմին, սովորաբար մատնանշում են կոմմունիզմի մի այնպիսի գիծ, վոր նույնիսկ նրա ամենագլխավոր տարբերիչ գիծը չէ։

Օրինակ՝ ասում են, թե կոմմունիզմը այն հասարակությունն է, վորտեղ չի լինելու մասնավոր սեփականություն։ Այս պատասխանը ճիշտ է, բայց լրիվ չէ։ Չի մատնանշվում, թե կոմմունիզմի ժամանակ ամբողջ հասարակությունն ինչպես պետք է կառուցե ու վարե տնտեսությունը, կազմակերպված ու վարող ծրագրով, թե առանց կազմակերպության, առանց ծրագրի։

Եվ ավելի հաճախ մոռանում են ընդգծել, վոր ապագա կոմմունիստական հասարակարգում ամբողջ տնտեսությունը, ամբողջ արտադրությունը վարելու յեն խոշոր չափերով, այսինքն չի լինելու մանր տնտեսություն և արտադրություն (արհեստներ կամ, օրինակ, գյուղացիական տնտեսություններ), այլ ամեն ինչ հայթայթվելու յե ու արտադրվելու խոշոր գործարաններում, եվ ավելի խոշոր տնտեսությունների մեջ, քան արդի ձեռնարկություններն են, և ընդ սմին, ամենուրեք կիրառվելու յեն ամենամեծ ու ամենակատարելագործված մեքենաներն ու գիտական տեխնիկայի բոլոր միջոցները։

Կոմմունիստական հասարակության այս յերկրորդ հատկանիշը, այսինքն այն, վոր այստեղ ամբողջ տնտեսությունն ու ամբողջ արտադրությունը վարելու յեն վոչ թե առանձին անհատներ ու խմբակներ, այլ ամբողջ հասարակությունը և ընդ սմին կազմակերպված ու պլանաչափորեն և այն էլ խոշոր չափերով,—կոմմունիստական հասարակության ամենակարևոր, ամենագլխավոր հատկանիշն է. այն ինչ, սովորաբար, այս մոռանում են, յերբ պատասխաններ են տալիս այն հարցին, թե վոր հասարակությունն է կոչվում կոմմունիստական։

Շատ հաճախ կոմմունիզմի մասին խոսելիս սկսում են այն բանից, թե կոմմունիզմի ժամանակ ամեն ինչ բաշխվելու յե ըստ կարիքների և յուրաքանչյուրն ստանալու կամ առնելու յե այնքան, ինչքան նրան հարկավոր է և ինչ քանակությամբ վոր ուզենա։

Կոմմունիզմի ժամանակ այսպիսի բաշխում է լինելու իրապես, սակայն, կոմմունիզմի բացատրությունն սկսել բաշխումից կամ պատասխանի մեջ սահմանափակվել կոմմունիզմի ժամանակվա բաշխումը մատնանշելով, միանգամայն սխալ է և անթույլատրելի։

Բաշխումը յերկրորդական խնդիր է և վոչ թե ամենագլխավոր։

Ամենագլխավորն արտադրությունն է, տնտեսությունը, այսինքն, պետք է մատնանշել այն բանի վրա, թե կոմմունիզմի ժամանակ ինչպես պետք է կազմակերպված լինի տնտեսությունը և այնտեղ արդյոք լինելու յե մասնավոր սեփականություն։

Եվ ավելի անբավարար են, օրինակ, այսպիսի պատասխաններ, թե կոմմունիզմն այն է, յերբ շահագործում չի լինի, յերբ կապիտալ չի լինի, յերբ բոլորը հավասար կլինեն, յերբ դասակարգերը չեն լինի և այլն։

Այսպիսի պատասխաններն անբավարար են այն պատճառով, վոր մատնանշում են վորևե մեկ հատկանիշը միայն և, այն էլ, վոչ գլխավորը և վոչ էականը։

Ի հարկե, կոմմունիզմի ժամանակ շահագործում չի լինի, դասակարգեր չեն լինի, կապիտալ չի լինի, բոլորը հավասար կլինեն և այլն, սակայն կոմմունիզմն ըմբռնելու համար սրանով սահմանափակվել ու կոմմունիզմի բացատրությունը նույնիսկ սրանից սկսել, բոլորովին սխալ է։

Նախնադարյան տոհմային հասարակարգում, յերբ բոլոր մարդիկ բընության ստրուկներն եյին և ապրում եյին աղքատության մեջ, մասնավոր սեփականություն նույնպես չկար, նույնպես չկային վոչ շահագործում վոչ դասակարգեր, վոչ կապիտալ, և բոլորն այն ժամանակ հավասար եյին, սակայն այդպիսի հասարակությունն ապագա կոմմունիստական հասարակություն չե ամենևին, վորի համար ներկայումս կռվում են ամբողջ աշխարհի գիտակից ու հեղափոխական բանվորները՝ ղեկավար ունենալով կոմմունիստական կուսակցությունը։

Այսպես, ուրեմն, յերբ պատասխանում ենք այն հարցին, թե վո՞րն է ապագա կոմմունիստական հասարակությունը, պետք է նկատի ունենանք նրա բոլոր կարևորագույն հատկանիշները և մատնանշենք վոչ միայն այն, վոր չի լինելու կոմմունիզմի ժամանակ, այլև այն, թե ինչպես է կերտված լինելու կոմմունիստական հասարակությունը։

Այսպես, ուրեմն, մի անգամ ել ասենք։

Կոմմունիզմի ժամանակ վոչ մասնավոր սեփականություն կլինի, վոչ շահագործում, վոչ դասակարգեր, վոչ պետություն։ Իսկ ինչ կլինի հապա։ Նախ՝ տնտեսության բոլոր միջոցների ու գործիքների հանրային տիրապետություն. յերկրորդ՝ տնտեսության հանրային վարումն և տնտեսության կազմակերպություն ծրագրով, այն ել խոշոր չափերով. յերրորդ՝ յուրաքանչյուրի աշխատանքի ազատ ընտրություն ու այնքան գործ, ով վորքան կամենա. չորրորդ՝ բաշխումն ըստ կարիքների, յուրաքանչյուրին լիովին բավարարելով։

Նախ քան այն խնդիրը պարզելը, թե կարելի՞ յե իրականացնել և հըրարավոր է արդյոք այսպիսի կոմմունիստական հասարակարգ և ինչպես պետք է նրան հասնել,—մեզ հարկավոր է ավելի մանրամասն քննել կոմմունիզմի հենց նոր նիշված մի քանի գլխավոր հատկանիշները։

3. Ի՞ՆՉՈՒ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴԱՍԱԿԱՐԳԵՐ ՉԵՆ ԼԻՆԻ

Վորովհետև տնտեսության միջոցների ու գործիքների մասնավոր սեփականությունը կվերանա և նրանք կլինեն հասարակության տրամադրության ներքո և ամբողջ տնտեսությունը կվարե հասարակությունը՝ հօգուտ ամբողջ հասարակության և կվերանա մի քանի մարդկանց միջոցով մյուսներին շահագործելը (կողոպտելը) ու ճնշելը, ուստի և կոմմունիստական հասարակության մեջ դասակարգեր չեն լինի։

4. Ի՞ՆՉՈՒ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԼԻՆԻ

Նրա համար, վոր պետությունը դասակարգային տիրապետության կազմակերպություն կամ գործիք է և գոյություն ունի մասնավոր սեփականության վրա հիմնված դասակարգային հասարակությունների մեջ միայն։

Մասնավոր սեփականության ու դասակարգերի վերանալու հետ կըչքանա այն բոլորն ել, վոր կապված է նրանց հետ, ի թիվս վորոնց և դասակարգային տիրապետությունը, պետությունը, քաղաքացիական կռիվը,

պատերազմները, զանազան յերկիրների ու ժողովուրդների միջև յեղած քաղաքական կամ պետական սահմանները։ Հասարակության ներսում չի լինի պետության ապարատներից վոչ մեկը, այսինքն չեն լինի վոչ բանակ, վոչ վորևե վոստիկանություն կամ միլիցիա, դատարաններ և վոչ ել պետության մյուս բոլոր պատկանելիությունները։

Այս բոլորը տեղ չունեն կոմմունիստական հասարակության մեջ, վորտեղ մարդիկ զբաղվելու յեն արտադրողական ու հանրային ստեղծագործական աշխատանքով միայն։

5. Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՈՒ ՊԼԱՆԱՉԱՓ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Այս նշանակում է, վոր կոմմունիստական հասարակարգի ժամանակ տնտեսությունը վարելու յե հասարակությունը և վոչ թե առանձին անհատներ կամ խմբակներ և վարելու յե, ի հարկե, հօգուտ ամբողջ հասարակության, վորպեսզի իր անդամների բոլոր կարիքներն ամենամեծ չափով բավարարի, այն ել կազմակերպված ու պլանաչափ յեղանակով։ Այսինքն՝ հասարակությունն, առանձին վիճակագրական ու հաշվառական հիմնարկությունների միջոցով, բնակչության պահանջների հաշվառքի հիման վրա՝ կըվորոշե յուրաքանչյուր տարվա կամ ավելի յերկար ժամկետների համար, թե, զանազան բարիքների, արդյունքների ու ծառայությունների (услуга) ինչ պահանջներ ունի և, հասարակության ունեցած ուժերի ու միջոցների հաշվառքի հետևանքով կմշակվի ու կիրականացվի աշխատանքների ծրագիր՝ տարբեր յերկիրների ու գործավորների տարբեր խմբակների համար։

Կոմմունիստական հասարակարգի այս հատկությունը—հանրային պըլանաչափ ու կազմակերպված տնտեսություն՝ հօգուտ ամբողջ հասարակության—ապագա կոմմունիզմի ամենակարևոր կողմն է։

Կոմմունիստական հասարակությունն, այս հատկությամբ, ամենավճռական կերպով տարբերվում է ամեն դասակարգային հասարակությունից ու մասնավորապես կապիտալիստական հասարակությունից, վորտեղ տնտեսությունը վարում են մասնավոր սեփականատերերն ու խմբակները՝ հօգուտ սակավաթիվ անհատների և վոչ ամբողջ հասարակության, և վորտեղ արտադրությունն անկազմակերպ է, անարխիկ, ուստի և, վորտեղ կատաղի նախճիրներ են գործում մրցումը, կրիզիսները, պատերազմները և այլն։

6. ԱՐԴՅՈՔ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԼԻՆԵ՞Ն ԱՊՐԱՆՔՆԵՐ ԿԱՄ ԱՊՐԱՆՔԱՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿԱՄ ԱՌԱՆՁԻՆ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Հաճախ այս հարցին սխալ պատասխան են տալիս, այն է՝ ասում են, թե կոմմունիզմի ժամանակ, ապրանքներ ու ապրանքափոխանակություն կլինի, այն ել վիթխարի չափերով։

Սակայն այս մի կոպիտ անհասկացողություն է այն մասին, թե ինչ է ապրանքը և թե, այս տեսակետից, ինչ է լինելու կոմմունիստական հասարակությունը։

Կոմմունիզմի ժամանակ վոչ մի ապրանք, վոչ մի ապրանքափոխություն չի լինի։ Ի հարկե, կոմմունիզմի ժամանակ ել տնտեսության

տարբեր ճյուղերի ու տարբեր յերկիրների միջև զանազանություն ու աշխատանքի բաժանում կլինի։ Նշանակում է՝ յուրաքանչյուր տվյալ յերկրում գործավորների տարբեր խմբակներ գոյություն կունենան, սակայն վոչ մի ապրանքափոխանակում չի լինի. վորովհետև կոմունիստական հասարակության մեջ ամբողջ տնտեսությունը կլինի վոչ թե ապրանքային տնտեսություն, այլ բնատնտեսություն կամ սպառողական տնտեսություն. այսինքն՝ տնտեսությունը կվարեն վոչ թե վաճառելու, վոչ թե շուկայի, վոչ թե վորևէ մեկի ոգտին, այլ միայն հասարակության ու նրա բոլոր անդամների կարիքները բավարարելու համար։

Ուստի և կոմունիզմի ժամանակ վոչ մի առևտուր, վոչ մի առ ու ծախս չի լինել և բոլոր արդյունքները, վորոնք ստեղծվել են բոլոր գործավորների աշխատանքով, փոխանակ շուկա տանելու և ապրանք դառնալու, կոմունիզմի ժամանակ կմտնեն բաշխման հանրային պահեստները. վորտեղից հասարակության յուրաքանչյուր անդամը, առանց վորևէ փողի ու առանց վորևէ փոխանակության, բոլորովին ձրի, կարող է վերցնել ամեն ինչ և այն քանակով, վորչափ հարկավոր է իր բոլոր կարիքներին լիովին գոհացում տալու համար։

7 ԱՐՏԱԴՐՈՂ ՈՒԺԵՐԻ ՈՒ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԱՃՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ Ի՞ՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆԻ ՀԱՆԴԵՊ

Մենք գիտենք, վոր կապիտալիստական հասարակությունը, վոր ներկայումս գոյություն ունի հողագնդիս յերկիրների մեծամասնության մեջ, շատ հարուստ հասարակություն է և նրա արտադրող ուժերը մեծապես զարգացած են։

Հարց է առաջ գալիս. արդյոք կոմունիստական հասարակարգի ժամանակ հասարակության հարստությունն էլ ավելի մեծ կլինի՞ և արդյոք նրա արտադրող ուժերն էլ ավելի արագ ու մեծ թափով կզարգանան, քան կապիտալիզմի ժամանակ։

Մենք բոլոր հիմունքներն ունենք այս հարցմանը լիովին դրական պատասխան տալու։

Նախ՝ կոմունիստական հասարակարգը լիովին կազմակերպված հասարակություն է լինելու և այնտեղ ամբողջ տնտեսությունը վարելու յեն պլանաչափորեն, ոգուտ ամբողջ հասարակության, այսինքն այնտեղ չեն լինելու այն անարխիան ու շուկայի համար աշխատելը, վորոնք հատուկ են կապիտալիզմին և վորոնք սաստիկ արգելք են լինում արտադրող ուժերի զարգացմանը։

Մենք գիտենք, վոր անարխիայի, այլև շուկայի համար, աշխատելու ու մրցման հետևանքով, կապիտալիզմի ժամանակ, միշտ կատաղի նախճիրներ է գործում կապիտալիստների միջև մղվող կռիվը, սկսվում ու ծավալվում են վիթխարի կրիզիսները, տեղի յեն ունենում ամայացնող ու արյունահեղ իմպերիալիստական պատերազմներ, իսկ այս պատերազմների արանքում հսկա ու հարաճուն ծախքեր են կատարում սպառազինության համար, իսկ կապիտալիզմի համար անխուսափելի այս բոլոր յերևույթները շատ սաստիկ խանգարում են արտադրող ուժերի զարգացմանը և նույն իսկ մի

շարք յերկիրներ աղքատացնում են ու նրանց ամբողջ տնտեսությունը քայքայում։ Այս բոլորը չեն լինի կոմունիզմի ժամանակ, ուստի և հասարակության արտադրող ուժերը միշտ ու անարգել աճելու յեն և հանրային հարստությունը մեծանալու յե։

Յերկրորդ՝ կոմունիստական հասարակությունը լինելու յե ընկերային հասարակություն, վոր հիմնված է լինելու հասարակության բոլոր անդամների համերաշխության ու շահերի միանմանության վրա։ Այնտեղ չի լինելու առանձին անհատների ու խմբակների կամ մասերի միջև մղվող ներքին տնտեսական ոխ։ Կվերանա դասակարգային կռիվը, իսկ այս մեծապես կազդի արտադրող ուժերի զարգացման և ընդհանրական բարօրության մեծացման վրա։

Յերրորդ, կոմունիստական հասարակության ' տնտեսության հանրային, պլանաչափ կազմակերպության շնորհիվ, այլ և նրա բոլոր անդամների լիակատար համերաշխության հետևանքով առաջին անգամ հնարավոր կը լինի առավելագույն չափերով ոգտագործելու ինչպես ամբողջ հասարակության ուժերը, այնպես և գիտության ամեն տեսակի նվաճումները տեխնիկայի ասպարեզում, ամենակատարելագործված, ամենանպաստավոր, տարբեր մեքենաներ, հարմարանքներ, (приспособление) գյուտեր ու հայտնագործություններ, վորոնք անկարելի յե լիովին ոգտագործել կապիտալիզմի ժամանակ։

Մենք գիտենք, որինակ, վոր յեթե կապիտալիստները կարողանան վաստակ կորզել անորակյալ բանվորների բանվորական էժանագին ուժը շահագործելով՝ նրանցից ամբողջ քրտինքն ու հյութերը սաստկաբար քամելով,—ապա նրանք կգերադասեն այս անել, քան կատարելագործված ու թանկագին մեքենաներ մուծել գործի մեջ, թեկուզ վերջիններս բարձրացնեյին աշխատանքի արտադրողականությունը՝ քանի անգամ վոր ասես։

Յեվ այս բանը շարունակ տեղի յե ունենում կապիտալիստական աշխարհում ամենուրեք։

Այս ավելի մեծ նշանակություն է ունենում այն ժամանակ, յերբ գործի մեջ բնության նոր ուժեր են կիրառում կամ նոր, վիթխարի ձեռնարկություններ են կառուցում, վորոնք պահանջում են աշխատանքի ու միջոցների վիթխարի սկզբնական ծախսումներ (затрата), սակայն ձեռնարկությունները խոստանում են ոգուտներ տալ ու մեծ տնտեսում առաջ բերել վոչ թե միանգամից, այլ մոտ կամ հեռու ապագայում։

Կապիտալը մոտակա ոգուտներ կորզելու համար խուսափում է այնպիսի ձեռնարկություններ սկսելուց, վորոնք ոգուտ են ամբողջ հասարակությանը և վորոնք արագ կը զարգանան կոմունիզմի ժամանակ։

Այնուհետև, արտադրող ուժերի զարգացման համար մի վիթխարի միջոց է ելեկտրոֆիկացիան։ Թեև վերջինս կապիտալիզմի ժամանակ էլ է զարգանում, սակայն շատ դանդաղ, և նրա կիրառմանը խոչնդոտ են հանդիսանում մասնավոր կապիտալիստական ու հողային սեփականության շահերը։

Ելեկտրոֆիկացիայի լայն կիրառման համար պահանջվում է, վոր հսկա տարածությունների վրա գտնվող տնտեսության բոլոր ճյուղերն ու մասերը (արդյունաբերությունը, տրանսպորտը, հողագործությունը) շաղկապվեն ու մեկ միացյալ ամբողջություն կազմեն և զանազան անհատների հողային անջատ սեփականությունները այս միացման արգելք չլինեն։

Այսպիսով, կապիտալիզմն ու մասնավոր հողատիրությունը վիթխարի արգելք են ելեկտրոֆիկացիայի լայն կիրառման ու զարգացման համար: Այն ինչ ելեկտրականությունը բնության ամենաձեռնտու արտադրող ուժն է այն ուժերի միջից, վորոնք ներկայումս գտնվում են գիտության ու տեխնիկայի տրամադրության ներքո:

Ելեկտրականությունը ապագայի վիթխարի ուժն է: Այն պիտի դառնա ապագա տնտեսության եներգիայի հիմքը և վերջնականապես փոխարինե վոչ միայն ձեռքի աշխատանքի, այլև քամու ու շոգու ուժին: Նրա գործադրության հետևանքով արտադրող ուժերը հսկա չափերով կզարգանան և սրան կհաջորդե հասարակության հարստության, այլև բնության վրա ունեցած իշխանության վիթխարի աճումը: Սակայն այս հնարավոր կլինի անել կապիտալիզմի վերջնական տապալումով միայն, կոմունիստական հասարակության մեջ միայն:

Չորրորդ՝ կոմունիստական հասարակության մեջ աշխատանքը դըրված լինելով լավագույն պայմաններում (կարճ բանվորական որ, աշխատանքի նպաստավոր կարգ ու սարք և շրջապատ և այլն), լինելով միանգամայն ազատ ու կամավոր՝ կորցնում է բեռ լինելու և ծանր ծառայություն հանդիսանալու բնույթը, վոր ունի կապիտալիզմի ժամանակ շնորհիվ յուր ծայրահեղ յերկարատևության, ծանր պայմանների, վորոնց մեջ կատարվում է աշխատանքը և այլն: Կոմունիզմի ժամանակ աշխատանքը կը դառնա հաճույք ու առողջ որգանիզմի անխուսափելի պահանջ, ուստի և հենց առաջին անգամը կը դառնա իրապես ընդհանրական աշխատանք, այն ել ամենից արտադրողական աշխատանք: Ահա թե ինչու կոմունիզմի ժամանակ հասարակության այսպիսի կազմակերպության հետևանքով, այլև այն հանգամանքի շնորհիվ, վոր արտադրող ուժերը ազատ ափով զարգացած կլինեն և հանրային հարստությունը աճ. կլինի նույնպես, կոմունիզմը կը կարողանա այնպիսի բաշխում իրականացնել, վորի ժամանակ հասարակության յուրաքանչյուր անդամ ի վիճակի կլինի լիովին, առանց վորևե սահմանափակման, բավարարելու յուր բոլոր կարիքները և ընդ սմին, աշխատելու շատ կարճ ժամանակ:

Վորպեսզի կարողանանք պատկերացնել, թե մարդկությունը կոմունիզմի որոք հենց ամենամերձավոր ժամանակում, յուր գոյության հենց ըսկըզբի շրջանում, ինչ վիթխարի առաջդիմություններ կըգործե աշխատանքի արտադրողականության, հանրային հարստության ու բանվորական անհրաժեշտ ժամանակը կրճատելու ասպարեզներում, շատ կարևոր է մատնանշել, վոր հենց հիմա ել, արդի տեխնիկայի ու աշխատանքի այնքան ել չկատարելագործված կազմակերպության ժամանակ, արդեն հնարավոր է վիթխարի հետևանքներ ձեռք բերել նրանցից, յեթե արդի հասարակությունը ամբողջ տնտեսությունը կազմակերպեր վոչ թե կապիտալիստների դասակարգի, վոչ թե բուրժուազիայի շահերի տեսակետից, այլ մարդկության աշխատավոր մեծամասնության շահերի տեսակետից:

8. Ի՞ՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ ԱՄԲՈՂՋ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՌԱՆՁԻՆ ՄԱՐԴՈՒ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Մարդկությունը, ամբողջությամբ առած, ու նրա յուրաքանչյուր մասերն ել առանձին վերցրած՝ առաջին անգամ միայն ապագա կոմունիստական հասարակության մեջ է, վոր լիակատար ազատության են հասնում ինչպես բնության նկատմամբ, այնպես և իրենց ներքին կյանքում:

Նախ հասարակությունը, կոմունիզմի ժամանակ, ունենալով առավելագույն չափերով զարգացող արտադրական ուժեր ու ամեն բարիքի վիթխարի առատություն՝ առաջին անգամ է հասնում մի վիճակի, յերբ ամենամեծ իշխանությունն է ունենում բնության վրա և հնարավորություն է ստանում հասարակության ամենալայն կարիքները բավարարելու:

Յերկրորդ՝ կոմունիստական հասարակությունը հանրային-պլանաչափ ու կազմակերպված լինելով՝ չի դառնա խաղալիք տարերային ուժերի, վորոնց վրա մարդիկ իշխանություն չունեն, ինչպես այս լինում է ապրանքային տնտեսակարգում ու կապիտալիզմի ժամանակ, յերբ ծագում են շարունակ ու անակնկալ կրիզիսներ, պատերազմներ և այլն:

Կոմունիզմի ժամանակ մարդկությունն առաջին անգամ կը ղեկավարե հասարակության ամբողջ կյանքը, գիտակցաբար ու ակտիվ կերպով ուղղություն կտա նրա զարգացմանն ու ներքին բոլոր հարաբերություններին և սրանով ել հենց կիրականացնե ամենաբարձր ազատությունը:

Ինչ վերաբերվում է առանձին անհատի ազատությանը, ապա շահագործման ու ճնշման բացակայությունը այլև այն հանգամանքը, վոր ընդհանրապես վոր և հարկադրանք չի լինիլ և յուրաքանչյուրը կը բավարարե յուր բոլոր պահանջները լիովին, կոմունիստական հասարակության յուրաքանչյուր առանձին անդամին ամենամեծ չափով ազատություն են ապահովում:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱ՞Ն Ի՞ՆՉ ՁԵՎ ԿՈՒՆԵՆԱ ԱՊԱԳԱ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ

Ինչպես վերևում ասել ենք արդեն, կոմունիզմի ժամանակ պետությունն ու պետական կազմակերպություն չի լինիլ:

Կոմունիստական հասարակարգը կազմակերպված կլինի միջազգային ու համաշխարհային մասշտաբով, ընդգրկելով ամբողջ մարդկությունը՝ անջախ և առանց ցեղերի ու ազգությունների խտրության: Այս հասարակությունը յուր ներսում պետական սահմաններ չի ունենալ և ինքն ել ամբողջությամբ առած՝ պետություն չի լինիլ:

Սակայն, այնուամենայնիվ, կոմունիստական հասարակությունը կազմակերպված հասարակություն կլինի և այն ել ավելի կազմակերպված, քան նրան նախորդող հասարակություններից վորևե մեկը:

Այս կազմակերպության նպատակը կը լինի ամբողջ մարդկության տնտեսությունը վարել համաշխարհային մասշտաբով:

Թե այս հասարակությունը կազմակերպության ինչ ձևեր կունենա, ինչ հիմնարկություններ կը լինեն այն ժամանակ և այլն, այժմ շատ դըժ-

վոր և այս մասին վորևե արժանահավատ ու գիտականորեն հիմնավորված բան ասել։

Հնարավոր է, և շատ կումմունիստներ հենց այսպես էլ ասել են, վոր ապագա կոմմունիստական հասարակության կազմակերպության հիմքը կը կազմեն աշխատանքի բոլոր տեսակների (հողագործական, արդյունաբերական, տրանսպորտի, կուլտուրայի մյուս զանազան ասպարեզների և այլն) գործավորների խմբակներն ու համաշխարհային մասշտաբով շաղկապված միությունները, վորոնք կունենան իրենց համագումարներն ու այլ հիմնարկները։

Սակայն, հնարավոր է, վոր բարձր զարգացման հասած կոմմունիստական հասարակության մեջ ծագեն այլ կազմակերպություններ ու հիմնարկներ էլ, վորոնք կարող են նման չլինել մինչև այժմ մեզ հայտնի բոլոր հիմնարկներին ու կազմակերպություններին, վորոնք կառուցված են բոլորովին այլ հիմունքներով։

Վոմանք յենթադրում են, որինակ, վոր զարգացած կոմմունիստական հասարակության մեջ խնդիրները վճռելու ու գործերը վարելու այն յեղանակն անգամ ժամանակի ընթացքում կվերանա և չի լինիլ, յերբ այս խնդիրները վորոշվում են մեծամասնության ու փոքրամասնության կարծիքները վորոշելով և փոքրամասնության՝ մեծամասնությանը յենթարկվելով։ Յենթադրում են, վոր բոլոր խնդիրներն ու գործերը կոմմունիստական հասարկության մեջ կվճռվեն գիտության միջոցով՝ հիմնվելով ավելի պատճառաբանված ու գիտական կարծիքների գերակշռության վրա, թեկուզ այս կարծիքներն արտահայտողը փոքրամասնությունը լիներ, վոր և ղեկավարելու յե աշխատանքի զանազան ճյուղերը հասարակության մեջ, վորտեղ չքանալու յե վորևե անհավասարություն, տիրապետության, շահագործման և այլն ամեն հնարավորություն։ Իբրև հարցեր վճռելու ու գործերը վարելու այսպիսի յեղանակի որինակ՝ կարելի յե մատնանշել բժշկի ու հիվանդի կամ խմբակի ղեկավարի ու խմբակում պարապողի միջև յեղած հարաբերությունների պրակտիկան։ Այս դեպքում մենք տեսնում ենք, վոր մարդիկ հետևում են կամովին ճանաչված հեղինակության ցուցմունքներին, մի հեղինակության, վոր չի հենվում վորևե տիրապետության ու հպատակության վրա։

10. ԱՐԴՅՈՔ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՍՇՏԱԲՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԼԱՆԱՉԱՓ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԻԹԽԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ԾԱՌԱՅԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿԻ ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԱ ԿԱՄ ՎՈՐԵՎԷ ԱՅԼ ԱՐՏՈՆՅԱԼ ԽՄԲԱԿՆԵՐ ՉԵ՞Ն ԱՌԱՋԱՆԱ

Բյուրոկրատիա (պաշտոնեյություն) ասելով՝ հասկանում են վորևե կազմակերպության ապարատային ծառայող պաշտոնյաների այնպիսի խմբակներ, վորոնք կտրված են մասսայից, կանգնած են մասսայից վերև, բնակչության մեծամասնության համեմատությամբ՝ ապրում են արտոնյալ պայմաններում, այն հանգամանքի հետևանքով, վոր նրանք, հատուկ վարժության կամ կանխապատրաստության շնորհիվ, ավելի յեն հարմարված տվյալ ապարատային կամ սրա գլուխ կանգնած անձանց ծառայելու։

Այսպես, որինակ, բյուրոկրատայի ամենասովորական տեսակն է պետության մեջ յեղած բյուրոկրատիան, զանազան տեսակի պետական չինովնիկությունն ու ընդհանրապես պետական ծառայողները։

Ինչպես հայտնի յե, նրանք գոյություն ունեն Խորհրդային պետության ժամանակ էլ և հանդիսանում են բյուրոկրատական կարգերի ու բյուրոկրատիզմի ներկայացուցիչները, վորոնց դեմ կռիվ են մղում կոմմունիստական կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը։

Բայց բյուրոկրատիա ու բյուրոկրատիզմ լինում է վոչ միայն պետության մեջ, այլև ուրիշ կազմակերպություններում, որինակ, արհմիություններում կամ նույնիսկ կուսակցությունների մեջ։

Սրանց մեջ նույնիսկ, վորոշ պայմաններում, առաջ են գալիս այս կազմակերպությունների ապարատներին ծառայող սակավ արտադրողական ու հաճախ գործի համար վնասակար, այլև մասսաներից կտրված չինովնիկներ, բյուրոկրատներ, վորոնք ոգտվում են բնակչության, մասսայի համեմատությամբ զանազան, թեկուզ փոքրիկ արտոնություններից (բանվորական ժամերի քիչ քանակ, ինչ-ինչ առավելություններ աշխատանքի վարձատրության ասպարեզում, կամ այն հանգամանքի շնորհիվ, վոր նրանք մոտ են կանգնած իշխանության բարձր որգաններին և այլն)։

Հարց է առաջ գալիս, թե ապագա կոմմունիստական հասարակության մեջ էլ ավելի մեծ չափերով բյուրոկրատիա չի՞ լինիլ։

Այս հարցման պետք է բացասական պատասխան տալ ամենից առաջ հենց այն պատճառով, վոր կոմմունիզմի ժամանակ վոչ մեկի համար չի լինիլ և չի էլ կարող լինել վորևե արտոնյալ դրություն՝ նյութական առավելությունների կամ իշխանության տեսակետից, վորովհետև իշխանություն բոլորովին չի լինիլ, իսկ նյութական և այլ տեսակետից՝ յուրաքանչյուրը լիակատար հնարավորություն կունենա բավարարելու յուր բոլոր պահանջները աշխատանքի տեսակից ու բնույթից անկախ, շնորհիվ այն հանգամանքի, վոր կոմմունիստական հասարակության մեջ ամեն տեսակ բարիքների առատություն կլինի։

Ինչ վերաբերում է այն խնդրին, թե առաջ կը գան գործավորների մշտական խմբակներ, վորոնք կարող են վորևէ առանձին կաստա կազմել— թեկուզ առանց արտոնյալ դրության, այս միանգամայն սխալ է, վորովհետև կոմմունիստական հասարակության մեջ նրա բոլոր անդամները ի վիճակի կը լինեն չափազանց բարձր աստիճանի, ընդհանուր ու բազմակողմանի տեխնիկական կրթություն ու ամեն տեսակի կանխապատրաստություն ձեռք բերել, ուստի և կոմմունիզմի ժամանակ, նեղ մասնագիտացում չի լինիլ և գործավորները կարող կլինեն, տարբեր ժամանակ, տարբեր ասպարեզներում աշխատելու և միաժամանակ աշխատանքի տարբեր տեսակներով զբաղվելու, որինակ՝ ամեն որ պարապելու թե ֆիզիկական, թե մտավոր, թե արդյունաբերական, թե գյուղատնտեսական աշխատանքով, իսկ այս միայն ոգտակար կարող է լինել թե ամբողջ հասարակության և թե նրա յուրաքանչյուր անդամի համար։

Ինչ վերաբերվում է կապիտալիզմից կոմմունիզմին հասնելու անցման շրջանի ժամանակ բյուրոկրատիայի գոյություն ունենալուն, ապա բյուրոկրատիան, մասնավորապես խորհրդային պետության ծառայության մեջ յեղած բյուրոկրատիան, պետք է նվաղի այն չափով, ինչ չափով պաշտո-

նատար անձանց ընտրելիության ու փոփոխելիության սկզբունքները կուժեղանան, նրանց արտոնյալ դրությունը կը նվազի և աշխատավոր մասսաների կուլտուրականությունն ու հանրային ակտիվությունը կավելանա:

11. ԱՊԱԳԱ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՎՈՐԵՎԷ ՀԱՐԿԱԴՐԱՆՔ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱ՞

Արդեն ասացինք, վոր կոմմունիզմի ժամանակ պետական իշխանություն չի լինի, վորովհետև այն ժամանակ չեն լինի վոչ մասնավոր սեփականություն, վոչ էլ դասակարգեր: Սակայն կոմմունիզմի ժամանակ լինելու յե մի կազմակերպություն, այն էլ շատ ընդարձակ ու բարդ, վոր ընդգրկելու յե ամբողջ մարդկությունը, և մարդկանց միջև յեղած հանրային հարաբերություններն էլ շատ զարգացած են լինելու: Հարց է ծագում, թե արդյոք կոմմունիզմի ժամանակ, այս կամ այն ձևով հարկադրանք լինելո՞ւ յե, թե այս նույնպես կը վերանա, յերբ չքանան կապիտալիզմի մյուս բոլոր մնացորդներն ու հետքերը:

Յերբեմն ասում են, թե-ապա ինչպես պետք է լինի այն ժամանակ, յեթե հանցագործություններ կատարվեն, կամ թե հասարակության այս կամ այն մասն ու առանձին անհատներ հրաժարվեն այն կատարելուց ինչ վոր պահանջվում է և անհրաժեշտ է հօգուտ ամբողջ հասարակության, ամբողջ կազմակերպության և այլն:

Սակայն, ընդ սմին, մոռանում են պարզել, թե ինչու կապիտալիզմի ժամանակ հանցագործություններ են կատարվում, կամ այս ու այն կազմակերպության անդամները նրա պահանջներին չենթարկվելու օրինակներ են ցույց տալիս: Այսպես կոչված հանցագործությունները, վորոնք կատարվում են հասարակության մեջ, ճնշող մեծամասնությամբ ուղղակի ու անմիջական ծնունդ են հասարակությունների դասակարգային ու սեփականատիրական կազմակերպության, մանավանդ կապիտալիզմի ժամանակ, յերբ այնտեղ գերիշխում են մրցումն ու ընդհանրական կռիվը, վորոնք տեղի յեն ունենում բնակչության վիթխարի մեծամասնության շահագործման, ստրկացման ու աղքատության պայմաններում:

Կան ուրիշ հանցագործություններ էլ, վորոնք անուղղակի կերպով նույնպես բխում են հասարակարգի պայմաններից կամ համենայն դեպս օժանդակություն են գտնում այդ պայմանների մեջ և վոչ թե վերացվում (օրինակ խանդից ծագած սպանությունը): Կոմմունիստական հասարակարգի մեջ, յերբ վերջինս կզարգանա և մարդկանց կը վերակրթե ընդհանրական ազատության, համերաշխության ու բարձր կուլտուրայի պայմաններում, արագությամբ կը չքանան բոլոր բարբարոսական դարաշրջանի մնացորդներ, ուստի և կարիք չի լինի հարկադրանք կիրառելու:

Առաջին ժամանակաշրջաններում, մինչև մարդկության վերջնական առողջացումն ու լավացումը, թերևս միայն հիվանդանոցներն ու այլ կրթական հիմնարկները մնան ու գոյություն ունենան, վորտեղ և կտեղավորեն հատկապես անուղղելի ու անորմալ մարդկանց:

Նմանապես կարիք չի լինի հարկադրանք կիրառելու, այս կամ այն գործունեյության անհրաժեշտ կանոնները կատարել տալու համար, օրինակ՝ արտադրության մեջ և այլն:

Անհրաժեշտ կանոններն ինքն ըստ ինքյան բխում են հենց իրենից—գործից և յուրաքանչյուր առողջ ու նորմալ մարդու մտքով էլ չի անցնի այս կանոնների հակառակ շարժվել. իսկ այս կանոնները կատարելը, վոր հիմնըված կլինի նրանց հասկացողության վրա, սովորություն կդառնա կոմմունիստական հասարակության անդամների համար, ուստի և այս կողմից էլ կարիք չի նախատեսնվում վորևե հարկադրական միջոցներ կիրառելու զարգացած կոմմունիստական հասարակարգում:

12. ՀՆԱՐԱՎՈ՞Ր Ե ԱՐԴՅՈՔ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՆ ՏԱՊԱԼԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ԼԻՈՎԻՆ ՈՒ ՄԻԱՆԳԱՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԿՈՄՄՈՒՆԻԶՄ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Հիմնվելով այն բոլորի վրա, վոր վերևում ասել ենք կոմմունիզմի մասին, պարզվում է, վոր, կապիտալիզմի լուծարքից (լիկվիդացիա) անմիջապես հետո, հնարավոր չէ կյանքում լրիվին ու միանգամից իրականացնել կոմմունիզմն ամբողջ աշխարհում, վորովհետև յերկարատև զարգացման հետևանքով միայն, և այն էլ վոչ միաժամանակ բոլոր յերկրներում, բուրժուազիայի վրա հաղթանակ տանելուց հետո, մարդկությունը կը մոտենա կոմմունիզմին և այն կիրականացնի կյանքի մեջ:

Ընդ սմին կոմմունիզմը մինչև յուր վերջնական հաղթանակը ու լիակատար զարգացումն ու փթթումը, զանազան աստիճաններ է անցնելու:

Դեպի կոմմունիզմ տանող շարժման առաջին ու գլխավոր պայմաններն են՝ նախ այն, վոր բոլոր յերկիրներում բուրժուազիայի իշխանությունը տապալվի և մասնավոր սեփականատիրական անարխիկ-դասակարգային հասարակարգը փոխարինվի կազմակերպված ու պլանաչափ հասարակությամբ, վորը ունենա խոշոր չափերով կազմակերպված տնտեսություն, բարձրագույն տեխնիկա, և մանր տնտեսությունները չքանան բոլոր յերկիրներում ու մարզերում (область) և այլն:

Յերկրորդ՝ լիակատար կոմմունիզմի համար անհրաժեշտ է, վոր ամբողջ մարդկությունը մեծապես հանրային վերակրթություն ստանա համերաշխության զարգացման հիմունքով և բոլոր մարդիկ ազատագրվեն սեփականատիրական բնակալ ու կողոպտիչ բուրժուական-կապիտալիստական հասարակարգի հոգեբանությունից ու սովորություններից:

Լիակատար ու զարգացած կոմմունիզմին նախորդող անցման աստիճանների թվում, սովորաբար, առաջին շրջում, հիշատակվում է սոցիալիզմը կամ սոցիալիստական հասարակարգը:

13. ԱՐԴՅՈՔ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՈՒ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՄԻՋԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ՞

«Կոմմունիզմ» ու «սոցիալիզմ» ասելով՝ հասկանում են յերկու տարբեր բան. մի կողմից ապագա մի հասարակություն, իսկ մյուս կողմից այն ուսմունքները կամ թեորիաները, վոր դավանում են կոմմունիստները կամ սոցիալիստները:

Մենք առայժմ «կոմմունիզմ» ու «սոցիալիզմ» բառերը գործ ենք ածում առաջին իմաստով, այս բառերով հասկանալով կոմմունիստական ու

սոցիալիստական հասարակությունը և հետագային ենք թողնում քննել կոմմունիզմն ու սոցիալիզմն, իբրև հայտնի ուսմունքներ և թեորիաներ։

Այսպես, ուրեմն, կոմմունիստական ու սոցիալիստական հասարակության մասին խոսելիս՝ պետք է այն տարբերությունը դնենք նրանց միջև, որ սովորաբար սոցիալիզմ նշանակում է կոմմունիստական հասարակության առաջին աստիճանը (կամ ֆազը, փուլը) որը պետք է գոյություն ունենա կոմմունիստական հասարակության սկզբնաշրջանում։

Այս աստիճանը կը լինի այն ժամանակ, յերբ կյանքում կիրականանան կոմմունիզմի սոցիալ-տնտեսական պայմանները կամ նախադրյալները, այսինքն՝ բոլորովին չեն լինիլ մասնավոր սեփականություն ու դասակարգեր, կը չքանա մանր արտադրությունը և ամբողջ հասարակությունը կը վարե ամբողջ տնտեսությունը, կազմակերպված ու ըստ ծրագրի, խոշոր չափերով։

Հարց է առաջ գալիս, թե ինչո՞ւ այսպիսի հասարակարգը կոմմունիզմի առաջին աստիճանն է լինելու և ինչո՞վ է տարբերվելու լիակատար ու զարգացած կոմմունիզմից։

Տարբերությունն այն է, որ լիակատար ու զարգացած կոմմունիզմի համար՝ բոլոր մատնանշած սոցիալ-տնտեսական պայմանները կամ նախադրյալները միայն դեռ բավական չեն, սրա համար հատուկ տեխնիքական ու կուլտուր-հոգեբանական նախադրյալներ էլ են հարկավոր։ Ամենից առաջ, անհրաժեշտ է այնքան բարձր տեխնիկա, արտադրող ուժերի այնքան բարձր մակարդակ, որպեսզի հասարակությունը, մարդկային կենդանի աշխատանքի քիչ քանակով, կարողանա բոլոր բարիքների բաշխումը կատարել ըստ կարիքների, լիովին բավարարելով բոլորին և այն էլ առանց սահմանափակումների ու հարկադրանքների։ Իսկ վերջինս, բացի վերոհիշյալից, պահանջում է նաև մարդկության հանրային վերակրթություն ու բարձր կուլտուրական զարգացում։

Այս բոլորը կը լինի աստիճանաբար, իսկ սկզբնապես, շնորհիվ այն հանգամանքի, որ տեխնիկան բավարար չափով բարձր չի լինի և հասարակության իշխանությունը բնության վրա ընդհանրապես, համեմատաբար, այնքան զորեղ չի լինի, այնուհետև, որ նախընթաց հասարակարգից զանազան մնացորդներ մնացած կը լինեն, ուստի սոցիալիզմի ժամանակ բաշխումը կը լինի ոչ ըստ կարիքների, այլ ըստ աշխատանքի, այսինքն՝ աշխատանքի արտադրողականության քանակի ու որակի համեմատ։

Հետևաբար սոցիալիզմի ժամանակ լիակատար հավասարություն չի լինի և դեռ գոյություն կունենա որոշ հարկադրական սիստեմ, որը ինչպես տնտեսությունը կազմակերպելու ու վարելու ժամանակ, այնպես էլ արդյունքը բաշխելու միջոցին, կը հենվի որոշ չափով հարկադրանքի միջոցով գործող հիմնարկությունների վրա։

Իսկ այս նշանակում է, որ մի քանի մասերում ու որոշ չափով պետությունն էլ դեռ կը մնա։ Ահա կոմմունիզմի այս սկզբնական աստիճանը, յերբ լիակատար կոմմունիզմ դեռ չկա, յերբ բաշխումը կատարվում է ոչ ըստ կարիքների, այլ ըստ աշխատանքի, յերբ հասարակության մեջ դեռ գոյություն ունի հարկադրանք և ամեն ասպարեզից դեռ չի չքացել պետությունը,—ահա հենց այս աստիճանն է, որ սովորաբար կոչվում է սոցիալիստական հասարակություն։

Այսպիսի սոցիալիստական հասարակությունը կոլլեկտիվիստական հասարակություն կամ կոլլեկտիվիզմ էլ է կոչվում։

Սակայն սոցիալիստական հասարակարգի ժամանակ, պետությունն, այս իմաստով վերցրած՝ խորհրդային չի լինի՝ սրա այժմյան առումով, յերբ Խորհրդային իշխանությունը պրոլետարիատի ու ամենաչքավոր գյուղացիության դիկտատուրան է և յերբ դեռ գոյություն ունի բուրժուազիան։

Սոցիալիստական հասարակության մեջ, սրա լիակատար կոմմունիզմին անցնելու նախօրյակին, բուրժուազիան արդեն չքացած կը լինի. ուստի և սոցիալիստական պետությունը պատմության մեջ առաջին անգամ կը լինի դեմոկրատիա բոլորի համար՝ բոլոր քաղաքացի արտադրողների հավասար իրավունքներով, առանց բանակի, միլիցիայի և այլն։

Հենց այս էլ կը լինի պետության գոյության վերջին աստիճանը, յերբ պետությունը արագորեն կը մահանա և որից հետո վերջնականապես կը մեռնի լիակատար կոմմունիզմի ժամանակ։

14. ԲԱՑԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԸ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒՑ՝ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԲԱՌՆ ԵՎ Ի՞ՆՉ ԻՄԱՍՏՈՎ Է ԳՈՐԾԱԾՎՈՒՄ

Սոցիալիզմ բառը գրականության մեջ տարբեր իմաստներով էլ է գործածվում։

Այսպես, օրինակ, սոցիալիզմ ասելով՝ հասկանում են ընդհանրապես ապագա հասարակությունը, որն առաջ է գալու կապիտալիզմի չքանալուց հետո, առանց մատնանշելու, թե ինչպես պետք է կառուցվի այս հասարակությունը տնտեսական տեսակետից—արդյոք կոմմունիզմի սկզբունքներո՞վ, այսինքն հանրային ու պլանաչափ կազմակերպված տնտեսությունը հիմնելով խոշոր ֆաբրիկաների ու կայքերի վրա՞, թե միանձնյա կամ խմբական, մանր ու փոշիացած, անկազմակերպ տնտեսության սկզբունքներով (մանր բուրժուական սոցիալիզմ, անարխիստների ու նարոդնիկների—էսէռների սոցիալիզմ)։ Այնուհետև սոցիալիզմ ասելով՝ թեև պրոլետարական սոցիալիզմ էլ են հասկանում, սակայն առանց մատնանշելու, թե ինչպես պետք է կազմակերպվի աշխատանքն ու բաշխումն. այսինքն՝ արդյոք լիակատար կոմմունիզմի սկզբունքներով, այն է՝ այն կանոնի համաձայն, որ ասում է «յուրաքանչյուրին ըստ կարիքների և յուրաքանչյուրից ըստ ունակությունների», առանց որևէ հարկադրանքի, թե՞ կոլլեկտիվիստական սկզբունքներով, բաշխումն ըստ աշխատանքի ու պարտադիր աշխատանքի քանակը սահմանելով որոշ հարկադրանքի միջոցով։

Այս իմաստով առած՝ կոմմունիզմ ու կոլլեկտիվիզմը հանդես են գալիս իբրև ընդհանուր սոցիալիզմ գաղափարի տարբեր տեսակներ, կամ մասնավոր դեպքեր։

Վերջապես սոցիալիզմ են կոչում նաև մի շարք զանազան տեսակի հանրային հոսանքներ ու ուսմունքներ, որոնք, նույն ինքն կապիտալիստական պետության միջամտության միջոցով, ձգտում են իրականացնելու այս կամ այն փոփոխությունները բուրժուական հասարակարգի զանազան մասերում, առանց խախտելու այս հասարակարգի հիմքերը, այսինքն առանց վերացնելու մասնավոր սեփականությունը, ապրանքային տնտեսությունն ու վարձու աշխատանքը, և հետևաբար առանց վերացնելու շահագործումը, դասակարգերը և այլն։

Պարզ ե, վոր այս իմաստով, սոցիալիզմը (կաթոլիկական կամ տերտերական, քրիստոնեական սոցիալիզմ, բուրժուական—պետական սոցիալիզմ և այլն)· վոչ մի կապ չունի բանվոր դասակարգի շահերի հետ և սովորաբար բղխում, առաջ ե գալիս պրոլետարիատի ամենակատաղի թշնամիներից:

Այսպիսով, մինչդեռ սոցիալիզմը տարբեր առումներով ե հասկացվում և սոցիալիզմի դիմակի տակ թաքնված՝ կարող են հանդես գալ և շարունակ թաքնվում են ներկայումս էլ, պրոլետարիատի ամենավատթար ու վտանգավոր թշնամիները, վորոնք փորձում են սոցիալիզմի դրոշակով վարագուրվելով՝ յետ կանգնեցնել բանվորներին հեղափոխությունից ու կոմմունիզմից,—կոմմունիզմ բառը, ընդհակառակը, ամբողջ աշխարհի բուրժուազիայի համար նշանակում ե մասնավոր սեփականության ու կապիտալիստական հասարակարգի ամենակատաղի ու վտանգավոր թշնամի:

Բոլոր յերկիրներում իսկական հեղափոխականներն այժմ փոխում են իրենց սոցիալիստ անունը և բուրժուազիայի դեմ ասպարեզ են յիջնում կոմմունիզմի դրոշի տակ:

Կոմմունիզմը հեղափոխական բանվոր դասակարգի ամենահեռավոր ու ամենաբարձր նպատակն ե:

Յեվ կոմմունիզմ բառը ծառայում ե իբրև մի պայծառափայլ դրոշ՝ կապիտալի դեմ մղվող կատաղի կռվում, այնինչ սոցիալիզմ բառը բուրժուազիան ու նրա գործակալները կարողացել են յերկիմաստ դարձնել:

15. Ի՞ՆՉ Ե ԳԻՏԱԿԱՆ ՈՒ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ (ԿՈՄՄՈՒՆԻԶՄ)

Գիտական կամ պրոլետարական սոցիալիզմը (կոմմունիզմ) կամ, ինչպես դեռ ասում են գրականության մեջ, արդի հեղափոխական սոցիալիզմը, ուսմունքն ե Մարքսի ու Ենգելսի, վորոնք առաջին անգամ այն կռվի պատմության ընթացքում, վոր բանվոր դասակարգը մղում ե բուրժուազիայի դեմ, գիտական ուսումնասիրության հողի վրա դրին այն հարցերը, վորոնք կապ ունեն այս կռվի հետ և գիտության միջոցով հիմնավորեցին թե կոմմունիզմի անհրաժեշտությունը և թե այն ճանապարհներն ու միջոցները, վորոնք տանում են կապիտալիզմից դեպի կոմմունիզմ:

Տարբեր հասարակությունների մեջ տեղի ունեցած դասակարգային կռիվը, մասնավորապես պրոլետարիատի՝ բուրժուազիայի դեմ մղվող դասակարգային կռիվը ուսումնասիրելով՝ Մարքսն ու Ենգելսը հաստատեցին, վոր կապիտալիզմի զարգացման հետևանքով նրան հատուկ ներքին հիմնական հակասությունները (անարխիան ու մրցումը մի կողմից և շահագործումը մյուս կողմից) կուժեղանան ու կը սրվեն միայն, իսկ այս բանը անհրաժեշտորեն կը հասցնի մի կողմից կապիտալիզմի փլուզումին ու մյուս կողմից այն բանին, վոր պրոլետարիատը կապստամբի իրեն շահագործող բուրժուազիայի դեմ և, իշխանությունը նվաճելով ու յուր դիկտատուրայի միջոցով, անխուսափելիորեն կը հասնի կոմմունիզմին և իրեն հետ միասին ամբողջ մարդկությունը կազատագրե կապիտալիզմի ճնշումից:

Կոմմունիզմի ժամանակ, «յերբ արտադրության միջոցները կանցնեն ամբողջ հասարակության ձեռքը, այն ժամանակ կը չքանա ապրանքային արտադրությունն ու արդյունքի՝ արտադրողների վրա ունեցած տիրապե-

տությունը: Հանրային արտադրության ներսում թագավորող անարխիային կը փոխարինե պլանաչափ, գիտակցական կազմակերպությունը: Անհատական գոյության համար մղվող կռիվը կը դադարե: Յեվ այն ժամանակ միայն կենդանական թագավորությունից վերջնականապես կանջատվի և ասպարեզ կը գա մարդը, բառիս իսկական առումով, և գոյության կենդանաբանական պայմաններից կանցնի իրապես մարդկային պայմաններին: Կյանքի բոլոր պայմանները, վոր մարդիկ եյին ստեղծել և վորոնք մինչև այժմ ճնշում եյին մարդուն, այն ժամանակ իրենք կենթարկվեն մարդկանց ու նրանց վերահսկողությանը, և մարդիկ առաջին անգամ կը դառնան իբրև ընության գիտակից, իսկական տերեր, վորովհետև իրենց սեփական միացյալ հասարակության մեջ էլ տեր ու տնօրեն կը լինեն: Մարդկանց սեփական հանրային գործունեյության որենքները, վորոնք մինչև այժմ հակադրվում եյին նրանց՝ իբրև մարդկանց համար ոտար, ուստի և նրանց վրա իշխող որենքներ, այժմ մարդիկ կսկսեն գործադրել՝ գործը լրիվ ըմբռնելով և իրենց սեփական շահերի համաձայն: Հանրային կազմակերպության հպատակվելը, վոր մինչև այժմ բնությունն ու պատմությունն եյին փաթաթում մարդկանց վզին, կը դառնա նրանց սեփական ազատ գործը: Օբյեկտիվ ու մարդկանցից ոտար ուժերը, վորոնք մինչև այժմ իշխում եյին պատմության մեջ, կենթարկվեն հենց իրենց, մարդկանց վերահսկողությանը:

Միայն այն ժամանակ մարդիկ լրիվ գիտակցաբար իրենք կը կերտեն իրենց պատմությունը, և պատմական այն գործոնները, վոր շարժման մեջ կը դնեն մարդիկ, ավելի ու ավելի մեծ չափերով կտան մարդկանց համար ցանկալի հետևանքներ: Այն կը լինի մի վոստյուն, վոր մարդկությունը կը գործե անհրաժեշտության թագավորությունից դեպի ազատության թագավորությունը:

Արդի պրոլետարիատի պատմական խնդիրը հենց այս ազատագրական ակտը կատարելն ե. «Իսկ գիտական սոցիալիզմի խնդիրը հենց այն ե, վոր ուսումնասիրե այդ ազատագրական ակտի պատմական պայմաններն ու նրա բնույթը և այսպիսով պարզաբանե այժմ գործողության հրավիրվող ճնշված դասակարգին, նրա սեփական գործունեյության պայմաններն ու եյությունը» Енгельс: „Анти-Дюринг" եջ 159, Издательство „Московский рабочий):

Դասակարգային կռիվ մղելու ու կոմմունիզմին անցնելու համար՝ պրոլետարիատը պետք ե միանալով հատուկ անկախ քաղաքական կուսակցություն կազմե և նրա ղեկավարությամբ հեղափոխական կռիվ մղե բանվոր դասակարգի ընդհանուր արմատական շահերի համար:

Հենց այս համառոտ թեզիսների մեջ ե ամփոփված գիտական սոցիալիզմի կամ կոմմունիզմի եյությունը: Ներկայումս հենց այս իմաստով էլ հասկանում են այս ուսմունքը բոլոր յերկիրների հեղափոխական պրոլետարները-կոմմունիստները:

Սակայն Մարքսն ու Ենգելսը վոչ միայն գիտական կոմմունիզմի հիմնական թեզիսների շարադրանքն (изложение) են տվել, այլ և խոր ու ինքնուրույն կերպով հիմնավորել են այս թեզիսները:

Այս հիմնավորումը պարունակված ենք գտնում Մարքսի ու Ենգելսի այն ուսմունքի մեջ, վոր կոչվում ե մատերիալիստական պատմահայացք կամ պատմական մատերիալիզմ:

16. ՎՈ՞ՐՆ Է ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏՄԱՀԱՅԱՑՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

«Մատերիալիստական պատմահայացքը,—ասում է Էնգելսը,—ելնում է այն թեզիսից, թե արտադրությունն ու սրա հետ միասին նաև արդյունքների փոխանակությունը ամեն մի հասարակարգի հիմքն են կազմում, և թե յուրաքանչյուր հասարակարգի մեջ արդյունքների բաշխումը և ընդ սմին հասարակության՝ դասակարգերի (կամ դասերի) բաժանվելը առաջ է գալիս այն բանի համապատասխան, թե ինչ է արտադրվում ու ինչ կերպով է արտադրածը ինչպես է փոխանակվում։

Սրա հետևանքով, բոլոր հանրային փոփոխությունների ու քաղաքական հեղաշրջումների հիմնական պատճառները վոչ թե մարդկանց գլխում պետք է վորոնել, վո՛չ էլ ճշմարտության ու արդարության նրանց ըմբռնումների մեջ, այլ արտադրության ու փոխանակության յեղանակի փոփոխությունների մեջ։ Այս փոփոխությունները պետք է փնտրել վոչ թե փիլիսոփայության մեջ, այլ յուրաքանչյուր տվյալ դարաշրջանի տնտեսականության մեջ (экономика)։

Պատմության այսպիսի ըմբռնումից ինքնըստինքյան բղխում է այն թեզիսը, թե հասարակության մեջ յերևան յեկող թերությունները վերացնելու միջոցները պետք է գոյություն ունենան հենց նույն ինքն արտադրական հարաբերությունների մեջ։

Այս միջոցները մարդիկ չեն հնարում իրենց գլխից, այլ գլխի օգնությամբ գտնում են արտադրության նյութական առկա (наличный) *պայմանների մեջ.* (Енгельс:—Акти-Дюринг *եջ* 149)։

Այս թեզիսները պետք է ամբողջովին կիրառել պրոլետարիատի՝ կապիտալիզմի ժամանակ բուրժուազիայի դեմ մղվող դասակարգային կռվի վերաբերմամբ։

«Բուրժուազիայի տիրապետության ժամանակ ստեղծված արտադրող ուժերը այն բոպեյից զարգացան անլուր արագությամբ ու անլուր չափերով, յերբ շոգու ու մեքենաների շնորհիվ նախկին մանուֆակտուրան վերածվեց արդի խոշոր արդյունաբերության։

Ներկայումս նոր արտադրող ուժերը մեծապես աճել ու գերազանցել են սրանց շահագործման բուրժուական ձևից և արտադրող ուժերի ու արտադրության յեղանակի (կապիտալիստական յեղանակի) միջև ծագումն առած ընդհարումը (կռիվը, բախումը) մարդկանց գլխում առաջացած սոսկ մտավոր հակասություն չէ։ Այս ընդհարումը գոյություն ունի իրականության մեջ, օբյեկտիվ կերպով, մեզանից դուրս և անկախ բուն իսկ այն մարդկանց կամքից ու ցանկությունից, վորոնք ստեղծել են այն։

Արդի սոցիալիզմը վոչ այլ ինչ է, յեթե վոչ այս նյութական ընդհարման մտավոր արտացոլումն հենց այն դասակարգի գլխում, վորն անմիջապես տառապում է այդ հակասության շնորհիվ, այն է, բանվոր դասակարգի գլխում» („Енгельс—Акти-Дюринг" *եջ* 149-150)։

«Այս ընդհարումն այն է, վոր, յերբ զարգացավ կապիտալիզմը, հանրորեն (վոչ անհատաբար) արտադրվող արդյունքները սկսեցին յուրացնել վոչ թե նրանք, վորոնք իրապես շարժման մեջ էյին դնում արտադրության միջոցներն ու արդյունքներ ստեղծում, այլ կապիտալիստները։

Արտադրության միջոցներն ու բուն իսկ արտադրությունը դարձել էյին ըստ էության հանրային, սակայն նրանց նկատմամբ կիրառվում էր յուրացման այն ձևը, վոր հիմնված է առանձին անհատների մասնավոր արտադրության վրա, յերբ յուրաքանչյուրը տեր է սեփական արդյունքների և այս արդյունքը շուկա յե հանում։

Արտադրության նոր յեղանակը վորքան ավելի յե գերիշխող դառնում արտադրության բոլոր գլխավորագույն ճյուղերում,... **այնքան ավելի ակնհայտ է դառնում որեվե սաստկացող այն անհամապատասխանությունը, վոր գոյություն ունի հանրային արտադրության ու յուրացման կապիտալիստական ձևի միջև»** *(Էնգելս, նույն գիրք, եջ 151)*։

Այս **«հակասությունը, վոր կար հանրային արտադրության ու սրա արդյունքի կապիտալիստական յուրացման միջև, արտահայտվում էր պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև գոյություն ունեցող հակամարտության (հակասություն, կռիվ) ձևով»** *(Էնգելս, նույն գիրք, եջ 152)*։

Ընդ սմին, **«հանրային արտադրության ու կապիտալիստական յուրացման հակասությունը յերևան է գալիս իբրև մի հակադրություն, վոր գոյություն ունի առանձին գործարանի արտադրության կազմակերպության ու ամբողջ հասարակության մեջ յեղած արտադրության անարխիայի միջև»** *(Էնգելս, նույն գիրք, եջ 153)*։

Իբրև հետևանք այս հակասությունների, զարգացած կապիտալիստական հասարակությունների մեջ քանի գնում, այնքան ավելի յե **«արտադրության յեղանակն ըմբոստանում փոխանակության յեղանակի դեմ, արտադրող ուժերը՝ արտադրության այն յեղանակի դեմ, վոր առաջ է բերել նրանց»**։

Քանի գնում, այնքան ավելի յե «արտադրության կապիտալիստական յեղանակը ապացուցում, վոր ինքն անընդունակ է այսուհետև արտադրող ուժերը կառավարելու և յերկրորդ՝ այս արտադրող ուժերն իրենք հարաճուն յեռանդով պահանջում են, վոր վերացվեն այս հակասությունները, վոր իրենք ազատագրվեն կապիտալիզմից և իրենք **փաստորեն** *ճանաչվեն իբրև* **հանրային արտադրող ուժեր»** *(Էնգելս, նույն գիրք, եջ 155)*։

«Այս հակասությունների վերացումը կարող է տեղի ունենալ միայն այն ժամանակ, յերբ արդի արտադրող ուժերի հանրային բնույթն իրապես կը ճանաչվի և յերբ այսպիսով արտադրության, յուրացման ու փոխանակության յեղանակները կը համերաշխեն արտադրության միջոցների հանրային բնույթի հետ։ Իսկ այս հնարավոր կը լինի միայն այն ժամանակ, յերբ հասարակությունը հայտնի կերպով, առանց վորևե տատանումների, կը տիրանա արտադրող ուժերին, վորոնց կառավարելը, ուրիշ վորևե յեղանակի միջոցով, անհնարին կը դառնա» (Էնգելս, նույն գիրք, եջ 157)։

Այս հեղաշրջմանն ընդառաջ գնալով՝ արտադրության կապիտալիստական յեղանակը, հենց ինքը, ստեղծում է նաև այն ուժը, վոր պետք է կատարե այս հեղաշրջումը՝ յերկյուղ կրելով յուր կործանումից։ Այս ուժը պրոլետարիատն է։ Յուր դասակարգային հեղափոխական կռվի հետևանքով «պրոլետարիատը կը տիրանա պետական իշխանության և արտադրության միջոցները կը դարձնե պետության սեփականություն։ Սակայն, ընդ սմին, նա վերջ կը դնե նաև յուր, իբրև պրոլետարիատի՝ սեփական գոյությանը

և կը վոչնչացնի դասակարգային բոլոր տարբերությունները ու դասակարգային հակասությունները, այլև պետությունն էլ, իբրև այդպիսին։

Անհատին կառավարող կազմակերպության փոխարեն՝ կստեղծվի մի կազմակերպություն, վոր կը կառավարե իրեն ու արդյունաբերության պրոցեսսը։ Պետությունը վոչ թե վերացվում, այլ ինքն իրեն մահանում է» (Էնգելս, նույն գիրքը, եջ 157)։

Ահա այս է արդի գիտական կոմմունիզմի կամ սոցիալիզմի պատմական, մատերիալիստական հիմնավորումը, վոր տվել է Էնգելսը, լիովին համաձայն լինելով Կարլ Մարքսի հետ։

Այս հիմնավորման շնորհիվ, ինչպես կոմմունիզմը, այնպես և բանվոր դասակարգի՝ կապիտալիզմի դեմ մղվող կռիվը յելան վորևե մեկի հնարած ուսմունքների կամ անհիմն իղձերի վիճակից և առաջին անգամ գիտություն դարձան՝ տարբերվելով ուտոպիական սոցիալիզմի կամ ուտոպիական կոմմունիզմի այն բոլոր ուսմունքներից, վորոնք գոյություն ունեյին մարքսիզմից առաջ։

17. Վ՞ՈՐ ՍՈՑԻԱԼԻԶՄՆ Է ԿՈՉՎՈՒՄ ՈՒՏՈՊԻԱԿԱՆ

Սոցիալիզմն (ու կոմմունիզմը) ուտոպիական, վոչ գիտական է լինում այն ժամանակ, յերբ իր վերջնական նպատակը հիմնավորում է լոկ նրա ցանկալիությունը մատնանշելով, սակայն, յերբ բուն կյանքում ու կապիտալիստական հասարակության բուն իսկ զարգացման մեջ, չի վորոշում ու սահմանում այն շարժիչ ուժերը, վորոնք անհրաժեշտորեն ապահովում են այս վերջնական նպատակի հաջողությունը և վորոնք հասունանում են բուն իսկ կապիտալիզմի արգանդում։

Ուտոպիական սոցիալիզմի (ու կոմմունիզմի) առաջին ուսմունքը ծագում է պրոլետարիատի ու բուրժուազիայի կռվի այն սկզբնական շրջանում, յերբ այս կռիվը չէ զարգացած դեռ ևս, յերբ պրոլետարիատը դեռ քանակով փոքրաթիվ է, վատ կազմակերպված, և յերբ այս դասակարգը իրեն շրջապատող իրականությունը չափազանց ֆանտաստիկ կերպով է պատկերացնում։ Մի կողմից ինքը, կապիտալիստական արտադրությունը, դեռ շատ թույլ էր զարգացած ուտոպիական սոցիալիզմի ծաղկման ժամանակաշրջանում (19-րդ դարի սկզբում), մյուս կողմից՝ պրոլետարիատն այն ժամանակ նոր-նոր էր սկսել բաժանվել չքավորների ու աղքատանու (беднота) ընդհանուր մասսայից իբրև հատուկ նոր դասակարգ և յերբ նա դեռ ընդունակ չէր անկախ քաղաքական գործողություն ու շարժում ունենալու և դասակարգային ճիշտ ինքնագիտակցություն ձեռք բերելու։

Հենց այս էլ անդրադառնում էր ուտոպիական սոցիալիզմի ուսմունքների վրա։

Մի կողմից այս ուսմունքները սովորաբար սոցիալիզմը, իբրև վերջնական նպատակ, վերին աստիճանի մշուշապատ, անորոշ ու ճապաղ եյին պատկերացնում, բոլորովին վոչ այնպես, ինչպես այժմ ըմբռնվում է Մարքսի ու Էնգելսի պրոլետարական կամ նորագույն կոմմունիզմը. մյուս կողմից՝ նրանք, այն ժամանակվա հասարակության մեջ, չեյին տեսնում այն շարժիչ ուժերը, ուղիները ու միջոցները, վորոնք միայն ի վիճակի եյին իրապես ապահովելու նոր հասարակարգի հաղթանակը։

Ուտոպիական սոցիալիզմի հեղինակները հնարում եյին նոր հասարակարգի տարբեր սիստեմներ և մանրամասնորեն մշակում եյին՝ փորձելով բոլոր մարդկանց համոզելու, թե անհրաժեշտ է այն սիստեմներն ընդունել ու իրականացնել կյանքում։

Ուտոպիստներն իրենց սիստեմները պետք է հնարեյին իրենց գլխից, վորովհետև ապագա կոմմունիստական հասարակության տարրերն ու հիմքերը դեռ պարզ չեյին նկատվում բուն իսկ կապիտալիզմի խորքերում, և ուտոպիստները հարկադրված եյին իբրև ապացույցներ մատնանշելու և սահմանափակվելու բանականությանն ուղղած դիմումներով (փոխանակ դիմելու պատմությանն ու իրականությանը), այլ և ապացուցելու, վոր նրանց հնարած սիստեմները գերազանց ու կատարյալ են։

Ընդ սմին, յեթե ուտոպիստները փորձեր են կատարում իրենց սիստեմը կյանքում կիրառելու, միշտ դիմում են ամբողջ հասարակությանն անխտիր, առանց տարբերություն դնելու դասակարգերի միջև։ Նրանց թըվում է, թե բավական է, վոր բոլորն ըմբռնեն իրենց սիստեմը, վորպեսզի անմիջապես խոստովանեն, թե այն սիստեմը լավագույն հասարակական կազմակերպության լավագույն ծրագիրն է։ Այս պատճառով էլ ուտոպիստ սոցիալիստները ժխտում են ամեն մի քաղաքական ու մանավանդ ամեն մի հեղափոխական գործունեյություն. նրանք ձգտում են իրենց նպատակներին հասնելու խաղաղ ճանապարհով, պրոպագանդայի միջոցով, այլ և կապիտալիստական հասարակության շրջանակներում փոքրիկ փորձեր ու եքսպերիմենտներ կատարելու միջոցով, հույս դնելով որինակի ուժի վրա։

Նրանք ցանկանում եյին իրենց նախագծերով բարվոքելու հասարակության բոլոր անդամների դրությունը՝ առանց բացառելու թե լավ վիճակ ունեցողներին ու թե ամենահարուստներին։

Ուտոպիստ-սոցիալիստներն արդեն տեսնում եյին դասակարգերի հակասությունը կապիտալիզմի ներսում, այլ և այն թշվառությունները, վոր կապիտալիզմը թափում է բնակչության վիթխարի մեծամասնության գլխին, մանավորապես պրոլետարիատի գլխին։ Ուտոպիստներից շատերը լավ են ըմբռնում և խիստ քննադատում են կապիտալիզմի հակասությունները, բայց նրանք չեն տեսնում նրա շարժիչ ուժն ու այն վերջնական նպատակը, դեպի վորը տանում է կապիտալիզմի զարգացումը։ Յեվ մասնավորապես նրանք չեն կարծում, վոր պրոլետարիատը վորևե հատուկ պատմական դեր ունի։ Նրանք չեն ընդունում, վոր բանվորությունը վորևե անկախ քաղաքական շարժում ունենա։ Սակայն ուտոպիստ-սոցիալիստների ուսմունքների մեջ շատ դրական կողմեր էլ կան, վորոնք Մարքսի ու Էնգելսի գիտական կոմմունիզմի մեջ թանգարժեք տարր են կազմում և վորոնք մեծ ոգուտ են տվել այն ժամանակվա բանվորական շարժմանը, վորչափով վոր նրանց յերկերում կապիտալիստական հասարակության մանրամասն ու պարզորոշ պատկերը, այլ և քննադատությունն էր պարունակվում և վորչափով վոր նրանց յերկերում սերմանված եյին մտքեր, վորոնք հանճարեղ եյին ու բոլորովին նորություն այն ժամանակվա համար։ Սկզբնական, մինչ-Մարքսյան շրջանի ուտոպիական սոցիալիզմի ամենագլխավոր ներկայացուցիչներն եյին՝ Սեն-Սիմոնն ու Ֆուրիեն Ֆրանսիայում և Ռոբերտ Օուենը՝ Անգլիայում։

18. ԿԱՐԵԼԻ՞ ՅԵ ԱՐԴՅՈՔ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ (ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ) ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՊԱԼԵԼՈՒ ՀԱՋՈՐԴ ՕՐԸ

Այս բանը մի անգամից չի կարելի անել, մի քանի պատճառներով. նախ՝ ինչպես ցույց տվեց Խորհրդային Միության փորձը և ինչպես այս վաղուց նախատեսում եր Մարքսի ու Ենգելսի գիտական կոմմունիզմը, իշխանությունը նվաճած հեղափոխական պրոլետարիատը պետք ե սկզբում անցնե բուրժուազիայի դեմ մղվող բացահայտ քաղաքական պատերազմի ժամանակաշրջանից, վորովհետև բուրժուազիան զրկվելով իշխանությունից՝ սկզբում փորձում ե վերադարձնել իր քաղաքական տիրապետությունը, դիմելով ներքին ու արտաքին հակահեղափոխության ոգնությանը: Հակահեղափոխությունը ճնշելու համար, այլ և ապահովելու համար հնարավորությունն այն շինարարության, վորի նպատակն ե սոցիալիզմին ու կոմմունիզմին հասնելը, հաղթող պրոլետարիատը պետք ե կերտե ու ամրապնդե իր պրոլետարական պետությունը:

Յերկրորդ՝ հեղափոխական պրոլետարիատի՝ իշխանությունը նվաճելուց անմիջապես հետո, յերկրում դեռ մնացած են լինում մանր բուրժուազիայի (խոշոր ու միջակ գյուղացիություն, տնայնագործներ, արհեստավորներ և այլն) ավելի կամ պակաս բազմանդամ դասակարգը, այլև մանր տնտեսության ու ապրանքա-սեփականատիրական հարաբերությունների համապատասխան ձևերը:

Այս հարաբերություններն ու ձևերը, այլև համարյա ամենուրեք քանակապես նշանավոր մանր բուրժուազիայի դասակարգը չի կարելի մի անգամից ու բռնի ճանապարհով կամ դեկրետներով վոչնչացնել, այլ աստիճանաբար, մանր բուրժուական հարաբերությունները յերկարատև ժամանակաշրջանում վտարելով և այն էլ գործելով տնտեսական բնույթ ունեցող միջոցներով, վորոնց նպատակն ե լինելու այս մանր բուրժուական մասսան անհրաժեշտորեն պրոլետարիատի կողմը գրավել և այնպես անել, վոր պրոլետարիատը ղեկավարի այն մանր բուրժուական մասսաները (այստեղից ե բղխում «ՆԵՊ»-ի՝ [1]) իբրև անցման շրջանի բնորոշ գծի անհրաժեշտությունը վոչ միայն Խորհրդային Միության այլև ուրիշ յերկիրների համար):

Յերրորդ՝ վոչ մի կապիտալիստական յերկրում կապիտալիզմի արտադրող ուժերն և բանվոր դասակարգի մակարդակը—նրա կազմակերպչական ընդունակությունները, գիտակցականությունը, կուլտուրականությունը և այլն, դեռ չեն հասել զարգացման այն բարձրության, վորպեսզի սոցիալիստական հեղափոխության հենց հաջորդ օրը կարելի լինի կառուցել մի անգամից հանրայնացած (общественный) ու լիովին պլանաչափորեն կազմակերպված տնտեսություն, վորպիսին պահանջվում ե սոցիալիզմի ժամանակ: Այս բանը չի կարելի իրականացնել մանավանդ այն յերկիրներում, վորոնք առաջինն են կատարում սոցիալիստական հեղափոխություն:

[1]) Ծանոթ. հայ. թարգմ.—«ՆԵՊ» բառը համառոտագրությունն ե Н. (овая) Э (кономическая) П (олитика) բառերի, վորոնք նշանակում են «Նոր տնտեսական քաղաքականություն»: Վերջինիս մասին տես գրքիս 13-րդ գլուխը—«Նոր տնտեսական քաղաքականության ծագումն ու հիմքերը», այլ և այս 6-րդ գլխի 23-րդ հատվածը:

19. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՈՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՐԱՆՔՈՒՄ ԻՆ՞Չ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԻՆ՞Չ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ ՅԵՆ

Անցման հասարակություն ու անցման շրջան, վոր տանում ե կապիտալիզմից դեպի սոցիալիզմ (դեպի կոմմունիզմ): Այս անցման հասարակարգի ու շրջանի հիմնական գծերը կամ հատկանիշները սրանք են.

Առաջին, վոր գոյություն ե ունենում և ամրապնդվում ե պրոլետարական պետությունն, իբրև պրոլետարիատի դիկտատուրայի քաղաքական ձև՝ խոշոր ու միջակ բուրժուազիայի ու կալվածատերերի հակահեղափոխությունը ճնշելու համար, ոտարերկրյա բուրժուազիայի հարձակումները յետ մղելու համար, մանր բուրժուական մասսաները պրոլետարիատի կողմը գրավելու ու նրա ղեկավարության յենթարկելու համար, այլև հաջողությամբ կատարելու համար այն շինարարությունը, վոր կատարվում ե սոցիալիզմին (ու կոմմունիզմին) հասնելու նպատակով:

Յերկրորդ, վոր գոյություն են ունենում դասակարգեր, վորոնցից ամենագլխավորն են՝ պրոլետարիատն ու մանր սեփականատերերի ու տնատերերի (ХОЗЯИН) դասակարգը (հատկապես գյուղացիությունը):

Յերրորդ, վոր պրոլետարական պետությունը իրականացնում ե խնկական շինարարությունը, ամենից առաջ տնտեսական շինարարությունը, վոր կատարվում ե սոցիալիզմին (կոմմունիզմին) հասնելու նպատակով և վոր այս նպատակի համար բանվորական պետությունը ոգտագործում ե մյուս բոլոր (մանր բուրժուական ու կապիտալիստական) ուժերն ու միջոցները՝ հոգուտ այս շինարարության ու բանվոր դասակարգի հզորացման:

Խորհրդային շինարարության մեջ այսպիսի շինարարություն գոյություն ունի, և սրա ամենագլխավոր արտահայտությունը (տնտեսության գերիշխող բարձունքները) սրանք են. ազգայնացրած (պետական) արդյունաբերություն, պետական արտաքին առևտուր, պետական փոխադրություն, պետական բանկ ու ազգայնացրած պետական հող:

20. ԻՆՉՈ՞Վ Ե ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԱՆՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻՑ (ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻՑ)

Նախ նրանով, վոր անցման հասարակարգում դեռ մնում են ապրանքասեփականատիրական ու կապիտալիստական հարաբերությունները, իսկ սրանց հետ նաև դասակարգերը, և դեռ շարունակվում ե դասակարգային կռիվը:

Յերկրորդ նրանով, վոր անցման հասարակարգում դասակարգերի գոյության հետևանքով շարունակում ե հարատևել նաև պետությունը (բանվորական պետությունը) և վերջինս անցման հասարակարգի սկզբնական շրջանում վոչ թե թուլանում ե, այլ հետզհետե ամրապնդվում ու հզորանում ե:

21. ԻՆՉՈ՞Վ Ե ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԱՆՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆԻՑ

Նախ նրանով, վոր անցման հասարակարգի ժամանակ պետությունը բուրժուական չե, այլ պրոլետարական ե, վոր արտահայտիչն ե բանվոր

դասակարգի դիկտատուրայի, վորը դաշինք ե կռել աշխատավոր գյուղացիության հետ։

Յերկրորդ՝ նրանով, վոր անցման շրջանում պետության քաղաքականության ու շինարարության նպատակն ե դասակարգային սեփականատիրական ու ապրանքային հարաբերություններն իսպառ վերացնել ու առավելագույն չափերով մոտենալ սոցիալիզմին (կոմմունիզմին)։

22. ՎՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նախ ամրապնդել պրոլետարական պետություն, իբրև բանվոր դասակարգի դիկտատուրայի իշխանությունը այն կռվում, վոր սա մղում ե հակահեղափոխական բուրժուազիայի դեմ, բուրժուական, կալվածատիրական պետության բոլոր արտահայտությունների դեմ (ազգային ու ցեղային ճընշումն ու անհավասարություն, յեկեղեցու տիրապետություն ու բռնակալություն և այլն) և ոտարերկրյա կապիտալիստական պետությունների այն փորձերի դեմ, վորոնց նպատակն ե հաղթական բանվոր դասակարգի պետությունը ճնշել (զենքով), խեղդել (համապաշարումով-блокада) կամ ծառայագրել (закабалить—կողոպտող պայմանագրերով)։

Առանց պրոլետարական պետությունն ամեն տեսակի ներքին ու արտաքին վտանգություններից պաշտպանելու, ամրապնդելու ու հզորացնելու, չի կարելի աջողությամբ պարապել այն շինարարության վորևե խընդիրներով, վորի նպատակը սոցիալիզմը (կոմմունիզմն) ե։

Պրոլետարական պետության ամրապնդումն ու հզորացումը անհրաժեշտորեն պահանջում են, վոր պետության մեջ ամրապնդվի ու զորանա ինքը բանվոր դասակարգը, վոր սրա նյութական դրությունը բարելավվի, կուլտուրական մակարդակը բարձրանա և այլն։

Յերկրորդ՝ բանվոր դասակարգի ու պրոլետարական պետության կողմը գրավել բազմամիլիոն մանր-բուրժուական աշխատավոր մասսաները և առաջին հերթին աշխատավոր գյուղացիությունը և այս մասսաները ղեկավարել պրոլետարիատի ու գյուղացիության դաշինքի միջոցով։

Առանց մանր բուրժուազիան կապիտալիստների ու կալվածատերերի դասակարգից պոկելու, հեռացնելու, այլև առանց պրոլետարիատի ու գյուղացիության դաշինքի՝ բանվորական պետությունը չի կարող հաստատուն լինել յերբեք։

Յերրորդ՝ առավելագույն չափերով բարձրացնել ու զարգացնել արտադրող ուժերը պրոլետարական պետության շրջանակներում, ոգտագործելով այս զարգացումը հոգուտ բանվոր դասակարգի, հոգուտ նրա ու գյուղացիության դաշինքն ամրապնդելու, այլ և հոգուտ սոցիալիստական շինարարության։

Առանց արտադրող ուժերը բարձրացնելու, առանց տնտեսությունը վերականգնելու, առանց բանվորական ու գյուղացիական լայն մասսաների նյութական դրությունը բարվոքելու («Նեպ»—ի ու այլ միջոցներով) բանվորական պետությունը նույնպես չի կարող հաստատուն լինել։

Չորրորդ՝ առավելագույն չափերով զարգացնել այն շինարարությունը, վորի նպատակը սոցիալիզմը (կոմմունիզմն) ե։

Առանց այս շինարարության, անցման հասարակարգը չեր լինի մի շարժում, վորի նպատակն ե սոցիալիզմին (կոմմունիզմին) հասնելը։

Հինգերորդ՝ աջակցել հեղափոխական շարժման (թեկուզ և վոչ կոմմունիստական շարժման, որինակ՝ Արևելքում ու ընդհանրապես գաղութներում) և կոմմունիստական շարժման զարգացմանը այլ բուրժուական-կալվածատիրական յերկիրներում ու պետություններում, շարժումներ, վորոնց նպատակն ե՝ կռվել կապիտալիզմի ու իմպերիալիզմի տիրապետության դեմ։ Այս շարժումներին պետք ե աջակցել, վորպեսզի նրանց մեջ արագությամբ հաղթանակի հեղափոխությունն ու պրոլետարիատի դիկտատուրան։

Այս՝ ի միջի այլոց, անհրաժեշտ ե նաև այն պատճառով, վոր հեղափոխության հաղթանակն ու պրոլետարական պետության կայունությունը միայն այն ժամանակ ապահովված կը լինեն լրիվ ու անպայման, յերբ կապիտալիզմն ու բուրժուազիան վոչնչացած կը լինեն աշխարհիս գոնե մի քանի խոշոր յերկիրներում, իսկ ամենից ավելի մոտ՝ Յեվրոպայում։

23. Ի՞ՆՉ ԴԵՐ Ե ԽԱՂՈՒՄ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

Ինչպես հայտնի յե, խորհրդային Ռուսաստանում, արտաքին ու ներքին պատերազմի ժամանակաշրջանից անմիջապես հետո, 1921 թվի գարնանից, սկսվեց այսպես կոչված նոր տնտեսական քաղաքականությունը։ Այս քաղաքականությունն սկսվեց նրանից, վոր պարենի մասնատրման (продразверстка) փոխարեն մտցրին բնահարկը (натурналог), և թույլատրվեց մասնավոր առևտուրն ու արդյունաբերությունը։ Այս քաղաքականության հետագա հետևանքն այն յեղավ, վոր Խորհրդային հանրապետության ամբողջ տնտեսության մեջ ապրանքա-փողային ու կապիտալիստական ձևերը զարգացան այն ժամանակ՝ յերբ պետական իշխանությունը գտնվում եր պրոլետարիատի ձեռքում և պրոլետարական պետությունը տեր եր ամենագլխավոր գերիշխող բարձունքների, այն ե՝ խոշոր ու միջին արդյունաբերական ձեռնարկությունների, փոխադրության, արտաքին առևտրի, բանկերի ու ազգայնացրած հողի պետական սեփականության։

Ինչպես հայտնի յե, այս նոր տնտեսական քաղաքականությունն սըկսեց այն բանի հետևանքով, վոր յոթնամյա արտաքին ու ներքին պատերազմներից հետո՝ յերկիրը չափազանց քայքայվել եր, վիթխարի չափերով աղքատացել և արտադրող ուժերն անկման եյին հասել, և պարզվեց, վոր անհնարին ե ժողովրդական տնտեսությունը բարձրացնել և գյուղացիական ու բանվորական լայն մասսաների դրությունը բարվոքել մեկ պրոլետարական պետության ուժերով ու միջոցներով միայն, յերբ խորհրդային հանրապետությունը ծայրահեղ նյութական ուժասպառության եր հասել։

Խորհրդային հանրապետությունն ի վիճակի չեր մենակ յուր ուժերով ու միջոցներով բարձրացնելու տնտեսությունն ու զարգացնելու արտադրողականությունը, քանի վոր Ռուսաստանում գերակշռում եյին մանր սեփականատիրական ու ապրանքային ձևերն ու հարաբերությունները և պրոլետարական պետության տրամադրության տակ բավականաչափ կազմակերպիչ ու կուլտուրական ուժեր չկային։ Այսպես ծագումն առավ Ռուսաստանում նոր տնտեսական քաղաքականությունը։ Նրա խնդիրն ե՝ ոգտագոր-

ձել կապիտալիզմի ու մանր բուրժուազիայի ուժերն ու միջոցները, յերկրում տրամադրող ուժերը բարձրացնելու, պրոլետարական պետությունն, իբրև բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինք, ամրապնդելու, այլ և խոշոր պետական տնտեսությունը կազդուրելու ու հզորացնելու համար, իսկ այս նպատակին հասնել՝ հիշյալ ուժերն ու միջոցները պրոլետարական պետությանը ծառայեցնելով։

Մի ժամանակ շատերը յենթադրում եյին, վոր այս իմաստով առած՝ նոր տնտեսական քաղաքականությունը միայն խորհրդային Ռուսաստանի առանձնահատկություն ե՝ շնորհիվ այն հանգամանքի, վոր այստեղ գերակշռում ե գյուղացիությունը, վոր յերկիրը բացառիկ նյութական քայքայման ե հասել և տնտեսապես ու կուլտուրապես չափազանց հետամնաց ե, վոր մեկուսացած ե թշնամի կապիտալիստական շրջապատի շնորհիվ և վերջապես, վոր սոցիալիստական հեղափոխությունն ուշանում ե մնացած բուրժուական պետությունների մեջ։

Ներկայումս հաստատված ե—և այս ընդունել ե Կոմինտերնի IV կոնգրեսը—վոր իշխանությունը նվաճած պրոլետարիատը յեթե վոչ բոլոր յերկրներում, ապա պետությունների վիթխարի մեծամասնության մեջ, այս կամ այն չափով, պետք ե անցնե և ունենա նոր տնտեսական քաղաքականության ժամանակաշրջան։

Սրա գլխավոր պատճառն այն ե, վոր համարյա բոլոր յերկիրներում մանր բուրժուական խավերը դեռ չափազանց բազմաթիվ են, և սրանց՝ կապիտալիստների դասակարգի իշխանության տակից ու բուրժուազիայի ազդեցությունից պոկել, հանելու համար, այլ և պրոլետարիատի կողմը գրավելու և պրոլետարական պետության ղեկավարությանը յենթարկելու համար ուրիշ յեղանակ չկա, բացի նոր տնտեսական քաղաքականությունը, յերբ թույլատրվում են մասնավոր առևտուրը, մասնավոր սեփականությունն ու ապրանքա-դրամական հարաբերությունները, վորոնք կվերանան աստիճանաբար միայն, պրոլետարական պետության խոշոր տնտեսության ամրապնդման ու զարգացման հետևանքով։

Այսպիսով, անհրաժեշտ ե նոր տնտեսական քաղաքականությունը համարել պրոլետարական պետության զարգացման սկզբնական աստիճաններից մեկը, վոր, անցման շրջանում, տանում ե կապիտալիզմից դեպի սոցիալիզմ (կոմմունիզմ)։

24. Ի՞ՆՉ ՁԵՎ ՊԻՏԻ ՈՒՆԵ՞ՆԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ (ՊԵՏԱԿԱՆ) ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՑՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ռուսաստանի փորձը ցույց տվեց, վոր բուրժուազիայի տիրապետության տապալման հաջորդ որը պրոլետարիատի քաղաքական իշխանության լավագույն ձևը խորհրդային իշխանությունն ե, խորհրդային հանրապետությունը (տես գրքիս գլուխները՝ պետության ու խորհրդային իշխանության մասին)։

Խորհրդային իշխանության հաստատումը մտնում ե Կոմինտերնի ու նրա բոլոր սեկցիաների (բոլոր յերկրների առանձին կոմմունիստական կուսակցությունների) ծրագրի մեջ և կազմում ե ամբողջ աշխարհի հեղափոխական պրոլետարիատի ռազմական քաղաքական լոզունգը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ VI ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. К. Маркс и Ф. Энгельс „Коммунистический Манифест“. с введением и примечаниями Д. Ряазанова.
2. Энгельс Ф. „Принципы коммунизма“.
3. Ленин Н. „Револющиа и государство (հայերեն՝ Լենին «Պետություն և հեղափոխություն» թարգմ. Վ. Տերյանի)։
4. Бебель А. „Будущее общество“.
5. Бебель А. „Женщина и социализм“.
6. Либкнехт В. „Наши цели“.
7. Карл Корш. „Сущност марксизма„.
8. Фриче. „Социализм“.
9. Девыль. „Научный социализм“.
10. Штерн. „Государсво будущаго“.
11. Атлантикус. „Государство будущаго“.
12. Богданов. „Красная звезда“.
13. Богданов. „Инженер Менил“.
14. Моррис. „Вести ниоткуда“.
15. Беллами. „Через сто лет“.
16. Богданов. „Краткий курс эконом. науки“. Под редакцией Дволайцкого.
17. Энгельс Ф. „Происхождение семье, частной собственности и государства“.
18. Преображенский. „От Нэпа к социализму“.
19. Голубев. „Утопический и научный социализм“.
20. Горев. „От Т. Мора до Ленина“.
21. Каутский. „Предшесвенники новейшаго социализма“.
22. Ленин. Три источника и три основных части марксизма“.
23. Плеханов. „Основные вопросы марксизма“. (հայերեն՝ Պլեխանով «Մարքսիզմի հիմնական խնդիրները։ Թարգմ. Գուլոյանի)։
24. Адоратский. „Программа по основным вопросам марксизма“.
25. Ярославский. „Маркс и Энгельс“.
26. Люксембург. „К. Маркс“.
27. Каутский. „К. Маркс и его историческое значение“.
28. Стеклов. „К. Маркс. Его жизн и деятельность“.
29. Ленин. „К. Маркс“.
30. Цеткин. „К. Маркс и дело его жизни“.
31. Дволайцкий. „Ф. Энгельс“.
32. Покровский. „Исторический материализм“.
33. Сарабянов. „Исторический материализм“.
34. Гортер. „Исторический материализм“.
35. Бухарин „Теория историч. материализма“.
36. Плеханов. „К вопросу о развитии монистического взгляда на историю“.
37. Горев. „Материализм—философия пролетариата“.
38. Ленин. „Экономика и политика в эпоху диктатуры пролетариата“.
39. Энгельс. „Анти-Дюринг“.
40. Преображенский. „Анархизм и Коммунизм“.
41. Вильям Поль. „Коммунизм и общество“.

ԳԼՈՒԽ VII

ՈՒՍՄՈՒՆՔ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ա՞ՐԴՅՈՔ ՄԱՐԴԻԿ ԻԲՐԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՊՐԵԼՈՎ՝ ՄԻՇՏ ՄԻԱՆՈՒՄ ՅԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՅԻՆ ԿԱԶՄՈՒՄ

Վո՛չ, վո՛չ միշտ։

Յերկար ժամանակ մարդիկ ապրում եյին հասարակություններ կազմելով, բայց պետություններ չունեյին։ Առանց պետության այս գոյությունը շարունակվում եր նախնադարյան տոհմական կոմմունիզմի ամբողջ դարաշրջանում (տես վերևում V գլուխ—տնտեսական ձևերի զարգացումը)։

2. Ի՞ՆՉՈՒ ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՏՈՀՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉԿԱՅԻՆ

Վորովհետև տոհմական ու ցեղային հասարակությունների ժամանակաշրջաններում, յերբ ապրում եյին առանց դասակարգերի ու առանց մի քանի խմբակների, վորոնք մյուսներին շահագործեյին,—դասակարգային կռիվ չկար, ուստի և կարիք ել չկար ստեղծելու հարկադրանքի առանձին կազմակերպություններ ու ապարատներ—զորք, վոստիկանություն և այլն—վոմանց ճնշելու ու մյուսների իշխանությունն ամրապնդելու համար։

3 ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՅԵՐԲ ԿԱԶՄՎԵՑԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջին պետությունները կազմվեցին նախնադարյան տոհմական կոմմունիզմի քայքայման հետևանքով, յերբ նրան հաջորդեցին այնպիսի հասարակություններ, վորոնք ունեյին հակադիր ու անհաշտելի շահերով դասակարգեր։

Ինչպես հայտնի յե, այսպիսի առաջին դասակարգային հասարակությունը ստրկատիրական հասարակությունն եր։ Հենց այս ստրկատիրական հասարակության ժամանակաշրջանումն ե, վոր զարգանում ե պետությունը։

4 Ի՞ՆՉ ԴԵՐ Ե ԿԱՏԱՐՈՒՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս դերն այն եր, վոր այս հասարակության իշխող դասակարգը—ստրկատերերը—ամուր հուպ տված հպատակեցնում եյին՝ իրենց տիրապետությանը յենթարկելով շահագործվող ու ճնշված դասակարգին, այսինքն ստրուկներին և հենվելով պետական իշխանության վրա՝ ճնշում եյին ստրուկների խռովություններն ու ապստամբությունները և սրանով ել ավելի սաստիկ շահագործում նրանց։

Յեթե սպառազեն, հարկադրող իշխանությունը ստրկատերերի ձեռքում չլիներ, վերջիններս միշտ ստրուկների կողմից ծագող պատերազմների ու ապստամբությունների սպառնալիքի ներքո կլինեյին և անհնարին կլիներ ստրուկներին այնպես հրեշավոր կերպով ու անպատիժ շահագործել, ինչպես վոր այդ տեղի յեր ունենում։

Ունենալով պետական իշխանություն ստրուկներին ճնշելու համար՝ ստրկատերերի դասակարգը միևնույն ժամանակ օգտագործում եր այս իշխանությունը՝ վորպեսզի պահպանի ու մեծացնի յուր սեփականությունն ու հարստությունները—ստրուկներ, հողեր և այլ արժեքներ—ուրիշ յերկիրներ նվաճելու ու մյուս ժողովուրդներին տիրելու միջոցով։

5 Ի՞ՆՉ ՕՐԳԱՆՆԵՐ ԿԱՄ ԱՊԱՐԱՏՆԵՐ ՈՒՆԵՑԻՆ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդհանրապես առաջին պետությունները նույն օրգաններն ու ապարատներն ունեյին, ինչ վոր հաջորդ պետությունները։ Այս գործիքներից ամենագլխավորներն եյին և այժմ ել ամենագլխավորն են ֆիզիքական ու արտաքին[1]) բռնության գործիքները—զորք, վոստիկանություն, դատարաններ, բանտեր և այլն։

Այս բոլոր ապարատները գտնվում են իշխող դասակարգի ձեռքում, վորը գործադրում ե նրանց հօգուտ իր դասակարգային շահերի։ Վորպեսզի այս նպատակին ավելի շուտ հասնեն, սկզբնական շրջանում իշխողները սովորաբար թույլ չեյին տալիս ամենևին, վոր ճնշված խավերը մուտք ունենան զորքի մեջ, դատավորներ դառնան կամ ծառայեն վոստիկանության օրգաններում։ Ստրկատիրական պետությունների մեջ (հետո նաև ֆեոդալական-ճորտատիրական պետությունների մեջ) առաջին զորքերը (բանակները) կամ դատավորներն ու վոստիկանությունը կազմվում եյին ամբողջովին իշխող դասակարգի անդամներից։

6 ԱՐԴՅՈՔ ԻՇԽՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԸ, ՎՈՐ ՏԻՐԱՑԵԼ Ե ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ, ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՖԻԶԻՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՈ՞Վ Ե ՄԻԱՅՆ ԳՈՐԾՈՒՄ

Վո՛չ. բացի ֆիզիքական ներգործության ու հարկադրանքի գործիքներից ու միջոցներից, պետությունները քանի գնում, այնքան ավելի յեն ձգտում, հօգուտ իշխող դասակարգի, օգտագործելու հոգևոր տիրապետության գործիքներն ու միջոցները՝ յեկեղեցու ու կրոնի օգնությամբ, այլև դասակարգային ուսուցման ու դաստիարակության միջոցով (վերջին ժամանակներս դպրոցի ու մամուլի միջոցով) վորոնք հարմարեցված են իշխող դասակարգերի շահերին։

7 ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԻՑ ՀԵՏՈ Ի՞ՆՉ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՅԵՂԵԼ

Պետության մեջ ամենագլխավորն այն ե, թե ինչ դասակարգ ե իշխում, հօգուտ վո՛ր դասակարգի յե իր ձեռքում պահում իշխանությունը։ Ահա թե ինչն ե պատճառը, վոր պատմության մեջ մենք տարբերում ենք

[1]) Արտաքին բռնության տակ՝ այստեղ հասկանում ենք հատկապես նյութական-տնտեսական բռնությունը (գույքի զրկում, տուգանքներ և այլն)։

այնքան պետություններ, վորքան տարբեր հասարակություններ են յեղել զանազան իշխող ու ճնշված դասակարգերով:

Իսկ մենք չորս այսպիսի հասարակություններ գիտենք. ստրկատիրական (հիմնական դասակարգերն են՝ ստրկատերերն ու ստրուկները), ֆեոդալական-ճորտատիրական (հիմնական դասակարգերն են՝ ֆեոդալ-ճորտատերերը մի կողմից, և սրանց ձեռքով հարկերի ու ծառայությունների յենթարկված ու սրանց շահագործած ճորտերը՝ մյուս կողմից), բուրժուական-կապիտալիստական (հիմնական դասակարգերն են՝ իշխող բուրժուազիան, կապիտալիստները մի կողմից և ճնշված ու շահագործվող պրոլետարիատը՝ մյուս կողմից) և պրոլետարական պետությունը կամ անցման հասարակությունը, վոր կապիտալիզմից տանում է դեպի սոցիալիզմ ու կոմմունիզմը (քաղաքականապես իշխող դասակարգը, պրոլետարական պետության մեջ, պրոլետարիատն է, խոշոր ու միջակ բուրժուազիան ճնշելի դասակարգն է, միջակ ու ամենաչքավոր գյուղացիությունը պրոլետարիատի քաղաքական դաշնակիցն է, և նրան քաղաքականապես էլ ղեկավարում է պրոլետարիատը):

Ուստի և այս չորս դասակարգային հասարակությունների համապատասխան հիմնական պետություններն էլ չորս են: Պատմության մեջ ստրկատիրական պետությանը հաջորդել են հետևյալ պետությունները. ֆեոդալական—ճորտատիրականը, բուրժուական—կապիտալիստականը և պրոլետարական կամ անցման շրջանի պետությունը, վոր կապիտալիզմից տանում է դեպի սոցիալիզմ (կոմմունիզմ):

8. Ի՞ՆՉ Է ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

Պետությունը հասարակության մեջ իշխող դասակարգի մարտական ու պաշտպանողական կազմակերպությունն է (ապպարատ), վորը կենտրոնացընում է յուր ձեռքում ինչպես ֆիզիքական արտաքին հարկադրանքի գործիքներն ու միջոցները (զորք, վոստիկանություն, միլիցիա, դատարաններ, բանտեր և այլն), այնպես և հասարակության վրա հոգևոր ազդեցություն անելու գործիքներն ու միջոցները (յեկեղեցին ու կրոնը, մամուլը, դպրոցը և այլն):

Այս պետական ապպարատի ոգնությամբ իշխող դասակարգը ոժտված է լինում հասարակության մեջ իշխանության ու հարկադրանքի մենաշնորհով (մոնոպոլիայով):

9. ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ Ի՞ՆՉ Է ՆՐԱ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Պետության խնդիրներն են՝ հասարակության մեջ ապահովել մեկ դասակարգի տիրապետությունը մյուսների վրա, ճնշել հակադիր դասակարգը և իրականացնել իշխող դասակարգի շահերը:

10. ԱՐԴՅՈՔ ԿԱՐՈ՞Ղ Է ԼԻՆԵԼ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ՝ ԱՌԱՆՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ

Չի կարող լինել, վորովհետև այլապես կարող եր շարունակ բացահայտ պատերազմ տեղի ունենալ դասակարգերի միջև, և հասարակության մեջ չեր կարող գոյություն ունենալ տնտեսություն ու զարգանալ:

11. ԻՍԿ Ի՞ՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ, ՎՈՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է ԿԱԶՄՎՈՒՄ

Պատճառը դասակարգերի շահերի անհաշտելի հակադրությունն է և սրանից բխող դասակարգային կատաղի կռիվը հասարակության մեջ:

Յեթե դասակարգեր չլինեյին կամ նրանց շահերը լինեյին վոչ-հակադիր, այլ հնարավոր լիներ այս շահերը համաձայնեցնել, այն ժամանակ հասարակությունը կարող եր գոյություն պահպանել առանց պետության:

Այսպիսով պետությունը դասակարգային անհաշտելի հակասությունների արդյունք է յեվ ցույց է տալիս, վոր հասարակության մեջ դասակարգային կռիվ գոյություն ունի:

12. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԻՇԽՈՂ ԴԱՍԱԿԱՐԳԸ ԲԱՑԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ ԵԼ Ի՞ՆՉ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՈՒՆԵՆՈՒՄ, ՅԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ Ի՞ՆՉՈՎ Է ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՆՐԱՆԻՑ

Իշխող դասակարգը յուր տիրապետության շահերի համար, այլ և իր դասակարգային խնդիրներն իրականացնելու նպատակով, սովորաբար շատ կազմակերպություններ է ստեղծում:

Այսպես, օրինակ, խորհրդային հանրապետության մեջ պրոլետարիատը, բացի իր պետական կազմակերպությունից, վոր սոցիալիստական խորհրդային հանրապետությունների Միությունն է, ունի նաև իր կուսակցությունը—Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցությունը, Ռ. Կ. Կ. (բոլշևիկների), վոր բանվոր դասակարգի քաղաքական կազմակերպությունն է, վորի գլուխն է կանգնած Ա Մ Կ Խ (Համախորհրդային արհեստակցական միությունների կենտրոնական խորհուրդ): Խորհրդային իշխանությունն ու հանրապետությունը, իբրև պրոլետարիատի պետական կազմակերպություն նրանով է տարբերվում բանվոր դասակարգի կուսակցական ու արհեստակցական կազմակերպություններից, վոր իր մեջ է կենտրոնացնում կամ ոժտված է արտաքին ու ֆիզիքական հարկադրանքի գործիքների ու միջոցների մենաշնորհով:

Նույն բանը տեղի ունի բուրժուական յերկիրներում էլ, վորտեղ իշխող դասակարգը վոչ թե պրոլետարիատն է, այլ կապիտալիստների դասակարգը: Վերջինս, բացի իր պետություններից ու կառավարություններից, իր տրամադրության տակ ունի բուրժուական-կապիտալիստական կուսակցություններ, գործատերերի արհմիություններ, կապիտալիստական տրեստներն ու սինդիկատներ և այլն:

Իշխող դասակարգի այս բոլոր կազմակերպություններից բուրժուական պետական իշխանությունը նրանով է տարբերվում, վոր իր տրամադրության ներքո յե կենտրոնացնում հարկադրանքի գործիքներն ու միջոցները, վոր կիրառում է բանվոր դասակարգի դեմ կռվելիս:

Այսպիսով, պետությունը կազմակերպված հարկադրանքի մենաշնորհատերը, (մոնոպոլիստը) աղբյուրն ու կարգադրիչն է, վոր ծառայում է հասարակության մեջ իշխող դասակարգին: Սրանով է տարբերվում պետությունը հասարակության մեջ իշխող դասակարգի մյուս բոլոր կազմակերպություններից:

13 ԻՆՉ ԿԵՐՊ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՍՏՈՒԳԵԼ ՈՒ ԿՇՌԵԼ ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԵՐԸ ԱՅՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ, ԹԵ ԻՆՉ Ե ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՈՒ ՅԵ ԾԱԳԵԼ, ՎՈ՞ՐՆ Ե ՆՐԱ ԴԵՐԸ ՅԵՎ ԱՅԼՆ

Մեր այս պատասխանները, վոր տալիս ենք պետությանը վերաբերող ընդհանուր հարցերին, հիմնված են մարդկության ամբողջ պատմության մարքսիստական ուսումնասիրության վրա, մանավանդ այն ժամանակվանից, յերբ կազմվել են առաջին դասակարգային հասարակությունները։ Սակայն, առանց այս ընդարձակ պատմական ուսումնասիրությանն էլ, յուրաքանչյուր պրոլետար, մանավանդ այնպիսին, վոր ապրում ե Խորհրդային հանրապետության մեջ, ռուսական կալվածատերերի ու կապիտալիստների խորտակված պետության օրինակով (ցարերի նախկին ռուսական կայսրությունն ու Կերենսկու կառավարության ժամանակվա բուրժուական հանրապետությունը), այլ և սրա փոխարեն կազմակերպված Խորհուրդների բանվորական հանրապետության օրինակով կարող ե ստուգել և ճշտել, թե ինչու և ինչպես մեկ պետությունից հետո մյուսն ե առաջ գալիս և ընդհանրապես ինչ ե պետությունը։

Խորհրդային իշխանությունն ու Խորհրդային պետությունը կազմվել են պրոլետարիատի ու հեղափոխական գյուղացիության՝ ռուսական կապիտալիստների ու կալվածատերերի դեմ մղած ամենակատաղի դասակարգային կռվի հետևանքով և վոչ այլ ինչ են, յեթե վոչ պրոլետարիատի դասակարգային տիրապետության կազմակերպություն կամ ապարատ։

Պրոլետարիատը դաշնակցելով միջակ ու ամենաչքավոր գյուղացիության հետ՝ Խորհրդային իշխանության միջոցով Խորհրդային յերկրում իր ձեռքում ե կենտրոնացնում կազմակերպված հարկադրանքի օրգաններն ու միջոցները և ծառայեցնում ե իր շահերին ու իր դաշնակցի—միջակ ու ամենաչքավոր գյուղացիության շահերին։

14 ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԻՆՉ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Ներկայումս յերկիրների մեծամասնության մեջ պետությունները բուրժուական-կապիտալիստական են, վորովհետև նրանց մեջ իշխող դասակարգը բուրժուական ե—կապիտալիստական դասակարգը։

Այսպիսի պետություններ են՝ Յեվրոպայի, Ամերիկայի ու Ավստրալիայի բոլոր պետությունները։

Ինչ վերաբերում ե Ասիային ու Աֆրիկային, ապա, բացի բուրժուական-կալվածատիրական Յապոնիայից, մնացած պետություններն արևմտյան յեվրոպական ու ամերիկական կապիտալի հետամնաց գաղութներն են և միայն վերջին ժամանակներս ե, վոր նրանց մեջ ուժեղացել ե կռիվը՝ հանուն արևմտյան իմպերիալիզմից անկախ դառնալու, հանուն ներքին տեղական ֆեոդալ կալվածատերերի ու այլ աշխարհիկ ու հոգևոր իշխանների ճնշումից ազատագրվելու, վորոնք կողոպտում ու բռնանում են բազմամիլիոն աշխատավոր, հողագործ մասսաների վրա։

Յեվ միայն մեկ պետություն կա— Խորհրդային Սոցիալիստական

Հանրապետությունների Միությունը—վոր ընդգրկում ե հողագնդի ամբողջ մակերեսի 1/6 մասը 133,000,000 բնակչությամբ, վոր կազմում ե մի հանրապետություն, վորտեղ առաջին անգամ, մարդկության պատմության մեջ, իշխող դասակարգը պրոլետարիատն ե, վոր տանում ե իր յետևից Ռ. Ս. Ֆ. Խ. հանրապետության, Ուկրայնայի, Բելոռուսիայի ու Կովկասի (Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի) ժողովուրդների բազմամիլիոն աշխատավոր գյուղացիական մասսաները։

15 ԻՆՉ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետությունները, ըստ իրենց կազմության, շատ բազմազան են լինում։

Ըստ գերագույն իշխանության ձևի՝ տարբերում են միապետական ու հանրապետական պետություններ։

Պետությունները, ըստ իրենց կազմի՝ լինում են՝ պարզ ու բարդ։ Ըստ պետության մեջ լայն մասսաների խաղացած դերի՝ պետությունները լինում են՝ դեմոկրատիկ ու վոչ-դեմոկրատիկ։

16 ԻՆՉ Ե ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Միապետություն կոչվում ե այն պետությունը, վորի գլուխ կանգնած ե մի անձ, վորի իշխանությունը ցմահ ե ու սովորաբար ժառանգական։

Միապետությունը պետական մի ձև ե վոր հատուկ ե մանավանդ ստրկատիրական ու ֆեոդալական-ճորտատիրական պետություններին։

Միապետն առաջին ու ամենագլխավոր ստրկատեր կամ ֆեոդալ-ճորտատերն ու կալվածատերն ե։ Յերբ բուրժուազիան զորանում ե և տիրապետությունն ու քաղաքական իշխանությունը սրա ձեռքն ե անցնում, այն ժամանակ միապետությունն սկսում ե ծառայել բուրժուազիային ու ապրուստ ստանալ բուրժուազիայից կամ թե հեղափոխության հետևանքով բոլորովին վերցնում ե և նրան փոխարինում ե սկզբում բուրժուական հանրապետությունը։

17 ԻՆՉ ՏԵՍԱԿ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Միապետությունները լինում են՝ 1) անսահման, բացարձակ միապետություններ, վորտեղ միապետը մի իշխանություն ե, վոր վոչ վոքի կողմից սահմանափակված չե, 2) սահմանափակ կամ սահմանադրական միապետություններ, վորտեղ միապետի կողքին լինում ե վորևե այլ հիմնարկություն էլ (սովորաբար պարլամենտը), առանց վորի համաձայնության՝ միապետն իրավունք չունի օրենքներ ու համապատասխան բնույթ ունեցող կարգադրություններ հրատարակելու։

Անսահման կամ բացարձակ միապետությունը հատուկ ե մանավանդ ստրկատիրական ու ֆեոդալական-ճորտատիրական պետություններին։

Բուրժուական պետությունների մեջ միապետությունն սահմանափակողը սովորաբար բուրժուական պարլամենտն ու կառավարությունն ե, վորոնք կազմված են լինում կապիտալիստ դասակարգի գործակատարներից։

18. Ի՞ՆՉ Է ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հանրապետությունը մի այնպիսի պետություն է, վորի մեջ գերագույն կամ բարձրագույն իշխանությունը գտնվում է կամ մի խումբ մարդկանց ձեռքում, վորոնք սովորաբար ընտրովի յեն (պարլամենտ, համագումար) կամ թե պետության բոլոր լիակատար իրավունք ունեցող քաղաքացիների ձեռքում։

Հանրապետությունները տարածված եյին ստրկատիրական պետությունների մեջ, ընդ վորում իշխանության իրավունքներով օժտված եյին իհարկե ստրկատերերը միայն։

Բուրժուազիայի դարաշրջանում հանրապետությունները կազմվում են կապիտալի տիրապետության ուժեղանալու ու պրոլետարիատի դասակարգային հեղափոխական կռվի զարգացման հետևանքով։

19. Ի՞ՆՉ ՏԵՍԱԿ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Ներկայումս հանրապետությունները բաժանվում են յերկու խմբի. բուրժուական-կապիտալիստական կամ շահագործողների հանրապետություններ, վորտեղ իշխում է բուրժուազիան (ընդհանուր ընտրական իրավունքի, բուրժուական պարլամենտների և այլ միջոցներով) և խորհրդային կամ աշխատավորական հանրապետություններ, վորտեղ իշխում են պրոլետարիատն ու աշխատավոր գյուղացիությունը՝ (խորհուրդների ու սրանց համագումարների միջոցով)։

Բուրժուական հանրապետությունների մեջ լինում է նախագահ, իբրև կառավարության գլուխ, վոր ընտրվում է վորոշ ժամկետով։ Խորհրդային հանրապետությունների մեջ միապետության այս մնացորդի կարիքը չկա։

20. Ի՞ՆՉ Է ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

Պարլամենտը մի հիմնարկություն է՝ կազմված այնպիսի մարդկանցից, վորոնք սովորաբար ընտրվում են ամբողջ ազգաբնակությունից կամ սրա մի մասից միայն, և վորոնց լիովին պատկանում է ամբողջապես կամ միայն մասամբ (միապետի կամ բնակչության հետ միասին) պետական բարձրագույն իշխանությունը (օրենքների հրատարակություն, բյուջեյի, պատերազմի, խաղաղության ու այլ խնդիրներ)։

Պարլամենտներն առանձնապես հատուկ են բուրժուազիայի դարաշրջանին ու բուրժուական-կապիտալիստական պետություններին։

Պարլամենտների միջոցով բուրժուազիան սկսեց սահմանափակել բացարձակ միապետությունը և վերջինիս տապալումից հետո սկսեց իշխել պրոլետարիատի վրա։

21. Ի՞ՆՉ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՊԱՐԼԱՄԵՆՏՆԵՐԸ

Պարլամենտները լինում են կամ մի պալատանի կամ յերկպալատյան։ Մի պալատանի պարլամենտներում, վորոնք սովորաբար ընտրվում են ամբողջ բնակչությունից կամ նրա մի մասից, պարլամենտը կազմված է միայն մեկ հիմնարկությունից։

Յերկպալատյան պարլամենտներում պարլամենտը կազմված է յերկու հիմնարկություններից. 1) այսպես կոչված ստորին պալատից (պատգամա-

վորների պալատը Ֆրանսիայում ու Իտալիայում, համայնքների պալատն Անգլիայում, ռայխստագը Գերմանիայում, ներկայացուցիչների պալատն Ամերիկայում և այլն), վորը սովորաբար ընտրվում է ամբողջ բնակչությունից կամ սրա լայն շրջաններից ու 2) այսպես կոչված վերին կամ յերկրորդ պալատից (Լորդերի պալատն Անգլիայում, սենատը Ֆրանսիայում ու Ամերիկայում ու Միութենական խորհուրդը Գերմանիայում), վորը հաճախ կալվածատիրական ժառանգական է լինում, կամ թե ընտրվում է ընտրողների ավելի սահմանափակ շրջանից, սովորաբար հարուստ բուրժուաներից և այն էլ սահմանափակ յերկաստիճան ընտրությունների միջոցով։

Այդ բուրժուական պետությունների մեջ յերկրորդ կամ վերին պալատների գլխավոր կոչումն այն է, վոր սրանք ավելադիր (добавочный) պատնեշ ու շանթարգել հանդիսանան բուրժուազիայի ձեռքում՝ բանվոր դասակարգի դեմ մղած կռվի միջոցին։

Բուրժուական պետությունների մեջ պարլամենտների անդամներն ընտրվում են յերկար ժամանակվա համար (սովորաբար 4-5 տարով) և ընտրողների ազդեցությունից ապահովագրված են նրանով, վոր նրանց մեջ գոյություն չունի պատգամավորներին ժամկետից առաջ յետ կոչելու իրավունք և վոչ էլ ընտրողների առաջ հաշվետու լինելու պարտականություն։

22. Ի՞ՆՉ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ԱՐԴԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ—ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հյուսիսային Ամերիկայում (Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները) գոյություն ունի բուրժուական հանրապետություն՝ պարլամենտով (կոնգրես), վոր կազմված է յերկու պալատից (ներկայացուցիչների պալատ ու սենատ) նախագահով, վոր ձևականորեն ընտրվում է ամբողջ յերկրից, ու կառավարությամբ, վոր պատասխանատու յե վոչ թե պարլամենտի, այլ նախագահի առաջ։

Անգլիայում բուրժուական սահմանադրական միապետություն է՝ լիակատար իշխանություն ունեցող պարլամենտով, վոր կազմված է յերկու պալատից (համայնքների պալատ ու լորդերի պալատ) ու կառավարություն, վոր պատասխանատու յե ստորին պալատի առջև։

Ֆրանսիայում բուրժուական հանրապետություն է պարլամենտով, վոր կազմված է յերկու պալատից (պատգամավորների պալատ ու սենատ), նախագահով, վոր ընտրվում է յերկու պալատից յոթը տարով, ու կառավարությամբ, վոր պատասխանատու յե պատգամավորների պալատի առջև։

Իտալիայում սահմանադրական բուրժուական միապետություն է պարլամենտով, վոր կազմված է յերկու պալատից, (պատգամավորների պալատ ու սենատ) ու կառավարությամբ, վոր թղթի վրա պատասխանատու յե պարլամենտի առջև, իսկ այս կետն, ինչպես հայտնի յե, չի խանգարում, վոր Իտալիայում գոյություն ունենա բուրժուազիայի արբանյակների ու ֆաշիստների պարագլուխ Մուսսոլինու միաձնյա դիկտատուրան։

Գերմանիայում բուրժուական հանրապետություն է՝ գլուխ ունենալով նախագահին (ֆելդմարշալ Հինդենբուրգ) ու բուրժուական կառավա-

րությամբ, վոր ձևականորեն պատասխանատու յե յերկու պալատից (ռայխստագ ու միութենական խորհուրդ) կազմված պառլամենտի առջև, իսկ իրապես պատասխանատու ե ֆրանսիական կապիտալի առջև՝ ի դեմս Գուգո—Ստիննեսի։

23. Վ՞ՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ԿՈՉՎՈՒՄ ՊԱՐԶ

Պարզ կամ միասնական (ունիտար) պետություններ կոչվում են այնպիսինները, վորոնց մեջ ե՛լ ուրիշ պետություններ չկան։ Այսպես, որինակ, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային հանրապետությունը պարզ կամ միանական պետություն ե, վորովհետև նրա բոլոր մասերը սովորական գավառներ են և վոչ թե պետություններ։ Ընդհակառակը Ռուսական Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետությունը վոչ թե պարզ, այլ բարդ պետություն ե, վորովհետև Ռ. Ս. Ֆ. Խ. հանրապետության մեջ բացի նահանգներից՝ կան մի շարք պետություններ ել, ինչպիսիք են բոլոր ինքնավար հանրապետությունները (Թաթարականը, Կիրգիզականը. Բաշկիրականը, Թուրքմենստանը, Ուզբեկիստանը, Խրիմը և այլն)։

Յեթե որինակները վերցնենք բուրժուական պետություններից, ապա, որինակ՝ ֆրանսական հանրապետությունը կամ անգլիական միապետությունը պարզ կամ միասնական (ունիտար) պետություններ են, վորովհետև նրանց մեջ ուրիշ անկախ պետություններ չկան։

24. Վ՞ՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ԿՈՉՎՈՒՄ ԲԱՐԴ

Բարդ պետությունները կոչվում են այնպիսինները, վորոնց մեջ կան ուրիշ պետություններ ել։ Որինակ՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը բարդ պետություն ե, վորովհետև մեր Խորհրդային հանրապետությունը կազմված ե պայմանագրերով միացած չորս Հանրապետություններից. Ռ. Ս. Ֆ. Խ. Հ., Ուկրայնայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, Անդրկովկասյան Ֆեդերացիա ու Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։ Այս հանրապետություններից յուրաքանչյուրն առանձին պետություն ե։

Նմանապես, որինակ, Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները կամ Շվեյցարական հանրապետությունը բարդ բուրժուական պետություններ են, վորովհետև սրանցից յուրաքանչյուրի մասերը (Հյուսիսային Ամերիկայի շտատները, Շվեյցարիայի կանտոնները) իրենց հերթին մի-մի պետություն են։

Բարդ պետությունները, ըստ իրենց կազմության, ըստ նրանց մեջ մտած պետությունների փոխհարաբերության, միատեսակ չեն լինում։ Բարդ պետությունների ամենակարևոր ու ամենից տարածված տեսակը ֆեդերացիան ե։

25. Վ՞ՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ Ե ԿՈՉՎՈՒՄ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՖԵԴԵՐԱՑԻԱ

Ֆեդերատիվ պետություն կամ ֆեդերացիա կոչվում ե միություն կազմած այն բարդ պետությունը, վորտեղ բարձրագույն կենտրոնական իշխանությունը, յուր վորոշումները կատարել տալու համար՝ յուր անմիջական տրամադրության տակ ունի բանակն ու պետական մյուս ապպարատները։

Խորհրդային ֆեդերացիաների որինակներ են՝ ԽՍՀՄ, ՌՍՖԽՀ, Անդրկովկասյան ֆեդերացիան։ Բուրժուական ֆեդերացիայի որինակներ են՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները և Շվեյցարական հանրապետությունը։

Սակայն բոլոր բարդ պետությունները ֆեդերացիա չեն։ Սովորաբար ֆեդերացիաներին նախորդում են այսպես կոչված կոնֆեդերացիաները, այսինքն այնպիսի բարդ պետությունները, վորոնց մեջ կենտրոնական բարձրագույն իշխանությունը, յուր վորոշումները կյանքում իրականացնելու համար՝ յուր տրամադրության ներքո չունի վոչ բանակ և վոչ ել պետական այլ ապպարատներ։ Կոնֆեդերացիաների մեջ բնական ու հարկադրանքի մյուս ապպարատները գտնվում են այն առանձին պետությունների մեջ, վորոնք միանալով կոնֆեդերացիա են կազմել, այս պատճառով ել կոնֆեդերացիաները խախուտ ու թույլ են լինում։

26. Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ ԿՈՆՖԵԴԵՐԱՑԻԱՆԵՐԻՆ

Մի շարք դեպքերում պետության ֆեդերատիվ կազմությունն ավելի նպատակահարմար ե լինում, քան պարզ կամ ունիտար պետությունը, մանավանդ, յերբ տվյալ պետության մեջ կան մի քանի կամ բազմազան ազգություններ, վորոնցից մեկն առաջ իշխող եր կամ այժմ ել իշխող ե, իսկ մյուսները՝ ճնշված ու կախյալ են։

Կապիտալիզմի դեմ հաջողությամբ կռվելու համար, դասակարգային կռիվը մեծագույն հստակության հասցնելու նպատակով, կոմմունիստները մաքառում են ամեն մի ազգային ճնշման ու անհավասարության դեմ և այս տեսակետից ել բուրժուական բազմազգանի պետությունների մեջ, կամ մի քանի մանր պետությունների փոխհարաբերության ժամանակ՝ հոգուտ ֆեդերացիայի յեն արտահայտվում։ Իմպերիալիստական պետությունների մեջ ֆեդերացիայի սկզբունքը պաշտպանելը անհրաժեշտ ե լինում նույնպես այն նպատակով, վորպեսզի իմպերիալիզմի հզորությունը թուլանա այս պետությունների բաժան-բաժան լինելով։

Խորհրդային հասարակարգի ժամանակ այնտեղ, վորտեղ կոմմունիստական կուսակցությունը բուրժուական-կալվածատիրական իշխանությունից ժառանգություն ե ստացել ազգային ճնշումը, անհավասարություն ու ազգային թշնամությունը տարբեր ժողովուրդների միջև,—կոմմունիստները գործնականապես իրականացնում են ֆեդերատիվ ազատ կազմությունը՝ խորհրդային հանրապետությունների ներսում։

Հետագայում, յերբ ազգային պառակտումը լրիվին կը չքանա և հավասարություն կհաստատվի բոլոր ազգությունների միջև ու ապահովված կլինի ամբողջ մարդկության ազատ զարգացումը դեպի կոմմունիզմ,—ֆեդերացիայի կարիք չի լինի և նրան կփոխարինե միանական պետությունը։

Ի հարկե միանական հանրապետությունն ել վերջնական սահմանը չե։ Սահմանն այն կլինի, վոր լրիվին վերանա ամեն մի պետություն և մարդիկ անցնեն պետություն չկազմող կոմմունիստական հասարակության աստիճանը։ Սակայն նախ քան այս վերջնական հետևանքին հասնելը, իրենց մեջ բազմաթիվ ազգություններ պարփակող խորհրդային պետությունները սկզբում կանցնեն ֆեդերացիայի աստիճանով, իսկ հետո ազատագրվելով ֆեդերացիայից՝ կդառնան միանական կամ—ունիտար հանրապետություններ։

27. Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՎԵՐԱԲԵՐՎԻ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Մի կողմից պրոլետարիատը քանի գնում, այնքան ավելի չի հասկանում, թե չնայած իրենց ձևերի բոլոր տարբերություններին, բուրժուական բոլոր պետությունները, վորչափով վոր սրանց մեջ իշխող դասակարգը բուրժուազիան ե, պրոլետարիատին ճնշելու գործիքներ են, լինեն սրանք միապետություններ կամ հանրապետություններ, մի պալատանի պարլամենտով կամ յերկպալատյա, այսպես կոչված ընդհանուր ընտրական իրավունք ունենան կամ վոչ և այլն, միևնույն ե։ Մյուս կողմից՝ կոմմունիստական հասարակությունը չի կարող չնկատել և պետք ե բացատրի բանվոր դասակարգին, թե պրոլետարիատի դասակարգային կռիվը սրելու ու բացահայտ դարձնելու տեսակետից բանվորությունը շահագրգռված ե, վոր քանի դեռ չի տապալված բուրժուազիան, պետակարգը (Государственный строй) մեծագույն չափերով դեմոկրատական դառնա, վոր ամենահետևողական կերպով ու լիակատար չափերով կիրառվեն բուրժուական դեմոկրատիայի ըսկզբունքները և վերացվեն ֆեոդալական միապետական հարաբերությունների բոլոր բեկորներն ու մնացորդները, վորոնք մթագնում ու արգելք են լինում պրոլետարիատի՝ կապիտալի դեմ մղած դասակարգային կռվին։

28. Ի՞ՆՉ Ե ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՑԵՂԱԾ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ԿԱՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Պետության մեջ դեմոկրատիա նշանակում ե այնպիսի պետական կազմություն, վորի ժամանակ, մանավանդ, 1) բնակչության լայն շրջանները ձևական իրավունք են ունենում պետական իշխանության օրգաններ ընտրելու և ընտրողների միջոցով որենսդրությանը մասնակցելու (այսպես կոչված քաղաքական ազատություն. 2) բնակչության լայն շրջաններն ունենում են այսպես կոչված խոսքի, ժողովների, կազմակերպությունների, գործադուլների, յերթևեկության, բնակավայր ընտրելու, անձի, թղթակցելու, խղճի և այլն ազատություն (այսպես կոչված քաղաքացիական ազատություն). 3) կենտրոնը ճանաչում ե պետության առանձին մասերի բնակչության իրավունքը՝ պետական իշխանության տեղական օրգաններ ընտրելու և ընդարձակ չափերով օգտվելու ինքնավարության ու ավտոնոմիայի իրավունքներով՝ տեղական գործերն ու խնդիրները վճռելու միջոցին. 4) ճանաչվում ե յուրաքանչյուր ազգության իրավունքը՝ ավտոնոմիա ու անկախ պետական գոյություն ունենալու՝ քաղաքական իրավահավասարության հետ միասին։

Ներկայումս դեմոկրատիան, ըստ յուր դասակարգային եյության, լինում ե կամ բուրժուական—բուրժուական-կապիտալիստական պետությունների մեջ—կամ պրոլետարական, բանվորագյուղացիական խորհրդային հանրապետությունների մեջ։

Բուրժուական պետությունների մեջ դեմոկրատիան սովորաբար առաջ ե գալիս պրոլետարիատի յերկարատև դասակարգային կռվի հետևանքով,

վոր աշխատում ե պետական կարգի դեմոկրատիզացիայի միջոցով պետակարգն օգտագործել՝ բանվորության նյութական դրությունը բարվոքելու համար, այլև կապիտալի դեմ մղվող դասակարգային կռիվը սաստկացնելու նպատակով։

Բուրժուազիան, յերբ կռվում եր ֆեոդալիզմի ու անսահման միապետության դեմ, նույնպես հանդես եր գալիս քաղաքական դեմոկրատիայի նշանաբաններով։

Հետագայում, յերբ բուրժուազիան իր ձեռքում կենտրոնացնում ե պետական իշխանությունը, պրծնում, այն ժամանակ յերես ե շուռ տալիս դեմոկրատիայի նշանաբաններից և պրոլետարիատի դեմ կռվելու համար միանում ե միապետության, ֆեոդալ-կալվածատերերի մնացորդների, հետադիմական զինվորականության ու տերտերականության (կղերականության) հետ։ Այնուհետև կապիտալիզմի փլուզման ու սոցիալիստական հեղափոխության աճման շրջանում բուրժուազիան իր համար յելք ու փրկություն ե վորոնում այն բանի մեջ, վոր մի կողմից զանազան բանդիտ ջարդարանների պարագլուխների (օրինակ՝ Իտալիան ու Մուսոլինին ֆաշիստների հետ) ու հետադիմական, սպիտակ-գվարդիականգեներալ Կոռնիլոֆների միանձյա բացահայտ դիկտատուրա յե հաստատում, իսկ մյուս կողմից՝ ջոկած հատուկ ավազակային զորամասեր ու խմբակներ ե կազմակերպում (ֆաշիստներ) անհայտնի ու դաժանորեն վոչնչացնելու և ճնշելու համար վոչ միայն կոմմունիստական հեղափոխական շարժումն ու կազմակերպությունները, այլև ամեն մի բանվորական շարժում ու սրա կազմակերպություններն առհասարակ։

29. Ի՞ՆՉ Ե ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Բուրժուական դեմոկրատիա կոչվում ե դեմոկրատիայի սկզբունքները կյանքում կիրառելը բուրժուազիայի տիրապետության օրոք, այսինքն այն ժամանակ, յերբ քաղաքական ու տնտեսական իշխանությունը պետության մեջ պատկանում ե կապիտալիստների դասակարգին։

30. Ի՞ՆՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ

Բուրժուական դեմոկրատիայի առանձնահատկությունները հետևյալն են. Նախ այն, վոր պետության մեջ, բուրժուազիայի տիրապետության ժամանակ դեմոկրատիայի սկզբունքները, նույնիսկ թղթի վրա, անհրաժեշտ հետևողականությամբ ու լիակատար կերպով չեն արծարծվում ու կիրառվում, վորովհետև այս բանը, մանավանդ կապիտալիզմի քայքայման ու փլուզման ժամանակաշրջաններում, վնասում ե կապիտալիստների շահերին։ Այսպես, օրինակ, վոչ մի տեղ գոյություն չունի և չի յել ունեցել իրապես ընդհանուր ընտրական իրավունքը (սովորաբար չեն ընտրում ու չեն ընտրվում կանայք, յերիտասարդությունը, զինվորականները, թափառաշրջիկները և այլն)։ Վոչ մի տեղ չեն վոչնչացված ֆեոդալական-միապետական հարաբերությունների մնացորդները (միապետները, նախագահները, յերկրորդ պալատները, վորտեղ տիրապետում են կալվածատերերն ու խոշոր կապիտալիստները և այլն)։ Վոչ մի տեղ գոյություն չունի խոսքի,

մամուլի, ժողովների, կազմակերպությունների, գործադուլների և այլն լիակատար ու իրական ազատություն՝ բուրժուազիայի դեմ կռվող հեղափոխական պրոլետարիատի համար և այլն։

Յերկրորդ՝ յեթե նույնիսկ թղթի վրա բուրժուական պետությունների որենքների մեջ գոյություն ունենային ել դեմոկրատիայի իրավունքներն ու ազատությունները, ապա, բուրժուազիայի տիրապետության ժամանակ, հենց առաջին քայլի ի միջոցին, յերբ պրոլետարիատը փորձում ե, իր դասակարգային շահերի տեսակետից, լայնորեն ոգտագործել դեմոկրատիան, բուրժուազիան վոչնչացնում ե կամ զերոյի յե վերածում այն իրավունքներն ու ազատությունները, վորոնք թղթի վրա յեն և վոչնչով չեն ապահովված (որինակ՝ վերացնում ե բանվորների ու ծառայողների ընտրական իրավունքը, իշխանությունը տալիս ե միանձնյա դիկտատորներին, պատերազմական ու պաշարողական դրություն ե մտցնում, գործադուլների ժամանակ բանվորներին ու ծառայողներին զորակոչի ու միլիտարիզացիայի յենթարկված ե հայտարարում և այլն)։

Յերրորդ՝ բանվոր դասակարգը վարձու ստրկության, ծանր ճնշման, նյութական ու կուլտուրական զրկանքների, կարիքի ու աղքատության այն պայմաններում, վորոնց մեջ ապրում ե կապիտալի տիրապետության ժամանակ, չի կարող բավական լայն չափերով ոգտագործել այն սահմանափակ, լեգալ հնարավորությունները, վոր տրվում են նրան, ուստի և հիշյալ հնարավորություններն իրապես ամենից առաջ ու ամենամեծ չափով գոյություն ունեն բուրժուազիայի համար, վորը գործադրում ե այն հնարավորությունները բանվոր դասակարգի դեմ կռվելու ու նրա գիտակցությունը մթագնելու նպատակով (ժողովների, մամուլի, խոսքի և այլն բուրժուական ազատություն)։ Որինակ՝ ժողովների ազատությունը, նույնիսկ ամենադեմոկրատիկ բուրժուական հանրապետության մեջ, դատարկ ֆրազ ե, վորովհետև հարուստների տրամադրության տակ են բոլոր լավագույն հանրային ու մասնավոր շենքերը, այլև նրանք բավականաչափ ժամանակ ունեն ժողովների համար և նրանց ե պաշտպանում իշխանության բուրժուական ապարատը։ Ընդհակառակը, քաղաքի ու գյուղի պրոլետարներն ու մանր գյուղացիք, այսինքն բնակչության ճնշող մեծամասնությունը զուրկ ե թե մեկից, թե մյուսից ու թե յերրորդից։ Այս պայմաններում ժողովների ազատությունը բուրժուական դեմոկրատիաների մեջ աղքատանու (бетнота) համար զուտ խաբեբայություն ե։ Վորպեսզի աշխատավորներն ունենան այն ազատությունը, նրանք սկզբում պետք ե խլեն շահագործողներից բոլոր հանրային ու հարուստ մասնավոր տները, նրանք պետք ե ունենան ազատ ժամանակ ժողովների համար և այլն։

Նույնը վերաբերում ե նաև մամուլի ազատությանը։ Բուրժուական դեմոկրատիայի ժամանակ այս ազատությունն աշխատավորների համար դարձյալ խաբեբայություն ե ու պատրանք, քանի դեռ տպարաններն ու թղթի խոշորագույն պահեստները հափշտակել են կապիտալիստները և քանի մնում ե ամբողջ աշխարհում կապիտալի իշխանությունը մամուլի վրա։ Վորպեսզի բանվորներն ու գյուղացիք մամուլի իրական ազատությունը նվաճեն, նրանք պետք ե նախ խլեն կապիտալիստներից հեղինակներին վարձելու, հրատարակչություններ գնելու, լրագիր պահելու և կաշառելու

և այսպիսով ազգաբնակչությունը թունավորելու և հասարակական կարծիքը իրենց շահերի տեսակետից կեղծելու հնարավորությունը։

Ահա թե ինչու բուրժուական դեմոկրատիան—շահագործողների դեմոկրատիա—կրճատ, պոչատ, կեղծ, խաբեբայական և վոչ թե իրական դեմոկրատիա յե։

31. ԿԱՐՈ՞Ղ Ե ԱՐԴՅՈՔ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՍՏՐԿՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԱԳՐՎԵԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

Բոլորովին պարզ ե և բոլոր հեղափոխությունների պատմությունն այս ե սովորեցնում, վոր իշխող դասակարգը իշխանությունից ու հարստությունից զրկել կարելի յե միայն ուժի ու դասակարգային կատաղի կռվի միջոցով։

Բուրժուազիան, վոր իր բռում ե պահում իշխանությունն ու ամբողջ պետական մեքենան, յերբեք թույլ չի տա, հեղափոխական պրոլետարիատն այնպես ոգտագործի ընտրական իրավունքն ու մյուս լեգալ հնարավորությունները, վորպեսզի, որինակ, պարլամենտում մեծամասնություն ստանա։

Այս բանը կանխելու համար, բուրժուազիան միշտ կարող ե բանվոր դասակարգի ընտրական իրավունքը սահմանափակել կամ վերացնել (ինչպես վոր արեց, որինակ, Գերմանիայում, Սաքսոնիայում)։

Յերկրորդ՝ յեթե նույնիսկ բանից դուրս գա, վոր պարլամենտում մեծամասնությունը պատկանում ե սոցիալիստներին կամ կոմունիստներին, ապա սրա հետևանքը կը լիներ վոչ թե պետական իշխանությունը սրանց ձեռքը հանձնելը, այլ պարլամենտի ցրում ու քաղաքացիական պատերազմի սկիզբ այն վայրկյանին, յերբ պրոլետարիատը փորձեր անի իշխանությունը նվաճելու և վերջինս ոգտագործելու իր դասակարգային շահերի համար։

Ահա թե ինչու բոլոր իսկական հեղափոխական սոցիալիստներն ու կոմունիստները միշտ բացատրում եյին, վոր կապիտալիզմի գոյության ու բուրժուազիայի տիրապետության ժամանակ նույնիսկ ամենահետևողական բուրժուական դեմոկրատիան վոչ այլ ինչ ե, յեթե վոչ մի մեքենա՝ բուրժուազիայի ձեռքում՝ բանվոր դասակարգին ճնշելու ու խաբելու համար, և վոր բուրժուազիային տապալելու համար՝ դեմոկրատիան միանգամայն անպետք ե։

32. Ի՞ՆՉՊԵՍ Ե ՎԵՐԱԲԵՐՎՈՒՄ ԳԻՏԱԿԻՑ ՊՐՈԼԵՏԱՐ-ԿՈՄՄՈՒՆԻՍՏԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻՆ

Պրոլետար-կոմմունիստը բուրժուական հասարակարգի շրջանակներում պաշտպանում ե ամենից ընդարձակ դեմոկրատիան, վորովհետև վերջինս մերկացնում ու սրում ե դասակարգային կռիվը, ուստի և նա, բանվոր-կոմմունիստը—ձգտում ե ոգտագործելու բոլոր լեգալ հնարավորությունները, իրավունքներն ու ազատությունները։ Սակայն պրոլետարիատը միևնույն ժամանակ հասկանում ե բուրժուական դեմոկրատիայի սահմանափակությունը և մերկացնում ե այն սնահավատության (ֆետիշիզմ) ու պրոլետարիա-

տին քնացնող վնասակար պատրանքի դեմ, վոր իբր թե խաղաղ ու լեգալ ճանապարհով, բուրժուական դեմոկրատիան օգտագործելով, մասնավորապես պառլամենտական ընտրությունների միջոցով, բանվոր դասակարգը կարող ե ազատագրվել կապիտալիստական լծից։

Կապիտալիզմի ժամանակ գոյություն ունեցող զանազան լեգալ հնարավորությունները, իրավունքներն ու ազատություններն օգտագործել այնքան ավելի անհրաժեշտ ե, վորքան ավելի թույլ ե մասսաների հեղափոխական շարժումը, վորքան ավելի հեռու յե վերջինս կապիտալիզմի դեմ զինյալ ու բացահայտ հարձակման մոմենտից, մի հարձակում, վորը միայն կարող բանվոր դասակարգին հաջողություն պարգևել այն պատերազմում, վոր նա մղում ե բուրժուազիայի տիրապետության դեմ։

33. Ի՞ՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Ե ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏՆ ԱԶԱՏԱԳՐՎԵԼ ԿԱՊԻՏԱԼԻ ԼԾԻՑ

Միայն բռնի, զինված ուժի միջոցով, քաղաքացիական պատերազմի, հեղափոխության ու դիկտատուրայի միջոցով, լինելով ընդ սմին կազմակերպված հատուկ քաղաքական (կոմմունիստական) կուսակցության մեջ։

34. ԻՆՉՈ՞Ւ ՉԻ ԿԱՐԵԼԻ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՀԵՏ ԲԱՆԸ ՎԵՐՋԱՑՆԵԼ ԽԱՂԱՂ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ, ԱՌԱՆՑ ԶԻՆՎԱԾ ԿՌՎԻ ՈՒ ԲՌՆՈՒԹՅԱՆ

Վորովհետև դասակարգային հակադրությունները ու դասակարգային կռիվն անհաշտելի յեն և պրոլետարիատը դասակարգային կռվի յելքը կարող ե վճռել, վերջնական հաշվում, զենքի ուժով միայն։ Բուրժուազիան սպառազեն ե և գործում ե իր ամբողջ հարստությամբ, իր պետական ու այլ ապարատների ամբողջ զորությամբ, իսկ պրոլետարիատը նրան կարող ե հակադրել միայն իր բազմաքանակ լինելը, արտադրական հզորությունը, կազմակերպվածությունը և կապիտալի լծից ազատագրվելու համար զենքը ձեռքին հանելու պատրաստակամությունը։

35. Ի՞ՆՉ Ե ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Քաղաքացիական պատերազմը դասակարգային կռվի բարձրագույն աստիճանն ե, յերբ մի դասակարգ բացահայտ կռվի յե դուրս գալիս մյուս դասակարգի դեմ՝ քաղաքական իշխանությունը նվաճելու ու իր ձեռքում պահելու նպատակով։

Պրոլետարիատի դեմ քաղաքացիական կռիվ վարելիս՝ բուրժուազիան մի կողմ ե շպրտում ամեն մի դեմոկրատիա, և ճակատամարտի յելքը վորոշվում ե կռվող բանակների ուժերի փոխհարաբերության միջոցով։ Քաղաքացիական պատերազմը ավարտում, վերջ ե տալիս բուրժուական դեմոկրատիային և նախորդում ե հեղափոխությանը։

Քաղաքացիական պատերազմը հեղափոխություն անելու յեղանակն ե։

36. Ի՞ՆՉ Ե ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Հեղափոխություն բառը գործ ե ածվում տարբեր ասպարեզներում։ Լայն առումով վերցրած՝ հեղափոխություն նշանակում ե հեղաշրջում, մի շարք շատ խոշոր ու համեմատաբար արագ փոփոխություններ վորևե ասպարեզում, վորոնք հիմնովին փոփոխում են իրերի դրությունը։ Այս իմաստով վերցրած՝ խոսում են տեխնիկայի (շոգու, մեքենաների, ելեկտրականության և այլն կիրառումը) գիտության, արվեստի ասպարեզում կատարված հեղափոխության մասին, յերկրագնդի պատմության մեջ տեղի ունեցած հեղափոխության մասին և այլն։ Ակնհայտ ե, վոր քաղաքական ասպարեզում, այսինքն պետության մեջ, իշխանության հարցի տեսակետից, այն ե՝ պետության մեջ այս կամ այն դասակարգի տիրապետության հարցի տեսակետից, իրական ու ամենախոր հեղաշրջում կարող ե լինել այն միայն, յերբ պետական իշխանությունից զրկվում ե մի դասակարգ և այս իշխանությունը նվաճում ե մի այլ դասակարգ։

Առանց պետական իշխանության մեկ դասակարգի ձեռքից մյուս դասակարգի ձեռքն անցնելու, չեն կարող մի շարք խոշոր սոցիալ-քաղաքական փոփոխություններ գոյություն ունենալ, փոփոխություններ՝ վորոնք հիմնովին ու արմատակի հեղաշրջում են տվյալ հասարակարգի կյանքը։

Միանգամայն ակներև ե, վոր տվյալ րոպեյում իշխող դասակարգն իր հակառակորդին թույլ չի տալ առանց կատաղի կռվի, այսինքն, առանց քաղաքացիական պատերազմի, խլելու իշխանությունն իր ձեռքից ու բռի մեջ ամուր պահելու։

Ահա թե ինչու յուրաքանչյուր հեղափոխության անխուսափելի կերպով պետք ե նախորդե ու նրան ուղեկցե քաղաքացիական պատերազմը տարբեր դասակարգերի միջև, վորոնք հեղափոխության ժամանակ կռվում են իշխանության համար։ Ընդ սմին, հին իշխող դասակարգը, վոր իշխանության գլուխ եր կանգնած, քաղաքացիական պատերազմի մեջ իր դիկտատուրան ե կիրառում՝ հարձակվող հեղափոխական դասակարգի դեմ։ Իր հերթին, վերջինս ել իշխանությունն իր ձեռքն առնելով՝ իր դիկտատուրայի միջոցով ձգտում ե վերջնականապես ջախջախելու իր պարտված դասակարգային հակառակորդին։

Այսպիսով յուրաքանչյուր հեղափոխության նախորդում ե ու սրան ուղեկցում վոչ միայն քաղաքացիական պատերազմը, այլև դիկտատուրան այն դասակարգի կողմից, վոր իշխանության գլուխ ե կանգնած։

Այս պատճառով հեղափոխությունը պետական իշխանության մի դասակարգի ձեռքից մյուս դասակարգի ձեռքն անցնելն ե։

Հեղափոխությանն ամեն անգամ նախորդում և նրան ուղեկցում են քաղաքացիական պատերազմն ու դիկտատուրան։

37. ՎՈ՞Ր ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ Ե ԿՈՉՎՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

Այն հեղափոխությունը, վորի ընթացքում պրոլետարիատը, իր ձեռքն առնելով իշխանությունը՝ ճնշում ե բուրժուազիայի դիմադրությունը, խորտակում ե նրա պետական մեքենան ու կերտում իր սեփական պետական ապարատը, վորպեսզի արտադրության միջոցներն ու գործիքները բուրժուազիայից խլելու ու իր նպատակների տեսակետից օգտագործելու միջոցով, կապիտալիզմից անցնի սոցիալիզմին։

Մեր — հեղափոխական մարքսիստներիս, կարծիքով սոցիալիստական հեղափոխության գլխավոր տարբերությունը մյուս բոլոր հեղափոխություններից այն ե, վոր սոցիալիստական հեղափոխության ժամանակ իշխանության համար մղվող կռիվը տեղի յե ունենում մի կողմից՝ բուրժուազիայի

ու մյուս կողմից՝ պրոլետարիատի միջև ու այս կռվում հաղթող է դուրս գալիս պրոլետարիատը։ Ինչ վերաբերում է այս կռվի հնարներին (прием) ու բնույթին, ապա, իբրև ընդհանուր օրենք, սոցիալիստական հեղափոխության ժամանակ էլ անխուսափելի յեն քաղաքացիական պատերազմն ու դիկտատուրան, ինչպես և ամեն մի հեղափոխության ժամանակ։ Մինչև վոր պրոլետարիատը քաղաքացիական պատերազմ չմղի ու չապստամբի, բուրժուազիան չի հրաժարվիլ իր իշխանությունից։ Մյուս կողմից՝ բուրժուազիային հաղթելու հաջորդ որը, պրոլետարիատն անպատճառ պետք է բախվի բուրժուազիայի փորձերին, վորով վերջինս ձգտում է, քաղաքացիական պատերազմի միջոցով, յետ խլելու կորցրած իշխանությունը, այլև նրա հանդեպ պիտի յելնի հին բուրժուական պետական ամբողջ ապարատի համառ ու կատաղի դիմադրությունը։

Բոլորովին այլ կերպ է հասկանում սոցիալիստական հեղափոխությունն ամբողջ համաշխարհային մենշևիզմը կամ ռեֆորմիզմը՝ ի դեմս II Ինտերնացիոնալի։ Մենշևիկները կամ ռեֆորմիստները սովորեցնում են, թե պրոլետարիատը սոցիալիստական հեղափոխությունը կարող է և պետք է կատարե վոչ թե քաղաքացիական պատերազմի ու ապստամբության միջոցով, այլ բուրժուական պարլամենտի միջոցով։

Նմանապես մենշևիկները կամ ռեֆորմիստները սովորեցնում են, վոր իշխանությունն այսպես խաղաղ, պարլամենտական ու օրինական ճանապարհով նվաճելու հաջորդ որը կարիք չկա, վոր պրոլետարիատը խորտակե հին բուրժուական պետական մեքենան և ուժով ճնշե բուրժուազիայի դիմադրությունը։

Միանգամայն ակնհայտ է, վոր սոցիալիստական հեղափոխության այսպիսի ռեֆորմիստական ըմբռնումը վոչ մի առնչություն չունի հեղափոխական մարքսիզմի հայացքների հետ, հակասում է բոլոր հեղափոխությունների փորձին և չափազանց ոգտակար է բուրժուազիայի համար այն տեսակետից, վոր թմրեցնում է պրոլետարիատի հեղափոխական գիտակցությունն ու խարխլում դասակարգային կռվի հիմքերը։

38. ԻՆՉՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՂԹԱՆԱԿՈՂ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ՊԵՏՔ Է ԱՆՀՐԱԺԵՇՏՈՐԵՆ ՅՈՒՐ ՁԵՌՔՆ ԱՌՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՅՈՒՐ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌՈՒՑԵ

Նախ՝ այն պատճառով, վոր հաղթված ու իշխանությունից զրկված բուրժուազիան սկզբներում փորձում է, յուր բոլոր ուժերն ու միջոցները զորակոչի յենթարկելով ու օտարյերկրյա կապիտալիստների օժանդակությունն ոգտագործելով՝ նորից յուր ձեռքը հափշտակելու իշխանությունը՝ բացահայտ քաղաքացիական պատերազմի միջոցով։ Ուստի և պրոլետարիատը, բուրժուազիայի դեմ մղվող այս քաղաքացիական պատերազմը հաջողությամբ վարելու համար՝ պետք է կազմակերպվի, իբրև քաղաքականապես իշխող դասակարգ, զինվելով պետության բոլոր գործիքներով ու միջոցներով։

Յերկրորդ՝ այն պատճառով, վոր պրոլետարիատը, յուր հաղթության հաջորդ որը, յենթարկվում է տվյալ յերկիրը շրջապատող բուրժուական յերկիրների կատաղի գրոհին, վորոնք ձգտում են պրոլետարական հեղափոխությունը բնաջնջելու զենքի ու համապաշարման (բլոկադա) ուժով, վորի դեմ կռվելու համար նույնպես անհրաժեշտ է պրոլետարական պետության ամբողջ զորությունը։

Յերրորդ՝ այն պատճառով, վոր կապիտալիզմից դեպի սոցիալիզմ տանող անցման շրջանի շինարարությունը կարող է հաջողությամբ կատար-

վել միայն այն դեպքում, յերբ պրոլետարական պետական կազմակերպությունն ամուր լինի։

Ահա թե ինչու սխալվում են անարխիստները, վորոնք ժխտում են պրոլետարական պետության անհրաժեշտությունը՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում, պրոլետարիատի հաղթության հաջորդ որը։

39. ԻՆՉ Է ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Դիկտատուրան պետության մեջ իշխանության ու կառավարելու մի անխուսափելի սիստեմ է քաղաքացիական պատերազմի ու հեղափոխության ժամանակ, և անմիջաբար հիմնված է բռնության վրա, չի սահմանափակվում վոչ մի օրենքով և վորն անհրաժեշտ է չորս կողմից թշնամիներով շրջապատված ու քաղաքականապես իշխող դասակարգի ամենից արագ ու ամենից անվրեպ հաջողության համար։

Իշխող դասակարգին դիկտատուրան անհրաժեշտ է՝ պետական իշխանությունն յուր ձեռքում պահելու և լավագույն կերպով յուր շահերին համապատասխան քաղաքականություն վարելու համար։

Յուրաքանչյուր դասակարգային հասարակության մեջ իշխող դասակարգի դիկտատուրան անպայման անհրաժեշտ է վոչ միայն քաղաքացիական պատերազմի սուր արտահայտության այլ և դրանից առաջ, յերբ շատ կամ քիչ լրջությամբ սրվում է դասակարգային կռիվը, վորի վրա հիմնված է տվյալ հասարակությունը։

Պատմությունը սովորեցնում է, վոր վոչ մի ճնշված դասակարգ իշխանության չի հասել յերբեք և չի էլ կարող իշխանության հասնել, յեթե դիկտատուրային շրջան չունենա, այսինքն յեթե չնվաճի քաղաքական իշխանությունը և բռնի կերպով չճնշե այն ամենահուսահատ, ամենակատաղի ու վոչ մի բանի առաջ կանգ չառնող դիմադրությունը, վոր շահագործողները ցույց են տվել միշտ։

Մանավորապես արդի բուրժուազիան, յուր ժամանակին, առաջավոր յերկիրներում, իշխանությունը նվաճում եր մի շարք ապստամբությունների, քաղաքացիական պատերազմների միջոցով, թագավորներին, ֆեոդալներին, ստրկատերերին ու հին հասարակարգը վերականգնելու սրանց փորձեր բռնի ճնշելով։ Պրոլետարիատն էլ հենց այսպիսի դիկտատուրայի ճանապարհով է հարկադրված ընթանալու այն պատերազմի ընթացքում, վոր մղում է բուրժուազիայի դեմ՝ յուր քաղաքական տիրապետության համար։

40, ԻՆՉՈՎ Է ԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բոլոր հեղափոխությունների փորձը վկայել է, վոր, հեղափոխության ժամանակ, դիկտատուրան անխուսափելի յէ։ Սակայն առանց հեղափոխության էլ, յերբ գոյություն ունի քաղաքացիական պատերազմ, կամ նույնիսկ նրա առաջ գալու պատճառները միայն, այն ժամանակ պետության մեջ իշխող դասակարգն անխուսափելի կերպով ընթանում է և հարկադրված է ընթանալ, դիկտատուրայի ճանապարհով, վորպեսզի կանխի քաղաքացիական պատերազմի՝ հեղափոխության վերածվելը և խորտակի յուր դասա-

կարգային հակառակորդին։ Այսպիսով դիկտատուրան պետության մեջ միշտ աչքառու գոյություն չի ունենում և ակներև չի արտահայտվում, սակայն միշտ, ամեն րոպե կարող է հրապարակ հանվել ու կիրառվել հենց վոր իշխող դասակարգը դեմ է առնում քաղաքացիական պատերազմին կամ սրա սպառնալիքին։

Դիկտատուրայի ձևերն ու արտահայտությունները չափազանց բազմազան են՝ նայած կռվող դասակարգերի ուժերի փոխհարաբերությանն ու հեղափոխության բնույթին ու առանձնահատկություններին։

Դիկտատուրայի ժամանակ, մասնավորապես, նախ՝ դիկտատուրան իրականացնող դասակարգը վերացնում է պարտված կամ հարձակվող դասակարգի իրավունքներն ու ազատությունները, վորոնք առաջ կային նրա համար, և ամենից առաջ վերացնում կամ սահմանափակում են ժողովներ, զանազան ընկերություններ կազմելու իրավունքը, տպագրական խոսքի իրավունքը, յերթևեկության իրավունքը, հրապարակական դատի կամ ընդհանրապես վորևէ դատի իրավունքը և այլն։

2) Պարտված կամ հարձակվող դասակարգի ամենանշանավոր ներկայացուցիչները կամ անդամները ձերբակալվում են, զրկվում ազատությունից կամ նույնիսկ ֆիզիքապես վոչնչացվում։

3) Պարտված կամ հարձակվող ամբողջ դասակարգի կամ նրա մի մասի ամեն տեսակի գույքը բռնագրավում է իշխող դասակարգը։

4) Դիկտատոր դասակարգն ըստ կարելույն լիակատար չափերով ու արագ օգտագործում է իր ձեռքում գտնվող իշխանությունը և սրա միջոցով իրականացնում իր դասակարգային շահերը։

41. Ի՞ՆՉ Է ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Այս դիկտատուրան այն կռիվն է, վոր բուրժուական-կապիտալիստական հասարակարգի հիմքերն անխախտ պահելու համար մղվում է գահընկեց յեղած ֆեոդալների կողմից՝ ապստամբվող բանվոր դասակարգի դեմ։

42. Ի՞ՆՉ Է ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

Այս մի դիկտատուրա յե. վոր արտահայտվում է նրանով, վոր բանվորությունը ճնշում է բուրժուազիային ու սրա գործակալներին, իր կողմն է գրավում աշխատավոր մասսաների (առաջին հերթին՝ աշխատավոր գյուղացիության) մեծամասնությունը, խորտակում է բուրժուական-կապիտալիստական պետությունն ու կալվածատիրական պետության բոլոր մնացորդները, ստեղծում պրոլետարական հզոր պետություն ու խոշոր արտադրություն՝ հիմնվելով բուրժուազիայից հափշտակած ձեռնարկությունների վրա և զարգացնում, կերտում սոցիալիզմը՝ կապիտալիզմի ավերակների վրա։

Պրոլետարիատի դիկտատուրան հենց նոր իշխանությունը նվաճած դասակարգի անխնա պատերազմն է՝ ավելի հզոր թշնամու — բուրժուազիայի դեմ, վորի դիմադրությունը տասնապատկվում է իր տապալման հետևանքով և վորի զորությունը պարփակվում է վոչ միայն միջազգային կապիտալի ուժի ու այն օգնության մեջ, վոր ցույց է տալիս միջազգային կապիտալը վորևէ յերկրում տապալված բուրժուազիային, այլ մանր արտադրության, մանր տնտեսության ուժի մեջ, վորը միտում ունի կապիտալիզմ ծնելու ու բուրժուազիային հզորացնելու։ Ուստի և անհնարին է բուրժուազիային վերջնականապես ու հաստատապես հաղթել՝ առանց յերկարատև, համառ պատերազմի, առանց կյանքի ու մահվան կռվի։ Յեվ այս պատերազմի մեջ հաջողություն ձեռք բերելու համար հատկապես անհրաժեշտ է պրոլետարիատի ամենավճռական յերկաթյա դիկտատուրան այն ամբողջ ժամանակաշրջանում, յերբ բուրժուազիան պատերազմում կամ սպառնում է պատերազմել։

Պրոլետարիատի դիկտատուրան նրանով է նման մյուս դասակարգերի դիկտատուրային, վոր առաջ է յեկել քաղաքական իշխանությունը կորցրած դասակարգի բռնի դիմադրությունը ճնշելու անհրաժեշտությունից։ Բացի բոլորովին այլ նպատակներից, պրոլետարիատի դիկտատուրան մյուս դասակարգերի դիկտատուրայից, միջնադարի կալվածատերերի դիկտատուրայից, բոլոր կալվածատիրական յերկիրներում այժմ գոյություն ունեցող բուրժուական դիկտատուրայից նրանով է, ի միջի այլոց, հիմնովին տարբերվում, վոր կալվածատերերի ու բուրժուազիայի դիկտատուրան բնակչության վիթխարի մեծամասնության, այն է աշխատավորների դիմադրության բռնի ճնշումն էր։ Ընդհակառակը, պրոլետարիատի դիկտատուրան բռնի ճնշումն է շահագործողների դիմադրության, այսինքն՝ բնակչության չնչին փոքրամասնության՝ կալվածատերերի, կապիտալիստների ու սրանց արբանյակների դիմադրության։

Պրոլետարիատի դիկտատուրան հաղթահարում և հարվածում է դասակարգային թշնամիների մի փոքրիկ խմբակին, իսկ աշխատավոր լայն մասսաներին, ընդհակառակը, բերում է մինչև այժմ պատմության մեջ չտեսնված իրական, իսկապես ժողովրդական դեմոկրատիայի բարգավաճումն ու փթթում (մասնավորապես խորհրդային իշխանության ձևով)։ Պրոլետարիատի դիկտատուրան աշխատավոր դասակարգերին, այսինքն բնակչության վիթխարի մեծամասնությանը բերում է իրական հնարավորություն օգտվելու դեմոկրատական բոլոր իրավունքներից ու ազատություններից, վորոնք նույնիսկ մոտավոր չափերով գոյություն չեն ունեցել ամենից առաջավոր բուրժուական-դեմոկրատական հանրապետությունների մեջ, սրանց գոյության ամենալավ ժամանակներում անգամ։

43. ԻՆՉՈ՞Ւ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՈՒ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԵՏՔ Է ԳՈՐԾԵԼ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

Նախ նրա համար, վոր այս ուղին անխուսափելի յե. ուրիշ ճանապարհ չի յեղել և չկա. վորովհետև այսպիսի րոպեներում դասակարգային կռիվը հասնում է մեծագույն սրության, դասակարգը զենքը ձեռին ծառանում է դասակարգի դեմ և պարտված բուրժուազիան բոլոր միջոցներով փորձում է վերադարձնելու իր տիրապետությունը։ Յերկրորդ՝ այն պատճառով, վոր դիկտատուրայի միջոցով ամենից շուտ են ավարտվում քաղաքացիական պատերազմն ու հեղափոխությունը, վորոնց ուղեկցում է բնաջնջող կռիվն ու փլուզումը, ուստի և դիկտատուրայի ճանապարհն ամենաձեռնտու ճանապարհն է հասարակության համար։

Պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունն ընդունելը հեղափոխական մարքսիստ-կոմմունիստների տարբերիչ գիծն է, վորով նա զանազանվում է բոլոր ռեֆորմիստ համաձայնողականներից ու զանազան պսեւդո հեղափոխականներից։

Պրոլետարիատի դիկտատուրայի պարզորոշ ըմբռնումը տվել է դեռևս Մարքսը։ Այս ըմբռնումը մտել է բոլշևիզմի ծրագրի ու տակտիկայի մեջ, սրա հենց ծագման օրերից (1903 թ. կուսակցության 2-րդ համագումարում) և այս ըմբռնումը փայլուն կերպով զարգացել ու հիմնավորվել է Վլադիմիր Իլյիչի յերկերում նրա մինչև 1905 թիվը հրատարակած բազմա-

ների ազատությունների մեջ, ինչ ներկայում չկա հատուկ չիրկիր մեջ, փոխանակ ներկված են պետության խնդիրներին և կոչվում են «Հեղափոխություն և պետություն» և «Պրոլետարական հեղափոխությունն ու ռենեգատ Կաուցկին»։

Հենց Վլադիմիր Իլյիչն ենք պարտական դիկտատուրայի ճիշտ վերականգնումը, բառ վերի այս դիկտատուրան քաղաքացիական պատերազմի ու հեղափոխության ժամանակ անխուսափելի մի անսահմանափակ իշխանություն է, որ հենվում է ոչ թե օրենքի, այլ ուժի վրա։

Այստեղից պրոլետարիատը հեղափոխության ժամանակ շարժման մեջ քաշելով գյուղացիության լայն մասսաները, նախ անխնա ջախջախում թշնամիների ու ամեն ռեստավրացիոն մտքերը՝ նվաճում է իրականացնում և իրեն անհրաժեշտ բոլոր իրավունքներն ու ազատությունները (ժողովների, մամուլի, կազմակերպությունների և այլն ազատություն)՝ երկրորդ, հին կարգը հատուկ ջախջախելու ու ջարդելու նպատակով, ստեղծում է հեղափոխական իշխանության նոր օրգաններ, (խորհուրդներ և այլն), և երրորդ՝ որոնց միջոցով բռնություն է գործադրում ժողովրդի վրա բռնացողների նկատմամբ, այսինքն՝ կիրառում է հեղափոխական դիկտատուրան։

Պրոլետարիատի այս նոր դիկտատուրական իշխանությունը փոքրամասնության իշխանություն չէ մեծամասնության, ժողովրդի, բանվորների ու գյուղացիների մասսայի վրա, ինչպես այս տեղի ունի կապիտալիստների ու կալվածատերերի դիկտատուրայի ժամանակ։

Պրոլետարիատի դիկտատուրան հիմնվում է ժողովրդի ամենալայն մասսայի վրա, նրա վստահության ու օժանդակության վրա և ուղղված է ժողովրդին կողոպտողների ու նրա վրա բռնացողների տապալված փոքրամասնության դեմ։

Նոր իշխանությունը ծագում է հնի կողքին ու նրա դեմ մղված կատաղի կռվի մեջ, և առանց բռնացողների նկատմամբ բռնություն գործադրելու՝ չի կարելի ամրապնդել հեղափոխության գործը։

44. Ո՞Վ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՅՍ ԿԱՄ ԱՅՆ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂԸ

Իշխող դասակարգը, որ գործում է յուր առաջապահի միջոցով, այսինքն՝ գիտակից ու ակտիվ փոքրամասնությունը, որ կազմակերպված է քաղաքական կուսակցության մեջ, և յուր ձեռքում է պահում պետական իշխանությունը։

Պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ, այսպիսի առաջապահ, այսինքն բանվոր դասակարգի դիկտատուրայի արտահայտիչ ու ակտիվ իրականացնող հանդիսանում և կարող է լինել կոմմունիստական կուսակցությունը միայն։

Սակայն կոմմունիստական կուսակցությունն այս դիկտատուրան արտահայտում է և իրականացնում՝ հենվելով այն հարաճուն ազդեցության վրա, որ ինքն ունի բանվորական ու գյուղացիական մասսաների մեջ, և այս անում է բանվորական և գյուղացիական մասսայական կազմակերպությունների միջոցով (միություններ, խորհուրդներ, կոոպերատիվներ և այլն)։

Պրոլետարիատի դիկտատուրայի խնդրում մեծ սխալ ու խոշորագույն անհասկացողություն է կոմմունիստական կուսակցության դերի թերագնահատությունը ու դասակարգը կուսակցությանը հակադրելը։ Այդ հակադրությունը ոչ մի բովանդակություն չի պարունակում։ Հայտնի է, որ ժամանակակից քաղաքական են դասակարգերը, որ միջինները բոլոր դասակարգային հավասարապես միատարր չեն, որ դասակարգի մեջ կան և առավել նրա առաջավորները, որոնք ամենից առաջ հենց հանդիսանում քաղաքական կուսակցության միջոցով ղեկավարում է այս դասակարգի շարժումը՝ հենվելով զանազան այլ կազմակերպությունների վրա։ Եվ նույն ինքն քաղաքական կուսակցության մեջ, իբրև ընդհանուր կանոն, ղեկավարությունը կենտրոնանում է այն շատ կամ քիչ շարժուն հաստատուն խմբակների ձեռքում, որոնք կազմված են լինում ամենահեղինակավոր, փորձառու ու ամենապատրաստված պաշտոնների համար ընտրված անձերից, որոնք կոչվում են ղեկավարներ։

45. ՑՈ՞ՐՔ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ԿՅԱՆՔԸ

Քաղաքացիական պատերազմի ու հեղափոխության ժամանակ, այլ և այն բոլոր դեպքերում, երբ տեղի են ունենում շատ կամ քիչ սուր բախում ու սուր դասակարգային կռիվ, որի վրա հիմնվում է դասակարգային հասարակությունը։

Սոցիալիստական հեղափոխության ժամանակ բուրժուազիան նախ փորձում է դիկտատուրայի միջոցով պահելու յուր իշխանությունը՝ բանվոր դասակարգին դաժանությամբ ճնշելով։ Հետագայում բուրժուազիային հաղթած պրոլետարիատը հակահեղափոխական բուրժուազիային ամենից առաջ ջախջախելու ու քաղաքացիական պատերազմը շուտով վերջացնելու նպատակով նույնպես հարկադրված է ընթանալու դիկտատուրայի ճանապարհով։

46. Ի՞ՆՉՈՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏՆ ԻՐ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌՈՒՑԵԼԻՍ ՊԵՏՔ Է ԽՈՐՏԱԿԻ ՀԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ-ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆ

Նախ նրա համար, որ պրոլետարիատը չի կարող հաղթել առանց խորտակելու յուր հակառակորդի ամենից ուժեղ կազմակերպությունը, այսինքն բուրժուական պետական իշխանությունն ու նրա մեքենան։ Քանի այս պետական մեքենան ամբողջ է, ողջ է նաև բուրժուազիան ու նրա տիրապետությունը։ Այսպիսով հենց պրոլետարիատի նույն ինքն հաղթությունը չենթադրել է տալիս, որ բուրժուազիայի պետական մեքենան պիտի **խորտակված** լինի։

Երկրորդ այն պատճառով, որ բուրժուական պետական ապարատի գործակալների մեծամասնությունը, ինչպես այս ակնառու կերպով ցույց տվեց 1917 թվին հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում, բուրժուազիայի իշխանության տապալման հաջորդ օրը, շարունակում է դեռ քաղաքացիական կռիվ մղել պրոլետարիատի դեմ և համառորեն հրաժարվում է նոր իշխանության համար աշխատելուց (նենգադրել—սաբոտաժ)։

Երրորդ այն պատճառով, որ բուրժուական պետության ապարատների ու ծառայողների մեծամասնությունն ամենևին կանխապատրաստ-

ված չէ պրոլետարական նոր պետության գաղափարների ու քաղաքականության համար, ուստի և բանվոր դասակարգին անհրաժեշտորեն՝ հարկ է լինում շատ ու շատ խնդիրներ վճռելիս հենվել միայն յուր ուժերի վրա, ինչքան էլ վոր պրոլետարիատը քիչ կանխապատրաստված լինի սրան, այն հանգամանքի շնորհիվ, վոր յուրաքանչյուր բուրժուական պետական սիստեմ հիմնված է այն սկզբունքի վրա, վորպեսզի բանվոր դասակարգին ու ընդհանրապես աշխատավոր մասսաներին թույլ չտրվի վորևէ կերպ ղեկավարել պետությունն ու կառավարել այն։

47. ԱՐԴՅՈՔ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒ՞ՆԸ ՄԻՇՏ ՀԵ՞ՆՎԱԾ ԿԼԻ՞ՆԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՎՐԱ

Վոչ, վոչ միշտ։

Յերբ ավարտվի քաղաքացիական պատերազմը և ամրապնդվի նոր պրոլետարական պետությունը, յերբ սոցիալիստական հեղափոխությունը տարածվի ուրիշ խոշոր բուրժուական կապիտալիստական յերկիրներում և հաղթանակե այնտեղ, այլև յերբ սոցիալիստական շինարարությունը զարգանա պրոլետարական պետությունների մեջ, այն չափով էլ հետզհետե ավելի ու ավելի կթուլանա ու կվերանա պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտությունը։

Մինչև դիկտատուրայի լիակատար չքացումը, քանի գնա, դիկտատուրայի ձևերն ավելի ու ավելի կմեղմանան, ինչպես այս այժմ արդեն նկատում ենք Խորհրդային հանրապետության մեջ (Արտակարգ հանձնաժողովի Ч К) փոխարինումը քաղաքական գլխավոր վարչությամբ (Г П У), հեղափոխական օրինականության զարգացումը և այլն)։

48. ԱՐԴՅՈՔ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՈՒ՞ՆԸ ՎԵՐՋԻ՞Ն ՊԵՏՈՒԹՅՈ՞ՒՆԸ ԿԸ ԼԻ՞ՆԻ

Պրոլետարական պետությունը դասակարգային հասարակությունների մեջ յեղած պետություններից վերջինը կլինի, սակայն բանվորական պետությունից հետո ու պետության լիակատար բացակայությունից առաջ, կոմմունիզմի ժամանակ անհրաժեշտ է պատկերացնել հատուկ պետություն սոցիալիստական պետություն, վոր նման չի լինիլ նախընթաց պետություններից վոչ մեկին։

Բանվորական հեղափոխական շարժման պատմության մեջ հին պետական ապարատը խորտակելու անհրաժեշտությունը պարզվեց 1871 թվին Պարիզի Կոմմունայի փորձի ժամանակ, յերբ այս կոմմունան լինելով բանվոր դասակարգի դիկտատուրայի ու կառավարության առաջին փորձ՝ շատ բան արեց, վորպեսզի հիմնովին խորտակի բուրժուական պետական հին ապարատը (չինովնիկական, դատարանական, վոստիկանական, զինվորական ապարատը) և վերջապես փոխարինե աշխատավորների մասսայական ինքնավար կազմակերպությամբ։

49. Ի՞ՆՉ Է ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՈՒՆԸ

Սոցիալիստական տնտեսական շինարարության զարգացման հետևանքով, հասարակությունը վերջ ի վերջո հասնում է այն կետին, վոր լիովին լուծարքի յե յենթարկում բոլոր մասնավոր-սեփականատիրական ու մանր

արտադրական հարաբերություններն ու ձևերը, ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղական տնտեսության մեջ և հաստատում է համընդհանուր պլանաչափ կոլլեկտիվ տնտեսություն, վորտեղ բոլորովին բացակայում են դասակարգերն ու դասակարգային կռիվը։

Հետևաբար այսպիսի հասարակության տնտեսականությունը (եկոնոմիկան) կոմմունիստական կլինի, ուստի և այս սոցիալիստական հասարակությունը կարող է կոչվել կոմմունիզմի առաջին աստիճան կամ սկիզբ։

Սակայն, ընդ սմին, տեխնիկան դեռևս կարող է չհասնել այն բարձրության, վոր յենթադրվում է կոմմունիզմի միջոցին և վորի ժամանակ հասարակությունը կարող է կազմակերպել իր արտադրությունն ու բաշխումը այն բանաձևի համաձայն, վոր ասում է. «յուրաքանչյուրին ըստ ունակությունների և յուրաքանչյուրին՝ ըստ կարիքների և այն էլ առանց վորևէ հարկադրանքի»։

Այս պատճառով բանից դուրս կգա, վոր սոցիալիստական հասարակարգի մեջ անհրաժեշտ կլինի արտադրության ու բաշխման վորոշ չափով հարկադրական կազմակերպություն ունենալ, վոր հիմնված կլինի աշխատանքի քանակի ու վորակի հաշվառքի (учет) վրա։

Այսպիսով իրենց գոյությունը կպահպանեն դեռևս իրավունքն ու իշխանության մի քանի հիմնարկություններն այսպիսի սոցիալիստական հասարակարգի մեջ, վորն այս պատճառով դեռևս պետական բնույթ կկրե, թեև առանց դասակարգերի։

50. Ի՞ՆՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱ՞Ն ՈՒ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱ՞Ն ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՀԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՆԱԽԸՆԹԱՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

Մարդկության պատմության ընթացքում առաջին անգամ բանվորական պետության մեջ պետական իշխող դասակարգ է հանդիսանում պրոլետարիատը՝ դաշնակցելով ամենաչքավոր ու միջակ աշխատավոր գյուղացիության հետ, այսինքն իշխող դասակարգ է հանդիսանում բնակչության վիթխարի մեծամասնությունը։

Այս մեծամասնությունը բուրժուազիային եքսպրոպրացիայի յենթարկելով ու արտադրության միջոցները, տները և այլ նյութական ռեսուրսները պրոլետարիատին հատկացնելով՝ իրավունք ու առաջին անգամ հնարավորություն է ստանում ապահովելու պետական իշխանության բոլոր օրգանների ընտրելիությունն ու բոլոր ազատությունների իրական իրավունքը, վոր գործադրվում է հօգուտ աշխատավորների։

Այսպիսով մարդկության պատմության մեջ առաջ է գալիս և զարգանում է դեմոկրատիա՝ աշխատավոր մեծամասնության համար և վոչ թե միայն շահագործող փոքրամասնության համար, մի իրական, իսկական և վոչ կեղծ ու կարծեցյալ դեմոկրատիա, ինչպիսին գոյություն ունի բոլոր բուրժուական դեմոկրատիաների մեջ։

Հետագայում, յերբ զարգանա սոցիալիզմը և դասակարգերը չքանան, մեծամասնության այս դեմոկրատիան կդառնա լիակատար դեմոկրատիա, այսինքն կտարածվի սոցիալիստական հասարակության ամբողջ բնակչության վրա։

51. ԱՐԴՅՈՔ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿԼԻՆԻ

Զարգացած կոմմունիզմի ժամանակ պետություն չպետք ե լինի ամենևին, վորովհետև վոչ միայն կչքանա ամեն մի մասնավոր սեփականություն ու հասարակության դասակարգային կազմակերպությունը, այլ կվերանա վորևե հարկադրանքի և կյանքն ու աշխատանքը հարկադրաբար կանոնավորելու կարիքը:

Յերբ արտադրող ուժերը վիթխարի չափերով կզարգանան և մարդկությունն արմատորեն կվերակրթվի, այն ժամանակ վերջինս կկերտե իր կազմակերպությունը՝ առանձին անհատների ու խմբակների փոխհարաբերությունների լիակատար հոժարակամության ու ընկերական համերաշխության սկզբունքների վրա հիմնվելով: Հարկադրանքի, իրավունքի ու իշխանության չքանալու հետ միասին, պետությունն ել վերջնականապես կմահանա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ VII ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. К. Маркс и Ф. Энгельс. „Коммунистический Манифест“, под редакцией и примечаниями Д. Рязанова.
2. Энгельс Ф. „Происхождение семьи, собственности и государства“.
3. Ленин Н. „Революция и государство“.
4. Ленин Н. „Пролетарская революция и ренегат Каутский“.
5. Ленин Н. „Удержали-ли большевики государственную власть?“
6. Ленин Н. „Политические партии в России и задачи пролетариата“.
7. Ленин Н. „Уроки революции“.
8. Ленин Н. „Задачи пролетариата в нашей революции“.
9. Ленин Н. „Письма о тактике“.
10. Ленин Н. „Детская болезнь левизны“.
11. Ленин Н. “Тезисы“ (№ 1 „Коминтерна“).
12. Ленин Н. „Выборы в учредительное собрание и диктатура пролетариата“.
13. Ленин Н. „Об обмане народа лозунгами свободы и равенства“.
14. Ленин Н. „К истории вопроса о диктатуре“ (№ 14 „Коминтерна„).
15. Ленин Н. „Полное собрание сочинений“: тома VII, XIV, XV, XVI, XVII.
16. Троцкий. „Октябрская революция“.
17. Троцкий. „1905 год“.
18. Троцкий. „Терроризм и Коммунизм“.
19. Люксембург. „Социальная реформа и революция“.
20. Покровский. „Русская история в самом сжатом виде“.
21. Покровский. „Очерк истории русской культуры“.
22. Покровский. „Царизм и революция“.
23. Маркс К. „Гражданская война во Франции в 1871 году“.
24. Маркс К. „Классовая борьба во Франции 1848—50 г.г.“
25. Маркс К. „18 брюмера Луи Бонапарта“.
26. Маркс К. „Революция и контр-революция в Германии“.
27. Энгельс Ф. „Анти—Дюринг“.
28. Каутский. „Путь к власти“.
29. Лассаль. „Сущность конституции“ (*Հայերեն Լասսալ—«Սահմանադրության եությունը» թարգմ. Ռ. Խանազադի.*
30. Бухарин. „Теория пролетарской диктатуры“.
31. Стучка. „Революционная роль права в государстве“.
32. Стучка „Учение о государстве и конституции РСФСР“.
33. Гуревич. „Основы советской конституции“. (*Հայերեն Գուրեվիչ—«Խորհրդային սահմանադրության հիմունքները» թարգմ. Ե. Տ—Մ'ին*).
34. Сафаров. „Общество и государство“.
35. Сафаров. „Буржуазный порядок и коммунистическая революция“.
36. Вильям Поль. „Коммунизм и общество“.
37. Преображенский Е. „Анархизм и коммунизм“.

ԳԼՈՒԽ VIII[1])

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

1. ՎՈ՞Ր ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՊԱԼՈՒՄԻՑ Ե ԱՌԱՋ ԳԱԼԻՍ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային իշխանությունը հանդես ե գալիս կապիտալիստների ու կալվածատերերի դիկտատուրայի տապալման հետևանքով՝ մի կողմ շպրտելով բուրժուազիայի տիրապետության զանազան քաղաքական ձևերը—հիմնադիր ժողովները, պարլամենտները, դումաները, զեմստվոները և այլն—։

Այս բուրժուական հիմնարկությունների դեմ մղվող կռվի ընթացքում Խորհրդային իշխանությունը ծագում և զարգանում ե առանձին կազմակերպություններից, վորոնք կոչվում են խորհուրդներ։

2. ԻՆՉՈ՞Ւ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԴԵՄ ՄՂԱԾ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՌՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳԱԼԻՍ Ե ԱՅՆ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ, ԹԵ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՎԵՐԱՑՆԵԼ ՀԻՄՆԱԴԻՐ ՈՒ ԱՅԼ ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ, ՊԱՐԼԱՄԵՆՏՆԵՐԸ, ԴՈՒՄԱՆԵՐԸ, ԶԵՄՍՏՎՈՆԵՐԸ ՅԵՎ ԱՅԼՆ

Վորովհետև բոլոր այս հիմնարկությունների մեջ իշխում են բուրժուազիայի ներկայացուցիչներն ու սրա գործակալները և այս հիմնարկությունների մեջ կապիտալիստների ու կալվածատերերի քաղաքականությունն են վարում ու առաջ տանում։

Իսկ Խորհրդային իշխանության ժամանակ, իշխանության որգաններ կազմելու և պետական իշխանության աշխատանքներին մասնակցել թույլ ե տրվում միայն աշխատավորներին ու նրանց, վորոնք ուրիշների աշխատանքը չեն շահագործում։ Յերբ հեղափոխության փորձը ցույց տվեց, վոր բուրժուազիային թույլ են տալիս իշխանության գործերին խառնվելը (որինակ յերբ կիրառում են այսպես կոչված ընդհանրական ընտրական իրավունքները), ապա այս հանգամանքը միայն ավելորդ խոչնդոտներ ե հարուցում և զորացնում ե բանվոր դասակարգի թշնամիների բանակը։

---

1) Այս գլխում կատարված են վորոշ հավելումներ Անդրկովկասի և Հայաստանի վերաբերյալ կամ բնագրի նյութերը հարմարեցված են մեր սահմանադրությանը։

Ծանոթ. Խմբագր.

3. Ի՞ՆՉ ԵՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Խորհուրդները աշխատավորական լայն մասսաների ներկայացուցչական կազմակերպություններն են — բանվորական, գյուղացիական ու կարմիր բանակային (նախկին զինվորների ու կազակների) պատգամավորների ժողովները, վորոնք պատմության մեջ չտեսնված պետության մի տիպի սաղմերը կամ հիմնական բջիջներն են, մի պետության, վոր կռվում ե շահագործողների դասակարգերի դեմ և պաշտպանում ե աշխատավոր մեծամասնության շահերը։

4. ՅԵ՞ՐԲ ՅԵՎ ՎՈ՞ՐՏԵՂ ԿԱԶՄՎԵՑԻՆ ԱՌԱՋԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Առաջին Խորհուրդները ծագումն առան դեռ 1905 թվին, հեղափոխության ժամանակ, գլխավորապես բանվորական պատգամավորների խորհուրդների ձևով։

Առաջին այդպիսի խորհուրդը Իվանովո-Վոզնեսենսկի խորհուրդն եր, վոր առաջ յեկավ Իվանովո-Վոզնեսենսկի պրոլետարիատի շատ ամիսներ տևող ընդհանուր գործադուլի ժամանակ, 1905 թվի ամռանը։

1905 թվին, հոկտեմբերից մինչև դեկտեմբեր տևող ժամանակաշրջանում, բանվորական պատգամավորների խորհուրդներ առաջացան մի շարք արդյունաբերական բանվորական կենտրոններում։ 1905 թվին ամենախոշոր խորհուրդը Պետերբուրգի (Լենինգրադ) խորհուրդն եր, վոր գոյություն ունեցավ 50 որ (հոկտեմբերի 13—դեկտեմբերի 3-ը), և վորն ամենից ավելի միտում արտահայտեց բանվոր դասակարգի իշխանության որգան լինելու։ Պետերբուրգի խորհուրդը, վոր ծագել եր գործադուլային շարժումից, իրեն ժամանակակից մյուս հեղափոխական կազմակերպություններից տարբերվելով՝ վոչ միայն կազմակերպում եր մասսաներին ու ղեկավարում սրանց քաղաքական ու տնտեսական ելույթները, այլ—վոր իրական հանգամանք ե խորհուրդների համար—բանվորական հեղափոխական կառավարության սաղմնային որգանն եր հանդիսանում։

Խորհուրդը մարմնացնում, իրականացնում եր իշխանությունը, վոր չափով վոր իշխանությունն իսկապես նրա ձեռքումն եր, խորհուրդը կռվում եր իշխանությունը նվաճելու համար, վոր չափով վոր իշխանությունը դեռևս մնում եր զինվորական-վոստիկանական միապետության ձեռքում։

1905 թվի Պետերբուրգի խորհուրդը միացնում եր գործարանների ու ֆաբրիկաների 200,000-ից ավելի բանվորներ։ Պատգամավորներն ընտրվում եյին, ինչպես և այժմ, ըստ ձեռնարկությունների։

5. Ի՞ՆՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՅԻՆ 1905 ԹՎԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԾՆՈՒՆԴ ԱՌԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

1905 թվին խորհուրդներն առաջացան բանվորական խոշորագույն կենտրոններում միայն և չկարողացան ընդգրկել գյուղացիությունն ու բանակը։

Այս բանի հետևանքով խորհուրդները բանվոր դասակարգի ապստամ-

րության օրգաններն ու նրա հեղափոխական պետական իշխանության սաղմերն էին միայն։ 1905 թվի հեղափոխության թուլությունը հնարավորություն չտվեց խորհուրդներին ցարիզմի ու բուրժուազիայի վրա հաղթանակ տանելու և պրոլետարական պետության օրգաններ դառնալու։

1905 թվի խորհուրդների պատմական անելիքները շարունակեցին 1917 թվի խորհուրդները։

6. ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋԱՑԱՆ ՈՒ ԻՆՉ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ 1917 ԹՎԻՆ, ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ ՅԵՂԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1917 թվին Խորհուրդներ կազմվեցին փետրվար—մարտի հեղափոխության հենց սկզբին և արագ ծավալվեցին ամբողջ Ռուսաստանում՝ ընդգրկելով ոչ միայն բանվորական, այլ և նմանապես զինվորական ու գյուղացիական ամենալայն խավերը։

Այսպիսով 1917 թվին, պրոլետարիատն ու նրա հետևից էլ գյուղացիությունը միանգամից ամուր բռնեցին խորհուրդներից, վորոնք հանդիսանում էին հեղափոխական կռվի արդեն պատրաստի կազմակերպություն, վոր փորձել էին դեռևս 1905 թվականին։ Խորհուրդների արագ զարգացման ու աճման հետևանքով, այլ և նրանց փոխադարձաբար շաղկապելու ու միացնելու նպատակով, 1917 թվի ապրիլին Պետրոգրադում (Լենինգրադ) գումարվեց բանվորական ու զինվորական պատգամավորների համառուսական խորհրդակցություն, իսկ հետո, 1917 թվին հունիսի սկզբին, հավաքվեց նույն խորհուրդների համառուսական առաջին համագումարը, վորը ընտրեց բանվորական ու զինվորական պատգամավորների խորհուրդների առաջին համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն (ВЦИК)։ Վերջինիս կողքին ու նրանից առանձին ծագումով առավ և գործում էր գյուղացիական պատգամավորների ՀԿԳԿ, վոր կազմվեց գյուղացիական պատգամավորների առաջին համառուսական համագումարում, վոր տեղի ունեցավ մայիսի կեսերին, դարձյալ Պետրոգրադում։

7. ԻՆՉ ԴԵՐ ԵՅԻՆ ԿԱՏԱՐՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ 1917 ԹՎԻՆ ՄԻՆՉԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

1917 թվի Խորհուրդների պատմության մեջ, մինչև հոկտեմբերյան հեղափոխությունը, անհրաժեշտ է տարբերել յերկու շրջան. առաջին՝ վոր շարունակվում է մինչև օգոստոսի վերջը, յերբ խորհուրդներում ու Գործկոմներում, այլ և թորհուրդների համագումարներում մեծամասնությունը պատկանում էր մանր բուրժուական, համաձայնողական կուսակցություններին—մենշևիկների ու ես-էռների ներկայացուցիչներին, ու յերկրորդ շրջան՝ սեպտեմբերից մինչև հոկտեմբեր, յերբ խորհուրդները մեկը մյուսի յետևից նվաճում է բոլշևիկների կուսակցությունը, և նրանք դառնում են բոլշևիկական։

Առաջին շրջանում մենշևիկների ու ես-էռների՝ խորհուրդներում տիրելու հետևանքով, խորհրդները չնայած վոր իրապես իրենց մեջ էին կենտրոնացրել յերկրի իրական իշխանությունը, և լիակատար հնարավորություն ունեյին ձևական ու բացահայտ կերպով իշխանության հայտարարելու իրենց,

իրականության մեջ, սակայն, մենշևիկների ու ես-էռների կուսակցությունների ազդեցությամբ, այս իշխանությունը կամովին հանձնում էին բուրժուազիային ու նրա ժամանակավոր կառավարությանը և համաձայնություն էին կնքում վերջինս պաշտպանելու՝ իրենց գործունեությունը սահմանափակելով այս կառավարության իմպերիալիստական քաղաքականության վրա (Կերենսկու հարձակումը 1917 թվի հունիսին) այլ և հակահեղափոխական քաղաքականության վրա (բացահայտ կռիվ գյուղացիության ու բանվորության դեմ) առանձնելով վերահսկողների ու փաստաթղթերի դեր։

Այս շրջանը յերկիշխանության շրջան էր, հյուսումն ու միավորությունը յերկու դիկտատուրաների—բուրժուազիայի դիկտատուրայի (որի գլուխ էր անցել ժամանակավոր կառավարությունը) և բանվորության ու գյուղացիության դիկտատուրայի (վորի գլուխ էին անցել խորհուրդները), ընդ վորում մենշևիկներն ու ես-էռները ժամանակավոր կառավարությունը պաշտպանելու իրենց քաղաքականությամբ, քանի գնում այնքան ավելի էին խորհուրդները զրկում վորևէ անկախ ու ակտիվ դերից ինչպես ընդհանուր քաղաքականության ասպարեզում, այնպես և այն ժամանակվա իրականության ընթացիկ, հրատապ խնդիրները վճռելու ժամանակ (խաղաղության ու հողի խնդիրները, կռիվ գործազրկության դեմ, թանգության դեմ, ժողովրդական տնտեսության քայքայման դեմ և այլն)։

Այս բոլորի հետևանքով խորհուրդներն այն ժամանակ, յերբ նրանց մեջ իշխում էին մենշևիկներն ու ես-էռները, դադարեցին ապստամբության օրգաններ լինելուց, և օրեցօր ավելի էին արտահայտում իրենց քաղաքական անզորությունը, հակահեղափոխական բուրժուազիայի ու Կերենսկու ժամանակավոր կոալիցիոն կառավարության դիկտատուրայի առաջ զինաթափ լինելը և իրենց անընդունակությունը վորևէ մի յելք վորոնելու յերկրում զարգացող դասակարգային հակասությունների ու այն ցանցերի միջից, վոր փռում էր Ռուսաստանի աշխատավորների առաջ համաշխարհային իմպերիալիզմը։

Բոլորովին այլ դեր սկսեցին կատարել խորհուրդները 1917 թվի սեպտեմբերից սկսած, յերբ մասսաների արագ ու վճռական հեղափոխականացման ազդեցությամբ խորհրդներն սկսեցին վերընտրվել և մեկ-մեկի յետևից մեծ մասամբ դարձան բոլշևիկական։

Օգոստոսի 31-ին առաջին անգամ Պետրոգրադի խորհուրդի մեջ անցնում է «ամբողջ իշխանությունը խորհուրդներին» բոլշևիկյան բանաձևն ու լոզունգը։ Սեպտեմբերին նույնը տեղի յե ունենում Մոսկվայում և այլ խոշոր խորհուրդներում։ Տեղական խորհուրդների՝ բոլշևիկների կուսակցության ազդեցության տակ ընկնելը նորից խորհուրդները դարձնում է հեղափոխության ակտիվ կենտրոններ, վորոնց գործունեությունն ուղղված էր ժամանակավոր կառավարության տապալումը բացահայտ կերպով կանխապատրաստելու նպատակին, այլև պրոլետարիատի ու ամենաչքավոր գյուղացիության դիկտատուրան իրականացնելու նպատակին։

8. ՅԵ՞ՐԲ ՀԱՅՏԱՐԱՐՎԵՑ ՈՒ ՍԿՍԵՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Խորհրդային իշխանությունը Ռուսաստանում ծնունդ առավ 1917 թվին 25/X—7/XI հոկտեմբերյան հաղթական հեղափոխության արդյունքից և հայտարարվեց բանվորական ու զինվորական պատգամավորների խորհրդների համառուսական 2-րդ համագումարում (1917 թվի հոկտեմբերի 25-26-ին)։

Հոկտեմբերի 25-ին հաջող ապստամբության հետևանքով, վոր ղեկավարում եր Պետրոգրադի խորհուրդի ռազմահեղափոխական կոմիտեն, Կերենսկու բուրժուական ժամանակավոր կառավարությունը լուծարքի յենթարկվեց։ Հետևյալ որը խորհուրդների 2-րդ համագումարի վորոշման համաձայն, ՌԿԿ (բոլշևիկների) առաջարկով հայտարարվեց, վոր ամբողջ իշխանությունն անցնում ե խորհուրդների ձեռքը, և ընտրվեց բանվորագյուղացիական առաջին խորհրդային կառավարություն—Ժողովրդական Կոմիսարների խորհուրդ—ընկեր Լենինի գլխավորությամբ։

Հենց այդ ժամանակ ել ընտրվեց յերկրորդ կոչաշրջանի (созыв) Հա. ԿԳԿ իբրև Խորհրդային Իշխանության բարձրագույն որգան Ռուսաստանում, Խորհուրդների համառուսական համագումարների միջև ընկած ժամանակաշրջանների համար։

9. Ի՞ՆՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ ՀԵ՛ՆՑ ԱՌԱՋԻՆ ՈՐԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Խորհրդային իշխանությունը հրատարակեց և կյանքում իրականացրեց խաղաղության ու հողի մասին յեղած դեկրետները (յերկու դեկրետն ել ընդունել եր խորհրդների 2-րդ համագումարը), այլ և այն դեկրետը, վոր սահմանում ե բանվորների վերահսկողությունը՝ արդյունաբերական, առևտրային ու այլ հիմնարկությունների վրա։ Խաղաղության դեկրետով և ցարական ու սոցիալ-համաձայնողական կառավարությունների բոլոր գաղտնի դաշնագրերը հրատարակելով՝ Խորհրդային իշխանությունը Ռուսաստանը հանեց քառամյա իմպերիալիստական սպանդանոցից և բռնեց ակտիվ կռվի ճանապարհը՝ հանուն բոլոր ազգերի միջև լինելիք խաղաղության և հանուն բոլոր ազգերի՝ կապիտալի լծից ազատվելու գործի։

Հողի դեկրետով Խորհրդային իշխանությունը հոգուտ աշխատավոր գյուղացիության լուծեց սրա դարավոր կռիվը կալվածատերերի դեմ և հենց սրանով ել ամենից ամուր կերպով պրոլետարական հեղափոխության հետ շաղկապեց ամենաչքավոր ու միջակ գյուղացիությունը։

Բանվորական վերահսկողության դեկրետով Խորհրդային իշխանությունը առաջին ու վճռական քայլն արեց, վոր տանում եր դեպի բուրժուազիայի եքսպրոպրիացիան, վոր և շուտով տեղի ունեցավ և վորով նրանից բռնագրավվեցին ֆաբրիկաները, գործարանները, հանքերն ու մյուս բոլոր խոշոր ձեռնարկություններն ու արտադրության միջոցները, և այն բոլորը հանձնվեցին Խորհրդային պետության ձեռքը։

ՈՒՍՄՈՒՆՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

10. Ի՞ՆՉ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային իշխանությունը պատմության մեջ պետության մի նոր տիպ ու ապարատ ե, վոր ամենից լավ ե համապատասխանում պրոլետարիատի դիկտատուրայի շահերին։ Այս նոր պետական իշխանության կազմակերպչական հիմքը կազմում են խորհուրդներն ու սրանց համագումարները և սրանց շուրջը խմբված ու միացած բանվորների, գյուղացիների, կարմիր բանակայինների, ծառայողների և այլն ամենալայն աշխատավորական ու ուրիշների աշխատանքը չշահագործող մասսաները։

Դասակարգային տեսակետից Խորհրդային իշխանությունը բանվորության ու գյուղացիության մի այնպիսի դաշինք ե, վորի ժամանակ քաղաքական ղեկավարությունը պատկանում ե պրոլետարիատին ու սրա կոմունիստական կուսակցությանը, իսկ գյուղացիությունը յուր տնտեսական շահերի ամենաապահով պաշտպանությունն ե գտնում։ Խորհրդային իշխանության եյությունն ու սրա նորությունը հենց այն ե, վոր սրա ժամանակ, պատմության մեջ առաջին անգամ, պետության ղեկավարման գործին հաստատ ու անփոփոխ և այն ել վճռական մասնակցություն ունենալու յեն հրավիրվում այն դասակարգերն ու մասսաները միայն, վորոնց կապիտալիզմի ժամանակ ճընշում ե կապիտալը և վորոնց նույնիսկ ամենադեմոկրատական բուրժուական հանրապետությունների մեջ հազարավոր հնարներով ու մեքենայություններով հեռացնում են քաղաքական կյանքին մասնակցելուց և այն զանազան իրավունքներից և ազատություններից ոգտվելուց, վորոնք շարված են թղթի վրա։

11. Ի՞ՆՉ ՆՊԱՏԱԿՆԵՐ ՈՒՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային իշխանության նպատակները նույն են՝ ինչ վոր պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական խնդիրներն են։ Ուրիշ խոսքով խորհրդային իշխանությունն ստեղծվում և գոյություն ե ունենում բուրժուազիայի ու սրա գործակալների դիմադրությունն արագությամբ ճնշելու համար, մանր սեփականատիրական մասսաները և առաջին հերթին միջակ ու ամենաչքավոր գյուղացիությունը պրոլետարիատի կողմը գրավելու համար, այլ և բուրժուական-կապիտալիստական հասարակակարգը վոչնչացնելու ու սրա ավերակների վրա սոցիալիստական սկզբունքներով խոշոր մեքենային (машинной) արտադրությունը կազմակերպելու համար։

Ընդ սմին, այս բոլոր խնդիրները պետք ե իրականացվեն համաշխարհային մասշտաբով, վորովհետև, յերբ սրանք միայն մի վորևե յերկրում իրականանան, մինչդեռ մյուս պետությունների մեջ բուրժուազիան ու կապիտալն են իշխում, ապա այս հանգամանքը առանձին խորհրդային պետությանը վոչ մի կերպ թույլ չի տալ յուր սոցիալիստական շինարարությունը զարգացնելու և նույնիսկ ապահով լինելու, վոր յուր գոյությունն ամուր ե մնալու։

Խորհրդային իշխանության նպատակները այսպես են արտահայտված **ՌՍՖՍՀ** սահմանադրության մեջ.

«Իրեն նպատակ դնելով ամեն շահագործման վոչնչացումը, վոր անում

և մարդը մարդու ճնշումից, հասարակության դասակարգերի բաժանվելու չեղյալ վերացումը, շահագործողների անխնա ճնշումը, հասարակության սոցիալիստական կազմակերպության հաստատումը և սոցիալիզմի հաղթանակը բոլոր յերկրներում, Համառուսական III համագումարը վորոշել է....

(Տեսե՛ք I աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքի դեկլարացիան)։

Նույն բանը գտնում ենք նաև II բաժնում ՍՍՀՄ սահմանադրության հիմնական թեզիսների մասին.

Հիմնական խնդիրը ՍՍՀՄ սահմանադրության, վոր նկատի է առնված ներկա անցման շրջանի համար, այն է, վոր պետք է քաղաքային ու գյուղական պրոլետարիատի ու չքավորագույն գյուղացիության դիկտատուրա հաստատվի հզորագույն համառուսական Սովետական իշխանության կերպարանքով՝ բուրժուազիային ճնշելու, մարդու ձեռքով մարդու շահագործումը վերացնելու և սոցիալիզմը հաստատելու համար, վորի ժամանակ վոչ դասակարգերի բաժանում կլինի և վոչ էլ պետական իշխանություն»։

12. Ի՞ՆՉՈՒ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՁԵՎԸ ԱՄԵՆԻՑ ԼԱՎ Ե ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՇԱՀԵՐԻՆ

Այն պատճառով, վոր խորհուրդների միջոցով, յերբ նրանց մեջ լիովին բացակայում են ամեն տեսակի ու բոլոր շահագործողները, հեղափոխական շարժման մեջ են քաշվում և հեղափոխական պրոլետարիատի հետ սերտ միանում աշխատավորների ամենալայն մասսաները, վորոնք առաջին անգամ, ի դեմս խորհուրդների, ձեռք են բերում մի զորեղ՝ իրենց շահերի համար կռվելու կապիտալիստների ու կալվածատերերի դեմ։

13 Ի՞ՆՉՈՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ Ե ԿՈՉՎՈՒՄ

Այն պատճառով, վոր Խորհրդային իշխանությունը պաշտպանում է բանվոր դասակարգի ու նրա հետ ընթացող աշխատավոր, միջակ ու չքավորագույն գյուղացիության շահերը, այլ և այն պատճառով, վոր բանվորները չքավորագույն ու միջակ գյուղացիության հետ միասին Խորհրդային իշխանության առաջնագույն ու ամենակարևոր նեցուկն են կազմում։

Աշխատավորության միացած խավերն շատ ավելի դանդաղ են բռնում բուրժուազիայի տիրապետության դեմ կռվելու ուղին և մինչև բուրժուազիային վերջնականապես հաղթելը, յերերումներ ու կրավորականություն են հանդես բերում։

14. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ի՞ՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ե ԱՄՈՒՐ ՎԵՐԱՊԱՀԵԼ ՅԵՎ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Խորհրդային իշխանությունը յուր պետական կազմության ընթացքում ընդունում է, վոր միայն աշխատավորներն ունեն ինչպես իշխանության իրավունք, այնպես և մյուս զանազան իրավունքներն ու ազատությունները, և ձեռք է առնում բոլոր միջոցները, վոր բանվորական ու գյուղացիական

լայն մասսաները իրապես կարողանան օգտվել այս իրավունքներից ու ազատություններից։

Այսպիսի իրավունքներից ու ազատություններից ամենակարևորներն սրանք են. յուր կարծիքները արտահայտելու ազատությունը (ՍՍՀՄ սահմանադրության, հոդ. 14), ժողովների ազատություն (ՍՍՀՄ սահմ. հոդ. 15), կազմակերպությունների ազատություն (ՍՍՀՄ սահմ. հոդ. 16.), գիտություն ձեռք բերելու հնարավորություն (ՍՍՀՄ սահմ. հոդ. 17), զենք ունենալու և ՍՍՀՄ զենքով պաշտպանելու իրավունք (ՍՍՀՄ սահմ. հոդ. 19), բոլոր ազգությունների ու ցեղերի պատկանող մարդկանց հավասարություն, քաղաքացիական իրավունք (ՍՍՀՄ սահմ. հոդ. 20—22) և ապաստան այն օտարերկրացիների համար, վորոնց հալածում է բուրժուազիան՝ քաղաքական հանցանքների համար (ՍՍՀՄ սահմ. հոդ. 21), այլ և խղճի ազատություն և հակակրոնական ու կրոնական պրոպագանդայի ազատություն ՍՍՀՄ սահմ. հոդ. 23).

15. Ի՞ՆՉՊԵՍ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԵՆՑ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Բոլոր կապիտալիստական պետությունների մեջ մամուլը կապիտալի արտոնությունն է և մեկն է այն ամենազոր միջոցներից, վորով աշխատավոր մասսաների գիտակցությունը համակողմանի (всесторонный) ու մշտապես թունավորելու միջոցով պահպանվում ու պաշտպանվում է բուրժուազիայի տիրապետությունը։

Բուրժուական հասարակության մեջ մամուլը կապիտալիստական ձեռնարկություն է, վոր պահանջում է միլիոնավոր միջոցներ, վորոնցից զուրկ են բանվորական կազմակերպությունները։

Ահա թե ինչու այն յերկրներում, վորտեղ իշխում է բուրժուազիան, մամուլը, մանավանդ թերթերը, կազմում են կապիտալիստների ու կալվածատեր դասակարգի իրական մենաշնորհը (մոնոպոլիան)։ Բացի սրանից՝ թեև թղթի վրա յերբեմն հայտարարված էլ է մամուլի ազատություն, բայց իրապես վոչ մի տեղ չկա այդպիսի ազատություն կոմմունիստական հրատարակչությունների համար, վորոնք շարունակ յենթակա յեն ամեն տեսակի հալածանքների ու արգելումների։

Նրանցից տարբերվելով առաջին անգամ Խորհրդային իշխանությունն է վոչնչացնում մամուլի կախումը կապիտալից նրանով, վոր խլում է բուրժուազիայից՝ հօգուտ խորհրդային պետության՝ տպարանները, թղթի պահեստները և այլն, և բանվոր դասակարգին ու գյուղացիական աղքատությանն է տրամադրում թերթեր, բրոշյուրներ, գրքեր ու մամուլի այլ արտադրանքները (произведение) հրատարակելու համար անհրաժեշտ բոլոր նյութական միջոցներն ու այլ հնարավորություններ, և ամեն կերպ աջակցում է նրանց տարածմանը։ Ընդհակառակն բուրժուական հրատարակությունները, յեթե հրապարակ թողնվում են էլ, ապա այդ լինում է Խորհրդային իշխանության թույլտվությամբ ու նրա վերահսկողության ներքո։

16. Ի՞ՆՉՊԵՍ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուական պետությունների մեջ ժողովների ու յերթերի (шествие) *ազատությունը թույլատրվում ե սովորաբար զանազան սահմանափակումներով և իրապես գոյություն ունի դարձյալ կապիտալիստների ու կալվածատերերի համար միայն, վորոնք իրենք իրենց թույլատրում են ամեն տեսակի ժողովներ ու յերթեր, այն ինչ բանվորներն ու հեղափոխական կազմակերպությունների ժողովներն ու յերթերը, վորոնք վտանգավոր են բուրժուազիայի համար, սովորաբար արգելվում են կամ ցրվում: Բացի սրանից, կապիտալիստական պետությունների մեջ ժողովների շենքերը բուրժուազիայի սեփականությունն են, և յեթե բուրժուազիան այս շենքերը տրամադրում ե բանվորներին ոգտվելու, ապա այս անում ե մեծ գումարներ առնելուց հետո և այն էլ տրամադրում ե այն ժամանակ միայն, յերբ յերկյուղ չունի այն ժողովներից:*

Ընդհակառակը, Խորհրդային իշխանությունն իրապես ապահովելով աշխատավորների համար ժողովներ, միտինգներ և այլն կազմելու ազատությունը, բանվոր դասակարգին ու գյուղացիական աղքատանուն ե տրամադրում բուրժուազիայից խլած բոլոր լավագույն շենքերը՝ ամբողջ իր սարքով ու կարգով: Իսկ բուրժուազիային ժողովներ կամ բոլորովին արգելում են, կամ թողնում են գումարել շատ սահմանափակ շրջաններում միայն, խորհրդային իշխանության թույլտվությամբ:

17. Ի՞ՆՉՊԵՍ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուական պետությունների մեջ միությունների ու ընկերությունների լիակատար ազատություն միայն բուրժուազիայի համար գոյություն ունի և այս էլ այն չափով, ինչ չափով այս վտանգավոր չե կապիտալիստների իշխող դասակարգի համար:

Այստեղից էլ ծագում ե բանվորական կազմակերպություններ կազմելու ու սրանց գործունեյության ամեն տեսակի սահմանափակումն ու նեղություններ տալը, այլև բուրժուազիայի համար վտանգավոր կուսակցությունների, ընկերությունների և այլն ուղղակի հետապնդումն ու արգելումը:

Ընդհակառակը, խորհրդային իշխանությունը բանվորների ու գյուղացիների ամենայն կազմակերպությունները յուր գլխավոր նեցուկն ե համարում, ուստի և սահմանափակելով կամ բոլորովին արգելելով բուրժուազիայի ընկերություններն ու այլ միավորությունները, վոչ միայն աշխատավորների ու այլ կազմակերպությունների ազատություն ե հայտարարում, այլ և նրանց միավորություններին ու աշխատանքներին ամեն տեսակի — նյութական ու այլ — աջակցություններ ե ցույց տալիս:

Ընդ սմին, ամենակարևորն այն ե, վոր վերացվում ե ունեվոր դասակարգերի քաղաքական ու տնտեսական իշխանությունը, վոր գլխավոր արգելքն եր աշխատավորների ազատության ու միավորության համար, այլ և վոր ամենայն աշխատավորական մասսաները գործի յեն կոչվում խորհուրդների մեջ, խորհուրդների հանրապետությունների պետական իշխանության ուղղակի մասնակցություն ունենալու համար:

Խորհրդային հանրապետությունների արհեստակցական միությունների լայն զարգացումը, միություններ՝ վորոնք միավորում են քաղաքների ու գյուղերի պրոլետարիատի ճնշող մեծամասնությունը և վորոնք Խորհրդային պետության հատուկ ուշադրությունն են վայելում, նույնպես ցուցանիշ ե այն բանի, թե ինչ նշանակություն ունի խորհրդային իշխանությունն աշխատավորների կազմակերպությունների գործի համար:

18. ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ Ի՞ՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ Ե ԱՊԱՀՈՎՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Բոլոր կապիտալիստական պետությունների մեջ ուսուցումն ու դաստիարակությունը բուրժուազիայի իրական մոնոպոլիան ե և գործիք ե սրա ձեռքին՝ բանվոր դասակարգը հոգեպես ստրկացնելու և կապիտալի իշխանությունն ամրապնդելու համար:

Սակավատեր (малоимущий) *մասսաների մեծամասնության համար ուսուցումը, մանավանդ միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում, միանգամայն անմատչելի յե: Բուրժուական յերկրում գիտությունը նույնպես կապիտալի ստրկուհին ու աղախինն ե, վոր ոգնում ե նրան՝ շահագործելու և ստրկացնելու աշխատավոր մասսաները:*

Խորհրդային իշխանությունն, վոր չափազանց շահագրգռված ե, վոր կռիվ մղվի ժողովրդական տգիտության դեմ և վոր աշխատավորների ամենալայն մասսաները առավելագույն չափերով մտավորապես զարգանան ու բարձրանան, իրեն նպատակ ե դնում բանվորներին ու չքավորագույն գյուղացիությանը լիակատար, համակողմանի ու ձրի կրթություն մատակարարել (սահմանադրություն 17-րդ հոդված):

Յեվ Խորհրդային իշխանությունն այս ապացուցել ե նրանով, վոր առաջին հերթին կրթություն ե մատակարարել բանվորագյուղացիական չքավորագույն մասսաներին, վորոնք պատմության մեջ առաջին անգամ գերադասություն են ստանում բուրժուական ու այլ բոլոր մյուս տարրերի հանդեպ և լայնորեն մուտք են ունենում հանրապետության բոլոր ուսումնական հիմնարկությունները, ի թիվս վորոնց և բարձրագույն դպրոցները (բանֆակների և այլն միջոցով):

Խորհրդային հանրապետության մեջ վիթխարի չափերով ծավալվել ե նաև կրթական աշխատանքը կարմիր բանակում, վորն ընդգրկում ե շատ ու շատ միլիոն մարդիկ, այլև արտադպրոցական հիմնարկների լայնատարած ցանցը քաղաքներում ու գյուղերում:

19. Ի՞ՆՉ Ե ԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԴԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Բուրժուական-կալվածատիրական պետություններից վոչ մեկում փոքրամասնություն կազմող ազգություններն իշխող ազգության կամ ցեղի հետ համահավասար իրավունքներ չունեն: Ամենուրեք կախյալ ազգությունները ճնշվում, իրավունքների սահմանափակում են ունենում և բռնի կեր-

պով պահվում այս կամ այն իմպերիալիստական պետության իշխանության ներքո: Բացի սրանից, բուրժուական պետությունների մեջ ամենուրեք իշխող դասակարգերն ու ազգերը զբաղվում են նրանով, որ ազգերից ու ցեղերից մի քանիսին լարում ու քըս-քըս են տալիս մյուսների վրա՝ ազգային ջարդեր ու հալածանքներ կազմակերպելով, այլև ազգային թշնամությունն ու ամբարտավանությունը բորբոքելով և ուռցնելով: Այսպես, օրինակ՝ այսպես կոչված դեմոկրատական Անգլիան ամբողջ աշխարհի աչքի առջև բռնաբարում, տրորում է հարևան Իռլանդային, որ կռվում է անկախության համար, նույն Անգլիան շահագործում է և ճնշում յուր բազմաթիվ գաղութները (Հնդկաստան և այլն):

Ռուսաստանում 1917 թվի փետրվարյան հեղափոխությունից հետո՝ ռուսական բուրժուազիայի հայրենամոլ ժամանակավոր կառավարությունը մենշևիկների ու ես-երների օժանդակությամբ կռվում էր Ֆինլանդիայի, Ուկրայնայի և ուրիշների անկախության դեմ:

Այս բոլորի հակառակ՝ Խորհրդային իշխանությունը, յուր ծնունդ առնելուց անմիջապես հետո, հանդես յեկավ ամեն տեսակի ազգային ու ցեղային ճնշումն ու անհավասարությունն ամենից արմատական կերպով վոչընչացնելու ծրագրով: Խորհրդային իշխանության ամբողջ քաղաքականության այս ծրագրի հիմքը կազմում եյին հետևյալ սկզբունքները.

1) Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հավասարությունն ու գերագույն իրավունքները:

2) Սրանց իրավունքը ազատաբար ինքնորոշվելու նույնիսկ մինչև անջատվելն ու ինքնուրույն ու անկախ պետություն կազմելը:

3) Ազգային ու ազգային-կրոնական բոլոր ու ամեն տեսակի արտոնությունների, սահմանափակումների ու անհավասարությունների վերացումը:

4) Հանրակողմանի ոգնություն բոլոր հետամնաց ազգերին՝ իրենց տնտեսական ու կուլտուրական վերածնության ու շինարարության գործում:

5) Իրավասությունն ու ազատ զարգացում բոլոր ազգային փոքրամասնությունների, վորոնք ապրում են Խորհրդային տերիտորիայի վրա:

20. ԻՆՉ Է ԱՐԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՂՃԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Բուրժուական-կալվածատիրական պետությունների մեջ կրոնն ու յեկեղեցին պետության ձեռքում մի հզոր գործիք են՝ կրոնական հաշիշի ու յեկեղեցական կապանքների միջոցով ճնշված մասսաներին հոգևորապես ստրկացնելով՝ նրանց վրա իշխելու համար: Այս նպատակով պետական իշխանությունն ուղղակի կամ անուղղակի նեցուկ է հանդիսանում, օժանդակում է կրոնին ու յեկեղեցուն՝ քաղաքացիներին հարկադրելով, վոր սրանց դիմեն՝ մահերի, ծնունդների, ամուսնությունների և այլն դեպքերը գրանցելիս այլև յեկեղեցուն իրավունք տալով սեփական դպրոցներն ունենալու, կամ թույլ տալով, վոր աշխարհիկ դպրոցներում կրոնական առարկաներ ավանդվեն՝ հետապնդելով կամ դժվարացնելով ազատամտության ու անաստվածության պրոպագանդան և այլն:

Այս բոլորից տարբերվելով՝ Խորհրդային իշխանությունը շահագրգռված լինելով այն բանում, վոր աշխատավոր մասսաները հոգևորապես լիովին ազատագրվեն ամեն տեսակի սնահավատություններից ու նախապաշարումներից, անջատեց յեկեղեցին պետությունից և դպրոցը՝ յեկեղեցուց ու կրոնից, և ճանաչեց բոլոր քաղաքացիների իրավունքը խղճի անսահմանափակ ազատությունը և հակակրոնական ու կրոնական պրոպագանդայի իրավունքը:

21. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ Ո՞Վ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ

Բուրժուական պետությունների մեջ, նույնիսկ սրանցից ամենադեմոկրատականների մեջ, սովորաբար ընտրական իրավունքի մի շարք սահմանափակումներ կան (սովորաբար ընտրության չեն մասնակցում յերիտասարդությունը, կանայք, բանակը, նստակյաց չեղողները և այլն), այլև հիշյալ յերկրներում գոյություն ունի այս կամ այն ձևով կամ աստիճանով ընտրական ցենզ հոգուտ հարուստների:

Ընդհակառակը, Խորհրդային իշխանության ժամանակ, բուրժուազիան ընտրական վոչ մի իրավունք չունի: Կապիտալիստական պետության գույքային ցենզին խորհրդային հասարակարգը հակադրում է աշխատանքի ու աղքատանու ցենզը, արտադրողական ու հանրօգուտ աշխատանքի անգույքային (безимущественный) ցենզը:

Խորհրդային պետության մեջ ընտրելու իրավունք (ակտիվ ընտրելու իրավունք) ու խորհուրդների մեջ ընտրվելու իրավունք (պասսիվ ընտրական իրավունք) հավասարապես ունեն յերկու սեռի բոլոր քաղաքացիները՝ անկախ դավանությունից, ազգությունից, նստակյացությունից և այլն, վորոնք 18 տարեկանից պակաս չեն և վորոնք ապրուստի միջոց հայթայթում են արտադրողական ու հանրօգուտ աշխատանքով, այլև այն անձինք, վորոնք առաջինների մոտ զբաղվում են տնայինների տնտեսությամբ, վորը արտադրողական աշխատանքի հնարավորությունն է ապահովում: Ընտրվող ու ընտրող քաղաքացիների շարքին պատկանում են՝ բոլոր տեսակի ու կատեգորիաների բանվորներն ու ծառայողները, գյուղացիք ու հողագործ կազակները, վորոնք վաստակ կորզելու նպատակով վարձու աշխատանք չեն բանեցնում, այլև խորհրդային բանակի ու նավատորմղի զինվորները:

Ընտրել ու ընտրվել չեն կարող, թեկուզ և մտնելիս լինի վերոհիշյալ խմբակներից մեկն ու մեկի մեջ, նախ՝ այն բոլոր անհատները, վորոնք վաստակ կորզելու նպատակով վարձու աշխատանք են բանեցնում, յերկրորդ՝ այն անհատները, վորոնք ապրում են անաշխատ հասույթով, ինչպիսիք են, օրինակ՝ կապիտալի տոկոսները, ձեռնարկությունների հասույթները, կալվածքներից ստացված գումարները և այլն. յերրորդ՝ մասնավոր առևտրականները, առևտրային ու վաճառականական միջնորդները, չորրորդ՝ վարդապետներն ու յեկեղեցիների կրոնական պաշտամունքների այլ հոգևոր ծառայողները, հինգերորդ՝ նախկին վոստիկանության, ժանդարմների հատուկ կորպուսի ծառայողներն ու գործակալները, այլ և Ռուսաստանում թագավորած տան անդամները:

Խորհրդային պետության մեջ այսպիսի ընտրական իրավունքի գործադրության հետևանքով շահագործողները և բոլոր ունևորները չեն կարող տեղ

ունենալ խորհրդային իշխանության օրգաններից և վոչ մեկի մեջ, և վերջինս — իշխանությունը — ամբողջովին ու բացառապես պետք է պատկանի աշխատավոր մասսաներին ու նրանց լիազոր օրգաններին՝ խորհուրդներին և խորհուրդների համագումարներին։

22. Ի՞ՆՉ ԵՐԿՐՆԵՐԻ ՈՒ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ Է ՏԱՐԱԾՎՈՒՄ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային իշխանությունը, վոր կենտրոնական Ռուսաստանում բռնկվել եր 1917 թվի նոյեմբերից, հետագայում տարածվում է շրջակա տերրիտորիաների ու ժողովուրդների վրա, սակայն տեսնում ենք, վոր 1922 թվի վերջերին է միայն, վոր Խորհրդային իշխանությունը հաստատուն հաղթանակ է տանում նախկին Ռուսական կայսրության համարյա ամբողջ տարածության վրա։ 1919 թվին Խորհրդային իշխանության հաստատելու փորձերը Հունգարիայում, Բավարիայում, Ֆինլանդիայում ու Լատվիայում, կարճատև կռվից հետո անհաջող յեղան՝ շնորհիվ այն հանգամանքի, վոր այս յերկիրների բանվոր դասակարգը մեկուսացած եր և սոցիալ դեմոկրատները դավաճանեցին նրան։

Ներկայումս, Խորհրդային իշխանությունը տարածվում է վեց խոշոր հանրապետությունների վրա (ՌՍՖԽՀ — Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն, ՈւՍԽՀ — Ուկրաինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, ԱՍՖԽՀ — Անդրկովկասի Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետություն, վորը կազմված է խորհրդային Վրաստանից, խորհրդային Հայաստանից և խորհրդային Ադրբեջանից, ԲՍԽՀ — Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, ԹՍԽՀ — Թուրքեստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն և ՈւզՍԽՀ — Ուզբեկստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։

1922 թվի դեկտեմբերի 30-ից այս բոլոր չորս հանրապետությունները միացան ու կազմեցին միասնական խորհրդային միութենական պետություն «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն» կամ կրճատ՝ ԽՍՀՄ։

Բացի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների այս Միությունից, կան խորհրդային ժողովրդական (վոչ սոցիալիստական) հանրապետություններ ել — Խորեզմն (Նախկին Խիվան) ու Բուխարան, վորոնք Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների հետ բարեկամական հարաբերությունների մեջ են և նրանց հետ կապված են դաշնագրերով։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

23. Ի՞ՆՉ Է ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սահմանադրությունը պետության հիմնական որենքներն են, վորոնք խոսում են այն մասին, թե ում է պատկանում իշխանությունը, ինչպես է կազմակերպված այն և ինչ գլխավոր նպատակներ ու խնդիրներ է դնում իր առաջ այս իշխանությունը։

Յուրաքանչյուր պետության մեջ վիթխարի քանակությամբ բազմազան որենքներ կան, վորոնք վերաբերվում են ամենաբազմազան ասպարեզների

ու խնդիրների։ Սակայն այս որենքներից նրանք, վորոնք խոսում են այն մասին, թե ում ձեռքումն է գտնվում իշխանությունը, ինչպես է կազմակերպված այն և ինչ նպատակներ ու խնդիրներ է հետապնդում, ամենակարևոր որենքներն են, վորովհետև այս կամ այն պետության որենքների ու ամբողջ քաղաքականությունը կախումն ունի այն բանից, թե ով է կանգնած իշխանության գլուխ — բանվորները թե կապիտալիստները։ Ահա թե ինչու այս ամենակարևոր որենքները կոչվում են ամենահիմնական, այսինքն՝ ամենագլխավոր որենքներ և նրանք ել հենց կազմում են սահմանադրությունը։

Այս որենքները սովորաբար այնպես արագ ու հաճախ չեն փոխվում ինչպես մյուսները։ Սահմանադրության փոփոխությունները տեղի չեն ունենում կամ պետական իշխանության ամենաբարձրագույն օրգանի հատուկ վորոշման համաձայն, կամ հեղաշրջման հետևանքով։

Յուրաքանչյուր սահմանադրություն արտահայտում է դասակարգային ուժերի այն փոխհարաբերությունը, վորը պետության մեջ վորոշ րոպեյում սահմանված է կամ գոյություն ունի. և նույն սահմանադրությունը պետական օրգանների մեջ ամրապնդում է դասակարգերից այն մեկի տիրապետությունը, վորը ուժեղագույնն է հանդիսանում։

Այսպիսով սահմանադրությունն, իբրև դասակարգային կռվի արդյունք՝ կազմում են այն որենքները, վորոնք արտահայտում են տվյալ պետության մեջ վորոշ դասակարգի տիրապետության կազմակերպությունը։

24. Ի՞ՆՉ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Խորհրդային սահմանադրությունը խորհրդային պետության կազմության հիմնական որենքներն են, վորոնք ցույց են տալիս, թե ինչ նպատակներ ու խնդիրներ ունի Խորհրդային իշխանությունը։

25. ՌՍՖԽՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ Ո՞Ր ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄՆ Է ԸՆԴՈՒՆՎԵԼ ՅԵՎ Ե՞ՐԲ

ՌՍՖԽՀ սահմանադրությունը հաստատվել է Խորհուրդների V-րդ համառուսական համագումարում, 1918 թվի հուլիսի 10-ին, իսկ նրա առաջին բաժինը — «Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիան» ընդունվել է խորհուրդների III համառուսական համագումարում, 1918 թվի հունվարին։ ՌՍՖԽՀ խորհուրդների VII, VIII, IX ու X համագումարները այլև ԽՍՀ Միության խորհուրդների I համագումարը մի շարք փոփոխություններ ու լրացումներ են մտցրել հիմնական որենքների մեջ, վորոնք շարադրված են խորհուրդների V համագումարի սահմանադրության մեջ։

26. ՌՍՖԽՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ Ի՞ՆՉ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍԵՐԻՑ ԿԱՄ ԲԱԺԻՆՆԵՐԻՑ Է ԿԱԶՄՎԱԾ

ՌՍՖԽՀ սահմանադրությունը կազմված է ներածությունից ու վեց գլխավոր մասերից կամ բաժիններից. բաժին I — աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքի դեկլարացիան. բաժին II — ՌՍՖԽՀ սահմանա-

գրության ընդհանուր թեզիսները, բաժին III—Խորհրդային իշխանության կոնստրուկցիան (կազմությունը), բաժին IV ակտիվ ու պասիվ ընտրական իրավունք, բաժին V—բյուջետային իրավունք ու բաժին VI—ՌՍՖԽՀ զինանշանն ու դրոշը։

27. ՎՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՅՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ, ՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՄՏՑՐԵԼ ԵՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ V ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս փոփոխություններն ու լրացումները վերաբերում են գլխավորապես IV բաժնին, վոր ճառում է Խորհրդային իշխանության կազմակերպության մասին։ Այս փոփոխությունների ու լրացումների էությունն այն է, վոր մի կողմից սահմանվում ու ձեվավորվում են մի քանի նոր որգաններ (Աշխատանքի ու Պաշտպանության Խորհուրդ, վոր չեր նախատեսել 1918 թվի սահմանադրությունը), իսկ մյուս կողմից՝ այն, վոր յերկարացրին խորհուրդներ ու խորհուրդների համագումարներ հրավիրելու ժամկետը, (հակառակ նախկին ժամկետների, վոր եր կիսամյակ՝ համառուսական ու մարզային (областной) համագումարների համար, 3 ամիս՝ նահանգական ու գավառային համագումարների ու բոլոր խորհուրդների համար, և մեկ ամիս՝ վոլոստների համագումարների համար,—1922 թվականից սկսած՝ սահմանվեց միատեսակ տարեկան ժամկետ, բոլոր համագումարների հրավիրման ու բոլոր խորհուրդների լիազորության համար)։

Բացի այս մասնակի փոփոխություններից, III բաժինը, վոր վերաբերում է Խորհրդային իշխանության կոնստրուկցիային ու նրա որգանների ներկայումս վարած աարկաններին, ամբողջովին պետք է արմատական վերամշակման յենթարկվի նոր միութենական Խորհրդային պետության ԽՍՀՄ կազմվելու հետևանքով, վորի սահմանադրության հիմունքները, վորոնք ընդունված են խորհուրդների I միութենական համագումարում 1922 թվի դեկտեմբերի 30-ին, և զարգացում եյին ստացել Միության ԿԳԿ II նստաշրջանում 1923 թվի հուլիսի 6-ին, մի շարք եյական փոփոխություններ են մտցնում ՌՍՖԽՀ կազմի ու բոլոր բարձր որգանների իրավասության շրջանակների մեջ։

28. Ի՞ՆՉ ԵՆ ՆՇԱՆԱԿՈՒՄ Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. ՏԱՌԵՐԸ

Ռուսաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։

29. Ի՞ՆՉ ԲԱՂԱԴՐԻՉ ՄԱՍԵՐ ՈՒՆԻ ՌՍՖԽՀ

ՌՍՖԽՀ կազմի մեջ մտնում է ամբողջ Ռուսաստանը՝ բացի Ուկրայնայից, Բելոռուսիայից (մայրաքաղաքը՝ Մինսկ) ու Անդրկովկասից (կազմված է յերեք հանրապետություններից—Ադրբեջան, Վրաստան ու Հայաստան)։ ՌՍՖԽՀ տերրիտորիայի վրա կան ինն ավտոնոմ սոցիալիստական խորհրդային հանրապետություններ, տասնմեկ ավտոնոմ մարզեր, ի թիվս վորոնց և մեկ աշխատավորական կոմմունա ու յեվրոպական ու ասիական Ռուսաստանի մի քանի տասնյակ նահանգներ ու մարզեր։ ՌՍՖԽՀ կազմի մեջ մտնում են՝ ավտոնոմ հանրապետություններից՝ Կիրգիզիան,

Բաշկիրյան, Ղրիմը, այլև Լեռնականների, Դաղստանի, Յակուտսկայա, Բուրյատ—Մոնղոլական ու Կարելիայի հանրապետությունները։

Ուկրայնայի հանրապետությունը (ՈՒՍԽՀ), Անդրկովկասյան ֆեդերացիան (ԱՍՖԽՀ) ու Բելոռուսիայի հանրապետությունը (ԲՍԽՀ) իբրև ՌՍՖԽՀ իրավահավասար ու նրանից անկախ հանրապետություններ, նրա հետ միասին մտնում են միասնական միութենական պետության մեջ կազմելով Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միությունը։

30. ԻՆՉՈ՞Ւ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՉՎՈՒՄ Ե ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ

Վորովհետև այնտեղ ջնջված է բուրժուազիայի տիրապետությունը, և պրոլետարիատը՝ հենվելով խորհրդային իշխանության վրա ու ոգտագործելով բուրժուազիայից խլած ձեռնարկություններն ու կապիտալները, անցել է տնտեսական շինարարության՝ կապիտալիզմից սոցիալիզմին հասնելու նպատակով։

Մեզանում լիակատար սոցիալիզմ ի հարկե դեռևս չկա և լինել չի կարող, քանի դեռ վերացված չե բուրժուազիայի իշխանությունը մյուս խոշորագույն պետությունների մեջ և քանի դեռ շարունակում են գոյություն ունենալ ապրանքային, մասնավոր սեփականատիրական ու մանր տնտեսության բազմաթիվ ձևերը։

31. ԻՆՉՈ՞Ւ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՉՎՈՒՄ Ե ՖԵԴԵՐԱՏԻՎ

Ֆեդերացիա բառը նշանակում է միություն։ Ֆեդերատիվ հանրապետություն նշանակում է միութենական հանրապետություն և յենթադրում է, վոր նրա մեջ կան մի շարք առանձին, անկախ պետություններ, վորոնք միանալով, իբրև մի բարդ ամբողջություն՝ կազմում են ֆեդերացիա։ Բացի Խորհրդային ֆեդերացիաներից՝ վորոնք են, ՌՍՖԽՀ, Անդրկովկասյան ֆեդերացիան ու էլ ավելի լայնացրած ֆեդերացիան—ԽՍՀՄ, ներկայումս կան բուրժուական ֆեդերացիաներ էլ, վորոնցից ամենագլխավորն ու ամենահներն են՝ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգները, Շվեյցարիայի ֆեդերատիվ հանրապետությունն ու գերմանականը։ Այս ֆեդերացիաներից յուրաքանչյուրը բարդ միութենական պետություն է, վորի ներսում նրա մասերը կամ միավորները իրենց հերթին նմանապես անկախ պետություններ, հանրապետություններ են (առանձին շտատներն՝ Ամերիկայում, կանտոնները՝ Շվեյցարիայում ու տեղական հանրապետությունները՝ Գերմանիայում)։

Բուրժուական ֆեդերացիաներում իշխում է կապիտալը. վոչ հավասարություն կա, վոչ ֆեդերացիա կազմող ազգերի կամ մասերի ազատություն. չի ընդունվում ֆեդերացիայից կամովին դուրս գալու իրավունքը և ֆեդերացիաները չեն կառուցված ազգայնության սկզբունքով։ Սրանց լիակատար հակադրությունն են խորհրդային ֆեդերացիաները։

Մասնավորապես ՌՍՖԽՀ ֆեդերատիվ հանրապետություն են այն պատճառով, վոր, ինչպես ասված է ՌՍՖԽՀ սահմանադրության մեջ, հիմնադրվում է ազատ ազգերի ազատ միության հիմունքով և ընդունում է, վոր յուրա-

քանչյուր ժողովուրդ իրավունք ունի ինքնորոշվելու մինչև լիակատար անջատումը, այլև, վոր յուրաքանչյուր ժողովուրդ ամենալայն ինքնավարության իրավունք ունի։

ՌՍՖՍՀ ճանաչած անջատման օրինակներն են՝ Ֆինլանդիան, Լեհաստանը, Ուկրաինան, Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը, վորոնցից վերջին չորս հանրապետությունները, հենց վոր խորհրդային դարձան, աննահանջ կերպով ձգտում եյին կամովին միանալու իրար հետ ու ՌՍՖՍՀ հետ ու մեկ ամենասերտ միություն կազմելու, իսկ ներկայումս, 1922 թվի դեկտեմբերի 30-ից, հավասար ու ազատ սկզբունքներով մտնում են մի ընդհանուր ֆեդերացիայի մեջ՝ կազմելով Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միությունը։

ՌՍՖՍՀ ներսում գոյություն ունեցող ավտոնոմիաների օրինակներն են՝ 9 ավտոնոմ սոցիալիստական հանրապետություններ (Բաշկիրիա—գլխավոր քաղաքը՝ Ուֆա, Լեռնականների—գլխ. քաղաքը՝ Վլադիկավկազ, Դաղստանի—գլխ. քաղաքը՝ Բույնակս, Կիրգիզիայի—գլխ. քաղաքը՝ Օրենբուրգ, Ղրիմի—գլխ. քաղաքը՝ Սիմֆերոպոլ, Թաթարիայի—գլխ. քաղաքը՝ Կազան, Յակուտսկի—գլխ. քաղաքը՝ Յակուտսկ, Բուրյատ-Մոնղոլական—գլխ. քաղաքը՝ Վերխնեուդինսկ, Կարելիայի—գլխ. քաղաքը Պետրոզավոդսկ,) 11 մարզային ավտոնոմ միավորներ (Ադիգեյսկայա, Վոտսկայա, Զիրյանսկայա (Կոմի), Կարաչաևո-Բալկարսկայա, Կալմիկների, Կարաչոյևո-Չերքեսական, Մարիական, Օյրատական, Չեչենների ու Չուվաշների) ու մեկ ավտոնոմ աշխատավորական կոմունա (Վոլգայի գերմանացիների)։

Ավտոնոմ հանրապետությունների գլուխ կանգնած են այս հանրապետությունների խորհուրդների համագումարներում ընտրվող ԿԳԿ-ները ու ԺԿԽ-ները։

Ավտոնոմ հանրապետությունների ԿԳԿ-ներն ու ԺԿԽ-ները պատասխանատու են անմիջաբար ՌՍՖՍՀ ՀռԿԳԿ-ի առաջ և գոյություն ունեն յուրաքանչյուր ավտոնոմ հանրապետության հատուկ սահմանադրության հիման վրա, վոր հաստատել է ՌԿԳԿ։

Ավտոնոմ մարզերն ու աշխատավորական կոմմունաներն ունենալով իրենց հատուկ սահմանադրությունները, վորոնք հաստատված են ՌՍՖՍՀ-ի կողմից, ընդհանուր առմամբ հավասարվում են նահանգներին և ունեն իրենց խորհուրդների համագումարները ու իրենց գործկոմները՝ նահգործկոմների իրավունքներով։ Բոլոր ավտոնոմ հանրապետությունները, մարզերն ու կոմմունաները իրենց ազգային ներկայացուցիչներն ունեն ամենից առաջ ազգժողկոմատում, վորը ՌՍՖՍՀ ազգային քաղաքականության օրգանն է, և բացի սրանից՝ պետք է առանձին ներկայացուցչություն ու միավորություն ունենային Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության բարձրագույն օրգաններին կից՝ ի դեմս Ազգությունների Խորհրդի, վոր կազմում է Միության ԿԳԿ-ի յերկու մասերից մեկը։

32. ԻՆՉՈ՞Ւ ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՉՎՈՒՄ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

Վորովհետև այս հանրապետության մեջ խորհրդային իշխանությունն է տիրում։

Խորհրդային հանրապետությունը մյուս բոլոր հանրապետություններից,

ժամանակակից այնպես կոչված դեմոկրատիկ հանրապետություններից էլ նրանով է տարբերվում, վոր վերջին տեսակի բոլոր հանրապետությունների մեջ իշխանությունը գտնվում էր, և այժմ էլ գտնվում է, ունևոր փոքրամասնության ձեռքում, վոր շահագործում է ու ճնշում աշխատավոր մեծամասնությանը և այս փոքրամասնությունը օգտվել է, և այժմ էլ օգտվում է, պետական իշխանությունից՝ իր տիրապետությունը հավերժացնելու և աշխատավոր մեծամասնության դեմ կռվելու համար։

Ընդհակառակը, Խորհրդային հանրապետության մեջ, մարդկության պատմության ընթացքում, առաջին անգամ պետական իշխանությունը հանձին խորհուրդների ու սրանց համագումարների պատկանում է շահագործվող ու աշխատավոր ամբողջ մարդկության շահերը և կռվում է այս մարդկությունը կապիտալիզմի լծից լիովին ազատելու համար։

33. ՎՈ՞ՐՆ Է ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՕՐԳԱՆԸ ՌՍՖՍՀ-Ի ՄԵՋ

ՌՍՖՍՀ-ի մեջ պետական իշխանության բարձրագույն օրգանը խորհուրդների համառուսական համագումարն է, իսկ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում համառուսական խորհուրդներում ընտրված Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտեն է (ԿԳԿ) կամ ՌՍՖՍՀ ԿԳԿ-ն է։

34. ԻՆՉՊԵ՞Ս Է ԸՆՏՐՎՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Խորհուրդների համառուսական համագումարը կազմվում է խորհուրդների նահանգային համագումարի ներկայացուցիչներից (պատգամավորներից), հաշվելով 125,000 բնակչին մեկ պատգամավոր, ու քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներից՝ հաշվելով 25000 ընտրողին մեկ պատգամավոր (այն քաղաքներից, վորոնց ընտրողների թիվը 25000-ից պակաս չէ)։

Մինչև 1923 թիվն ընդամենը յեղել է 10 համառուսական համագումար. 2-ը՝ 1917 թվին, 4-ը 1918-ին (հունվարին, մարտին, հուլիսին, նոյեմբերին) ու մեկական՝ 1919 թվից սկսած։ V համագումարի (1918 թ. հուլիս) սահմանադրության համաձայն խորհուրդների համառուսական համագումարները պետք է գումարվեյին կանոնավորապես տարին յերկու անգամ և բացի սրանից՝ սահմանված եյին արտակարգ համագումարներ, վորոնք նիստերի յեին հրավիրվում Հռ ԿԳԿ-ի վորոշմամբ կամ այն վայրերի խորհուրդների ցանկությամբ, վորոնք ՌՍՖՍՀ ամբողջ բնակչության 1/3-ից պակաս բնակչություն չունեյին։

1921 թվից սկսած՝ համառուսական հերթական համագումարները խորհուրդների VIII համագումարի վորոշման համաձայն՝ գումարվում են տարին մեկ անգամ։

Խորհուրդների Համառուսական համագումարների ամենագլխավոր խնդիրներն են Հռ ԿԳԿ-ի ու ԺԿԽ-ի հաշվետվությունը հանրապետության արտաքին ու ներքին քաղաքականության մասին, արտաքին ու ներքին ընթացիկ քաղաքականության կարևորագույն ընդհանուր խնդիրները, ՌՍՖՍՀ սահմանադրության փոփոխումն ու լրացումը և Հռ ԿԳԿ-ի ընտրությունները։

35. Ի՞ՆՉ Է ԿԳԿ-Ի ԴԵՐԸ, ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՐԳԸ

Սահմանադրության ու պրակտիկայի համաձայն ԿԳԿ հանդիսանում է համառուսական համագումարների միջև ընկած ժամանակամիջոցներում ՌՍՖԽՀ բարձրագույն օրենսդրական, կարգադրող ու վերահսկիչ օրգանը։ ԿԳԿ ընդհանուր ուղղություն է տալիս բանվորագյուղացիական կառավարության ու խորհրդային իշխանության բոլոր օրգանների գործունեությանը երկրում, միացնում է համերաշխում է օրենսդրության ու վարչական ասպարեզներում կատարած աշխատանքը և հսկում է, որ կյանքում իրականանան խորհրդային սահմանադրությունը, խորհրդների համառուսական համագումարների ու իշխանության կենտրոնական օրգանների որոշումները։

ԿԳԿ քննում և հաստատում է կարևորագույն դեկրետներն ու որոշումները, խորհրդային համառուսական համագումարներ է հրավիրում և հաստատում է ԺԿԽ-ի կազմն ու առանձին ժողովրդական կոմիսարներին։

1918 թվի սահմանադրության համաձայն Հռ ԿԳԿ անդամների թիվը 200 մարդ էր որոշված։ X կոչաշրջանի (созыв) Հռ ԿԳԿ, որ ընտրված էր խորհուրդների X-րդ համագումարում, ունի 270 անդամ։ Սովորաբար Հռ ԿԳԿ-ի անդամների $^2/_3$-ը տեղերից եկած ներկայացուցիչներն ու գործիչներն են ու $^1/_3$-ը կենտրոնի գործիչներն են։ Մինչև 1923 թ. քանի դեռ չէր կազմվել ՍԽՀՄ. ՌԿԳԿ-ի կազմի մեջ մտնում էին անկախ ու դաշնագրերով կապված միութենական հանրապետությունների—Ուկրայնայի, Անդրկովկասի ու Բելոռուսիայի ներկայացուցիչները։

Խորհուրդների VII համագումարից հետո (1920 թվից սկսած), Հռ ԿԳԿ սկսում է աշխատել իբրև «Բանվորական պարլամենտ», նստաշրջաններ ունենալով, որոնք հրավիրվում են տարին սովորաբար 3-4 անգամ։ Հռ ԿԳԿ-ի աշխատանքների նստաշրջանային կարգն անհրաժեշտ է՝ օգտագործելու համար ինչպես կենտրոնի փորձը, այնպես և փորձը տեղերի, որոնց գործիչներից է կազմված Հռ ԿԳԿ-ի անդամների մեծամասնությունը։ Մյուս կողմից՝ նույն այս հանգամանքը չի թողնում, որ Հռ ԿԳԿ-ի անդամները երկար ժամանակ կտրվեն տեղերում կատարվող աշխատանքներից ու տեղերի հետ կապ ունենալուց։ Խորհուրդների 9-րդ համագումարում (1921 թվի դեկտեմբեր) որոշվեց, որ Հռ ԿԳԿ-ի նստաշրջաններն պետք է երկարատև լինեն, որպեսզի ըստ կարելույն մանրամասն քննեն խնդիրներն ու դեկրետների նախագծերը։ 9-րդ կոչաշրջանի Հռ ԿԳԿ-ի նստաշրջանները—3-րդն ու 4-րդը տևում էին յուրաքանչյուրը $1^1/_2$ շաբաթից մինչև 2 շաբաթ։

Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում ՌԿԳԿ-ի իբրև «բանվորական պարլամենտ»-ի դերը ու նրա զբաղմունքների նստաշրջանային կարգը զարգանում է։

Չնայած սրան՝ ՌԿԳԿ իբրև «բանվորական պարլամենտ», իրապես տարբերվում է բոլոր բուրժուական պարլամենտներից.

1) ՌԿԳԿ-ի անդամներն ընտրվում են միայն մեկ տարով և ժամանակը լրանալուց առաջ կարող են հետ կոչվել միշտ, այն ինչ բուրժուական պարլամենտի անդամներն ընտրվում են մի շարք տարիների համար (սովորաբար 4-5 տարով) և բուրժուական պետությունների մեջ պատգամավորներին ետ կանչելու իրավունքը գոյություն չունի։

ՌԿԳԿ-ի աշխատանքի պայմաններն ու եղանակները, այլ և նրա կազմը այս հիմնարկությունը դարձնում են բուրժուական պարլամենտների լիակատար հակադրությունը և մինչդեռ բուրժուական պարլամենտների անդամները բացառապես զբաղվում են կապիտալը ամրապնդելու նպատակով կատարվող օրենսդրությամբ ու կառավարության քննադատությամբ՝ իրենց կուսակցությունների ու խմբակների շահերի տեսակետից, ՌԿԳԿ-ի անդամները մեծ մասամբ հանդիսանում են միաժամանակ խորհրդային կենտրոնական ու մանավանդ տեղական պրակտիկ գործիչներ, և նրանց օրենքներն իրագործելու և կառավարելու պրակտիկ աշխատանքն ամենալավ կանխապատրաստությունն է տալիս ՌԿԳԿ-ում այս կամ այն դեկրետներն ու որոշումները հրատարակելու համար։ Այս հանգամանքի շնորհիվ, ՌԿԳԿ-ի աշխատանքը կրում է գլխավորապես գործնական (деловой) բնույթ՝ տարբերվելով կապիտալիստական պետությունների պարլամենտների բուրժուական խմբակների ճառերի հեղեղից ու կռվից, որ տեղի է ունենում մինիստրական աթոռների համար։ ՌԿԳԿ-ի անդամները չեն կարող ձերբակալվել առանց ՌԿԳԿ-ի նախագահության կամ նախագահի համաձայնության և դատի են մատնվում միայն ՌԿԳԿ-ի կամ նրա նախագահության որոշմամբ։

36. Ի՞ՆՉ ԴԵՐ Է ԿԱՏԱՐՈՒՄ ՌԿԳԿ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

ՌԿԳԿ-ի նախագահությունը բացի ԿԳԿ-ի պլենար նիստերին նախագահելուց (նստաշրջանների ժամանակ) ու ՌԿԳԿ-ի նստաշրջանները նախապատրաստելուց ու գումարելուց, նստաշրջանների միջև ընկած ժամանակամիջոցում հանդիսանում է ներկայումս ԿԳԿ-ին փոխարինողն ու ՌՍՖԽՀ բարձրագույն իշխանությունը։

ԿԳԿ-ի նախագահության դերն անընդհատ ընդլայնվում է։ ԿԳԿ-ի նախագահությունն իրավունք ունի փոփոխելու, վերացնելու կամ դադարեցնելու ՌՍՖԽՀ-ի ԺԿԽ-ի ժողկոմատների, այլ և բոլոր տեղական իշխանությունների դեկրետները, որոշումներն ու կարգադրությունները։ Նախագահությունը վճռում է կոնֆլիկտները ինչպես կենտրոնում, այնպես և մանավանդ գյուղերի կոնֆլիկտները կենտրոնի հետ։

ՌԿԳԿ-ի նախագահությունը խորհրդային իշխանության բոլոր տեղական օրգանների ղեկավարն է, և սրան են ուղարկում թույլատրելու ու վճռելու բազմաթիվ առանձին, ընթացիկ խնդիրներ զանազան ասպարեզներից։

37. Ի՞ՆՉ Է ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Ժողկոմխորհը)

Այս հիմնարկությունը ՌՍՖԽՀ հանրային կառավարման (управление) օրգանն է, որ պատասխանատու է Խորհուրդների համագումարի ու ԿԳԿ-ի առաջ։ Ժողկոմխորհը հրատարակում է դեկրետներ, կարգադրություններ, հրահանգներ և ընդհանրապես այնպիսի միջոցներ է ձեռք առնում, որոնք անհրաժեշտ են պետական ընթացիկ կյանքը ուղիղ ու արագ վարելու համար, իսկ իր որոշումների ու վճիռների մասին հաղորդում է ԿԳԿ-ին։

ԺԿԽ-ի բոլոր որոշումներն ու վճիռները, որոնք խոշոր համաքաղա-

քական նշանակություն ունեն, ուղարկվում են ՌԿԳԿ-ի քննության ու հաստատմանը։ Սակայն այնպիսի ձեռնարկումներ (мероприятие), վորոնք անհետաձգելի իրագործում են պահանջում, կարող է իրականացնել ԺԿԽ անմիջապես, ընդ վորում ԿԳԿ հասկանալի յե, իրավունք ունի վերացնելու, փոփոխելու ու դադարեցնելու ԺԿԽ-ի ամեն մի վորոշում։

ԺԿԽ-ն ՌՍՖԽՀ բանվորագյուղացիական խորհրդային կառավարությունն է, ՌՍՖԽՀ կատարողական իշխանության բարձրագույն որգանը։ Սակայն և մյուս բոլոր պետությունների կառավարություններից տարբերվելով ԺԿԽ կատարողական իշխանություն լինելով հանդիսանում է միաժամանակ նաև որենսդիր հիմնարկություն, վորը վոչ միայն քննում ու կանխապատրաստում է որենքները (դեկրետները) այլ և ինքնուրույն կերպով հաստատում ու հրատարակում է այս որենքները։

Որենքներ հրատարակելու ասպարեզում ՌԿԳԿ-ի ու ԺԿԽ-ի տարբերությունն այն է, վոր ՌԿԳԿ որենսդրման (законодателствование) բարձրագույն որգանն է, այնինչ ԺԿԽ-ի յուրաքանչյուր դեկրետ կարող են վերացնել, դադարեցնել կամ փոփոխել ՌԿԳԿ-ն և նրա նախագահությունը։

ԺԿԽ-ն ներկայումս կազմված է ԺԿԽ-ի նախագահից, (վոր ԺԿԽ-ի կազմակերպվելու որից 1917 թվի հոկտ. 26-ից սկսած ընկեր Լենինն եր անփոփոխ կերպով) նրա յերկու տեղակալից, վորոնք վճռական ձայնի իրավունք ունեն և բոլոր ժողովրդական կոմիսարներից, վորոնք ՌՍՖԽՀ առանձին ժողկոմատների գլուխ են կանգնած։

Մինչև 1923 թիվը, մինչև ՍԽՀՄ կազմվելը, ՌՍՖԽՀ ժողկոմների թիվը փաստորեն 17 եր։ Ժողկոմխորհի անդամներն ու սրա նախագահն ամեն տարի հաստատվում են ԿԳԿ-ի I նստաշրջանում, խորհուրդների համառուսական հերթական համագումարը փակվելուց անմիջապես հետո։

38. Ի՞ՆՉ Է ՓՈՔՐ ԺԿԽ (ՓՈՔՐ ԽՈՐՀՈՒՐԴ) ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ (ԱՊԽ)

Փոքր ԺԿԽ-ն, վոր սկզբնապես կոչվում եր ԺԿԽ-ին կից կոմիսիա, կազմվել եր «կանխապատրաստելու ու մանրամասն մշակելու այն խնդիրները, վորոնք որենսդրական կարգով ԺԿԽ-ի վճռելուն եյին յենթակա, այլ և վճռելու համար զանազան գործեր կառավարման կարգով»։

Փոքր ԺԿԽ-ի վրա պարտականություն է ընկնում հսկելու, վոր ԺԿԽ-ի վորոշումները ժողկոմատները կատարեն։

Փոքր ԺԿԽ-ն կազմված եր նախագահից, յերկու անդամից, վորոնք նշանակվում եյին ԺԿԽ-ի կողմից, ու մեկական ներկայացուցիչներից, վորոնք մտնում եյին փոքր ԺԿԽ-ի մեջ, ամենագլխավոր գերատեսչություններից (ведомство)։

Յերբ Միության ԺԿԽ կազմվեց ՌՍՖԽՀ փոքր ԺԿԽ-ը լուծվեց։

Աշխատանքի ու Պաշտպանության խորհուրդը (ԱՊԽ) ՌԿԳԿ-ին ու ԺԿԽ-ին յենթակա բարձրագույն որգան է, ՌՍՖԽՀ գործերի ընդհանուր կառավարման համար։ ԱՊԽ-ի խնդիրն է համաձայնեցնել և ուժեղացնել գերատեսչությունները յերկրի պաշտպանությունն ապահովելու ու տնտեսական շինարարության ասպարեզներում։ Սկզբնապես 1918—1920 թվականների կատաղի պատերազմների ժամանակաշրջանում ԱՊԽ-ն առավելապես ռազմական ինքնապաշտպանության որգան եր և կոչվում եր պաշտպանության Խորհուրդ։

1921 թվականից սկսած՝ Խորհուրդների VIII համագումարից հետո, ԱՊԽ-ի աշխատանքի ծանրության կենտրոնը փոխվում է և նրա խնդիրը դառնում է ՌՍՖԽՀ տնտեսական շինարարության ղեկավարությունը, և նրան կից՝ կազմվում է համապլանային պետական կոմիսիան (Պետպլան)։

ԱՊԽ-ն դառնում է ՌՍՖԽՀ բարձրագույն տնտեսական շտաբը, իսկ տեղերում կազմվում են համապատասխան ընդհանուր տնտեսական ու պլանային որգաններ, վորոնք մի կողմից յենթարկվում են գործկոմներին, իսկ մյուս կողմից՝ ԱՊԽ-ին, հանդես գալով իբրև տնտեսական խորհրդակցություններ կամ Տնտխորհներ (Նախտնտխորհ, Մարզտնտխորհ)։ 23 թվականի յերկրորդ կեսին ՌՍՖԽՀ-յան ԱՊԽ-ն վերացվում է, վորովհետև ռազմական պաշտպանության խնդիրներն անցնում են ՍԽՀ Միությանը և ՌՍՖԽՀ-յան ԱՊԽ-ի փոխարեն կազմվում է ՌՍՖԽՀ Տնտեսական խորհրդակցությունը՝ զուտ տնտեսական խնդիրներով, համաձայնեցնելու համար այն բոլոր տնտեսական ձեռնարկումները, վոր գործադրում և իրականացնում են ՌՍՖԽՀ-ի տնտեսական ժողկոմատները։

39. Ի՞ՆՉ ԵՆ ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐԸ

Ժողկոմատները ԿԳԿ-ի բաժիններն են (որգանները), վորոնք գոյություն ունեն կառավարման առանձին ճյուղերը ու պետական գործունեյությունը ղեկավարելու համար։ Ժողկոմատները Խորհրդային հանրապետության առանձին գերատեսչություններն են։ Յուրաքանչյուր ժողկոմատի գլուխ կանգնած է ժողովրդական կոմիսարը ու նրան կից գոյություն ունի տվյալ ժողկոմատի անդամների փոքրիկ կոլլեգիան՝ համապատասխան ժողովրդական կոմիսարի նախագահությամբ։ Վերջինս իրավունք ունի միայն նրա իշխանությամբ վճիռներ կայացնելու՝ ժողկոմատի կառավարման յենթակա բոլոր խնդիրների վերաբերմամբ, այս վճիռների մասին ի տեղեկություն հայտնելով կոլլեգիայի անդամներին, վորոնք ժողովրդական կոմիսարի վճռի հետ համաձայն չլինելու դեպքում, կարող են այս վճիռների դեմ բողոքել ԺԿԽ-ին կամ ՌԿԳԿ-ին առանց, սակայն, այս վճիռների կատարումը դադարեցնելու։

1918 թվի սահմանադրությունը ՌՍՖԽՀ-ի համար սահմանել եր 18 ժողկոմատ, սակայն ռազմական ու ծովային գործերի կոմիսարիատների միացման հետևանքով ժողկոմատների քանակը մինչև 1923 թվականը փաստորեն հավասարվում եր 17-ի։ Ժողկոմատները սրանք են՝ 1) Արտաքին գործերի (Արտգործժողկոմ, ԱԳԺԿ), 2) Ռազմական ու ծովային գործերի (Ռազմծովժողկոմ, ՌԾԺԿ), 3) Ներքին գործերի (Ներքգործժողկոմ, ՆԳԺԿ), 4) Արդարադատության (Արդժողկոմ, Արդ-ԺԿ), 5) Աշխատանքի (Աշխժողկոմ, Աշխ-ԺԿ), 6) Սոցիալական ապահովության (Սոցապժողկոմ, Սոց-Ապ-ԺԿ), 7) Լուսավորության (Լուսժողկոմ, Լուս-ԺԿ), 8) Փոստ-հեռագրային (Փոստ-հեռժողկոմ, ՓՀԺԿ), 9) Ազգային գործերի (Ազգժողկոմ, Ազգ-ԺԿ), 10) Ֆինանսների (Ֆինժողկոմ, ՖԺԿ), 11) Հաղորդակցության ճանապարհների (Հաղժողկոմ, ՀՃԺԿ), 12) Հողագործության (Հողժողկոմ, ՀԺԿ), 13) Արտաքին առևտրի (Արտառժողկոմ, Արտ-առ-ԺԿ), 14)

Պարենավորման (Պարժողկոմ, ՊԺԿ), 15) Բանվորա-գյուղացիական տեսչություն (ԲԳՏԺ), 16) Ժողովրդական տնտեսության բարձրագույն Խորհուրդ (ԺՏԲԽ), 17) Առողջապահության (Առժողկոմ, Առ-ԺԿ):

Մինչև 1923 թիվը, համապատասխան 17 կոմիսարներն էլ հենց մըտնում էին ՌՍՖԽՀ-ի ԺԿԽ-ի մեջ:

40. ՌՍՖԽՀ-յան ՄԵՋ ՆՐԱ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԻՆՉ ԺՈՂԿՈՄԱՏՆԵՐ ԵՆ ՄՆՈՒՄ

ՍԽՀՄ Միություն կազմելու դաշնագրի համաձայն, 5 ժողկոմատներ, այն է՝ Արտաքին գործերինը, Ռազմական ու ծովային գործերինը, Արտաքին առևտրինը, Ճանապարհների հաղորդակցությանն ու Փոստ-հեռագրային ամբողջապես ու լրիվին հանվում են առանձին միութենական հանրապետությունների վարումից (ведение), ի թիվս վորոնց և ՌՍՖԽՀ-ից և անցնում են բացառապես ՍԽՀՄ-ին:

Այսպիսով 1923 թվականից սկսած՝ ՌՍՖԽՀ-ում պետք է մնան 12 ժողկոմատներ միայն և ՌՍՖԽՀ-յան ԺԿԽ-ի մեջ կլինեն համապատասխան թվով ժողովրդական կոմիսարներ (բացի նախագահից ու սրա տեղակալներից):

ՍԽՀՄ-ին անցած 5 ժողկոմատները ՌՍՖԽՀ-յան ԺԿԽ-ի կազմի մեջ (ինչպես և մյուս յերեք միութենական հանրապետությունների ԺԿԽ-ի կազմի մեջ) կունենան իրենց լիազորները միայն (մեկական՝ յուրաքանչյուր ժողկոմատից), խորհրդակցական ձայնի իրավունքով:

41. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՈՒՄՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԵՐՈՒՄ

Բուրժուական կալվածատիրական պետությունների մեջ, թեև սրանք յերբեմն կոչվում էլ են դեմոկրատական, պետական իշխանության տեղական օրգանները այս կամ այն չափով լինում են կենտրոնի կողմից նշանակովի:

Այսպես էին նահանգապետներն ու գավառապետները ցարական Ռուսաստանում, վորոնց Ֆրանսիայում համապատասխանում էին, օրինակ, պրեֆեկտները, այսինքն Փարիզից նշանակվող նույն նահանգապետները:

Այս նահանգապետները տեղերում վարում են տեղական գործերը, կամ, համենայն դեպս, իրավունք ունեն վերացնելու կամ փոփոխելու ամեն մի վորոշում, վոր անում են տեղական իշխանության ընտրովի օրգանները (քաղաքային դումաները, զեմստվոները և այլն) յեթե միայն կան այսպիսիները:

Ընդհակառակը Խորհրդային հանրապետության մեջ պետական իշխանության բոլոր պետական օրգանները կազմվում են վոչ թե կենտրոնից նշանակվելով, այլ ընտրվում են տեղական բնակչությունից, բանվորներից, գյուղացիներից, կարմիր բանակայիններից, ծառայողներից և այլն, վորոնք գտնվում են տվյալ նահանգի, գավառի, քաղաքի, գավառակի, գյուղի տերիտորիայում: Տեղական իշխանության այս ընտրովի օրգաններին է պատկանում, սրանց **վարման** *սահմաններում, համապատասխան տերիտորիայի ամբողջ իշխանությունը:*

Ուստի և ամենուրեք խորհրդային իշխանության տեղական օրգաններն են հանդիսանում խորհուրդներն ու խորհուրդների համագումարները ու սրանից ընտրվող գործադիր կոմիտեները, և սրանց գլխին կենտրոնից նշանակված վոչ մի օրգան գոյություն չունի՝ վոչ տեղական գործերի և վոչ էլ կենտրոնի վորոշումներն իրագործելու համար:

Այնուհետև դարձյալ բոլոր բուրժուական-կալվածատիրական պետություններից տարբերվելով՝ մեր իշխանության տեղական ընտրովի օրգանները վարման ամենալայն շրջանակներ ունեն:

Նրանց խնդիրների շարքը մտնում են՝ 1) Խորհրդային իշխանության բարձրագույն օրգանների բոլոր վորոշումների իրականացումը կյանքում. 2) Տվյալ տերիտորիան տնտեսական ու կուլտուրական տեսակետից բարձրացնելու համար անհրաժեշտ բոլոր միջոցների ձեռնարկումը. 3) Տեղական նշանակություն ունեցող բոլոր խնդիրների լուծումը. 4) Տվյալ տերիտորիայի սահմանում խորհրդային ամբողջ գործունեության միավորումը (ՌՍՖԽՀ սահմանադրության 61-րդ հոդված):

Այսպիսով տեղական խորհուրդները, խորհուրդների համագումարներն ու գործկոմները ամբողջ իշխանությունն են հանդիսանում տեղերում, վորոնք տեղական նշանակություն ունեցող բոլոր խնդիրները վճռելու իրավունք ունեն և միևնույն ժամանակ կենտրոնի միակ ու կատարողական օրգաններն են տեղերում:

Տեղական իշխանության օրգանների այն լիակատար ընտրելիությունը ու սրանց ինքնավարության լայն շրջանակը խորհրդային պետության կազմության ասպարեզում դեմոկրատիզմի այնպիսի բարձր աստիճան է ցույց տալիս, վորին չեն հասել ամենից առաջավոր բուրժուական-դեմոկրատական յերկիրները:

Սակայն խորհրդային այս լայն դեմոկրատիզմը չի ժխտում անհրաժեշտ կենտրոնացում այն չափով, ինչ չափով վոր իշխանության տեղական օրգանները պարտական են ամբողջապես ու լրիվին կիրառելու սոցիալիստական խորհրդային հանրապետությունների Միության, ՌՍՖԽՀ-յան խորհրդային իշխանության բարձրագույն կենտրոնական օրգանների ԿԳԿ-ի ու ԺԿԽ-ի բոլոր վորոշումները:

Վերջապես վորպեսզի պատգամավորները մեծագույն չափով կապված լինեն մասսաների հետ և պատասխանատու լինեն սրանց առաջ, այլ և գործնական աշխատանքի շահերի տեսակետից, խորհրդային իշխանության տեղական սկզբնական ու հիմնական օրգանների—խորհուրդների ընտրությունները կատարվում են վոչ թե ըստ տերիտորիալ միավորների, այլ ըստ ձեռնարկությունների (ֆաբրիկաների, գործարանների և այլն) ու ըստ հիմնարկների, վորի ժամանակ ներկայացուցիչներ ընտրվում են բանվորների ու ծառայողների համապատասխան կոլլեկտիվներից:

42. ԻՆՉ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Խորհուրդները տեղական խորհրդային իշխանության օրգաններն են քաղաքներում, ֆաբրիկային ու գործարանային շեներում ու գյուղերում:

Խորհուրդները խորհրդային իշխանության հիմնական ու ստորին բջիջներն են:

Խորհուրդների համագումարները (գավառական, նահանգական, մարզային, համառուսական ու համամիութենական) կազմվում են ներկայացուցիչներ ուղարկելով սկզբնական խորհրդային օրգանների խորհուրդներից։

Խորհուրդների պատգամավորներն ընտրվում են վորոշ ու տևական ժամանակով. ներկայումս՝ մեկ տարով, վորի միջոցին նրանք կանոնավորապես նիստեր են գումարում, իսկ համագումարների պատվիրակները ընտրվում են յուրաքանչյուր համագումարի համար, սրանց տևողության ժամանակի համար։ Համագումարների վերջանալուց հետո պատվիրակները կորցնում են իրենց կոչումը՝ իրենց փոխարեն թողնելով գործկոմներին, վորոնց ընտրում են համագումարները։

43. ՎՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՈՒ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Խորհրդային իշխանության առաջին տարիներում, ՌՍՖԽՀ-ի 1917 թվի սահմանադրության համաձայն, խորհուրդների ու խորհուրդների համագումարների գումարվելու ու լիազորությունների ժամկետները շատ կարճ էյին, վորովհետև հեղափոխության արագ ընթացքի հետևանքով, այլև այն պատճառով, վոր խորհրդային ապարատը դեռ սարքի չէր ընկել, անհրաժեշտ էր ավելի հաճախ դիմել վերընտրությունների ու լայն մասսաների միջից պատվիրակներ գործի հրավիրելու։

Հետագայում այս ժամկետները յերկարացրին և ներկայումս, խորհուրդների 9-րդ համագումարի վորոշման համաձայն, բոլոր խորհուրդներն ու խորհուրդների համագումարները հրավիրվում ու վերընտրվում են կանոնավորապես տարին մեկ անգամ։

44. Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՈՒ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ՈՒ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

Քաղաքներում, այլև ֆաբրիկային ու գործարանային շեներում, խորհուրդների ու խորհուրդների համագումարների ընտրությունները կատարվում են ընտրողների քանակի համաձայն (օրինակ՝ համառուսական համագումարի համար 25,000 ընտրողից մեկ պատգամավոր), գյուղական վայրերից՝ ըստ բնակիչների քանակի, օրինակ՝ խորհուրդների համառուսական համագումարի համար՝ 125,000 բնակչից մեկ պատգամավոր։ Քաղաքի մեկ ընտրողի ու քաղաքից դուրս ապրող բնակչության 5 մարդու այս հարաբերությունը խստորեն պահպանվում է խորհուրդների բոլոր համագումարների ընտրությունների ժամանակ։

Ընտրությունների այսպիսի կրկնակի հիմունք վերցված է գործնական հարմարության պատճառով, վորովհետև քաղաքներում, վորտեղ ընտրությունները կատարվում են ըստ ձեռնարկությունների ու հիմնարկների, վորտեղ գոյություն ունի բանվորների ու ծառայողների ճիշտ հաշվառք (учет) նրանց աշխատանքի տեղերի համաձայն ու արհմիությունների միջոցով,— ավելի հեշտ է իբրև հիմք ունենալ ընտրողների թիվը։

Ընդհակառակը, գյուղական վայրերում ընտրողների այսպիսի հաշվառք գոյություն չունի, ուստի և այստեղ ավելի հարմար ու հեշտ է հիմք ունենալ ամբողջ ազգաբնակության ընդհանուր քանակը։

Ընդ սմին, քաղաքի մեկ ընտրողի ու քաղաքից դուրս ապրող բնակչության 5 հոգու հարաբերությունը վոչ մի առավելություն չի տալիս հօգուտ քաղաքի, վորովհետև մի շարք քաղաքների (օրինակ՝ Լենինգրադի, Մոսկվայի) ճիշտ հաշվարկումը (подсчет) ցույց է տալիս, վոր քաղաքների համար նույնիսկ ավելի ձեռնտու յեր խորհուրդների համագումարներին ներկայացուցիչներ ուղարկել վոչ ըստ ընտրողների քանակի, այլ ըստ բնակիչների թվի։

45. Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՔԱՂԱՔՈՒՄ

Բանվորների ու կարմիր բանակայինների պատգամավորների քաղաքային խորհուրդներ կազմակերպվում են գավառական ու գավառազուրկ (безуездный) քաղաքներում, այլ և քաղաքային տիպին պատկանող ֆաբրիկա-գործարանային շեներում։

Քաղաքային տիպին պատկանող շեներում ու գավառազուրկ քաղաքներում քաղաքային խորհուրդներ կազմվում են իբրև ընդհանուր օրենք՝ այն դեպքում միայն, յերբ նրանք ունեն 2,000 ընտրողից կամ 10,000 բնակչից վոչ պակաս ընտրող ու բնակիչ։

Քաղաքային խորհուրդը իշխանության բարձրագույն օրգանն է քաղաքի կամ քաղաքային տիպի պատկանող շենի սահմաններում։

Քաղաքային տիպի պատկանող շեներ (поселок) ասելով՝ հասկանում են այն վայրերը, վորոնց բնակչության մեծամասնությունը կազմված է ֆաբրիկա-գործարանային տարրերից։

Քաղաքային տիպի պատկանող այն շեներում ու այն գավառազուրկ քաղաքներում, վորոնց բնակչությունը 10,000-ից քիչ է, գյուղական խորհուրդներ են ընտրվում ընդհանուր հիմունքներով։

Քաղաքային խորհուրդներ ընտրվում են՝ հաշվելով յուրաքանչյուր 200 ընտրողից մեկ պատգամավոր, սակայն ամբողջ քաղաքային խորհրդի պատգամավորների թիվը պետք է լինի 50-ից վոչ պակաս ու 1000-ից վոչ ավել։

Մոսկվային ու Պետրոգրադին թույլատրվում է ունենալ այնպիսի քաղաքային խորհուրդ, վորոնց պատգամավորների թիվը կարող է 1000-ից ավելի լինել։

Քաղաքային խորհուրդներն ընտրվում են մի տարով։ Քաղաքային խորհուրդների մինչժամկետյա (досрочный) վերընտրություններ կատարվում են՝ ա) խորհրդային իշխանության բարձրագույն օրգանների առաջարկով, բ) այն դեպքում, յերբ քաղաքային խորհրդի կազմից դուրս է յեկել անդամների $^{1}/_{3}$-ը։

Խոշոր քաղաքներում բնակչության կարիքները բավարարելու հարմարության տեսակետից կարող են կազմակերպվել ռայոնական խորհուրդներ։

1922 թվի կանոնադրության համաձայն, խորհուրդները պետք է գումարվեն ամիսը մեկ անգամից վոչ պակաս, ընդ վորում հանձնարարվում են խորհուրդների նիստեր գումարել ամենամեծ քանակությամբ բանվորներ

գրավելով և այս բանի համար նիստերն անելով բանվորական թաղերում կամ խոշոր ֆաբրիկաներում ու գործարաններում։

Խորհուրդների բոլոր անդամներին գործի լծելու նպատակով՝ անդամներին բաժանում են ըստ սեկցիաների՝ գործունեության տարբեր ճյուղերի համապատասխան՝ պարտադրելով, վոր յուրաքանչյուր անդամ մասնակցի գոնե մեկ սեկցիայի։ Ինչ վերաբերում է քաղաքային խորհուրդների կատարողական օրգաններին, ապա նահանգային ու գավառական քաղաքներում քաղաքային խորհուրդներն անկախ կատարողական օրգաններ նահգործկոմներ ու սրանց բաժիններ չեն կազմում իրենց համար, այլ օգտվում են համապատասխան նահգործկոմների ու գավգործկոմների ու սրանց բաժինների ապարատներից։ Նահգործկոմների ու Գավգործկոմների նախագահությունները միաժամանակ լինում են նաև քաղաքային խորհուրդների նախագահություն։

Քաղաքային խորհուրդներն իրենց նիստերը վարելու համար ընտրում են նախագահ ու քարտուղար միայն։

Գավառազուրկ քաղաքներում ու քաղաքային տիպի շեներում, յեթե միայն վերջիններս վոլոստի գործկոմի աթոռանիստ չեն, քաղաքային խորհուրդներն իրենց միջից ընտրում են քաղգործկոմներ, վորոնց կազմը լինում է 7 հոգուց վոչ ավելի, իսկ վերջիններս իրենց միջից ընտրում են նախագահություններ՝ մշտապես աշխատելու համար, վորոնք կազմված են լինում վոչ ավելի 3 հոգուց, ու մի քանի բաժիններ՝ 5-ից վոչ շատ։

Քաղաքային խորհուրդների հերթական պլենար նիստերը գումարվում են ամիսը մեկ անգամից վոչ պակաս։ Նահանգային ու գավառական քաղաքների քաղաքային խորհուրդներն անմիջաբար պատասխանատու յեն խորհուրդների համապատասխան նահանգական ու գավառական համագումարների ու ավելի բարձր կանգնած գործկոմների (Նահգործկոմ, Հռ. ԿԳԿ) առաջ։

Խորհուրդների նահանգային ու գավառական համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում նահանգական, գավառական ու վոլոստային գործկոմներն ու սրանց բաժիններն իրենց գործունեության մասին զեկուցում են քաղաքային խորհուրդների պլենումին, բայց քաղաքային խորհրդի առաջ անմիջաբար պատասխանատու յեն իրենց այն աշխատանքի համար միայն, վոր վերաբերում է քաղաքին կամ շենին։

46. Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ (ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ)

Գյուղական խորհուրդներ կազմվում են բնակաշեն (населенный) կետերում (գյուղերում, ավաններում, ստանիցաներում, գյուղակներում, աուլներում և այլն), վորոնց բնակչությունը 400-ից պակաս չէ։

400-ից պակաս բնակիչ ունեցող գյուղերում առանձին գյուղական խորհուրդներ չեն կազմվում։ Այսպիսի գյուղերի աշխատավորները կառավարելու իրենց իրավունքն իրականացնում են կամ ա) մասնակցելով հարևան գյուղի գյուղխորհրդի ընտրություններին, վորի բնակիչները 400-ից ավելի յեն և վորն ունի իր գյուղական խորհուրդը, կամ բ) միանալով հարևան գյուղերի, ագարակների (хутор) և այլն հետ, ընդհանուր գյուղխորհուրդ ընտրելու համար, կամ, գ) իրենց խնդիրները վճռելով ընտրողների ընդհանուր ժողովներում։

Գյուղական խորհրդի ընտրությունները կատարվում են՝ հաշվելով 200 հոգուն մեկ պատգամավոր, և պատգամավորների թիվն էլ 25-ից վոչ ավելի։ Գյուղխորհուրդները գումարվում են ամիսը 2 անգամից վոչ պակաս։

Գյուղխորհրդի կատարողական օրգանը կամ մենակ նախագահն է (մինչև 10,000 բնակիչ ունեցող գյուղերում), կամ 2 անդամից կազմված գործկոմը (10,000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում)։

Գյուղխորհուրդներին կից՝ բաժիններ չեն կազմվում։

47. Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎՈԼՈՍՏԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐՆ ՈՒ ՎՈԼՈՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԿՈՄՆԵՐԸ

Խորհուրդների վոլոստային համագումարները կազմվում են վոլոստի բոլոր գյուղխորհուրդների ներկայացուցիչներից՝ հաշվելով գյուղխորհրդի յուրաքանչյուր 10 անդամին մեկ պատգամավոր։

Խորհուրդների վոլոստային համագումարն ընտրում է 3 անդամից կազմված գործկոմ, վորը, իբրև բացառություն, կարող է ունենալ 4-ից վոչ ավելի անդամ։

Վոլգործկոմը գումարվում է շաբաթը մեկ անգամից վոչ պակաս։

Ամիսը մեկ անգամից վոչ պակաս վոլգործկոմի նախագահը գումարում է լայն խորհրդակցություն վոլոստի գյուղական խորհուրդների ներկայացուցիչների հետ միասին։

48. Ի՞ՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐՆ ՈՒ ԳԱՎԱՌԱԿԱՆ ԳՈՐԾԿՈՄՆԵՐՆ

Խորհուրդների գավառական համագումարները կազմվում են գավառի տերրիտորիայի վրա գտնվող բոլոր խորհուրդների, ի թիվս վորոց՝ նաև գավառական քաղաքի ներկայացուցիչներից, հաշվելով գյուղական խորհուրդներից յուրաքանչյուր 1000 բնակչին 1 պատգամավոր, քաղաքների ու ֆաբրիկա-գործարանային շեների խորհուրդներից, այլև այն ֆաբրիկաների ու գործարանների խորհուրդներից, վորոնք շենանոցներից (поселение) դուրս են գտնվում, մեկական պատվիրակ՝ 200 ընտրողին։

Խորհուրդների գավառական համագումարի ընդհանուր կազմը չպետք է գերազանցե 3?0 պատվիրակից։

Յեթե խորհուրդների գավառական համագումարից անմիջապես առաջ ընկնում է խորհուրդների վոլոստային համագումարը, ապա գյուղխորհուրդներից ուղարկվելիք ներկայացուցիչների ընտրությունը կատարվում է վոլոստային համագումարներում։

Այն վայրերի գյուղական խորհուրդները, վորոնք 1000 բնակչից պակաս ունեն, խորհուրդների գավառական համագումարի ընտրությունների համար միանում են ուրիշ գյուղերի հետ։

Այն քաղաքների քաղաքային խորհուրդները, վորոնք ունեն 10,000 մարդուց ավելի բնակչություն, չեն մասնակցում գավառական համագումարի ընտրություններին և իրենց պատվիրակներին անմիջաբար նահանգական համագումար են ուղարկում։ Խորհուրդների գավառական համագու-

մարն ընտրում է իր կատարողական օրգանը՝ Գավգործկոմը, վորի անդամների թիվը չպետք է գերազանցի 11 մարդուց։

Գավգործկոմը, գումարվում է շաբաթվա մեջ մեկ անգամից վոչ պակաս իր աշխատանքը միացնելու ու կանոնավորելու համար Գավգործկոմն ընտրում է իր նախագահությունը 3 անդամից կազմված, իսկ կատարելիք աշխատանքի զանազան ճյուղերը վարելու համար կազմում է բաժիններ։

49. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐՆ ՈՒ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ

Խորհուրդների նահանգական համագումարները կազմվում են նախ՝ այն վայրերի քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներից, վորոնք ունեն 3000 բնակչից ավելի, ի թիվս վորոց՝ նաև քաղաքային տիպի շեների խորհուրդների ու քաղաքային շենանոցներից դուրս գտնվող ֆաբրիկաների ու գործարանների ներկայացուցիչներից ու յերկրորդ՝ խորհուրդների գավառական համագումարների ներկայացուցիչներից։

Խորհուրդների նահանգական համագումարի պատվիրակներ ընտրվում են այս հաշվով, խորհուրդների գավառական համագումարներից մեկ պատգամավոր՝ յուրաքանչյուր 10,000 բնակչին և քաղաքների, ավանների, քաղաքներից դուրս գտնվող ֆաբրիկաների ու գործարանների խորհուրդներից մեկ պատգամավոր՝ յուրաքանչյուր 2000 ընտրողին։ Նահանգական համագումարի պատվիրակների ընդհանուր թիվը չպետք է գերազանցի 300 հոգուց։

Խորհուրդների նահանգական համագումարն ընտրում է կատարողական օրգան—Նահանգական Գործադիր Կոմիտե (Նահգործկոմ), մեկ տարի ժամանակով։ Վերջինիս կազմը, իբրև ընդհանուր օրենք, 25 հոգուց ավելի չպետք է լինի։

Նահգործկոմներն ամսական մեկ անգամից վոչ պակաս հերթական նիստերի յեն հավաքվում և տարեկան 3 անգամից վոչ պակաս՝ նստաշրջանային նիստերի։

Նահգործկոմի ընդլայնած նիստերում, բացի Նահգործկոմի անդամներից, մասնակցում են մեկական ներկայացուցիչներ բոլոր գավառական գործկոմներից, բոլոր քաղաքային խորհուրդներից ու խոշոր արդյունաբերական ռայոններից։

Նահգործկոմի նիստերի միջև ընկած ժամանակամիջոցում նրա բոլոր իրավունքները պատկանում են Նահգործկոմի նախագահության, վոր իբրև ընդհանուր օրենք՝ կազմված է լինում 7 հոգուց վոչ ավելի անդամներից։

Նահգործկոմներին կից՝ կազմակերպվում են բաժիններ, վորոնք իբրև ընդհանուր օրենք՝ թվով լինում են 13, այլև կազմվում են նահանգական տնտեսական խորհրդակցություն (Նահտնտխորհ), Նահգործկոմին կից հատուկ հանձնաժողովի իրավունքներով՝ տեղական օրգանների տնտեսական բաժինների գործունեությանն ուղղություն տալու ու համերաշխելու համար։

50 ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Խորհուրդների մարզային համագումարները տարածված եյին մանավանդ 1918 թվին։

Սրանք կազմվում են քաղխորհուրդների ու գավառական (կամ նահանգական) համագումարների ներկայացուցիչներից՝ հաշվելով քաղաքներից մեկ պատվիրակ 5000 ընտրողին ու խորհուրդների գավառական (կամ նահանգական) համագումարներից մեկ պատվիրակ 25,000 բնակչին։

Մարզային գործկոմի անդամների թիվը 25 մարդուց ավելի չպետք է լինի։

Մարզային համագումարի պատվիրակների թիվը չպետք է գերազանցի 500-ից։

51. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՌՍՖԽՀ ՖԵԴԵՐԱՑԻՎ ՄԱՍԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ

ՌՍՖԽՀ մեջ մտնող առանձին հանրապետությունների խորհուրդների համագումարները ընտրվում են խորհուրդների մարզային կամ նահանգական համագումարների նորմաներով։

Նրանք ընտրում են իրենց տեղական ԿԳԿ-ն ու ԺԿԽ-ը։

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ (ՍԽՀՄ) ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

52. ԻՆՉ Է ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ (ՍԽՀՄ)

ՍԽՀՄ մի անուն է, վորով կոչում ենք միասնական միութենական խորհրդային պետությունը, վոր կազմվել է 1922 թվի դեկտեմբերի 30-ին այն դաշնագրի հիման վրա, վոր ստորագրել են հետևյալ չորս սոցիալիստական խորհրդային հանրապետությունների լիազոր ներկայացուցիչները— ՌՍՖԽՀ, Ու. ՍԽՀ (Ուկրայնայի սոցիալիստական խորհրդային հանրապետություն), ԱՍՖԽՀ (Անդրկովկասյան սոցիալիստական ֆեդերատիվ խորհրդային հանրապետություն, վոր կազմված է Ադրբեջանից, Վրաստանից ու Հայաստանից) ու ԲՍԽՀ (Բելոռուսիայի սոցիալիստական խորհրդային հանրապետություն)։ Այս չորս հանրապետությունները, վորոնք մինչ այդ անկախ եյին և միայն առանձին դաշնագրերով ու համաձայնություններով եյին կապված իրար հետ ու ՌՍՖԽՀ-ի հետ, 1922 թվի դեկտեմբերի 30-ին ձուլվելով մի ամբողջություն դարձան և կազմեցին միասնական միութենական խորհրդային հանրապետություն ՍԽՀՄ անունով։

ՍԽՀՄ-ի կազմի մեջ մտնում են ներկայումս գոյություն ունեցող բոլոր սոցիալիստական խորհրդային հանրապետությունները։

Դեկտեմբերի 30-ին տեղի ունեցավ այս նոր պետության խորհուրդների 1. համագումարը և այս համագումարում հաստատվեցին սոցիալիստական խորհրդային հանրապետությունների Միություն կազմվելու մասին հայտարարելիք դեկլարացիան ու դաշնագիրը։

Այս դեկլարացիան ու այս դաշնագիրը պարունակում են ՍԽՀՄ սահմանադրության հիմունքները։ Հետագայում, 1923 թվի հուլիսի 6-ին, Միության ԿԳԿ-ի II նստաշրջանում մանրամասն քննության յենթարկվեց ՍԽՀ Միության սահմանադրական կազմությունը և ընդունվեց միութենական հանրապետության սահմանադրությունը, վոր վերջնականապես հաստատեց ՍԽՀ Միության Խորհուրդների II համագումարը։

53. ՎՈՐՈ՞ՆՔ ԵՂԻՆ ՍՍՀՄ ԿԱԶՄԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Յերեք կարգ պատճառներ կային, վորոնք անհրաժեշտ եյին դարձնում ՌՍՖՍՀ, ՈւՍՍՀ, ԱՍՖՍՀ ու ԲՍՍՀ ձուլումը, 1) ներքին տնտեսական պատճառները, 2) այս հանրապետությունների արտաքին միջազգային դրության հետ կապված պատճառներ, 3) Խորհրդային իշխանության դասակարգային բնույթից բղխող պատճառներ։

Տնտեսական բնույթ ունեցող հանգամանքները հետևյալներն եյին, ա) Յոթնամյա պատերազմի հետևանքով, Խորհրդային հանրապետությունների տրամադրության տակ մնացած տնտեսական ռեսուրսները շատ աղքատիկ եյին, իսկ այս հարկադրում եր հիշյալ ռեսուրսները միացնել, հետագա տնտեսական շինարարության ու տնտեսության հիմնական ճյուղերի զարգացման տեսակետից այն միջոցներն ավելի ուղիղ կերպով օգտագործելու համար. բ) Բոլոր հանրապետությունների ֆինանսական միջոցները նույնպես աղքատիկ եյին, իսկ այս նմանապես հարկադրում եր նրանց՝ սերտ միության ուղին բռնելու. գ) Հաղորդակցության (փոխադրության) ու կապի (փոստ-հեռագիր) հիմնական միջոցները մեկ եյին, իսկ այս նույնպես պահանջում եր սրանց անբաժան ղեկավարություն ու կարգադրություն. դ) Խորհրդային տերիտորիայի վրա զանազան ռայոնների ու հանրապետությունների միջև աշխատանքի բնական բաժանումը պատմականորեն այնպես եր դասավորվել (մանուֆակտուրային հյուսիսը, վառելիքով ու բամբակով հարուստ հարավն ու արևելքն և այլն), վոր հարկադրում եյին նմանապես ձուլվել ու կազմել միասնական տնտեսական մի ամբողջություն։

Խորհրդային հանրապետությունների արտաքին դրության հետ կապված հանգամանքները վերաբերվում են՝ ա) նրանց ռազմական պաշտպանության շահերին, բ) նրանց արտաքին առևտրի շահերին ու գ) շրջապատող իմպերիալիստական գիշատիչների դեմ մղվող դիպլոմատիական կռվի շահերին։

Ռազմական, դիպլոմատիական ու արտաքին առևտրի ասպարեզներում միացյալ ֆրոնտին ամենից ավելի լավ կարելի յե հասնել այս հանրապետությունները ձուլելով ու կազմելով միասնական միութենական պետություն, վորը արտաքին, միջազգային բնույթ ունեցող բոլոր խնդիրների համար միշտ հանդես կգա իբրև միասնական ամբողջություն։

Վերջապես այն հիմունքները, վորոնք բղխում են Խորհրդային իշխանության բուն իսկ դասակարգային բնույթից, մի իշխանություն, վոր հիմնվում է վոչ թե մասնավոր սեփականության, շահագործման ու մարդկանց բաժան-բաժան անելու վրա, այլ աշխատանքի վրա ու կապիտալի դեմ մղվող կռվի մեջ հանդես բերած համերաշխության վրա, նույնպես այն տեղը հասցրին, վոր նախկին անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետություններն ամենասերտ կերպով միանալով՝ կազմեցին մեկ միութենական Խորհրդային պետություն։ ՍՍՀՄ-ի կազմվելու հետևանքով, վոչ միայն աճում է Խորհրդային միացած հանրապետությունների ուժը, այլև ավելի կուռ պատվար է ստեղծվում համաշխարհային կապիտալիզմի դեմ,— և այս նոր միութենական պետությունը մի վճռական քայլ է հանդիսանալու այն ճանապարհին, վոր տանում է դեպի ամբողջ աշխարհի աշխատավորների միավորությունը, կազմելով միասնական համաշխարհային սոցիալիստական Խորհրդային հանրապետություն։

Ամեն մի նորածագ խորհրդային սոցիալիստական հանրապետություն ուղղակի ու ազատ մուտք է ունենալու նորակազմ ՍՍՀՄ-ի մեջ։ 1925 թ. մայիսին ՍՍՀՄ մեջ մտան նախկին Թուրքեստանում կազմակերպված Թուրքմենիստան և Ուզբեկիստան Խորհրդային հանրապետությունները։

54. ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ, ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ, ՉՈՐՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՍՍՀՄ ԿԱԶՄՎԵԼԸ

Միացած հանրապետությունների լիակատար հավասարաիրավության ու հավասարության պայմաններով, վորոնք ապահովում եյին նրանց ազգային զարգացման ազատությունը։ Այս սկզբունքները շարադրված են ՍՍՀՄ կազմելու հայտարարության ու դաշնագրի մեջ և այս սկզբունքների արտահայտությունն այն է, վոր 1) միացած միութենական հանրապետություններից յուրաքանչյուրն ազատ իրավունք ունի ուզած րոպեյին դուրս գալու Միությունից. 2) յուրաքանչյուր առանձին հանրապետություն պահպանում է այն ասպարեզները լիովին վարելու իրավունքը, վորոնցում ամենից շատ յերևան են գալիս ազգային առանձնահատկությունները—հողագործության, լուսավորության, արդարադատության, ներքին գործերի ու սոցիալական ապահովության ասպարեզները. 3) չի թույլատրվում միութենական հանրապետությունների տերիտորիան փոփոխության յենթարկելու՝ առանց նրանց համաձայնությունն ստանալու։

Այս ասպարեզների կոմիսարիատները, վորոնք ուղղակի առնչություն ունեն զանազան ազգերի կենցաղի, բարքերի, հողաշինարարության, դատակազմության, լեզվի ու կուլտուրայի հատուկ ձևերի առանձնահատկությունների հետ, միավորությունից դուրս են մնում և համապատասխան խնդիրները չեն յենթարկվում ՍՍՀՄ-ի իրավասությանը։

55. ՎՈ՞ՐՈՆՔ ԵՆ ՍՍՀՄ-Ի ԳԵՐԱԳՈՒՅՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ

ՍՍՀՄ-ի գերագույն օրգանն է ՍՍՀՄ-ի խորհուրդների համագումարը, իսկ այս համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում ՍՍՀՄ-ի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն (Միութենական ԿԳԿ)։

ՍՍՀՄ-յան Խորհուրդների համագումարը կազմվում է նույն այն նորմայով, վորով կազմվում է Խորհուրդների համառուսական համագումարը, այսինքն՝ քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներից, հաշվելով մեկ պատգամավոր՝ 25,000 ընտրողին, ու խորհուրդների նահանգական համագումարների ներկայացուցիչներից, հաշվելով մեկ պատգամավոր՝ 125000 բնակչին։

ՍՍՀՄ Խորհուրդների հերթական համագումարները գումարվում են տարին մեկ անգամ, իսկ արտակարգ համագումարները՝ Միութենական ԿԳԿ-ի վորոշմամբ կամ յերկուսից վոչ պակաս միութենական հանրապետությունների պահանջով։

56. ԻՆՉ Է ՍՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԳԿ-Ն

ՍՍՀՄիության ԿԳԿ-ն Խորհուրդների համամիութենական համագումարից հետո ամենաբարձրագույն օրգանն է՝ ՍՍՀ Միության մեջ։ Միութենական ԿԳԿ-ն է հրատարակում օրենքների կոդեքսները (հավաքածու), դեկրետները, վորոշումներն ու կարգադրությունները, միացնում է ՍՍՀ

Միության որենսդրության ու կառավարման ասպարեզներում կատարվող աշխատանքը, և վորոշում ե ՍԽՀ Միության ԿԳԿ-ի նախագահության ու ՍԽՀ Միության ԺԿԽ-ի գործունեյության ու լիազորությունների շրջանակը։

Համամիութենական ԿԳԿ-ի բոլոր դեկրետները, վորոշումներն ու կարգադրությունները պարտադիր են և ամբողջապես պետք ե կիրառվեն ՍԽՀ Միության ամբողջ տերրիտորիայում։

Միության ԿԳԿ-ն իրավունք ունի դադարեցնելու կամ վերացնելու միութենական հանրապետությունների խորհուրդների համագումարների ու ԿԳԿ-ների ու իշխանության մյուս որգանների դեկրետները, վորոշումներն ու կարգադրությունները՝ ՍԽՀ Միության տերրիտորիայում։ ԿԳԿ-ն աշխատում ե նստաշրջաններով։ ՍԽՀ Միության ԿԳԿ-ի հերթական նստաշրջանները գումարվում են տարին 3 անգամ։ ՍԽՀ Միության ԿԳԿ-ի նստաշրջանների միջև ընկած ժամանակամիջոցում իշխանության բարձրագույն որգանը ՍԽՀ Միության ԿԳԿ-ի նախագահությունն ե, վոր կազմված ե 21 անդամից։

ՍԽՀ Միության ԿԳԿ-ն ունի հինգ նախագահ՝ միութենական հանրապետությունների թվով, վորոնք ընտրվում են ՍԽՀ Միության ԿԳԿ-ի նախագահության անդամների կազմից։ Միության ԿԳԿ-ն պատասխանատու յե ՍԽՀ Միության խորհուրդների համագումարի առաջ։

57. ՈՒՄԻ՞Ց Ե ԿԱԶՄՎԱԾ ՅԵՎ Ի՞ՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄՎՈՒՄ ՍԽՀ ՄԻՈՒԹՅԱ՞Ն ԿԳԿ-Ն

ՍԽՀ Միության ԿԳԿ-ն կազմվում ե յերկու հիմնարկությունից, Միութենական Խորհրդից ու Ազգությունների Խորհրդից։

Միութենական խորհուրդն ընտրվում ե ՍԽՀ Միության խորհուրդների համագումարում, Միութենական հանրապետությունների ներկայացուցիչներից, նրանցից յուրաքանչյուրի բնակչության համեմատական չափերով. Միության ԿԳԿ-ն կազմված ե 371 անդամից։

Ազգությունների Խորհուրդը կազմվում ե միութենական ու ավտոնոմ խորհրդային սոցիալիստական հանրապետությունների ներկայացուցիչներից, յուրաքանչյուր հանրապետությունից 5-ական ներկայացուցիչ ու ՌՍՖԽՀ-ի ավտոնոմ մարզերի ներկայացուցիչներից, յուրաքանչյուրից մեկական ներկայացուցիչ։

Ազգությունների Խորհրդի կազմն ամբողջությամբ առած՝ հաստատում ե ՍԽՀ Միության խորհուրդների համագումարը։

Միութենական Խորհուրդն ու Ազգությունների Խորհուրդը միասին մի ամբողջություն կազմելով՝ այն ե ՍԽՀ Միության ԿԳԿ-ն կազմելով՝ աշխատում են առանձին ու միաժամանակ, նստաշրջանների կարգով։

Միութենական Խորհուրդն ու Ազգությունների Խորհուրդն իրավահավասար են։ ՍԽՀ Միության ԿԳԿ-ի քննության յենթարկվող որենսգծերն այն դեպքում են միայն որենքի ույժ ստանում, յերբ այս որենսգծերն ընդունում ե թե Միութենական Խորհուրդը և թե Ազգությունների Խորհուրդը։

Միութենական Խորհրդի ու Ազգությունների Խորհրդի նստաշրջանները կանխապատրաստելու ու նրանց աշխատանքները ղեկավարելու համար ընտրում են իրենց նախագահությունները, վորոնցից յուրաքանչյուրը կազմված ե լինում 7 անդամից։

Միությունների Խորհուրդն ու Ազգությունների Խորհուրդը պետք ե ընտրվեն ԽՍՀ Միության II համագումարում. մինչ այդ՝ ԽՍՀ Միության սահմանադրության համաձայն ԿԳԿ-ի դերը կատարում ե ԽՍՀ Միության ԿԳԿ-ն, վոր ընտրված ե 371 անդամից բաղկացած կազմով ԽՍՀ Միության խորհուրդների I համագումարում։

58. Ի՞ՆՉ Ե ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԳԿ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀ Միության ԿԳԿ-ի նախագահությունը Միության ԿԳԿ-ի նստաշրջանների միջև ընկած ժամանակամիջոցում ԽՍՀ Միության իշխանության բարձրագույն որենսդրական, կատարողական ու կարգադրիչ որգանն ե։

ԿԳԿ-ի նախագահությունն ե հսկում, վոր կյանքում իրագործվեն ԽՍՀ Միության սահմանադրությունն ու ԽՍՀ Միության ԿԳԿ-ի ու խորհուրդների համագումարի վորոշումները, այլև հրատարակում ե դեկրետներ, վորոշումներ ու կարգադրություններ՝ իր նախաձեռնությամբ կամ Միության ու առանձին միութենական հանրապետությունների իշխանության այլ որգանների առաջադրությամբ։

Միության ԿԳԿ-ի նախագահությունն ընտրում ե Միության ԿԳԿ-ն՝ 21 անդամից բաղկացած կազմով, ընդ վորում այս անդամների մեջ մտնում են Միութենական Խորհրդի ու Ազգությունների Խորհրդի նախագահությունները՝ իրենց լրիվ կազմով։

59. Ի՞ՆՉ ԴԵՐ ՈՒ ԿԱԶՄ ՈՒ՞ՆԻ ՍԽՀՄ-Ի ԺԿԽ-Ն

ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ն Միության ԿԳԿ-ի կատարողական որգանն ե և կազմված ե նախագահից, նրա տեղակալներից ու հետևյալ կոմիսարներից. Արտաքին գործերի, Ռազմական ու ծովային, Արտաքին առևտրի, Ներքին առևտրի, Հաղորդակցության ճանապարհների, Փոստի ու հեռագրի, Բանվորագյուղացիական տեսչության, Ժողովրդական տնտեսության գերագույն խորհրդի, Աշխատանքի, այլև Ֆինանսների։

Այս տասը կոմիսարներից առաջին վեցը, վորոնք համամիութենական կամ ձուլված կոմիսարիատներ են, գտնվում են ԽՍՀ Միության ԺԿԽ-ի կազմի մեջ միայն և չեն լինում առանձին միութենական հանրապետությունների ԺԿԽ-ներում, իսկ վերջին 4 կոմիսարիատները, վորոնք միացրած են, առանձին միութենական հանրապետությունների մեջ ել կան. ընդ սմին առանձին հանրապետությունների միացրած կոմիսարիատները, իրենց գործունեյության ընթացքում, պարտական են ղեկավարվելու ԽՍՀ Միության համապատասխան ժողկոմատների կարգադրություններով։

Բացի ԽՍՀՄ վերոհիշյալ տասը ժողկոմատներից, Միության ԿԳԿ-ին կից հիմնվում ե Գերագույն դատարան, դատարանական գերագույն վերահսկողության ֆունկցիաներով. իսկ Միության ԺԿԽ-ին կից հիմնվում ե ԽՍՀ Միության Աշխատանքի ու Պաշտպանության Խորհուրդ ու Պետական Քաղաքական Վարչության միացյալ որգան, վորի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով մտնում ե Միության ԺԿԽ-ի մեջ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ VIII ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. Ленин «Выборы в учредительное собрание и диктатура пролетариата».
2. Ленин "Тезисы о власти„.
3. Ленин «Об обмане народа лозунгами свободи и равенства».
4. Ленин «Политическия партии и задачи революции в России».
5. Ленин «Государство и революция».
6. Ленин «Полное собрание сочинений»: томы XIV и XV.
7. Стучка «Учение о государстве и конституция РСФСР».
8. Гуревич « Основы советской конституции».
9. Троцкий «Октябрскак революция».
10. Яковлев. «Об историческом смысле Октябрск. революции».
11. «Декреты Октября».
12. «За пять лет» Сборник ЦК- РКП *(б.)*
13. «Пять лет власти Советов». Издание ВЦИК.
14. Троцкий «1905 год».
15. «История Петроградского Совета Рабочих депутатов».
16. Владимирски. «Организация советской власти на местах».
17. » «Советы, Исполкомы и С'езды Советов».
18. » «Конституция РСФСР».
19. » «Стеонграфические отчетье и постановления всеросийских с'ездов советов».
20. «Постановления и распоряжения Президиума ВЦИК IX созыва» № 1 январь 1922 г.
21. «Положение о губернских С'ездах Советов и Губисполкомах» (IV сессия ВЦИК IX созыва)
22. «Конституция Союза ССР».
23. «I С'езд Советов Союза ССР» (стенографический отчет и постановления).
24. «II сесия Центрального Исполнительного Комитета Союза ССР» (стенографический отчет и постановления).
25. «Вестник ЦИК' СНК и СТО Союза ССР».

ԳԼՈՒԽ IX

I ՈՒ II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼՆԵՐԸ

1. Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ «ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ»

Ինտերնացիոնալ նշանակում է միջազգային կամ համաշխարհային միավորություն, համաշխարհային միություն։

2. Ի՞ՆՉՊԵՍ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՍՇՏԱԲՈՎ

1864 թվականից սկսած՝ գոյություն ստացան բանվոր դասակարգի միջազգային կազմակերպություններ։ Այսպիսի առաջին կազմակերպություն էր «Բանվորների միջազգային ընկերությունը», որ ավելի հայտնի յե I Ինտերնացիոնալ անունով։

Ներկայումս (I ու II ½ ինտերնացիոնալների ձուլումից հետո) յերկու միջազգային քաղաքական կազմակերպություններ կան. II ինտերնացիոնալը (որ գլխավորապես սոցիալ դեմոկրատական է) ու III ինտերնացիոնալը, կոմմունիստականը։

Բացի սրանից՝ գոյություն ունեն միջազգային արհեստակցական յերկու կազմակերպություններ. Ամստերդամի Ինտերնացիոնալը ու Արհեստակցական Միությունների Կարմիր Ինտերնացիոնալը (Պրոֆինտերն)։

3. Ի՞ՆՉՊԵՍ ԾԱԳԵՑ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՏՔԸ

Յերբ կապիտալիզմը յուր սարսափներով տարածվեց Յեվրոպայում և սկսեց պատկերանալ իբրև միջազգային վտանգ, բանվոր դասակարգի մեջ պահանջ ծագեց՝ կապիտալիզմին յուր միջազգային կազմակերպությունն ու ծրագիրը հակադրելու։ Այս պահանջը փայլուն ու խոր արտահայտություն ստացավ «Կոմմունիստական մանիֆեստի»-ի մեջ, որ կազմել եյին Մարքսն ու Ենգելսը և որ հրատարակվեց 1848 թվին Ֆրանսիայի փետրվարյան հեղափոխության նախօրյակին։

4. Ի՞ՆՉ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ԷՐ ՆԱԽՈՐԴՈՒՄ I ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻՆ

Դեռ եւս 40-ական թվականներին նկատելի յե, որ գերման հեղափոխականները փորձ են անում միջազգային միություն կազմելու՝ անգլիական ու ֆրանսիական բանվորների հետ։

30-ական թվականների յերկրորդ կեսին, գերման բանվորները կազմակերպել եյին «Արդարամիտների Միությունը», որի սկզբնական ձապագ նշանաբանն էր. «Բոլոր մարդիկ յեղբայրներ են»։ Այս միությունը, որ սկզբում զուտ գերմանական էր, 1847 թվին դարձավ միջազգային՝ «Կոմմունիստների միություն» անունով, ընդ որում միության I համագումարում, որ տեղի ունեցավ 1847 թվի ամառը, Լոնդոնում, նախկին

նշանաբանը փոխարինեցին դասակարգային մարտական այս նշանաբանով. «Պրոլետարներ, բոլոր յերկիրների, միացե՛ք»։ Կոմմունիստների Միությունը կազմակերպվեց Մարքսի ու Ենգելսի մոտիկ մասնակցությամբ։

Միության խնդիրներն այսպես եյին վորոշված կանոնադրության I կետում. «Միության նպատակն ե՝ բուրժուազիայի տապալումը, պրոլետարիատի տիրապետությունը, դասակարգերի հակամարտության (հակադրության) վրա հիմնված հին բուրժուական հասարակության վոչնչացումը ու նորի հիմնադրությունը՝ առանց դասակարգերի ու առանց մասնավոր սեփականության»։

1847 թվի վերջին, II համագումարում, քննվեց ծրագրի այն նախագիծը, վոր առաջարկել եյին Մարքսն ու Ենգելսը։ Ծրագրի հիմքերն ընդունվեցին և նրա հեղինակներին առաջարկեցին մշակել մանիֆեստը։

Այս հանձնարարությունը կատարվեց և այսպիսով առաջ յեկավ հռչակավոր «Կոմմունիստական մանիֆեստը»։

Կոմմունիստների Միությունը մի լայն ու բաց կազմակերպություն չեր, այլ գլխավորապես գաղտնի ընկերություն եր։ Նրա առանձին անդամները մասնակցում եյին հեղափոխական կռվին (Գերմանիայի 1848 թըվականի մարտի հեղափոխության ժամանակ), սակայն իբրև միջազգային կազմակերպութուն, Միությունը մեծ դեր չեր կատարում։ Կոմմունիստների Միությունը գոյություն ունեցավ մինչև 1852 թվականի վերջը։

5. Ի՞ՆՉ Ե «ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏԸ»

«Կոմմունիստական մանիֆեստը» կամ, վոր նույնն ե, «Կոմմունիստական կուսակցության մանիֆեստը» պետք ե նկատել իբրև միջազգային կոմմունիստական անդրանիկ կազմակերպության ծրագիր, վոր հիմնված ե կապիտալիստական տնտեսության զարգացման որենքների ուսումնասիրության վրա։

Մանիֆեստի հիմնական միտքն այն ե, վոր կենսական բարիքների արտադրությունն ու հասարակության կազմությունը, վոր բղխում ե այն արտադրությունից, տվյալ դարաշրջանի քաղաքական ու մտավոր պատմության հիմքն ե կազմում։ Սրան ել համապատասխան, ամբողջ պատմությունը այն ժամանակվանից սկսած, յերբ ծագումն առավ սեփականությունն ու քայքայվեց նախնադարյան համայնական հողատիրությունը, դասակարգային կռվի պատմություն ե յեղել. այսինքն այն կռվի, վոր մղում եյին շահագործող ու շահագործվող, իշխող ու ճնշված դասակարգերն իրար դեմ։ Այս կռիվը կապիտալիստական հասարակարգում այն աստիճանին ե հասել, վորի ժամանակ պրոլետարիատը (շահագործվող ու ճնշված դասակարգը) չի կարող ազատագրվել բուրժուազիայից (շահագործող ու ճնշող դասակարգից) առանց ազատագրելու միևնույն ժամանակ ու ընդմիշտ ամբողջ հասարակությունը շահագործումից, ճնշումից ու դասակարգային կռվից[1])

Կոմմունիստների անելիքն այն ե, վոր ըմբռնեն այս կռվի պայմանները և սրա առանձին փուլերի ժամանակ աչքաթող չանեն պրոլետարիատի ընդհանուր շարժման շահերը։

Պրոլետարիատի իբրև դասակարգ կազմակերպվելը, քաղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի ձեռքով ու այս իշխանության ոգ-

1) Տես Մանիֆեստի 1883 թվականի հրատարակության հառաջաբանը, վոր գրել ե Ենգելսը։

տագործումը արտադրության միջոցները մասնավոր սեփականությունից հանրային սեփականություն դարձնելու նպատակով,—ահա այն մոտավոր խնդիրները, վորոնք պետք ե ծառանան բոլոր կոմմունիստների առջև։

Մանիֆեստի նպատակն եր՝ հայտարարել, վոր բուրժուական սեփականության, հետևաբար և բուրժուական հասարակարգի քայքայումն անխուսափելի յե և վոր այդ հասարակարգին պետք ե փոխարինե կոմմունիստական հասարակարգը։ Կոմմունիստներն այս նպատակին պետք ե ձգտեն բացահայտ կերպով։ Այս նպատակին կարելի յե հասնել արդի ամբողջ հասարակարգը բռնի կերպով տապալելու միջոցով միայն։

Չնայած, վոր սաստիկ փոփոխվել են տնտեսական ու հանրային պայմաններն այն 75 տարվա ընթացքում, վորոնք սահել, անցել են Մանիֆեստի յերևան գալու ժամանակվանից, Մանիֆեստի ընդհանուր թեզիսներն ամբողջությամբ առած, մինչև այժմ ել պահպանել են իրենց ամբողջ նշանակությունը։ Հնացած են այն գործնական ձեռնարկումները միայն, վոր Մանիֆեստը առաջ եր մղում իշխանությունն ամրապնդելու համար այն բանից հետո, յերբ այդ իշխանությունը նվաճած կլինի պրոլետարիատը։

6. ՅԵ՞ՐԲ ԾԱԳԵՑ ԱՌԱՋԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

I Ինտերնացիոնալը հիմնվեց 1864 թվի սեպտեմբերի 28-ին, Լոնդոնում, Կոմմունիստների Միության ցրումից 12 տարի անց։ I Ինտերնացիոնալը ծագումն առավ այն ժամանակ, յերբ 1848 թվականի հեղափոխությունից հետո վրա հասած ռեակցիան սկսել եր թուլանալ և բանվորական շարժումը Ֆրանսիայում և Անգլիայում այնքան եր ամրացել, վոր միջազգային կազմակերպություն առաջացնելու նախաձեռնությունը կարող եր համակրությամբ վողջունվել։

7. Ի՞ՆՉՊԵՍ ԾԱԳՈՒՄՆ ԱՌԱՎ I ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Ինչպես արդեն մատնանշեցինք, I Ինտերնացիոնալի ծագումից առաջ, գոյություն են ունեցել միջազգային բնույթ ունեցող մի շարք սոցիալիստական ու կոմմունիստական միություններ։ Սակայն թե «Կոմմունիստների Միությունը» ու թե «Միջազգային Ասոսիացիան» (1855-59 թ. թ.) ընդգրկում եյին գլխավորապես վտարանդի (եմիգրանտ) խմբակները և քանակով չափազանց փոքր եյին։ Որինակ «Կոմմունիստների Միությունը» մոտ 100 անդամ ուներ։

I Ինտերնացիոնալի հիմքը դրին սոցիալիստական տրամադրություն ունեցող ֆրանսիական այն բանվորները, վորոնք 1862 թվի ոգոստոսին Լոնդոն եյին յեկել համաշխարհային ցուցահանդեսին և վորոնք 1862 ոգոստոսի 5-ի միտինգում համոզում եյին թե այսուհետև միասին պետք ե քըննել բանվորական շարժման բոլոր խնդիրները։ 1863 թվականին ֆրանսիական բանվորները կրկնեցին իրենց այցելությունը Լոնդոն, վորպեսզի մասնակցեն այն միտինգին, վորի նպատակն եր համակրություն արտահայտել ընդդեմ ցարիզմի ծագած Լեհական ապստամբությանը։

Ֆրանսիական ու անգլիական բանվորներին իրար մոտեցնելու գաղափարը արմատներ արձակեց, և 1864 թվականին մի նոր պատվիրակություն ուղարկվեց Լոնդոն։ 1864 թվականին, սեպտեմբերի 28-ին Լոնդոնում բաց-

մամարդ միտինգ տեղի ունեցավ. վորի ժամանակ վորոշվեց բանվորների միջազգային միություն կազմել: Ընտրվեց կոմիտե, վորին և լիազորություն տվին իր կազմը լրացնելու նոր անդամներով և այս միության ծրագիրն ու կանոնադրությունը մշակելու:

Կոմիտեն գործի կոչեց ուրիշ յերկրների ներկայացուցիչներին, ի թիվս վորոց և Կարլ Մարքսին, և 1864 թվի նոյեմբեր 1-ին մերժելով Մաձձինու նախագիծը, վորի թերությունը խստորեն արտահայտված կենտրոնացումն ու դասակարգային կռվի թեորիան ժխտելն եր, միաձայն ընդունեց «Բանվորների Միջազգային Ընկերության» ծրագրի ու կանոնադրության այն նախագիծը, վոր կազմել եր Մարքսը, և վորի առաջաբանն սկսվում եր հետևյալ հանրահռչակ խոսքերով. «Բանվորների ազատագրությունը պետք ե հենց իրենց, բանվորների գործը լինի»:

Այսպես ծագումն առավ I Ինտերնացիոնալը:

8. Ի՞ՆՉ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՐ I ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Կանոնադրության համաձայն «Բանվորների Միջազգային Ընկերության» (I Ինտերնացիոնալի) գլուխ պետք ե կանգնի Գլխավոր Խորհուրդը, վոր կազմվում եր տարբեր յերկրների բանվորների ներկայացուցիչներից: Կոնգրեսները (համագումարներ) ամեն տարի վորոշում եին Գլխավոր Խորհրդի տեղը: Գլխավոր Խորհուրդը պետք ե միջնորդ հանդիսանա Ընկերության մեջ մտնող տարբեր կազմակերպությունների միջև, այնպես վոր յուրաքանչյուր առանձին յերկրի բանվորներ մշտապես իրազեկ լինեյին մյուս յերկրների բանվորական շարժման մասին և վորպեսզի հնարավոր լիներ միջազգային վեճեր ծագելու դեպքում միաժամանակ ու ընդհանուր ծրագրով գործնական քայլերի դիմել:

Բանվորների Միջազգային Ընկերության անդամները պետք ե ջանքեր թափեին առանձին յերկրների բանվորական միությունները համախմբելով՝ ազգային միավորություններ կազմելու, վորոնց գլուխ կանգնեին կենտրոնական որգանները:

I Ինտերնացիոնալը կանոնադրության մեջ առաջ եր քաշում այնպիսի թեզիսներ, վորոնք նրան պետք ե բանվոր դասակարգի միջազգային կուսակցություն դարձնեյին:

9. Ի՞ՆՉ ՆՊԱՏԱԿ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՐ I ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

I Ինտերնացիոնալի հիմնական թեզիսները շարադրված եյին այսպես կոչված «Սահմանադիր հայտարարության» (մանիֆեստ) մեջ, վոր գրել եր Մարքսը: Այս հայտարարության մեջ արտասովոր ուժով, պայծառությամբ ու հստակ խոսքերով շարադրված եր բուրժուական հասարակության զարգացման ընդհանուր բնույթը և մատնանշված եր այն ճանապարհը, վորով պետք ե ընթանար բանվոր դասակարգը՝ յուր դասակարգային շահերի համար կռվելիս:

Հայտարարության մեջ՝ իշխող դասակարգերի արտաքին քաղաքականությունը, վոր ազգային պառակտում ու նախապաշարումներ ե սերմանում և անվերջ պատերազմների մեջ վատնում ե ժողովրդական արյունն ու ժողովրդական հարստությունը, հակադրվում եր բանվոր դասակարգի արտաքին քաղաքականության մի նոր սիստեմ, վոր հիմնված եր պրոլետարիատի միջազգային յեղբայրության ու համերաշխության վրա:

Պրոլետարիատի կռվի վերջնական նպատակը վոչ թե այս կամ այն դասակարգային արտոնությունները նվաճելն ե, այլ ամեն մի դասակարգային տիրապետության վոչնչացումը: I Ինտերնացիոնալը իրեն խնդիր եր դնում՝ 1) Հեղափոխական սոցիալիզմի (կոմմունիզմի) գաղափարների լայնածավալ պրոպագանդն ու 2) Տարբեր յերկրների բանվոր դասակարգի գործադուլային կռվի ղեկավարությունը:

10. Ի՞ՆՉՊԵՍ ԵՐ ԱՊՐՈՒՄ ՈՒ ԳՈՐԾՈՒՄ I ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

I Ինտերնացիոնալը, վոր գոյություն ունեցավ Յեվրոպայում 8 տարի, գլուխ եր կանգնած և ղեկավարում եր ամբողջ յեվրոպական ու մասամբ նաև ամերիկական շարժումը: 6 տարվա ընթացքում, մինչև 1870 թվականի ֆրանս-պրուսական պատերազմը, I Ինտերնացիոնալի ազդեցությունը շատ արագ եր տարածվում: I Ինտերնացիոնալը կապակցություն ուներ համարյա բոլոր կուլտուրական յերկրների հետ, մասամբ սեփական սեկցիաների միջոցով (Ֆրանսիայում, Բելգիայում, Իտալիայում, Շվեյցարիայում), մասամբ ել անլեգալ կապեր հաստատելով այն յերկրների հետ, վորոնց քաղաքական պայմանները թույլ չեյին տալիս բանվորական կազմակերպություններին բացահայտ կերպով հարել Ինտերնացիոնալին: Չնայած, վոր Գլխավոր Խորհուրդը քիչ անգամ եր հանդես գալիս դեկլարացիաներով ու խուսափում եր բարձրագոչ կոչերից, այնուամենայնիվ նրա ազդեցությունը բանվորական մասսաների վրա այնքան մեծ եր, վոր բուրժուազիան մեծ յերկյուղով եր նայում նրան՝ դողալով և հեղափոխություն սպասելով: Ինտերնացիոնալի մասնակցությամբ եր տեղի ունենում Յեվրոպայում այն ժամանակ սկսված գործադուլային կռիվը, վոր հեղափոխականացրեց բանվորական մասսաներն և ավարտվեց ֆրանսիական բանվորների ապստամբությամբ, վոր հայտնի յե 1871 թվի Փարիզի կոմմունա անունով:

I Ինտերնացիոնալը յուր գաղափարական, կազմակերպչական աշխատանքը վարում ու կատարում եր կոնգրեսների (վորոնք թվով 6 են) ու կոնֆերենցիաների (թվով 2) միջոցով: I Ինտերնացիոնալն այս կոնգրեսների միջոցով տարբեր յերկրների բանվորների պարագլուխներին հնարավորություն եր տալիս փոխադարձ սերտ հարաբերությունների մեջ մտնելու և ընդարձակ չափերով նպաստում եր սոցիալիստական գաղափարների տարածմանը: Ինտերնացիոնալի այն սեկցիաները, վորոնք I Ինտերնացիոնալի մեջ ամենանշանավոր դերն եյին կատարում, Ինտերնացիոնալի քայքայումից հետո, կազմեցին ամենահզոր ազգային սոցիալիստական կուսակցություններ, բացառությամբ անգլիական սեկցիայի, վորը վորևե խոշոր սոցիալիստական կուսակցություն չկազմեց:

11. Ի՞ՆՉ ԵՐ I ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՅԵՐԿՈՒ ԿՈՆԳՐԵՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին յերկու կոնգրեսներում (1866 թվի սեպտեմբերին, Ժնևում ու 1867 թվի սեպտեմբերին Լոզանում) կոմմունիզմը պայքարում եր գըլ-

խավորապես ֆրանսիական պատվիրակության մանր բուրժուական տենդենցների դեմ։ Ֆրանսիական պատվիրակության մեջ գերակշռում էին պրուդոնիստները *)։

Պրուդոնիստներն առաջ էին մղում փոխօգնության գաղափարը, արհեստակցական միություններին հանձնարարում էին իրենց միջոցները դնել արտադրողական ընկերությունների մեջ, հրապարակ էին քաշում բանվորական միությունների շրջանում վարկի գաղափարը, փոխանակային բանկերի կազմակերպումը և այլն։

Պրոլետարիատի քաղաքական կռվի խնդիրը, ինչպես և արտադրության միջոցների կոլլեկտիվ սեփականության խնդիրը հետին շարքն էին դասում։ Պրուդոնիստների այն փորձը, որով նրանք աշխատում էին անցկացնել այն առաջարկը, թե իբրև ընկերության անդամ ընդունվեն ֆիզիքական աշխատանքով զբաղվող բանվորները միայն, հաջողությամբ չպսակվեց։ Նրանց կամքի հակառակ, թեև շատ ճապաղ կերպով, անցավ այն կետը, թե անհրաժեշտ է, որ բանվորները նվաճեն քաղաքական իշխանությունը։

Ժընևի կոնգրեսում քննվում էին մի շարք խնդիրներ, որոնք հսկա նշանակություն ունեին այն ժամանակվա բանվորական շարժման զարգացման համար։ Այս խնդիրները հետևյալներն էին. կապիտալի ու աշխատանքի միջև տեղի ունեցող կռվում միջազգային փոխօգնության խնդիր, բանվորական ժամանակը կրճատելու, դեռահասների ու մանուկների աշխատանքի, ուղղակի ու անուղղակի հարկերի, միջազգային վարկի ու մշտական բանակի խնդիրները։

Այս բոլոր խնդիրների նկատմամբ գաղափարական հաղթությունը տարավ մարքսիզմը։ Չնայած ֆրանսիական բանվորների ներկայացուցիչների ազդեցությանը, որոնք պրուդոնիստական հայացքներ էին արտահայ-

*) Պրուդոնիզմը (որ այսպես կոչվում է այս հոսանքի պարագլխի անունով, որ ֆրանսիական անարխիստ հեղինակ Պրուդոնն էր) առաջ յեկավ ու կազմակերպվեց իբրև քաղաքական-սոցիալական սխեմ այն ռեակցիայի շրջանում, որը գոյություն ուներ Ֆրանսիայում 1848 թվի պրոլետարիատի հունիսյան ապստամբությունը ճնշելուց հետո։

Պրուդոնիզմը, իբրև ուսմունք, թշնամաբար էր տրամադրված դեպի կապիտալիստական հասարակարգը, բայց տարբերվելով մարքսիզմից, որը պնդում էր, թե կապիտալիստական հասարակության զարգացումը բնականաբար սոցիալիստական հասարակարգի նյութական ու հոգևոր նախադրյալներ է կանխապատրաստում և որը յուր տակտիկան հիմնում էր վերոհիշյալ զարգացության վրա,—հիշյալ հոսանքը (պրուդոնիզմը) հույս ուներ կապիտալիզմը հաղթահարելու՝ բանվորներին հանձնարարելով կռվել իրենց ազատագրության համար ոչ թե քաղաքական միջոցներով, այլ տնտեսական մանր ձեռնարկումներով և մանավանդ ձրի վարկ ու արդար փոխանակություն կազմակերպելով մանր արտադրողների միջև, որոնք էին՝ անկախ մանր գյուղացիներն ու արհեստավորները։ Պրուդոնիզմը մի կենսազուրկ գաղափար էր, որովհետև փորձում էր խոշոր կապիտալի ու կենտրոնացած տնտեսության տիրապետության վրա հիմնված մի հասարակության մեջ սոցիալիստական խնդիրը լուծել տնտեսական այնպիսի միջոցներով, որոնք դուրս չէին գալիս մանր արտադրության ու փոխանակության շրջանակներից։ Խոշոր արդյունաբերության մեջ տեղի ունեցող վարձու աշխատանքի շահագործումից բղխող խնդիրները պրուդոնիստները հույս ունեին վճռել նրանով, որ ձրի վարկ տվող ազգային բանկ հիմնվեր և արդյունքների անփող փոխանակություն կազմակերպվեր մեկուսացած արտադրողների միջև՝ ըստ այս արդյունքների իրական արժեքի։

Կապիտալիստական զարգացման օրենքներն անըմբռնելի էին պրուդոնիստների համար ուստի և նրանք ամեն քայլափոխում շարունակ թշնամաբար էին վերաբերվում բանվորական շարժմանը, որի նպատակն էր բանվորներին արհմիությունների ու կուսակցությունների մեջ միացնել ու կազմակերպել։

տում, անցավ այն հարցը, ըստ որի միջազգային փոխօգնություն պետք է ցույց տալ աշխատանքի՝ կապիտալի դեմ մղվող կռվում գործադուլների միջոցով։ Ընդունվեց բանաձև՝ հօգուտ 8 ժամյա բանվորական օրվա, որը այն ժամանակվանից սկսած՝ համաշխարհային բանվորական շարժման մարտական նշանաբանը դարձավ։ Բանվորական արհեստակցական միությունների խնդրի վերաբերմամբ ընդունվեց մի բանաձև, որ մատնանշում էր, թե միություններն ավելի ու ավելի յեն դառնում բանվոր դասակարգի կազմակերպչական կենտրոններ և որ յեթե միությունները (մանավանդ անգլիական միությունները) ժամանակավորապես չեն գիտակցում բավականաչափ, թե կապիտալիստական հասարակարգի բուն իսկ հիմքերի դեմ կռվելը որքան անհրաժեշտ է, ապա նրանք կապիտալիստական շահագործման դեմ ամենօրյա կռվին զուգընթաց՝ պետք է գիտակցաբար գործեն իբրև կազմակերպչական կենտրոններ բանվոր դասակարգի, որը ձգտում է յուր լիակատար ազատագրության մեծ նպատակին։

Այնուհետև Լոզանի կոնգրեսում առանձնապես առաջ մղվեց պետության խնդիրների ու պրոլետարիատի քաղաքական անելիքների հարցը, այլև պատերազմի ու բանվոր դասակարգի միջազգային քաղաքականության հարցերը։

Առաջին հարցի, այն է՝ պետության խնդրի մասին, առաջ մղվեց մի պահանջ, ըստ որի պետության ձեռքը պետք է անցնի փոխադրության, արտադրության միջոցների ու գործիքների, այլև հողի սեփականությունը։ Սակայն այս խնդրի լուծումը, պրուդոնիստների առարկությունների հետևանքով, հետաձգվեց հաջորդ կոնգրեսին։ Բանվոր դասակարգի քաղաքական կռվի հարցի նկատմամբ Մարքսի հզոր ազդեցությամբ ընդունվեց մի բանաձև, որ ասում էր, թե՝ 1) Բանվորների սոցիալական ազատագրությունը չի կարելի անջատել նրա քաղաքական ազատագրությունից, 2) Որ քաղաքական ազատագրությունների հաստատումը առաջնակարգ ու անպայման անհրաժեշտ մի միջոց է։

Այս բանաձևի պատճառով շուտով կատաղի պայքար բորբոքվեց Ինտերնացիոնալի ներսում, պայքար, որ փոքր դեր չի խաղացել Ինտերնացիոնալի խորտակման գործում։

Այն դերը, որ բռնում էր I Ինտերնացիոնալը բանվորական շարժման հիմնական խնդիրների նկատմամբ մոտ 60 տարի սրանից առաջ, վկայում է, թե Կարլ Մարքսը ինչ հանճարեղ թափանցամտություն ու խորություն ուներ, հատկություններ, որոնց համար Ինտերնացիոնալը այնքան յերախտապարտ է նրան, յուր հոգևոր հորն ու առաջնորդին։

12. ԻՆՏԵՐ. III ԿՈՆԳՐԵՍԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

III կոնգրեսը (1868 թվի սեպտեմբերին, Բրյուսսելում), որից առաջ խոշոր գործադուլներ էին տեղի ունեցել, արդեն ընթացավ կոմմունիստների շատ մեծ ազդեցության ներքո։ Ճիշտ է, պրուդոնիստական ոգով տրամադրված ֆրանսիացիներին հաջողվեց մի բանաձև անցկացնել ձրի վարկ կազմակերպելու համար փոխանակային բանկեր հիմնելու օգտին, սակայն, ընդ ամին, առիթ ունենալով Պրուսիայի ու Ֆրանսիայի հարաբերությունների սրվելը, ընդունվեց մի բանաձև, որ դատապարտում էր պատերազմը և կոչ էր անում պատերազմի հայտարարման դեպքում ընդհանուր գործա-

գույքի վիճակը։ Նմանապես ընդունվեց հողի, անտառի, հանքավայրերի, երկաթուղիների, ջրանցքների և այլն կոլեկտիվ (պետական) սեփականության բանաձևը։ Հողի կոլեկտիվ սեփականության դեմ առանձնապես առարկում էին պրուդոնիստները՝ արտահայտելով ֆրանսիական մանր գյուղացիության մասսայի իդեոլոգիան։

13. Ի՞ՆՉ ԷՐ 4-րդ ԿՈՆԳՐԵՍԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

IV կոնգրեսում (1869 թվի սեպտեմբերին, Բազելում), որ ընթանում էր կոմունիստների էլ ավելի մեծ ազդեցության ներքո, որոնց պաշտպանում էին անարխիստները, սեփականությանը վերաբերող խնդրում, վերջնականապես հաստատվեց այն պահանջը, թե արտադրության գործիքների մասնավոր սեփականությունը, ի թիվս որոց և հողի սեփականությունը, պետք է անցնի ամբողջ ժողովրդին։ Ժառանգման իրավունքը վերացնելու հարցի նկատմամբ, որ առաջարկել էր հանել Բակունինը, ոչ մի համաձայնություն չհասան։

Համաժողովը, որ կանգնած էր Բակունինի տեսակետի վրա, առաջարկեց մի բանաձև, որ ճանաչում էր, թե մասնավոր սեփականության էական տարրը կազմող ժառանգման իրավունքը սատարել է այն բանին, որ հողային սեփականությունն ու սոցիալական հզորությունն անցել ու կենտրոնացել է մի քանի ձեռքերում, ուստի և այս ժառանգման իրավունքը հողի ընդհանուր սեփականություն դառնալու մեծագույն արգելքներից մեկն է կազմում։ Մյուս կողմից՝ արգելք լինելով այն բանին, որ մարդիկ օգտվեն նյութական զարգացման միատեսակ միջոցներից, ժառանգման իրավունքը հանդիսանում է մի անարդար արտոնություն, որ սպառնում է հանրային շահերին։

Գլխավոր խորհուրդը զարգացնում ու պաշտպանում էր հակադիր տեսակետը, որ հիմնավորված էր Կարլ Մարքսի հատուկ գրության մեջ։

Մարքսի գրությունը ճանաչում էր, որ ժառանգման իրավունքը ոչ թե պատճառ է, այլ հետևանք, իրավաբանական արգասիք արդի տնտեսակարգի, որ հիմնված է մասնավոր սեփականության վրա։ Այս պատճառով էլ ժառանգման իրավունքի վերացումը կլինի բնական հետևանք հեղափոխության, որը կվերացնե արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը։ Սակայն ժառանգման իրավունքի վերացումը չի կարող սեփականության այսպիսի վերացման ելակետ ծառայել... Այս կլիներ թեորիապես սխալ ու գործնականում էլ հետադիմական մի քայլ։ Բայց ընդսմին, Մարքսն ընդունում էր, որ անցման բոպեներում, իբրև անցումնային (передный) միջոցներ, կարելի է հանձնարարել, որ ժառանգության վրա դրված հարկերը բարձրացվեն և կտակների ազատությունը սահմանափակվի։ Սակայն այս երկու տեսակետներից ոչ մեկն էլ բացարձակ մեծամասնություն չստացավ, ուստի և երկուսն էլ մերժվեցին։

14. ԻՆՉՈ՞Վ ՆՇԱՆԱՎՈՐ ԴԱՐՁԱՎ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ, ՈՐԸ ՀԱՋՈՐԴԵՑ IV ԿՈՆԳՐԵՍԻՆ

V կոնգրեսը պետք է գումարվեր Փարիզում, 1870 թվի սեպտեմբերին. սակայն բռնկված ֆրանս-պրուսական պատերազմի հետևանքով չկայացավ։ Գլխավոր խորհուրդը 9-ն սեպտեմբերի թվակիր գրության մեջ քննադատության ենթարկելով բանվոր դասակարգի միջազգային քաղաքականության խնդիրները, հանձնարարում էր. մանավանդ ֆրանսիական բանվորներին՝ սպասողական դիրք բռնել կառավարության նոր, հանրապետական ձևի վերաբերմամբ։ Գրության մեջ ասված էր. «Բանվորները չպետք է կրկնեն անցյալը, այլ պետք է կերտեն ապագան. թող բանվորները հանգիստ ու փնական կերպով օգտագործեն այն միջոցները, որ տալիս է հանրապետական ազատությունը, իրենց սեփական դասակարգը կազմակերպելու համար»։

Այս նախազգուշացումը չկարողացավ ազդել դեպքերի ընթացքի վրա, որոնք հասցրին 1871 թվի Փարիզի կոմունային, որի պատմությունը հետ շպրտեց բանվորական շարժումը և ամենասաստիկ հարվածը տվեց հենց իրեն, Ինտերնացիոնալին։

Դեռ ևս 60-ական թվականների վերջին (1868 թվականից սկսած) I Ինտերնացիոնալի մեջ ներքին պառակտումներ էին ծագում, որոնք գլխավորապես կապված էին ռուս անարխիստ Բակունինի անվան հետ։ Բակունինը Շվեյցարիայում հիմնեց «Սոցիալիստական Դեմոկրատիայի Միությունը», որտեղ 1868 թվականի վերջերից ագիտացիա էր մղում իր անարխիստական թեորիաների օգտին։ Մարքսիզմը հաստատում էր, որ դասակարգերի կռիվը վորոշվում է կապիտալիստական արտադրության պայմաններով և անհրաժեշտորեն հասցնելու է պրոլետարիատի դիկտատուրային, և որ այս դիկտատուրան մի անցում է դեպի ամեն տեսակ դասակարգերի ոչնչացումն ու դեպի անդասակարգ հասարակությունը։ Դասակարգերի կռիվն ամենից առաջ քաղաքական կռիվ է։

Բակունինը, որ արտահայտիչն էր մի կողմից մանր գյուղացիության ու քաղքենիության շահերին, մյուս կողմից՝ բոհեմի պրոլետարիատի շահերին, մի պրոլետարիատ, որին հեղափոխականացրել էր կապիտալիստական կոշկոճող մեքենան և որը հույս ուներ անկազմակերպ թափառաշրջիկների (голытба) մի ուժեղ հարվածով խորտակել կապիտալիզմի պետական մեքենան,—այս Բակունինը բացասաբար էր վերաբերվում պրոլետարիատի քաղաքական կուսակցությունների կազմակերպելուն, բանվորության սեփական ուժերի կազմակերպչական հավաքմանը, իշխանությունը նվաճելու գաղափարին, դիկտատուրային։ Բակունինը սոցիալական հեղափոխությունն ըմբռնում էր իբրև խռովություն (բունտ), իբրև վայրկենական հեղաշրջում առանց բանվորական մասսաների նախնական կազմակերպության ու կարգապահության։

Մարքսիզմի ու Բակունիզմի միջև տեղի ունեցող կռիվը վերածվեց մի կռվի, որ մղում էր Բակունինը Գլխավոր Խորհրդի ու նրա գաղափարական ղեկավարի—Մարքսի դեմ

Ինտերնացիոնալի դրությունն առանց այն էլ ծանր էր։ Պատերազմի տնտեսական հետևանքներն ու այն անխնա հալածանքները, որ ձեռնար-

կել եյին նրա դեմ բոլոր կառավարությունները, կազմալուծում եյին մտցրել նրա շարքերը: Այսպիսի պայմաններում Ինտերնացիոնալի Լոնդոնի կոնֆերենցիայում, 1871 թվի սեպտեմբերին, ընդունվեց մի վորոշում, վոր պնդում եր, թե բանվոր դասակարգի քաղաքական կռիվն ու տնտեսական կռիվը չի կարելի անջատել իրարուց և վորը պահանջում եր, վոր պրոլետարիատը կազմակերպե անկախ քաղաքական կուսակցություններ, վորոնց գործունեությունն ուղղված լինի ունևոր դասակարգերի դեմ: Բակունինականները Յուրայի Միության (շվեցարական սեկցիայի անունից մի շրջաբերական հրատարակեցին՝ ուղղված Ինտերնացիոնալի բոլոր սեկցիաներին, վորով հայտարարում եյին, թե Գլխավոր Խորհուրդն օրգան ե փոքրամասնության, վոր ձգտում ե իր դիկտատուրան փաթաթելու ամբողջ շարժման վզին: Այս ագիտացիան արձագանգ գտավ բելգիական պրուդոնիստների, իսպանական ու իտալական սեկցիաների, այլ և սլավոն եմիգրանտների մեջ. այն ինչ բուն իսկ Գլխավոր Խորհրդի ներսում տարաձայնություններ կային՝ հակառակորդների դեմ կռվելու յեղանակների խնդրի վերաբերմամբ:

15. Ի՞ՆՉ ԷՐ V ԿՈՆԳՐԵՍԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Վերոհիշյալ պարագաներում, 1872 թվի սեպտեմբերին, Հաագայում տեղի ունեցավ Ինտերնացիոնալի V կոնգրեսը, վորին անձամբ ներկա յեր Մարքսը:

Այս կոնգրեսը վճռական նշանակություն ունեցավ I Ինտերնացիոնալի ճակատագրի համար: «Խնդիրը վերաբերում ե Ինտերնացիոնալի կյանքին ու մահվանը»,—գրում եր Մարքսը՝ Հաագայի կոնգրեսի մասին, սրա գումարից քիչ առաջ: Այս կոնգրեսում պետք ե տեղի ունենար վճռական ճակատամարտ մարքսիստների ու բակունինիստների միջև այն խնդրի նկատմամբ, թե հետագայում ինչ ուղղություն պետք ե ունենա բանվորական շարժումը:

Օրակարգի մեջ դրված եյին յերկու խնդիր. Գլխավոր Խորհրդի իրավունքների հարցն ու պրոլետարիատի քաղաքական գործունեության խնդիրը: Կոնգրեսի բակունինիստական փոքրամասնությունը ժխտում եր Գլխավոր Խորհրդի՝ Ինտերնացիոնալի քաղաքական ղեկավարության իրավունքը և առաջարկում եր նրա դերը նվազեցնել ու հասցնել թղթակցական-վիճակագրական բյուրոյի դերին:

Մարքսիստական մեծամասնությունը պնդում եր, թե Գլխավոր Խորհուրդը պետք ե պահպանի իր նախկին իրավունքները, այսինքն՝ պետք ե մնա Ինտերնացիոնալի գլխավոր շտաբ և թե միջազգային շարժումը միացնելու նպատակով պետք ե ուժեղացնել կենտրոնացումը: Կոնգրեսի մեծամասնությունն ընդունեց մարքսիստների առաջարկը, Գլխավոր Խորհրդի իրավունքներն ընդլայնելու մասին:

Պրոլետարիատի քաղաքական գործունեության խնդրի նկատմամբ ընդունվեց Վայյանի բանաձևը, վոր հիմնված եր Մարքսի քաղաքական ծրագրի վրա: Բանաձևն ասում եր. «Իր ազատագրական կռվի ընթացքում բանվոր դասակարգը կարող ե հենց իբրև դասակարգ գործել այն դեպքում, յեթե միանա և քաղաքական կուսակցություն կազմակերպե: Այս կուսակ-

ցությունը պետք ե խիստ կերպով անջատված լինի իշխող դասակարգի հին կուսակցություններից և պետք ե թշնամաբար վերաբերվի նրանց: Բանվոր դասակարգի, իբրև կուսակցություն, կազմակերպվելը միանգամայն անհրաժեշտ ե սոցիալական հեղափոխության հաղթանակի, այլ և այն բանի համար, վորպեսզի այս հեղափոխությունը հասնի իր նպատակին, այն ե՝ դասակարգերի վոչնչացմանը:

Ուժերի այն միավորությունը, վոր ստեղծել են բանվորներն իրենց տնտեսական կռվի ընթացքում, պետք ե դառնա մի լծակ այն կռվի մեջ, վոր նրանք մղում են կապիտալիստների ու հողատերերի քաղաքական իշխանության դեմ: Բանվոր դասակարգի տնտեսական ու քաղաքական կռիվը պետք ե անբաժան, սերտ միացած լինի այն պատերազմի ընթացքում, վոր վարում ե պրոլետարիատը»:

Չնայած բակունինիստների դիմադրությանը, այս բանաձևն ել ընդունվեց խոշոր մեծամասնությամբ: Այս՝ յերկրորդ հարվածն եր բակունինիստների համար, վորին հաջորդեց ել ավելի վճռականը, յերրորդ հարվածը:

Այն հանձնաժողովը, վոր ընտրված եր բակունինիստական գաղտնի խորհրդի հարցը քննելու համար, յեկավ այն յեզրակացության, վոր այս Միության կանոնադրությունը հակասում ե Ինտերնացիոնալի կանոնադրության և վոր նրա նախաձեռնողը—Բակունինը—պետք ե վտարվի Ինտերնացիոնալից, իսկ Միությանը վերաբերող վավերագրերը պետք ե հրապարակվեն: Կոնգրեսը 27 ձայնի մեծամասնությամբ, ընդդեմ 6-ի, ու 7 հոգու ձեռնպահությամբ համաձայնություն տվեց հանձնաժողովի առաջարկին և Բակունինը իր մի քանի համախոհներով վտարվեց:

Այս վճռից անբավական մնացած մի քանի խմբակներ և սեկցիաներ Հաագայի կոնգրեսից 8 օր հետո հավաքվեցին ու կազմեցին իրենց հակաավտորիտար կոնգրեսը: [1]) Այս կոնգրեսը հայտարարեց Հաագայի կոնգրեսի վորոշումները չեղյալ, Գերագույն Խորհուրդը՝ լիազորություններից զրկված և ազդարարեց, վոր «պրոլետարիատի առաջին պարտականությունն ե ամեն մի իշխանության վոչնչացումը»:

Չնայած մարքսիզմի այնքան վճռական հաղթանակին, Ինտերնացիոնալին արդեն դիպել եր մի հարված, վորն այլևս չեր կարելի ուղղել: Բանվորական շարժումը շարունակվում եր զարգանալ, սակայն արդեն վոչ թե I Ինտերնացիոնալի շրջանակներում, այլ իբրև անկախ ազգային սոցիալիստական կուսակցություններ: Գլխավոր Խորհուրդը, վոր փոխադրվել եր Նյու-Յորք, դեռ շարունակում եր Հաագայի պառակտումից հետո յել գոյություն ունենալ, սակայն այս արդեն ել նախկին Խորհուրդը չեր, այն հզոր կազմակերպությունը չեր, վորտեղից բղխում եր պրոլետարիատի համաշխարհային զարթոնքի նախաձեռնությունը և վորտեղ մշակվում, կոփվում եր միջազգային սոցիալիզմի թեորիան: Հաագայի կոնֆերանսի հետ փաստորեն մեռավ I Ինտերնացիոնալը:

Հաագայի կոնֆերանսում, յեզրափակող ճառի մեջ Մարքսը հետևյալ բառերով պարզաբանեց բանվոր դասակարգի պատմական խնդիրը. «Հաագայի կոնգրեսը կարևոր աշխատանք կատարեց: Կոնգրեսը հայտարարեց, վոր բան-

[1]) Հակա-ավտորիտար նշանակում ե կանգնած մի այնպիսի դիրքի վրա, վոր ժխտում ե ամեն մի իշխանություն:

վոր դասակարգը հին, խորտակվող հասարակության դեմ մաքառելու համար՝ անհրաժեշտաբար պետք է կռիվ մղի ինչպես քաղաքական, այնպես և տնտեսական հողի վրա...Մի գեղեցիկ որ բանվորը պետք է նվաճի քաղաքական գերիշխանությունը և հիմնե աշխատանքի նոր կազմակերպությունը։ Նա պետք է տապալե հին քաղաքականությունը, վոր պաշտպանում է հին հիմնարկությունները, կամ թե չէ՝ նրան կը վիճակվի առաջին քրիստոնյաների ճակատագիրը, վորոնք արհամարհեցին, բանի տեղ չդրին այս խնդիրը և աչքաթող արին այս խնդրին իրականացնելը, ուստի և ամենևին չհասան իրենց արքայությանը, վոր պետք է լիներ յերկրիս վրա։

Քաղաքացիներ, մտաբերենք Ինտերնացիոնալի հիմնական սկզբունքը՝ համերաշխությունը։ Մենք կը հասնենք մեծ նպատակին, վորին ձգտում ենք, յեթե ամրապնդենք բոլոր յերկրների բանվորների միջև այս կենարար սկզբունքը։ Հեղափոխությունը պետք է համերաշխ լինի և այս համերաշխության հոյակապ որինակը տեսնում ենք Պարիզի կոմմունայի մեջ, վորը ընկավ այն պատճառով, վոր բոլոր գլխավոր կենտրոններում, Բեռլինում, Մադրիդում և այլն, միաժամանակ չբոցավառվեց մեծ հեղափոխական շարժումը՝ կապ ունենալով Պարիզի պրոլետարիատի հզոր ապստամբության հետ։

Ինչ վերաբերում է ինձ, յես պետք է շարունակեմ աշխատել իմ այս խնդիրը լուծելու վրա, բանվորների այսպիսի համերաշխություն ստեղծելու վրա, մի համերաշխություն, վոր այնքան արգասաբեր է լինելու ապագայի համար։ Վոչ, յես չեմ հեռանալ Ինտերնացիոնալից և իմ նախկին գործունեության նման կյանքիս մնացած որերը նվիրելու յեմ սոցիալական գաղափարների հաղթանակին, վորոնք, ինչպես մենք խոր համոզված ենք, վաղ թե ուշ՝ պրոլետարիատի տիրապետությանն են հասցնելու»։

16. ՅԵ՞ՐԲ ՅԵՎ ԻՆՉՈ՞Ւ ՔԱՅՔԱՅՎԵՑ I ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

I Ինտերնացիոնալը քայքայվեց 1872 թվականին Հաագայի համագումարից հետո և դադարեց փաստական գոյություն ունենալուց 1873 թվին Ժընևի VII համագումարից հետո։

Այս վերջին համագումարի վորոշումները վերաբերում եյին արհեստակցական շարժմանն ու քաղաքական կռվին։ Այստեղ ցանկություն արտահայտվեց, վոր մեղմանան տարաձայնությունները Ինտերնացիոնալի մեջ։ Սակայն հին Ինտերնացիոնալն արդեն մեռել եր և ի վիճակի չեր նորից գումարվելու։ Անգլիական սեկցիաները հանգել եյին, Շվեյցարական սեկցիաները մտել եյին ուրիշ կազմակերպությունների մեջ և միայն Ամերիկայում ժամանակ առ ժամանակ տեղի եյին ունենում Ինտերնացիոնալի կոնֆերանսներ, մինչև վոր 1876 թվականին Ֆիլադելֆիայի կոնֆերենցիայում վճռվեց ցրել ամերիկական սեկցիաներն ու Գլխավոր Խորհուրդն էլ։ I Ինտերնացիոնալն առաջացավ այն ժամանակներում, յերբ Յեվրոպայի բոլոր խոշորագույն յերկրներում կապիտալիզմը զարգացել եր և ազգային հարստությունն աճել։ Այս դարաշրջանի բուրժուազիան դեռ ևս աչքի յեր ընկնում հեղափոխական, մարտական, հարձակողական վոգով։ Մյուս կողմից՝ II Ինտերնացիոնալը մարտական շտաբն եր բանվոր դասակարգի, վոր պատրաստվում եր բուրժուազիային տապալելու։

Ուստի և բանվորական Ինտերնացիոնալի մեջ տեսնելով յուր գոյության համար մի սպառնալիք՝ բուրժուազիան աշխատում եր պրոլետարիա-

տին զրկել հեղափոխության մեջ ղեկավար դեր ունենալուց։ Այս բանն այն ժամանակ հաջողվեց բուրժուազիային, և բուրժուազիան I Ինտերնացիոնալին վճռական հարված հասցրեց 1871 թվականին, ջախջախելով Պարիզի կոմմունան՝ վորին հենց Ինտերնացիոնալն եր պրոլետարական ընույթ տվել խոշոր չափերով։

Բացի սրանից՝ I Ինտերնացիոնալը մի միավորություն եր ամեն տեսակի հեղափոխական խմբակների, առանց ծրագրի ու տակտիկայի միության և առանց հենարաններ ունենալու ազգային կուսակցությունների կամ կազմակերպությունների մեջ։ Այն գաղափարական կռիվը, վոր սկզբում մղվում եյին իրար դեմ մարքսիստներն ու մանր բուրժուական անարխիստ Պրուդոնի կողմնակիցները, իսկ հետո մարքսիստները ու բունտարական անարխիստ Բակունինի կողմնակիցները, ուժասպառ արին I Ինտերնացիոնալը։ Կոմմունայի անկումն ու վերահաս ռեակցիան ավարտեցին քայքայման գործը։

17. ՅԵ՞ՐԲ ԿԱԶՄՎԵՑ ՅԵՐԿՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

II Ինտերնացիոնալը կազմվեց 1889 թվականի հուլիսին, Պարիզում, I Ինտերնացիոնալի իրական քայքայումից 16 տարի հետո, այն տարին, յերբ տեղի յեր ունենում Ֆրանսիական մեծ հեղափոխության հարյուրամյակի տոնակատարությունը։ Բուրժուական ազգային ամուր պետությունների (Գերմանիայի ու Իտալիայի) կազմվելը, այլ և կապիտալիզմի հզոր աճումը Յեվրոպայում, պրոլետարիատին հարկադրեցին կռվի կենտրոնը փոխադրել ազգային շրջանակների մեջ և նշանավոր չափերով ամրապնդված բուրժուազիային յուր ուժեղ քաղաքական ու արհեստակցական կազմակերպությունները հակադրել։

Գերման բանվորներն առաջինը վոտք կոխեցին այս ճանապարհը՝ Բեբելի ու Լիբկնեխտի բերանով խոստովանելով, վոր իսկական միջազգային համերաշխության մասին կարելի յե խոսել միայն այն ժամանակ, յերբ ազգային կուսակցական ամուր կազմակերպություններ գոյություն ունեն։ Այն ժամանակամիջոցում, վոր ընկած է I Ինտերնացիոնալի լուծարքի ու II Ինտերնացիոնալի միջև, արևմտյան կապիտալիստական յերկրների մեծամասնության մեջ առաջ յեկան սոցիալիստական ու սոցիալ դեմոկրատական ամրակուռ կուսակցություններ։ Այսպես՝ Գերմանիայում միացյալ սոցիալ դեմոկրատական կուսակցությունը կազմակերպվեց 1869 թվին, Ֆրանսիայում՝ 1879 թվին, Բելգիայում՝ 1885 թվին, Շվեյցարիայում՝ 1887 թվին, Ռուսաստանում առաջին սոցիալ դեմոկրատական խմբակներ կազմվեցին 1883 թվին, Իտալիայում՝ 1892 թվին և այլն։

Կապիտալիստական զարգացման այսպիսի պայմաններն ու մարքսիզմի հաղթական արշավն այս կուսակցությունների գաղափարական բովանդակությանը վորոշ միություն հաղորդեցին և կանխապատրաստեցին նրանց միավորությունը, վորով ստեղծվեց նոր միջազգային կազմակերպություն — II Ինտերնացիոնալը։

18. Ի՞ՆՉՊԵՍ ԿԱԶՄՎԵՑ ՅԵՐԿՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Յերբ առանձին յերկրների մեր մատնանշած բանվորական կուսակցություններն ամրապնդվեցին և «Կոմմունիստական մանիֆեստի» հիմնա-

կան սկզբունքները չուրացրին, այն ժամանակ նոր միջազգային միավորության պահանջը հասունացավ։ Զանազան յերկրների սոցիալիստական կուսակցությունների միջազգային հարաբերությունները I Ինտերնացիոնալի գործունեյության դադարումից մինչև II-ի ծագումը փաստորեն համարյա չէյին ընդհատվել։ Հիշյալ ժամանակամիջոցի ընթացքում մի շարք միջազգային կոնգրեսներ ու կոնֆերանսներ տեղի ունեցան, 1877 թվականի Գենտի համաշխարհային կոնգրեսից սկսած՝ մինչև 1883 ու 1886 թվականների Պարիզի միջազգային բանվորական կոնֆերենցիաները և 1888 թվականի արհեստակցական միությունների միջազգային կոնգրեսը։ Այսպիսով բանվորական շարժումը չուներ միջազգային կազմակերպչական մշտապես գործող կենտրոնը միայն, սակայն այս կենտրոն ստեղծելու նախապատրաստական աշխատանքները կատարվում եյին և այն էլ առանձին հաջողությամբ 80-ական թվականներին։ II Ինտերնացիոնալի Պարիզի սահմանադիր համագումարում արդեն մասնակցում եյին վոչ թե առանձին բանվորներ, այլ տարբեր յերկրների խոշոր ու բավականաչափ միաձույլ սոցիալիստական հզոր կուսակցությունների ներկայացուցիչներ։

Առաջին անգամ այս համագումարում եր, վոր միջազգային բանվոր դասակարգի ընտանիքին միացավ ռուսական պրոլետարիատն էլ, վորի ներկայացուցիչներն եյին համագումարում «Նարոդնայա Վոլյաի» կուսակցությունն ու «Աշխատանքի ազատագրության» խմբակը (վերջինիցս ծնունդ առավ հետագայում Ռուսաստանի Սոցիալ Դեմոկրատական Բանվորական Կուսակցությունը)։

Չնայած, վոր I Ինտերնացիոնալի դարաշրջանի համեմատությամբ բանվորական կուսակցությունները վիթխարի չափերով աճել եյին և սրանց քաղաքական հասունությունը շատացել եր, այնուամենայնիվ II Ինտերնացիոնալը չկարողացավ միջազգային սոցիալիստական կուսակցություն դառնալ, իբրպես միջազգային միավորություն լինել, ինչպիսին վոր Բանվորների Միջազգային Ընկերությունն (I Ինտերնացիոնալն) եր վորոշ չափով, կամ ինչպիսին հանդիսանում է արդի Կոմմունիստական Ինտերնացիոնալը։

Գործունեյությունը նոր II Ինտերնացիոնալի, վոր վերականգնել եր մի շարք արդեն ամրապնդված ազգային սոցիալիստական ու սոցիալ դեմոկրատական կուսակցությունների ու արհեստակցական միությունների վրա հիմնվելով ընթանում եր կազմակերպչական յերկու ձևերով. սրանցից մեկը մշտական Միջազգային Բյուրոն եր, վորը բավական թույլ եր կապված յուրաքանչյուր կուսակցության հետ առանձին վերցրած, և յերկրորդը՝ միջազգային պարբերական կոնգրեսներն եյին, վորտեղ քննվում եյին բանվորական շարժման ընդհանուր հարցերը գլխավորապես և քիչ ուշադրություն եր դարձվում այն խնդիրներին, վորոնք ծագում եյին այս կամ այս յերկրում։ Ինչպես կը տեսնենք ներքևում, II Ինտերնացիոնալի այս կազմությունը պակաս դեր չկատարեց սրա հետագա ամբողջ պատմության մեջ։

19. Ի՞ՆՉ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ՅԵ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԱԺԱՆԵԼ ՅԵՐԿՐՈՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Յերկու հիմնական ժամանակաշրջանների 1) 1889 թվականի Պարիզի կոնգրեսից մինչև 1914 թվի պատերազմը, 2) 1914 թվից հետո։ Առաջին

ժամանակաշրջանի, այսինքն 24 տարվա ընթացքում, II Ինտերնացիոնալն ունեցել է 9 կոնգրես (8-ը հերթական ու 1-ը արտակարգ)։

20. Ի՞ՆՉՊԵՍ ԵՐ ԸՆԹԱՆՈՒՄ ՅԵՎ Ի՞ՆՉՈ՞Վ ԱՐՏԱՀԱՅՏՎՈՒՄ II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Այս հարցումին պատասխանենք՝ համառոտ կերպով հետևելով, թե ինչ խնդիրներ եյին ծագում առանձին կոնգրեսներում և ինչպես եյին վճռվում նրանք։

1889 թվականի Փարիզի առաջին սահմանադիր կոնգրեսը Մարքսի տեսակետին հետևելով՝ անհրաժեշտ համարեց բոլոր յերկիրներում կազմակերպել պրոլետարիատի անկախ քաղաքական կուսակցություններ, վորոնք չպետք է համաձայնության գան ուրիշ կուսակցությունների հետ և վորոնք պետք է ձգտեն քաղաքական իշխանությունը նվաճելու։ Կոնգրեսի բանաձևում ասված է. «Մենակ աշխատանքի տնտեսական կազմակերպությունը միայն (արեդյունյոններ ու բանվորական սինդիկատներ) բավական չեն բանվոր դասակարգի ազատագրության համար»։ Ընդ սմին՝ կոնգրեսը վորոշեց, վոր տարբեր յերկիրների կուսակցությունների ու արհեստակցական միությունների միջև պետք է սահմանվի մշտական կապ, վորի սիմվոլիկ արտահայտությունը պիտի լինի «մի անգամ ընդմիշտ վորոշած ամսաթվին կատարվող միջազգային ցույցը»։ Կոնգրեսը վորոշեց, վոր հիշյալ ամսաթիվը լինի մայիսի 1-ը։

Յերկրորդ, այն է՝ 1891 թվականի Բրյուսելի կոնգրեսը, բնորոշվում է նրանով, վոր այս համագումարը վորոշ կերպով անջատվեց, զատվեց անարխիզմից այն պատճառով, վոր անարխիզմը ժխտում է բանվորների կազմակերպությունն իբրև կապիտալիզմը տապալելու անհրաժեշտ նախադրյալ։

Առաջին յերկու կոնգրեսներում բանվորական շարժման ամենակարևոր ու ամենասուր հարցերը, այն է պատերազմի նկատմամբ բանվորական կուսակցությունների ունեցած դերի ու խնդիրների հարցն ու ընդհանուր գործադուլի հարցը դեռ առաջին շարքը չեր մղվում։ Առաջին անգամ պատերազմի խնդիրը սուր կերպով դրվում է յերրորդ, այն է 1893 թվականի Ցյուրիխի կոնգրեսում, վորովհետև 1891—92 թվականներին վերջնականապես ձևավորվեց ֆրանկո-ռուսական զինակցությունը, այսինքն Յեվրոպայի վրա սփռվեց ապագա պատերազմի ստվերը։ Պատերազմի խնդիրը պատճառ դարձավ, վոր առաջ մղվեց այն հարցը նմանապես, թե բանվոր դասակարգի միացյալ միջազգային կազմակերպությունն ինչ միջազգային հարված է տալու պատերազմին։ Յեվ ամենից առաջ ծագեց ընդհանուր գործադուլի խնդիրը։

Ի՞նչպես վերաբերվեց Ցյուրիխի կոնգրեսն այս խնդրին։ Մերժեց արդյոք ընդհանուր գործադուլն իբրև մեկն այն միջոցներից, վորոնք կարող են ժողովուրդների միջև ծագած կապիտալիստական պատերազմը դասակարգերի միջև ծագող դասակարգային պատերազմ դարձնել։ Վոչ։ Սոցիալ դեմոկրատներն այն ժամանակ սկզբունքորեն չեյին առարկում գործադուլի կիրառման դեմ, այլ միայն մատնանշում եյին, վոր բանվորական շարժման

ռվյալ կացության ժամանակ (այսինքն 1893 թվականին) ընդհանուր գործադուլը գործնականապես չի կարելի իրականացնել։

Ցյուրիխի կոնգրեսին հաջորդող կոնգրեսները — Լոնդոնինը՝ 1896 թվականին, Պարիզինը՝ 1900 թվականին ու Ամստերդամինը՝ 1904 թվականին, վոչ մի նոր ու իրական բան չավելացրին այն դիրքի վրա, վոր ուներ II Ինտերնացիոնալն այս խնդրի նկատմամբ։ II Ինտերնացիոնալը հարկադրված եր առանձին յերկիրների բանվորական շարժման պրակտիկան համաձայնության բերելու։ Սակայն այս յերկիրների սոցիալիստական կուսակցությունների աճումը և սրանց ազդեցության շատանալը բանվոր դասակարգի վրա, II Ինտերնացիոնալն ավելի ազդեցիկ ու հզոր չեյին դարձնում, վորովհետև փաստորեն II Ինտերնացիոնալը չեր ղեկավարում առանձին կուսակցությունների գործողությունները, այլ միայն գրանցում եր նրանց հաջողությունները կամ պարտությունները և փորձում եր միայն գաղափարապես ղեկավարել նրանց։ Ըստ բնույթի ու տակտիկայի իրարուց տարբերվող առանձին ազգային սոցիալիստական կուսակցությունների գործնական աշխատանքի համերաշխումը հակասական դրություն եր ստեղծում II Ինտերնացիոնալի համար, վորի հետևանքով վերջինս իրականում հանգում եր կոմպրոմիսային, պասս, անորոշ վճիռների։ Յեթե յերբեմն կուսակցությունների միջև կապ հաստատելու փորձը, վոր անում եր II Ինտերնացիոնալը, հեղափոխական համերաշխության կողմն եր թեքվում, ապա այս լինում եր միայն թղթի վրա։

Այսպես, օրինակ՝ 1900 թվականին, Պարիզի կոնգրեսում, բուրժուական կուսակցություններին վերաբերմունք ցույց տալու խնդրի նկատմամբ, այլ և սոցիալիստների՝ բուրժուական մինիստրությունների մեջ մտնելու հարցի վերաբերյալ հենց այսպիսի անորոշ վճիռ ընդունվեց։ Հիշեցնելով, վոր «դասակարգային կռիվն արգելում է կապիտալիստ դասակարգի վորևե կուսակցության հետ ամեն տեսակի միություն կնքել» կոնգրեսն այնուամենայնիվ, ընդունում եր, «վոր բացառիկ հանգամանքներն այսպիսի միությունները յերբեմն անհրաժեշտ են դարձնում»։ Նմանապես սոցիալիստների՝ բուրժուական մինիստրության մեջ մտնելը «ռիսկով քայլ է», սակայն «վորոշ պայմաններում այս քայլը կարող է պրոլետարիատի համար նպաստավոր հետևանքներ ունենալ»։

Բայց հատկապես եյական նշանակություն ունեցավ այս տատանվող տակտիկան պատերազմի խնդրի նկատմամբ։ Այս խնդիրը նոր ուժով յերևան յեկավ 1907 թվի Շտուտգարդի կոնգրեսում, վոր հստակորեն արտացոլում եր հոսանքների այն կռիվը, վոր 1893 թվականից սկսած՝ փոփոխակի հաջողությամբ, տեղի յեր ունենում II Ինտերնացիոնալի ներսում, այսինքն այն կռիվը, վոր մղում եյին իրար դեմ հեղափոխական մարքսիստական փոքրամասնությունն ու ոպպորտյունիստական (կիսամիջոցներով գործող, մանր բուրժուական) մեծամասնությունը։

Ցյուրիխի կոնգրեսից (1893 թվականին) մինչև Շտուտգարդի կոնգրեսը (1907 թվականին) ընկած ժամանակամիջոցում տեղի ունեցան այնպիսի դեպքեր, ինչպիսիք եյին Չին-ճապոնական պատերազմը (1894—1895 թվականներ), Իսպան-ամերիկյան պատերազմը (1898 թ.) Անգլ-բոյերականը (1900—1902 թ.), վորոնք արդեն հայտնապես յերևան յեկող իմպերիալիս-

տական բնույթ եյին կրում։ Մյուս կողմից տեղի ունեցավ 1905 թվի հեղափոխությունը Ռուսաստանում, վորն ակներև կերպով ցույց տվեց բուրժուական դեմոկրատների ռեակցիոն դերը, վորոնք ի դեմս Ֆրանսիայի, կապիտալիստների մի փոքրիկ խմբակի ոգտի համար՝ փրկեցին ռուսական ցարիզմի տատանված գահույքը։

Իսկ ինչպիսի դիրք բռնեց Շտուտգարդի կոնգրեսում II Ինտերնացիոնալն այս կացության հանդեպ։ Ինչպես կարգը պահանջում է, յեղան վեճեր և ընդունվեց բանաձև։ Ընդունված բանաձևն ել, ինչպես կարգը պահանջում է, լավ բանաձև եր, հեղափոխական մարքսիզմի վոգով, իսկ վիճաբանությունները... Ահա հենց այս վիճաբանություններն եյին, վորոնք մերկացրին II Ինտերնացիոնալի բանաձևերի ու դեկլարացիաների խախուտ ու անհուսալի լինելը։

Իրենց յետևից ունենալով բանվորների բազմահազար, յերբեմն և միլիոնավոր մասսաներ, վորոնք համախմբված եյին կուսակցությունների ու արհմիությունների մեջ, սոցիալիստական խոշոր կուսակցությունների պարագլուխների մեծամասնությունը սկսել եր վոգեվորվել այն գաղափարով, թե հնարավոր է կապիտալիստական հասարակարգը հաղթահարել խաղաղ ճանապարհով, սկսել եր հակվել կապիտալիզմի շրջանակներում դրական աշխատանք կատարելու կողմը, սկսել եր հակվել բուրժուազիայի աշխատակցելու կողմը։

Կապիտալիզմին այսպես աստիճանաբար հարմարվելը, վոր հիմնված եր բուրժուազիայի դիմադրության ուժը գերագնահատելու վրա, անկասկած արտահայտում եր այս պարագլուխների այն խնդիրների նկատմամբ արտահայտած վերաբերմունքի վրա, վորոնք կապ ունեյին իմպերիալիզմի ու սրանից բղխող համաշխարհային պատերազմի հետ։ II Ինտերնացիոնալի գործունեյությունն ուսումնասիրողները մատնանշում են[1]), օրինակ՝ վոր Շտուտգարդի կոնգրեսում, այսինքն հենց նույն այն համագումարում, վորտեղ ընդունվել եր հեղափոխական բանաձև, քիչ մնաց, վոր հաղթեր այն հոսանքը, վորը պահանջում եր, թե պետք է սոցիալիստներն ընդունեն իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականությունը։

Շտուտգարդի կոնգրեսում պատերազմի խնդրին վերաբերող վիճաբանությունները ծավալվեցին այս խնդրի կորիզի շուրջը, այսինքն պաշտպանողական ու հարձակողական պատերազմները տարբերելու խնդրի շուրջը, այլ և այն հարցի շուրջը, թե վորևե յերկրի սոցիալիստները պետք է պաշտպանեն իրենց հայրենիքը և բանվորական մասսաները լծեն այս պաշտպանության գործին, յեթե պատերազմն այս յերկրի դեմ հարձակողական բնույթ ունի, թե՞ չպետք է պաշտպանեն։ Այս վիճաբանությունների ընթացքում մի անգամից դեն շպրտվեց «Կոմմունիստական մանիֆեստի» հիմնական թեզիսը, թե «պրոլետարները հայրենիք չունեն»։ Կոնգրեսի սոցիալ դեմոկրատական մեծամասնությունն ընդունեց, վոր հիշյալ թեզիսը հնացած է։ Կոնգրեսի թե ֆրանսիական ու թե գերմանական մեծամասնությունը (վիճաբանությունը գլխավորապես հենց տեղի յեր ունենում սրանց միջև՝ իբրև II Ինտերնացիոնալի հզորագույն ներկայացուցիչների միջև) կանգնած եր հայրենիքը պաշտպանելու տեսակետի վրա

[1]) Г. Зиновьев: «Война и кризис социализма» յերես 366։

և ժխտում եր պատերազմը հայտարարելու դեպքում վճռական հեղափոխական գործողությունների կիրառումը։ Յեվ չնայած այն հանգամանքին, վոր վիճաբանությունները մերկացրին և բավական պարզ ցույց տվին, թե սոցիալ դեմոկրատական պարագլուխներն իրականում խուսափում են այն պարտականություններից, վոր դնում եր նրանց վրա պրոլետարական միջազգային հեղափոխությունը (հենց այս բանում էլ արտահայտվում եր II Ինտերնացիոնալի վոտքերի տակ հողի բացակայությունը) —ինչպես պետք եր սպասել, վո՛չ թե այդ մեծամասնության պարագլուխների հայացքներն արտահայտվեցին բանաձևի մեջ, այլ հեղափոխական մի փոքրիկ խմբակի հայացքները, վորի գլուխը կանգնած եյին Ռոզա Լյուքսեմբուրգն ու Վ. Ի. Լենինը։ Վերջիններս բանաձևի մեջ մտցրին իրենց ուղղումը, վորով առաջ եյին մղում այն տեսակետը, թե անհրաժեշտ ե պատերազմի դեմ հեղափոխական ագիտացիա անել և պատերազմի դեպքում հեղափոխական գործողությունների դիմել։ Յերկար ժամանակ աշխատում եյին դուրս քամել այս ուղղումից նրա հեղափոխական իմաստն ու այն համաձայնեցնել մեծամասնության հայացքների հետ, վորի հետևանքով, ուղղումից մնաց մի թույլ պահանջ միայն, թե «պատերազմը պետք ե օգտագործել ընդհանրապես դասակարգային տիրապետության տապալումն արագացնելու համար»։ Այն ինչ ըստ եյության այս չափազանց ընդհանուր ձևով արտահայտված միտքն էլ լոկ բառական մուրհակ եր II Ինտերնացիոնալի օպորտյունիստ մեծամասնության կողմից, վորոնցից վոչ մեկը հոժար ու պատրաստ չեր այս մուրհակով վճարելու, այսինքն այս ուղղությամբ գործելու, վորի մասին պարզ խոսում եյին թե՛ կոնգրեսի ժամանակ և թե՛ նրանից հետո։

Միևնույն խնդիրը հուզում եր հաջորդ 1910 թվի Կոպենհագենի կոնգրեսն էլ։ Այն առաջարկը, թե պատերազմի դեպքում պե՛տք ե արտահայտվել հօգուտ այն գործադուլի, վոր պետք ե տեղի ունենա ռազմական գործի համար աշխատող արտադրություններում, այդ առաջարկը քննության չենթարկվեց և—հետաձգվեց հաջորդ կոնգրեսին։ Այս կոնգրեսը (Բազելում, 1912 թվին), վորի գումարումն արագացրեց կանխապատրաստված 1912—13 թվականների Բալկանյան պատերազմը, էլ ավելի խթանեց II Ինտերնացիոնալի սոցիալ դեմոկրատական մանր բուրժուական մեծամասնության ներկայացուցիչներին՝ վճռական հայտարարություններ անելու բառերով։ Բազելի կոնգրեսի բանաձևը յելնում եր այն թեզիսից, թե կանխապատրաստված համաեվրոպական պատերազմը կլինի իմպերիալիստական պատերազմ, վորի պատճառը յեվրոպական ֆինանսական կապիտալի տարբեր խմբակների ընդհարումն ե։ Սակայն կոնգրեսն ամենևին ի վիճակի չեղավ կոնկրետ պլան մշակելու համաշխարհային պատերազմի վերահաս վտանգի դեմ կռվելու համար։ Հերթական կոնգրեսը պետք ե տեղի ունենար Վիեննայում, 1914 թվին, սակայն 1914 թվի հուլիսին պայթած պատերազմն ամեն տեսակի զրույցներն ու բանաձևերն ավելորդ դարձրեց։

21. ԻՆՉՈ՞Ւ ԿՈՐԾԱՆՎԵՑ II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

II Ինտերնացիոնալի մինչև 1914 թվի պատերազմը գոյություն ունենալու ժամանակաշրջանը միաժամանակ նաև մի ժամանակաշրջան եր, յերբ արտասովոր արագությամբ զարգանում եր իմպերիալիզմը (վերջինս սկսվել

եր 19-րդ դարի 80-ական թվականներից ու յուր գագաթնակետին եր հասել 20-րդ դարի առաջին տասնամյակում)։ Կապիտալիզմի կատաղի թափով զարգացումը, վոր համաշխարհային պատերազմ եր սպառնում, պահանջում եր, վոր բանվորական մասսաներն ավելի ու ավելի ներգործական միջամտություն ունենան կապիտալիստական պետությունների արտաքին քաղաքականության գործերին, պահանջում եր, վոր նրանց տակտիկան հեղափոխականանա և նրանք յենթարկվեն միջազգային ղեկավարող կենտրոնին, Ինտերնացիոնալին։ Այս անհրաժեշտ եր մանավանդ այն պատճառով, վոր խոշոր ու հզոր քաղաքական ու արհեստակցական կազմակերպությունների՝ Ինտերնացիոնալի շուրջը համախմբվելը ցույց եր տալիս, վոր այսպես թե այնպես բավականաչափ ուժեր կան համաշխարհային կապիտալիզմի դեմ գրոհ տալու համար՝ սրա գոյության այն կրիտիքական մոմենտին, յերբ կապիտալիզմի առանձին մասեր իրար կոկորդից կբռնեն՝ համաշխարհային տիրապետության համար մղվող կռվում։

Սակայն բանից դուրս յեկավ, վոր II Ինտերնացիոնալը ի վիճակի չեր բանվորական մասսաները ճակատամարտի պատրաստելու, վորովհետև նրա իշխանությունը տարածվում եր կուսակցությունների այն գործունեյության վրա միայն, վոր տեղի յեր ունենում բուրժուազիայի հետ խաղաղ աշխատակցելու պայմաններում։ II Ինտերնացիոնալը յուր պրատ, համաձայնողական տակտիկայով անզոր եր հաղթահարելու այն քայքայիչ ազդեցությունը, վոր անում եր իմպերիալիզմը բանվորական կազմակերպությունների ղեկավար շրջանների վրա։ Իմպերիալիզմը բանվոր դասակարգի մի մասն ու սրա պարագլուխներին ժամանակավորապես յուր ազդեցությանը յենթարկեց և պրոլետարիատի ամենաբարձր խավերին հնարավորություն ցույց տվեց յուր տնտեսական վիճակը բարվոքելու՝ սրանց շահագրգռելով գաղութները կողոպտելու յուր քաղաքականությամբ։

Վորչափով վոր II Ինտերնացիոնալի գլխավոր կուսակցությունները, իմպերիալիստական պետություններից յուրաքանչյուրի ներսում, իրապես հակվում եյին բուրժուազիայի հետ խաղաղ աշխատակցելու կողմը, վորչափով վոր նրանք այս աշխատակցությանն ոբեկտիվ կերպով ոժանդակում եյին, չդիմադրելու յեվ որենապահության իրենց քաղաքականությամբ (Բեբելը, գերման սոցիալ-դեմոկրատիայի պարագլուխը, առաջ եր մղում այն տեսակետը, թե որենապահությունն ե պրոկուրորական ճնշումների դեմ բանեցնելիք գործիքը)—այն չափով էլ II Ինտերնացիոնալը, դեռ իմպերիալիստական պատերազմի բորբոքվելուց առաջ էլ, իրականում, մինչև բուն իսկ պատերազմը, հանդիսանում եր թե՛ բանվոր դասակարգի դատի ու թե՛ սոցիալիզմի դավաճան։ Ամենագլխավոր խնդիրները, վորոնք կանգնած եյին II Ինտերնացիոնալի հանդեպ, միլիտարիզմի, պատերազմին հակազդելու յեղանակների, ընդհանուր գործադուլի խնդիրները՝ այնպես էլ մնացին, առանց լիապես վճռվելու հեղափոխական մարքսիզմի վոգով, իսկ գլխավորն այն եր, վոր պարագլուխներից վոչ մեկը լուրջ չեր հավատում, թե բանվոր դասակարգը ուժ ունի և հնարավոր ե պատերազմին հեղափոխական դիմադրություն ցույց տալ։

1914 թվի պատերազմը, վոր քանդեց համաշխարհային կապերը, յերևան բերեց այն միայն, ինչ վոր պարունակում եր II Ինտերնացիոնալը,

վոր թունավորված եր իմպերիալիստական բուրժուազիայի քաղաքականությամբ։

Կոչ անելով բանվորներին դադարեցնելու դասակարգային կռիվը, կոչ անելով քաղաքացիական խաղաղության, այն րոպեյին, յերբ իմպերիալիստական կրիզիսի հետևանքով պայթել եր պատերազմը, քվեարկելով ռազմական վարկերի օգտին, իրենց տրամադրելով իշխող դասակարգերին՝ ամեն տեսակի ծառայություններ անելու համար, յուր ներկայացուցիչներին ուղարկելով ու մտցնելով բուրժուական դիկտատուրայի կառավարության կազմերի մեջ, II Ինտերնացիոնալի սոցիալ-պատրիոտական կուսակցությունները իրենց վրա վերցրին պատերազմի ու նրա նպատակների պատասխանատվությունը։

Պատերազմի պայթելու հետևանքն այն յեղավ, վոր II Ինտերնացիոնալը աղետային արագությամբ քայքայվեց ու բաժանվեց իրար թշնամի ազգային խմբակների և սրանից ել առաջացավ նրա կործանումը, յերևան հանելով այն իրողությունը, թե 25 տարվա ընթացքում ամենից կազմակերպված ու առաջավոր բանվորական մասսաների գլուխ եյին կանգնած այնպիսի կուսակցություններ, վորոնք դարձել եյին բուրժուական պետության ստորադաս որգաններ։

22. Ի՞ՆՉ Ե ՍՈՑԻԱԼ—ՊԱՏՐԻՈՏԻԶՄԸ

Սոցիալ-պատրիոտիզմը բուրժուազիային սպասավորելն ե սոցիալիզմի դիմակով։ Այս դիմակի տակ թագնվում են բանվոր դասակարգի բոլոր դավաճանները։ Հեղափոխական մարքսիզմը ահա արդեն 75 տարի յե, վոր քարոզում ե, թե կապիտալիզմի ժամանակ բանվոր դասակարգը հայրենիք չունի, թե յուրաքանչյուր յերկրի բանվոր դասակարգի թշնամին այդ յերկրի ու ամբողջ աշխարհի բուրժուազիան ե և թե աշխատավորները կարող են ազատագրվել այն ժամանակ միայն, յերբ ամբողջ բանվոր դասակարգը միատեղ կռիվ մղե բուրժուազիայի դեմ։ Միջազգային բանվորական շարժման ամենածանր փորձության րոպեներին, իմպերիալիստական պատերազմի նախորյակին, սոցիալ-պատրիոտիզմը հանդես յեկավ հայրենիքի պաշտպանության նշանաբանով և հենց սրանով ել դյուրություն ու հնարավորություն տվեց բուրժուազիային՝ մի քանի տարվա ընթացքում յեղբայրասպան գործ կատարելու։

Բուրժուազիայի տիրապետության ժամանակ հայրենիքի գաղափարը բուրժուազիայի ձեռքում ծառայում ե իբրև մի զենք՝ աշխատավորներին հոգեպես ստրկացնելու համար։ Ահա թե ինչու, ով պաշտպանում ե հայրենիքի գաղափարը, օգնում ե բուրժուազիային, վոր սա ստրկացնե բանվոր դասակարգին։ Ուստի և սոցիալ-պատրիոտները բանվոր դասակարգի վատթարագույն թշնամիներն են։

Սոցիալ-պատրիոտիզմի հետ կապ ունի այսպես կոչված պացիֆիզմը (խաղաղասիրություն, լատիներեն պաքս բառից, վոր նշանակում ե խաղաղություն)։ Պացիֆիզմը այնպիսի մի հայացք ե, վոր ասում ե, թե պատերազմների վերացումը հնարավոր ե հենց կապիտալիզմի ժամանակ ել, յեթե միայն ստեղծվի միություն խոշորագույն պետությունների, վորոնք հիմնեն միջնորդ դատարաններ, վորոշումներ անեն ընդհանրական զինաթափության կամ սպառազինությունը կրճատելու մասին և այլն։ Այս մի

անհեթեթ ֆանտազիա չե։ Քանի գոյություն ունի կապիտալիզմը, պատերազմները չեն վերանա։ Խոշորագույն պետությունների մեծ կամ փոքր չափով հարատև միությունը հիմար ցնորք ե։ Վերջապես բուրժուազիայի միջև յեղած խաղաղությունը դեռ ևս մարդկության խաղաղությունը չե։ Բուրժուազիայի ու բանվոր դասակարգի միջև կռիվը անխուսափելի յե, քանի չի վերացել կապիտալիզմը։ Պարզ ե, վոր ընդհանրական խաղաղություն կլինի միայն այն ժամանակ, յերբ բուրժուազիան կտապալվի և համաշխարհային խորհրդային հանրապետություն կհաստատվի։

23. Ի՞ՆՉ ՀՈՍԱՆՔՆԵՐ ՅԵՐԵՎԱՆ ՅԵԿԱՆ II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Թնդանոթի առաջին վորոտի հետ 1914 թվին, II Ինտերնացիոնալը քայքայվեց, և II Ինտերնացիոնալը կազմող կուսակցություններից յուրաքանչյուրի մեջ յերեք հոսանք յերևան յեկավ։

Մեկը սոցիալ-պատրիոտական հոսանքը, վորի գլխավոր արտահայտիչներն եյին՝ գերման սոցիալ-դեմոկրատիայի ու ֆրանսիական սոցիալիստական կուսակցության մեծամասնությունը, ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի, անգլիական բանվորական կուսակցության մի մասը, Ռուսաստանում աջ մենշևիկներն ու ես-երները։ Սրանք բացահայտ կերպով բռնեցին ցարական ու բուրժուական կառավարությունների կողմը, պաշտպանում եյին պատերազմը, իսկ պատերազմի վերջանալուց հետո, վորտեղ իշխանության գլուխ եյին կանգնած, ջարդում եյին հեղափոխական բանվորական կուսակցությունները, սպանում եյին կոմմունիստներին և ամեն կերպ բուրժուազիային օգնում՝ խեղդելու պրոլետարիատի բոլոր հեղափոխական փորձերը, վորոնց նպատակն եր տապալել բուրժուազիայի դիկտատուրան։

Այն կուսակցությունները, վորոնք պատերազմից հետո աջակողմյան մասերից թխեցին ու կազմեցին II Ինտերնացիոնալը,—կարծես թե վոչինչ չեր պատահել,—բանվոր դասակարգի վատթարագույն թշնամիներն են, բուրժուազիայի անմիջական գործակալները։

Մյուս հոսանքը կենտրոնի ճապաղ, անկայուն հոսանքն եր, վորը բռնել եր միջին դիրք սոցիալ-դավաճանների ու յերրորդ հոսանքի—հեղափոխական-կոմմունիստական հոսանքի մեջտեղում։ Այս ցենտրիստական հոսանքին հարում եյին՝ գերման անկախ կուսակցությունը, բրիտանական սոցիալիստական կուսակցության մի մասը, անկախ բանվորական կուսակցությունը, ֆրանսիական սոցիալիստական կուսակցության մասերը, ամերիկյան սոցիալիստական կուսակցությունը, ավստրիական սոցիալ-դեմոկրատական կուսակցության մի մասը, ռուսական մենշևիկյան կուսակցության մի մասը և այլն։

Այս կուսակցությունները կազմեցին այսպես կոչված «Սոցիալիստական կուսակցությունների միջազգային միավորությունը» կամ $2\frac{1}{2}$ Ինտերնացիոնալը, վոր 1923 թվականին դադարեց գոյություն ունենալուց և ձուլվեց II Ինտերնացիոնալի հետ։

Յերրորդ հոսանքը—կոմմունիստականը—կազմեց III Կոմմունիստական Ինտերնացիոնալը։

24. Ի՞ՆՉ Է II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

II Ինտերնացիոնալը վերականգնվեց պատերազմից հետո, Բեռնի կոնֆերենցիայում, 1919 թվի ապրիլին։ Այս Ինտերնացիոնալ է կոչվում հին Ինտերնացիոնալի հիշողությամբ միայն։ Ներկայումս սրա նշանակությունը վոչ թե այն է, վոր նա հանդիսանում է համաշխարհային մի այնպիսի կազմակերպություն, վոր միացնում և ղեկավարում է այն բոլոր յերկիրների կուսակցություններին, վորտեղ բանվորական շարժում կա, այլ այն, վոր նրա կազմի մեջ մտնում են մի քանի կապիտալիստական յերկիրների, այն է Գերմանիայի, Անգլիայի ու Բելգիայի դեռ ևս բավական խոշոր ու ազդեցիկ քաղաքական կուսակցությունները։ Գերման սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (Շայդեմանինը) ունի մի միլիոնից ավելի կազմակերպված, լավ կարգապահության յենթարկված անդամներ և վորոշ չափով հենվում է ինը միլիոն բանվորների վրա, վորոնք կազմակերպված են արհեստակցական միությունների մեջ և վերջիններիս գլուխ են կանգնած դեռ ևս շայդեմանականները։ Անգլիայի բանվորական կուսակցությունը գործում է մի քանի միլիոն բանվորների անունից, վորոնք կազմակերպված են անգլիական տրեդ-յունյոնների մեջ (արհմիություններ)։ Այս բանվորները ազգային մասշտաբով վերցրած՝ խոշոր ույժ են։ Չնայած II Ինտերնացիոնալը թե ըստ ընդգրկած յերկիրների թվի ու թե ըստ յուր գործունեության բնույթի միջազգային կազմակերպություն չէ, այնուամենայնիվ, ինչպես տեսանք, յուր ազդեցության տակ է պահում բավականաչափ խոշոր ու կազմակերպված մասսաներ, ուստի և 2. Ինտերնացիոնալը պետք է հաշվի առնել մանավանդ այն ժամանակվանից, յերբ միացավ վերջնականապես 2½ Ինտերնացիոնալի հետ։ Այս միացումը վճռված եր Հաագայի կոնֆերենցիայում 1922 թվի դեկտեմբերին և վերջնականապես տեղի ունեցավ 1923 թվի մայիսի կոնգրեսում։

Կոմմունիստական Ինտերնացիոնալը, վոր բանվորական շարժումն ղեկավարում է համաշխարհային մասշտաբով, սխալ է համարում II Ինտերնացիոնալի ույժի թերագնահատումը և յուր բոլոր տակտիկական հաշիվների ժամանակ այն ի նկատի ունի և իրեն նպատակ է դնում բանվորական մասսաները II Ինտերնացիոնալից պոկելով նվաճել։

25 Ի՞ՆՉ Է 2½ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ[1])

2½ Ինտերնացիոնալի խայտառակ կործանումը պատերազմի ընթացքում և նրա դավաճանական դերը պատերազմի վերջանալուց հետո, նրանից հեռացրին ամենագիտակից ու ակտիվ պրոլետարական մասսաներին և պատճառ դարձան կազմելու կոմմունիստական կուսակցություններ, վորոնք միացան ու համախմբվեցին 3. Ինտերնացիոնալի շուրջը։

Սակայն Յեվրոպայի բոլոր կապիտալիստական յերկիրներում մնաց մի դեռ բավական մեծ շերտ բանվորների, վորոնք հուսախաբվելով աջ սոցիալիստների — բուրժուազիայի ակնհայտնի արբանյակների քաղաքականու-

[1]) 2½ Ինտերնացիոնալը, վոր գոյություն ունեցավ մոտ 2 տարի, 1923 թվի մայիսին միացավ II Ինտերնացիոնալի հետ։ Այնուամենայնիվ մենք վորոշեցինք պատերազմից հետո յեվրոպական բանվորական շարժման պարզացումը բնութագրելու համար մի քիչ տեղ տալ 2½ Ինտերնացիոնալին ել։

թյունից՝ փորձում եյին միևնույն ժամանակ խուսափելու կապիտալի դեմ մղվող բացահայտ հեղափոխական կռվից։ Բանվորների այս շերտերի գլուխ եյին կանգնած նախկին սոցիալ-դեմոկրատական ու սոցիալիստական պարագլուխները, վորոնք, բանվորական շարժման ընդհանուր բեկման ու հեղափոխության արագ աճման ազդեցության ներքո՝ պետք է նույնպես հեռանային աջ թևից, սակայն շատ պատճառներով չեյին վճռում մտնել մարտական կոմմունիզմի 3. Ինտերնացիոնալի շարքերը։

2½ Ինտերնացիոնալը յեվրոպական յերկիրների ցենտրիստական կուսակցությունների կազմակերպությունն եր, այսինքն այնպիսի կուսակցությունների, վորոնք միջին դիրք են բռնում մի կողմից հեղափոխական կոմմունիզմի ու մյուս կողմից այն աջ կուսակցությունների միջև, վորոնք անցել են բուրժուազիայի կողմը։

Սկզբում, հենց վոր կազմվեց 3. Ինտերնացիոնալը, կենտրոնի ամենախոշոր մասսայական կուսակցությունները, (գերման Անկախ բանվորական կուսակցությունն ու ֆրանսիական սոցիալիստական կենտրոնը,) փորձեցին արյունաքամ անել 3. Ինտերնացիոնալը, վերջինս թեքելով կոմպրոմիսների ճանապարհը, այսինքն դեպի այն, վոր կենտրոնի կուսակցությունները բառերով ընդունեն կոմմունիզմի սկզբունքները (հիմնական թեզիսները) այն պայմանով, յեթե կոմինտերնն ել ընդունի կենտրոնի տակտիկան, վոր կիրառելի յե յուրաքանչյուր յերկրի առանձնահատկությունների համեմատ։

Կենտրոնի խմբակների ու կուսակցությունների ներկայացուցիչները այս պայմաններով համաձայն եյին 3. Ինտերնացիոնալի մեջ մտնելու՝ լիովին ճիշտ հաշիվ անելով, վոր կոմմունիզմի լոկ սկզբունքները միայն ընդունելը նրանց վոչնչի չի պարտավորեցնում և վոր նրանք 3. Ինտերնացիոնալի կազմի մեջ լինելով՝ կարող են վարել իրենց նախկին անորոշ, տատանվող, յերբեմն նաև դավաճանական տակտիկան՝ հեղափոխական կռվի արգելակը հանդիսանալով։ Սակայն այն փաստը, վոր 3. Ինտերնացիոնալը կազմվել է վոչ իբրև բազմազան կուսակցությունների փոխված ֆեդերացիա (միություն), այլ իբրև միասնական, կենտրոնացած միջազգային մարտական կուսակցություն, ի դերև հանեց նրանց մտադրությունը, վորի նպատակն եր ներքուստ քայքայել 3. Ինտերնացիոնալը։ Սրանից հետո հիշյալ կուսակցություններին այլ բան չեր մնում, բայց յեթե հարել 2. Ինտերնացիոնալին կամ ստեղծել մի նոր Ինտերնացիոնալ։ Վորպեսզի իրենցից հետ չմղեն բանվորների այն ազնիվ, բայց դեռ ևս վոչ բավական չափով հեղափոխական մասը, վոր մի վորոշ աստիճան համակրում եր կոմմունիզմին և դեռ գտնվում եր կոմմունիստական կուսակցություններից դուրս, ցենտրիստները չհանդգնեցին մտնել 2. Ինտերնացիոնալի մեջ, այլ հիմնեցին իրենց «Սոցիալիստական կուսակցությունների Միջազգային Միությունը», վորը յեղավ 2½ Ինտերնացիոնալ, քանի վոր կար արդեն 3. Կոմմունիստական Ինտերնացիոնալը։

26. Ի՞ՆՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՅՑԱՑՔ ՈՒՆԵՐ 2½ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

2½ Ինտերնացիոնալի՝ բանվորական միջազգային շարժման հիմնական խնդիրների մասին ունեցած հայացքները շարադրվեցին այն մանիֆեստի մեջ, վոր հրատարակեց Բեռնի կոնֆերենցիան 1920 թվի դեկտեմբերին, իսկ

այնուհետև կոնգրեսին ուղղած այն թեզիսների մեջ, վոր մշակել եր գերմանական, ավստրիական, անգլիական ու շվեյցարական կուսակցությունների ներկայացուցիչներից կազմված կոմիսիան (1921 թ. փետրվար)։

Այս հայացքների գլխավոր հատկանիշը սրանց անորոշությունն ու մշուշապատ լինելն ե։

Այն խնդրի նկատմամբ, թե արդյոք միջազգային հեղափոխությունը գտնվում ե յուր զարգացման շրջանում թե անկման, $2^1/_2$ Ինտերնացիոնալի պարագլուխները վորոշ պատասխան չեյին տալիս, այն ինչ այս կարևորագույն հարցին այս կամ այն պատասխանը տալուց ե կախված նաև տակտիկան այն կուսակցությունների, վորոնք մտնում են միջազգային միավորության մեջ։

Հեղափոխության ու պրոլետարիատի դիկտատուրայի խնդիրների նկատմամբ, թե արդյոք կարելի՞ չե կապիտալիզմը հաղթահարել՝ կանգնած մնալով բուրժուական դեմոկրատիայի հողի վրա ու այս դեմոկրատիայի միջոցով (որինակ՝ պարլամենտարիզմով), թե՞ անհրաժեշտ ե բուրժուազիայի հեղափոխական տապալմանը դիմել,—$2^1/_2$ Ինտերնացիոնալը նորից վորոշ պատասխան չեր տալիս, սակայն պաշտպանում և զարգացնում եր այնպիսի հայացքներ, վորոնցից բղխում եր, թե բացի հեղափոխական տապալումից ու դիկտատուրայից, կա նաև դասակարգային կռվի այլ լուծում ել։

Խորհրդային սիստեմի խնդրի նկատմամբ $2^1/_2$ Ինտերնացիոնալի պարագլուխները նույնպես անչափ զգույշ ու անորոշ եյին արտահայտվում։ Այս պատ Ինտերնացիոնալը չեր ընդունում «բանվորական խորհուրդների» իբրև հեղափոխությունը վարողի ու կատարողի լոզունգը։ Այս Ինտերնացիոնալը պնդում եր նախ՝ վոր բանվոր դասակարգի տիրապետությունը կարելի յե իրականացնել ընդհանուր դեմոկրատական հիմնարկությունների միջոցով այն դեպքում միայն, յեթե բուրժուազիան դիմադրություն ցույց տա։ Կարծես թե կարելի յե յերևակայել, վոր բուրժուազիան առանց դիմադրության թույլ կտա իրեն եքսպրոպրիացիայի յենթարկելու։

Այնուհետև $2^1/_2$ Ինտերնացիոնալն արտահայտվում եր ընդդեմ հեղափոխություն անելու այն յեղանակների, վոր քարոզում ե III Ինտերնացիոնալը։

Բառերով $2^1/_2$ Ինտերնացիոնալն ընդունում եր, վոր թույլատրելի յեն մասսայական գործողություններ ու նույնիսկ զինված ապստամբություն։ Իրականում $2^1/_2$ Ինտերնացիոնալի պարագլուխներն անչափ հանդուրժամիտ վերաբերմունք եյին ցույց տալիս ռեֆորմիստների վերաբերմամբ (վորոնք քարոզում եյին, թե կարելի յե սոցիալիզմին անցնել խաղաղ ճանապարհով), վորոնք կողմնակից են բուրժուազիայի հետ համաձայնության գալու, այլև բանվորական շարժման հարմարվողական, խաղաղ տակտիկայի յեն հետևում։

Այս հայացքները ցույց եյին տալիս լիակատար անարյունությունը $2^1/_2$ Ինտերնացիոնալի, վորը ճանապարհների կիցքի (перепутье) վրա կանգնած մասսաների կազմակերպությունն եր։ Այս կազմակերպությունը չկարողացավ դառնալ հեղափոխական ավանգարդի կենդանի վոգի, ուստի և նրա գոյությունը յերևույթական եր։

$2^1/_2$ Ինտերնացիոնալի լուծարքն ու նրա II Ինտերնացիոնալի հետ ձուլումը վերջինիս պլատֆորմայի հիման վրա՝ կանխավճռված եր դեռևս

այն ժամանակ, յերբ $2^1/_2$ Ինտերնացիոնալի գլխավոր կուսակցությունը—Գերմանիայի Անկախ սոցիալ դեմոկրատական կուսակցությունը—յերկար տատանումներից հետո՝ բռնեց ռեֆորմիզմի ուղին՝ վորոշելով մտնել բուրժուական կառավարության կազմի մեջ։

II ու $2^1/_2$ Ինտերնացիոնալների ձուլումը տեղի ունեցավ ավելի վաղ, քան կարելի յեր սպասել։ Այս ձուլումը չի կարելի այլ կերպ գնահատել, բայց յեթե ընդունել, վոր այս նշանակում ե ռեֆորմիզմի ժամանակավոր ուժեղացում։ Սակայն միաժամանակ այս հանգամանքը II Ինտերնացիոնալին մոտեցնում ե իր կործանմանը, վորովհետև հենց վոր պայթի բուրժուական հասարակարգի դեմ ուղղված առաջին հեղափոխական փոթորիկը, II Ինտերնացիոնալը կըտապալվի, կավերվի, ինչպես այս հասարակարգին նեցուկ յեղող ամենափթած սյուներից մեկը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ IX ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. А. Луначарский. «Очерк развития интернационала» (старое издание О. Н. Поповой).
2. Ф. Шипулинский. «Интернационал» Москва 1917 г.
3. «Краткий очерк истории социализма и социальных движений на Западе» (изд. 1919 г. յերես 144—155).
4. Ю. М. Стеклов. «Интернационал» часть I.
5. Д. Рязанов. «Маркс и Энгелс». Изд. „Моск. Раб.“ 1923 г. յերես 164—183.
6. Г. Зиновьев. «II Интернационал и проблема войны».
7. Г. Зиновьев. Война и кризис социализма».
8. Грюнберг. «Интернационал и мировая война» (Резолюции и документи). Издание Коминтерна.

ԳԼՈՒԽ X

III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

1. Ի՞ՆՉՊԵՍ ՅԵՎ ՅԵ՞ՐԲ ԾԱԳԵՑ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈ՞ՆԱԼԸ

III Ինտերնացիոնալը ծագեց այն ժամանակաշրջանում, յերբ սկսվեց համաշխարհային քաղաքացիական պատերազմը, վոր հետևանք էր իմպերիալիստական սպանդանոցի (1914—18 թ. թ.), հին ձևերի ու կապիտալիզմի նախկին հզորության քայքայման հողի վրա։

III Ինտերնացիոնալի ձևական կազմակերպումից դեռ մի քանի տարի առաջ, տրված էր իմպերիալիստական պատերազմի միջազգային, դասակարգային հեղափոխական լուսաբանությունը և կոչ էր արված միջազգային դասակարգային կռիվ մղելու այդ պատերազմի դեմ։ Այս լուսաբանությունը տրված էր բոլշևիկների կուսակցության ԿԿ-ի՝ այն առաջին մանիֆեստի մեջ, վոր հրատարակել էին պատերազմից հետո և վորում առաջին անգամ պարզ վորոշված էր պրոլետարիատի պատմական խնդիրը, այսինքն, թե ժողովուրդների իմպերիալիստական պատերազմը վերածվելու է դասակարգերի քաղաքացիական պատերազմների։ Պատերազմի առաջին ամիսներում արդեն բոլշևիկների կուսակցության կենտրոնական օրգանը հրապարակ էր հանել մի նոր նշանաբան—«III Ինտերնացիոնալ» նշանաբանը։ Սակայն մեր կուսակցության գաղափարը, թե անհրաժեշտ է նոր ինտերնացիոնալ ստեղծել, մի անգամից արձագանք չգտավ այն ժամանակվա խմբավորումների մեջ։

Ցիմմերվալդի (Շվեյցարիա) 1915 թվի սեպտեմբերի կոնֆերենցիան, վորն առաջին կոլլեկտիվ փորձն էր՝ մերկացնելու II Ինտերնացիոնալի գործունեությունը, հակադրելու ժողովուրդների սպանդանոցին, վոր սարքել էր բուրժուազիան, բանվորական մասսաների հեղափոխական համերաշխության գաղափարը,—այս առաջին կոնֆերենցիան, հանձինս իր մեծամասնության, չհետևեց III ինտերնացիոնալ կազմելու լոզունգին, վոր հրապարակ էին հանել բոլշևիկների կուսակցության ներկայացուցիչները։

Հաջորդ, յերկրորդ կոնֆերենցիայում, վոր տեղի ունեցավ Կինտալում (Շվեյցարիա), 1916 թվի ապրիլին, արդեն մեծ ազդեցություն ձեռք բերին գաղափարները ձախ խմբակի, վորի գլուխ էին անցել բոլշևիկների կուսակցության ներկայացուցիչները։ Կինտալի կոնֆերենցիայի մանիֆեստի մեջ «պատերազմ մինչև վերջ» բուրժուական լոզունգին հակադրված էր «քաղաքական իշխանության նվաճումը բանվոր դասակարգի ձեռքով ու կապիտալիստական սեփականության վոչնչացումը» լոզունգը։

Հենց այս ձախ հոսանքն էլ 3. Ինտերնացիոնալի սաղմը յեղավ։ Այս ներկայացուցիչների միջոցով բանվոր դասակարգի առաջավոր խմբակները խզեցին իրենց կապը բուրժուական կառավարությունների, ազգային սոցիալ դեմոկրատական կուսակցությունների, II Ինտերնացիոնալի հետ։ Ցիմմերվալդյան III կոնֆերենցիան, վոր տեղի ունեցավ Ստոկհոլմում 1917 թ. սեպտեմբերին, աննշան հետք թողեց, վորովհետև այս կոնֆերենցիան հետին շարքը մղվեց այն հոյակապ անցքերի շնորհիվ, վորոնք կատարվեցին 1917 թվի վերջին ու 1918 թվին (հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում, հեղափոխությունները Գերմանիայում, Ավստրիայում, Հունգարիայում, այլ և մասսաների հեղափոխական ելույթները համարյա ամբողջ աշխարհում)։ Սակայն, այնուամենայնիվ, այս համագումարն էլ մի էտապ կազմեց III Ինտերնացիոնալն ստեղծելու ճանապարհին, վորովհետև հրապարակ նետեց մի կոչ, վոր հրավիրում էր պատերազմի դեմ միջազգային ընդհանուր գործադուլ անել միաժամանակ՝ սոցիալիստական խաղաղություն հաստատելու համար։

Հոկտեմբերյան պրոլետարական հեղափոխությունը Ռուսաստանում, վոր կյանքում մարմնացնում էր Ցիմմերվալդի ձախ հոսանքի գաղափարները, այն է իշխանության նվաճումը պրոլետարիատի ձեռքով, զանազան յերկիրների հեղափոխական կուսակցությունների ու խմբակների կազմակերպչական լայնածավալ համախմբման համար հնարավորություն ստեղծեց։

1919 թվի հունվարին ՌԿԿԿ-ն մյուս կոմմունիստական կուսակցությունների ու խմբակների հետ միասին հանդես է գալիս ամբողջ աշխարհի կոմմունիստներին ուղղած մի բաց նամակով, վորով հրավիրում էր մասնակցելու նոր կոմմունիստական Ինտերնացիոնալի I կոնգրեսին։ Այս կոնգրեսը յեղավ Մոսկվայում, 1919 թվի մարտի 4-ին։ Նրան մասնակցում էին 24 կոմմունիստական կուսակցությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ։

2. ԻՆՉՈ՞Ւ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈ՞ՆԱԼԸ ԿՈՉՎՈՒՄ Ե ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ

Որովհետև III Ինտերնացիոնալի աշխատանքի բովանդակությունն ու հիմնական խնդիրը համաշխարհային կոմմունիստական հեղափոխությունն է, այլ և այն պատճառով, վոր այս Ինտերնացիոնալը միացնում է ամբողջ աշխարհի բանվորական հեղափոխական կուսակցությունները, վորոնք իրենց ուղղակի նպատակ են դնում կապիտալիստական հասարակության տապալումն ու կոմմունիստական հասարակության կազմակերպումը։ III Ինտերնացիոնալի կուսակցություններն այն կուսակցություններն են, վորոնք խզել են իրենց կապը II Ինտերնացիոնալի սոցիալիստական ու սոցիալ դեմոկրատական կուսակցությունների հետ, այն կուսակցությունների, վորոնք իրենց բնույթը յերևան են հանել իբրև բանվոր դասակարգին դավաճանող կուսակցություններ։ III Ինտերնացիոնալը վերադարձավ այն գաղափարներին, վոր զարգացնում էր I Ինտերնացիոնալը և վորոնք այժմ միայն, 50 տարի անցնելուց հետո, սկսում են մարմնանալ կյանքում։ Այս գաղափարները կոմմունիզմի գաղափարներն են։ Ահա թե ինչու III Ինտերնացիոնալը կոչվում է կոմմունիստական։

3. Ի՞ՆՉ ՊԼԱՏՖՈՐՄԱ ՈՒՆԵՐ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼՆ ԻՐ ՀԻՄՆՎԵԼՈՒ ՄՈՄԵՆՏԻՆ

Հիմնված լինելով 1919 թվականին, պրոլետարիատի՝ բուրժուազիայի դեմ վարած առաջին հոյակապ ճակատամարտից հետո արդեն և լինելով հեղափոխական գործողության միջազգային կազմակերպություն, III Ինտերնացիոնալը հրապարակ մղեց հետևյալ ծրագիրը.

1) Քաղաքական իշխանության նվաճումը պրոլետարիատի ձեռքով, իբրև բուրժուազիայի քաղաքական իշխանությունը վոչնչացնելու անհրաժեշտ պայման:

2) Պրոլետարիատի դիկտատուրա, վոր ապահովում է պրոլետարիատի տիրապետությունը հասարակության մեջ, իբրև անցումնային (переход-ний) *կացություն: Պրոլետարիատի դիկտատուրան առաջ եր մղվում իբրև հակակշիռ դեմոկրատիայի, վորը վոչ այլ ինչ է, յեթե վոչ բուրժուազիայի վարագուրված դիկտատուրա: Անդասակարգ կոմմունիստական հասարակության անցնելն ապահովվում է վոչ թե դեմոկրատիայի միջոցով, այլ պրոլետարական դիկտատուրայի միջոցով, վորի ժամանակ պրոլետարիատը, բոլորովին բացահայտ կերպով, ոգտագործում է իր մասսայական կազմակերպությունների, իր խորհուրդների դասակարգային հզորությունը, վորպեսզի վերացնե բուրժուազիայի ու կալվածատերերի արտոնությունները:*

3) Խոշոր բուրժուազիայի ու կալվածատերերի եքսպրոպրիացիան, այսինքն՝ արտադրության բոլոր միջոցների՝ պրոլետարական պետության սեփականություն դարձնելն ու սոցիալիստական արտադրություն կազմակերպելը:

4. ԿՌՎԻ Ի՞ՆՉ ՈՒՂԻ ՅԵՐ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

Պրոլետարիատի՝ իշխանության համար մղած կռվի հիմքը պետք է կազմի մասսայական կռիվն իր անխուսափելի վախճանով՝ վոր է՝ անմիջական զինված ընդհարումը բուրժուազիայի հետ, այսինքն ընդհարումը բուրժուական պետական ապպարատի հետ: Այսպիսի կռվի անհրաժեշտ նախնական պայմանն այն է, վոր կազմակերպված կերպով խզվեն կապերը վո՛չ միայն աջ սոցիալ դեմոկրատական կուսակցությունների հետ, վորոնք բուրժուազիայի անմիջական պաշտպաններն են, այլ և այն կուսակցությունների հետ, վորոնք միջին տեղն են բռնում սոցիալ դեմոկրատների ու կոմմունիստների արանքում, այն է՝ այսպես կոչված կենտրոնի կուսակցությունների հետ:

Կռվի անհրաժեշտ, թեև յերկրորդական միջոցների շարքը պետք է դասել բուրժուական պառլամենտարիզմի հեղափոխական ոգտագործումը, աշխատանք արհեստակցական միությունների մեջ, այլ և բանվոր դասակարգի մյուս մասսայական կազմակերպությունների մեջ կատարվող աշխատանքը, շահագործվող ժողովուրդների ու գաղութների ազգային հեղափոխական այն շարժման նպաստելը, վորով վերջիններս կռվում են իմպերիալիզմի դեմ և այլն:

5. Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ I ԿՈՆԳՐԵՍԸ

Ունենալով փոքրաթիվ ներկայացուցչություն, սակայն հաստատ համոզված լինելով, վոր կոմմունիստական շարժումն արագ աճում է ամբողջ

աշխարհում, I կոնգրեսը նախաձեռնություն հանձն առավ հայտարարելու III Ինտերնացիոնալի գոյության մասին, այլ և շարադրելու ամբողջ աշխարհի առաջ յուր սկզբունքները: III Ինտերնացիոնալ կազմելու գաղափարը I կոնգրեսում ստացավ իր կազմակերպչական մարմնացումը. այս համագումարում կազմվեց Գործադիր Կոմիտե, վորի նստավայր վորոշվեց Ռուսաստանը:

I կոնգրեսը միջազգային կոմմունիստական շարժման հիմքը դրեց:

6. ՎՈ՞ՐՆ ԵՐ I ԿՈՆԳՐԵՍԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴՈԿՈՒՄԵՆՏԸ

Այս դոկումենտը բուրժուական դեմոկրատիայի ու պրոլետարական դիկտատուրայի վերաբերյալ թեզիսներն եյին:

Կոմմունիստական Ինտերնացիոնալը II Ինտերնացիոնալից տարբերվելով՝ կարծում է, թե պրոլետարիատի դիկտատուրան միակ միջոցն է, վոր հնարավորություն է տալիս մարդկությունն ազատելու կապիտալիզմի սարսափներից: Կոմմունիստական Ինտերնացիոնալը համարում է, վոր այս դիկտատուրայի պատմականորեն տվյալ ձևը Խորհրդային իշխանությունն է:

Ի նկատի ունենալով, վոր պրոլետարիատի դիկտատուրայի խնդրի շուրջն առանձնապես բազմաթիվ մոլորություններ են կուտակված, վորոնք խանգարում են կոմմունիստական հեղափոխական շարժման զարգացումը, ի նկատի ունենալով, վոր բուրժուազիան դաշնակցելով սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների, այլ և նույնիսկ ավելի ձախ կանգնած կենտրոնի կուսակցությունների հետ, առաջ է մղում դեմոկրատիայի գաղափարը՝ պրոլետարիատի դիկտատուրայի ուսմունքի դեմ, վոր այնքան վտանգավոր է բուրժուազիայի տիրապետության համար,—I կոնգրեսը կոմմունիզմի այս հիմնական խնդրին առանձին ուշադրություն դարձրեց, ընդունելով այն թեզիսները, վոր մշակել եր ընկ. Լենինը և վորոնք անխոնջ մերկացնում են մարքսիզմի այն բոլոր աղավաղումները, վորոնք կատարվում են այս ասպարեզում:

Ընկ. Լենինի թեզիսները բուրժուական դեմոկրատիայի ու պրոլետարական դիկտատուրայի մասին՝ վիթխարի ու ամենից թանգարժեք գանձն են, վոր մուծված են կոմմունիստական շարժման գործի մեջ և վորոնք կոմմունիզմի բոլոր հակառակորդների ձեռքից դուրս են կորզում աշխատավոր մասսաներին խաբելու ամենահզոր գործիքը:

7. ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՄԱՍԻՆ ՈՒՆԵՑԱԾ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԵՈՒԹՅՈՒՆՆ Ի՞ՆՉ Է

Դեմոկրատիան պաշտպանելն ու դիկտատուրան դատապարտելը, ում կողմից էլ վոր կատարվի այս, շահագործողների տիրապետությունը պաշտպանելու և գաղափարապես ու քաղաքականապես այն արդարացնելու փորձ է:

Պատմությունը սովորեցնում է, վոր վոչ մի ճնշված դասակարգ չի կարող տիրապետության հասնել՝ առանց դիկտատուրայի ժամանակաշրջանից անցնելու, այսինքն՝ առանց քաղաքական իշխանությունը նվաճելու և շահագործողների հուսահատ և կատաղի դիմադրությունը բռնի կերպով ճնշելու: Դեռ ևս Մարքսն ու Ենգելսն ապացուցում եյին, վոր ամենադեմոկրատական բուրժուական հանրապետությունը վոչ այլ ինչ է, յեթե վոչ մի մե-

քենա, վորով բուրժուազիան ճնշում է բանվոր դասակարգին։ Վորպեսզի իշխանությունը նվաճե, պրոլետարիատը պետք է հիմնովին խորտակե բուրժուական պետական ապարատը— չինովնիկական, դատարանական, ռազմական, վոստիկանական ապարատը և սրանց փոխարինե յուր մասսայական բանվորական կազմակերպությամբ— խորհուրդներով, վորոնց անծանոթ է օրենսդրական ու գործադիր իշխանությունների բաժանումը։

Իշխանությունը նվաճելով՝ ճնշված դասակարգը— պրոլետարիատը հանդիպում է շահագործողների դասակարգի կատաղի դիմադրությանը, ուստի և նա պետք է անխնա ավելե, մի կողմ նետե դեմոկրատիայի բոլոր պատիր ու դավաճանական պահանջները— ժողովների, մամուլի և այլն ազատությունը։ Բազմաթիվ օրինակներ, մանավորապես 1914-18 թ. թ. իմպերիալիստական պատերազմի դասերը, ակներև վկայում են, վոր կապիտալիստական հասարակության մեջ հենց վոր դասակարգային կռիվը մի քիչ լուրջ կերպով սրվում է, չի կարող վորևե միջին վիճակ լինել, բացի կամ բուրժուազիայի դիկտատուրայից, կամ պրոլետարիատի դիկտատուրայից։ Բուրժուազիայի դիկտատուրան նշանակում է բանվոր դասակարգի՝ չափազանց շահագործման լուծը վայր նետելու յուրաքանչյուր փորձի կատաղի ճնշումն։ Ահա թե ինչու պրոլետարիատի դիկտատուրան վոչ միայն լիովին օրինակն է, իբրև շահագործողներին տապալելու ու սրանց դիմադրությունը ճնշելու մի միջոց, այլ և աշխատավորների ամբողջ մասսայի համար միանգամայն անհրաժեշտ է, իբրև միակ պաշտպանություն՝ բուրժուազիայի դիկտատուրայի դեմ։ Պրոլետարիատի դիկտատուրայի արմատական տարբերությունը մյուս դասակարգերի դիկտատուրայից այն է, վոր բուրժուազիայի ու կալվածատերերի դիկտատուրան բնակչության հսկա մեծամասնության, այն է աշխատավորների, ազատագրական կռվի բռնի ճնշումն է։ Ընդհակառակը պրոլետարիատի դիկտատուրան իշխանությունից զրկված շահագործողների, այսինքն չնչին փոքրամասնություն կազմող կալվածատերերի ու կապիտալիստների դիմադրության բռնի ճնշումն է։

Այն բանը, վորի մասին հատկապես շատ են աղաղակում դեմոկրատիայի պաշտպանները, այն է քաղաքացիների հավասարության մասին, վորը իրապես գոյություն չի ունեցել և չի յել կարող գոյություն ունենալ վոչ մի բուրժուական դեմոկրատիայի ժամանակ, այն բանը ձեռք է բերվում խորհրդային սիստեմի ժամանակ, այսինքն պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ։ Բանվորների իշխանությունը, վորը շահագրգռված չէ արտադրության միջոցների սեփականության խնդրում, բոլոր աշխատավորների համար, անկախ սեռից, կրոնից, ցեղից ու ազգությունից, իրապես ապահովում է հավասարությունն ու ազատությունը և նրանց հրավիրում է պետությունը կառավարելու գործում մշտապես ու անպայման մասնակցություն ունենալու։

Պրոլետարիատի դիկտատուրան վերացնում է զորքը իբրև աշխատավոր մասսաների ճնշման ապարատ և այն փոխարինում է կարմիր բանակով, վորը բանվորների ու գյուղացիների պաշտպանն է, վորը կանգնած է ամբողջ աշխարհի աշխատավորների շահերին պաշտպան։ Պրոլետարիատի դիկտատուրան վերացնում է դատարանական այն ապարատը, վորը պաշտպանում եր սեփականատերերի շահերը և այն փոխարինում է բանվորական դատարանով, վորը պաշտպանում է նոր հասարակարգն ու աշխատավորներ-

րի իրավունքները։ Պրոլետարիատի դիկտատուրան բացի սրանցից առաջին, բայց հաստատուն քայլն է անում՝ վոչնչացնելու պետական իշխանությունը, պետությունը կառավարելու գործում մշտական ու անպայման մասնակցություն ունենալու հրավիրով աշխատավորների մասսայական կազմակերպությունները։

Ահա վորն է Կոմինտերնի հիմքը կազմող պրոլետարական դիկտատուրայի ուսմունքի էությունը։

Բանվորների նոր միջազգային ընկերություն ստեղծելով, վոր ունի յուր տնտեսական ղեկավար օրգանը— Գործկոմը— Կոմինտերնը հենց սրանով ստեղծեց մի կենտրոն, դեպի վորը ձգտում են ամբողջ աշխարհի հեղափոխական պրոլետարական մասսաները, վորոնք օրեցօր աճում են կռվի պրոցեսի ընթացքում։ I Կոնգրեսի մեծագույն յերախտիքն այն է, վոր այս կոնգրեսն ուշադրություն չդարձրեց տատանվողների ձայնին, վոր կոմմունիստական հաստատամտությամբ ու վճռականությամբ, ամբողջ բուրժուական աշխարհին ու սոցիալիզմի բոլոր դավաճաններին հակադրեց հեղափոխական պրոլետարական (թեկուզ այն ժամանակ դեռևս սակավաթիվ) մասսաների միջազգային կազմակերպությունը։

8. I ՈՒ II ԿՈՆԳՐԵՍՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ԻՆՉՈՎ Է ՆՇԱՆԱՎՈՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

1919 ու 1920 թվականները (1919 մարտից մինչև 1920 թ. հուլիսը), այսինքն I ու II կոնգրեսների միջև ընկած ժամանակաշրջանը մասսայական հեղափոխական շարժման հզոր զարգացման ժամանակն է հենց ամբողջ աշխարհում։ Գերմանական ու Ավստրիական միապետությունների ավերակների վրա կազմվում են բուրժուական հանրապետություններ, վորոնց վրա գրոհ են տալիս բանվորական մասսաները։ 1919 թվի մարտին ծնունդ է առնում խորհրդային հանրապետություն Հունգարիայում։ 1919 թվի մարտին հեղափոխական բանվորների կատաղի կռիվներ են լինում Գերմանիայում՝ բուրժուական հանրապետության դեմ։ 1919 թվի վերջին Միացյալ Նահանգներում սկսվում են յերկաթուղայինների, լեռնային բանվորների, մետաղագործների ու այլոց վիթխարի գործադուլներ։ 1920 թվի գարնանը Գերմանիայում հակահեղափոխական հեղաշրջում կատարելու փորձը (Կապպի խռովությունը) ուժգին ցնցեց ու վոտքի հանեց բանվորական մասսաները, վորոնք պաշտպանեցին հանրապետությունը միապետականների դավադիր արարքներից, բայց իրենք էլ ընկան Եբերտի սոցիալ դեմոկրատական կառավարության հարվածների ներքո։ Ֆրանսիայում տեղի յեն ունենում մասսայական հեղափոխական յելույթների ու գործադուլների ջղաձգային փորձեր, վորոնք առանձնապես սրվում են 1920 թվի մայիսին, և նույնպես անհաջողության մատնվում։ Սրան զուգընթաց ընդլայնվում և ամրապնդվում է Ասիայի ու Աֆրիկայի բազմամիլիոն գաղութային մասսաների հեղափոխական վրդովմունքը։

Բանվորական հեղափոխական շարժման լայնածավալ վերելքը պատճառ է լինում, վոր ամենուրեք ծնունդ են առնում և բազմանում են կոմմունիստական կուսակցություններն ու կազմակերպությունները, վորոնք գլուխ են կանգնում հեղափոխական շարժմանը և նվաճում են մասսաների

համակրությունը։ III Ինտերնացիոնալն ապշելի արագությամբ նեցուկներ է գտնում համարյա ամբողջ աշխարհում, վճռականապես արդարացնելով կանխատեսությունը նրանց, վորոնք առաջին կոնգրեսում հաստատամտությամբ պաշտպանում եյին այն տեսակետը, թե անհրաժեշտ է անմիջապես կազմել բանվորների միջազգային նոր կազմակերպություն (այս տեսակետը պաշտպանում եր գլխավորապես Ռ. Կ. Կ.-ն)։ Մասսայական հեղափոխական շարժման աճումն այս ժամանակաշրջանում պատճառ է լինում, վոր մի շարք խոշոր, հին սոցիալիստական կուսակցություններ, ինչպես որինակ, գերման անկախները, ֆրանսիական սոցիալիստները, ամերիկյան սոցիալիստները դուրս են գալիս II Ինտերնացիոնալից և թեքվում III Ինտերնացիոնալի կողմը։

9. ՎՈ՞ՐՆ Է III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ II ԿՈՆԳՐԵՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

I կոնգրեսից 16 ամիս անց 1920 թվի հուլիսին, յեղավ III Ինտերնացիոնալի II կոնգրեսը։

Յերբ I կոնգրեսը կոմմունիստական շարժման ընդհանուր սկզբունքն եր միայն տվել, ձևավորել եր հեղափոխական բանվորների միջազգային միավորությունը, զատել, անջատել եր բոլոր տատանվող տարրերից և հեղափոխական բոլոր խմբակների համար ձգողության կենտրոն եր ստեղծել, ապա II կոնգրեսը վիթխարի աշխատանք կատարեց, մի կողմից՝ Կոմինտերնը կազմակերպչապես ձևավորելու ասպարեզում ու մյուս կողմից միջազգային կոմմունիստական բանվորական շարժման համար միասնական ծրագիր ու տակտիկա մշակելու ասպարեզում։ II կոնգրեսը միասնական միջազգային կոմմունիստական կուսակցության հիմքերը դրեց, վորն ունի յուր բաժինները (սեկցիաները) աշխարհի տարբեր յերկրներում, և իրականում զատվեց, անջատվեց ցենտրիստներից, բուրժուազիայի ուղղակի ու կողմնակի գործակալներից, վորոնք գործում են բանվոր դասակարգի ներսում։

Հեղափոխական շարժման վերոհիշյալ արագ աճումը ամրապնդեց առաջուց ծագած կոմմունիստական կուսակցությունները և կյանքի կոչեց նորերը, վորոնք II կոնգրեսի ժամանակ արդեն բանվորական նշանավոր ույժ եյին կազմում։ II կոնգրեսին ներկա եյին 31 յերկրների ներկայացուցիչներ, այսինքն՝ համարյա այն բոլոր յերկրները, վորտեղ կա բանվորական շարժում, և այսպիսով, բառի բուն մտքով, այն կոնգրեսը համաշխարհային յեղավ։

II կոնգրեսում կոմմունիզմի տեսակետից վճռվեցին բանվորական համաշխարհային շարժման կարևորագույն խնդիրները, վորոնք վերաբերում եյին պրոլետարական հեղափոխության ժամանակ կոմմունիստական կուսակցությունների դերին, պարլամենտարիզմին, արհեստակցական-բանվորական շարժմանը. վճռվեցին նաև ագրարային, գաղութային խնդիրները և վերջապես ընդունվեց III Ինտերնացիոնալի կանոնադրությունը։

10. Ի՞ՆՉ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՈՒՆԻ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ

III Ինտերնացիոնալի կազմակերպչական կառուցվածքն առաջին անգամ ձևավորվեց III կոնգրեսում, այն ժամանակաշրջանում, յերբ III Ինտերնա-

ցիոնալը հենց նոր եր ձեռակերպվում իբրև միջազգային կազմակերպություն։ Սկզբում նրա կազմակերպության հիմք յեղան հետևյալ թեզիսները.

Ինտերնացիոնալի բարձրագույն ղեկավար որգանը համաշխարհային համագումարն է, վոր հավաքվում է տարին մեկ անգամից վոչ պակաս։ Համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում բարձրագույն որգանը Գործադիր Կոմիտեն է, վոր կազմվում է 13 խոշորագույն (կոնգրեսի վորոշած) կոմմունիստական կուսակցությունների ներկայացուցիչներից, վորոնք Գործադիր Կոմիտե յեն ուղարկում յուրաքանչյուրը մեկական պատվիրակ և 5 ներկայացուցիչ ել այն յերկրի կոմմունիստական կուսակցությունից, վորտեղ նստում է Գ. Կ. կոնգրեսի վորոշմամբ։ Մյուս կուսակցություններն ու կազմակերպությունները կարող եյին ուղարկել մեկական ներկայացուցիչ՝ խորհրդակցական ձայնով։ III Ինտերնացիոնալը կազմակերպվեց դեմոկրատական կենտրոնացման հիմունքով։ Բացի III Ինտերնացիոնալի մեջ մտած ու բացահայտ գործող կազմակերպություններից, վորտեղ անհրաժեշտ եր, պետք է ստեղծեյին անլեգալ կոմմունիստական կազմակերպություններ։ III Ինտերնացիոնալը բանվորական շարժման բոլոր տեսակների ու ձևերի լիակատար միասնականությունը ձգտելով յուր մեջ եր առնում, իբրև սեկցիաներ, կոմմունիստական յերիտասարդության միջազգային միությունն ու կանանց կոմմունիստական միությունը։

IV կոնգրեսը հաշվի առնելով այն, շատ ավելի լայնածավալ ու բարդ խնդիրները, վորոնք կանգնած են Կոմինտերնի հանդեպ, անհրաժեշտ համարեց Գործկոմի նախկին կազմակերպության մեջ եյական փոփոխություններ մտցնել։ Այս փոփոխությունների նպատակն եր ստեղծել մի այնպիսի գործկոմ, վոր կարողանար իր ձեռքն առնել իրապես կենտրոնացած համաշխարհային կոմմունիստական կուսակցության ղեկավարությունը, մի գործկոմ, վոր կարողանար կյանքում իրապես անցկացնել ու մարմնացնել համաշխարհային կոնգրեսների վորոշումները։

Այս նպատակով IV կոնգրեսը վորոշեց, վոր Գործկոմն ընտրվում է համագումարից և կազմված է լինում մեկ նախագահից, 24 անդամից ու 10 թեկնածուից։ Իբրև ընդհանուր կանոն՝ 4 ամիսը մեկ անգամ գումարվում է Գործկոմի ընդլայնված պլենումը։ Ընդլայնված պլենումն ընտրում է նախագահություն, վորի կազմի մեջ մտնում են մեկ ներկայացուցիչ յերիտասարդական Միությունից և մեկ ներկայացուցիչ ել պրոֆմիությունից—խորհրդակցական ձայներով։ Գործկոմի մեջ կազմվում են հետևյալ բաժինները.—Արևելյան, Կազմակերպչական, Ագիտացիոն-պրոպագանդիստական ու Ինֆորմացիոն-վիճակագրական։ Նախագահությունը կազմում է գլխավոր քարտուղարություն, վորի գլուխը կանգնած է գլխավոր քարտուղարը։ Քարտուղարությունը նախագահության գործադիր որգանն է։

11. Ի՞ՆՉ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԱՆԴԱՄ ԼԻՆԵԼ

Վորպեսզի դժվարացնեն համաձայնողական ու միայն խոսքերով հեղափոխական կուսակցությունների մուտքը III Ինտերնացիոնալի մեջ, Կոմինտերնի II համագումարն առաջադրեց 21 պայման՝ III Ինտերնացիոնալի մեջ ընդունվելու համար։ Այս պայմաններից գլխավորները հետևյալներն են.—Յուրաքանչյուր կուսակցություն պարտական է ամեն կերպ քարոզե-

լու պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարը, իր շարքերից վտարելու (մանավանդ պատասխանատու տեղերից) ռեֆորմիստներին, անլեգալ կազմակերպություններ ստեղծելու, զորքի մեջ պրոպագանդա մղելու, գյուղում ագիտացիայի ու պրոպագանդայի գործը կազմակերպելու, դիմակազերծ անելու սոցիալ-պատրիոտիզմն ու պացիֆիզմը, մերկացնելու գաղութային քաղաքականությունը և նպաստելու գաղութների ամեն մի ազատագրական-հեղափոխական շարժման՝ ամեն կերպ ոժանդակություն ցույց տալու Խորհրդային հանրապետություններին, կռվելու դեղին արհմիությունների Ամստերդամի Ինտերնացիոնալի դեմ։ Կուսակցությունները պետք է կազմակերպվեն դեմոկրատական կենտրոնացման սկզբունքով։ Կուսակցական ծրագրերը պետք է վերաքննվեն Կոմունիստական Ինտերնացիոնալի վորոշումների վոգու համաձայն։

12. ԿՈՄԻՆՏԵՐՆԻ II ԿՈՆԳՐԵՍՆ ԻՆՉՊԵՍ ԵՐ ՎՈՐՈՇՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այն հաղթությունը, վոր սոցիալիզմը (իբրև կոմունիզմի առաջին աստիճանը) պետք տանի կապիտալիզմի վրա, պահանջում է յերեք հիմնական խնդիրների իրականացումը.

Առաջին՝ բուրժուազիայի ու կալվածատերերի տապալումն ու նրանց դիմադրության ճնշումը, առանց վորի հնարավոր չէ խաղաղ տնտեսական շինարարությունը։

Յերկրորդ՝ պրոլետարիատի առաջավոր զորամասին—կոմունիստական կուսակցությանը ղեկավար դեր հատկացնելն ու այս դերում ամրապնդելը։ Պրոլետարիատի հեղափոխական առաջապահը—կոմունիստական կուսակցությունը պետք է իր կողմը քաշի և իր յետևից տանի վոչ միայն պրոլետարիատի հետամնաց մասսաները, այլ և այն ամբողջ մասսան աշխատավորների, վոր շահագործում է կապիտալը։ Իր ամենօրյա պայքարում պրոլետարիատը պետք է այս մասսային վստահություն ներշնչի այն բանի նկատմամբ, վոր ինքը, բանվորությունը կարող է ղեկավարել և ընդունակ է պաշտպանելու և կյանքում իրականացնելու աշխատավորների շահերը։

Յերրորդ՝ մանր բուրժուազիայի (գյուղացիության, տնայնագործների, մանր առևտրականների, ծառայողների, ինտելիգենցիայի) դեռ ևս բավականաչափ բազմաթիվ բոլոր շերտերի բնական տատանման վոչնչացումը կամ թուլացումը, շերտերի, վորոնք միջին տեղն են բռնում պրոլետարիատի և բուրժուազիայի արանքում։ Պրոլետարիատի առաջապահին հարկավոր է այնպիսի ճկուն քաղաքականություն, վոր կարողանար վայրկենապես վորսալ այս տատանումները և հարկավոր մոմենտում հմուտ միջոցներով քարշել մանր բուրժուական մասսաները պրոլետարիատի կողմը։

Ամեն մի մտածություն այն մասին, թե կապիտալիստները կարող են խաղաղ կերպով հպատակվել աշխատավորների մեծամասնության կամքին (պարլամենտի կամ հիմնադիր ժողովի միջոցով) թե հնարավոր է խաղաղ կերպով անցնել սոցիալիզմին,—ուղղակի խաբեբայություն է բանվորների նկատմամբ և ամենից ավելի վնասակար, վորովհետև տանում է դեպի բուրժուազիայի հզորության ամրապնդումը։

13. ԻՆՉՊԵՍ Է III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ՎՈՐՈՇՈՒՄ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԱՆԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ

III Ինտերնացիոնալի II կոնգրեսում պարզվեց, վոր կապիտալիստական յերկրների մեծամասնության մեջ մինչև այժմ էլ դեռ չի սկսվել պրոլետարիատին իր դիկտատուրան իրականացնելու համար կանխ պատրաստելու գործը։

Կոմունիստական կուսակցության հիմնական խնդիրն այն է, վոր հեղափոխությունն արագացնի, և վոչ թե արհեստական կերպով այն առաջ բերի, ուստի և միջազգային պրոլետարական շարժման տեսակետից կոմունիստական կուսակցության ամենակարևոր խնդիրները հետևյալներն են.—

1) Կոմունիստական ուժերի համախմբումն ու յուրաքանչյուր յերկրում կոմունիստական կուսակցություն կազմելը։

2) Ռեֆորմիստական հայացքների (այսինքն սոցիալիզմի խաղաղ իրականացման հնարավորությունը պաշտպանող հայացքների) դեմ մղվող կռիվն ուժեղացնել՝ վոչ միայն այս հայացքների սխալ լինելը պարզաբանելով, այլ և անշեղ ու անխնա մերկացնելով բանվորական շարժման մեջ յեղած ամեն մի գործչի, վոր քարոզում է այս հայացքները։

3) Ռեֆորմիզմի վոգով կրթված հին պարագլուխների փոխարինումը կոմունիստներով, վոր պետք է վճռականապես կատարվի պրոլետարական կազմակերպությունների բոլոր տեսակների մեջ, վոչ միայն քաղաքական, այլ և արհեստակցական, կոոպերատիվ ու լուսավորական կազմակերպություններում։

4) Առանց բացառության բոլոր կազմակերպությունների, միությունների, միավորությունների մեջ առաջին հերթին ստեղծել կոմունիստների պրոլետարական խմբակներ կամ բջիջներ, վորոնք առավելապես պետք է հայտնաբար գործեն, սակայն պետք է նմանապես գաղտնի խմբակներ կամ բջիջներ գոյություն ունենան մանավանդ այն վայրերում, վորտեղ գոյություն ունի հալածանք բուրժուազիայի կողմից։

5) Պարլամենտի հաջողակ օգտագործումը, մի բան, վոր կոմունիստական կուսակցության ամենաբարդ ու ամենապատասխանատու աշխատանքն է կազմում։ Այս պատճառով էլ կոմունիստական կուսակցությունն անհրաժեշտաբար պետք է հատուկ խստությամբ վերաբերվի պարլամենտի կոմունիստական ֆրակցիաներին, կենտրոնական կոմիտեների վերահսկողությանն ու ղեկավարության յենթարկելով նրանց։

6) Պայքար բանվորական արիստոկրատիայի փոքրամասնության դեմ, վորն ամենուրեք բուրժուազիայի սոցիալական նեցուկն է պրոլետարական բանակում, նրա պարագլուխների դավաճանական դերի մերկացումը և, ըստ կարելույն, ամենից ավելի սերտ մերձեցում այն մասսայի հետ, վոր ամենից ավելի քիչ է կազմակերպված ու լուսավորված, մերձեցում այն նպատակով, վորպեսզի այն մասսան հանվի հիշյալ խմբակների ազդեցության տակից։

7) Լեգալ ու անլեգալ կազմակերպության ու աշխատանքի սիստեմատիկ միացում, բանավոր ու մամուլի, տպագրության միջոցով պրոպագան-

զա անելու լեգալ ու անլեգալ յեղանակների օգտագործում, մասսաների գրավումն ու քաշումն այն կռվի մեջ, վոր մղվում ե կոմմունիստական ժողովների, մամուլի և այլն ազատության համար։

14. Ի՞ՆՉՊԵՍ Ե ՎՈՐՈՇՈՒՄ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կոմկուսակցությունը բանվոր դասակարգի ամենից առաջավոր, ամենագիտակից ու հեղափոխական մասն ե։ Քանի պրոլետարիատը իշխանությունը չի նվաճել, քանի չի ամրապնդել յուր տիրապետությունը, կոմկուսակցությունը մինչև այն ժամանակ յուր շարքերում կունենա բանվորների փոքրամասնությունը միայն։

Ինտերնացիոնալի հին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների սնանկությունը դեռևս պրոլետարական կուսակցության սնանկություն չե ընդհանրապես։ Պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող կռվի դարաշրջան ստեղծում ե պրոլետարիատի նոր կուսակցություն—կոմմունիստական կուսակցությունը։ Կոմինտերնը ամենավճռական կերպով մերժում ե այն հայացքը, թե պրոլետարիատը կարող ե կատարել յուր հեղափոխությունը՝ առանց յուր ինքնուրույն քաղաքական կուսակցությունն ունենալու։ Յուրաքանչյուր դասակարգային կռիվ քաղաքական կռիվ ե։ Նպատակն այս կռվի, վոր անխուսափելի կերպով վերածվում ե քաղաքացիական կռվի, քաղաքական իշխանության նվաճումն ե։ Սակայն քաղաքական իշխանությունը չի կարող ձեռք բերվել, կազմակերպվել և դեպի մի վորոշ նպատակ ուղղվել այլ կերպով, քան այս կամ այն քաղաքական կուսակցության միջոցով միայն։

Բացի այս, դասակարգային կռիվը պահանջում ե, վոր պրոլետարիատի շարժման բազմազան ձևերն (արհմիությունները, կոոպերացիաները, ֆաբգործարկոմներ, կուլտ-կրթական հիմնարկությունները, ընտրությունները և այլն) միավորվեն մի կենտրոնում և ղեկավարվեն այս կենտրոնի միջոցով։ Այսպիսի ընդհանուր, այսինքն միացնող ու ղեկավարող կենտրոն կարող ե լինել միայն քաղաքական կուսակցությունը։ Բանվոր դասակարգը չի կարող բուրժուազիային լիովին հաղթել, լոկ ընդհանուր գործադուլից օգտվելով կամ «ծալած ձեռքերի» տակտիկայի միջոցով (յերբ փորձում են բուրժուազիային տապալել՝ աշխատանքից ընդհանրական մասշտաբով հրաժարվելով միայն)։ Պրոլետարիատը պետք ե դիմե զինված ապստամբության։ Սրանից ել անխուսափելիորեն բղխում ե քաղաքական կուսակցություն կազմակերպելու անհրաժեշտությունը։ Բանվորական անձև միությունները բավական չեն այս նպատակի համար։ Բանվորական շարժման հին բաժանումը յերեք ձևերի (կուսակցություն, արհմիություններ ու կոոպերացիա) անց ե կացրել արդեն յուր դարը, հնացել ե։

Ռուսաստանի պրոլետարական հեղափոխությունը հրապարակ ե հանել բանվորական դիկտատուրայի հիմնական ձև—խորհուրդները։ Մոտիկ ապագայում կհաստատվի հետևյալ բաժանումը. 1) կուսակցություն, 2) խորհուրդներ, 3) արտադրական միություններ։ Սակայն խորհուրդներում, ինչպես և հեղափոխականացած արտադրական միությունների մեջ կատարելիք աշխատանքը անպայման ու սիստեմատիկ կերպով պետք ե ղեկավարե

պրոլետարիատի կուսակցությունը։ Կոմկուսակցությունը բանվոր դասակարգին հարկավոր ե վոչ միայն իշխանությունը նվաճելուց առաջ, վոչ միայն իշխանությունը նվաճելու ժամանակ, այլ և նրանից հետո յել, յերբ իշխանությունն արդեն անցել ե բանվոր դասակարգի ձեռքը։ Միայն այն դեպքում, յերբ բանվոր դասակարգի լավագույն մասը համախմբված կլինի կուսակցության մեջ, հնարավոր ե հաղթահարել այն բոլոր դժվարությունները, վորոնք ծառանում են բանվորական դիկտատուրայի հանդեպ՝ հաղթությունից անմիջապես հետո։

Պրոլետարիատի քաղաքական կուսակցության անհրաժեշտությունն ավելորդ ե դառնում այն ժամանակ միայն, յերբ դասակարգերը լիովին վերանում են։

15. Ի՞ՆՉ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՈՒՆԻ III ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԸ ԱՐՀՇԱՐԺՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

III Ինտերնացիոնալը յելնում ե այն համոզմունքից, վոր պրոլետարիատի ամենալայնածավալ մասսաները կապիտալի դեմ մղվող կռվի մեջ են գրավվում, քաշվում պատերազմի տնտեսական հետևանքների շնորհիվ (այն հանգամանքի շնորհիվ, վոր համաշխարհային տնտեսությունը լիապես քայքայված ե, ամենասաստիկ թանգություն գոյություն ունի, աշխատանքի պայմաններն ու բնակարանային պայմանները վատացել են և լայն չափով կիրառվում ե կանանց ու դեռահասների աշխատանքը)։ Կռվի մեջ այս կերպով քաշվելը տեղի յե ունենում այն միությունների միջոցով, վորոնք վոչ միայն պրոլետարիատի առաջավոր մասի, այլ և նրա լայնածավալ մասսաների կազմակերպությունն են։ Ուստի և արհմիությունները, վորոնք պատերազմի ժամանակ, հանուն կապիտալի շահերի, բանվորական մասսաների վրա ազդելու օրգաններ եյին, այժմ դառնում են կապիտալիզմի խորտակման օրգաններ։ Արհմիությունների բնույթի ու դերի այս փոփոխումին ամեն կերպ արգելք ե լինում. արհեստակցական հին բյուրոկրատիան, վոր ստեղծվել ե խաղաղ զարգացման տասնամյակների շնորհիվ, այլ և արհմիությունների կազմակերպության հին ձևերը։ Այս բյուրոկրատիան, վոր համարյա ամենուրեք տիրել ե միությունների ապպարատին ու սրանց գանձարկղներին, օգտվում ե յուր դեռևս շարունակվող ազդեցությամբ, վորպեսզի բանվորական շարժման ընդհանուր հեղափոխական նպատակները փոխարինե մասնակի ռեֆորմիստական պահանջներով, մի յերևույթ, վոր խափանում ե և թույլ չի տալիս, վոր պրոլետարիատի կռիվը ձևափոխվի և դառնա հեղափոխական կռիվ կապիտալիզմը վոչնչացնելու համար։

Ի նկատի ունենալով, վոր բանվոր դասակարգի վիթխարի մասսաները կենտրոնացած են արհմիությունների մեջ, և վոր տնտեսական կռիվը, վոր մղում են մասսաները պրոֆեսիոնալ բյուրոկրատիայի կամքի հակառակ, անխուսափելիորեն հեղափոխական բնույթ ունի, կոմմունիստները պարտական են բոլոր յերկրներում մտնելու արհմիությունների մեջ, վորպեսզի այս միությունները դարձնեն կապիտալիզմի տապալման համար մղվող կռվի գիտակից օրգաններ։ Ամեն մի կամովին մեկուսացում արհշարժումից, ամեն մի փորձ առանձին միություններ ստեղծելու՝ վիթխարի վտանգ ե ներկայացնում կոմմունիստական շարժման համար։ Այս փորձը սպառնում

է ամենից առաջավոր, ամենագիտակից, հեղափոխական բանվորներին կըտրելու մասսաներից, այն սպառնում է այս մասսաները հանձնելու համաձայնողական պարագլուխների ձեռքը, վորոնք գործում են հոգուտ բուրժուազիայի։

Ամեն ջանք գործադրելով այն նպատակի համար, վորպեսզի իրենք մտնան արհմիությունների մեջ և տիրանան նրանց ղեկավար որգաններին, կոմմունիստները պետք է մեծագույն զգուշությամբ դիմեն արհեստակցական կազմակերպությունների մեջ պառակտում առաջ բերելուն։ Կոմմունիստները պառակտման պետք է դիմեն միայն այն դեպքում, յեթե պառակտումից հրաժարվել՝ կընշանակե հրաժարվել արհեստակցական միությունների մեջ հեղափոխական աշխատանք կատարելուց, հրաժարվել այն միությունները հեղափոխական գործիք դարձնելու փորձից, հրաժարվել պրոլետարիատի ամենից ավելի շահագործվող մասը կազմակերպելուց։

Սակայն պառակտման դիմելիս, կոմմունիստները պետք է ընտրեն այնպիսի րոպե, յերբ այսպիսի պառակտման անխուսափելիությունը կարող է լիովին հասկանալի լինել բանվորական մասսային և գնահատվել վերջինիս կողմից։ Այնտեղ, վորտեղ համաձայնողականների ու հեղափոխական արհշարժման պառակտումն ավելի վաղ է կատարվել, այնտեղ, վորտեղ, ինչպես օրինակ Ամերիկայում, համաձայնողական միություններին զուգընթաց կան հեղափոխական ձգտումներ ունեցող, թեկուզ և վոչ կոմմունիստական միություններ, կոմմունիստները պարտական են ոժանդակելու նրանց, վոր ձեռք վերցնեն սինդիկալիստական նախապաշարմունքներից և կանգնեն կոմմունիստական հողի վրա։

Սակայն հեղափոխական միություններին ոժանդակելը չպետք է նշանակի, վոր կոմմունիստները պետք է հեռանան համաձայնողական արհմիություններից։ Ընդհակառակը, արհշարժման մեջ կոմմունիստների ամենագլխավոր խնդիրն է էլ ավելի սերտ միանալ այն մասսաների հետ, վորոնք համախմբված են արհմիությունների մեջ, վորպեսզի այն միջոցով արագացնեն այս միությունների՝ հեղափոխական կռվի ճանապարհը վոտք կոխելու պրոցեսը։ Առանց հեռանալու միություններից, ինչքան էլ վոր համաձայնողական տրամադրությամբ համակված լինեն վերջիններս, կոմմունիստները պետք է ձգտեն արհմիությունների ու կոմկուսակցության մեջ ըստ կարելույն լիակատար միասնականություն ստեղծելու և արհմիությունները կուսակցության իրական ղեկավարությանը յենթարկելու՝ միությունների մեջ կոմմունիստական ֆրակցիաներ կազմակերպելու միջոցով։

Դեռ իմպերիալիստական պատերազմից էլ առաջ, արհմիությունները ձգտում եյին միջազգային միավորություններ ստեղծելու։ Պատերազմից հետո համաձայնողական պարագլուխները հիմնեցին արհմիությունների դեղին Ինտերնացիոնալը (այսպես կոչված Ամստերդամի Ինտերնացիոնալը), վորը բուրժուազիայի արբանյակի թշվառ դերն է խաղում և փորձում է բոլոր յերկրներում գործադուլային շարժումը խեղդել՝ հատուկ որենքների միջոցով։ Բանվոր կոմմունիստները, վորոնք մտնում են բոլոր յերկրների արհմիությունների մեջ, պետք է ձգտեն արհմիությունների միջազգային մարտական ֆրոնտ ստեղծելու ու վերջինս ամրապնդելու։

Պրոլետարիատի տնտեսական կռիվը բոլոր յերկրներում անխուսափելիորեն դառնում է ավելի ու ավելի հեղափոխական կռիվ։ Ուստի և արհ-

միությունները պետք է ամեն յերկրում վոչ միայն ձգտեն, վոր իրենց կռիվն ըստ կարելույն ավելի ու ավելի կենտրոնացման յենթարկվի, այլև պետք է այս կռիվն անեն միջազգային մասշտաբով, մտնելով Պրոֆմիությունների մեջ, վորը հեղափոխական արհմիությունների միջազգային կազմակերպությունն է, միանալով և նրա մեջ դառնալով մի բանակ, վորի տարբեր մասերը միասին կռիվ են մղում հանուն ընդհանուր նպատակի։

16. ԻՆՉ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՊԱՐԼԱՄԵՆՏԱՐԻԶՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Պարլամենտարիզմը, ինչպես վոր այս հասկանում է III Ինտերնացիոնալը, իշխող դասակարգի ձեռքում աշխատավորներին ճնշելու ու հարստահարելու մի գործիք է։

Պարլամենտարիզմը պետությունը կառավարելու մի վորոշ ձև է։ Այս պատճառով էլ պարլամենտարիզմը վոչ մի դեպքում չի կարող կոմմունիստական հասարակության ձև լինել, վորին անծանոթ են թե դասակարգերը, թե դասակարգային կռիվը և թե վորևե պետական իշխանություն։ Պարլամենտարիզմը չի կարող պրոլետարական պետությունը կառավարելու մի ձև լինել նաև անցման շրջանում, վոր պրոլետարիատի դիկտատուրայից տանում է դեպի կոմմունիստական հասարակություն։

Այն րոպեին, յերբ դասակարգային կռիվը սրվում է և փոխվում քաղաքացիական պատերազմի, պրոլետարիատը պետք է իր պետական կազմակերպությունն անխուսափելիորեն կերտե իբրև ռազմական կազմակերպություն, վորի մեջ մտնել չպետք է թույլատրվի այն դասակարգերի ներկայացուցիչներին, վորոնք առաջ իշխում եյին։

Բուրժուական պարլամենտները, վորոնք բուրժուական պետության կարևոր ապարատներից մեկն են, չեն կարող նվաճվել, ինչպես վոր պրոլետարիատը չի կարող նվաճել բուրժուական պետությունն ընդհանրապես։ Պրոլետարիատի նպատակն է խորտակել բուրժուազիայի պետական մեքենան, իսկ սրա հետ միասին՝ նաև պարլամենտական հիմնարկությունները։ Այս պատճառով էլ կոմմունիստների համար խոսքը կարող է վերաբերվել միայն այն բանին, վոր բուրժուական պետական հիմնարկություններն օգտագործվեն հենց այս հիմնարկությունները խորտակելու նպատակով։

Պրոլետարիատի՝ բուրժուազիայի դեմ, բուրժուական պետական իշխանության դեմ մղվող կռվի ամենակարևոր մեթոդն ամենից առաջ մասսայական յելույթների մեթոդն է։ Մասսայական կռիվը մի ամբողջ սիստեմ է զարգացող յելույթների, վորոնք սրվում են իրենց զարգացման պրոցեսում և հասցնում կապիտալիստական պետության դեմ ուղղված ապստամբության։

Այս մասսայական կռվում, վոր ծավալվում և վերածվում է քաղաքացիական պատերազմի, կոմկուսակցությունը պետք է օգտագործե և հօգուտ իրեն ամրապնդե ամեն տեսակի ու բոլոր լեգալ դիրքերը, վերջիններս դարձնելով ոժանդակ ու իբրև նեցուկ ծառայող կետեր իր հեղափոխական աշխատանքի ընթացքում։ Այսպիսի ոժանդակ հենակետերից մեկն է բուրժուական պարլամենտարիզմը։ Կոմկուսակցության անելիքը պարլամենտում այն է, վոր օգնե մասսաներին՝ դրսից պայթեցնելու բուրժուազիայի պե-

տական մեքենան։ Պարլամենտում կատարելիք այս աշխատանքի նյությունը գլխավորապես այն է, վոր հեղափոխական ագիտացիա մղվի պարլամենտական ամբիոնից, հակառակորդները մերկացվեն, գաղափարապես համախմբվեն մասսաները, վորոնք մեծ մասամբ դեռ չեն ազատագրվել դեմոկրատական պատրանքներից, այսինքն այն համոզմունքից, թե պարլամենտի միջոցով հնարավոր է ազդել բուրժուական կառավարության ու բուրժուազիայի վրա և սրանով իսկ բարվոքել իրենց վիճակը։

Նախընտրական պայքարին, այլ և պարլամենտական ամբիոնից հեղափոխական պրոպագանդային մասնակցելը նշանակություն ունի բանվոր դասակարգի այն շերտերը նվաճելու համար, վորոնք, ինչպես օրինակ գյուղական աշխատավորական մասսաները, մինչև վերջին ժամանակներս հեռու էին կանգնում քաղաքական կյանքից և չէին խառնվում հեղափոխական շարժմանը։

Պարլամենտական գործունեության մեջ մասնակցություն ունենալն անհրաժեշտ համարելով Կոմինտերնը կոմկուսակցության՝ պետական իշխանության համար մղվող կռվի ծանրության կենտրոնը փոխադրում է պարլամենտի շրջանակներից դուրս։ Ուստի Կոմինտերնը վճռականապես դատապարտում է կոմմունիստական կուսակցության ներսում տեղի ունեցող ամեն մի պառակտում և կամ պառակտում առաջ բերել ու ամեն մի փորձ, վոր կարող է առաջանալ բուրժուական պարլամենտը օգտագործելու խնդրի առթիվ, դատապարտում է վորովհետև ի նկատի ունի, վոր այս խնդիրը պրոլետարիատի հեղափոխական կուսակցության համար համեմատաբար փոքր կարևորություն ունի, այլ և վորովհետև կուսակցությունն իր տրամադրության տակ ունի և չի հրաժարվում կռվի մի շարք այլ, նույն իսկ ամենակտրուկ միջոցներից անգամ, վորպիսին է զինված ապստամբությունը։

17. Ի՞ՆՉ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

II Ինտերնացիոնալի գործիչները բավականաչափ չէին գնահատել գաղութային խնդիրը։ Յեվրոպայի հեղափոխական շարժումը և Ասիայի ու Աֆրիկայի հետամնաց յերկրների հեղափոխական շարժումը մոտեցնելու անհրաժեշտությունը ակնհայտ չեր II Ինտերնացիոնալի համար։

III Ինտերնացիոնալը լիովին գնահատելով դերը իմպերիալիզմի, վոր խափանում է արևելյան ժողովուրդների ընդհանուր ու տնտեսական զարգացումը, կարծում է, վոր գաղութային ժողովուրդների մղած կռիվն ընդդեմ ոտարերկրյա իմպերիալիզմի, պետք է վիթխարի չափերով նպաստե ամբողջ աշխարհի պրոլետարիատի ազատագրական շարժմանը։

Ահա թե ինչու դեռ ևս III Ինտերնացիոնալի II կոնգրեսը վորոշ դիրք բռնեց միջազգային հեղափոխության այս կարևորագույն խնդրի նկատմամբ։ Կոմինտերնի՝ ազգային ու գաղութային խնդիրների նկատմամբ վարած ամբողջ քաղաքականության անկյունաքար կազմում է բոլոր ժողովուրդների ու յերկրների պրոլետարիատի ու աշխատավորական մասսաների մերձեցումը՝ միասին հեղափոխական կռիվ մղելու համար հանուն հողատերերի ու բուրժուազիայի տապալման։

Այն պետությունների ու ազգերի նկատմամբ, վորոնք ավելի հետամնաց են և վորոնց մեջ գերակշռում են ֆեոդալական կամ նահապետական գյուղացիական հարաբերությունները, կոմկուսակցությունները պետք է այս յերկրների մեջ հեղափոխական ազատագրական շարժմանը գործոն կերպով ոժանդակողի դեր խաղան։ Ամենից ակտիվ ոգնություն ցույց տալու պարտականությունը նախ և առաջ ընկնում է այն յերկրի բանվորների վրա, վորից կախում ունի հետամնաց ժողովուրդը, գաղութային կամ ֆինանսական տեսակետից։ Առանձնապես անհրաժեշտ է նպաստել հետամնաց յերկրներում հատկապես գյուղացիական շարժմանը ընդդեմ ֆեոդալիզմի մնացորդների, վորտեղ հնարավոր է գյուղացիներին ու բոլոր շահագործվողներին միացնել ու համախմբել խորհուրդների մեջ և հենց սրանով իսկ իրականացնել ըստ կարելույն ավելի սերտ միություն արևմտյան յեվրոպական կոմմունիստական պրոլետարիատի ու արևելքի գաղութների ու ընդհանրապես հետամնաց յերկրների գյուղացիների հեղափոխական շարժման միջև։

Գաղութային յերկրներում հեղափոխության առաջին քայլը պիտի լինի ոտարերկրյա կապիտալիստական բռնության տապալումը։ Այս տեսակետից գաղութներում նկատելի են մի կողմից բուրժուական դեմոկրատական ազգայնական շարժում, վորը հետապնդում է քաղաքական անկախության ծրագիր՝ կապիտալիզմի գոյության պայմաններում, իսկ մյուս կողմից գյուղացիների ու բանվորների կռիվ՝ ամեն տեսակի շահագործումից ազատագրվելու նպատակով։ Կոմինտերնը պետք է կռվե այն ազդեցության դեմ, վոր անում է առաջին շարժումը յերկրորդի վրա, պետք է ստեղծե գյուղացիների ու բանվորների կոմմունիստական կազմակերպություններ, վորոնք կարողանային մասսաները տանել դեպի հեղափոխություն։ Սակայն, ընդ սմին, Կոմինտերնը պաշտպանում է մի շարք յերկրների ազգային բուրժուազիայի հետ բլոկ կազմելը (դաշն կնքելը), վորչափով վոր այս բուրժուազիան բանվորների հետ միասին կռվում է իմպերիալիզմի դեմ։

Կոմինտերնը կարծում է, վոր հետամնաց յերկրներում ժողովրդական մասսաները կարող են հաղորդակից լինել կոմմունիզմին վոչ միայն կապիտալիստական զարգացման ետապն անցնելով, այլ և զարգացնելով իրենց դասակարգային ինքնագիտակցությունը՝ առաջավոր յերկրների գիտակից պրոլետարիատի ղեկավարության ներքո, վոր արդեն առած կլինի իշխանությունը յուր ձեռքը։

Ազգայնությունների իրավահավասարության խնդրի նկատմամբ Կոմինտերնը կարծում է, վոր միայն խորհրդային հասարակարգը կարող է նրանց տալ իրապես այս իրավահավասարությունը՝ միացնելով սկզբում պրոլետարիատին, ապա և աշխատավորների ամբողջ մասսան՝ բուրժուազիայի դեմ մըղվող կռվում։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմը պահանջում է. 1) վոր մի յերկրի պրոլետարական կռվի շահերն ստորադասվեյին համաշխարհային մասշտաբով մղվող նույն այս կռվի շահերին. 2) վոր այն ազգը, վոր իրականացրել է հաղթանակը ընդդեմ բուրժուազիայի, ընդունակ և պատրաստ լինի ազգային զոհաբերություններ անելու՝ միջազգային կապիտալի տապալման սիրուն։

Կոմինտերնը ընդունում է, վոր ֆեդերացիան լոկ անցման մի ձև է դեպի զանազան ազգերի աշխատավորների լիակատար միությունը։ Սակայն այս անցման ձևը պրակտիկայում յերևան է հանել յուր ամբողջ նը-

պատակահարմարությունը թե այն հարաբերությունների ժամանակ, վոր ունեցել է ՌՍՖՍՀ-ն մյուս նախկին խորհրդային հանրապետությունների նկատմամբ, և թե ՌՍՖՍՀ ներսում այն ազգայնությունների նկատմամբ, վորոնք առաջ վոչ անկախ պետական գոյություն են ունեցել և վոչ էլ ինքնավարություն։

Յելնելով այս տեսակետից՝ Կոմինտերնի խնդիրն այն է, վոր ձգտի պետությունների ավելի ու ավելի սերտ միության՝ ի նկատի ունենալով առաջին, վոր առանց խորհրդային հանրապետությունների ամենասերտ միության անհնարին է պաշտպանել գոյություն ունեցող խորհրդային հանրապետությունները, վորոնք շրջապատված են ամբողջ աշխարհի և ռազմական տեսակետից, անհամեմատ ավելի հզոր, իմպերիալիստական պետություններով. յերկրորդ անհրաժեշտ է, վոր խորհրդային հանրապետությունները ամենասերտ կերպով տնտեսական միություն կազմեն, առանց վորի չի կարելի իրականացնել զարգացումը արտադրող ուժերի, վոր քայքայել է իմպերիալիզմը, այլ և ապահովել աշխատավորների բարօրությունը։

18. Ի՞ՆՉ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ՈՒՆԻ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Կոմինտերնը յելնում է այն համոզմունքից, վոր միայն քաղաքային արդյունաբերական պրոլետարիատը կարող է Կոմինտերնի ղեկավարությամբ ազատել գյուղի աշխատավորական մասսաները կապիտալիստների ու խոշոր կալվածատիրական հողատիրության ճնշումից։ Յեվ ահա այստեղ ծագում է ամենադժվար մի խնդիր—ի՞նչ քաղաքականություն պետք է հետևե Կոմկուսակցությունը, քաղաքային պրոլետարական մասսաների կուսակցությունը, վորպեսզի կապվի գյուղացիական մասսաների հետ և սրանց տանի յուր յետևից։

Այս հարցին Կոմինտերնը պատասխանում հետևյալ կերպով։ Բոլոր յերկիրներում գյուղի աշխատավորական մասսաները կազմված են հետևյալ խմբերից. **գյուղատնտեսական պրոլետարիատ** (վարձու բանվորներ), **կիսապրոլետարիատ** կամ թզուկային գյուղացիություն, վորը յուր ապրուստի միջոցները հայթայթում է մասամբ գյուղատնտեսության մեջ ու արդյունաբերա-կապիտալիստական ձեռնարկություններում վարձու աշխատելով և կամ բանելով յուր սեփական կամ վարձակալած հողի մի փոքրիկ կտորի վրա. **մանր գյուղացիություն**, վոր սեփականության կամ վարձակալության իրավունքով յուր ձեռքում ունի այնպիսի փոքրիկ հողամասեր, վորոնցով բավարարում է յուր ընտանիքի պահանջները՝ առանց վարձու աշխատանք կիրառելու. **միջակ գյուղացիություն**, մանր հողագործներ, վորոնք սեփականության կամ վարձակալության իրավունքով ունեն փոքրիկ հողամաս, վոր յուր չափերով այնուամենայնիվ հնարավորություն է տալիս թե յուր ընտանիքը պահելու և թե բարենպաստ տարիներում նույնիսկ ավելցուկներ կուտակելու և վերջիններս կապիտալի վերածելու. գյուղացիության այս մասը հաճախ դիմում է ուրիշի բանվորական ուժը վարձելուն. **խոշոր գյուղացիություն**—գյուղական տնտեսության մեջ կապիտալիստական ձեռնարկուներ, վորոնք իբրև ընդհանուր կանոն, կիրառում են վարձու աշխատանք։

Այս խմբերի նկատմամբ կոմկուսակցությունը տարբեր վերաբերմունք է ցուցահանում։ Առաջին յերեք խմբերը բոլոր յերկիրներում գյուղական բնակչության մեծամասնությունն են կազմում։ Գյուղատնտեսական պրոլետարիատի ու կիսապրոլետարիատի վերաբերմամբ կոմկուսակցությունը վարում է մի քաղաքականություն, վորի նպատակն է պրոլետարիատի դիկտատուրայի ու Խորհրդային իշխանության կողմը գրավել նրանց՝ դասակարգային անկախ կազմակերպություն ստեղծելու միջոցով։

Մանր, թզուկային գյուղացիության անպայման ոգուտ է պրոլետարիատի հաղթությունը՝ ուստի և սրան էլ պետք է գրավել կոմմունիստական կուսակցության կողմը։ Սակայն այս շերտի նկատմամբ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, վոր այս խավը տատանվում է վոչ մի բանով չսահմանափակված առևտրի ազատության, այլ և մասնավոր սեփականության իրավունքներն ոգտագործելու ազատության կողմը։ Այս պարագան պետք է հաշվի առնե կոմկուսակցությունը։ Սակայն այս տատանումները չեն կարող փոխել այն հիմնական դրությունը, վոր, ընդհանրապես ու ամբողջությամբ առած, այս թզուկային գյուղացիությունը կբռնե պրոլետարական հեղաշրջման կողմը։

Չորրորդ խմբի նկատմամբ հեղափոխական պրոլետարիատը չի կարող իրեն նպատակ դնել այս շերտն ամբողջովին յուր կողմը գրավելը։ Կոմկուսակցությունն այստեղ պետք է սահմանափակվի այս շերտը չեզոքացնելու նպատակով, այսինքն այնպես անի, վոր միջակ գյուղացիությունը ակտիվ ոժանդակություն ցույց չտա բուրժուազիային այն կռվի ընթացքում, վոր վերջինս մղում է պրոլետարիատի դեմ։ Զարգացած կապիտալիստական յերկիրներում այս շերտը ավելի շուտ բուրժուազիայի կողմը կբռնե, վորովհետև այս շերտի մեջ գերակշռում են սեփականատերերի շահերը։ Ահա թե ինչու կապիտալիստական պետությունների մեծամասնության մեջ խոսք չի կարող լինել այն մասին, վոր պրոլետարական իշխանությունն անմիջապես վերացնե աշխատավոր ու կիսաշխատավոր (միջակ) գյուղացիների հողի մասնավոր սեփականությունը։

Պրոլետարական իշխանությունը պետք է, առանց բացառության, անմիջապես ու անպայման բռնագրավման յենթարկե կալվածատերերի ու խոշոր հողատերերի հողերը միայն։

Խոշոր կալվածատերերի հողերն ոգտագործելու խնդրի նկատմամբ պետք է հետևել հետևյալ կանոններին. առաջավոր կապիտալիստական յերկիրներում անհրաժեշտ է գլխավորապես պահպանել խոշոր գյուղատնտեսական ձեռնարկությունները և վերջիններս վարել Ռուսաստանի խորհրդային տնտեսությունների տիպի համաձայն։ Մյուս կողմից՝ այն վայրերում, վորտեղ խոշոր գյուղական տնտեսությունները համեմատաբար չնչին դեր են կատարում և ընդհակառակը մեծ քանակությամբ մանր հողային սեփականատերեր կան, վորոնք ձգտում են հողը իրենց ձեռքում պահելու, խոշոր կալվածատերերի հողի բաժանությունն ամենից ապահով միջոցն է՝ գյու- գյուղացիություն հեղափոխության կողմը գրավելու։

Ինչ պայմաններում էլ վոր լինի, պրոլետարիատի առաջին ու հիմնական խնդիրն այն է, վոր բանվորության հաղթանակն ապահովե և այն հարատև դարձնի։ Հաջողության համար հեղափոխական պրոլետարիատը չպետք է կանգ առնե մինչև անգամ արտադրության ժամանակա-

վոր վայրեջքի առջև նույնիսկ։ Իսկ պրոլետարական կայուն իշխանություն չի կարող լինել՝ առանց միջակ գյուղացիությունը չեզոքացնելու և առանց մանր գյուղացիության յեթե վոչ ամբողջության, գոնե շատ մեծ մասի աջակցությունն ապահովելու։ Ուստի յեթե հողի բաժանությունը կարող է մանր գյուղացիության մեծ մասին բավարարել, պրոլետարական հեղափոխությունը պետք է համաձայնի ու դիմի այս միջոցին, հասկանալի յե, գյուղատնտեսական պրոլետարիատի շահերի պահպանության շրջանակներում։

19. ԻՆՉՈՎ ՀԱՅՏՆԻ ԴԱՐՁԱՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ, ՎՈՐ ԸՆԿԱԾ ԵՐ II ՈՒ III ԿՈՆԳՐԵՍՆԵՐԻ ՄԻՋԵՎ

1920—1921 թիվը (1920 թվի հուլիսից սկսած) վոր ընկած եր II և III կոնգրեսների միջև, նշանավոր յեղավ նրանով, վոր հեղափոխական պրոլետարիատը խոշոր ճակատամարտեր մղեց բուրժուազիայի դեմ, գրավեց ֆաբրիկաներն ու գործարանները 1920 թվի սեպտեմբերին Իտալիայում, բանվորությունը մասսայական, յերբեմն և զինված յելույթներ սարքեց 1920 թվի դեկտեմբերին Չեխոսլովակիայում, Գերմանիայում բանվորներն ապստամբեցին 1921 թվի մարտին և կարմիր բանակը Վարշավայի վրա արշավեց 1920 թվի ոգոստոսին։ Այս յելույթներն ավարտվեցին բանվոր դասակարգի ավելի կամ պակաս չափով լուրջ պարտություններով։

Այս յելույթներին զուգընթաց, վորոնցում յերիտասարդ կոմկուսակցությունները փորձում եյին իրենց ուժերը և ամրապնդում իրենց շարքերը, կոմունիստական կուսակցություններ ու կազմակերպություններ եյին գոյանում ու արագ աճում ամբողջ յերկրագնդի վրա։ Հենց վոր սկսվում է 1921 թվականը, բանվորական մասսաների տարերային մասսայական շարժումը զգալի կերպով սկսում է թուլանալ՝ կրելով միջազգային կապիտալի հարձակման ճնշումը, վոր փոխարկվում է բանվորների դեմ գործվող հարձակման՝ համարյա ամբողջ ճակատի վրա։ Բանվորական մասսաներն այս գրոհին պատասխանում են գործադուլներով, վորոնք կրում են պաշտպանողական բնույթ, սակայն այս գործադուլներն էլ մեծ մասամբ պարտվում են այն աջակցության շնորհիվ, վոր ընձեռնում են բուրժուազիային II ու Ամստերդամի Ինտերնացիոնալները։ Կապիտալիստները գործադուլներին պատասխանում են լոկաուտներով։ Տնտեսական ճգնաժամը խորանում է, գործազրկությունն՝ աճում։ Այն բանվորական հետամնաց մասսաները, վորոնք դեռ գտնում եյին II Ինտերնացիոնալի յետևից, կապիտալի գրոհի ծանրության ներքո հեղափոխականանում են, տոգորվում այն համոզմունքով, թե անհրաժեշտ է բուրժուազիային հակահարված տալ՝ բանվորական ընդհանուր ճակատի միջոցով։ Դեպի բուրժուազիան տածած ատելության զուգընթաց՝ աճում է զգուշությունն ու ուշիմությունը բանվոր դասակարգի ամենից առաջավոր ու հեղափոխական շերտերի, վորոնք նախընթաց ճակատամարտերում ձեռք եյին բերել այն գիտակցությունը, թե անհրաժեշտ է հիմնովին կանխապատրաստել բուրժուազիայի դեմ անելիք գրոհը։

Այսպիսով II ու III կոնգրեսի միջև ընկած տարին սրելով պրոլետարիատի ու բուրժուազիայի դասակարգային կռիվը՝ առաջավոր պրոլետարիատի ղեկավար կուսակցությանը—կոմունիստական կուսակցությանը մեծ չափով փորձառություն պարգևեց բանվոր դասակարգի գալիք յելույթները կազմակերպելու ու ղեկավարելու գործում։

20. ՎՈ՞ՐՆ Ե III ԿՈՆԳՐԵՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Այն մեկ տարվա ընթացքում, վոր անցավ II կոնգրեսից հետո, կոմունիստական շարժումը վիթխարի հաջողություններ եր ունեցել՝ տարածվելու տեսակետից։ Համարյա ամբողջ աշխարհը ծածկվել եր արդեն կոմունիստական կուսակցությունների ու կազմակերպությունների ցանցով։ Սակայն կոմունիստական շարժումը 1920—21 թվականների ժամանակամիջոցում չեր կարողացել համապատասխան վիթխարի հաջողություններ ունենալ՝ շարժումը խորացնելու, մասսաները կազմակերպչորեն տիրելու տեսակետից։ Կոմունիստական կուսակցությունների՝ պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող կռիվն սկսվել եր։ Այս կռվի մեջ պրոլետարական ավանգարդը (առաջապահը)—կոմկուսակցությունները յերևան բերեցին հեղափոխականություն, անձնազոհություն, հերոսություն, առանց վորոնց ընդհանրապես աներևակայելի յե բուն իսկ Կոմինտերնի գոյությունը, սակայն, ընդ սմին, այս կռվում մի շարք տակտիկական սխալներ կատարվեցին։

Կոմինտերնը մի շարք կոմկուսակցությունների մարտական մկրտության գործնական փորձը հաշվի առնելով իրեն նպատակ դրեց կոնկրետ կերպով վորոշել, թե այսուհետև տակտիկական ու կազմակերպչական տեսակետից ինչպես պիտի շարունակել աշխատանքը։ Հենց այս խնդիրն իրագործեց III կոնգրեսը, վորը հրապարակ հանեց «դեպի մասսաները» նշանաբանը։ 1918—20 թվականների ժամանակաշրջանում բանվորական մասսաները մեծապես լի եյին ինտուզիազմով, վոգևորությամբ և դեպի հեղափոխական վերելք եյին դիմում։ Սակայն նույն այս ժամանակաշրջանն աչքի եր ընկնում առանձին կոմունիստական կուսակցությունների կազմակերպչական թուլությամբ։ Այսպիսի պայմաններում բուրժուազիան միացած հին սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ու արհմիությունների հետ, վորոնց ղեկավարում եյին հին բյուրոկրատներ, կարողացավ անհաջողության մատնել բանվորական մասսաների տարերային շարժումը։

Այս անհաջողությունն ու շարժման վերագնահատությունը մի շարք դեռևս մատաղ կոմկուսակցությունների մեջ տակտիկական տատանումներ առաջ բերին, և III կոնգրեսին վիճակվեց մի խնդիր, վորով այս համագումարը փորձի ստուգման միջոցով պետք է մշակեր մի գիծ, էլ ավելի ուշադիր, ավելի լուրջ կերպով կանխապատրաստելու բանվորներին՝ նոր վճռական—ինչպես պաշտպանողական, այնպես և հեղափոխական—ճակատամարտերի համար։

Այս է III կոնգրեսի հիմնական ու գլխավոր նշանակությունը։

21. ԻՆՉՊԵՍ ԵՐ ԴՐՎԱԾ ՏԱԿՏԻԿԱՅԻ ԽՆԴԻՐԸ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ III ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

Հեղափոխական մարքսիզմը (կամ կոմունիզմը) յելնում է այն թեզիսից, թե հեղափոխության տակտիկան վորոշվում է քաղաքական ու տնտեսական կոնկրետ պայմաններով։ Հաղթության առաջին գրավականն, այն

թանձրացյալ պայմանների յուրաքանչյուր լուրջ փոփոխությունն ուղիղ հաշվի առնելու ընդունակությունն է, վորոնցում ստիպված է գործել պրոլետարական հեղափոխական (կոմմունիստական) կուսակցությունը։

Կոմինտերնը ուշադրությամբ հետևելով դեպքերին և ուսումնասիրելով միջազգային պայմանները, ստուգելով միջազգային հրապարակում գործող դասակարգային ու հանրային ուժերը՝ յեկավ այն յեզրակացության, վոր հեղափոխական շարժման տարերային աճման թափն առժամանակ դանդաղել է, վոր բանվորական շարժումն անցնում է մի այլ էտապ և վոր այս շարժման մեջ աճում է ձգտում՝ էլ ավելի ուշադիր կերպով շարժումը կանխապատրաստելու, խոշոր մասսաները կազմակերպչապես միացնելու համար։ Մյուս կողմից՝ Կոմինտերնը հաշվի առավ, վոր բուրժուազիան, II Ինտերնացիոնալի ու հին արհմիությունների աջակցությամբ, ուշքի յեկավ, թոթափելով նախկին շփոթվածությունը, վոր կապ ուներ զորացրման վիճակի հետ, և վոր նույն՝ այս բուրժուազիան վերակազմել է իր ուժերը և անցել մի գրոհի, վորի նպատակն է ամենից առաջ հաղթահարել կրիզիսը, ինչ կերպ էլ ուզում է լինի, և այս կրիզիսի ծանրությունը փոխադրել բանվոր դասակարգի ուսերը։

Այս կերպ գնահատելով միջազգային կացությունը և չկամենալով հնարավորություն տալ, վոր հաղթանակե բուրժուազիան վորը հզորանալով՝ Կոմինտերնին պրովակացիայի յեր յենթարկում վաղաժամ յելույթներ անել, վորպեսզի արյան մեջ խեղդե հեղափոխական շարժումը, – Կոմինտերնը անհրաժեշտ համարեց կոմմունիստական շարժման նպատակն անփոփոխ պահելով՝ կոմմունիստների տակտիկան հարմարեցնել նոր պայմաններին։ Այս աշխատանքը հաջողությամբ կատարեց III կոնգրեսը և հենց այս է նրա պատմական մեծ նշանակությունը։

22. ԻՆՉ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊԵՑ III ԿՈՆԳՐԵՍԸ

Դեռևս II կոնգրեսի ժամանակ, Կոմինտերնը դեմ առավ և կռիվ մղեց այսպես կոչված ձախ թեքման դեմ, ինչպես վոր այս թեքումն արտահայտվում էր ԳԿԲԿ-ի (Գերմանիայի կոմմունիստական բանվորական կուսակցության) մեջ, Ամերիկայի աշխարհի արդյունաբերական բանվորների, Անգլիայի ֆաբրիկա-գործարանային կոմիտեների և Ֆրանսիայի ու Իսպանիայի սինդիկալիստների մեջ։

Այս հոսանքները, վոր անկասկած հեղափոխական եյին, միանում եյին մի կետում նրանով, վոր բացասաբար եյին վերաբերվում բանվոր դասակարգի կռվի բոլոր լեգալ յեղանակներն օգտագործելուն։ Նրանք պնդում եյին, վոր կոմմունիստներն ու ընդհանուր հեղափոխական տարրերը չպետք է մասնակցեյին արհմիություններին, դեմ եյին պարլամենտարիզմը հեղափոխական տեսակետից օգտագործելուն և ընդհանրապես հակառակ եյին ուժեր կուտակելու ամեն տեսակի մանրակրկիտ, առօրյա սակայն շատ կարևոր աշխատանքին։

II ու III կոնգրեսների միջև ընկած ժամանակամիջոցներում այս ուղղությունը, վորին դատապարտել էր նույն ինքն կյանքը, նշանավոր չափով կորցրեց իր ազդեցությունը, սակայն, սրա փոխարեն սկսեց ձևավորվել մի ուղղություն, վոր հրապարակ էր մղում «ոֆֆենզիվայի» հատուկ

թեորիան (ոֆֆենզիվա նշանակում է գրոհ, հարձակում)։ Այս ուղղությունը կարծում էր, վոր հեղափոխական փոքրամասնության դերը հեղափոխության վճռական գործոնն է, անկախ այն բանից, թե արդյոք այս փոքրամասնությունը կապված է բանվորական մասսաների հետ, արդյոք այս մասսաները կանխապատրաստված են հեղափոխության համար, արդյոք ապահովված է հեղափոխական փոքրամասնության համար հետամնաց աշխատավորական մասսաների օժանդակությունը կամ թեկուզ չեզոքությունը (համակրող անգործունեություն) նրանց նկատմամբ, թե վոչ։ Այս թեորիան յելնում է այն թեզիսից թե մենք արդեն վոտք ենք դրել մասսաների անընդհատ հարձակման դարաշրջանը (այս թեզիսը չէ հիմնված ուժերի փոխհարաբերության ու սոցիալ-տնտեսական իրականության փաստերի հաշվառքի վրա)։ Ուստի և այս թեորիան կարծում է, վոր այսպիսի մի ժամանակաշրջանում միշտ հնարավոր է ապստամբության համարձակ փորձով վերջ դնել մասսաների կրավորականությանը, հաղթահարել բոլոր արգելքները և զինված գոտեմարտի մեջ հաղթել կապիտալին։ Այս թեորիան յելնում է այն համոզմունքից թե գլխավոր խնդիրն այն է, վոր յերկրում լինի խորը համոզված ու անձնազոհ հեղափոխականների մի այսպիսի նախաձեռնող, մարտական թեկուզ և աննշան խմբակ, իսկ մնացածը ինքն իրեն գլուխ կգա։

III Կոնգրեսը պետք է այս թեորիայի ու այս թեորիան պաշտպանող ներկայացուցիչների դեմ վճռական կռիվ մղեր, վորովհետև կարծում էր, վոր այնքան էլ դժվար չէ կապիտալիստական յերկրների մեծամասնության մեջ հեղափոխական շարժում առաջ բերել, քանի վոր այնտեղ բորբոքվող նյութեր շատ կան կուտակված, սակայն այս բռնկումներն առանց լայն մասսաների օժանդակության, դատապարտված են բանվոր դասակարգի անմիջական խնդիրների տեսակետից անպտուղ մնալու վիճակին։ Ահա թե ինչու III կոնգրեսը պահանջում էր, վոր բոլոր ջանքերը կենտրոնացվեն այն բանի վրա, վորպեսզի կոմմունիստական կուսակցությունը ազդեցություն ձեռք բերե բանվոր դասակարգի մեծամասնության վրա, և այս նպատակով էլ կոնգրեսն առաջ էր մղում յերկարատև ու համառ ամենօրյա աշխատանքի անհրաժեշտությունը։

Իհարկե Կոմինտերնը յելնում է այն թեզիսից, վոր հեղափոխության խնդիրները դեռ չեն լուծված, սակայն հեղափոխությունն անխուսափելի յե։ Իհարկե մեծամասնությունը նվաճելու մասին խոսելիս Կոմինտերնը ինկատի չունի, թե այս մեծամասնությունը պարտադիր կերպով պետք է մտնի կոմմունիստական կուսակցության մեջ։ Կոմինտերնը ինկատի ունենալով հեղափոխության հենց այս անխուսափելիությունը, անհրաժեշտ է համարում այս հեղափոխությունը կանխապատրաստելու վորքան կարելի յե ուշադիր կերպով՝ յուր կողմն ունենալով բանվոր դասակարգի մեծամասնությունը։ Իսկ այս հնարավոր է այն դեպքում միայն, յեթե միջազգային մասշտաբով հաշվի առնվեն բոլոր բարենպաստ ու աննպաստ գործոնները և այս գործոնների ուսումնասիրության վրա կառուցվի ու կատարելագործվի կռվի տակտիկան։

23. Ի՞ՆՉՊԵՍ Է ԳՆԱՀԱՏՈՒՄ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ, ՎՈՐԸ ՊԱՀՊԱՆԵՑ ՅՈՒՐ ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՈՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՑԵԼՈՒՅԹՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Բուրժուազիայի պետական ապարատը, վոր ամենասաստիկ ցնցումներ եր ունեցել 1919-20 թվի ժամանակաշրջանում, 1921 թվին արդեն մի փոքր հավասարակշռված դրություն եր ընդունել, վոր արտահայտվում եր մի կողմից նրանով, վոր թուլացել եր պրոլետարիատի ճնշումը բուրժուազիայի վրա, ու մյուս կողմից նրանով, վոր սաստկացել եյին բուրժուազիայի հարձակողական գործողությունները պրոլետարիատի դեմ։ Այս վիճակը դրդեց, վոր Կոմինտերնը բացահայտ կերպով դնե յուր հանդեպ ու միջազգային պրոլետարիատի հանդեպ այն խնդիրը, թե ինչ է ցույց տալիս այս վերահաս սոցիալական հավասարակշռությունը։ Հիմք կա՞ արդյոք յենթադրելու, վոր այս վերահաս հավասարակշռությունը ցույց է տալիս, թե արդեն չեկել է կապիտալիստական արտադրողական ուժերի վերականգնման ու աճման յերկարատև ժամանակաշրջանը։ Արդյոք այս թեզիսից չի՞ բխում Կոմունիստական Ինտերնացիոնալի ծրագիրն ու տակտիկան վերաքննելու անհրաժեշտությունը։

Դեռ III կոնգրեսից առաջ Կոմինտերնի Գործկոմը հատկապես զբաղվեց այս խնդիրների ուսումնասիրությամբ։ III Կոնգրեսը, վոր ներկայացուցիչներ եր ժողովել համարյա ամբողջ աշխարհից, այս խնդիրը դարձրեց յուր աշխատանքների կենտրոնական կետը։

24. Ի՞ՆՉ ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՅԵԿԱՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԿՈՆԳՐԵՍԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Կոնգրեսը հանգեց հետևյալ թեզիսներին. —1) 1919-20 թվի առևտրաարդյունաբերական վերելքը, յուր հիմքով, վոչ թե կապիտալիստական տնտեսության վերածնության սկիզբն է համաշխարհային պատերազմից հետո, այլ շարունակությունն է արդյունաբերության ու առևտրի այն արհեստական (հետևաբար և աննորմալ) կացության, վոր ստեղծել եր պատերազմը։

Պատերազմը ժառանգություն է թողել չծախված արդյունքների վիթխարի պաշարներ։ Կապալառուների ու սպեկուլյանտների ձեռքում կենտրոնացած վիթխարի դրամական գումարները զորակոչի եյին յենթարկված, մեծագույն վաստակներ կորզելու նպատակով։ Սրանից առաջ եր գալիս առևտրի տենդագին վերելքը, վորի գոյության միջոցին սակայն, արդյունաբերությունն իր հիմնական ճյուղերից և վոչ մեկի մեջ Յեվրոպայում չեր մոտենում մինչպատերազմյան մակարդակին։

2) 1920 թվականի յերկրորդ կեսին սկսված ֆինանսական, ապա և առևտրային ու արդյունաբերական կրիզիսները վոչ թե սովորական պարբերական կրիզիսների հերթական ետապ են, այլ վկայում են կապիտալիզմի քայքայման ավելի խորը պրոցեսի մասին։ Յեվրոպան շարունակում է տնտեսապես ընկնել և յեվրոպական տնտեսության հիմքերի քայքայումը դեռ

նոր պետք է յերևան գա՝ մոտակա տարիներում։ Միջազգային տնտեսության ընդհանուր կացությունը կանխորոշում է ամենածանր տնտեսական դժվարությունների ու ցնցումների, ընդհանուր ու մասնակի կրիզիսների մի յերկարատև ժամանակաշրջան։

3) Բոլոր ապրանքների գների բարձրանալուն զուգընթաց, բոլոր յեվրոպական պատերազմող յերկիրների վալյուտայի սաստիկ անկմանը զուգընթաց՝ ազգային հարստության վերաբաշխում (перераспределение) *է կատարվել, ի վնաս բանվոր դասակարգի, չինովնիկների, մանր ծառայողների և այլն, — մի հանգամանք, վոր առաջ է բերում պրոլետարացում ու աղքատացում, վորոնք սրում են դասակարգային կռիվը։*

4) Վերջին պատերազմը, իր սկզբնապատճառներով ու իր գլխավոր մասնակիցներով, յեվրոպական պատերազմ եր։ Կռվի առանցքն Անգլիայի ու Գերմանիայի տնտեսական մրցությունն եր։ Պատերազմը, վոր վերջ տվեց Գերմանիայի ու Անգլիայի դատական վեճին, վոչ միայն չլուծեց, այլ և իր ամբողջ ծավալով դրեց ամբողջ աշխարհին հետագայում տնտեսապես տիրելու խնդիրը, վոր վերջ ի վերջո դառնում է Միացյալ Նահանգների ու Անգլիայի (այլ և Միացյալ Նահանգների ու Յապոնիայի) փոխհարաբերությունների խնդիր։ Այսպիսով վերջին պատերազմը մի յեվրոպական հառաջաբան եր լոկ, վորին հաջորդելու յե իրապես համաշխարհային պատերազմը — իմպերիալիստական միահեծանության համար մղվող պատերազմը։

5) Յեվրոպայի տնտեսության վերականգնման խնդիրը կապ ունի արտադրական ապարատը վերականգնելու հետ, վոր սաստիկ քայքայել է պատերազմը, կապիտալի վերականգնման հետ, իսկ այս վերջինս կապ ունի աշխատավորների աշխատանքի լարվածությունը բարձրացնելու հետ՝ աշխատավարձը ցածացնելու և աշխատանքի պայմանները վատացնելու միջոցով։ Յեվրոպական պրոլետարիատը, ինչպես ցույց են տալիս բոլոր տվյալները, այսպիսի զոհաբերությունների չի համաձայնել շատ կամ քիչ յերկարատև ժամանակաշրջանում, այլ կը պահանջե, վոր իր կենսական մակարդակը բարձրանա։ Այս բանից պետք է սպասել անվերջ գործադուլներ ու հուզումներ, վորոնք տանում են դեպի մի վիճակ, յերբ անհնարին է Յեվրոպայի տնտեսական վերածնությունը։

6) Պատերազմը անմիջապես չավարտվեց արևմտյան Յեվրոպայում կատարվելիք պրոլետարական հեղափոխությամբ։ Առաջին հզոր ճակատամարտերից հետո, 1921 թվի մարտը նկատվեց, վոր իշխանության համար մղվող բացահայտ հեղափոխական կռիվը դանդաղում է, սակայն մնում է անվիճելի, վոր վերոհիշյալ պայմաններում կապիտալիստները (չնայած ժամանակավոր հնարավոր վերելքներին) ընդհանրապես գնում են դեպի վայրեջք, իսկ հեղափոխությունը (չնայած ժամանակավոր պարտություններին) ընդհանրապես դիմում են դեպի վերելք[1]։

25. Ի՞ՆՉ ՏԱԿՏԻԿԱ ԸՆԴՈՒՆԵՑ III ԿՈՆԳՐԵՍԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՎՐԱ ՀԻՄՆՎԵԼՈՎ

III կոնգրեսը չփոխելով Կոմինտերնի տակտիկան, ըստ եյության միայն ավելի ճիշտ ու կոնկրետ վորոշեց կոմկուսակցության տակտիկական խնդիրները. այն է՝ կապիտալիզմի դեմ մղվող անմիջական վճռական ճա-

1) Այս մասին մանրամասն տես գլ. IV «պատերազմն ու կապիտալիզմի ճակատագիրը»։

կատամարակեկց գեպի այս ճակատամարտերի ուշադիր կանխապատրաստման անհրաժեշտ։

Կոմունիստական կուսակցության անելիքն է՝ բացատրել աշխատավորությանը մասսաներին բանվոր դասակարգի մենատիրության դերի և նրա ամենից առաջ մասսաների միասնական կամքի կոչել։ «Դեպի մասսաները»,— ահա III կոնգրեսի առաջ դրված խնդիրները։ Պետք է ձգտել ունենալ փոքր թե կոմունիստական հեղինակներ, որոնք ազդում են բանվորական մասսաների վրա միայն ագիտացիայով ու պրոպագանդայով, այլ պետք է ամրապնդել մասնակցությունն ունենալ բանվորական մասսաների կյանքի մեջ և այս կերպ կոմունիստական ղեկավարել և կյանքի պրոցեսի ընթացքում առաջնորդել խոշոր հեղափոխական կոմունիստական մասսայական կուսակցությունները։

Կոմունիստական կուսակցությունները պետք է մասսաներին ցույց տան հեղափոխության, պրոլետարիատի դիկտատուրայի ճանապարհը։ Սակայն, ընդ որին, կոմունիստական կուսակցությունները չպետք է հրաժարվեն այն կռվից ընթացիկ, որը պրոլետարիատը մղում է իր ամենօրյա անհետաձգելի քննական պահանջների համար, քանի դեռ իշխանությունը չի նվաճել։

Հայն մասսաների՝ իրենց վիճակի բարելավման համար մղված կռվին մասնակցելով դեպի ընդհանուր կոմունիստները պետք է առաջ մղեն այնպիսի ագիտացիա ու պրոպագանդա, որ ամրապնդի մասսաների գիտակցությունը մեջ այն համոզումը, թե կապիտալիզմի ժամանակ անհնարին է բանվորների գործնական մակարդակի վրաեւ յերկարատև բարձրացում։

Այս կռվի ընթացքում, կոմունիստները հանդես չեն բերում մենթաւոր ծրագիր, վորոնց համեմատ, ինչպես յենթադրում են անարխիստները, կարող է պրոլետարիատի վիճակը նշանավոր չափով բարելավել կապիտալիզմի շրջանակներում և հետևաբար ամրապնդել կապիտալիզմի տատանվող շենքը։ Կոմունիստների խնդիր միում է կապիտալիզմի այս շենքի խորտակումը, ուստի վորպեսզի կարողանան այս խնդիրն իրագործել, կոմունիստական կուսակցությունները պետք է պաշտպանեն այնպիսի պահանջներ, վորոնք բավարարում են բանվոր դասակարգի անհետաձգելի կարիքները և պետք է ավարտեն, թե ինչպես պետք է այս պահանջներին հասնել կռվի միջոցով։ Կոմունիստները պետք է հանձն առնեն գործադուլների բանակների ղեկավարությունը՝ իրենց հաշիվ տալով այն մասին, վոր ընկնող կապիտալիզմի պայմաններում գործադուլների բանակը միլիոնավոր նշանակություն ունեցող հեղափոխական ուժ է։ Գործադուլներին միացնելով պրոլետարիատի առաջավոր զորամասի հետ այն կռվի մեջ, վոր մղվում է սոցիալիստական հեղաշրջման նպատակով, հետ պահելով գործադուլներից ամենից հեղափոխական, բայց անհամբեր տարրերը հուսահատության առանձին արտահայտություններից, կոմունիստական կուսակցություններն ապահովում են պրոլետարական պաստմրության համար վճռական բողկում հրակա ռմանդակությունը։

Չհրաժարվելով պաշտպանողական կռվից, վոր չափով վոր այս թելադրում է կացության գնահատությունը, կոմունիստական կուսակցությունները պարտական են ամեն մի պաշտպանողական կռիվ, վոր աճում է լայնքով ու խորությամբ, դարձնելու կապիտալիստական հասարակության դեմ ուղղված գրոհ։ Նրանք պարտական են ամեն բան անելու, վորպեսզի բան-

վորական մասսաները մղեն այս հարձակման ամենուրեք, վորտեղ այդ բոլոր հանդիսանալու պայմաններ կան։

Կոչ անելով վոր բուրժուազիան անցնում է հարձակման պրոլետարիատի վրա և գնում է ավտորիտետին, այսինքն պետական կոմունիստական կազմակերպություններին (Իտալիայում կազմակերպությունը Գերմանիայում, փաշիստներն Իտալիայում, ամեն տեսակի կամավորական խմբերը Անգլիայում, Ֆրանսիայում և այլն), վորպեսզի պրոլետարիատի առաջավոր տարրերի չափերից արյունահատությունը առաջ բերի, այնպես կոմունիստները հենվելով արդյունաբերական ձեռնարկությունների բանվորների ամենալայն ու ակտիվ տարրերի վրա՝ պետք է սահմանեն սեփական մարտական կազմակերպություններ ու բանվորական զորամասեր, վորոնք կարող լինեին գիմադրություն ցույց տալ այս սեփական զինվորական կազմակերպություններին։

Պրոլետարիատը չպետք է հրաժարվի սպառազինության ու իշխանության համար մղվող կռվում գնեք կիրառելուց։ Նա չպետք է թույլ տա, վոր հակառակորդն իրեն խաբի զենքաբաժանության կոչով։ Սակայն այն ժամանակ, յերբ պրոլետարիատը դեռ նոր է միայն կռվի պատրաստվում, յերբ ինքնին այն է, վոր ավանգարդային, քաղաքական պայքարների, գործադուլների միջոցով զորակոչի յենթարկվի պրոլետարիատը, գենքից օգտվելու սարսափելի ակտերն իմաստ ունեն այն ժամանակ միայն, յերբ նրանք պետք է խանգարեն այն զորքերի տեղափոխությունը, վորոնք պետք է կռվեն պրոլետարական մասսաների դեմ, կամ այն ժամանակ, յերբ պետք է անմիջական կռվի մեջ թշնամուն գրկել շատ կարևոր դիրքերից։ Ինչ վերաբերում է առանձին տեռորիստական գործողություններին, ապա վորքան էլ կարելի լինի նրանք արդարացնել իբրև բողոք բուրժուական գաղանությունների դեմ, հիշյալ ակտերը վոչ մի դեպքում ընդունակ չեն ավելացնելու պրոլետարիատի կազմակերպված լինելն ու ռազմունակությունը։

Գյուղացիների նկատմամբ, քաղաքային մանր բուրժուազիայի նշանավոր մասի, ինչպես և այսպես կոչված միջին դասի, ծառայողների լայն շերտերի նկատմամբ, վորոնք գոյության ծանր պայմանների ճնշման ներքո հեղափոխականանում են, կոմունիստական կուսակցությունը պետք է նըրանց՝ պրոլետարիատի կողմը գրավելու գիրք բռնի՝ հետևելով այս միջոցառումների՝ մղվում տեղի ունեցող խմորմանը և այս խմորումը հաջողությամբ օգտագործելով։ Այս շերտերի շահերն իր պաշտպանության տակ առնելով՝ կոմունիստական կուսակցությունը բուրժուական-պետական հիմնարկությունները խորտակելու և պրոլետարական պետական շինարարության տարրերը կանխապատրաստելու շատ կարևոր նախնական աշխատանք է կատարում։

26. ԻՆՉ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՐԺԵՔԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՏԱԿՏԻԿԱՆ, ՎՈՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԷՐ III ԿՈՆԳՐԵՍԸ

Կոմինտերնի տակտիկական խնդիրները, վոր III կոնգրեսը համառոտ ձևակերպել եր «դեպի մասսաները» նշանաբանով, իրենց գործնական արտահայտությունն ունեցան համեմատական պրոլետարական ֆրոնտի պահանջի։

27. ՄԻԱՍՆԱԿԱ՛Ն ԲԱՆՎՈՐԱԿԱ՛Ն ՖՐՈ՛ՆՏԻ ՆՇԱՆԱԲԱՆԸ ՑԵ՞ՐԲ ԴԱՐՁԱՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԴԵԿԱՎԱՐ ԳԻԾ

Միասնական բանվորական ֆրոնտի լոզունգը մի շարք յերկրներում բանվորական մասսաների մեջ ժողովրդական դարձավ այն պարտություններից հետո, վոր կրեցին պրոլետարիատի առաջավոր զորամասերը՝ կապիտալիզմի դեմ մղած կռվում։ Ընդառաջ գնալով, բանվորական մասսաների մեջ հասունացած այն պահանջին, վոր նպատակ ուներ բուրժուազիայի՝ պրոլետարիատի հեղափոխական յելույթների դեմ վարած կռվում ցուցաբերած միասնական ֆրոնտին բանվորների միասնական ֆրոնտը հակադրելու՝ Կոմինտերնը վորոշեց պայքար սկսել համաշխարհային մասշտաբով միասնական բանվորական ֆրոնտ կազմելու համար։ Այս վորոշումը հաստատեց Կոմինտերնի Գործկոմի ընդլայնված պլենումը, 1922 թվի մարտի 4-ին։

28. Ի՞ՆՉ Է ՄԻԱՍՆԱԿԱ՛Ն ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՖՐՈ՛ՆՏԻ ԼՈԶՈՒՆԳԸ

Միասնական բանվորական ֆրոնտի լոզունգն այն է, վոր բանվորական լայն մասսաների (վոչ միայն II Ինտերնացիոնալին, վոր այժմ միացած է 2½ Ինտերնացիոնալի հետ, այլ և անարխիստական, սինդիկալիստական, քրիստոնեյական-սոցիալիստական կազմակերպություններին հարող կամ անկուսակցական մասսաների) անմիջական կարիքների բավարարման պահանջներին նպաստելով՝ կազմակերպե հիշյալ մասսաները կապիտալիզմի ու կապիտալիստների դեմ կռվելու համար, հանուն մոտակա ամենորյա պահանջի, հանուն մի կտոր հացի, կազմակերպե կռվելու համար աշխատավարձը կրճատելու դեմ, ութժամյա բանվորական օրը վերացնելու դեմ և այլն։ Այս կռիվը պետք է կազմակերպե և միացնե բանվորական մասսաները, իսկ հետո այս միավորության ու հարաճուն ակտիվության վրա հենվելով՝ բարձրացնե նրանց՝ մինչև դիկտատուրայի համար մղվող կռվի աստիճանը։

29. ԱՌԱՋԻ՛Ն ԱՆԳԱՄ ՎՈ՞ՐՏԵՂ ՀՐԱՊԱՐԱԿ ՄՂՎԵՑ ՅԵՎ ԿԻՐԱՌՎԵՑ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱ՛Ն ՖՐՈ՛ՆՏԻ ԼՈԶՈՒՆԳԸ

Միասնական բանվորական ֆրոնտ ստեղծելու գաղափարն առաջին անգամ հրապարակ հանվեց Գերմանիայում, սրա կոմունիստական կուսակցության ձեռքով։ 1921 թվականին Գերմանիայի կոմկուսակցությունը մի բաց նամակ հրատարակեց այս խնդրի համար և առաջարկեց սոցիալ-դեմոկրատներին, անկախներին ու արհմիությունների ներկայացուցիչներին մի կոնկրետ ծրագիր, այսինքն ընդհանուր կռիվ հանուն գերման բանվոր դասակարգի մերձավոր ու կենսական կարիքների։ Սակայն դրանից էլ առաջ, նախքան միացյալ գերման կուսակցության այս ճանապարհի վրա վոտք դնելը, միասնական բանվորական ֆրոնտի լոզունգը գործնականում կիրառում եյին կուսակցության մի շարք գավառական կազմակերպություններ՝ միացնելով բոլոր բանվորներին խոշորագույն գործադուլների ժամանակ։

Գերմանիայից հետո միասնական ֆրոնտ ստեղծելու փորձեր կատարվեցին մի շարք ուրիշ յեվրոպական յերկրներում էլ, ինչպես վոր այս խըն-

դրի համաշխարհային մասշտաբով լուծումը նախապատրաստված և ստուգված եր մի շարք յերկրների փորձով։

30. Ի՞ՆՉՈՒ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ԻՐ ԳՈՅՈՒԹՅԱ՛Ն ԱՌԱՋԻ՛Ն ՅԵՐԿՈՒ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ ՉՈՒՆԵՐ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖՐՈ՛ՆՏԻ ԼՈԶՈՒՆԳԸ

Կոմունիստները բանվոր դասակարգի միության սկզբունքային հակառակորդները չեն, ինչպես այս մասին աղաղակում են բուրժուական ու սրա սոցիալ-դեմոկրատ դամբաշները (ПОДГОЛОСОК)։ Կոմունիստներն իրենց նպատակ դնելով կապիտալիստների տապալման համար մղվող անմիջական կռիվը՝ ճիշտ ու բարձր են գնահատում մասսաների միաձուլությունն ու միությունն իբրև հաղթության ամենից ապահով յերաշխիք։

Բանվորական կազմակերպությունների պառակտումը յերբեք կոմունիստների նպատակը չէ, այլ միայն միջոց այն պատմական խնդիրներն իրագործելու համար, վորոնք դրված են պրոլետարիատի ու սրա ավանգարդի—կոմունիստական կուսակցության ուսերին։

Յերբ իմպերիալիստական պատերազմի սկզբից II Ինտերնացիոնալի կուսակցությունները դավաճանություն գործեցին բանվոր դասակարգի նկատմամբ՝ խաղաղություն հաստատելով բուրժուազիայի հետ, և յերբ պատերազմի վերջանալուց հետո նույն կուսակցությունները փոխադարձ ամնիստիայի (ներումն) կեղծավոր գաղափարը հրապարակ հանելով՝ դիտավորություն ունեյին նորից տիրանալու բանվորական մասսային, վորպեսզի սրան բուրժուազիայի արբանյակն ու խաղալիք դարձնեն՝ ամեն կերպ արգելք լինելով հեղափոխական փոքրամասնությանը՝ իր հայացքները բանվոր դասակարգի առաջ պարզաբանելու խնդրում, այն ժամանակ այս փոքրամասնությանը վոչինչ չեր մնում, բայց յեթե կազմակերպչապես անջատվել այս դավաճան սոցիալ-դեմոկրատական կուսակցություններից և բարձրացնել ըմբոստության դրոշակն ինչպես ընդդեմ բուրժուազիայի, այնպես և ընդդեմ II Ինտերնացիոնալի փտած պարագլուխների։

Անհրաժեշտ եր ստեղծել մարտական էներգիայի մի նոր հենակետ՝ բանվոր դասակարգի լավագույն, ամենից առաջավոր ու հեղափոխական մասի համար, այսինքն այս մասը համախմբել կոմունիստական կուսակցության մեջ։ Ահա թե ինչու առաջին յերկու տարիների ընթացքում խոսք չեր կարող լինել միասնական բանվորական ֆրոնտի մասին, այսինքն այն մասին, վոր գործնական աշխատանքի մեջ կոմունիստները միանան II Ինտերնացիոնալի հետ։

Յերբ կոմունիստները պառակտվում և բաժանվում եյին II Ինտերնացիոնալի կուսակցություններից, վորոնք բոլորովին կորցրել եյին հեղափոխաբար մտածելու և գործելու ընդունակությունը, յերբ կոմունիստները հրաժարվում եյին նրանց հետ վորևե աշխատանք միատեղ կատարելուց, այս չեր նշանակում, սակայն, վոր III Ինտերնացիոնալի կոմունիստական կուսակցություններն ամբողջովին չեն պաշտպանել բանվորական մասսաների՝ միասնական գործողությունների պահանջը։ Յեվ իրոք, հենց վոր միասնական բանվորական ֆրոնտը պարագլուխների խաբեբայական ու դավաճանական լոզունգից դարձավ լոզունգ հենց իրենց մասսաների, վորոնք ձգտում եյին բուրժուազիայի ուժին իրենց բանվորական համախմբված

ումը հակադրելու— Կոմինտերնը իր վրա նախաձեռնություն վերցրեց իրականացնելու այս գործուն (действенный) միությունը, կռվի հիմունքով, և վոչ թե բանվորական շարժումը բուրժուազիային ու II Ինտերնացիոնալի ռեֆորմիստական նպատակներին յենթարկելու հիմունքով։

31. Ի՞ՆՉԻ ՅԵ ՁԳՏՈՒՄ ՀԱՍՆԵԼ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ, ՅԵՐԲ ՀՐԱՊԱՐԱԿ Ե ՀԱՆՈՒՄ ՅԵՎ ԱՆՑ Ե ԿԱՑՆՈՒՄ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՖՐՈՆՏԻ ԼՈԶՈՒՆԳԸ

Կոմինտերնի III կոնգրեսը տակտիկայի մասին մշակած թեզիսների մեջ այսպես ե պատասխանում այս հարցին. «Այնտեղ, վորտեղ բանվորական մասսայի դրությունը հետզհետե ավելի ու ավելի անտանելի յե դառնում, կոմմունիստական կուսակցությունները պետք ե փորձեն ամեն ինչ, վորպեսզի բանվորական մասսաները մղեն դեպի կռիվ՝ հանուն բանվորների շահերի։ Ի նկատի ունենալով, վոր արևմտյան Յեվրոպայում ու Ամերիկայում, վորտեղ բանվորական մասսաները կազմակերպված են արհմիությունների ու քաղաքական կուսակցությունների մեջ և վորտեղ այս պատճառով շատ հազվագյուտ դեպքերում միայն կարելի յե անմիջաբար հույս դնել տարերայնորեն ծագող շարժման վրա,—կոմմունիստական կուսակցությունները պարտական են սկսելու միատեղ կռիվ՝ հանուն պրոլետարիատի մոտակայն շահերի նրանով, վոր պետք ե ամրապնդեն իրենց ազդեցությունն արհմիությունների մեջ և ուժեղացնեն ճնշումն այն մյուս կուսակցությունների վրա, վորոնք հենվում են պրոլետարիատի վրա։ Ընդ սմին, այն դեպքում, յերբ այս կռվի մեջ կը քարշվեն ու կը մտնեն վոչ կոմմունիստական կուսակցությունները, կոմմունիստների խնդիրն այն ե լինելու, վոր առաջուց կանխապատրաստեն բանվորական մասսաներն այն բանին, վոր կռվի ամեն մի րոպեյում վոչ կոմմունիստական կուսակցությունների կողմից հնարավոր ե դավաճանություն։ Կոմմունիստները պետք ե, ըստ կարելույն, սրեն կացությունը և մասսաները հրեն կռվի՝ գործն այնտեղ հասցնելով, վոր անհրաժեշտության դեպքում պատրաստ լինեն ինքնուրույն կերպով շարունակելու կռիվը»։

Միասնական ֆրոնտի տակտիկան, վոր անց են կացնում կյանքի մեջ, նույպես այն պատասխանն ե, վոր պետք ե տա պրոլետարիատը կապիտալիստական կատաղի շահագործմանը։ Այս պատասխանն անհրաժեշտ ե, յեթե բանվորությունը չի կամենում, վոր իրեն տրորե արշավը կապիտալի, վորը նախազգալով յուր կործանումը, կատաղի նախճիրներ ե գործում ամբողջ աշխարհում։

Միասնական ֆրոնտի տակտիկան բանվոր դասակարգի ղեկավար կուսակցությունների ձեռքում չափազանց ճկուն գործիք պետք ե լինի։ Այս տակտիկան չի կարող միանական լինել ամեն րոպե ու ամեն պայմաններում։ Այս գործում հաջողություն ունենալու համար կոմմունիստական կուսակցություններն անհրաժեշտորեն պետք ե առավելագույն չափերով ճկուն գործադրեն այն, լիովին ու ճիշտ հաշվի առնեն կոնկրետ պայմաններն ու բոլոր նկատելի տեղաշարժերը (СДВИГ), ինչպես լայն մասսաների, այնպես և բուրժուազիայի ու սրա այն արբանյակների միջև, վորոնք պատկանում են II Ինտերնացիոնալի համաձայնողական-սոցիալիստական կուսակցություններին։

Վոր չափով վոր կապիտալի հարձակումը վոչ թե բանվոր դասակարգի հարձակողական ույժի ժամանակավոր թուլության հետևանք ե միայն, այլ միջազգային բուրժուազիայի լայն մտածված մի ծրագիր, վոր ի նկատի յե առնված յերկարատև ժամանակաշրջանի համար, այն չափով ել միասնական ֆրոնտի գաղափարը պատկերանում ե բանվոր դասակարգին իբրև մի գաղափար, վոր հավաքելու յե բանվոր դասակարգի ույժերը՝ կռվելու համար քայքայվող կապիտալիզմի դեմ, վորը բանվորության տանջանքներ ե պատճառում։

Յեվ ույժերը հավաքելու այս խնդիրը յուր կոնկրետ բովանդակությամբ փոփոխվում ե, նայած այս ճանապարհին ունեցած հաջողություններին կամ պարտություններին։ Յեթե սկզբում, III ու IV կոնգրեսների արանքում ընկած ժամանակամիջոցում, միասնական ճակատի տակտիկական նպատակն եր սքողել, ապահովել պրոլետարիատի ընդհանրական նահանջը, ապա IV կոնգրեսից հետո, այս տակտիկան պետք ե արդեն ապահովե պրոլետարիատին նոր հարձակման կանխապատրաստելը։

Չի կարելի ժխտել, վոր ռեակցիան—թե տնտեսական և թե քաղաքական—սաստկանում ե ամենուրեք։ Բանվոր դասակարգի կռիվը դժվարացել ե։ Սակայն միևնույն ժամանակ բանվորությունը հավաքում ե յուր ույժերը, և միասնական ֆրոնտի տակտիկան պետք ե շատ խոշոր դեր կատարե և արգելե առանձին խմբակների վաղաժամ յելույթները, վորոնք անխուսափելի կերպով կը ջախջախվեն։

Կապիտալի հարձակումը միակողմանի պրեցես չե։ Այս բացահայտ պրոցեսին զուգընթաց՝ նկատվում ե, վոր պրոլետարիատն ել ամբողջ աշխարհում պատրաստվում ե հակահարձակման։ Յերկու բանակներն ել շարժվում են իրար հանդեպ։ Պրոլետարիատի ույժերի զորահավաքի այս պայմանում կարևոր ե յուրաքանչյուր մի դեպք, վոր կոգնե մասսաներին գործնականում համոզվելու, թե միասնական ֆրոնտի գործողությունը վորքան նշանավոր հետևանքներ ե ունենում և ոգտակար ե։

Այսպիսով հրապարակ հանելով միասնական ֆրոնտի լոզունգը, կոմմունիստական Ինտերնացիոնալը ոգնում ե մասսաներին կազմակերպվելու այն կռվի համար, վոր մղվելու յե կապիտալիզմի սարսափների դեմ և հաղթանակելու ե III Ինտերնացիոնալի դրոշի տակ։

32. Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՀԱՍԿԱՆԱԼ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՅԵՎ II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՎՈՉ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖՐՈՆՏ ՍՏԵՂԾԵԼԸ

Միասնական ֆրոնտ ստեղծելը ամենևին չի նշանակում, վոր բոլոր կուսակցությունները միանալով՝ պետք ե մեկ կուսակցություն կազմեն։ Կոմմունիստները չեն կարող մեկ կուսակցություն կազմել սոցիալ-դեմոկրատների հետ, վորոնք պրոլետարիատի գործի դավաճաններն են։ Մենք յերբեք չպետք ե մոռանանք, վոր հեղափոխական կուսակցության դերն այն ե, վոր բանվոր դասակարգին ցույց տա հաղթության ճանապարհը և տանի դեպի հաղթությունը, մի բան, վոր ի վիճակի չե կատարելու սոցիալ-դեմոկրատիան։ Այս պատճառով ել, յերբ սոցիալ-դեմոկրատները մեզ հարցնում են նենգորեն՝ «ինչու չեք միանում մեզ հետ, յեթե կողմնակից եք

միասնական ֆրոնտի», ապա մենք հանգարտ պատասխանում ենք. «Մենք միասնական ֆրոնտ ենք պաշտպանում այն պատճառով, վոր բանվորական ազնիվ, լայնածավալ մասսաները, վորոնց տանջել ու խաչել է իմպերիալիզմը, պաշտպանում են միասնական ֆրոնտի գաղափարն ընդդեմ բուրժուազիայի, վոր հարձակվում է միացյալ ֆրոնտով»։

Պաշտպանելով բուրժուազիայի դեմ մղվող կռվի միասնական ֆրոնտի գաղափարը, Կոմինտերնը հետապնդում է այն նպատակը, վոր արագացնի բանվոր դասակարգը բուրժուական-դեմոկրատական պատրանքներից (մոլորություններից) ազատագրելու պրոցեսը՝ քննադատաբար օգտագործելով մասսաների ձեռք բերած քաղաքական ու սոցիալական փորձառությունը։ Այս պատճառով էլ Կոմինտերնը անհրաժեշտաբար պետք է մասնակցի մասնակի նպատակների համար մղվող մասնակի կռվին, նպատակներ, վորոնք համապատասխանում են լայն մասսաների արդի դրությանն և գաղափարական ու հեղափոխական հասունության աստիճանին։

Իհարկե Կոմունիստական Ինտերնացիոնալի համար, վորն այնքան ուժ ու ջանք է վատնել սոցիալ-դեմոկրատիայի դավաճանական դերը մերկացնելու համար, դժվար էր անցնել միասնական ֆրոնտի տակտիկային։ Այս տակտիկայի մեջ թաքնված են վտանգներ, վորոնց էության մասին Կոմունիստական Ինտերնացիոնալը իրեն պարզ հաշիվ է տալիս։ Կոմինտերնը հասկանում է, վոր բանվորական մասսաները զորահավաքի չեն յենթարկվում պաշտպանողական կռիվ մղելու համար։ Սակայն կոմունիստների նպատակը հո այն չէ միայն, վոր կռվեն մի կտոր հացի համար։ Յեվ վորչափով մենք, կոմունիստներս, բանվորական շարժման ամենաթույլ մասն ենք դեռ կազմում միայն, այսպիսի միասնական ֆրոնտ սպառնում է մի վտանգ, յերբ առանձին յերկրներում թույլ կոմունիստական զորամասեր կարող են հարկավոր չափից ավելի ու առանց հետ նայելու հենվել սոցիալ-դեմոկրատիայի վրա։ Սոցիալ-դեմոկրատական մասսաների հետ միասին կռվելով կապիտալիզմի դեմ, այսպիսի զորամասերը ի վիճակի չեն լինի միաժամանակ պարզելու մասսաների առաջ ավելի հեղափոխական հեռանկարներ։

Բարեբախտաբար սոցիալ-դեմոկրատներն իրենք մեզ օգնում են միասնական ֆրոնտի այս տակտիկայի ընթացքում յերևան հանելու այն, ինչ վոր մեզ հարկավոր է, այսինքն՝ սոցիալ-դեմոկրատների անընդունակությունը՝ կռվելու ինչպես հարկն է, բանվորական մասսաների համեստ, մասնակի պահանջների համար անգամ։

Միասնական ֆրոնտի տակտիկան, վոր սոցիալ-դեմոկրատական կուսակցություններին դնում է, յուր գործերով, մասսաների աչքում դիմակազերծ լինելու անհրաժեշտության առաջ,—այս տակտիկան արդեն տվել է վորոշ հետևանքներ, այսինքն այն հետևանքը, վոր II Ինտերնացիոնալը հարկադրված էր հայտարարելու թե ինքը չի համաձայնել վորևէ բանակցություն վարել Կոմունիստական Ինտերնացիոնալի հետ։ Ինչու։ Պարզ է բոլորի համար, թե ինչու. նրա համար, վոր այս բանակցությունները պոկում են դիմակը պրոլետարիատի այս «պարագլուխների» յերեսից և մերկացնում են կապիտալիզմի արբանյակների իրական դեմքը։

Վորպեսզի սոցիալ-դեմոկրատների հետ միասին կռվին մասնակցելով և նրանց մերկացնելով՝ կոմունիստները զրկված չլինեն մերկացնելու այս

հնարավորությունից, պետք է նկատի ունենալ կոմունիստների հիմնական պահանջը, այն է՝ վոր միասնական ֆրոնտով կռվելիս՝ կոմունիստական կուսակցությունները պետք է ունենան քննադատության, պրոպագանդայի ու յելույթների լիակատար ազատություն և պահպանեն իրենց կուսակցությունների կազմակերպչական բացարձակ անկախությունը, մի բան, վոր անհնարին է կոմունիստների համար, յեթե նրանք գտնվեյին սոցիալ-դեմոկրատական կուսակցության շարքերում։ Իսկ սոցիալ-դեմոկրատների համար, ընդհակառակը, կարևորն այն է, վոր կոմունիստներին զրկեն քննադատության ու պրոպագանդայի ազատությունից՝ նրանց կաշկանդելով կուսակցական կարգապահությամբ։ Ահա թե ինչու մենք պաշտպանում ենք բանվորների մասսայական կռվի միասնական ֆրոնտի գաղափարը։ Ահա թե ինչու մենք կողմնակից ենք այն բանի, վոր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների նկատմամբ կիրառվի այն թեզիսը, թե՝ «պետք է հարվածել միասին, ընթանալ առանձին»։

33. ԻՆՉ ԴԵՐ ԵՆ ԿԱՏԱՐՈՒՄ ԿՈՄՄՈՒՆԻՍՏՆԵՐԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖՐՈՆՏԻ ԼՈԶՈՒՆԳԸ ԱՆՑԿԱՑՆԵԼԻՍ

Մարքսն ու Էնգելսը «Կոմունիստական մանիֆեստում» ապացուցել է, վոր կոմունիստները «չունեն այնպիսի շահեր, վորոնք տարբերվեին պրոլետարիատի, իբրև ամբողջության շահերից»։ Կոմունիստները մարմնացնում և իրականացնում են դասակարգային միությունը գաղափարապես ու իրապես։ Նրանք միացնում են իրենց շարքերում բանվոր դասակարգի ամենից առաջավոր, ամենից գիտակից ու ամենից հաղթական մասը. մինչդեռ ամբողջ դասակարգը գտնվում է դեռևս տատանվող կացության մեջ։

Այժմ արդեն յուրաքանչյուր առանձին յերկրի պրոլետարիատ կարիք չունի մեկուսանալու մյուս յերկրի պրոլետարիատից, վորովհետև իմպերիալիզմի դեմ մղվող կռիվը պրոլետարիատը կարող է վարել կենտրոնացրած միջազգային միասնական ղեկավարության ներքո միայն։

Կոմունիստական կուսակցությունը գործում է հենց իբրև միջազգային միասնական կուսակցություն և այստեղից էլ բխում է նրա բացառիկ դերը միասնական ֆրոնտի խնդիրներն իրականացնելու և անցկացնելու գործում։ Նրա այս դերը մեծանում է նաև այն պատճառով, վոր II Ինտերնացիոնալի կուսակցությունները, վորոնք շղթայված են իրենց ազգային բուրժուական դասակարգերից, պառակտում են բանվոր դասակարգի միջազգային կապը և քայքայում Ինտերնացիոնալը իբրև միասնական մարտական ուժ՝ միջազգային մասշտաբով։

Կոմունիստական կուսակցությունը իշխանության է ձգտում վոչ իբրև պրոլետարիատի անջատ կուսակցություն։ Կոմկուսակցությունը ձգտում է այն բանին, վոր կոմունիզմի սկզբունքների ու նպատակների կողմը գրավի և նվաճի բանվոր դասակարգի (և աշխատավորական, կապիտալի ճնշվող ու շահագործվող մասսաների) մեծամասնությունը և այս մեծամասնությունը դարձնի բուրժուազիայի դեմ դասակարգային, հեղափոխական կռիվ մղող մի գիտակից, յերկաթե կամք ունեցող բանակ։ Պարզ է, վոր կոմունիստական կուսակցություններն այս կռվի միջոցին պետք է ամենասերտ կերպով կապվեն մասսաների հետ և հանձն առնեն նրանց

ղեկավարությունը։ Այստեղից էլ ծագում է կոմկուսակցությունների համար հանուն միասնական ճակատի կռվելու անհրաժեշտությունը։ Այնուհետև պրոլետարիատը յուր ազատագրական կռվում կիրառում է այն բոլոր միջոցները, վորոնք պիտանի յեն թշնամուն թուլացնելու և գետին գլորելու համար, սկսած տնտեսական գործադուլից մինչև քաղաքական մասսայական գործադուլը, հրապարակական ժողովներից ու խաղաղ ցույցերից՝ մինչև զինված ապստամբությունը։ Այս կռվում վճռական դերը կատարում են մասսաները։ Ահա թե ինչու կոմմունիստների դերն այն է, վոր ղեկավարություն ձեռք բերեն այս մասսաների նկատմամբ, սրանց բոլոր գործողությունների ու ելույթների ժամանակ, վորպեսզի վճռական րոպեներում նպատակների լիակատար ու պարզ գիտակցությամբ այս մասսաների ուժերն ուղղեն դեպի կռվի վճռական-կետերը դեպի իշխանությունը նվաճելը։ Այս է ահա կոմմունիստների դերը միասնական ֆրոնտի տակտիկայի ժամանակ։

34. Ի՞ՆՉ Է ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԲԱՆԸ

Միասնական բանվորական ֆրոնտի տակտիկայի նպատակն, ի միջի այլոց, այն է, վոր ըստ կարելույն ավելի զարգացնե լայն բանվորական մասսաների շարժումը, վոր ուղղված է կապիտալիզմի ու կապիտալիստների դեմ, և ըստ կարելույն ավելի առաջ տանե բանվորներին ռեֆորմիստների ու համաձայնողականների դեմ մղվող կռվի ճանապարհով, վորոնք կարող են տեղերից շարժվել՝ բանվորական մասսաների ճնշման ներքո միայն։

Կոմմունիստական Ինտերնացիոնալը մոլորության մեջ չի ընկնում ամենևին այն խնդրի նկատմամբ, թե սոցիալ-դեմոկրատներն ու ռեֆորմիստները ի՞նչ չափով ընդունակ են անկեղծորեն կռվի մտնելու կապիտալիզմի դեմ։ Սակայն հնարավոր է համարում, վոր վորոշ հանգամանքներում կոմինտերնը նրանց կը հարկադրե հարելու կռվին։ Իհարկե ամեն մի վճռական րոպեյում նրանք կարող են դավաճան հանդիսանալ։ Սակայն յերբ մասսաներն իրենց կռվի միջոցին անհրաժեշտ զգաստ ու վճռական հնարների (прием) կհասնեն, այն ժամանակ առանց յերկյուղի ու առանց շարժմանը վնաս տալու դեն կշպրտեն բուրժուազիայի այդ արբանյակներին։

Բանվորական կառավարության նշանաբանը պետք է քննել հենց այս տեսակետով։ Այս նշանաբանը վոչ այլ ինչ է, յեթե վոչ միասնական բանվորական ֆրոնտի տակտիկայի կիրառման մի մասնակի դեպք։ Կոմմունիստական Ինտերնացիոնալն այս նշանաբանն այնպես չի ըմբռնում, վոր բանվորական կառավարությունը վերջնական ու իդեալական նպատակ է իբրև թե։ Վո՛չ յերբեք։ Ընդհակառակը բանվորական կառավարությունը, վորոշ պարագաներում, կարող է լուրջ վտանգ բերել յուր հետ, սակայն և այնպես անհրաժեշտ է այս նշանաբանն առաջ մղելը իբրև մի պահանջ, վորը պետք է պաշտպանեն նաև սոցիալ-դեմոկրատները, յերբ նրանք բարեխիղճ կերպով կամենում են կռվել հանուն իրենց դեմոկրատական ծրագրի։

Բանվորական կառավարության նշանաբանը, վորը մասսաների «ճնշման» ներքո մի քանի դեպքերում հրապարակ են հանում սոցիալ-դեմոկրատներն էլ, պետք է հակադրել կոալիցիոն կառավարության նշանաբանին, այսինքն այն կառավարության նշանաբանին, վորը խառը կազմված

կլինի բուրժուազիայի ու պրոլետարիատի ներկայացուցիչներից, վորպիսի նշանաբան սիրով հրապարակ է հանում սոցիալ-դեմոկրատիան, վորպեսզի այդպիսով խուսափե բուրժուազիայի դեմ կռվելուց։

Առաջ մղելով բանվորական կառավարության նշանաբանը՝ Կոմինտերնը ասում է սոցիալ-դեմոկրատներին. ներկայումս մենք դեռ չենք կարող կռվել հանուն դիկտատուրայի, վորովհետև լայն մասսաները դեռևս իրենց ֆրոնտը չեն հավասարեցրել առաջավոր մասսաների ֆրոնտին, ուստի և մենք պատրաստ ենք կռվելու հանուն ձեր դեմոկրատական պահանջների, հանուն բանվորական կառավարության նշանաբանի, յեթե ձեր դիտավորությունները լուրջ են։ Վորովհետև կռվի տրամաբանությունն այնպես է, վոր վորտեղ էլ ծագելիս լինի բանվորական կառավարությունը, այն կլինի պրոլետարիատի դիկտատուրայի ելակետ։

Այսպիսով բանվորական կառավարության նշանաբանը պաշտպանել նշանակում է սոցիալ-դեմոկրատներին ու ռեֆորմիստներին առաջ քաշել իսկական կռվի մեջ։ Պետք է նկատի ունենալ, վոր սոցիալ-դեմոկրատների ղեկավարները, վորոնք ամենից ավելի քիչ են ընդունակ կռվի և ամենից շատ են ընդունակ դավաճանելու, անոդ տարածության մեջ չեն գործում։ Նրանք հենվում են Գերմանիայի, Անգլիայի, Ֆրանսիայի ու այլ յերկրների միլիոնավոր բանվորների վրա, վորոնք, զարգացման վորոշ աստիճանի ժամանակ, կարող են իրենց ղեկավարների գլուխների վրայից ձեռք տալ բանվոր դասակարգի առաջավոր հեղափոխական մասսաներին և միանալ սրանց հետ՝ հանուն ընդհանուր կռվի։ Պետք է միայն մերկացնել այս բանվորական մասսաների առաջ իրենց պարագլուխներին, ցույց տալով, վոր վերջիններս անընդունակ են կռվելու բանվոր դասակարգի ազատագրության համար։

Այսպիսով բանվորական կառավարության նշանաբանը ցույց է տալիս, վոր կոմմունիստները, ինչպես այն արդեն կոնկրետ կերպով կարող է այժմ էլ տեղի ունենալ Գերմանիայում, բանակցում են սոցիալ-դեմոկրատների հետ, սրանց հետ միասին կռվում են բուրժուական կոալիցիայի դեմ Գերմանիայում, ֆաշիստական կառավարության դեմ Իտալիայում և այլն։ Յեվ այն դեպքում, յեթե այս անհրաժեշտ կլինի, կոմմունիստները վոչ միայն կպաշտպանեն բանվորական կառավարությունը, այլև կմասնակցեն նրան։ Կոմմունիստական կուսակցությունն այս միջոցով յելք է ցույց տալիս դեմոկրատական մասսաներին։ Կոմկուսակցությունն ասում է նրանց. «Դուք վախենում եք դիկտատուրայից, իսկ մենք նրան կողմնակից ենք։ Դուք կարծում եք, թե խաղաղ ճանապարհով կարող եք մի բանի հասնել։ Փորձեցեք։ Չե՞ վոր դուք մեծամասնություն եք կազմում։ Մենք կը կռվենք ձեզ հետ միասին, վորովհետև կարծում ենք, վոր դուք անխուսափելի կերպով, կռվի փորձով, պետք է շարժվեք և ընթանաք դեպի դիկտատուրա։ Թե այն և թե այս կռվի ժամանակ մենք չենք լքիլ ձեզ»։

35. Ի՞ՆՉ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑԱՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԲԱՆԸ

Վորչափով պարզվում են բանվոր դասակարգի կռվի կոնկրետ պայմանները հարձակվող կապիտալիզմի հանգամանքներում, այն չափով էլ փոփոխության է յենթարկվում Կոմինտերնի տակտիկան, վորի նպատակն է բանվորական լայն մասսաները համախմբել։ Սկզբում հրապարակ հանվեց «միասնական բանվորական ֆրոնտ» նշանաբանը, ապա «Բանվորա-

կան կառավարություն» նշանաբանը, իսկ Կոմինտերնի Գործկոմի լայնացրած պլենումում, վոր տեղի ունեցավ 1923 թվի հունիսին, այս վերջին նշանաբանը զարգացնելով դարձրին «Բանվորական ու գյուղացիական կառավարություն» կամ ավելի ճիշտ «Բանվորների ու աշխատավոր գյուղացիների կառավարություն» նշանաբան։

36. Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԲԱՆԸ ՅԵՎ Ի՞ՆՉՈՒ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՀՐԱՊԱՐԱԿ ՀԱՆԵՑ ԱՅՆ

Գյուղացիության հարցը միջազգային պրոլետարական հեղափոխության կարևորագույն խնդիրներից մեկն է։ Բանվորների ու աշխատավոր գյուղացիների կառավարության նշանաբանը հենց այժմ էլ արդեն գործնական նշանակություն ունի մի շարք յերկրներում, այն է՝ Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում, Լեհաստանում, Ֆինլանդիայում, Բալկաններում, Շվեյցարիայում, Ամերիկայում Յապոնիայում ու այլ վոչ-յեվրոպական յերկրներում։

Այս յերկրներում պրոլետարիատն առանց աշխատավոր գյուղացիության աջակցության չի կարող հաղթելու հույս ունենալ։ Արդեն այն փաստերը, վոր ունենք ներկայումս,[1] ցույց են տալիս, վոր շարունակաբար սրվող դասակարգային պատերազմների ժամանակ, այսպես կոչված «միջին» կառավարությունները չեն կարող քիչ կամ շատ յերկար տևողությամբ գոյություն ունենալ։ Վերջի վերջո այնպիսի կացություն է ստեղծվում, վոր կամ բուրժուազիայի դիկտատուրա է սահմանվում, կամ հաղթում է պրոլետարիատը և սահմանում է իր դիկտատուրան՝ գյուղացիության վրա հենվելով։

Պրոլետարիատը հեղափոխության առաջավոր զորամասն է, սակայն բանվորությունը հանձին կոմմունիստական կուսակցության՝ պետք է ձգտի գյուղացիության աջակցությունը ձեռք բերելու և վերջինս տանելու յուր յետևից։

Այս պատճառով «Բանվորական կառավարություն» նշանաբանը լրիվ չէ արտահայտում Կոմինտերնի հերթական տակտիկական խնդիրները։ Այս նշանաբանն անհրաժեշտ է ընդլայնել, հրապարակ հանելով «բանվորների ու աշխատավոր գյուղացիների կառավարության» նշանաբանը։

Արդյոք այս նշանաբանը հակասում է պրոլետարիատի դիկտատուրային։ Արդյոք այս պայմաններում կոմմունիստական կուսակցությունը բանվորական կուսակցությունից չի՞ դառնում բանվորա-գյուղացիական կուսակցություն։ Ահա հարցեր, վորոնք ծագում են «բանվորագյուղացիական կառավարություն» նշանաբանը հրապարակ հանելուն հարակից։

Կոմմունիստական կուսակցությունը բանվորական կուսակցություն է, սակայն վոչ այս բառի նեղ առումով. վոչ թե բանվորական համքարության կուսակցության իմաստով, այլ այն իմաստով, վոր այս կուսակցության մեջ ղեկավարությունը պատկանում է բանվորներին։ Յերբ մենք ասում ենք «բանվորների և գյուղացիների կառավարություն», ապա այս միայն այն է նշանակում, վոր պրոլետարիատը գյուղացիների օժանդակությամբ իշխա-

1) Ստամբոլիյսկու գյուղացիական կառավարությունը Բուլղարիայում, վորը տապալվեց բուրժուազիայի ձեռքով, հետադիմական զինվորականության օժանդակությամբ։ Այս բանը տեղի ունեցավ շնորհիվ այն հանգամանքի միայն, վոր բուլղար պրոլետարիատը չկարողացավ կապ հաստատել գյուղացիության հետ։

նությունն իր ձեռքն առնելով գյուղացիությունը գրավում է պետությունը կառավարելու գործին մասնակցելու՝ բանվորության ղեկավարությամբ։

Չի կարելի հասարակության կազմությունը մեխանիքաբար հասկանալ, վոր իբրև թե մի կողմում կանգնած է պրոլետարիատը, մյուս կողմում՝ բուրժուազիան։ Հասարակության այս յերկու ծայրաթևերի (фланг) միջև կան մի շարք սոցիալական շերտեր, և այս շերտերից պրոլետարիատին ամենից ավելի մոտ կանգնած է գյուղացիությունը, վորին ինչպես ցույց տվեց ռուսական հեղափոխության փորձը, ավելի ձեռնտու յէ բանվորական կառավարությունը, քան բուրժուական կառավարությունը։ Ուստի և բանվորագյուղացիական նշանաբանը լրիվն իրական է և պիտանի վոչ միայն ագրարային, այլ և բոլոր յերկրների համար։

Հրապարակ հանելով այս նշանաբանը, կոմմունիստական կուսակցությունները ասում են հետամնաց բանվորներին ու գյուղացիներին. մենք ցանկանում ենք վոչնչացնել հարուստների պետությունը և ստեղծել աշխատավորների պետություն։ Յեկեք այս նպատակով միանանք և ստեղծենք կառավարություն բանվորների ու գյուղացիների, այսինքն բնակչության այն մասի, վորն ուղղակի շահագրգռված չէ կապիտալի տիրապետության խնդրում։

Բանվորագյուղացիական կառավարության նշանաբանը Կոմինտերնի տակտիկական նշանաբանն է և իբրև այդպիսին՝ կյանքում անցկացնելու ժամանակ շաղկապված է վտանգի հետ։ Ուստի կոմմունիստական կուսակցությունները, վորոնք առաջ են մղում այս նշանաբանը, պետք է կանխապատրաստված լինեն ճարպիկ զորախաղեր անելու։ Սակայն հաղթություն չի կարող լինել առանց զորախաղեր անելու տակտիկայի դժվարությունները հաղթահարելու կարողության։ Հաղթության ճանապարհն անցնում է միասնական ֆրոնտի տակտիկայի վրայով, իսկ այս տակտիկան կապ ունի ֆրոնտի ընդլայնման հետ, այլ և այն բանի հետ, վոր այս ֆրոնտն ընդգրկե այնպիսի մի ուժեղ զորամաս, ինչպիսին է գյուղացիությունը, վորը վճռական նշանակություն ունի բուրժուազիայի դեմ մղվող կռվի համար։

37. ԻՆՉՈ՞Ւ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖՐՈՆՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԷ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Միասնական ֆրոնտի տակտիկան, այն տակտիկան, վոր սոցիալ-դեմոկրատական կուսակցություններին կանգնեցնում է իրենց գործերով մասսաների աչքում դիմակազերծ լինելու անհրաժեշտության առաջ, սոցիալ-դեմոկրատական կուսակցություններին հարկադրում է թշնամաբար վերաբերվելու այս տակտիկային և ամեն կերպ խուսափելու կոմմունիստների հետ համաձայնության գալուց՝ յերկյուղ կրելով, վոր այս մերձեցումը կը նվազեցնե մասսաների վրա ունեցած նրանց ազդեցությունը։

Յերբ 1921 թվականի վերջին արհմիությունների համագերմանական միավորությունը, վոր գտնվում էր շեյդեմանականների (աջ սոցիալ դեմոկրատների) ազդեցության տակ. բանվորների ճնշման ներքո հրապարակ հանեց տասը պահանջ, իբրև բուրժուազիայի գրոհին հակազդելու միջոց, այն ժամանակ կոմմունիստական կուսակցությունը հայտնեց հետևյալը. «Մենք պաշտպանում ենք այդ պահանջները (հանքերի սոցիալիզացիա,

բուրժուազիայի ունեցած արժեքների մինչև մի վորոշ տոկոս բռնագրավում, սոցիալական օրենսդրության պահպանություն, յերկաթուղիները պետության ձեռքում թողնելը և այլն) և առաջարկում ենք այս պահանջների հիման վրա ստեղծել միասնական ֆրոնտ, կռվելու համար հանուն այս պահանջների»։ Սակայն արհմիությունների համագերմանական միավորության ղեկավարները չհամաձայնեցին սրան։ Ինչո՞ւ։ Հենց այն պատճառով, վոր կոմմունիստներն առաջարկում եյին կռվել այս պահանջների համար, քանի վոր պարզ է, վոր, առանց կռվի, սրանից շատ ավելի քիչն էլ չի կարելի ձեռք բերել, իսկ շեյդեմանականները հնարավոր եյին համարում այս պահանջների կատարմանը հասնել՝ բուրժուազիայի հետ բանակցելու միջոցով և բուրժուազիայի վրա խաղաղ ճնշում գործ դնելով։

Այս փաստն ամենից ավելի լավ է բնութագրում այն պատճառները, թե ինչու միասնական ֆրոնտի իրականացումը դժվարությունների յե հանդիպում։ Այսպիսով, վաղ թե ուշ, այս խնդրի իրականացումը պետք է տեղի ունենա սոցիալ դեմոկրատական ղեկավարների գլխի վրայով։

38. ԻՆՉՈ՞Վ ՆՇԱՆԱՎՈՐ ՅԵՂԱՎ III—IV ԿՈՆԳՐԵՍՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

III կոնգրեսից մինչև IV կոնգրեսն անցած ժամանակը (1921 թ. օգոստոս—1922 թ. դեկտեմբեր), մեծ վորոշությամբ ու լրիվ կերպով յերևան հանեց այն ակտիվությունը, վոր արտահայտում եր բուրժուազիան բանվոր դասակարգի վրա հարձակվելով և վորը յերևան եր գալիս արդեն 1921 թվի սկզբից՝ կապ ունենալով իտալական ու գերմանական բանվորների պարտության հետ։ Այս հարձակումը, վոր ամենից ավելի պարզ արտահայտվում է 1922 թվականներին, հերթով ընդգրկում է բոլոր յերկրները։ Ինչն է այս հարձակման պատճառը։ Գլխավոր պատճառն այն է, վոր թեև համաշխարհային կապիտալիստական տնտեսության կրիզիսն անհաղթահարելի յե, սակայն այս տնտեսության կործանման որն էլ դեռ չի յեկել։ Ստեղծվել եր սոցիալական ուժերի անկայուն հավասարակշռություն և բուրժուազիան կանխելով պահանջները բանվորների, վորոնց կենսական մակարդակը շարունակ ընկնում է, ինքը դիմեց հարձակման, վորպեսզի պատերազմի հետևանքների ֆինանսական-տնտեսական ծանրությունը գցե բանվորների ուսին։

Ինչ ճանապարհով է կապիտալն ընթանում դեպի այս նպատակը։ Ամենից առաջ նրանով, վոր յերկարացնում է բանվորական որը և քչացնում աշխատավարձը. իսկ հետո՝ աստիճանաբար սեղմում կամ վերցնում է աշխատանքը պաշտպանող այն սոցիալական օրենքները[1]), վոր ձեռք եյին բերել բանվորները՝ պատերազմի օրերում ու պատերազմին հաջորդող ժամանակաշրջանում։

Այս հարձակումը մի շարք խոշոր յերկիրներում իրեն նպատակ է դնում՝ բացի կենսական մակարդակը ցածացնելուց, բուն իսկ բանվորական կազմակերպությունների խորտակումը։ Այսպես օրինակ՝ միայն մի տարվա ընթացքում ամերիկյան արհմիությունների թիվը կրճատվեց $1^1/_2$ միլիոն մարդով, քայքայվեցին իտալական արհմիությունները և այլն։ 1923 թվի յերկրորդ կեսին, կապիտալիստական հարձակման բարձրագույն կետը դեռ ես անցած չեր համարվում։

Կապիտալի հարձակումը դեռ մի կողմն է, վոր բնորոշում է III-ից մինչև IV կոնգրեսն ընկած ժամանակաշրջանը։ Մյուս կողմը, վոր անվախ կերպով մերկացրել է Կոմինտերնը, պրոլետարիատի կազմալուծությունը, նահանջն է։ Իբրև ընդհանուր դրություն, կարելի յե նկատել, վոր նույն իսկ իր պաշտպանողական դիրքում պրոլետարիատն այս ժամանակաշրջանի ընթացքում պարտություններ է կրել՝ չկարողանալով միասնական ֆրոնտ ստեղծել։

Կապիտալի տնտեսական զարգացմանը զուգընթաց՝ ամբողջ միջին Յեվրոպայում ուժեղանում եր բուրժուական-քաղաքական ռեակցիան էլ (վոր մասամբ խառն է միապետական ռեակցիայի հետ, ինչպես է, օրինակ, Գերմանիայում)։ Կապիտալն արդեն ի վիճակի չե այլևս իր պաշտպանության համար հույս դնելու պետական իշխանության վրա, վորը պահապան է կանգնած նրա շահերին։ Բուն իսկ իշխող դասակարգի անդամներից կազմվում են առանձին դասակարգային զորքեր։ Ռեակցիայի այս աճող ուժի ընդհանուր ժողովրդականացած անունը ֆաշիզմ է։ Իտալիայում այս ռեակցիան 1922 թվի վերջերին իր գագաթնակետին հասավ նրանով, վոր իշխանությունն անցավ իտալական բուրժուական «սև հարյուրակի»—ֆաշիստների ձեռքը։ Գերմանիայում զարգացավ ֆաշիստական շարժումը, վոր առանձնապես սաստիկ արտահայտվեց հարավում (Բավարիայում) ու հյուսիսում (Արևելյան գավառներում)։ Նման հետադիմական շարժում զարգանում եր զուգընթացաբար այլ յերկիրներում էլ։

Ահա համառոտ կերպով այն ընդհանուր, միջազգային կացությունն ու պայմանները, վորոնց մեջ ընթանում եր պրոլետարիատի կռիվն այս ժամանակաշրջանում։

Սակայն այս ժամանակաշրջանի բնույթագիրը լրիվ չեր լինի, յեթե չմատնանշեյինք դեռ մի գործոն էլ, վոր ներկայումս վիթխարի դրական դեր

---

[1]) Սոցիալական (կամ վոր նույնն է՝ բանվորական) օրենսդրություն ասելով՝ հասկացվում է այն օրենսդրությունը, վոր վերաբերում է աշխատանքի պայմանները լավացնելուն (բանվորական ժամանակի կրճատում, գիշերային աշխատանքի վերացում, աշխատավարձի ավելացում՝ զանազան տեսակի պետական ապահովագրություն և այլն)։ Սոցիալ դեմոկրատներն ու ամեն տեսակի ռեֆորմիստները հակված են սոցիալական օրենսդրության դերն ու նշանակությունը գերագնահատելու։ Սակայն իրապես սոցիալական օրենսդրության դերն ու նշանակությունն ամենևին չի արդարացնում այն հույսերը, վոր նրա վրա դնում են ռեֆորմիստները։

Բանն այն է, վոր կապիտալիստական շահագործումը. վորին չեն կարողանում կաշկանդել օրենքները, ամբողջ պրոլետարիատի բանվորական ուժը վատնում է այնպես անխնա, վոր այս վատնումն ուղղակի անձեռնտու յե կապիտալիստների դասակարգին՝ ամբողջությամբ առած։ Անուժ դարձած, այլասերված պրոլետարիատը չի կարող բարձր հավելյալ արժեք ստեղծել, չի կարող իր միջից, առաջ բերել «ուսյալ» բանվորներ (մեխանիկներ, ելեկտրոտեխնիկներ և այլն), վորոնք անհրաժեշտ են արտադրության հաջողակության համար։ Այնպիսի պրոլետարիատը չի կարող լինել լավ զինվոր, ծովագնաց. մի խոսքով ի վիճակի չե ծառայելու կապիտալիզմին ու սրա հետ կապված միլիտարիզմին։ Ուստի հասկանալի յե, վոր կապիտալիստների ամենից ավելի նախաձեռնող շերտը մի քանի դեպքում ինքն է ձգտում լավացնելու աշխատանքի պայմանները, մանավանդ վոր այս բարվոքումները յերբեք չեն վնասում կապիտալիզմի զարգացմանը, յերբեք չեն կասեցնում կապիտալի աճումն ամբողջությամբ առած, բայց մանր, թույլ ձեռնարկություններին հաճախ մահացու հարված են հասցնում՝ սրանց վերջնականապես անընդունակ դարձնելով խոշոր ձեռնարկությունների հետ մրցելու։

է կատարում (իսկ ապագայում էլ ավելի մեծ դեր է կատարելու) պրոլետարիատի կռվի մեջ: Այս գործոնը Խորհրդային Միությունն է:

Մինչդեռ կապիտալիստական յերկրներում տնտեսական հակասությունները սրվում են շարունակ, Խորհրդային Միության տնտեսությունը, վոր կառուցվել է նոր հիմունքների վրա և զարգացել ու ծավալվել է 1922 թվականին արդեն, ամրապնդվում է:

Խորհրդային Միության մեջ հաղթական պրոլետարական հեղափոխությունը, վոր դիմացավ համաշխարհային կապիտալի ամենակատաղի գրոհին և չպարտվեց, արդեն ստեղծել է հաստատուն նեցուկ ու հզոր քաղաքական—տնտեսական ու ռազմական պահեստ ինչպես Արևմուտքի սոցիալական հեղափոխության հաջողության, այնպես և Արևելքի ազգային բուրժուական հեղափոխությունների հաջողության համար: Պրոլետարական Ռուսաստանը քաղաքական ռազմագիտության դասերի մի գանձարան է, հեղափոխական յեռանդի կենդանի աղբյուր, սոցիալիստական շինարարության փորձի զինարան: Ահա այս գործոնը, վոր աշխատանքի՝ կապիտալի դեմ մղվող համաշխարհային կռվի պայմաններում հանդես է յեկել և հաստատուն տեղ գրավել, գալիք վճռական ճակատամարտերի համար ապահով նեցուկ է հանդիսանալու:

39. ԻՆՉ Է ՖԱՇԻԶՄԸ

Fascio (հայերեն արտասանվում է «ֆաշիո») բառը իտալերեն է և այլաբերաբար նշանակում է խմբակ, միություն, ավազակախումբ: Պատերազմի վերջանալուց հետո այն խմբակները, վորոնք պատերազմի կողմնակից եյին, այլ և այս պատերազմի նախկին մասնակիցների խմբակները, վորոնք անբավական եյին պատերազմի հետևանքներից, միանալով ստեղծեցին ազգայնական մի կազմակերպություն, վոր ստացավ „Fasci di combattimenio“ (մարտական միություններ) անունը:

Ֆաշիստների շարժումն առանձնապես ուժեղ զարգացում ունեցավ Իտալիայում, վորի հետևանքով այս բառով սկսեցին կոչվել այն բազմազան ազգայնական ու միապետական խմբավորումները, վորոնք կազմվեցին առանձին յերկրներում, վորտեղ կապիտալիզմն ամենից ավելի սաստիկ քայքայման վիճակի մեջ է:

Ֆաշիստները չափազանց խայտաբղետ կազմակերպություն են այն յերկրներում, վորտեղ նրանք արդեն գոյություն ունեն—Իտալիայում, Ավստրիայում, Գերմանիայում, Հարավ Սլավիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Իսպանիայում և այլուր: Այս կազմակերպության մեջ մտնում են բոլոր հակահեղափոխական ու բուրժուական տարրերը: Այստեղ է և՛ բուրժուազիան և՛ մանր բուրժուազիան: Այստեղ են և՛ խոշոր հողատերերը և զինվորական կաստայի ներկայացուցիչները: Այստեղ են դասակարգալիք (деклассированный) ինտելիգենտական տարրերը, արդյունաբերական ու գյուղատնտեսական հետամնաց բանվորների մի մասը, մանր գյուղացիներ և այլն:

Ֆաշիստական կազմակերպությունները իրենց խայտաբղետության շնորհիվ ամենից ավելի յեն ձեռնտու բուրժուազիայի գործի, այսինքն բանվոր դասակարգի վրա հարձակում կատարելու համար: Բուրժուազիան չի ստեղծել ֆաշիզմը, սակայն բուրժուազիան շատ արագ ըմբռնեց, թե ֆաշիզմն

ինչ նշանակություն ունի հետպատերազմյան կացության ու կապիտալիզմի քայքայման պայմաններում և վորոշեց օգտագործել այս շարժումը: Դասակարգային սրվող կռիվը հասցրել է բանն այնտեղ, վոր բուրժուազիան իր գոյության պաշտպանությունն արդեն չի կարող վստահել յուր պետության ապարատին, վորովհետև թե՛ բանակը, թե՛ վոստիկանությունը, և թե այլ օրգանները վճռական բոպեյում կարող են մասնակի կերպով հրաժարվել կապիտալին ծառայելուց: Այս բանը նախատեսելով՝ բուրժուազիան առաջուց պատրաստում է այն ուժը, վոր պետք է հրապարակ դուրս գա բանվոր դասակարգի դեմ այն բոպեյին, յերբ վերջինս սկսե իր հարձակումը: Դեռ ավելին. բուրժուազիան առանց սպասելու բանվորության այս հարձակմանը, իգեմս ֆաշիզմի՝ ինքն է սկսում հարձակում բանվոր դասակարգի վրա՝ ձգտելով բանվորությանն այնքան ալրունաքամ անել, վոր նրա մեջ մեռցնե ակտիվ կռիվ մղելու ամեն մի ձգտում և հնարավորություն: Ֆաշիզմը բուրժուազիայի դասակարգային մարտական ուժն է, կապիտալիզմի քաղաքացիական բանակը, վոր գործում է և իրեն պահում այժմ այնպես, վորպես թե ջախջախել է հեղափոխությունը և հիմա ամրապնդում է հաղթող դասակարգի, բուրժուազիայի տիրապետությունը:

Ֆաշիզմի զարգացմանը նպաստում են յերեք ուժեր (վորոշ շեղումներով, նայած յուրաքանչյուր յերկրի առանձնահատկություններին). առաջինը պետությունը, յերկրորդ՝ խոշոր բուրժուազիան և յերրորդ՝ միջին դասակարգը: Պետությունը, վոր պաշտպանում է կապիտալի շահերը, իր ապարատը թագուն կամ հայտնի, դնում է ֆաշիստների տրամադրության տակ: Այնտեղ, վորտեղ ֆաշիստները ի վիճակի չեն իրենց ուժերով հաղթահարելու կազմակերպված բանվորներին, այնտեղ նրանց օգնության են հասնում վոստիկանությունն ու ժանդարմերիան և գնդակահարում են բանվորներին:

Խոշոր բուրժուազիան, վոր շահագրգռված է այն բանում, վորպեսզի պրոլետարիատի հարձակման ժամանակ իր տրամադրության տակ ունենա վստահելի ռազմական ուժ, բոլոր միջոցներով օժանդակում է ֆաշիզմին: Յեվ վերջապես միջին դասակարգերը, մանր բուրժուազիան, առևտրականներն ու բուրժուական ինտելիգենտ յերիտասարդությունը կույր գործիք են հանդիսանում բուրժուական պետության ձեռքում, վորը բորբոքում է այս շերտերի մանր սեփականատիրական շահերը և դրանց մեջ կույր կատաղություն է գրգռում պրոլետարիատի դեմ:

Այսպիսով ֆաշիզմը համաշխարհային յերևույթի բնույթ է ստանում: Դա-
սակարգը, ֆաշիզմի ձևով, բացահայտ հրապարակ է յելնում դասակարգի դեմ:
Ֆաշիզմի ժամանակաշրջանը կարող է բանվոր դասակարգի համար շատ ծա-
նըր լինել, սակայն ֆաշիզմը ինքնըստինքյան ապացույց է վոչ թե կապի-
տալիզմի առողջության, այլ անբուժելի հիվանդության կապիտալիզմի, վո-
րը դիմում է իր վերջին խաղաթղթին- քաղաքացիական պատերազմին,
վորը հենց ինքն է բորբոքում:

Բայց ով քամի յէ ցանում, փոթորիկ կհնձե: Դասակարգերի քաղաքացիական պատերազմի մեջ դեռ ևս յերբեք չի հաղթել մեռնող դասակարգը, ինչպիսի անգթություն էլ յերևան բերե կռվի ընթացքում: Այնպես էլ այժմյան դարաշրջանումն է նաև: Բուրժուազիայի բորբոքած քաղաքացիական պատերազմը նրա կործանման ամենից ապահով ճանապարհն է[1]:

1) Ֆաշիզմի խնդրի նկատմամբ, Կոմմունիստական Ինտերնացիոնալի IV կոնգրես

40. ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ IV ԿՈՆԳՐԵՍԸ

III կոնգրեսից հետո յեկող ժամանակաշրջանում, կոմմունիստական կուսակցությունների ամբողջ աշխատանքն ընթանում եր այն նշանաբանի տակ, վոր պահանջում եր պայքարել՝ բանվորական մասսաները նվաճելու համար։ Այս խնդիրը, վոր Կոմինտերնը տվել եր կոմկուսակցություններին, վոչ մի տեղ դեռ իրականացած չեր մինչև IV կոնգրեսը, վորովհետև այն տակտիկան, վորի միջոցով պետք ե այս խնդիրը գլուխ գար, այն ե՝ միասնական ֆրոնտի տակտիկան, դեռ անհրաժեշտ հետևանքներ չեր տվել։ IV կոնգրեսը շատ ժամանակ, ուշադրություն և ուժեր նվիրեց ստուգելու, թե ինչ հետևանքներ ե տալիս պրոլետարիատի մեծամասնությունը նվաճելու համար մղվող այս կռիվը և յեկավ այն յեզրակացության, վոր այս տեսակետը լիովին ճիշտ ե, չնայած այն բոլոր արգելքներին, վորոնք խանգարում են նրա իրականացումը կյանքում։

Սկզբունքորեն վոչ մի նոր թեզիս չմուծելով Կոմինտերնի III կոնգրեսի սահմանած տակտիկայի հիմունքների մեջ և ամենից ուշադիր կերպով յերևան հանելով կարծիքների գոյություն ունեցող նրբերանգները (իսկ այս կատարեց խոշորագույն կոմկուսակցությունների—ֆրանսական, իտալական մասամբ և գերմանական կոմկուսակցությունների դիրքերը քննելով ու վերլուծելով)—Կոմինտերնն այս տակտիկայի ըմբռման միատեսակություն

բանաձևը հանեց.

„Կապիտալի տնտեսական զարգացման հետ սերտ կապ ունի բուրժուազիայի քաղաքական հարձակումը պրոլետարիատի վրա։ Վերջինս առանձնապես ակներև արտահայտվում ե հանձին միջազգային ֆաշիզմի։ Ի նկատի ունենալով, վոր հարաճուն աղքատացումը դիպչում ե նաև միջին շերտերին, ի թիվս վորոնց և չինովնիկությանը, իշխող դասակարգն այլևս վստահ չե, վոր ի դեմս բյուրոկրատիայի բոլորովին կամակատար գործիք ունի ինքը։ Այս պատճառով իշխող դասակարգը ամենուրեք միջոցների ե դիմում ստեղծելու հատուկ սպիտակ գվարդիա, վորը հատկապես ուղղված ե պրոլետարիատի բոլոր հեղափոխական ձգտումների դեմ և հետզհետե ավելի ու ավելի յե ծառայում իբր միջոց՝ բռնի կերպով ճնշելու բանվոր դասակարգի ամեն մի փորձ, վորի նպատակն ե պրոլետարիատի կացության բարվոքումը։

Բնորոշ հատկանիշը իտալական «դասական» Ֆաշիզմի, վոր միաժամանակ իր ձեռքն ե առել ամբողջ Իտալիան, այն ե՝ վոր ֆաշիստները վո՛չ միայն ստեղծում են վոտից գլուխ սպառազեն հակահեղափոխակա մարտական կազմակերպություններ, այլ և նրանք սոցիալական դեմագոգիայի միջոցով փորձ են անում նմանապես իրենց համար հող ստեղծելու մասսաների մեջ—գյուղացիության, մանր բուրժուազիայի մեջ—և նույնիսկ պրոլետարիատի վորոշ մասի մեջ։ Ներկայումս ֆաշիզմի վտանգ գոյություն ունի շատ յերկրներում—Չեխոսլովակիայում, Հունգարիայում Բալկանյան համարյա բոլոր յերկրներում, Լեհաստանում. Գերմանիայում և նույնիսկ այնպիսի յերկրներում, ինչպիսին ե Նորվեգիան։ Անհնարին չե, վոր այս կամ այն ձևով ֆաշիզմ գոյություն ունենա այնպիսի յերկրներում ել, վորպիսիք յեն Ֆրանսիան ու Անգլիան։

Կոմմունիստական կուսակցությունների կարևորագույն խնդիրներից մեկն ել միջազգային Ֆաշիզմին դիմադրելու գործը կազմակերպելն ե։ Կոմմունիստները պետք ե գլուխ կանգնեն բանվոր դասակարգի այն կռվին, վոր սա մղում ե ֆաշիստական ավազակախմբի դեմ, այստեղ ել յեռանդագին կիրառելով միասնական ֆրոնտի տակտիկան և պարտադիր կերպով դիմելով կազմակերպության անլեգալ մեթոդներին։

Ֆաշիստական խելացնոր կազմակերպությունը բուրժուազիայի թղթախաղի վերջին խաղաթուղթն ե։ Սպիտակ գվարդիայի բացահայտ տիրապետությունը չուր ե գալիս և ծառանում ե միաժամանակ նաև բուրժուական դեմոկրատիայի հիմունքների դեմ ընդհանրապես։ Աշխատավոր ժողովրդի ամենալայն մասսաները համոզվում են, վոր բուրժուազիայի տիրապետությունը հնարավոր ե միայն այն ժամանակ, յերբ սա անքող դիկտատուրա յե հաստատում պրոլետարիատի վրա։

հաստատեց, մի բան, վորը խոշոր քաղաքական նվաճումն ե հետագա կռվի համար։

IV կոնգրեսը մի շարք կազմակերպչական միջոցներ ձեռք առավ առանձին կոմմունիստական կուսակցությունների—ֆրանսական, իտալական, նորվեգական կոմկուսակցությունների վերաբերմամբ։ Կոնգրեսը մերկացրեց գաղափարական բոլոր թեքումները, այն բոլոր փաստերը, վորոնք մատնանշում եյին, թե առանձին կուսակցություններ «ավտոնոմ» (Կոմինտերնի ընդհանուր վորոշումներից շեղվող) վերաբերմունք ունեն կենտրոնի վճիռների նկատմամբ, IV կոնգրեսը մատնանշեց, թե ինչպես առանձին տակտիկական խնդիրները լուծելիս՝ սխալ մոտեցումներ են տեղի ունենում և կայացրեց մի շարք վորոշումներ, վորոնք ընդունվեցին ճնշող մեծամասնությամբ և պետք ե նշանավոր չափով առողջացնեն տեղական սեկցիաների աշխատանքը և գործի ասպարեզում ստեղծեն ավելի սերտ միություն ու հարթություն։

III ու IV կոնգրեսների արանքում ընկած մեկ ու կես տարվա փորձը անհրաժեշտ դարձրեց ճշտելու և ուղղումներ մտցնելու այն հարցի մեջ, թե ինչ անելիքներ ունեն կոմմունիստները արհշարժման ու հողային հարցի մեջ, այլև անհրաժեշտ յեղավ Կոմինտերնի միասնական ծրագիր կազմելու խնդիր դնելու։

IV կոնգրեսում մատնանշվեցին այս ծրագրի հիմնական սկզբունքները, իսկ ծրագրի վերջնական մշակումը պետք ե հատուկ աշխատանքի առարկա լինի և պետք ե ավարտվի, պատրաստ լինի հաջորդ V կոնգրեսի համար։ Վերջապես IV կոնգրեսը վճռեց Գործկոմի վերակազմության խնդիրը, նպատակ ունենալով վերջինիս տալ միասնական միջազգային կոմմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեյի ֆունկցիաներ։

Այսպիսով IV կոնգրեսի գլխավոր նշանակությունն այն ե, վոր ամփոփելով ամբողջ աշխարհի կոմկուսակցությունների շինարարության ու կռվի փորձը՝ համագումարն ավելի պարզ կերպով քան յերբևիցե, զարգացրեց ու ծավալեց Կոմինտերնի կռվի ծրագիրն, իբրև պրոլետարիատի միակ մարտնչող միջազգային կուսակցության ծրագիր։

IV կոնգրեսում մասնակցություն ունեցան 61 յերկրի ներկայացուցիչներ։

41. ԻՆՉ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԱՐԵՑ IV ԿՈՆԳՐԵՍԸ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

Համարելով, վոր ագրարային խնդրի այն թեզիսները, վոր ընդունել եր II կոնգրեսը, ընդհանրապես և ամբողջապես կարիք չունեն փոփոխության և վոր պետք ե միայն դիրեկտիվներ տալ այս թեզիսները կիրառելու համար, IV կոնգրեսը այս դիրեկտիվներն ընդունեց՝ հետևյալ կերպարանքով.

1) Միայն պրոլետարական հեղափոխությունը կարող ե արդի ստրկացումից ու կապիտալիզմի ժամանակ անխուսափելի պատերազմներից վերջնականապես ազատագրել գյուղական պրոլետարիատի ու աղքատ գյուղացիների լայն մասսաները (վորոնք զուրկ են բավականաչափ հողից և հարկադրված են իրենց աշխատանքը վաճառելու մասնակի կերպով, կամ վորոնք վորևե այլ կերպ շահագործվում են կապիտալի ու խոշոր հողատիրու-

թյան ձևերով)։ Այս հեղափոխությունը պետք է հասնե այն չափին, վոր
խոշոր հողատերերից անվճար կերպով ոտարվեն, (отчуждение) խլվեն հողն
ու արտադրության բոլոր գործիքները և տրվեն աշխատավորներին, վորոնք
խոշոր կալվածատերերի ու կապիտալիստների պետության փոխարեն կը
սահմանեն պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիների խորհրդային հան-
րապետություն, և այսպիսով ճանապարհ կը հարթեն դեպի կոմմունիզմ։

2) Խոշոր կալվածատերերի ու կապիտալիստների պետության դեմ
մղվող կռվի ընթացքում աշխատավորները, աղքատ գյուղացիներն ու մանր
վարձակալները գյուղատնտեսական ու արդյունաբերական պրոլետարիատի
բնական զինակիցներն են։ Նրանց հեղափոխական շարժման և գյուղական ու
քաղաքային պրոլետարիատի կռվի միավորությունը մեծապես կարագացնե
բուրժուական պետության խորտակումը։ Այն րոպեյին, յերբ քաղաքային
պրոլետարիատը կխլե քաղաքական իշխանությունը և կբռնագրավե արտա-
դրության միջոցները բուրժուազիայից, գյուղական պրոլետարիատն ու աղ-
քատ գյուղացիները կտիրանան հողին, կվռնդեն խոշոր կալվածատերերին և
վերջ կտան կալվածատերերի ու գյուղական բուրժուազիայի տիրապետու-
թյանը։

3) Վորպեսզի բացի գյուղատնտեսական բանվորներից հնարավոր լի-
նի հեղափոխության կողմը գրավել նաև աղքատ գյուղացիներին («թզու-
կային տնտեսությունների» տերերին, մանր վարձակալներին ու մանր գյու-
ղացիների մի մասին), այլև համոզել միջակ գյուղացիներին, վոր անհրա-
ժեշտ է նրանց բարյացակամ չեզոքությունը պահպանելը (չմիջամտելը),—
այս շերտերը պետք է ազատագրվեն համփաների (կուլակ) ազդեցությունից
ու խնամակալությունից, այն համփաների, վորոնք դաշնակցել են խոշոր կալ-
վածատերերի հետ։ Այս շերտերը պետք է համոզվեն, վոր նրանց շահերը
համերաշխ չեն համփաների շահերի հետ և վոր այս պատճառով միայն պրո-
լետարիատի հեղափոխական կուսակցությունը, կոմմունիստական կուսակ-
ցությունը կարող է լինել նրանց պարագլուխն այս կռվում։ Կալվածատե-
րերի ու համփաների խնամակալությունից աղքատ գյուղացիներին ազա-
տագրելու այս պրոցեսն արագացնելու համար, դեռ բավական չէ պարզա-
պես վորեվե ծրագիր հրապարակ հանել կամ համապատասխան պրոպագան-
դա ծավալել, այլ մշտական յելույթների միջոցով, վորոնց նպատակը լինե-
լու յե այս շերտերի շահերի պաշտպանությունը, կոմմունիստական կուսակ-
ցությունը պետք է ապացուցի, վոր ինքը բոլոր աշխատավորների ու ճնշ-
վածների կուսակցությունն է իսկապես։

4) Ուստի կոմմունիստական կուսակցությունը գլուխ է կանգնում ա-
մեն մի կռվի, վոր գյուղական բնակչության աշխատավոր մասսաները մը-
ղում են իշխող դասակարգերի դեմ։ Յելնելով այն հերթական պահանջնե-
րից, վոր հրապարակ են մղում այս շերտերը կապիտալիստական հասարա-
կարգի գոյության ժամանակ, կոմմունիստական կուսակցությունը միացնում
է գյուղի աշխատավորների փոշիացած ուժերը, հզորացնում է նրանց կռ-
վելու կամքը, ոժանդակում է այս կռվին նրանով, վոր այս կռվի մեջ է
մտցնում արդյունաբերական պրոլետարիատի ուժերը և նորից ու նորից
մատնանշում է գյուղական աշխատավոր մասսաներին այն նպատակները,
վորոնք տանում են դեպի հեղափոխություն։ Արդյունաբերական բանվոր-
ների հետ միասին մղած այս ընդհանուր կռիվը, ինչպես և այն փաստը, վոր

արդյունաբերական բանվորները կոմմունիստական կուսակցության ղեկա-
վարությամբ կռվում են աղքատ գյուղացիների ու գյուղատնտեսական բան-
վորների շահերի համար, կը համոզե վերջիններիս՝ 1) վոր նրանց իսկա-
կան բարեկամը կոմմունիստական կուսակցությունն է միայն, այն ինչ
մյուս բոլոր կուսակցությունները, թե ագրարային ու թե սոցիալ-դեմոկրա-
տական, չնայած իրենց դեմագոգիական ֆրազներին, ձգտում են նրանց խա-
բելու միայն և իրապես ծառայում են խոշոր կալվածատերերին ու կապի-
տալիստներին, 2) վոր կապիտալիստական հասարակարգի գոյության ժա-
մանակ անհնարին է բանվորների ու աղքատ գյուղացիների վիճակը վերջ-
նականապես բարվոքել։

5) Կոմինտերնը իր կոնկրետ մարտական պահանջները պետք է հրա-
պարակ մղե՝ յելնելով կախման ու ստրկացման այն ձևերից, վորոնք նկատ-
վում են աղքատ ու միջակ գյուղացիների և կալվածատերերի հարաբերու-
թյունների ժամանակ, ինչպես և հարմարվելով առանձին շերտերի շահերին։

Գաղութային յերկրներում, վորոնք ունեն բնիկ ճնշված գյուղացիու-
թյուն, ազգային ազատագրական կռիվը մղում է կամ ամբողջ բնակչու-
թյունը միասին, ինչպես որինակ՝ Թյուրքիայում, կամ ճնշված գյուղացիու-
թյունն, ինչպես, որինակ, Հնդկաստանում։ Առանձին դեպքում ճնշված գյու-
ղացիության՝ կալվածատերերի դեմ մղելիք կռիվը անխուսափելիորեն կսկ-
վի ազատագրական կռվի հաղթական ավարտից հետո։ Մյուս դեպքում, յերբ
կալվածատեր ֆեոդալները դաշնակցած են լինում իմպերիալիստական ավա-
զակների հետ, ճնշված գյուղացիների սոցիալական կռիվը նույնանում է
ազգային ազատագրական կռվի հետ։ Այն յերկրներում, վորտեղ դեռ ևս
ֆեոդալիզմի հզոր մնացորդներ են նկատվում գյուղում, վորտեղ բուրժուա-
կան հեղափոխությունը դեռ չի ավարտված, վորտեղ խոշոր հողատիրու-
թյունը դեռ կապված է ֆեոդալական արտոնությունների հետ, այնտեղ այն
արտոնությունները պետք է վերջանան, վոչնչանան հողի համար մղվող
կռվի պրոցեսի ընթացքում, մի կռվի, վոր տվյալ դեպքում վճռական նշա-
նակություն ունի։

6) Բոլոր յերկրներում, վորտեղ գոյություն ունի այս բառի իսկական
իմաստով գյուղատնտեսական պրոլետարիատ, այս շերտին վիճակված է գյու-
ղում տեղի ունեցող հեղափոխական շարժման կարևորագույն գործոնը հան-
դիսանալ։ Սոցիալ դեմոկրատների հակառակ, վորոնք գյուղատնտեսական
մարտնչող պրոլետարիատի վրա հարձակվում են թիկունքից, կոմմունիստա-
կան կուսակցությունը ոժանդակում, կազմակերպում և խորացնում է
գյուղատնտեսական պրոլետարիատի կռիվը, վոր վերջինս մղում է իր տըն-
տեսական, սոցիալական ու քաղաքական դրությունը բարվոքելու համար։
Գյուղատնտեսական պրոլետարիատը հեղափոխականացնելու նպատակով,
ինչպես և նրան հանուն պրոլետարիատի դիկտատուրայի մղվող կռվի հա-
մար կրթելու նպատակով, դիկտատուրայի, վորը միայն ընդունակ է գյու-
ղական պրոլետարիատին ազատագրելու շահագործումից, կոմմունիստական
կուսակցությունը ոժանդակում է գյուղատնտեսական պրոլետարիատին այն
կռվում, վոր սա մղում է իրական աշխատավարձը բարձրացնելու, աշխա-
տանքի ընդհանուր պայմանները լավացնելու, ինչպես և բնակարանային ու
կուլտուրական պայմանները բարվոքելու համար, այլ և ձեռք բերելու հա-
մար ժողովների ու միությունների, արհեստակցական շարժման, գործադուլ-

ների, մամուլի և այլն լիակատար ազատություն, գոնե այն իրավունքների ծավալով, վոր այս տեսակետից ունի արդյունաբերական պրոլետարիատը։ Այս իրավունքներն են տարվա համար միջին ութ ժամյա բանվորական օր, դժբախտ դեպքերից ապահովագրում, ապահովագրում ծերության դեպքում, յերեխաների վարձու աշխատանքի արգելում, արհեստագիտական ու այլ կրթության զարգացում, սոցիալական օրենսդրության տարածումը նրանց վրա գոնե այն չափերով, վոր գոյություն ունի պրոլետարիատի համար։ Մինչև այն ժամանակը, յերբ սոցիալական հեղափոխությունը վերջնականապես կազատե գյուղացիներին նրանց արդի ստրկացումից, կոմմունիստական կուսակցությունը կռվում է աղքատ ու միջակ գյուղացիության՝ կապիտալի ձեռքով շահագործվելու բոլոր ձևերի դեմ, փոխատուական (ссудный) ու վաշխառուական կապիտալի շահագործման դեմ վորը աղքատ գյուղացիներին ծառայագրական կախման վիճակի մեջ է դնում այս կապիտալներից, առևտրային ու սպեկուլյատիվ կապիտալի շահագործման դեմ, վորը եժան ու մեծաքանակ գնում է աղքատ գյուղացիների արտադրական աննշան ավելցուկները և թանգ գնով ծախում է քաղաքային պրոլետարիատին։ Կոմմունիստական կուսակցությունը կողմնակից է, վոր այս սպեկուլյատիվ, մակաբուծային կապիտալը վերանա, և անմիջական կապ հաստատվի մանր գյուղացիների կոոպերատիվների ու քաղաքային պրոլետարիատի սպառողական ընկերությունների միջև։ Կուսակցությունը հրապարակ է ելնում արդյունաբերական կապիտալի շահագործման դեմ, վորը օգտագործում է իր մոնոպոլ դիրքը՝ արդյունաբերական արդյունքների գները արհեստական կերպով ուռցնելու ու բարձրացնելու նպատակով, ուստի կոմկուսակցությունը կռվում է հանուն այն բանի, վոր աղքատ գյուղացիներին եժան գնով մատակարարվեն արտադրության միջոցներ (արհեստական պարարտանյութեր, մեքենաներ և այլն)։ Այս գործում պետք է օգնեն ֆաբգործարկոմները՝ գների վրա վերահսկողություն սահմանելով։

8) Սակայն ամենածանր շահագործման յենթարկվում է սակավահող բնակչությունը բոլոր վոչ-գաղութային յերկիրներում՝ շնորհիվ այն հանգամանքի, վոր գոյություն ունի խոշոր կալվածատերերի հողային մասնավոր սեփականություն։ Վորպեսզի լրիվին օգտագործեն իրենց բանվորական ուժը և ընդհանրապես հնարավորություն ունենան իրենց գոյությունը քարշ տալու, սակավահող գյուղացիները հարկադրված են բանելու խոշոր կալվածատերերի մոտ մուրացիկի վարձով, և կամ վարձակալելու կամ հողը գնելու այնքան բարձր գներով, վոր աշխատավոր գյուղացիության աշխատավարձի մի մասը հափշտակվում և մնում է խոշոր կալվածատերերի գրպաններում։ Հողի պակասությունը հարկադրում է սակավահող գյուղացիներին՝ վիզն առնել միջնադարյան ծառայագրության (кабала) լուծը, մի ծառայագրություն, վոր ժամանակակից ձևեր է ընդունում իրոք։ Ուստի և կոմմունիստական կուսակցությունը կռվում է այն բանի համար, վոր բռնագրավվի հողը ամբողջ կահույքի (инвентарь) հետ միասին և այս հողը օգտագործելու տրվի նրանց, ովքեր իրապես մշակում են այն։

9) Իշխող դասակարգերը փորձում են բուրժուական հողային ռեֆորմի միջոցով, այն է՝ հողը գյուղացիության ամենից ազդեցիկ մասի մեջ բաշխելու միջոցով՝ գյուղացիական շարժումը զրկել հեղափոխական բնույթից։ Յերբեմն նրանց հաջողվում է ժամանակավորապես թուլացնել հեղափոխական շարժումը։ Սակայն ամեն մի բուրժուական հողային ռեֆորմ ընդհարվում է արգելքների, վոր նրա դեմ է հանում ինքը, կապիտալիզմը։ Հողի վըճարովի (платной) բաշխումը հնարավոր է միայն այն մարդկանց միջև, վորոնք արդեն ունեն արտադրության միջոցներ՝ ստացած հողը մշակելու համար։ Բուրժուական ագրարային ռեֆորմը բացարձակապես վոչինչ չի կարող տալ զուտ պրոլետարական ու կիսապրոլետարական տարրերին։ Անխուսափելի կերպով ծանր պայմաններ են բաժին ընկնում այն անհատներին, վորոնք բուրժուական բաշխման ժամանակ հող են ստացել։ Հիշյալ պայմաններն, իրապես չեն բարվոքում նրանց դրությունը, այլ աշխատավոր գյուղացիներին ծառայագրության են միայն մատնում։—Նույն այս պայմանները կարծես թե ծառայում են իբրև հիմք՝ հեղափոխական շարժումը շարունակելու համար, այլև սրելու համար հակասությունները հարուստ ու աղքատ գյուղացիների միջև, ինչպես և գյուղատնտեսական բանվորների միջև, վորոնք հող չեն ստացել և խոշոր կալվածների բաժանքի շնորհիվ, զրկվել են դատումից (заработок)։

10) Գյուղի բոլոր աշխատավորներին վերջնական ազատագրություն կը բերե պրոլետարական հեղափոխությունը միայն, վորի հետևանք կլինի խոշոր հողատիրության ու սրա ամբողջ կահույքի անվճար ստացումը (отчуждение), բայց վորը աշխատավոր գյուղացիությանը կը թողնե սրան պատկանող հողային ֆոնդը, կը վերացնե բոլոր նեղությունները, հողային պարտքերը, արենդի վարձը (арендная плата) և ֆեոդալան սահմանումները, և ամեն կերպ կօգնե ու կը պաշտպանե աշխատավոր գյուղացիներին։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ X ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. Г. Зиновьев.—II конгресс Коммунистического Интернационала, его значение.
2. Г. Зиновьев.—Наболевшие вопросы международнаго рабочего движения.
3. Г. Зиновьев.—Тактика Коминтерна.
4. Г. Зиновьев.—Главные этапы развития Коммунистического Интернационала.
5. М. Павлович.—Вопросы колониальной и национальной политики и III Интернационал.
6. К. Радек.— Развитие мировой революции тактика коммунистической партии в борьбе за диктатуру пролетариата.
7. N. Ленин.—Детская балезьн левизны в коммунизме.
8. Л. Троцкий.—Новый этап.
9. Л. Троцкий.—Мировая революция и IV конгресс Коммун. Интернационала (Доклад на X с,езд Советов).
10. IV конгресс Коминтерна. Доклады:
    1) Ленин.—Пять лет Российской революции и перспективы мировой революции.
    2) Троцкий.—Русская революция.
    3) Радек.—Наступление Капитала
    4) Бордига.—Фашизм.
11. Постановления IV конгресса Коминтерна.
12. Г. Сандомирский.—Фашизм.
13. „Коммунистический Интернационал.“—Орган Коминтерна.

ԳԼՈՒԽ XI

ՌԿԿ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. ԻՆՉ ԳԼԽԱՎՈՐ ԵՏԱՊՆԵՐ ԿԱՄ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՍԱՀՄԱՆԵԼ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Յերեք այսպիսի ետապներ կամ շրջաններ կարելի յե սահմանել:

Առաջին ժամանակաշրջան.—Անցյալ դարի 70-ական թվականների յերկրորդ կեսից մինչև 1903 թվականը—կուսակցության առաջ գալու և ձևավորվելու ժամանակաշրջանն է, առաջին ինքնուրույն բանվորական խմբակների յերևան գալուց սկսած՝ մինչև ծագումը համառուսաստանյան քաղաքական կազմակերպության, որ ուներ իր որոշ ծրագիրը, տակտիկան ու կանոնադրությունը: Այս շրջանն ընթանում է ռուսական տնտեսականության (ЭКОНОМИКА) այն անցման ծանր պայմաններում, որ տանում եր ճորտատիրությունից դեպի զարգացած կապիտալիզմ:

Յերկրորդ շրջան.—Յերբ ծնունդ առած ու ձևավորված կուսակցությունը կազմակերպելով իր շարքերում ու իր շուրջը պրոլետարական լայն մասսաներ և կռվելով թշնամի դասակարգերի ու կուսակցությունների հետ, կանխապատրաստվում է և ամբողջ բանվոր դասակարգն էլ կանխապատրաստում կուսակցության տակտիկական հիմնական խնդրին, որ եր քաղաքական պետական իշխանությունը նվաճելը և պրոլետարիատի դիկտատուրա սահմանելը:

Այս ժամանակաշրջանը մեր կուսակցության մեջ շարունակվում է 1903 թվականից մինչև 1917 թիվը և Ռուսաստանի տնտեսականության մեջ համապատասխանում է կապիտալիզմի վերջնականապես ու լրիվին յերևան յեկած տիրապետությանը, որը ցարական միապետական հասարակարգի ուժերն ու ապարատն օգտագործում եր բուրժուազիայի դրությունն ամրապնդելու համար:

Հենց այս ժամանակաշրջանի սկզբին, 1903 թվականին է ընկնում բոլշևիզմի, իբրև առանձին քաղաքական հոսանքի և իբրև հատուկ քաղաքական կուսակցության ծագումը: Բոլշևիզմն սկիզբն է առնում մի կողմից հիմնվելով հեղափոխական մարքսիզմի թեորիայի վրա (որա հիմնադիրների—Կ. Մարքսի ու Ֆ. Ենգելսի իսկական ուսմունքների համաձայն), իսկ մյուս կողմից՝ 1905 թվականի հասունացած ու վերահաս հեղափոխության, այլ և միաժամանակ այն առաջ է գալիս Ռուսաստանի այն ժամանակվա բանվոր դասակարգի բորբոքված կռվի պայմաններում:

Այս հիմունքից ծագելով և լինելով ամենահեղափոխական թեորիայի ու բանվոր դասակարգի ամենահեղափոխական պրակտիկայի միավորությունը, բոլշևիզմը հետագա 15 տարում (1903—1917) այնպիսի մի պատ-

մություն ունեցավ, որ իր փորձի հարստությամբ հավասարը չունի աշխարհում: Ոչ մի ուրիշ յերկրում ոչ մի հոսանք, նույնիսկ մոտավորապես, այնքան շատ բան չի կրել ու արել կենդանի հեղափոխական փորձի տեսակետից, անլեգալ ու լեգալ, խաղաղ ու հուզումնալից, ստորերկրյա ու բացահայտ, խմբակային ու մասսայական, պարլամենտական ու տեռորիստական շարժման տարբեր տեսակների բազմազանության ու արագորեն իրար հաջորդելու տեսակետից: Մասնավորապես, դեռ այս ժամանակաշրջանի հենց սկզբին արդեն, 1905 թվականի առաջին հեղափոխական կանխապատրաստման տարիներում, յերեք հիմնական դասակարգերի ու յերեք գլխավոր քաղաքական հոսանքների ներկայացուցիչները (լիբերալ բուրժուական հոսանքը՝ հանձինս կադետների ու հոկտեմբերյանների, մանր բուրժուական-դեմոկրատականը՝ հանձինս մենշևիկների ու ես-երների ու պրոլետարական—հեղափոխականը՝ ի դեմս բոլշևիկների) ծրագրի ու տակտիկայի խնդիրների համար մղվող ամենակատաղի կռվով կանխում և նախապատրաստում եյին ինչպես 1905—1906 տարիների, այնպես և 1917—1920 տարիների դասակարգային գալիք բացահայտ կռիվը:

Յերրորդ շրջան.—1917 թվի փետրվար—մարտի հեղափոխությունից մինչև այժմ,—այն շրջանն է, յերբ տեղի յե ունեցել անմիջական կռիվ իշխանության համար, նվաճվել է իշխանությունը և կռիվ է մղվել պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելու համար, այլ և յեղել է շինարարություն անցման շրջանի, որ ընկնում է մինչ հոկտեմբերյան բուրժուական կալվածատիրական հասարակության ու ապագա կոմունիստական հասարակության միջև:

Այս յերրորդ շրջանն ընթանում է կապիտալիզմի սկսած ու սաստկացող քայքայման պայմաններում, մի քայքայում, որ 1914—1918 թվականների իմպերիալիստական համաշխարհային սպանդանոցի հետևանք եր:

Այս վերջին, յերրորդ ետապն իր հերթին կարելի յե բաժանել յերկու շրջանի, 1917 թվականից մինչև 1921 թվականը—մի շրջան, յերբ տեղի յե ունենում կռիվն իշխանության համար և պրոլետարիատի դիկտատուրան ամրապնդելու համար՝ ներքին հակահեղափոխության—ոտարերկրյա իմպերիալիստների դեմ մղած անընդհատ ու ամենակատաղի պատերազմների պայմաններում. և յերկրորդ շրջան, որ սկսվում է 1921 թվականից: Այս շրջանում կուսակցությունը հաղթական կերպով ավարտում է բացահայտ պատերազմների եջը և դիմում է ունեցած դադարից ոգտվելու աշխատանքին տնտեսական ու կուլտուրական լայն վերածնության, ու խորհրդային հանրապետության շինարարության համար՝ հենվելով նոր տնտեսական քաղաքականության սկզբունքների վրա, միաժամանակ շարունակելով ավելի ու ավելի սաստիկ ազդել մյուս յերկրների սոցիալիստական հեղափոխության զարգացման և կանխապատրաստման գործի վրա:

Չնայած այս յերեք շրջանների արտաքին ու ներքին պայմանների բոլոր տարբերությանը,—70-ական թվականների կեսից մինչև մեր օրերը,—չընայած այն հանգամանքին, որ շատ մեծ փոփոխություններ են կատարվել կարևորագույն հարցերի մեջ, որոնք վերաբերում են հին հերթական խնդիրներին, տակտիկային ու կազմակերպությանը, մեր կուսակցությունը յուր ամբողջ պատմության ընթացքում անփոփոխ պահում է նախ՝ արդի, գիտական կոմունիզմի համար մղված կռիվը, իբրև վերջնական նպատակ և

յերկրորդ՝ իշխանության հեղափոխական նվաճման, պրոլետարիատի հեգեմոնիայի (գերիշխանություն, ղեկավարություն, գլխավորությունը) ու պրոլետարիատի դիկտատուրայի անհրաժեշտության գաղափարը, մի դիկտատուրա, վոր գոյություն ե ունենում կապիտալիզմից դեպի կոմմունիզմ տանող անցման շրջանում։

Այս գաղափարները, այն ե՝ հեղափոխության գաղափարը, այլև գաղափարը պրոլետարիատի հեգեմոնիայի ու դիկտատուրայի, այն պրոլետարիատի, վոր ղեկավարում ե յուր մերձավոր հեղափոխական դաշնակցին — գյուղացիությանը — և սրան տանում ե յուր յետևից, այս գաղափարներն առանձնապես կազմում են բոլշևիզմի ու կոմմունիզմի բնորոշ հայացքները, վորոնցով մեր հոսանքը տարբերվում ե համաշխարհային մենշևիզմից ու համաձայնողականություններից։ Այս գաղափարների ներկայությունը մի քանի տասնյակ տարիների ընթացքում ու սրանց համար մղած կռիվը թույլ ե տալիս մեզ ասելու, վոր մեր կուսակցությունը յուր պատմության բոլոր շրջաններում ներքին միություն ե ունեցել, չնայած տնտեսական կացության, քաղաքական տակտիկայի ու կուսակցության կազմակերպության վիթխարի տարբերություններին։

2. Ի՞ՆՉ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Ռուսաստանի հեղափոխական շարժումը ծագել եր և զարգանում եր մեր կուսակցության ծագումից շատ առաջ, դեռևս 19-րդ դարի վերջերից (Նովիկով, Ռադիշչև) և մանավանդ 19-րդ դարի առաջին քառորդում (Դեկաբրիստները և ցարիզմի դեմ յելած նրանց զինվորական ապստամբությունը 1915թ. դեկտեմբերի 14-ին)։ Սակայն չնայած այն հանգամանքին, վոր 19-րդ դարի կալվածատիրական-ցարական Ռուսաստանի քաղաքական պայմաններն ու գիշատիչ, բարբարոսական կապիտալիզմի աճումը դրդում եյին այն ժամանակվա առաջավոր մարդկանց՝ կռվի յելնելու ստրկացման ու շահագործման ծանր լծի դեմ, այնուամենայնիվ այն ժամանակ լայն հեղափոխական ու քաղաքական շարժում չեր առաջանում, և բացի սրանից՝ հեղափոխական շարժումը մեր կուսակցության կազմվելուց առաջ չուներ ներկայիս պրոլետարական բնույթը։

Ռուսաստանում հեղափոխական շարժումը սկզբում հենվում եր ազնվականական ինտելլիգենցիայի վրա, ինչպես բանակում, այնպես և բանակից դուրս, իսկ հետո հենվեց ավելի դեմոկրատիկ ինտելլիգենցիայի վրա — ռազնոչինեցների, ուսանողների և այլն վրա (60-ական թվականներից սկսած). սակայն հեղափոխական շարժումը դեռ չեր շաղկապված մեր ժամանակի հիմնական հեղափոխական դասակարգի — պրոլետարիատի հետ։ Դեռ ավելին. 60—80 թվականների ինտելլիգենցիայի մեջ գերակշռող նարոդնիկական հոսանքը ժխտում եր բանվոր դասակարգի ու սրա կռվի ինքնուրույն նշանակությունը։ Նարոդնիկներն ասում եյին, վոր Ռուսաստանում կապիտալիզմ չի լինելու, վոր կապիտալիզմը պատվաստվում և զարգանում ե արհեստական կերպով, վոր ամբողջ ուշադրությունը պետք ե դարձնել գյուղացիության ու գյուղի վրա և վոր դեպի սոցիալիզմ տանում են վոչ թե պրոլետարիատն ու գործարանը, այլ գյուղը, հողային համայնքն ու արտելները։

Այսպիսով նարոդնիկների սոցիալիզմը գյուղացիական, մանր բուրժուական և ուտոպիստական (վոչ-գիտական) սոցիալիզմն եր։ Չնայած ցարական ինքնակալության դարհուրելի ճնշմանը և կալվածատերերի ու կապիտալիստների վայրենի նախճիրներին, նարոդնիկները յերկար ժամանակ ժխտում եյին քաղաքական ազատության համար մղվող կռվի անհրաժեշտությունն ու սրա համար հատուկ քաղաքական կուսակցություն ստեղծելու կարիքը, և անտարբեր կամ բացասաբար եյին վերաբերվում բանվորական գործադուլներին՝ այս գործադուլներն ու քաղաքական կռիվը համարելով շեղում հիմնական խնդրից, վորը նրանց կարծիքով գյուղացիության լուսավորումն ու նրա վիճակի բարվոքումն եր՝ զուտ տնտեսական հողի վրա։

Սակայն գյուղացիությունը, չնայած նարոդնիկների բազմաթիվ բոլոր փորձերին, վորոնցով նրանք աշխատում եյին լուսավորել նրան և բարձրացնել, վոտքի հանել՝ կալվածատերերից ու ցարերից ազատագրվելու համար. իր ճնշող մեծամասնությամբ հեռու չեր մնում հեղափոխական շարժումից, կաշկանդված լինելով կալվածատիրական — վոստիկանական հասարակարգի յերկաթյա գելարանի մեջ, ուստի և նարոդնիկների բոլոր ջանքերը, վորով նրանք փորձում եյին հեղափոխությունն առաջ տանել առանց բանվոր դասակարգի՝ հենվելով միայն գյուղացիության ու գյուղի վրա, մնացին լիովին անհետևանք և խորտակվեցին։

Ինչ վերաբերվում ե իրեն, բանվոր դասակարգին, ապա Ռուսաստանի պրոլետարիատն սկզբում դեռ փոքրաթիվ, չափազանց փոշիացած ու անկազմակերպ լինելով և գտնվելով վոստիկանական-կալվածատիրական վայրենի կամայականության ու ռուսական բարբարոսական, գիշատիչ կապիտալի լծի տակ, յերկար ժամանակ չեր կարողանում սեփական ինքնուրույն հայացքներ ու կռվի ուղիներ մշակել իր համար։ Հուսակտուր՝ շահագործման ու կամայականության ազդեցության տակ խռովություններ ու գործադուլներ սարքելով, վորոնք սովորաբար տարերային եյին լինում, պրոլետարիատը, սկզբնական շրջաններում, նույնպես իր վորոշ տուրքն եր տալիս ինտելլիգենցիայի նարոդնիկական ուտոպիկ հայացքներին ու սխալներին և միանգամից չեր կարողանում դուրս գալ ու վոտ դնել ինքնուրույն պրոլետարական ու նորագույն գիտական սոցիալիստական շարժման ուղին։

Վորչափ աճում եր ռուսական կապիտալիզմը և զարգանում գործադուլային շարժումը վոստիկանական բռնապետության ու ռուսական գիշատիչ բուրժուազիայի անտանելիորեն ծանր պայմաններում, այնչափով ել միայն առաջավոր պրոլետարները սկսում են ազատագրվել «տնարույս» ռուսական սոցիալիզմի սխալներից ու նախապաշարումներից և հարթում են իրենց սեփական ճանապարհը՝ արդի գիտական սոցիալիզմի հիմնական հայացքներն ընդունելով և յուրացնելով հեղափոխական-մարքսիստական ինտելլիգենցիայի անդրանիկ ներկայացուցիչներից։ Ռուս պրոլետարներին այսպիսի հեղափոխական-մարքսիստական լուսավորություն ու դաստիարակություն տալու գործում, հետևաբար և մեր կուսակցությունը կազմակերպելու գործում հատկապես մեծ դեր ե կատարել «Աշխատանքի Ազատագրություն» խմբակը։

3. ԻՆՉՈ՞Ւ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ՀԱՇՎՈՒՄ ԵՆՔ 70-ական ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԵՍԵՐԻՑ

Վորովհետև առաջին անգամ 70-ական թվականների կեսին է, վոր ըսկսում են Ռուսաստանում գոյանալ անկախ ստորերկրյա բանվորական կազմակերպություններ (սրանցից գլխավորներն են՝ «Ռուսական բանվորների հյուսիսային Միությունը» Պետերբուրգում 1878-թվականին՝ գլուխ ունենալով ատաղձագործ Ստեփան Խալտուրինին ու փականագործ Օբնորսկուն և «Հարավ-ռուսական բանվորական Միությունը» Օդեսսայում, 1875թ.) վորոնք իրենց վերջնական նպատակ եյին դրել կոմմունիզմը, իսկ մերձագույն խնդիր՝ կռիվ ցարական ինքնակալության դեմ՝ հանուն քաղաքական ազատության և հանուն կապիտալի դեմ մղվող տնտեսական, գործադուլային կռվի աջակցության, իսկ նրանց տակտիկան եր հրապարակ չելած բանվորական մասսայական շարժումը:

70-ական թվականներն ու 80-ական թվականների սկիզբը Ռուսաստանի բանվորական շարժման պատմության մեջ աչքի յեն ընկնում իբրև սկիզբ բանվորների տնտեսական գործադուլների մի շերտի, վորոնք տեղի յեն ունենում Պիտերի, Մոսկվայի ու այլ քաղաքների խոշորագույն ձեռնարկություններում: Այս թվականներն աչքի չեն ընկնում նաև նրանով, վոր յերևան են բերում ինքնուրույն բանվորական մասսայական շարժումներ՝ նույն հողի վրա: 1870 թվականին, մայիսին, բռնկվում է գործադուլ Պետրոգրադի Նևսկի բամբակամանարանում, վորի պահանջն եր աշխատավարձի բարձրացումը: 1872 թվականին գործադուլներ են լինում Պիտերում-Նարվայում, Կրենգոլմսկայա վիթխարի մանուֆակտուրայի մեջ: 1874 թ. ավելի կամ պակաս չափով խոշոր գործադուլներ՝ Մոսկվայում: 1875 թվին՝ Յուզի գործարանում ու Օրենբուրգի յերկաթուղու վրա: 1876 թվականին՝ 500 մանողների գործադուլը Օրեխով-Զույևում (Նիկոլսկայա ֆաբրիկա): 1878 թվին՝ գործադուլ Պիտերի Նոր բամբակամանարանում և այլն: 1882 թվականին արդյունաբերական առևտրի կրիզիսի հետևանքով խոշոր գործադուլներ են լինում Պետրոգրադում, Նարվայում, Պերմում, Իվանովո-Վոզնեսենսկում ու այլ քաղաքներում: Իր կազմակերպվածությամբ ու հաստատությամբ հատկապես աչքի ընկավ Մորոզովյան գործադուլը՝ Օրեխով-Զույևում, 1885 թվին: Այս գործադուլների ժամանակ, բանվորներն այլևս խնդիրներով չեն դիմում բարձր իշխանավորներին ու ձեռնարկությունների վարչություններին, ինչպես անում եյին առաջ, այլ վոտք են դնում ուղղակի ու գիտակցական կռվի ուղին, վորին ցարիզմը պատասխանում է մասսայական ձերբակալություններով, ծեծերով ու գործադուլավորների նկատմամբ գործադրված զանազան ճնշումներով:

Մյուս կողմից՝ Ռուսաստանի այս մասսայական բանվորական շարժումը, վոր տեղի յեր ունենում 70-ական թվականների կեսին, զուգադիպում է այն մոմենտին, յերբ արևմուտքում կազմվում եյին քաղաքական մարքսիստական բանվորական կուսակցություններ (Գերմանիայում՝ 1875 թվին), վորոնց գաղափարները Ռուսաստանում ագահորեն ընդունում և յուրացնում եյին առաջավոր պրոլետարներն ու անդրանիկ ինքնուրույն բանվորական

կազմակերպություններն ու խմբակները (մասնավորապես Ռուսական բանվորների Հյուսիսային Միությունը):

Վերջապես 70-ական թվականների վերջին վերջնականապես պարզվեց, վոր ռուսական ինտելիգենցիայի լայն շրջանների այն հույսերը, վոր դրել եյին գյուղի ու համայնքի վրա, իբրև սոցիալիզմի պատվանդանի ու հեղափոխական շարժման օջախի վրա,— խորտակվեցին: Ուստի և նարոդնիկական ինտելիգենցիայի ավելի առաջավոր մասն ազատագրվելով գյուղացիական ուտոպիական սոցիալիզմի նախապաշարումներից, սլացավ դեպի ցարիզմի դեմ մղվող կռվի ուղին, վոր կատարվում եր հանուն քաղաքական ազատության՝ համարելով վերջինս սոցիալիզմի հաջողության պայման: Այդ ինտելիգենցիան գնաց աշխատելու արդյունաբերական պրոլետարիատի միջավայրում, վորին այժմ համարում են իսկապես հեղափոխական ու առաջավոր դասակարգ և դիմեց ուսումնասիրելու և յուրացնելու գաղափարները նորագույն գիտական պրոլետարական սոցիալիզմի, վոր հիմնված է Կ. Մարքսի ուսմունքի վրա:

Այսպես, յերեք կողմից հող եր կանխապատրաստվում և հիմք եր դըրվում 70-ական թվականների կեսերից Ռուսաստանում պրոլետարական հեղափոխական կուսակցության առաջանալու համար:

4. Ի՞ՆՉ ԳՈՐԾՈՒՆԵՅՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԴԵՐ ՈՒՆԵՑԱՎ «ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿԸ

Տարբերվելով 70-ական թվականների զուտ բանվորական անդրանիկ կազմակերպություններից, վորոնք դեռ գտնվում եյին նարոդնիկների հզոր ազդեցության ներքո և արագ քայքայվում, «Աշխատանքի ազատագրություն» խմբակը հիմնվելով Շվեյցարիայում 1883 թվականին, առաջին ռուսական սոցիալ դեմոկրատական կազմակերպությունը յեղավ, վոր վճռական կերպով հրաժարվեց նարոդնիկական սոցիալիզմի հիմնական թեզիսներից և իրեն նպատակ դրեց նախ՝ արդի գիտական սոցիալիզմի, այսինքն հեղափոխական մարքսիզմի գաղափարների, գլխավորապես գրական, պրոպագանդան ընդդեմ անարխիզմի ու նարոդնիկության և յերկրորդ՝ բանվորական սոցիալիստական կուսակցության տարրերի կանխապատրաստումը Ռուսաստանում, հանուն քաղաքական ազատության կռիվ մղելու համար:

Խմբակի հիմնադիրներն ու անդամներն եյին՝ հին հեղափոխական նարոդնիկներ՝ Գ. Վ. Պլեխանովը, Վ. Զասուլիչը, Պ. Աքսելրոդը, Լ. Դեյչը ու Վ. Իգնատովը:

Խմբակը հեղափոխական տակտիկայի ասպարեզում, ինչպես և ծրագրի հաստատակամությամբ անց եր կացնում մարքսիստական հիմնական թեզիսները, թե բանվորների ազատագրությունը պետք է լինի հենց իրենց, բանվորների գործը, թե գալիք հեղափոխության մեջ ղեկավար դերը պետք է կատարի բանվոր դասակարգը և թե կռվի գլխավոր միջոցը մասսայական շարժումն է:

Խմբակը մշակեց և հրապարակեց իր միջի այլոց ռուսական սոցիալ դեմոկրատների ծրագրի յերկու նախագիծ (առաջինը հրատարակված 1885 թվին և յերկրորդը 1888թ.):

«Աշխատանքի ազատագրություն» խմբակը մեծ զարկ է տալիս այն գոր-

ծին, վոր Ռուսաստանում կազմվեն ու զարգանան մի շարք անդրանիկ մարքսիստական ու սոցիալ դեմոկրատական խմբակներ ու կազմակերպություններ, վորոնք թվով սակավամարդ եյին և գլխավորապես զբաղվում եյին ինքնակրթությամբ և նոր գաղափարները քարոզելով աշխատող պրոլետարիատի ու հեղափոխական ինտելիգենցիայի մեջ։

Ռուսաստանում մարքսիստական խմբակների յերևան գալն ու լայն տարածվելն արտահայտությունն եր մի կողմից այն բանի, վոր նախկին նարոդնիկությունը մեծ թափով կործանվում եր. իսկ մյուս կողմից աճում եր մասսայական բանվորական շարժումը՝ 80-ական թվականների (1882-87) արդյունաբերական ճգնաժամի ու քաղաքական ռեակցիայի պայմաններում։ 70-ական թվականների վերջին ու 80-ական թվականների սկզբին հենց ինքը, գյուղից ու համայնքից հուսախաբված հեղափոխական նարոդնիկությունը, ի դեմս «Ժողովրդական Ազատության» (Народная Воля) կուսակցության՝ վոտք է դնում տեռորիստական ակտերով ու քաղաքական դավադրություններով ցարիզմի դեմ մղվող հերոսական կռվի ուղին, սակայն ընկնում է այս անհավասար կռվում՝ չունենալով ակտիվ նեցուկներ այն ժամանակվա պրոլետարիատի ու գյուղացիության լայն մասսաների մեջ։

Չնայած այն հանգամանքին, վոր նարոդովոլեցները հաջող կերպով պատժեցին սպանելով Ալեքսանդր II-ին, այնուամենայնիվ «Նարոդնայա Վոլյա» կուսակցության դաժան բնաջնջումը ցարիզմի ձեռքով,—այլև այս կազմակերպության հետագա քայքայումն ավելի սաստիկ թափով մղում եյին առաջավոր պրոլետարներին՝ հեղափոխական մարքսիզմն ուսումնասիրելու և յուրացնելու ուղին և դրդում եյին կանխապատրաստելու այն կռիվը, վոր կատարվելու յեր մասսայական բանվորական շարժման միջոցով և վորի գլուխ եր անցել պրոլետարիատի հեղափոխական կուսակցությունը։

80-ական թվականների առաջին մարքսիստական խմբակները շատ փոքր եյին, թույլ եյին կապված բանվորների ու բանվորական շարժումների հետ, մի շարժում վորը, 80-ական թվականներին դեռևս տարերային անկազմակերպ բնույթ եր կրում։ Սակայն և այնպես այս խմբակները սաղմերն ու տարրերն եյին արդեն ապագա պրոլետարական հեղափոխական կուսակցության, վորը 80-ական թվականների սկզբից ու մինչև 90-ական թվականների վերջը, Վլադիմիր Իլյիչի արտահայտությամբ ասելով, ապրում է իր արգանդային գոյության ու զարգացման պրոցեսը։ 80-ական թվականների մասսայական բանվորական շարժման թույլ թափն ու դանդաղ ընթացքը արդյունաբերական ճգնաժամի ու ագրարային կրիզիսի (հացահատիկների գների անկում) պայմաններում կասեցնում եյին կուսակցության կազմակերպումն ու վերջինս հետաձգում մինչև 90-ական թվականները, վորոնց սկիզբը Ռուսաստանում նշանավոր յեղավ ամենասաստիկ սովով (1890-1892 թ. թ.) ու ռուսական ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության կրիզիսով, վորի հետևանքը յեղան համատարած տարերային բանվորական հուզումներն ու գործադուլները, վորոնց նպատակն եր կռվել աշխատավարձի ցածացման ու ընդհանրապես բանվորների գոյության պայմանների վատթարացման դեմ։

5. Ի՞ՆՉ ԲԵՐԻՆ 90-ական ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1891-1892 թվականների դաժան սովը հարված հասցրեց ռուսական կապիտալիզմին և նրա հետևանքը յեղավ արդյունաբերական կրիզիսն ու գործազրկության աճումը, բանվորական մասսաների դրության վատացումն ու մասսայական գործադուլային շարժման մակընթացությունը, վորը իր ընդարձակությամբ դեռ նմանը չեր ունեցել Ռուսաստանում։ Մինչդեռ 1881-ից մինչև 1886 թվականն ընկնող վեցամյակի ընթացքում յեղել է 40 գործադուլ, 80,000 դուլարարներով. 1889 ից մինչև 1895 թվականն ընկած վեցամյակում դուլարարների թիվը 450,000-ից ավելի չե, ընդվորում 1896-97 թվականներին գործադուլներն ընդգրկել եյին 170,000 մարդուց ավելի։

1892 թվականին խոշոր գործադուլներ ու ընդհարումներ լինում են Յուզովկայում, 1894 թվականին՝ մասսայական գործադուլներ ու հուզումներ Պետերբուրգում։ Հաջորդ տարին գործադուլները տարածվում են Ռուսաստանի համարյա բոլոր արդյունաբերական կենտրոններում։

Մյուս կողմից՝ 90-ական թվականների յերկրորդ կեսին, արդեն կրած կրիզիսի հետևանքով, ել ավելի սաստիկ է զարգանում արդյունաբերական կապիտալիզմը Ռուսաստանում և արագ աճում է, մանավանդ հարավում, (Դոնեցի ավազանում, Նիկոլայեվում, Բաքվում) խոշոր կապիտալիստական արդյունաբերությունը—մետաղագործական, ածխային ու նավթային արդյունաբերությունը։

Այս հողի վրա ծավալվում են ամենից առաջ և վիթխարի կերպով տարածվում մարքսիստական խմբակներն ու խմբակային աշխատանքը, այնուհետև տեղի չի ունենում այս խմբակների միավորությունը, կապ է հաստատվում բանվորական մասսայական շարժման հետ և առաջ են գալիս առաջին խոշոր սոցիալ դեմոկրատական կազմակերպությունններ Ռուսաստանում։

90-ական թվականների սկզբին մարքսիստական խմբակներ յերևան են գալիս շատ քաղաքներում, հաճախ իրարուց բոլորովին անկախ։ 1884 թվականին այսպիսի խմբակներ արդեն կային Մոսկվայում, Պետերբուրգում, Վիլնոյում, Լոձում, Վարշավայում, Ոդեսսայում, Ռոստովում, Կիևում, Կազանում, Խարկովում, Նիկոլաևում, Նիժնիյում, Իվանովո-Վոզնեսենսկում, Կովկասում, Որյոլում, Տուլայում, Յեկատերինոսլավում և այլն։ Խոշոր արդյունաբերական կենտրոններում մարքսիստական խմբակներն արդեն էլ չեն սահմանափակվում թեորիան ուսումնասիրելով ու առաջավոր բանվորների մեջ նեղ պրոպագանդա անելով, այլ վեր են ածվում այնպիսի բանվորական կազմակերպությունների, վորոնք կապված են բանվորական մասսաների հետ և ղեկավարում են վերջիններիս՝ տնտեսական հողի վրա ծագած շարժումները։

6. ԽՄԲԱԿՆԵՐԻ ՈՒ ՆԵՂ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՆ Ի՞ՆՉԸ ՓՈԽԱՐԻՆԵՑ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

90-ական թվականների մեջերքին սոցիալ դեմոկրատական խմբակներն ու խմբերը փոքրաթիվ բանվորների մեջ պրոպագանդա անելուց անցան մասսաների մեջ ագիտացիա անելուն (սկզբում ամենօրյա կարիքների ու

պահանջների հողի վրա գործելով), այլ և սկսեցին ղեկավարել մասսաների ընթացիկ ամենօրյա տնտեսական կռիվը: Այս ագիտացիան (որ սկզբում բերանացի էր, իսկ հետագայում հանդես յեկան կոչերն ու թռուցիկները, հետո լրագրերն ու բրոշյուրները) այլև լայնածավալ տնտեսական կռիվը հզոր զարկ տվին անջատ մանր խմբակներն ու տեղական սոցիալ դեմոկրատական խմբերը միացնելու և նրանց մասսայական բանվորական շարժման մեջ քաշելու գործին: Քաղաքների մեծամասնության մեջ այսպիսի միավորությունները, վորոնք յերբեմն ունենում են 1000 ու ավելի անդամներ կրում են «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միություններ» անունը(Պետերբուրգում ու Իվանովո-Վոզնեսենսկում 1895 թվին, Մոսկվայում՝ 1896 թվին, Կիևում, Խարկովում ու Յեկատերինոսլավում 1897 թվին և այլն): 1897 թվին են նմանապես կազմվում յերկու խոշոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, Բունդը (հրեյական բանվորական ընդհանրական միությունը Լեհաստանում ու Լիտվայում) ու արտասահմանյան «Ռուսական սոցիալ դեմոկրատների միությունը»: Այս կազմակերպությունների աճման ու միավորման հետևանքով, այլև համառուսական միասնական սոցիալ դեմոկրատական կուսակցություն կազմելու նպատակով գումարվում է խոշորագույն սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչների I-ին համագումարը (1898 թվի մարտի 14-ին, Մինսկ քաղաքում), վորը դնում է «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (Ռ. Ս.—Դ. Բ. Կ Р. С.—Д. Р. П.) հիմքը:

7. Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵՑ Ռ. Ս.—Դ. Բ. Կ. I ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Բացի կուսակցության անունը դնելուց, Ռ. Ս.—Դ. Բ. Կ., I համագումարը հաստատեց ու հրապարակեց «Ռ. Ս.—Դ. Բ. Կ. Մանիֆեստը», մշակեց կազմակերպչական կանոնադրությունը և ընտրեց կուսակցական կենտրոնական կոմիտե:

8. Ի՞ՆՉ ԴԵՐ ԿԱՏԱՐԵՑ I ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

I համագումարը կուսակցության հիմքը դնելով չստեղծեց և չէր էլ կարող ստեղծել կուսակցություն, իբրև համառուսական միասնական կազմակերպություն, վորը իր կենտրոնների միջոցով գործնականապես միացներ և իրապես ղեկավարեր Ռուսաստանի սոցիալ դեմոկրատական զանազան կազմակերպությունների աշխատանքը: Բանից դուրս յեկավ, վոր I համագումարի ստեղծած միավորությունը շատ խախուտ է: Նախ՝ մարտի 11-ին (24) I համագումարի բոլոր մասնակիցները ձերբակալվեցին, իսկ սրանց հետ միասին դեռ 500 անդամ էլ համագումարին մասնակցած կազմակերպություններից, իսկ այս հանգամանքը սաստիկ կերպով ավերեց գործը: Բացի այս զուտ վոստիկանական ճնշումներից, կար մի էլ ավելի լուրջ ու խոշոր պատճառ, վոր հնարավոր չէր դարձնում 1898 թվականին համառուսական հաստատուն միավորություն ու կուսակցական ղեկավար կենտրոն ստեղծելը:

Սրա պատճառն այն կատաղի ներքին քաղաքական կռիվն էր, վոր

մղում եյին իրար դեմ այն ժամանակվա սոցիալ դեմոկրատական բազմազան հոսանքներն ու խմբավորումները, վորոնք բաժանվում եյին այնպիսի թևերի, մի կողմից՝ «ծերեր» (պոլիտիկներ) կամ «Իսկրայականներ» կամ հեղափոխական մարքսիստներ, իսկ մյուս կողմից՝ յերիտասարդներ (էկոնոմիստներ) ու այսպես կոչված լեգալ մարքսիզմի կողմնակիցներ: Այս հոսանքների ու խմբավորումների կռիվն է հենց կազմում I համագումարից մինչև II համագումարը (1903 թ.) ընկած հնգամյակի բովանդակությունը:

9. Ի՞ՆՉ Է ԼԵԳԱԼ ՄԱՐՔՍԻԶՄԸ

Լեգալ մարքսիզմը մարքսիզմի բուրժուական աղավաղումն է, բանվոր դասակարգին մարքսիզմի այսպիսի ըմբռնումն պատվաստելու մի փորձ, վորի ժամանակ մարքսիզմից դուրս է նետվում սրա հեղափոխական, քաղաքական, մարտական վոգին: Իսկ այս կատարվում է նրանով, վոր բանվորական շարժումը վեր է ածվում մի կռվի, վոր մղվում է հանուն զուտ տնտեսական խնդիրների ու մասնակի ռեֆորմների:

Մեզնում, Ռուսաստանում, 90-ական թվականների յերկրորդ կեսին լեգալ մարքսիզմի ներկայացուցիչներն եյին՝ Ստրուվեն, Բուլգակովը, Տուգան-Բարանովսկին, Պրոկոպովիչը, Կուսկովան և ուրիշները, վորոնք հետագայում դարձան կադետների կուսակցության ամենանշանավոր անդամները: Ժխտելով սոցիալիստական հեղափոխությունն ու պրոլետարիատի ինքնուրույն քաղաքական կռիվը՝ սրանք ձգտում եյին ամբողջ բանվորական շարժումը Ռուսաստանում վերածելու մի տնտեսական կռվի, վոր մղվում է կապիտալիզմի շրջանակներում կատարելիք մասնակի ռեֆորմների համար: Այնուհետև նրանք ձգտում եյին բանվոր դասակարգը դարձնելու ռուսական լիբերալ բուրժուազիայի շարժման գործիք ու կցորդ (придаток):

Լեգալ մարքսիզմը մեզանում արտահայտություն էր այն բանի, ինչ վոր միջազգային սոցիալիստական շարժման մեջ կոչվում է ռեֆորմիզմ ու օպպորտունիզմ (հարմարողականություն կապիտալիզմի հանդեպ, վորին զուգընթաց է հեղափոխությունից ու հեղափոխական քաղաքականությունից հրաժարվելը):

Նարոդնիկության գաղափարական ու քաղաքական սնանկությունից հետո, բուրժուազիայի ու բուրժուական ինտելիգենցիայի միջից հետզհետե ավելի չեն անջատվում ու առաջ գալիս ցարիզմից դժգոհ տարրերը, վորոնք բուրժուական տիրապետության շահերի տեսակետից փորձում են լեգալ մարքսիզմի դրոշակի միջոցով իրենց ձեռքն առնել բանվորական մասսայական շարժումը և վերջինս զատել ու կտրել ինքնուրույն հեղափոխական—քաղաքական կուսակցությունից ու կռվից:

10. Ի՞ՆՉ ԷՐ «ԷԿՈՆՈՄԻԶՄԸ» ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Այս մի հոսանք էր սոցիալ դեմոկրատների մեջ, վորի կողմնակիցները 90-ական թվականների վերջին ու 900-ական թվականների սկզբին ասում եյին, թե ժամանակը չէ ցարական ինքնակալության դեմ նույնիսկ քաղաքական ագիտացիայի ձևով կռվելու և պնդում եյին, թե պետք է բանվորների ամենօրյա կարիքների համար մղել լոկ տնտեսական կռիվ միայն:

Կազմակերպչական խնդրում եկոնոմիստները սահմանափակվում եյին մանր խմբակներով ու տեղական գանձարկղներով, փոխանակ աշխատելու, վոր կազմվի միասնական համառուսական կենտրոնական քաղաքական կազմակերպություն։

Այսպիսի գիծ վարելով «եկոնոմիստները» սոցիալ դեմոկրատիայի գիտակցությունն ու շարժումը իջեցնում և հասցնում եյին տարերային մասսայական բանվորական շարժման մակարդակին, կախ եյին ընկնում շարժման պոչից և հենց սրանով էլ ռուսական բուրժուազիայի համար նպաստավոր դեր եյին կատարում։

90-ական թվականների վերջին եկոնոմիզմի տարածմանը քիչ չեր նպաստում այն հանգամանքը, վոր այն ժամանակ արդյունաբերությունը վերելքի ու կենդանացման շրջանի մեջ եր, գործարանները մինչև կոկորդը լցված եյին պատվերներով և մասսայական բանվորական շարժումը ընթանում եր նվազագույն դիմադրության գծով, այսինքն հանուն վարձման պայմանները բարվոքելու՝ կռիվ եյին մղում առանձին կապիտալիստների դեմ։ Այն արագ ու շոշափելի հաջողությունները, վոր բանվորներն այս կռվում ձեռք եյին բերում սոցիալ դեմոկրատների ղեկավարությամբ, վերջիններից շատերին խանգարում եր ուղիղ վերաբերվելու շարժման էլ ավելի կարևոր խնդրին, վոր եր կռիվ մղել հանուն քաղաքական ազատության, այլև հանուն պրոլետարիատի հեղափոխական քաղաքական կուսակցություն ստեղծելու։ Վորովհետև «եկոնոմիստների» ուսմունքի համաձայն, ռուսական բանվորների առաջ, սրանց անգիտակցության պատճառով, պետք ե ամենօրյա տնտեսական խնդիրները միայն դնել, ապա «եկոնոմիստներին» փաստորեն հարկավոր էլ չեր միասնական կենտրոնացած քաղաքական կուսակցություն, այն էլ ինքնուրույն պրոլետարական կուսակցություն, ուստի և նրանք հույս եյին դնում փոշիացած տնայնագործական կազմակերպության վրա։

«Եկոնոմիստները» հետագա մենշևիկների նախորդներն և գործնական իրականացողներն եյին այն բանի, ինչ վոր ուսացնում եր լեգալ մարքսիզմը։

11. Ի՞ՆՉՊԵՍ ՋԱԽՋԱԽՎԵՑ ԼԵԳԱԼ ՄԱՐՔՍԻԶՄՆ ՈՒ «ԵԿՈՆՈՄԻԶՄԸ»

Այն անխնա կռվի միջոցով, վոր վարում եր «Իսկրա» թերթի ու «Զարյա» ժուրնալի խմբակը, վորի գլուխ կանգնած եյին Վ. Ի. Լենինն ու Գ. Վ. Պլեխանովը։ «Իսկրայականների» կռիվը «եկոնոմիստների» դեմ, շատ համառությամբ եր մղվում (առանձնապես մեծ դեր կատարեց այս պայքարի մեջ Վ. Ի. Լենինի 1902 թվականի լույս տեսած «Ինչ անենք» վերնագրով բրոշուրը) և միայն 1902 թվականի վերջերին արդյունաբերական դաժան ու յերկարատև նոր կրիզիսի, այլև գործադուլային շարժման արագ աճման ու բանվորական մասսաների մեջ տարերային քաղաքական գրգռման շնորհիվ եկոնոմիզմը վերանում ե ասպարեզից։ Սրա կործանմանը քիչ չնպաստեց նաև «Զուբատովականությունը» այն պրովոկատորական փորձը, վորով ցարական ինքնակալությունն աշխատում եր բանվոր դասակարգը հիմարացնելու՝ նրան հրապուրելով ու հեռացնելով հեղափոխական սոցիալ դեմոկրատիայից և բանվորական շարժումը ուղղելով լոկ տնտեսական կռվի

համար, մի կռիվ, վոր պետք ե մղվեր «Անկախ բանվորական կուսակցության» դրոշակի տակ։

900-ական թվականների սկզբին արդեն հրապարակ են գալիս լայնածավալ բանվորական ցույցեր ու մայիս-մեկյան յելույթներ, հատկապես ավելի ու ավելի հեղափոխական քաղաքական լոզունգներով։

12. ՎՈ՞ՐՆ ԵՐ Ռ. Ս.-Դ. Բ. Կ. II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ

II համագումարը, վոր հավաքվեց արտասահմանում, 1903 թվականին, նախ Բրյուսելում, հետո Լոնդոնում, մշակեց և ընդունեց կուսակցության ծրագիրը («Իսկրա»-յի ու «Զարյա»-ի նախագծի համաձայն) սոցիալ դեմոկրատական տակտիկայի հիմքերը դրեց և հաստատեց կուսակցության նոր կանոնադրությունը։ Ընդունված ծրագրի մեջ պարզ և վորոշ բանաձևված եյին հեղափոխական պրոլետարիատի ինչպես վերջնական նպատակներն ու հիմնական տակտիկական միջոցներն, այնպես և հատկապես մանրամասն կերպով մերձավոր քաղաքական ու տնտեսական պահանջները, հարմարեցնելով բուրժուական դեմոկրատական այն հեղափոխությանը, վորի գալն աչքի առաջ ունեյին։

Ծրագրային ու տակտիկական ասպարեզում II համագումարը ճանաչեց, վոր կուսակցության վերջնական նպատակը կապիտալիստական հարաբերությունները սոցիալիստական հարաբերություններով փոխարինելն ե. մասնավորապես սրա նպատակն ե արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը փոխարինել ու դարձնել հանրային սեփականություն, հանրային-արտադրական պրոցեսի պլանաչափ կազմակերպություն մտցնել, հասարակության՝ դասակարգերի բաժանվելը վերացնել, ամբողջ ճնշված մարդկությունն ազատագրել և հասարակության մի մասի ձեռքով մյուս մասի ամեն տեսակի շահագործմանը վերջ տալ։ II համագումարն այս վերջնական նպատակներին հասնելու անհրաժեշտ պայմանը ճանաչեց «պրոլետարիատի դիկտատուրան, այսինքն պրոլետարիատի՝ այնպիսի քաղաքական իշխանություն նվաճելը, վորը նրան հնարավորություն կտա ճնշելու շահագործողների ամեն տեսակի դիմադրությունները»։ Այս դիկտատուրայի ու սոցիալիստական հեղափոխության շահերի տեսակետից պրոլետարիատը պետք ե միանա և ինքնուրույն քաղաքական կուսակցություն կազմակերպե, վորը հակադրվում ե բուրժուական կուսակցություններին և աշխատավոր ու շահագործվող բնակչության բոլոր խավերին կոչ ե անում՝ միատեղ կռվելու կապիտալի դեմ։

Կազմակերպչական ասպարեզում II համագումարն ավարտին հասցրեց այն յերկարատև կռիվը, վոր մղվում եր խմբակամոլության (кружковщина) փոշիացածության ու մեկուսացածության դեմ, ներքին կապով ու կարգապահությամբ իրար միացնելով բոլոր տեղական խմբակներն ու կազմակերպությունները և իրականում, առաջին անգամ, ստեղծելով միասնական համառուսական քաղաքական ամբողջություն — այսինքն՝ հեղափոխական մարքսիզմի կուսակցություն։

II համագումարում ներկա եյին 26 կազմակերպություններից ուղարկված 43 պատգամավոր վճռական ձայնով ու 14 պատգամավոր խորհրդակցական ձայնով։

13 ՎՈ՞ՐՆ Է II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԴԵՐԸ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1903 թվականի համագումարը, որ ժամանակի կարգով յերկրորդն է, մեր կուսակցության I համագումարն է՝ քաղաքական ու պատմական տեսակետից, մի համագումար, վորում և վորից հետո վո՛չ միայն առաջին անգամ ստեղծվեց և ձևավորվեց կուսակցությունը, այլև վորի միջոցին կուսակցությունը բացորոշ կերպով յերևան հանեց իր հեղափոխական եյությունը՝ հիմք դնելով այն բանին, վոր պիտի բաժանվել և սահմանագծվել նոր այլատարր, մանր բուրժուական մարմնից—մենշևիզմից։

II համագումարում տեղի ունեցած կռիվը մենշևիզմի դեմ սկիզբ է դընում Ռ. Ս.—Դ. Բ. Կ. ներսում կատարված մեծ պառակտման, վորը 1917 թ. հեղափոխության ժամանակ վերածվեց անխնա քաղաքացիական պատերազմի, վոր մղում եյին իրար դեմ յերկու թշնամի կուսակցություններ ու դասակարգեր, մի կողմից բոլշևիկները (պրոլետարիատի առաջապահը), իսկ մյուս կողմից մենշևիկներն ու սրանց զինակից աջ եսերները (կապիտալիզմի մանր բուրժուական գործակալները)։

II ՇՐՋԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԿՌԻՎ ՄՂԵԼՈՒ ՀԱՆՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ

(1903—1917 թ. թ.)

14. ՎՈ՞ՐՏԵՂԻՑ ԱՌԱՋ ՅԵԿԱՆ «ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐ» ՈՒ «ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐ» ԱՆՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՀԵՆՑ ՍԿԶԲԻՆ Ի՞ՆՉ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՅԻՆ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ

«Բոլշևիկներ» ու «մենշևիկներ» անուններն առաջ յեկան նրանից, վոր II համագումարում պրոլետարական հեղափոխական մասը գլուխ ունենալով ընկեր Լենինին, մեծամասնություն եր կազմում, այնինչ մանր բուրժուական համաձայնողական մասը գլուխ ունենալով Մարտովին, խնդիրների մեծ մասի շուրջը փոքրամասնություն կազմեց։

Ինչ վերաբերում է պառակտմանը, ապա վերջինս սկսվեց կազմակերպչական տարաձայնություններից, կուսակցության կանոնադրության առաջին §-ի նկատմամբ, վոր վերաբերում եր այն հարցին, թե ո՛ւմ պետք է կուսակցության անդամ ճանաչել։ Ընկեր Լենինի նախագիծը [1]) բացի ծրագիրն ընդունելուց ու նյութական օժանդակությունից՝ պահանջում եր, վոր կուսակցության անդամն «անձամբ մասնակցի կուսակցական կազմակերպություններից մեկին», այն ինչ Մարտովի նախագծով անձնական մասնակցության փոխարեն, կուսակցության անդամ լինելու համար բավական եր, վոր վերջինս միայն «կանոնավոր կերպով աջակցեր կուսակցությանը՝ սրա կազմակերպություններից մեկի ղեկավարությամբ»։

Այն ժամանակվա վոստիկանական պայմաններում, Մարտովի նախագիծը կուսակցության մեջ մտնելու հնարավորության դուռ եր բաց անում

1) Սակայն 2-րդ համագումարում ընդունվեց Մարտովի նախագիծը։ Միայն 3-րդ համագումարում հաստատվեց 1 §-ը՝ Լենինի խմբագրությամբ։

բոլոր տատանվող ու մանր բուրժուական տարրերի համար, մանավանդ նրանց համար, վորոնք մանր բուրժուական ինտելիգենցիային եյին պատկանում, այն ինչ Վ. Իլյիչ Լենինի նախագիծը նրանց դեմ եր շրջապատում կուսակցությունից, անպայման պահանջելով, վոր կուսակցության անդամը անձամբ մասնակցի տարբերկրյա կազմակերպությանը և հպատակվի կուսակցական դիսցիպլինին։

Ընկեր Լենինի նախագիծը վո՛չ թե բառերով, այլ գործով եր պաշտպանում միաձույլ համատարակամ և դիսցիպլինի յենթարկված հեղափոխական պրոլետարական կուսակցությունը։ Լարված կռիվների պատրաստվող այդպիսի կուսակցությանը հարկավոր եր, վոր իրապես կարողանար ինքը վերահսկել իր անդամների աշխատանքին, իսկ սրա համար անհրաժեշտ եր, վոր կուսակցության յուրաքանչյուր անդամ պարտադրաբար կուսակցության կազմակերպության անդամ լիներ, յենթարկվեր նրա դիսցիպլինին և վոր կուսակցության գլուխ կանգնեյին լիազոր ու գործունյա կուսակցական կենտրոններ։ Ներկայումս բոլորի համար պարզ է, վոր բոլշևիկները II համագումարում պաշտպանում եյին կուսակցության այնպիսի կազմակերպության ծրագիր, վորը ապահովում եր նրա իրապես հեղափոխական—պրոլետարական բնույթը և վոր այդպես կազմակերպված կուսակցությունը միայն կարող եր գործնականապես իրականացնել զինված ապստամբության լոզունգն ու մասսաները տանել դեպի վերջնական հաղթանակ՝ ընդդեմ ցարիզմի ու ընդդեմ բուրժուազիայի 1917 թվականի հեղափոխության միջոցին։

Այս կազմակերպչական տարաձայնություններին զուգընթաց՝ II համագումարում բոլշևիկների ու մենշևիկների միջև յերևան յեկան տակտիկական անհամաձայնություններ ել այն խնդրի նկատմամբ, թե ինչ վերաբերմունք պետք է ցույց տալ լիբերալներին (խոշոր ու մանր բուրժուազիային) վորոնց գլուխն անցան հետագայում կադետական ու հոկտեմբերյան կուսակցությունները։ Մենշևիկական բանաձևն այս խնդրի մասին փորձում եր համաձայնություն հաստատել լիբերալների հետ՝ սրանց օժանդակելու միջոցով, այն ինչ բոլշևիկական ռեզոլյուցիան (այս առաջարկեց Պլեխանովը, վորը II համագումարում հանդես եր գալիս իբրև բոլշևիկ, ի թիվս վորոնց՝ նաև կազմակերպչական խնդրի վերաբերմամբ) շեշտում եր, թե պետք է բուրժուական լիբերալիզմի հակահեղափոխական եյությունը մերկացնել և բանվոր դասակարգը կանխապատրաստել՝ նրա դեմ կռվելու համար։

Բոլշևիկների բանաձևը II համագումարում, վոր վերաբերում եր լիբերալներին, յելակետ հանդիսացավ բոլշևիկների ամբողջ հետագա տակտիկայի՝ լիբերալ բուրժուազիայի նկատմամբ, ինչպես 1905—1906 թվականին, այնպես և 1917 թ. յերկրորդ հեղափոխության ժամանակ, վորչափով վոր այս բանաձևի մեջ առաջ եր մղվում թե՛ ցարիզմի ու թե՛ լիբերալ բուրժուազիայի դեմ կռվելու լոզունգը և ժխտվում եր համաձայնողական մենշևիկական գաղափարը՝ լիբերալ բուրժուազիայի ու սրա գլուխն անցած կուսակցությունների հետ կոալիցիա (համաձայնություն, միություն) կազմելու մասին։

15. ՈՎՔԵ՞Ր ԷՅԻՆ ԷՍ-ԷՐՆԵՐԸ (ԱԶ) ՅԵՎ Ի՞ՆՉ ԿՌԻՎ ԷՐ ՄՂՈՒՄ ՆՐԱ՛ՆՑ ԴԵՄ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարի սկզբին մանր բուրժուական լայն շրջաններում, մանավանդ ինտելիգենցիայի ու գյուղացիության մեջ սաստկացող դժգոհության ու խմորման հետևանքով այս շարժման մակերես է դուրս գալիս մի հատուկ նարոդնիկական կուսակցություն, սոցիալիստ-հեղափոխականների կամ էս-էրների կուսակցություն անունով։ Այս կուսակցությունը հենվում է վերոհիշյալ մանր բուրժուական տարրերի վրա, գլխավորապես նրանցից է կազմված և իր ծրագրի, տակտիկայ ու կազմակերպության մեջ արտահայտում է գյուղացիության լայն մասսաների ու քաղաքային մանր բուրժուազիայի շահերն ու տեսակետները։

Մանր բուրժուական կուսակցություն լինելով՝ էս-էրների կուսակցությունը իր բուրժուական—դեմոկրատական ձգտումներն սքողում է սոցիալիստական բառակույտով և շատ կամ քիչ մշուշապատ ու ճապաղ այնպիսի սոցիալիստական ուսմունքներով, վորոնք ուտոպիկ բնույթ ունեն։ Մանր բուրժուազիայի, մասնավորապես գյուղացիության լայն մասսաների արտահայտիչը լինելով՝ էս-էրները հանդիսանում են և ձգտում են լինել դեմոկրատներ ու հեղափոխականներ, ցարական—ճորտատիրական պետության ու կալվածատիրական հողատիրության դեմ կռվելու միջոցին։ Միևնույն ժամանակ, իբրև մանր բուրժուական և վոչ թե պրոլետարական դեմոկրատներ, էս-էրները ի վիճակի չեն մինչև վերջը հետևողական ու հաստատակամ կերպով ուղղաձիգ տանելու իրենց բուրժուական—դեմոկրատական կռիվը՝ ցերևան հանելով մշտական տատանումներ մի կողմից լիբերալ (խոշոր ու միջակ) բուրժուազիային յենթարկվելու ու սրա հետ համաձայնվելու միջև, իսկ մյուս կողմից հեղափոխական պրոլետարիատի կուսակցության (բայլշևիկների) հետ զինակցելու միջև։

Իրենց սոցիալիստներ անվանելով՝ էս-էրները ոգտագործում էյին սոցիալիզմ բառը իբրև դիմակ ու ծածկոց՝ մանր բուրժուական քաղաքականություն վարելու համար ու իբրև հարմար միջոց, վոր կարող էր մառախուղ ու շփոթություն մտցնել անգիտակից պրոլետարների ու ինտելիգենցիայի գլուխների մեջ, և այս անում էյին, վորպեսզի նրանց հեռացնեն բայլշևիկների հեղափոխական կուսակցությունից։ Էս-էրները մասնավորապես կռիվ էյին մղում հեղափոխական մարքսիզմի ինքնուրույն, զուտ պրոլետարական կուսակցության դեմ և քարոզում էյին մի վնասակար ուսմունք, թե՝ և բանվորները, և գյուղացիությունը, և ինտելիգենցիան ձուլվեն պետք է մի կուսակցության մեջ, իսկ այդ նշանակում էր, վոր նրանք իրապես կոծկում էյին դասակարգերի շահերի հակադրությունը և փորձում էյին առաջավոր հեղափոխական պրոլետարիատը քայքայել ու լուծել՝ աշխատավորների անձև, խայտաբղետ մասսայի մեջ։

Էս-էրները, դեմոկրատներ ու հեղափոխականներ էյին մինչև 1905—1906 թվականը, յերբ խնդիրը վերաբերում էր ցարական ինքնակալության ու կալվածատիրական հողատիրության դեմ կռվելուն և վոչ թե բուրժուական—կապիտալիստական հասարակարգի տապալմանը։ Հետագայում առաջին հեղափոխության պարտության որերից սկսած՝ էս-էրները, ինչպես և

մենշևիկները ավելի ու ավելի յեն կորցնում իրենց նույնիսկ մանր բուրժուական դեմոկրատականությունն ու հեղափոխականությունը, հեռանում են հեղափոխությունից, 1914—1918 թ. թ. իմպերիալիստական պատերազմի ժամանակ շուռ են գալիս բուրժուական հայրենիքի ու կապիտալիզմի պաշտպանության կողմը, վորպեսզի 1917—18 թվին, դառնան բացահայտ հակահեղափոխականներ և բուրժուազիայի գործակալներ՝ այն քաղաքացիական պատերազմի ժամանակ, վոր բուրժուազիան մղում էր ընդդեմ պրոլետարիատի դիկտատուրայի, խորհրդային իշխանության ու կոմմունիզմի։ Պատերազմի ու մանավանդ յերկրորդ հեղափոխության որերում էս-էրների արարքների մեջ առանձնապես պարզորոշ յերևան յեկավ նրանց մանր բուրժուական ու կեղծ սոցիալիստական բնույթը, վորն այնքան տիպուկ կերպով մերկացրել էր բայլշևիկների կուսակցությունը դեռ 20 տարի սրանից առաջ, մինչև 1905 թվի հեղափոխությունը, հենց այն որերին, յերբ նոր էր ծագում ու առաջին քայլերն անում էս-էրների կուսակցությունը (տես կուսակցության 1903, 1905, 1906 ու 1907 թ. թ. II, III, IV ու V համագումարներում բայլշևիկների հանած բանաձևերը էս-էրների մասին)։

Ինչ վերաբերում է աշխատավոր գյուղացիության ու քաղաքային մանր բուրժուազիայի լայն մասսաներին, վորոնք սկզբից գնում էյին էս-էրների կուսակցության յետևից, ապա այն մասսաները քանի գնում, այնքան ավելի էյին հետ կանգնում, հեռանում էս-էրների կուսակցությունից, սրանից խաբված ու դավաճանված լինելու պատճառով, մանավանդ այն բանի հետևանքով, վոր էս-էրները պաշտպանել էյին իմպերիալիստական պատերազմը և էս-էրների կուսակցությունն անցել էր իմպերիալիզմի ու հակահեղափոխության բանակը՝ 1917 ու հետագա թվականներին։ Ներկայումս վոչ միայն աշխատավորների, ի թիվս վորոնց գյուղացիների ու ինտելիգենցիայի մասսաները, այլև էս-էրների կուսակցության հին, շարքային նախկին անդամների մեծամասնությունն անգամ 1923 թվի մարտին յեղած համագումարում ըմբռնեցին ու խոստովանեցին էս-էրական մանր բուրժուական կուսակցության հակահեղափոխական բնույթը և խարանեցին ամբողջ աշխարհի առաջ իրենց սպիտակ գվարդիական պարագլուխների (Չերնով, Սավինկով և այլն) խմբակի դավաճանությունը, վորոնք Անտանտայի ու սև հարյուրակային միապետական ու կադետական թափթփուկների հետ միասին չեն դադարում այժմ էլ արգելակել (ТОРМОЗИТЬ) խորհրդային իշխանության ու կոմմունիստական կուսակցության աշխատանքը, վորով վերջիններս աշխատում են վերածնել ու զարգացնել խորհրդային հանրապետությունը և ամրացնել սրա դրությունը՝ համաշխարհային կապիտալի դեմ մղվող կռվում։

Իսկական հեղափոխական ու պրոլետարական տարրերը, մանավանդ բանվորության միջից յելածները, վորոնք ժամանակին սխալմամբ ընկել էյին էս-էրների կուսակցության մեջ, հետագայում ըմբռնեցին իրենց կեղծ դրությունը և, ներկայումս, նրանց մեծ մասը գտնվում է Ռուսաստանի կոմմունիստական կուսակցության շարքերում։

16. Ի՞ՆՉ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑԱՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ II ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ՀԵՏՈ

Մեր կուսակցության հետագա զարգացումն այն յեղավ, որ նախ յերևան յեկավ այն հարաճուն անդունդը, որ գոյություն ուներ բոլշևիզմի և մենշևիզմի միջև տակտիկայի ու կազմակերպության հիմնական խնդիրների վերաբերմամբ, մի անդունդ, որին զուգընթաց բազմաթիվ անգամ ու ընդհանրապես անհաջող փորձեր եյին անում միացնելու յերկու ուղղությունները մի կուսակցության մեջ։ Յերկրորդ՝ որ մեր կուսակցությունը ուղղակի ու սերտ մոտեցավ իշխանության ու պրոլետարիատի դիկտատուրայի համար մղվող կռվի բուն խնդրին։

17. Ի՞ՆՉ ԵՐ 1903—1907 Թ. Թ. ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՈՒ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՈՒԹՅՈՒՆԸ

Նախ՝ լիբերալ (խոշոր ու միջակ) բուրժուազիայի ու գյուղացիության հետևաբար և համապատասխան կուսակցություններին ցույց տալիք վերաբերմունքի խնդիրը, յերկրորդ՝ հեղափոխության ժամանակ իշխանության նկատմամբ, այսինքն՝ ժամանակավոր հեղափոխական կառավարության ու դիկտատուրայի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի խնդիրը, յերրորդ՝ քաղաքական դրությունը գնահատելու ու սրանից բղխող անելիքների խնդիրը։

Առաջին յերկու կետի նկատմամբ յեղած տարաձայնությունները յերևան յեկան դեռ 1905 թվականի մուտքերը և պարզորոշ արտահայտվեցին կուսակցության III համագումարի (1905 թ. մայիսի) ու մենշևիկների միաժամանակ տեղի ունեցող համառուսական կոնֆերենցիայի բանաձևերի մեջ։ Յերրորդ կետի նկատմամբ յեղած տարաձայնությունները, որոնք առաջին յերկու տարաձայնությունների հիմքն եյին կազմում, զարգացան և սրվեցին հետագայում, 1907-1908 թվականին։

Մենշևիկների ուսմունքով հեղափոխության ղեկավարն ու սրա պտուղները քաղողը, այսինքն իշխանությունը յուր ձեռքն առնողը պետք ե լինի լիբերալ (խոշոր ու միջակ) բուրժուազիան ու սրա գլուխ կանգնած կադետական կուսակցությունը և ոչ թե պրոլետարիատը և ոչ ել գյուղացիությունը։ Մենշևիկների կարծիքով պրոլետարիատի դերն այն եր, որ օգներ լիբերալ բուրժուազիային, այսինքն կադետների ու հոկտեմբերյանների կուսակցությանը՝ քաղաքական իշխանությունն իրենց ձեռք առնելու և ոչ թե ինքը, բանվորությունը վերցներ իշխանությունը։ Այսինքն՝ պրոլետարիատը չպետք ե մասնակցեր ժամանակավոր հեղափոխական կառավարությանը, մինչև որ սոցիալիստական հեղափոխություն սկսվեր ավելի առաջավոր կապիտալիստական յերկրներում։

Ընդհակառակը բոլշևիկներն ուսուցանում եյին, որ Ռուսաստանում հեղափոխությունը պետք ե ղեկավարե և իշխանությունը պետք ե յուր ձեռքըն առնե ոչ թե լիբերալ բուրժուազիան, այլ պրոլետարիատը՝ հեղափոխական գյուղացիության հետ միասին, ուստի անհրաժեշտ ե շարունակ մերկացնել ու հարվածել լիբերալ բուրժուազիային։ Ուստի և բոլշևիկների կարծիքով որոշ պայմաններում լիովին թույլատրելի ե և հարկավոր ե,

որ բանվորությունը գյուղացիության հետ միասին յուր ձեռքն առնե իշխանությունը, մասնակցե ժամանակավոր հեղափոխական կառավարությանը՝ դիկտատուրայի միջոցով հակահեղափոխության դեմ ավելի հաջողակ կռվելու համար, Ռուսաստանում բանվոր դասակարգի ինքնուրույն շահերը պաշտպանելու համար և ավելի զարգացած կապիտալիստական յերկրների հեղափոխական շարժման վրա լավագույն կերպով ազդելու համար (հեղափոխությունը Յեվրոպա փոխադրելու համար)։

18. Ի՞ՆՉ ԵՐ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ III ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ԴԵՐԸ

Կուսակցության III համագումարը, որ զուտ բոլշևիկյան ուղղությունն եր ներկայացնում, յեղավ 1905 թվականին, ապրիլի կեսերից մինչև մայիսի սկիզբը, Լոնդոնում։ Մենշևիկ պատվիրակները տեսնելով, որ իրենց ուղղությունը շատ փոքրամասնություն ե կազմում, համագումարի բացվելուց առաջ, գիտակցաբար խուսափեցին համագումարին ներկայանալուց և Շվեյցարիայում, Ժնևում բաց արին իրենց մենշևիկյան կոնֆերենցիան։ Սակայն III համագումարի բոլշևիկ պատգամավորների թիվը լիազոր պատվիրակների ամբողջ քանակի կեսից ավելի յեր, ուստի Լոնդոնի բոլշևիկյան համագումարը, չնայած մենշևիկների բացակայությանը, ամբողջ կուսակցության միանգամայն լիազոր համագումարն եր։ III համագումարում դրական իմաստով վճռվեցին այն խնդիրները, թե ցարիզմի տապալման համար պետք ե զինված ապստամբություն նախապատրաստել, թե բանվոր դասակարգը պետք ե հեղափոխական գյուղացիության հետ միասին իշխանությունը նվաճե այլ և թե պրոլետարիատի ու հեղափոխական գյուղացիության դիկտատուրան իրականացնելու, հանուն սոցիալիզմի մղվող հետագա կռիվը ապահովելու համար, թույլատրելի յե, որ կուսակցությունը մասնակցե ժամանակավոր հեղափոխական կառավարությանը։

Կազմակերպչական խնդրի նկատմամբ կանոնադրության առաջին §-ի համար ընդունվեց ընկեր Լենինի ձևակերպումը, որի համաձայն՝ «կուսակցության անդամ ե համարվում ամեն ոք, որ ընդունում ե նրա ծրագիրը, օժանդակում ե կուսակցությանը՝ նյութական միջոցներով և անձնական աշխատանքով մասնակցում ե նրա կազմակերպություններից մեկին»։

III համագումարի բոլոր բանաձևերը տոգորված եյին բոլշևիկների այն գաղափարներով, թե առաջիկա հեղափոխության մեջ պրոլետարիատը պետք ե ղեկավար դեր ունենա և թե անհրաժեշտ ե, որ հիշյալ հեղափոխության ժամանակ պրոլետարիատի ու հեղափոխական գյուղացիության դիկտատուրա հաստատվի։

19. Ի՞ՆՉՈՒ ՋԱԽՋԱԽՎԵՑ ԱՌԱՋԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 1905 ԹՎԻՆ ՅԵՎ ԱՅՍ ՊԱՐԱԳԱՆ Ի՞ՆՉՊԵՍ ԱՆԴՐԱԴԱՐՁԱՎ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ԿՌՎԻ ՎՐԱ

1905 թվի հեղափոխությունը յերևան հանեց մասսաների հեղափոխական յեռանդի վիթխարի թափ ու խորություն գլխավորապես քաղաքներում։ Այս արտահայտվեց նրանով, որ 1905 թվի հոկտեմբերին պրոլետարիատը քաղաքական ընդհանուր գործադուլ հայտարարեց, որ բանվորական ու տեղ-տեղ ել զինվորական պատգամավորների խորհուրդներ կազմվեցին և

վոր ապստամբություններ յեղան մի շարք ռազմանավերի վրա ու բազմաթիվ քաղաքներում, մանավանդ Մոսկվայում դեկտեմբերյան օրերին։ Այս ու այլ հեղափոխական ելույթների մեջ պարզ յերևան յեկավ պրոլետարական-գյուղացիական բնույթը ռուսական առաջին հեղափոխության, վոր սպառնում եր յուր զարգացման ընթացքում վոչ միայն թափ տալ ցարիզմը ու ճորտատիրական-կալվածատիրական հասարակարգը, այլև ջախջախիչ հարվածներ հասցնելու ռուսական բուրժուազիային։ Բոլշևիկների կուսակցությունը գլուխ ե անցնում հեղափոխական մասսաների այս բորբոքվող շարժմանը։ Հեղափոխության աճումից ու թափից վախեցած լիբերալ բուրժուազիան —դեկտեմբերի վերջին օրերին նետվում ե ռեակցիայի կողմը, ցարիզմի ու ճորտատեր-կալվածատերերի գիրկը ու նրանց հետ միասին ամենադաժան հարվածներ ե հասցնում բանվոր դասակարգին, լոկաուտների միջոցով, աշխատավարձը ցածացնելով ու այլ բռնություններ կատարելով, վորոնց նպատակն եր ճնշել հեղափոխական շարժումը։ Սակայն 1905 թվականի վերջերում բանվոր դասակարգին չը հաջողվեց հարկավոր չափով յուր հետևից տանել գյուղացիությունը, մանավանդ ի դեմս բանակի։ Բանից դուրս յեկավ, վոր գյուղացիությունը դեռ բավականաչափ հեղափոխական չե, և գյուղից յեղած զինվորները ճնշեցին Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբությունը, յերկաթուղային գործադուլները, մերձբալթյան յերկրի ու այլ վայրերի ապստամբությունները։

1905-1906 թվի հեղափոխության պատմության մեջ պակաս դեր չի խաղացել նաև միջազգային բուրժուազիան, վորը Պարիզի բանկիրների միջոցով մեծ փոխառություն տվեց ցարին, վորպեսզի սա ճնշե բանվորներին ու գյուղացիներին։

1905-1906 թ. թ. հեղափոխության ճնշման հետևանքով գյուղացիները 1905 թվին հող չստացան։ Ցարիզմը միացած կապիտալիստական բուրժուազիայի հետ՝ կանխապատրաստեց ու սարքեց 1914-17 թ. թ. իմպերիալիստական սպանդանոցը։ Իսկ բանվորական դասակարգը տասը տարուց ավելի նետվեց ստորերկրյա վիճակի մեջ, յենթարկվելով ամեն տեսակի ճնշումների։ 1905 թվի հեղափոխությունը ճնշելուց հետո, կապիտալիստական բուրժուազիան վերջնականապես անցավ ռեակցիայի կողմը, շարժման մակերեսը դուրս յեկած Պետական Դուման, վոր սկզբում կադետական եր, վորտեղ կապիտալիստներն ու կալվածատերերը գործարքներ ու համաձայնություններ եյին կնքում իրար միջև՝ հեղափոխությունը ճնշելու ու մասսաները կողոպտելու նպատակով, մի վայր, վոր աղբյուր եր հանդիսանում այն պատրանքների, թե Դումայի օգնությամբ հնարավոր ե հաղթահարել ցարիզմն ու կալվածատերերին։

1905-1906 թ. թ. հեղափոխության պարտությունը ռեակցիայի կողմը հրեց բուրժուազիայից հետո, նաև մենշևիկներին։ Սրանք քանի գնում, այնքան ավելի եյին հրաժարվում զինված ապստամբության լոզունգից, այլ և մասսաների՝ ռեակցիայի դեմ անմիջական կռիվ մղելու լոզունգից և իրենց բոլոր հույսերը սկսում են դնել լիբերալ բուրժուազիային մոտենալու և սրա հետ համաձայնության գալու, այլև Պետական Դումային մասնակցելու վրա։

Ընհակառակը բոլշևիկները հավաստելով (констатировать) 1905 թվականի պարտությունը, հեղափոխական շարժման նոր ավելի հզոր ու հասունացած նոր վերելք են նախատեսնում, քան յեղել եր 1905 թվին, զգաստ կերպով հաշվի են առնում կապիտալիստական բուրժուազիայի ու Պետական Դումայի ռեակցիոն բնույթը, մերկացնում են ռեակցիան ու վերջինս վարագուրող մենշևիկներին և ել ավելի սրելով իրենց հեղափոխական զենքը՝ պատրաստվում են կատաղի ու մասսայական նոր կռիվների ինչպես ցարիզմի, այնպես և կապիտալիստական բուրժուազիայի դեմ։

Մեր հեղափոխության ընթացքի, այլև բոլշևիկների ու մենշևիկների փոխհարաբերությունների ժամանակ գոյություն ունեցող այս մոմենտը յուր պարզորոշ արտահայտությունն ստացավ կուսակցության չորրորդ համագումարի (1906 թ.) աշխատանքների ու կազմի մեջ։

20. ԻՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒ ԴԵՐ ԿԱՏԱՐԵՑ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ IV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

V համագումարը, վոր 1905 ապրիլին յեղավ Շվեյցարիայում, Ստոկհոլմում, հայտնի յե միացնող համագումար անունով, վորովհետև նրա խնդիրն եր յերկու թշնամի ֆրակցիաների «մեծամասնության» ու «փոքրամասնության» միավորությունը գլուխ բերել, այլև ձուլել ու մեկ կուսակցություն դարձնել ազգային կուսակցական կազմակերպությունները (լեհականը, լատիշականը, հրեյականը), վորոնք աշխատում եյին զատ-զատ։

Համագումարի 110 պատվիրակից մեծամասնությունը, թվով 62 հոգի, մենշևիկներ եյին, և համագումարն ընդունեց նրանց բանաձևերը, վորոնք տոգորված եյին հարմարվողականությամբ ու լիբերալ բուրժուազիայի հետ կնքվող համաձայնվողականությամբ։ IV համագումարում մենշևիկ պատգամավորների գերակշռությունը բացատրվում ե նրանով, վոր 1905 թվականի հեղափոխության պարտության հետևանքով, այլև սրան հաջորդող կառավարական ճնշումների շնորհիվ, բոլշևիկական կազմակերպություններն ու գործիչները խորտակված ու հալածված եյին, վորից և օգտվեցին մենշևիկները, վորոնք շատ ավելի քիչ եյին տուժել հեղափոխությունից ու կառավարչական հալածանքներից։

IV համագումարի գլխավոր խնդիրներն եյին 1) ընթացիկ մոմենտի գնահատությունն ու հեղափոխության հեռանկարը, 2) Պետական Դուման ու զինված ապստամբությունը, 3) ագրարային ծրագիրը։ IV համագումարում այս բոլոր և այլ հարցերի ժամանակ պարզ կերպով յերևան յեկավ մենշևիկների հիմնական տեսակետը, այն ե՝ վոր նրանք չեյին վստահում հեղափոխությանը, չեյին հավատում նրա ուժերին ու հնարավորությանը, հրաժարվում եյին զինված ապստամբությունից և հեղափոխական կռվի այլ մասսայական մեթոդներից և անցնում եյին կապիտալիստական բուրժուազիայի բանակը՝ պաշտպանելու համար Պետական Դուման, իբրև դեմոկրատական պառլամենտի մի սաղմ։ Մանավորապես Պետական Դումայի խնդրի նկատմամբ մենշևիկներն ապացուցում եյին, վոր պառլամենտական կարգը միանգամայն ավելորդ ե դարձնում հեղափոխական կռիվը և վոր բանվոր դասակարգի խնդիրն այն ե, վոր օժանդակություն ցույց տա լիբերալ բուրժուազիային, յերբ վերջինս ձգտում ե բուրժուական հեղափոխության պտուղներն ապահովել իրեն համար։

Բոլշևիկները քննադատելով ու մերժելով մենշևիկների այս բոլոր համաձայնողական ու մանր բուրժուական հայացքները՝ նրանց հակադրում էին էլ ավելի սուր հեղափոխական լոզունգներ այն մասին, թե պետք է կանխապատրաստել հեղափոխությունը, զինված ապստամբությունը, խորհուրդները, վորոնք մասսայական ապստամբության օջախներն են ու հեղափոխության, պրոլետարիատի ու հեղափոխական գյուղացիության դիկտատուրայի սաղմերը և այլն։

Բնական, է վոր IV համագումարն այսքան խիստ տարաձայնությունների հետևանքով կարող էր լոկ ձևական միավորություն առաջ բերել բոլշևիկների ու մենշևիկների միջև, վորոնց պայքարը IV համագումարից հետո, չնայած տեղի ունեցած միությանը, էլ ավելի սրվեց այն չափով, վոր չափով վոր մենշևիկները հեռանում էին հեղափոխությունից ու հեղափոխական կռվից։

21. Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒ ԴԵՐ ԿԱՏԱՐԵՑ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱ՞Ն V ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

V Համագումարը, վոր 1907 թվի ապրիլին եղավ Լոնդոնում, յուր մեծամասնությամբ բոլշևիկական էր, և առաջին անգամ այս համագումարումն էր, վոր վճռական ձայնի իրավունքով ներկա եղան ազգային սոցիալ դեմոկրատական կազմակերպությունների (Լեհաստանի, Լատիշական սոցիալ դեմոկրատիայի ու Բունդի) պատվիրակները։

Չնայած, վոր IV համագումարի Կ. Կ-ն մենշևիկյան էր, այնուամենայնիվ չկարողացավ արգելք լինել այն բանին, վոր բոլշևիկները V համագումարում մեծամասնություն կազմեն, չկարողացավ. վորովհետև բանվորական կուսակցական շրջաններում ավելի պարզորոշ երևան էր գալիս մենշևիկների համաձայնողականությունը լիբերալ բուրժուազիայի հետ, այլև սրանց ուտոպիկ հույսերն Պետական Դումայի նկատմամբ, փոխանակ վստահելու հեղափոխությանը։

V համագումարում մենշևիկների պարտությունը ու նրանց հեղափոխությունից հեռանալը հատկապես երևան եկավ համագումարի երկու ամենագլխավոր բանաձևերի ժամանակ, վորոնք վերաբերում էին վոչ-պրոլետարական կուսակցությունների ու անկուսակցական կազմակերպությունների նկատմամբ բռնելիք դիրքին։

V Համագումարը մենշևիկների ձայների հակառակ $^2/_3$- ...ծամասնությամբ մերժեց մենշևիկների գործադրած աշխատակցությունն ու համաձայնությունը լիբերալ բուրժուազիայի հետ (կադետական կուսակցության հետ)։

Վոչ պակաս վճռականությամբ մերժվեց մենշևիկների փորձը, վորոնք աշխատում էին պրոլետարիատի հեղափոխական կուսակցությունը լուծարքի յենթարկել լայն անկուսակցական բանվորական կազմակերպություններով փոխարինելու միջոցով, այլև նրանով, վոր հրավիրվի համառուսական բանվորական համագումար և կազմվի նոր, լայն բանվորական կուսակցություն, վորը պիտի գնար լիբերալ բուրժուազիայի պոչից բռնած։

V Համագումարում պարտություն կրելով մենշևիկները երկրում բռնկված ռեակցիայի հետևանքով էլ ավելի յեն հեռանում հեղափոխությունից և 1908 թվականից սկսած՝ մեծ մասամբ դառնում են լիկվիդատորներ։

22. Ո՞ՎՔԵՐ ԵՅԻ՞Ն ԼԻԿՎԻԴԱՏՈՐՆԵՐԸ

V Համագումարը մի դարձակետ էր, վոր 1905-1906 թվականների հեղափոխական ամենաբարձր վերելքից դառնում էր դեպի ռեակցիայի շրջանը, վոր նկատելի յեր դեռևս 1907 թվականին։ Հեղափոխության պարտությունը, տնտեսական սաստիկ ճգնաժամը, գործադրկությունը, բուրժուազիայի ավելի և ավելի հզորացող դասակարգային կազմակերպությունը և նրա արագ անցումը հոկտեմբերյան, սև հարյուրակային, աջակողմյան կուսակցությունների կողմը,—այս բոլորը մենշևիկների մեջ առաջ բերեց ձըգտում՝ էլ ավելի մեծ համաձայնության գալու բուրժուազիայի հետ և լրիվին հեռանալու հեղափոխությունից, ստորերկրյա աշխատանքից ու կազմակերպությունից։ 1908 թվականից սկսած՝ մենշևիկների մեջ այս հողի վրա զարգանում է մի ուսմունք, թե հեղափոխությունը 1905-1906 թ. թ. պարտություն կրելով արդեն թաղված է վերջնականապես և թե Ռուսաստանի հետագա զարգացումը կընթանա աստիճանական խաղաղ ու լեգալ ճանապարհով մասնակի ռեֆորմների միջոցով, վորոնք կը կատարվեն թե քաղաքական, թե տնտեսական ասպարեզներում։ Սրա համապատասխան էլ մենշևիկներին ավելորդ էր թվում ստորերկրյա հեղափոխական աշխատանքն ու կազմակերպությունը, և նրանք սկսեցին պնդել, վոր հեղափոխական կազմակերպությունը պետք է վերացնել կամ լուծարքի յենթարկել և ունենալ զուտ լեգալ գործունեություն և կուսակցություն։ Հենց այս էր այն լիկվիդատորությունը, վոր առանձնապես լայն տարածվեց ինտելիգենցիայի շըրջանում։ Մենշևիկների մեծամասնությունը լիկվիդատոր դարձավ։ Լիկվիդատորները մերժելով հեղափոխությունը, ստորերկրյա աշխատանքն ու կազմակերպությունը՝ ընդհակառակը չափազանց մեծ նշանակություն եյին տալիս այն ժամանակվա ռեակցիայի պայմաններում լեգալ հնարավորություններն ոգտագործելուն։ Պահպանել, ինչ գնով ուզում է լինի, Պետական Դուման, լեգալ արհմիությունները, կոոպերատիվներն ու ակումբները մինչև անգամ դադարեցնելով սրանց մեջ վոչ միայն հեղափոխական, այլ և ընդհանրապես վորևէ քաղաքական աշխատանք,—այս էր ահա գիծը մենշևիկ լիկվիդատորների, վորոնք վորևէ այլ ճանապարհ չեյին ընդունում, բացի լեգալ հնարավորություններից։

Մենշևիկների մեծամասնության այս լիկվիդատորության հակառակ, բոլշևիկներն ընկեր Լենինի ղեկավարությամբ, կատաղի կռիվ են մղում լիկվիդատորության դեմ և ապացուցում, վոր 1905-1906 թ. թ. հեղափոխությունն առաջացնող պատճառները չեն վերացված. այլ ընդհակառակը նրանք հզորանում են ռեակցիայի հետևանքով, հետևաբար անհրաժեշտ է կանխատեսել, վոր մոտիկ ժամանակներում էլ ավելի վճռական նոր հեղափոխություն կը լինի, և հարկավոր է կանխապատրաստել վերջինս։ Սրա համար առաջին հերթին անհրաժեշտ է պահպանել հեղափոխության բոլոր հիմնական լոզունգները և հատկապես աշխատել, վոր ամրապնդվի և զարգանա ստորերկրյա հեղափոխական կուսակցությունը։ Ռեակցիայի պայմաններում, 1908 թվականից սկսած՝ բոլշևիզմի գործունեության գլխավոր բովանդակությունը կազմում է հենց այս կռիվը հանուն հեղափոխության, հանուն հեղափոխական կուսակցության և այն աշխատանքը, վոր նա վարել է ամեն տեսակի լիկվիդատորության դեմ։

Լիկվիդատորության դեմ պայքարելով՝ բոլշևիզմը չի ժխտում սակայն լեգալ հնարավորությունների օգտագործումը մասնավորապես, այսինքն՝ ընդունում է, որ անհրաժեշտ է մասնակցել Պետական Դումային, լեգալ կազմակերպություններին և այլն։ Սակայն լեգալ հնարավորությունների այս օգտագործումը բոլշևիկների աչքում ինքնուրույն ու գլխավոր դեր չի խաղում և կատարվում է ել ավելի կարևոր խնդիրների օգտին, այն է՝ հեղափոխությունը կանխապատրաստելու, հեղափոխական ստորերկրյա կուսակցությունն ու աշխատանքն ամրապնդելու ու զարգացնելու համար։

23. 1905—1906 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ ՍՏԵՂԾՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՈՒ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ԽՆԴՐՈՒՄ Ո՞ՒՄ ԱՍԱԾՆ ԻՐԱՎԱՑԻ ՅԵՂԱՎ

Բոլշևիկների ասածը, որովհետև լիկվիդատորության յերևան գալուց ընդամենը հազիվ մի քանի տարի անց, այն է 1911 թվականին, Ռուսաստանում սկսվում է նոր, հզոր հեղափոխական վերելքի շրջան, որը պատճառ է լինում բոլշևիզմի աճման, այլև այն բանի, որ լիկվիդատորներն արտաքսվում են լայն բանվորական մասսաների շարժման միջից (բոլշևիզմը նվաճումներ է կատարում արհմիությունների մեջ)։ Լիկվիդատորության այս սնանկացման հետևանքով, 1913 թվականից՝ սկսած մեր կուսակցությունը դառնում է անվիճելի ղեկավարը մասսայական բանվորական շարժման, որը վերածվում է քաղաքական գործադուլների ու ցույցերի(որոնք առանձնապես սաստիկ են լինում Պիտերում, որտեղ բանվորները զենքը ձեռքին փողոց են դուրս գալիս 1914 թվի հուլիսին և բարիկադներ են շինում)։ Սակայն սրանից առաջ արդեն տեղի յե ունենում բոլշևիզմի ու մենշևիզմի վերջնական պառակտումը։

24. ՅԵ՞ՐԲ ՅԵՎ Ի՞ՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՅԵՂԱՎ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՈՒ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՌԱԿՏՈՒՄԸ

1908 թվականից սկսած՝ լիկվիդատոր դարձած մենշևիկների մեծամասնության հետ վերջնական խզումը տեղի ունեցավ ձևականորեն Պրագայի կոնֆերենցիայում 1912 թվի հունվարին, որտեղ լիկվիդատորները հայտարարվեցին կուսակցությունից վտարված։ Մենշևիկների մյուս մասը, որ 1908 թվականին բոլշևիկների հետ միասին կռվում եր լիկվիդատորների դեմ (այսպես կոչված մենշևիկ կուսակցա-պաշտպանները, որոնց գլուխ եր անցել Պլեխանովը), վերջնականապես դեն շպրտվեց մեր կուսակցության կողմից 1914 թվականին, իմպերիալիստական պատերազմի հենց սկզբին, յերբ այս մենշևիկները լիկվիդատորների հետ միասին դարձան սոցիալ-պատրիոտներ, այսինքն՝ բուրժուական—կալվածատիրական Ռուսաստանի ռազմական աբբանյակներ։

1912-1914 թվականների այս վերջնական պառակտումներից առաջ բազմաթիվ անգամ փորձեր եյին յեղել մոտեցնելու և միացնելու մեր կուսակցությունը մենշևիկների հետ, մասնավորապես Ստոկհոլմի IV միացնող համագումարում, 1906 թվին, Լոնդոնի V համագումարում 1907 թվին և այլն։ Սակայն այս փորձերը ոչ մի կայուն հետևանք չտվին։

25. Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱՎ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱՊԵՍ ՎԵՐՋՆԱԿԱՆՈՐԵՆ ԽԶՎԵԼԸ

Այն նշանակությունը, որ կուսակցության ձեռքերը լիովին արձակվեցին պրոլետարական հեղափոխական տարրերը լայնածավալ չափերով հավաքելու ու կազմակերպչորեն ու քաղաքականապես ձևավորելու համար։ Այս հանգամանքը կանխորոշեց ոչ միայն մեր կուսակցության համերաշխ հեղափոխական դիրքը իմպերիալիստական պատերազմի ժամանակ, այլև կուսակցության ամբողջ քաղաքականությունն ու տակտիկան 1917 թվին, հեղափոխության ընթացքում ու հետագա տարիներում։

26. Ո՞ՐՆ ԵՐ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԻԾՆ ՈՒ ԴԵՐԸ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Նախ՝ պատերազմի հենց սկզբից բոլշևիկների կուսակցությունը կանգնեց մի տեսակետի վրա, որը խիստ թշնամաբար եր վերաբերվում պատերազմին։

Կուսակցության կենտրոնական օրգանի—«Սոցիալ դեմոկրատի» № 33-ում 1914 թվի 1/XI-ին հրատարակված եր «սոցիալ դեմոկրատ բոլշևիկների Մանիֆեստը», որ պարունակում եր հետևյալ դիրեկտիվները. ամեն կերպ ձգտել, որ պատերազմն անմիջապես դադարի ու սոցիալական հեղափոխությունն իրականանա. հեղափոխական սոցիալ դեմոկրատիայի խնդիրն է կռվել սեփական բուրժուազիայի իմպերիալիզմի դեմ՝ քաղաքացիական պատերազմի մեթոդներով, սոցիալ պատրիոտիզմի անխնա դիմակազերծումը. սաստկացրած պրոպագանդա զորքի մեջ և հեղափոխական կազմակերպությունների ստեղծում բանակում. ցարական կառավարության ռազմական պարտությունը խոշոր չարիքներից փոքրագույնն է. միատեղ աշխատանք ու կռիվ պատերազմի դեմ՝ բոլոր կռվող յերկիրների հեղափոխական տարրերի հետ միասին։

Յերկրորդ՝ որչափով որ պարզվում է, թե արտադրող ուժերը հարաճուն ու վիթխարի չափերով ոչնչանում և խորտակվում են ինչպես Յեվրոպայում, այնպես և մանավանդ Ռուսաստանում, որչափ որ աճում է մասսայական դժգոհությունն ու հույզը պատերազմի դեմ, այնչափով ել կուսակցությունն ավելի սերտ է մոտենում սոցիալական հեղափոխությանը, որ համարում է մարտական լոզունգ ու հերթական խնդիր ամբողջ միջազգային պրոլետարական շարժման, իթեվս որոց նաև Ռուսաստանում։ Այս արտահայտվում է թեկ նրանով, որ կուսակցությունը ամենից ծայրահեղ լոզունգներ է առաջ մղում միրձագույն տակտիկայի ասպարեզում (ընդհանուր գործադուլ, սաբոտաժ, ապստամբություն, բանվորական պատգամավորների խորհուրդներն իբրև ապստամբության օրգաններ ու իբրև հեղափոխական իշխանության օրգաններ— տես Կ. Կ.-ի 1915 թվի 13 X-ի թեզերը) այլև մի քանի ծրագրային խնդիրներով (օրինակ՝ հողի մունիգլխները) այլև մի քանի ծրագրային խնդիրներով (օրինակ՝ հողի մունի-
ցիպալիզացիայի փոխարեն՝ հողի ազգայնացումն առաջ մղելը)։

Այս կերպ գործելով ու հեղափոխական շարժման ամենաձախ թևում տեղ գրավելով՝ կուսակցությունը գլուխ է անցնում այն բոլոր փորձերի, որոնց

նպատակն եր III Ինտերնացիոնալ ստեղծելու համար հեղափոխական ինտերնացիոնալիստական տարրերի միավորությունը (1915 թվին Ցիմմերվալդում ու 1916 թվին Կինտալում), այլև իմպերիալիստական պատերազմը քաղաքական պատերազմի ու սոցիալիստական հեղափոխության վերածելը։

Այն ժամանակ Վ. Ի. Լենինը առաջին անգամ մատնանշում եր, վոր քաղաքացիական պատերազմում հաղթելում դեպքում մեր կուսակցության համար անհրաժեշտ է Ռուսաստանում իշխանությունը յուր ձեռքն առնել (Վ. Իլյիչի պատասխանը Լեդեբուրին Ցիմմերվալդի կոնֆերանսում 1915 թվի սեպտեմբերին) և նախատեսում է վոչ միայն պրոլետարիատի դեկավարող, գերիշխող դերի հնարավորությունը ռուսական հեղափոխության մեջ, այլև բոլշևիկների կուսակցության մոտալուտ գործողությունների ծրագիրը. յեթե կուսակցությունը իշխանության անցնե Ռուսաստանում՝ դեռևս իմպերիալիստական պատերազմի ժամանակ։ Այս ծրագիրը պարունակում եր հաշտության առաջարկ բոլոր պետություններին այն պայմանով, վոր գաղութներն ու բոլոր ճնշված ու կախյալ ժողովուրդներն ազատագրվեն։ Նկատի ունենալով, վոր այսպիսի առաջարկ բուրժուական կառավարությունները չեն ընդունիլ անկասկած, ծրագիրը առաջարկում եր կանխապատրաստել ու հեղափոխական պատերազմ մղել ամենից արմատական քաղաքական ու տնտեսական ռեֆորմներ անցկացնելով վճռականապես և ապստամբեցնելով բուրժուական կառավարությունների դեմ ինչպես բոլոր գաղութներն ու կախյալ յերկիրները, այնպես և մանավանդ Յեվրոպայի սոցիալիստական պրոլետարիատը (կուսակցության Կ. Կ.-ի 1915 թվի հոկտեմբեր 13-ի թեզիսները, վորը «Սոցիալ դեմոկրատ»-ից արտատպված է «Հոսանքի դեմ» «Против течения» անունը կրող ժողովածուի մեջ, եջ 303)։

III ՇՐՋԱՆ—ԿՌԻՎ ՀԱՆՈՒՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՄԱՆ ՈՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ

27. ԻՆՉ ԼՈԶՈՒՆԳՆԵՐ ՈՒ ԿՌԻՎ ՈՒՆԵՑԱՎ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1917 թվի ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Փետրվար-մարտի հեղափոխությունը մեր կուսակցությանը կանգնեցրեց արագ կատարված այն փաստի հանդեպ, վոր քաղաքական իշխանությունը կալվածատերերի ու ցարիզմի ձեռքից անցել եր լիբերալ բուրժուազիայի ձեռքը, ի դեմս հոկտեմբերյան—կադետական ժամանակավոր իշխանության, վորի գլուխն եր անցել իշխան Լվովը։ Հեղափոխության հետագա ընթացքի միջոցին այս կառավարությանը փոխարինում է Կերենսկու կառավարությունը, վոր կազմված եր մենշևիկների ու էս-էրների մանր բուրժուական համաձայնողական կուսակցությունների ու լիբերալ բուրժուազիայի (կադետների) կոալիցայից (միությունից)։

Բոլշևիկների կուսակցությունը փետրվար-մարտի հեղափոխության ըսկզբում բավականաչափ կանխապատրաստված չեր, վորպեսզի իշխանությունը իր ձեռքն առնե, իսկ մյուս կողմից՝ լայն մասսաները դեռ բուն իսկ կյանքի դասերով չեյին համոզվել, վոր անհրաժեշտ է յերկրորդ, պրոլետարական հեղափոխություն, այլ հավատում եյին մենշևիկ ու էս-էր համաձայնողականների խոսքերին, թե խաղաղ ճանապարհով կարելի չի հասնել պատերազմին վերջ տալուն, կարելի է ձեռք բերել հող, հաց ու խաղաղություն։ Սակայն ցարիզմի տապալումը առաջ բերող պատճառներն այնքան խորն եյին, վոր այն ժամանակվա բուրժուական կառավարությունը կամ ո՞ր ինչպես վորևէ բուրժուական իշխանություն չեր կարող վճռել պատերազմի լուծարքի խնդիրը, այլև տնտեսությունն այնպես վերականգնելու հարցը, վոր լայն բանվորական ու գյուղացիական մասսաների շահերն ապահոված լինեյին։ 1917 թվի ապրիլ 3-ին Շվեյցարիայից Ռուսաստան վերադարձած Վ. Ի. Լենինի մեծ յերախտիքն այն է, վոր նա ընդունեց և պարզ արտահայտեց այն հիմնական քաղաքական խնդիրները, վորոնք դրվում եյին վոչ միայն Ռուսաստանում, այլև վողջ աշխարհում ըստեղծված դրությունից և ոգնեց մեր կուսակցությանը, իսկ սրա միջոցով նաև բանվոր դասակարգին, վոր սրանք յուրացնեն և ընթանան քաղաքական նոր ուղիով։

Այս լոզունգներն ու խնդիրները, վոր ձևակերպել եր Վ. Իլյիչը 1917 թվի ապրիլի 4-ի հռչակավոր թեզիսներում, հետևյալներն եյին. ամբողջ իշխանությունը բանվորների, զինվորների ու ամենաչքավոր գյուղացիների պատգամավորների խորհուրդներին. խորհուրդների հանրապետություն, բուրժուական-դեմոկրատական պառլամենտական հանրապետության փոխարեն. այս նպատակով՝ ժամանակավոր կառավարության տապալումը, իմպերիալիստական պատերազմի արագագույն լուծարքը, հողի անմիջապես ու լիովին բռնագրավումն ու հանձնումը գյուղացիությանը՝ ոգտագործելու համար՝ պահելով սակայն տեխնիկապես բարձր, խոշոր կալքերը պետության ձեռքում և մշակելով գյուղատնտեսական բանվորների միջոցով. III Ինտերնացիոնալի ստեղծումը՝ համաշխարհային սոցիալիստական հեղափոխություն ու պրոլետարիատի դիկտատուրա իրականացնելու համար առաջիկա անցման շրջանում, վորը կապիտալիզմից տանում է դեպի սոցիալիզմ։

Շուտով այս թեզիսները հաստատվեցին և արտահայտություն գտան Համառուսաստանյան կուսակցական ապրիլի կոնֆերանսի (1917 թ. ապրիլի 24—29-ը) ու այնուհետև կուսակցության VI կիսալեգալ համագումարի (1917 թ. 25 հուլիս—3 օգոստոս) բանաձևերում։

VI համագումարն իբրև կուսակցության մոտագույն ու հիմնական խնդիրներ՝ առաջ մղեց «ուժեր կազմակերպելն ու կանխապատրաստելը՝ պետական իշխանությունն իր ձեռքն առնելու համար», տապալումը հակահեղափոխական բուրժուազիայի դիկտատուրայի, վորի գլուխ են անցել Կերենսկու էս-էրա-մենշևիկա-կադետական կուսակցությունը, պատերազմի լուծարքն ու սոցիալիստական շինարարության գիծը բանվորական վերահսկողության հիմունքով։

Ապրիլի կոնֆերանսների ու VI համագումարի վորոշումներով մեր կուսակցությունը վավերացրեց Ռուսաստանի հեղափոխության նոր ըմբռնումը, ըստ վորի համաշխարհային պրոլետարական հեղափոխություն է այն և սկսվում է առաջին անգամ Ռուսաստանում։ Այս ըմբռնումը տարբերվում է հեղափոխության մենշևիկա-եսէրական ըմբռնումից, ըստ վորի հեղափոխությունը բուրժուական—դեմոկրատական է և սահմանափակվում է Ռուսաստանի շրջանակներով։ Հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 7-ին կատարած

հոկտեմբերյան հեղափոխությունը հենց արտահայտությունն եր համաշխարհային հեղափոխական կոմմունիզմի այն լոզունգների, վոր առաջին անգամ հրապարակ հանեց մեր կուսակցությունը 1917 թվին։

28. Ի՞ՆՋՊԵՍ ԵՐ ԶԱՐԳԱՆՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ

Մեր կուսակցության ղեկավարությամբ կատարված հոկտեմբերյան հեղափոխությունը կուսակցության համար ապահովեց իշխող կացություն խորհուրդներում և նրա առաջ դրեց ամենադժվար խնդիրներ. 1) Նոր իշխանության՝ յուր ձեռքում պահպանելն ու ամրապնդելը, իմպերիալիստական պատերազմից դուրս գալն ու հանուն խաղաղության կռիվը, վորը տեղի յեր ունենում կատաղի քաղաքացիական պատերազմի ու այն ժամանակ դեռ ևս հզոր Ավստրո-գերմանական իմպերիալիզմի պայմաններում, 2) Կալվածատիրական-ինքնակալական հասարակարգի ամեն տեսակի մնացորդների լուծարք (կալվածատիրական հողատիրություն, ազգային ճնշում ու անհավասարություն, յեկեղեցու տիրապետություն պետության մեջ ու դպրոցում և այլն). 3) Դիմում նոր տնտեսական շինարարության պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ անցման շրջանում, վոր տանում է կապիտալիզմից դեպի սոցիալիզմ։

Կուսակցության VII համագումարը (1918 թ. մարտ) վորոշեց ստորագրել Գերմանիայի հետ կնքած Բրեստի հաշտության պայմանագիրը, հանձնաժողով ընտրեց՝ կուսակցության ծրագիրը վերաքննելու համար և կուսակցությանը տվեց նոր անուն—«Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցություն» (Բոլշևիկների—ՌԿԿ (Բ)։

Բրեստի դաշնագրի խնդրի նկատմամբ կուսակցության մեջ նկատվում եյին լուրջ տարաձայնություններ, և կազմվեցին յերեք հոսանքներ. մեկը պաշտպանում եր Գերմանիայի առաջարկած պայմաններով շուտափույթ խաղաղություն կնքելը (այս տեսակետն ուներ կուսակցության մեծամասնությունը, վորի գլուխ եր կանգնած ընկեր Լենինը), մյուս հոսանքը պնդում եր, թե պետք է մերժել այս պայմանները և հեղափոխական կռիվ մղել (այս տեսակետն ուներ փոքրամասնությունը, այսպես կոչված «ձախ կոմմունիստները», վորոնց գլուխ եյին անցել ընկեր Բուխարինն ու Ռադեկը, վորոնք հետագայում խոստովանեցին իրենց սխալը), չորրորդ հոսանքը կիսամիջոցների հոսանքը, պնդում եր, թե հաշտությունը չպետք է ստորագրել, բայց և չպետք է պատերազմել ել։ Վորովհետև պարզորոշ կերպով յերևան յեկավ վոր խորհրդային հանրապետությունը չի կարող ցարական քայքայված ու զորացրված բանակով վորևե պատերազմ մղել, այլև կամենալով հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները պահպանել, կուսակցությունը ընկեր Լենինի ղեկավարությամբ հաշվի առնելով հեղափոխական շարժման աճումն արևուտքում ու մանավորապես Գերմանիայում, յուր 7-րդ համագումարում պաշտպանեց Բրեստի պայմանագիրը ստորագրելը և յուր այս վճիռն անցկացրեց 1918 թվի մարտին կայացած խորհուրդների համառուսական IV արտակարգ համագումարում։

Ինչպես հայտնի չե, մեր կուսակցության հաշիվը փայլուն կերպով արդարացավ, 1918 թվի Գերմանիայի նոյեմբերյան հեղափոխությունը ազատեց խորհրդային հանրապետությունն այն լծից, վոր ընկել եր նրա ուսին Բրեստի

պայմանագրի ձևով և գերմանական իմպերիալիզմի դեմ ուղղակի պատերազմելու փոխարեն՝ խորհրդային հանրապետությունը հնարավորություն ստացավ մեր կուսակցության ղեկավարությամբ անխնա ջախջախելու ներքին հակահեղափոխությունը, վոր սաստկացել եր 1912 թվի կեսից, և ստեղծելու բանվորագյուղացիական հեղափոխական կարմիր բանակ։

Իմպերիալիզմի բոլոր մերկացումներից ու ռուսական հեղափոխության դասերից հետո, 1918 թվի սկզբի մոտերքը սոցիալ դեմոկրատիայի՝ բանվոր դասակարգի հանդեպ կատարած դավաճանությունն աղաղակող և դառնում և լայն մասսաները հետզհետե ավելի ու ավելի յեն նկատում այն։ Ուստի և մեր կուսակցությունը վերանվանվելով ու կոմմունիստական կոչվելով՝ մի կողմից նպատակ ուներ ընդգծել, վոր լիովին խզել է իր կապերը սոցիալ—պատրիոտների ու դավաճանների համաձայնողական սոցիալ դեմոկրատության հետ, իսկ մյուս կողմից, մատնանշել յուր անմիջական կապը այն հեղափոխական կոմմունիստական կուսակցության հետ, վորի հիմնադիրներն ու պարագլուխներն եյին 1848 թվականին Կարլ Մարքսը ու Ֆրիդրիխ Ենգելսը (տես «Կոմմունիստական կուսակցության Մանիֆեստը»)։

29. Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑԱՆ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ 1918, 1919 ՈՒ 1920 ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

1918, 1919 ու 1920 թվականները ներքին ու արտաքին հակահեղափոխության դեմ մղած անընդհատ ու կատաղի պատերազմների դարաշրջան եյին, մի շրջան, յերբ խորտակվում եյին բուրժուական-կապիտալիստական հասարակարգի հիմքերը և փորձեր եյին կատարվում սոցիալիստական շինարարություն անելու և կռիվ եր մղվում հանուն կոմմունիզմի՝ արտաքին ու ներքին ֆրոնտների ու կապիտալիստական համապաշարման (блокода) պայմաններում։ Ույժերի մեծագույն լարման միջոցով ու վիթխարի զոհերով կուսակցությունը ղեկավարելով բանվորական ու գյուղացիական մասսաներ՝ հաղթական կերպով ավարտում է պատերազմների շրջանը, ճեղքում է համապաշարումները, ամրապնդում պրոլետարիատի դիկտատուրան խորհրդային Ռուսաստանում և համաշխարհային պրոլետարական հեղափոխությունը կանխապատրաստելու և իրականացնելու համար ստեղծում է III կոմմունիստական Ինտերնացիոնալը 1919 թվի մարտին, Մոսկվայում։

Այս տարիների ընթացքում կուսակցության աշխատանքը ռազմական ու հարվածային բնույթ ուներ և ներքին ամբողջ շինարարությունը ծավալվում եր ռազմական կոմմունիզմի դրոշի ներքո, յերբ առաջին շարքում դրված եյին վո՛չ թե տնտեսական. այլ մարտական խնդիրները. ամեն ինչ ֆրոնտի համար ու ներքին գեներալա-կալվածատիրական ու բուրժուական —համփայական հակահեղափոխությունը ջախջախելու համար՝ հանուն խորհրդային իշխանության ու պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդման։

1918 ու 1919 թվականներին տեղի ունեցած յերկու համագումարներում կուսակցությունը վճռեց մի շարք ամենադժվար ու անչափ կարևոր խնդիրներ։ Այսպես, VIII համագումարում (1919 թ. մարտի 8—23) մշակվեց և հաստատվեց 1903 թվի յերկրորդ համագումարից հետո, առաջին անգամ ՌԿԿ (բոլշևիկների) նոր ծրագիրը, և լուծում ստացան յերկու դըժ-

վարին հարցեր. 1) թե ինչ վերաբերմունք պետք է ցույց տալ միջակ գյուղացիությանը. այս կետը վճռվեց այն իմաստով, որ պետք է միջակ գյուղացիության ունեցած կապը պրոլետարիատի հետ ամրապնդել և նրան գրավել կոմմունիստական կուսակցության կողմը (մեր կուսակցության կուրսը դեպի «միջակ գյուղացին»), և 2) վճռվեց ռազմական շինարարության հարցը՝ հզոր, կարմիր բանակ ստեղծելու նպատակով այլև, յետ մղելու համար սպիտակ գվարդիական հակահեղափոխության ու ոտարերկրյա իմպերիալիստական ներարշավի (ինտերվենցիա) գրոհը։

Կուսակցության IX համագումարը (1920 թ. մարտ 29—ապրիլ 4), որ գումարվեց խորհրդային իշխանության՝ արտաքին և ներքին ֆրոնտներում տարած փայլուն հաղթանակներից հետո (Կոլչակի, Դենիկինի, Յուդենիչի ջախջախումը, Անտանտայի դեսանտը յետ մղելը) ամենամեծ ուշադրություն դարձրեց տնտեսական շինարարության հերթական խնդիրների հարցին՝ առաջ մղելով միասնական տնտեսական պլանի ու էլեկտրոֆիկացիայի ծրագիրը՝ իբրև հիմնական պայման խորհրդային հանրապետության տնտեսական վերածնության ու զարգացման։

Սակայն IX համագումարից անմիջապես հետո, կուսակցությունը չկարողացավ պատերազմների շրջանից անցնել խաղաղության ու տնտեսական շինարարության. սպիտակ Լեհաստանի դեմ շուտով ծագած պատերազմը և Հարավում Վրանգելին ճնշելու անհրաժեշտությունը մի տարի յել հետաձգեցին տնտեսական շինարարության վրա ուշադրություն կենտրոնացնելու խնդիրը և միայն 1921 թվականի սկզբին Խորհրդային հանրապետությունը հաղթական կերպով ավարտեց քաղաքացիական պատերազմն ու արտաքին ֆրոնտները։

IX համագումարում մեր կուսակցությունը մշակեց պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում արհմիությունների ընդհանուր անելիքների հարցը։

Կուսակցության VIII ու IX համագումարները, չնայած կուսակցության կռվի ու շինարարության անչափ ծանր պայմաններին, ցերևան են հանում, որ մեր կուսակցությունը մեծագույն չափով աճել է և ամրապնդվել, այն ինչ մյուս բոլոր կուսակցություններն այս ժամանակ կործանվել ու վոչնչացվել են։

Մինչդեռ հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ կուսակցության անդամների թիվ 240,000 եր, իսկ VI համագումարում մոտ 200,000, VIII համագումարում արդեն ներկայացված եյին մոտ 314,000 իսկ IX համագումարում արդեն 611,000-ից ավելի։

30. Ի՞ՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒ ԴԵՐ ԿԱՏԱՐԵՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ X ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

X համագումարը (1921 թ. մարտ), վորտեղ ներկայացված եյին կուսակցության 705,000 անդամից ավելի, անընդհատ ու կատաղի պատերազմների պայմաններում գոյություն ունեցած պրոլետարիատի դիկտատուրայի անցյալ յեռամյա շրջանի ամփոփումները կատարեց և սրանից յելնելով դրեց ու վճռեց մի շարք նոր խնդիրներ։

Կուսակցության X համագումարի կարևորագույն հետևանքները յեղան սրանք. նոր տնտեսական քաղաքականությունը, որ սկսվեց պետական պարենավորման ու հում նյութի մոնոպոլիան ու պարենի մասնատրումը

(разверстка) բնահարկով (натурналог) փոխանակելով. նոր քաղաքականությունը կոոպերացիայի ասպարեզում. ավարտված պատերազմական ժամանակաշրջանի պայմաններում և պրոլետարիատի դիկտատուրայի դարաշրջանում արհմիությունների դերի ու անելիքների հարցի լուծումը. մանրամասն մշակումն այն հարցի, թե կուսակցությունն ինչպես պետք է վերաբերվի ազգային հարցի ասպարեզում ծագող հերթական խնդիրներին, կուսակցության միության ամրապնդումն ու կուսակցական շինարարության մի շարք այլ հիմնական խնդիրների լուծումը։

Այս հարցերի միջից կուսակցության գործնական շինարարության գործում ու նրա ներքին կյանքում ամենամեծ սկզբունքային կարևորությունն ունեյին նոր տնտեսական քաղաքականության խնդիրն ու արհմիությունների խնդիրը։

Արտաքին ու ներքին ֆրոնտների շնորհիվ արյունաքամ յեղած խորհրդային յերկրի մեջ մեր կուսակցության համար անհնարին եր շարունակել ռազմական կոմմունիզմի քաղաքականությունը, որի ժամանակ խորհրդային իշխանությունը բացառապես յուր վրա, յուր պետական ապպարատի վրա յեր առնում ժողովրդական տնտեսության կազմակերպումն ու վարումը և ամբողջ բնակչության կարիքների բավարարման հոգսը։ Թե քաղաքական հիմունքով—նպատակ ունենալով պրոլետարիատի ու աշխատավոր գյուղացիության միությունն ամրապնդել, թե տնտեսական հիմունքով—նպատակ ունենալով արտադրող ուժերը զարգացնել, խոշոր պետական արդյունաբերությունը վերածնել և լայն մասսաների դրությունը բարվոքել,—կուսակցությունը 1921 թվի գարնանից իբրև հիմք ընդունեց նոր տնտեսական քաղաքականության անվան տակ այն գիծը, որ նկատի յեր ունեցել և ուրվագծել եր ընկեր Լենինը դեռևս 1918 թվի սկզբին և որին 1918 թվի յերկրորդ կեսից սկսած՝ փոխարինել եր ռազմական կոմմունիզմի քաղաքականությունը, որ հետևանք եր կալվածատիրական-իմպերիալիստական հակահեղափոխության յեռամյա ռազմական կատաղի գրոհի, որ կատարվում եր մեզ վրա։

X համագումարից առաջ կատարված նախահամագումարյան կամպանիայի ընթացքում արհմիությունների խնդիրը բացառիկ դեր կատարեց շնորհիվ այն դիսկուսիայի սրության ու յերկարատևության, որ տեղի ունեցավ կուսակցության մեջ արհմիությունների դերի ու խնդիրների վերաբերյալ։

Ընդ սմին կուսակցության մեջ մի քանի խմբավորումներ—ֆրակցիաներ գոյացան, որոնցից կարևորագույններն եյին. 1) ընկեր Լենինի հոսանքը կամ պլատֆորման (որ այլ կերպ կոչվում է «տասնյակի» հոսանք, Կենտրոնական Կոմիտեյի այն տասն անդամի թվի համաձայն, որոնք սկզբում ստորագրել եյին ընկեր Լենինի պլատֆորման). այս հոսանքին կողմնակից յեղավ կուսակցության անդամների ճնշող մեծամասնությունը։ 2) Ընկեր Տրոցկու—հոսանքը կամ պլատֆորման ու 3) այսպես կոչված «բանվորական ոպպոզիցիայի» ուղղությունը կամ պլատֆորման։

Ընկեր Լենինի կամ տասնյակի տեսակետը առաջին շարքն եր մղում արհմիությունների հիմնական քաղաքական խնդիրները, այսինքն՝ հետպատերազմյան ժամանակաշրջանի հատուկ պայմաններում պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդումը, յերբ գոյություն ունի պրոլետարիատի ու

գյուղացիության փոփոխված փոխհարաբերություններ և նկատի չի առնըված նոր տնտեսական քաղաքականությունը:

Ընդհանրապես մյուս պլատֆորմները հաշվի չէյին առնում արհմիությունների ամենագլխավոր քաղաքական խնդիրները ռազմական ժամանակաշրջանից հետո, արհմիությունների կարևորագույն դերը համարում եյին խորհրդային հանրապետության տնտեսական շինարարությանը մասնակցելը և այս մասնակցությունը պատկերացնում եյին այնպես, ինչպես վոր կլիներ, յեթե 1921 թվականին էլ շարունակվելիս լիներ ռազմական կոմմունիզմի հին տնտեսական քաղաքականությունը: Ընդ սմին ուղիղ ճանապարհից հատկապես մեծ թեքում յերևան եր հանում այսպես կոչված բանվորական ոպպոզիցիայի պլատֆորման, վորը հրապարակ եր մղում անարխոսինդիկալիստական լոզունգներ այն մասին, վոր ժողովրդական ամբողջ տնտեսությունը ու սրա զանազան ճյուղերը պետք ե անցնեն արհմիությունների վարման ու կառավարման ներքո, և հենց սրանով էլ բանվորական ոպպոզիցիան խարխլում եր կոմմունիստական կուսակցության դերն ու նշանակությունը:

X համագումարից հետո շուտով արհմիությունների խնդրի նկատմամբ ընկեր Լենինի առաջարկած պլատֆորման դարձավ ամբողջ կուսակցության տեսակետ: Ինչ վերաբերում ե մյուս պլատֆորմներին ու հոսանքներին, ապա համագումարը վճռականապես դատապարտեց նրանք, իսկ այնուհետև նոր տնտեսական քաղաքականության զարգացմանը զուգընթաց՝ յերևան յեկավ այն հոսանքների լիակատար անհիմնությունը, և նրանք շուտով բոլորովին կորցրին իրենց ամեն նշանակությունը:

31. Ի՞ՆՉ ԴԵՐ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՆԵՑԱՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Կուսակցության XI համագումարը, վոր 1922 թվի մարտի 27-ից շարունակվեց մինչև ապրիլի 2-ը և վորում ներկայացված եյին կուսակցության մոտ 500,000 անդամներ, գլխավորապես նվիրվեց նոր տնտեսական քաղաքականության առաջին տարվա ամփոփումներն անելուն, այս քաղաքականության նշանակությունը պարզելուն և կուսակցության՝ սրանից բըղխող հերթական խնդիրներին:

Կուսակցության XI համագումարը հայտարարեց, վոր դադարել և վերջացել ե այն նահանջը, վորը սկսել եր 1921 թվի գարնանը և հանդես եր յեկել իբրև նոր տնտեսական քաղաքականություն և իբրև սրա հետ կապված ու մասնատիրական կապիտալիզմին արված զիջումներ: Նոր տնտեսական քաղաքականության հիմնական ու վերջական խնդիր համարվեց այն շաղկապը, վոր պետք ե ստեղծվի պետական խորհրդային տնտեսության ու գյուղացիական տնտեսականության (экономика) միջև, գյուղի, գյուղացիական մասսայի, աշխատավոր, շարքային գյուղացիության միջև: Այս շաղկապի նպատակը պետք ե լինի թույլ չտալ, վոր աշխատավոր գյուղացիությունը անցնի նեպի ժամանակ առաջացած ու գլուխ բարձրացնող մասնավոր կապիտալիզմի կողմը:

Այնուամենայնիվ կուսակցության անելիքը պետք ե լինի վոչ թե նոր քաղաքականություն կամ կազմակերպություն մտածել ու հայտնագործել,

այլ մարդիկ ընտրել հարկավոր տեղերի համար և ստուգել նրանց աշխատանքի կատարումը, այլ և տնտեսա-կուլտուրական ու քաղաքական տեսակետից լուսավորել նրանց և կանխել կուսակցության քայքայումը, վոր կարող ե յենթարկվել մանր բուրժուական տարրերի ազդեցությանը:

Այս քայքայման վտանգների դեմ կռվելու նպատակով, XI համագումարը մի շարք վորոշումներ արեց մեր կուսակցության շարքերում բանվորական տարրը զորեղացնելու մասին և հավանություն տվեց կուսակցության զտելու սիստեմին, կուսակցությունից վտարելու համար բոլոր վնասակար, այլատարր ու նրան արատավորող ու ծանրաբեռնող անդամներին:

XI կուսհամագումարի մյուս կարևորագույն սկզբունքային վճիռներից անհրաժեշտ ե մատնանշել նոր տնտեսական քաղաքականության պայմաններում արհմիությունների ունեցած դերին ու անելիքներին վերաբերող բանաձևը: Այս բանաձևը հավանություն տալով կուսակցության ԿԿ-ի համապատասխան թեզիսներին, վորոնք հրատարակված են 1922 թվի հունվարին, և վավերացնելով կուսակցության՝ պրոֆմիությունների մասին ունեցած ծրագրային հայացքները՝ արհեստակցական շարժման նոր, հատուկ սկզբունքներ սահմանեց, վորոնք բղխում են նոր տնտեսական քաղաքականության զարգացումից. այն ե՝ կոլեկտիվ պայմանագրերի կիրառումը, գործադուլների թույլատրումը, արհմիությունների կամավորապես անդամագրվելը, մասսաների հետ ամենասերտ կապ հաստատելը՝ սրանց ամենօրյա կարիքների բավարարման հողի վրա և այլն: Կուսակցության XI համագումարը, ավելի քան վորևե մեկը նախընթաց համագումարներից, յերևան հանեց կուսակցության միաձուլությունը, համերաշխությունն ու կազմակերպչական միությունը և սրանով վերջնականապես լուծարքի յենթարկեց նախկին ֆրակցիաների վերջին մնացորդները կուսակցության ներսում:

32. Ի՞ՆՉ ԴԵՐ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵՑ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ XII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ[1])

XII համագումարի հիմնական վճիռները այն վորոշումներն եյին, վոր արվեցին պրոլետարիատի ու գյուղացիության շաղկապի ամրապնդման մասին. մի շաղկապ, վորը դեռևս կուսակցության XI համագումարում հրապարակ եր հանվել իբրև նոր տնտեսական քաղաքականության հիմնական խնդիր, այլև այն վորոշումները, վորոնք վերաբերում եյին անցած տարվա ընթացքում նեպի զարգացման հետևանքների ամփոփումներին:

Այս շաղկապը ամրացնելու համար, պրոլետարիատի ու գյուղացիության փոխհարաբերությունները լավացնելու ու նրանց միջև կապն ուժեղացնելու նպատակով, անհրաժեշտ են. 1) վոր խորհրդային խոշոր ու միջին արդյունաբերությունն արագ զարգանա, հենվելով ինքն յուր ծախսերը հանելու (самоокумаемость) ու խորհրդային պետության ոգտին հասույթաբեր (доходный) լինելու սկզբունքների վրա, և ընդ սմին պահպանվեն քաղաքային ապրանքներն եժանացնելու ու սրանց վորակը լավացնելու պայ-

1) Կուսակցության XII համագումարը, վոր յեղավ 1923 թվի ապրիլի 17-25-ին, խորհըրդային իշխանության գոյության ամբողջ ժամանակաշրջանում առաջին անգամ եր, վոր տեղի չեր ունենում և աշխատում՝ առանց կուսակցության փորձված պարագլուխ և ուսուցիչ ընկեր Լենինի անձնական ներկայության: Սակայն XII համագումարի գլխավոր խնդիրներն ու վճիռները համագումարից մի քանի ամիս առաջ արդեն մատնանշված եյին Վլադիմիր Իլյիչի հոդվածներում:

մանը. 2) ամեն կերպ աջակցություն ցույց տալ գյուղացիական տնտեսության զարգացմանը, և գյուղատնտեսության արդյունքների գները բարձրացվեն մանավորապես նրանով, որ այս արդյունքները պետությունը արտահանե և վաճառե արտասահմանյան շուկայում. 3) որ թեթևացվեն ու կարգի բերվեն գյուղացիության վրա դրված հարկերը նրանով, որ բազմաթիվ, զանազան հարկերին փոխարինե միասնական գյուղատնտեսական հարկը. 4) որ մեր պետական ապարատը պարզացվի և բարվոքվի՝ քաղաքի ու գյուղի ամենալայնածավալ մասսաների կարիքներին ամենամեծ չափով ծառայելու նպատակով:

XII համագումարի սկզբունքային մյուս որոշումներից անհրաժեշտ է մատնանշել այն վճիռը, որ վերաբերում է ազգային ասպարեզում կուսակցության հերթական անելիքներին, այն կապի ամրապնդման գործին, որ պետք է գոյություն ունենա մի կողմից ռուս պրոլետարիատի ու գյուղացիության ու մյուս կողմից՝ այն բազմաթիվ ոչ-ռուս ազգությունների բանվոր դասակարգի ու մանավանդ գյուղացիության միջև, որոնք դարերի ընթացքում զոհ են յեղել շահագործման ու ամեն տեսակի ճնշման՝ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը: XII համագումարն առանձին ուժով ընդգծեց, որ անհրաժեշտ է վերջնականապես արմատախիլ անել վելիկոռուսական շովինիզմը և ամեն կերպ օժանդակել հետամնաց ժողովուրդներին, համաձայն կուսակցության ծրագրի սկզբունքների և ի զարգացումն այն բանաձևերի, որ հանել է X համագումարը՝ ազգային խնդրի վերաբերմամբ:

Վերջապես XII համագումարն առանձին բանաձևերով հաստատեց, որ մեր կուսակցության դիկտատուրան խորհրդային իշխանությունը ղեկավարելու գործում անխախտելի չե և ընդգծեց, որ անհրաժեշտ է ուժեղացնել կուսակցության դերը հանրապետության խորհրդային ու մանավորապես տնտեսական շինարարության ասպարեզում:

XII համագումարի բոլոր որոշումները համագումարը հանեց հազվագյուտ միաբանությամբ, և այս որոշումների միաձայն ընդունվելը վկայում եր, որ կուսակցության շարքերում ամենահաստատուն միություն գոյություն ունի:

Մեր կուսակցության այս միության անհրաժեշտությունն, այլև բանվորական ու գյուղացիական մասսաների կռիվը ղեկավարելու ու խորհրդային շինարարության գործում մեր կուսակցության դիկտատուրայի անհրաժեշտությունը հանդիսավոր կերպով արտահայտվեց ու ընդգծվեց XII համագումարում այն բազմաթիվ պատվիրակությունների ելույթներով, որոնք յեկել եյին բանվորական ու գյուղացիական անկուսակցական լայն կոնֆերենցիաներից, ժողովներից ու Մոսկվայի ու Պիտերի ֆաբրիկաներից ու գործարաններից և որոնք ողջունեցին XII համագումարը՝ մեր կուսակցության 25-ամյա հոբելյանին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ XI ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. Бубнов. „Основные моменты в развитии коммунистической партии".
2. Зиновьев. „Из истории нашей партии".
3. Каменев. „История партии коммунистов в России и Ленин".
4. Каменев. „Ко дню пятидесятилетия со дня рождения В. И. Ленина—Ульянова".
5. Лядов. „25 лет российской коммунистической партии".
6. Батурин. „Очерк истории социал-демократии в России".
7. Лядов. „История российской социал-демократии в России".
8. Шелавин. „Рабочий класс и его партия".
9. Российская коммунистическая партия в постановлениях и резолюциях ее с'ездов и конференций».
10. «25 лет РКП(б.) Иллюстрированный сборник истории".
11. «Пролетарская революция" № 2 (14) 1923 г.
12. Покровский. М. „Русская история в самым сжатом очерке».
13. «Русская история с древнейших времен".
14. Ильин (Ленин) „Развитие капитализма в России».
15. Ленин. «За 12 лет»
16. Туган-Барановский. „Русская фабрика в прошлом и в настоящим".
17. Тун. „История революционного движения в России".
18. Плеханов. „Русский рабочий в революционном движении".
19. Рязанов. „Группа освобождения труда".
20. Стеклов. „Борцы за социализм".
21. Ельницкий. «История рабочего движения в России».
22. К 25-летию первого с'езда партии".
23. „1-ый с'езд партии".
23. „2-ой с'езд партии».
25. «3-ый с'езд партии".
26. Ленин. Две тактики с.-д. в русской революции".
27. Лепешинский. «На повороте».
28. Троцкий. „1905 год».
29. „Из истории одного года".
30. Сверчков. „На заре революции".
31. «Декабрское возстание в Москве 1905 г.».
32. „4-ый с'езд партии".
33. «5-ый с'езд партии".
34. «История Петроградского Совета Рабочих Депутатов».
35. Каменевь. «Меньшевики в первой революции».
36. Ленин. Зиновьев. Каменев. „Марксизм и ликвидаторство».
37. «Из эпохи «Звезды» и „Правды».
38. Зиновьев и Ленин. „Против течения".
39. Шляпников. «Канци 17-го года".
40. Лукин. „Как пало царское самодержавие».
41. Покровский. „Царизм и революция".
42. Бухарин. «Классовая борьба и революция в России».
43. Ленин. „Политические партии в России и задача пролетариата».
44. Бухарин и Зиновьев „Июльские дни 1917 г.».

45. „Протоколы 6-го с'езда нашей партии».
46. „Шесть с'ездов нашей партии».
47. Бухарин· «От диктатуры империализма к диктатуре пролетатиата»·
48. Троцкий· «Октябрская революция".
49. „VIII, IX, X, XI и XII с'езды РКП(б.) Стенограф. отчеты".
50· «Пролетарская революция» Журнал Истпарта.
51. Ленин. «Полное собрание сочинений»·
52· Мещеряков «Партия Социалистов-Революционеров"·
53. Стеклов. «Партия Эс-еров".
54. Покровсний М. «Что установил так называемый процесс «Соц.-Революционеров».
55. Троцкий и Зиновьев. «О мятеже новых эс-еров»·

ԳԼՈՒԽ XII

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. Վ՞ՈՐՈՆՔ ԵՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական խնդիրները տնտեսական ասպարեզում յուրաքանչյուր տվյալ րոպեյում սերտ միացած են ու անբաժանելի յեն պրոլետարական պետության ընդհանուր քաղաքական խնդիրներից և կախում ունեն յերկրի ներքին ու արտաքին դրությունից, այլև նրա տնտեսակարգի (տնտեսականության—եկոնոմիկայի) առանձնահատկություններից։

Ամեն մի յերկրում պրոլետարիատը, վոր իր ձեռքն է առել քաղաքական իշխանությունը, իր հաղթության հաջորդ օրը ձգտելու յե իր տնտեսական քաղաքականության ասպարեզում նախ՝ ամենամեծ չափով վոչնչացնելու կապիտալիստական-կալվածատիրական տնտեսական հարաբերությունների բոլոր հիմքերն ու մնացորդները և զարգացնելու սոցիալիստական տնտեսությունը, և յերկրորդ՝ ամենամեծ չափով բարձրացնելու պրոլետարական պետության արտադրող ուժերը, վորպեսզի մասսաների դրությունը բարելավե և հետագա սոցիալիստական տնտեսական շինարարություն կատարե։ Սակայն յուրաքանչյուր յերկրում բանվոր դասակարգն այս ամենագլխավոր խնդիրները կիրականացնե, կախում ունենալով յուրաքանչյուր տվյալ պրոլետարական պետության արտաքին ու ներքին քաղաքական ընդհանուր դրությունից ու նրա տնտեսականության առանձնահատկություններից։ Սրա համապատասխան էլ պրոլետարական պետության տնտեսական քաղաքականության նախապատրաստական կամ անցման քայլերն ու շրջանները միատեսակ չեն լինիլ տարբեր յերկրներում ու տարբեր ժամանակներում։

Ընդ սմին մի քանի յերկրներում տնտեսական շինարարության պայմաններն ավելի բարենպաստ կը լինեն։ Այսպիսի յերկրներն ավելի արագ ու ավելի շատ առաջ կգնան սոցիալիզմի (կոմմունիզմի) ուղղությամբ և արտադրող ուժերը բարձրացնելու գործում ավելի արագ հառաջադիմություններ կանեն։ Ընդհակառակն, այլ յերկրներում, պրոլետարական պետության տնտեսական շինարարությունը մի շարք ամենալուրջ արգելքների ու դժվարությունների կը բախվի և անհրաժեշտաբար շատ ավելի դանդաղ կընթանա։

2. Ի՞ՆՉ ԱՄԵՆԱԳԼԽԱՎՈՐ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԱՐԳԵԼՔՆԵՐ ԵՅԻՆ ԾԱԳԱԾԱԾ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ

Տվյալ դեպքում դժվարությունները շատ ու շատ մեծ եյին ու բազմազան։

Նախ՝ կային այնպիսի դժվարություններ, վորոնք բղխում եյին միջազգային դրությունից։ Խորհրդային հանրապետությունն ամբողջ աշխարհում պրոլետարիատի դիկտատուրայի առաջին ու միակ պետությունն եր և իբրև այդպիսին էլ մնում է տակավին, մի պետություն, վոր այս դիկտատուրան իրականացրեց համաշխարհային կապիտալիստական ողակման պայմաններում, այլև այն ժամանակ, յերբ համեմատաբար դանդաղ եր աճում պրոլետարական հեղափոխությունը Յեվրոպայի ու Ամերիկայի մյուս բոլոր պետությունների մեջ։

Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո, խորհրդային Ռուսաստանն անհրաժեշտորեն բախվեց այն կատաղի գրոհին, վոր նրա վրա գործում եր համաշխարհային իմպերալիզմը, ի դեմս գերմանական իմպերալիզմին մինչև 1918 թիվը և մանավանդ ի դեմս Անտանտայի իմպերիալիզմի (այն բանից հետո, յերբ գերմանական իմպերիալիզմը խորտակվեց և 1918 թվի Գերմանիայի նոյեմբերյան հեղափոխության հետևանքով Բրեստի պայմանագիրը վոչնչացավ)։

Համաշխարհային բուրժուազիայի մարտնչող ու էլ ավելի հզոր իմպերիալիզմը հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մեզ ձգեց ամեն տեսակի ֆրոնտներում տեղի ունեցող արտաքին պատերազմների յեռամյա շրջանի մեջ, հետո փորձեց իրեն ատելի խորհրդային հանրապետությունը բնաջնջել համապաշարման ու ծառայագրական պայմանագրերի միջոցով և մինչև այժմ էլ հնարավորություն չի տալիս, վոր խորհրդային հանրապետությունն ամբողջապես ու լիովին նվիրվի տնտեսական շինարարության գործին։

Այս միջազգային կատաղի, անընդհատ գրոհին դիմադրելու համար խորհրդային հանրապետությունը հարկադրված եր և պարտական եր իսկույն գործադրելու մեծաքանակ ուժեր ու միջոցներ և հենց այս պատճառով էլ ստիպված եր հեռանալու տնտեսական շինարարության ասպարեզի հիմնական խնդիրներից։

Յերկրորդ՝ տնտեսական շինարարության դժվարությունները բղխում եյին ներքին քաղաքական դրությունից և ամենից առաջ այն ներքին քաղաքական կատաղի պատերազմից, վորը հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո խորհրդային իշխանության դեմ հարուցին կապիտալիստները, կալվածատերերը, համբաները (кулак), տերտերներն ու նախկին ցարական Ռուսաստանի մյուս հակահեղափոխական տարրերը՝ միանալով ես-եր մենշևիկական համաձայնողական կուսակցությունների հետ, վորոնց ջախջախել եր հոկտեմբերյան հեղափոխությունը։

Այս ներքին քաղաքացիական կատաղի պատերազմը, իմպերիալիստական ոտարերկրյա գիշատիչների դեմ մղվող պատերազմի նման, վոչ միայն մի շարք տարիների ընթացքում կլանում եր վիթխարի ուժեր ու միջոցներ

և աշխատավորների ամենալայն մասսաներից պահանջում եր արտակարգ լարում, այլև ազդում եր, այն էլ անմիջաբար, մեր տնտեսական քաղաքականության վրա յել։ Ներքին հակահեղափոխական ուժերի, սաբոտաժի և այլն դեմ մղվող կատաղի քաղաքական կռվի ժամանակ խորհրդային իշխանությունը և հենց իրենք աշխատավոր մասսաները հարկադրված եյին դիմելու այնպիսի միջոցների, վորոնց նպատակն եր իրենց դասակարգային թշնամիների տնտեսական հզորությունն ամենից ծայրահեղ կերպով վոչընչացնելը, հակառակորդներ, վորոնք բացահայտ կերպով պրոլետարական պետության դեմ եյին յելել։

Ներքին հակահեղափոխության դեմ մղվող կռիվը խորհրդային հանրապետության համար ծանր եր մանավանդ այն պատճառով, վոր ներքին հակահեղափոխությունը հանդես եր գալիս և այժմ էլ հանդես է գալիս՝ հենվելով ոտարերկրյա իմպերիալիզմի, հատկապես Ֆրանսիայի, Անգլիայի ու Յապոնիայի իմպերիալիզմի վրա։ Բացի սրանից, ներքին հակահեղափոխությունը յուր գոյությունն ու ապրուստը պահպանում եր իմպերիալիզմի միջոցներով և հանդիսանում սրա գործիքը՝ պրոլետարական պետության դեմ ու հեղափոխական կոմմունիզմի գաղափարների դեմ մղվող պատերազմներում։

Յերրորդ՝ պրոլետարական տնտեսական շինարարության վիթխարի դժվարությունները շարունակ գոյություն ունեյին և յերկար ժամանակ էլ գոյություն կունենան խորհրդային հանրապետության տնտեսակարգի, տնտեսականության (ЭКОНОМИКА) ու նրա բնակչության կուլտուրական հետամնացության շնորհիվ։ Հետամնաց տեխնիկան ու տնտեսականությունը, լայն մասսաների կուլտուրապես վիթխարի չափերով հետամնաց լինելը և սարսափելի քայքայումն ու փլուզումը իբրև 1914—1918 թ. թ. իմպերիալիստական քառամյա սպանդանոցի ժառանգություն, ստեղծել եյին այնպիսի ներքին պայմաններ, վորոնք չափազանց դժվարացնում են և մինչև այժմ էլ ամենագլխավոր արգելքն են հանդիսանում խորհրդային հանրապետության տնտեսական շինարարության գործում խոշոր ու արագ հաջողություններ ձեռք բերելու։

3. Ի՞ՆՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (ՏՆՏԵՍԱԿԱՐԳԸ)

Խորհրդային հանրապետությունը բոլոր խոշոր կապիտալիստական պետություններից համեմատությամբ տնտեսական տեսակետից տարբերվում է նրանով, վոր 1) տեխնիկապես ու տնտեսապես շատ հետամնաց է, վորի հետևանքն են՝ արտադրող ուժերի զարգացման ստորին մակարդակն ու յերկրի ընդհանուր աղքատությունը, չնայած վոր յերկիրն ունի թագնըված կամ մեռյալ վիթխարի հարստություններ և 2) վոր յերկրում կան ամենաբազմազան տնտեսական կերտվածքներ։ Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո, այլև այժմ, խորհրդային իշխանության հինգ տարի գոյություն ունենալուց հետո յել մենք խորհրդային հանրապետության մեջ գտնում ենք 1) մանր բնատնտեսական կամ շուկայի հետ շատ թույլ կապ ունեցող գյուղացիական տնտեսություն, վորն ընդարձակ չափերով տարածված է հատկապես արևելյան ու հյուսիսային ծայրերկրներում.

2) մանր ապրանքային տնտեսություն (այս կարգին է պատկանում գյուղացիների մեծամասնությունը, վոր հաց ու գյուղական տնտեսության այլ արդյունքներ է վաճառում, այլև տնայնագործներն ու արհեստավորները). 3) մասնավոր կապիտալիզմը, այսինքն՝ կապիտալիստական ձեռնարկությունները, վորոնք գտնվում են խորհրդային պետության թույլ ու կողմնակի վերահսկողության ու ազդեցության ներքո, 4) պետական կապիտալիզմը, այսինքն՝ խորհրդային իշխանության վերահսկողության ու հաշվառքի յենթարկված ապրանքա-կապիտալիստական ձեռնարկություններն ու կազմակերպությունները, վոր կանոնավորում է անմիջաբար ու ոգտագործում խորհրդային իշխանությունը հօգուտ յուր (վարձակալություն, կոնցեսսիաներ, խառն ակցիոներական ու այլ ձեռնարկություններ ու ընկերություններ, կոոպերացիաներ և այլն. 5) պետական խորհրդային տնտեսություն, վոր կազմում է ապագա սոցիալիստական տնտեսակարգի սաղմն ու հիմքը (պետական ազգայնացրած արդյունաբերություն, պետական յերկաթուղային ու ջրային տրանսպորտ, պետական արտաքին ու ներքին առևտուր, պետական բանկ ու ֆինանսներ, պետական հող անտառներով, ջրերով, ընդերքով միասին ու պետական տնտեսության այլ խմբեր)։

4. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ Ի՞ՆՉ ՏԵՍԱԿՆԵՐ ԵՆ ԳԵՐԱԿՇՌՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մեզանում տնտեսության գերակշռող, այսինքն ամենատարածված տեսակը մանր սեփականատիրական ապրանքային ու կիսաբնատնտեսական արտադրությունն ու տնտեսությունն է (գյուղացիները, տնայնագործները, արհեստավորները, մանր առևտրականներն ու մասամբ էլ մասնավոր մանր ու միջակ կապիտալիստը)։

Խորհրդային հանրապետության տնտեսականությունն ընդհանրապես ու ամբողջությամբ առած՝ մանր բուրժուական է, մի հանգամանք, վոր հենց ինքը վկայում է, թե ինչ վիթխարի դժվարություններ կան սոցիալիստական տնտեսական շինարարության համար և թե ինչպես մեր խորհրդային հանրապետությունը տնտեսական քաղաքականության առանձնահատուկ խնդիրներ ունի։

5. Ի՞ՆՉ ՎԻՃԱԿ ՈՒՆԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԿՐԻ ԱՐՏԱԴՐՈՂ ՈՒԺԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Վորովհետև յերկրում գերակշռում է մանր բուրժուական կերտվածքը և բնակչության լայն մասսաները, մանավանդ գյուղի բնակչությունը տնտեսապես, տեխնիկապես, կուլտուրապես ու այլ կողմերից վերցրած, ընդհանրապես հետամնաց է, ապա այս պայմաններում արտադրող ուժերի մակարդակն անչափ ցածր է մեզանում և ամենից առաջ գյուղական տնտեսության ասպարեզում։

1914—1918 թ. թ. իմպերիալիստական քառամյա պատերազմը, վոր վարում էին ցարիզմը, ռուսական կապիտալիստներն ու կալվածատերերն—Անտանտայի իմպերիալիստական գիշատիչների հետ միացած, այլև հետագա հեղափոխական յեռամյա պատերազմներն անչափ ուժասպառ արին ու

խարխլեցին յերկրի արտադրող ուժերը և առանձնահատուկ, բացառիկ դժվարություններ ու արգելքներ ստեղծեցին խորհրդային հանրապետության տնտեսական շինարարության համար թե Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո ու թե մինչև մեր որերը։

6. Ի՞ՆՉ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐ ԵՆՔ ՏԱՐԲԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կարելի յե յերեք այդպիսի ժամանակաշրջաններ սահմանել. առաջին շրջանը—հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մինչև 1918 թվի ամառը. յերկրորդ շրջանը—1918 թվի ամռանից մինչև նոր տնտեսական քաղաքականության սկիզբը (1921 թվի գարունը). և յերրորդ՝ 1921 թ. մարտից մինչև մեր որերը։

7. ԻՆՉՈ՞Ւ ՅԵՆՔ ԽՈՍՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՐԵՔ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՅԵՎ Ի՞ՆՉ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ՆՐԱՆՔ

Խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրները միշտ միևնույն են մնում։ Այս խնդիրները հետևյալն են. մինչհեղափոխական, կալվածատիրական-կապիտալիստական հին հասարակարգի բոլոր հիմքերի ու մնացորդների ամենից արագ վոչնչացում, ամենամեծ առաջընթացություն այն ճանապարհով, վոր տանում է դեպի սոցիալիզմը (կոմունիզմ), և յերկրի արտադրող ուժերի բարօրության ամենից արագ զարգացում՝ տնտեսական հետագա շինարարության, այլև քաղաքի ու գյուղի աշխատավոր լայն մասսաների վիճակի բարվոքման շահերի տեսակետից։

Սակայն այս հիմնական խնդիրներն իրականացնելու համար ուղիներ ու միջոցներ փնտրելն անհրաժեշտաբար կախումն է ունենում յերկրի ընդհանուր միջազգային ու ներքին քաղաքական կացությունից, և քաղաքական ավելի կարևոր խնդիրների լուծման շահերի տեսակետից (խորհրդային իշխանության ամրապնդումը ներսում ու պրոլետարական պետության ամրապնդումը դրսում) շատ անգամ անհրաժեշտ է լինում համապատասխան տնտեսական քաղաքականություն վարել։

Խորհրդային իշխանության պատմության ու մասնավորապես խորհրդային հանրապետության պատմության մեջ նկատում ենք յերեք ամենագլխավոր շրջաններ։

Առաջին շրջանում—Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո, մինչև 1918 թվի ամառը—խորհրդային իշխանության հիմնական խնդիրներն էին՝ դուրս գալ իմպերիալիստական պատերազմից ու պայքարել խաղաղության համար, հաղթել ներքին հակահեղափոխությանը, լուծարքի յենթարկել ցարական ու կալվածատիրական հասարակարգի հիմքերն ու մնացորդները և ամրապնդել ու կառուցել խորհրդային պետությունը։

Այս առաջին շրջանին համապատասխանում է նաև առանձին տնտեսական քաղաքականություն, վորը բնորոշվում է նրանով, վոր խորհրդային իշխանությունը, նախ քան 1918 թվի ամռան սկիզբը, իր տնտեսական քաղաքականությամբ վերացնում է մասնավոր սեփականությունը և պետա-

կան սեփականության և անցնում գլխավորապես հողային ու բանկային ասպարեզներում (հողի ու բանկերի ազգայնացում)։ Ինչ վերաբերում է արդյունաբերությանն ու առևտրին, ապա այստեղ մի քաղաքականություն է վարվում, վորի նպատակն է պետական կապիտալիզմ ստեղծել և ամրապնդել պետական տնտեսության համեմատաբար փոքրիկ շրջանը։

Յերկրորդ շրջանում—1918 թվի ամռան սկզբից մինչև 1921 թվի գարունը—խորհրդային իշխանությունն սկզբում նեղվելով գերմանական իմպերիալիզմից՝ յենթարկվում է ներքին հակահեղափոխության բոլոր ուժերի կատաղի գրոհին, այլ և օտարերկրյա ներխուժմանը, վոր տեղի յեր ունենում բոլոր ֆրոնտներում՝ Անտանտայի կողմից։ Խորհրդային իշխանությունը հարկադրված եր այս պայմաններում ամենահուսահատ ու կատաղի կռիվ մղել իր գոյության ու խորհրդային պետության անկախության ու ամրապնդման համար։

Այս կռվի շահերի տեսակետից, այլև անթիվ ֆրոնտներում պատերազմների յեռամյա շրջանն հաջողությամբ ավարտելու նպատակով խորհրդային իշխանությունը լարում է իր բոլոր ուժերն ու միջոցները և վարում է բոլորովին առանձնահատուկ տնտեսական քաղաքականություն, վորպիսին անհրաժեշտ է պատերազմի ժամանակ բոլոր կողմերից ամենահզոր թշնամիներով պաշարված մի բերդում։ Այս յուրատեսակ տնտեսական քաղաքականությունը, վոր առանձնահատուկ է յեղել 1918 թվի կեսերից մինչև 1921 թվի գարունը տևած պատերազմական յեռամյակում, կոչվում է «ռազմական կոմմունիզմի» քաղաքականություն։ Բառի իսկական առումով կոմմունիզմ չկար այստեղ ինարկե և չեր էլ կարող լինել։ Այս պատերազմական յեռամյակի ընթացքում, սրա հենց սկզբից, խորհրդային իշխանությունը պատերազմը հաջողակ վարելու համար, այլև ներքին հակահեղափոխությունը լիովին ջախջախելու նպատակով դիմում է հետևյալ միջոցներին. մասսայորեն ու անխտիր իր ձեռքն է առնում ամբողջ խոշոր ու միջին մասնավոր սեփականությունը, թե՛ անշարժը (բոլոր ֆաբրիկաները, գործարանները, հանքավայրերը, նավերը, շենքերը, տները և այլն) ու թե՛ շարժականը. փակում է համարյա բոլոր խոշոր ու միջին մասնավոր ձեռնարկություններն ու առևտրային հիմնարկները, վերացնում է մասնավոր առևտուրը, պետական մեկ կենտրոնի ձեռքումն է ամփոփում բոլոր մանր գործերի կառավարումը և տնտեսություն է վարում աշխատավճար ծառայության ու հարկադրանքի սկզբունքներով։

Յերրորդ շրջանում—1921 թվականի գարնանից, խորհրդային իշխանությունը հաջողությամբ ավարտելով պատերազմների ժամանակաշրջանը և գլխովին ջախջախելով ներքին հակահեղափոխությունը, հիմնովին լուծելով իր ամենագլխավոր քաղաքական խնդիրները՝ առաջին անգամ իրական հնարավորություն է ստանում դիմելու տնտեսական շինարարության գործին և անմիջաբար զբաղվելու այն հիմնական ու դրական խնդիրներն իրականացնելով, վոր պրոլետարիատի դիկտատուրան ունի տնտեսական ասպարեզում։

Այս յերրորդ շրջանին համապատասխանող այսպես կոչված նոր տնտեսական քաղաքականությունը (սրա սկիզբը բնահարկն է 1921 թվի մարտին՝ պարենի մասնատրման փոխարեն) վորոշ չափով վերադարձ է դեպի առաջին շրջանի տնտեսական քաղաքականությունը, այսինքն՝ դեպի պե-

տական կապիտալիզմի քաղաքականությունը (ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացում ու խոշոր պետական արդյունաբերության ասպարեզում հաստատուն, առողջ, թեկուզ և նեղացրած պատվանդանի ստեղծումը)։

Այս յերրորդ շրջանում խորհրդային պետությունը իր ձեռքում պահելով տնտեսականության մեջ իշխող բարձունքները՝ ազգայնացրած խոշոր արդյունաբերությունը, պետական տրանսպորտները, պետական արտաքին առևտուրը, պետբանկը, պետական հողը, պետական ու քաղաքայնացրած (մունիցիպալիզացիայի յենթարկած) շենքերն ու տները, ճանապարհ է տալիս մասնավոր տնտեսական նախաձեռնությանը՝ արդյունաբերության և առևտրի ասպարեզում և տնտեսությունը վարելու կապիտալիստական հնարներ է կիրառում իր պետական ձեռնարկությունների մեջ։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ 1917 ԹՎԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1918 Թ. ՀՈՒՆԻՍԸ

8. ՎՈՐՈ՞ՆՔ ԵՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Հողային ասպարիզում հետևյալներն եյին. 1) Դեկրետը հողի մասին, ըստ վորի հողը խլվում եր կալվածատերերից, յեկեղեցիներից ու վանքերից և այլն, և առանց փրկանքի դառնում խորհրդային պետության սեփականություն և տրվում աշխատավոր գյուղացիությանը՝ ձրի օգտագործելու համար. 2) Սրան հաջորդող օրենքը հողի սոցիալիզացիայի մասին, այսինքն՝ հողը աշխատավոր գյուղացիության ու կոլլեկտիվ ձեռնարկությունների (արտելներ, կոմմունաներ, խորհրդային տնտեսություններ) միջև հավասարար—աշխատավորական (уравительно-трудовой) սկզբունքներով բաշխելու մասին։

Այս յերկու դեկրետով խորհրդային իշխանությունը խորտակեց քաղաքական ռեակցիայի հիմնական պատվանդանը, վոչնչացրեց նախկին ցարական-կալվածատիրական տիրապետության հիմքը, հօգուտ աշխատավոր ու հողի կարիք ունեցող գյուղացիության վճռեց այն դարավոր կռիվը, վոր սա մղում եր կալվածատերերի դեմ և ամուր շաղկապով գյուղացիությանը զոդեց պրոլետարական հեղափոխության հետ։

Արդյունաբերության և առևտրի ասպարիզում—սկզբում նաև բանկային ասպարիզում—խորհրդային իշխանությունը 1917 թ. նոյեմբեր 14-ին դեկրետ հրատարակեց բանվորական վերահսկողության մասին և սրանով առաջին քայլն արեց դեպի ազգայնացումը, այսինքն դեպի ֆաբրիկաների, գործարանների, հանքավայրերի և այլ խոշոր ու միջին կապիտալիստական ձեռնարկությունների մասնավոր սեփականության լիակատար վերացումն ու այս բոլորը խորհրդային հանրապետության սեփականություն դարձնելը։

Արտաքին փոխառությունների ու պարտքերի ասպարիզում, վոր արել եր նախկին ցարական կալվածատիրական կառավարությունը, խորհրդային իշխանությունը հանդես յեկավ մի դեկրետով, վորով վոչնչացնում եր, այսինքն չեղյալ եր համարում այս բոլոր պարտքերն ու փոխառությունները,

վորոնք կնքվել եյին ցարի ու կալվածատերերի իշխանությունը պաշտպանելու և իմպերիալիստական պատերազմ մղելու նպատակով:

Այս դեկրետով խորհրդային իշխանությունը վճռական հարված տվեց միջազգային բուրժուազիային և միաժամանակ խորհրդային հանրապետության աշխատավոր լայն մասսաներն ու առաջին հերթին գյուղացիությունը ազատագրվեց այն ծանր լծից, վորպիսին անխուսափելի կերպով պետք ե դառնար ցարական կառավարության պարտքերի ու փոխառությունների հատուցումը, վորոնց գումարը հավասար եր մոտ ինն միլլիարդ ռուբլու վոսկով):

9. ԻՆՉՈ՞Ւ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՆԳԱՄԻՑ ՉԴԻՄԵՑ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԳԱՅՆԱՑՆԵԼՈՒՆ (ՊԵՏԱԿԱՆԱՑՆԵԼՈՒՆ)

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո եկող առաջին շրջանում խորհրդային իշխանությունը հարկադրված եր իր ուժերի ու միջոցների մեծագույն մասը գործադրելու նախ ներքին հակահեղափոխությունը ճնշելու համար, վորը քաղաքացիական պատերազմ եր հարուցել պրոլետարական պետության դեմ, և յերկրորդ՝ նոր պետական իշխանության ապպարատ շինելու համար:

Մյուս կողմից հաշվի առնելով, վոր բանվոր դասակարգը կազմակերպչապես քիչ ե կանխապատրաստված, և մարդիկ ու միջոցներ պակասում են արդյունաբերությունը պետական մասշտաբով տիրապետելու ու կառավարելու, պետական առևտուրը վարելու համար և այլն, խորհրդային իշխանությունն սկզբում եքսպրոպրիացիայի չեր յենթարկում կապիտալիստներին, այլ բոլոր մասնավոր կապիտալիստական ձեռնարկություններում բանվորական վերահսկողություն հաստատելու քաղաքականություն եր վարում: Բանվորական վերահսկողության այս քաղաքականությունը հարկավոր եր բանվորներին ու ծառայողներին՝ իբրև գործնական դպրոց, վորպեսզի բանվոր դասակարգը կանխապատրաստվի արդյունաբերությունն ու ընդհանրապես ամբողջ ժողովրդական տնտեսությունը կառավարելու գործին:

10. ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ Ի՞ՆՉ ՇԵՂՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՎԵՑԻՆ ԴԵՊԻ ԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ԿՈՂՄԸ

1) Ֆինանսների ու վարկի ասպարեզում, վորտեղ նոյեմբերի 17-ին բանկերի նկատմամբ վերահսկողությանը փոխարինեց բանկերի ազգայնացումը (պետականացում) ու նրանց բոլոր արժեքների գրավումը:

2) Արդյունաբերության ասպարեզում տեղի ունեցավ ա) խոշորագույն ու ամենակարևոր կապիտալիստական ձեռնարկությունների մի փոքրիկ մասի ազգայնացում ու բ) զանազան տեսակի ձեռնարկությունների ազգայնացում քաղաքացիական սրված պատերազմի շրջանում, 1917 թվի վերջին ու 1918 թվի սկզբին:

Քաղաքային անշարժ կալքերի ասպարեզում կիրառվում եր մասնավոր խոշոր կալքերի ու շենքերի ազգայնացում, վորի նպատակն եր ամենայեռանդուն կերպով լուծել բնակարանային խնդիրը քաղաքներում բանվորների բնակարանային պայմանները լավացնելու շահերի տեսակետից:

11. ԻՆՉՈ՞Ւ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՊԵՏՔ Ե ԳՐԱՎԵՐ ՈՒ ԱԶԳԱՅՆԱՑՆԵՐ ՄԱՍՆԱՎՈՐ ԲԱՆԿԵՐԸ

Մասնավոր բանկերն ամենևին չեյին ընդունում բանվորական վերահսկողության դեկրետը և իրենց ամբողջ ֆինանսական զորությունը գործադրում եյին այն բանի համար, վոր հակահեղափոխությանը դրամական միջոցներ մատակարարեն այն քաղաքացիական պատերազմի ընթացքում, վոր վերջինս մղում եր խորհրդային իշխանության դեմ:

12. Ի՞ՆՉ ԲՆՈՒՅԹ ՈՒՆԵՐ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅՆԱՑՈՒՄՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մասնավոր կապիտալիստական ձեռնարկությունների ազգայնացումը մինչև 1918 թ. ամառը, մասնակի բնույթ եր կրում, այսինքն չեր տարածվում բոլոր ձեռնարկությունների վրա: Խորհրդային իշխանությունն իր նախաձեռնությամբ ձգտում ե ազգայնացնելու պետականացման համար ամենից ավելի հասունացած ու կարևորագույն ձեռնարկությունները միայն: Սակայն այն հանգամանքի շնորհիվ, վոր արդյունաբերողները սաբոտաժ եյին անում, փախչում եյին ձեռնարկություններից, կամ թե բանվորական կոլլեկտիվներն ու տեղական կազմակերպությունները տարերային կերպով գրավում եյին ձեռնարկությունները ներքևից, խորհրդային իշխանությունը դեռ 1917 թվի վերջին ու մանավանդ 1918 թվին հարկադրված յեղավ ազգայնացնելու շատ ձեռնարկություններ, վոր սկզբում եքսպրոպրիացիայի յենթարկելու համար նկատի չուներ:

13. ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԻ ՎԵՐՋՈՒՄ ՎՈՐՈ՞ՆՔ ԵՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

1918 թ. գարնանը խորհրդային իշխանությունը գերմանական իմպերիալիզմի կողմից մի փոքր հանգիստ ունեցավ Բրեստի դաշնագիրը կնքելու միջոցով: Իսկ յերկրի ներսում յեռ եր մղված կապիտալիստական– կալվածատիրական հակահեղափոխության առաջին գրոհը, վորը փորձել եր քաղաքացիական պատերազմի միջոցով տապալելու խորհրդային իշխանությունը: Վերջինս տեղերում շտապով կատարում ե կառավարման նոր խորհրդային ապպարատի կառուցումը և տնտեսական քաղաքականության ասպարեզում առաջին շարքն ե մղում ներքին տնտեսական շինարարության այն ձեռնարկումները, վորոնց նպատակն եր լուծել ընթացիկ բոպեյի ամենասուր քաղաքական ու տնտեսական խնդիրները:

Այսպիսի ձեռնարկումներ եյին 1) պարենավորման ասպարեզում պարենային մենաշնորհի սահմանումը, վոր կատարվում եր պարենարարական դիկտատուրա մտցնելով ու գյուղական աղքատանու կոմիտեներ կազմա-

կերպերով. 2) հողային ու գյուղատնտեսական ասպարեզում այն հիմնական օրենքի հրատարակումը, որ վերաբերվում էր սոցիալիստական հողագործություն սկսելու ու վարելու միջոցներին. 3) արդյունաբերության ու առևտրի ասպարեզում պետական կապիտալիզմի քաղաքականության զարգացումը, որ պետք է տեղի ունենար արդյունաբերության պետականացրած մասում, խորհրդային տնտեսություններում ու կոմմունաներում և այլն՝ կատարվող սոցիալիստական ուղղակի շինարարությանը զուգահեռ:

14. ԻՆՉՈ՞Ւ ՄՏՑՐՎԵՑ ՊԱՐԵՆԱՐԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՕՐԵՆՔԸ

Այն պատճառով, որ պարենավորման դրությունը չափազանց ծանրացել էր մանավանդ քաղաքներում ու արդյունաբերական կենտրոններում այլև այն նպատակով, որ զորեղանա կենտրոնական իշխանության հեղինակությունը հացահատիկների պետական մոնոպոլիայի իրականացման գործում, մի մոնոպոլիա, որ բավականաչափ գոհացուցիչ կերպով չէին կարողանում իրագործել տեղական խորհրդային իշխանության օրգանները:

15. ԻՆՉՈ՞Ւ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑԻՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏԱՆՈՒ ԿՈՄԻՏԵՆԵՐԸ

Հոկտեմբերյան հեղափոխությունը գյուղացիության ամենալայն մասսաներին հնարավորություն տվեց հող ստանալու և նրանց ազատեց կալվածատերերի ու գյուղի հին, վոստիկանական իշխանությունների լծից ու կամայականություններից: Գյուղացիական մասսաները գրավեցին հողն ու կալվածատիրական կահույքի—ինվենտարի (կենդանի ու մեռյալ կահույքի) նշանավոր մասը, սակայն հեղափոխության զարգացումը, սկզբնական շրջանում, սրանից դենը չզարգացավ: Կալվածատիրական հողն ու կահույքը գըրավելիս ու բաշխելիս՝ առյուծի բաժին ընկավ գյուղի ունևոր, բարեկեցիկ տարրերի ձեռքը՝ ի վնաս աղքատանու շահերի, որի մի մասը, բացի այս հանգամանքից, ուշացել էր կալվածատիրական գույքը անմիջաբար գրավելու պրոցեսից, որովհետև գտնվում էր ռազմաֆրոնտներում, գործարաններում, քաղաքներում և այլն: Մյուս կողմից՝ քաղաքների վատթարացող դրության հետևանքով, բանվորների հոսանքն այստեղից ուղղվելով դեպի գյուղ՝ այստեղ սաստկանում էր և նմանապես մեծացնում գյուղական աղքատանու շարքերը: Սրա հետևանքով աճեցին ամենաչքավոր գյուղացիության խմբակներն ու շերտերը, որոնք խորհրդային իշխանությունը պաշտպանելու խնդրում ավելի էին շահագրգռված, քան միջակ և ունևոր գյուղացիությունը: Գյուղական աղքատանու կոմիտեները կազմակերպելու միջոցով խորհրդային իշխանությունը գյուղացիության ընդհանուր մասսայից անջատում էր իրեն ամենից ավելի մոտ ու աղքատագույն մասը, սրան մի շարք իրավունքներ ու առավելություններ էր տալիս մանավանդ պարենավորման ու հողային ասպարեզներում, և այսպիսով ստեղծում էր գյուղում պրոլետարական հեղափոխությունը կատարող ու կենտրոնի քաղաքականությունն առաջ մղող մի տարր:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ (1918 ԹՎԻ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ 1921 ԹՎԻ ԳԱՐՈՒՆԸ)

16. Ի՞ՆՉ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ռազմական կոմմունիզմի շրջանում տնտեսական քաղաքականության տարբեր գծերը հետևյալն էին. 1) ամբողջ տնտեսության մեջ—արդյունաբերության, առևտրի, պարենավորման, հարկային գործի ասպարեզում—մասնավոր տնտեսական, ապրանքա-դրամային ու պայմանագրային հարաբերությունների վերացումն ու մինիմումի հասցնելը. 2) պետական—հարկադրական ու բնատնտեսական—ապադրամական (безденежный) հարաբերությունների տիրապետությունը, որի ժամանակ մեծագույն չափերով կիրառվում էին ամեն տեսակի մոնոպոլիաներ ու կենտրոնացման սկըզբունքներ. 3) աշխատանքի կազմակերպության, տնտեսությունը վարելու ու հանրային գործերի կառավարման հատուկ զինվորական հնարներ (прием): Ռազմական կոմմունիզմի շրջանում խորհրդային իշխանությունն ամեն տեսակի ռազմաֆրոնտներում կատաղի ու չերկարատև պատերազմ մղելով արտաքին ու ներքին հակահեղափոխության դեմ՝ հենց այդ կողմի շահերի տեսակետից պետք է ջախջախիչ հարվածներ հասցներ մասնավոր կապիտալիստական տնտեսականությանն ու սեփականությանը՝ վերջինս ազգայնացման, բռնագրավման ու ռեկվիզիցիայի ենթարկելով: Մյուս կողմից՝ հարկադրված լինելով հենց նոր հիշած քաղաքականության հետևանքով իր վրա առնելու տնտեսությունը կազմակերպելու ու վարելու, այլ և աշխատավոր բնակչության գոյության համար անհրաժեշտ բոլոր արդյունքները մատակարարելու ամբողջ գործը, խորհրդային իշխանությունը, բավականաչափ նյութեղեն ու այլ միջոցներ չունենալու պատճառով, պետք է աշխատանքի կազմակերպման, տնտեսությունը վարելու ու հանրային գործերը կառավարելու հատուկ զինվորական հնարներ կիրառեր (միլիտաբիզացիա):

17. Ի՞ՆՉՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Նախ նրանով, որ մասսայական ազգայնացման ենթարկվեց ոչ միայն խոշոր ու միջին արդյունաբերությունը, այլ և մանր արդյունաբերական ձեռնարկությունների շատ մեծ մասը: Արդյունաբերությունը պետականացնելու այս քաղաքականության հետևանքով՝ ամեն տեսակի մասնավոր ձեռնարկատերերից խլվեցին բոլոր արդյունաբերական ձեռնարկությունները, սրանց մեջ հաշվելով նաև մանրերը, որոնց բանվորների թիվը հասնում էր մինչև 5-ի, և որոնք մեխանիկական շարժիչ ունեին, կամ այնպիսիները, որոնց բանվորների թիվը հասնում էր մինչև 10 հոգու և որոնք մեխանիկական շարժիչ չէին կիրառում: Սակայն պետականացրած ձեռնարկությունների այս վիթխարի մասսան պետությունը չէր

կարող ոգտագործել ու բանեցնել, և սրանք մեծ մասամբ իբրև մեռյալ բեռ ծանրացան խորհրդային իշխանության բյուջեի վրա։

Յերկրորդ՝ արդյունաբերության ասպարեզում ռազմական կոմմունիզմն արտահայտվեց նրանով, վոր փորձեց պետական ու կենտրոնացած օրգանների ոգնությամբ ընդգրկելու ամբողջ ազգայնացրած արդյունաբերությունը, պահելով այս բոլորը պետության հաշվին և հիշյալը կառավարելով համառուսական վիթխարի տրեստների—գլխկոմների (главки) ու կենտրոնների միջոցով, վորոնց միջև բաշխված եր ազգայնացրած ամբողջ արդյունաբերությունը։

Խորհրդային իշխանությունը հարկադրված եր առաջին հերթին արդյունաբերության ասպարեզում մասսայական ազգայնացման քաղաքականություն վարելու թե՛ ներքին հակահեղափոխության դեմ մղվող կռվի շահերի տեսակետից և թե՛ նպատակ ունենալով ձրիաբար գրավել ամեն տեսակի արժեքներ ու ապրանքներ, վորոնք անհրաժեշտ եին բանակի մատակարարման ու մի շարք պատերազմներ մղելու համար։

18. ԻՆՉՈ՞Վ ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԵՎՏՐԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Նրանով, վոր աստիճանաբար վերացվեց սկզբում մասնավոր, իսկ հետո նաև կոոպերատիվ առևտուրը և մասնավոր ու կոոպերատիվ առևտրին փոխարինեց պետական առևտուրը։ Հետագայում քանի զարգանում ե բնատնտեսությունը և տարածվում են ձրիության սկզբունքները, առևտրի նշանակությունն անընդհատ ընկնում ե և սրան փոխարինում ե ապադրամական, բնատնտեսական բաշխումն ու ամբողջ բնակչության ձրի մատակարարումը, վոր կատարում ե պետությունը։

19. ԻՆՉՈՎ ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՅԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Ամենից առաջ նրանով, վոր խորհրդային իշխանության բյուջեի ու ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ դրամահարկերի ու բուն իսկ դրամների դերը նվազեց այն պատճառով, վոր վոչնչացել եր կապիտալիստական տնտեսությունն ու կալվածատիրական հողատիրությունը, այլ և այն պատճառով, վոր ապրանքափոխանակային ու բնատնտեսական, ապադրամական հարաբերություններն եին զարգացել։ Հետագայում, քանի ընդարձակվում են բնատնտեսական հարաբերությունները և աճում են պետական մոնոպոլիաները, թե՛ արդյունքները պատրաստելու և թե՛ բաշխման գործում, հարկերը բոլորովին վերացվում են, դրամի դերը գահավիժորեն նվազում ե, և հարկերի փոխարեն՝ պետական մոնոպոլիայի ու պարենի մասնատրման կարգն ե սահմանվում։

Այս կարգը հատուկ նշանակություն ուներ գյուղատնտեսության ասպարեզում, գյուղացիության հետ ունեցած փոխհարաբերությունների ժամանակ։ Վերջինս խորհրդային իշխանությանը պետք ե պարեն մատակարարեր ձրի, պարտադիր պարենագրավման հիմունքով, ընդ վորում նրան պետք ե մնար այնքան միայն, վորը նվազագույն չափով անհրաժեշտ եր սեփական սպառման, անասունների կերի ու տնտեսությունը շարունակե-

լու համար, իսկ բոլոր ավելցուկները գրավվում եին՝ խորհրդային հանրապետության կարիքները բավարարելու համար։ Չնայած վոր պետական մոնոպոլիաների, մանավանդ պարենի մասնատրման քաղաքականության հետևանքով գյուղացիական տնտեսությունը խորապես քայքայվել եր, այլ և չնայած, վոր այս քաղաքականությունը կորստաբեր եր գյուղատնտեսության համար, խորհրդային իշխանությունն ուրիշ միջոցներ ու աղբյուրներ չունենալով՝ հարկադրված եր գյուղից պարենային ու այլ արժեքներ ձրի դուրս ծծելու այս քաղաքականությունը կիրառելու, վորպեսզի բանակին պարեն մատակարարի, տրանսպորտին ու ռազմական արդյունաբերությանն ոժանդակի և ամրապնդի Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումները։

Սակայն խորհրդային իշխանությունը մի անգամից չհանգեց մոնոպոլիաների ու պարենի մասնատրման այս սիստեմին, այլ աստիճանաբար, սահմանափակ ու մասնակի մոնոպոլիաների մի շարք փորձերից հետո, դրամահարկերի փոխարեն բնահարկերին անցնելու անհաջող փորձերից հետո և այլն։

20 ԻՆՉՈ՞Վ ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԸ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Ռազմական կոմմունիզմի շրջանում աշխատանքի կազմակերպման ասպարեզում վարձման ու պայմանագրական հարաբերությունների փոխարեն իշխեցին ու ամենալայն չափերով տարածվեցին աշխատանքային ծառայության ու աշխատանքի հարկադրական կազմակերպման սկզբունքները, մասնավորապես աշխատանքային մոբիլիզացիայի ու միլիտարիզացիայի սկզբունքները (հատուկ զինվորական հնարների կիրառումը)։

Արդյունաբերությունն ու տրանսպորտը պահելու ու զարգացնելու համար, վորոնք բացառապես բանում եին ինքնապաշտպանության կարիքների համար, անհրաժեշտ եր հիշյալներն ապահովել բանվորական ուժով, վառելիքով և այլն։ Վորովհետև քաղաքներում ու գյուղերում միջոցներ չկային բանվորական ուժի փոխարեն ճարելու, այլ և վարձման կարգով բանվորական ուժ ճարելու համար, խորհրդային իշխանությունն աշխատանքային ծառայության ու աշխատանքի հարկադրական կազմակերպման սկզբունքները պետք ե կիրառեր ֆաբրիկաներում ու գործարաններում, տրանսպորտի մեջ, վառելիք ու փայտեղեն պատրաստելու ասպարեզում, սայլերով ու գրաստներով փոխադրություն կատարելու ասպարեզում և այլն։

Ռազմական կոմմունիզմի շրջանում բանվորական լայն մասսաների ապրուստի չափազանց ցած, իսկ շատ դեպքերում սովամահ մակարդակը, հասկանալի ե, այն հետևանքը պետք ե ունենար, վոր աշխատանքի արտադրողականությունը վիթխարի չափով ընկներ բոլոր ասպարեզներում, բանվորական ուժը քաղաքներից ու արդյունաբերությունից փախչեր դեպի գյուղն ու գյուղական տնտեսությունը և այլն։

Աշխատանքային ծառայության ու խիստ դիսցիպլինայի քաղաքականությունն այն կոչերի հետ միասին, վորոնք ուղղվում եին աշխատավորների հեղափոխական պարտքի գիտակցությանն ու խանդավառությանը, հնարավորություն տվին խորհրդային իշխանությանը՝ չկռվելու բանվոր-

կան ուժի պակասության դեմ, այլ և աշխատանքի արտադրողականության անկման դեմ։ Աշխատանքային ծառայության սկզբունքների լայն կիրառման (աշխատանքային ընդհանրական ծառայություն), այլ և աշխատանքը զինվորականի նման հարկադրաբար կազմակերպելու հետ միասին, ռազմական կոմունիզմի շրջանում միևնույն ժամանակ վիթխարի չափերով տարածվեցին արտապարտադիր (сверхобязательный), կամավոր ու ձրի աշխատանքի զանազան տեսակները՝ շաբաթօրյակների, աշխատանքային շաբաթների, ամիսների և այլն ձևով։ Կոլեկտիվ ու մասսայական աշխատանքի այս տեսակները պայծառ արտահայտությունն էին բանվորական մասսաների հեղափոխական խանդավառության ու աշխատանքային հերոսության, մասսաներ, վորոնք մեծագույն դժվարություններ ու զրկանքներ էին կրում՝ ոժանդակելու համար այն կռվին, վոր մղվում էր հանուն հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների։

21. ՎՈՐՈ՞ՆՔ ԵՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Քանի կրճատվում էր ապրանքագրամային ու մասնավոր տնտեսական հարաբերությունների դերը, այնքան տարածվում էին, և ռազմական կոմունիզմի շրջանի վերջերքում, գերակշռում էին բնակչությանն ու առաջին հերթին բանվորներին ու աշխատավորներին ամեն անհրաժեշտ պիտույք ձրի բաշխելն ու ձրի մատակարարելը, վոր կատարում էր պետությունը (պարենավորման, բնակարանի, փոխադրության ձրիություն և այլն)։

Վորովհետև խորհրդային հանրապետության տրամադրության տակ չափազանց սահմանափակ միջոցներ կային ուստի այս ձրի բնատնտեսական մատակարարումը, վոր տարածվում էր բնակչության վիթխարի մասսաների վրա, բնականաբար շատ անբավարար էր և չափազանց փոշիացնում, չքացնում էր գոյություն ունեցող աղքատիկ պաշարները։

Այս ձրիության նկատմամբ մի ուղղում էր այսպես կոչված նպատակավոր մատակարարումը (целевое снабжение), այսինքն՝ բանվորներին ու ծառայողներին առավելություն տալով պարենի ու լայն սպառման զանազան, այլ առարկաներ ավելադիր (добавочный) չափերով մատակարարելը՝ նայած աշխատանքի այն քանակին, վոր նրանք էին կատարում և նայած նրանց կատարած աշխատանքի պետական տեսակետից կարևոր լինելուն։

Չնայած այս ուղղումին, այլ աշխատանքի վարձատրման խրախուսիչ յեղանակների կիրառմանը (հատով աշխատանք, պրեմիայով աշխատանք) ռազմական կոմունիզմի շրջանում բաշխումը ընդհանրապես ու ամբողջությամբ առած՝ աչքի էր ընկնում վոչ միայն ձրիությամբ ու բնատնտեսական բնույթով, հավասարարության (уравнительность) գծերով, այլև նրանով, վոր այս կամ այն չափով պետության մատակարարումով էին ապրում բնակչության վիթխարի մասսաները։

22. ԱՐԴՅՈՔ ՃԻ՞ՇՏ ԷՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ մեզ համար բոլորովին պարզ է, վոր ռազմական կոմունիզմի տնտեսական քաղաքականությունը վոչ միայն չէր նպաստում խորհրդային

հանրապետության արտադրող ուժերի զարգացմանը, այլև ընդհակառակը խախտում էր այն զարգացումը և ամբողջ ժողովրդական տնտեսությունը տանում էր դեպի անկում։

Այն քաղաքականությունը վեր էր խորհրդային հանրապետության միջոցներից և չէր համապատասխանում բանվորագյուղացիական խորհրդային դեռևս մատաղ իշխանության զարգացման մակարդակին ու կազմակերպչական ուժերին։

Յուր վրա առնելով ամբողջ խոշոր ու միջին տնտեսության վարումն ու բնակչության ձրի մատակարարումը՝ խորհրդային իշխանությունը չէր կարող իրագործել այս խնդիրները։ Բացի սրանից՝ ռազմական կոմունիզմի տնտեսական քաղաքականությունը լայն մասսաների, մանավանդ գյուղացիության մեջ շահագրգռություն առաջ չէր բերում արտադրողականությունը զարգացնելու և տնտեսությունը բարձրացնելու նկատմամբ։ Գյուղացիական գյուղատնտեսության վրա առանձնապես կորստաբեր ազդեցություն էր ունենում պարենավորման հին քաղաքականությունը, այսպես կոչված պարենմասնատրումը։

Այսպիսով ռազմական կոմունիզմի տնտեսական քաղաքականության մեջ խորապես բացասական գծեր կային, վորոնք թույլ չտվին, վոր յերկար գոյություն ունենա այն։

Այնուամենայնիվ հիշյալ քաղաքականությունը, յուր ժամանակի համար, յուր ամենից էական գծերով ուղիղ ու նպատակահարմար էր. վորովհետև 1918—1920 թ. շրջանում այլ տնտեսական քաղաքականություն վարելն անհնարին էր թե ներքին քաղաքականության, հակահեղափոխությունը ջախջախելու շահերի տեսակետից և թե արտաքին քաղաքականության—ռազմաֆրոնտներում խորհրդային հանրապետությունը պաշտպանելու շահերի տեսակետից։

Ռազմական կոմունիզմի շրջանի տնտեսական քաղաքականությունն անհնարին էր իբրև յերկարատև, բազմամյա քաղաքականություն, վորովհետև անխուսափելի կերպով քայքայում էր արտադրող ուժերը լիովին և կործանում յերկիրը, մասնավորապես գյուղական տնտեսությունը, այսինքն՝ վոչնչացնում էր բանվոր դասակարգի ու աշխատավոր գյուղացիության այն դաշինքը, վորը կազմում է խորհրդային իշխանության, այլև մեր կուսակցության քաղաքականության բուն հիմքը։

Սակայն այս տնտեսական քաղաքականությունը հնարավոր ու անհրաժեշտ էր 1918-1920 համեմատաբար կարճ շրջանի համար,—և այս քաղաքականությունը նպաստեց, վոր մեր կուսակցությունը, չնայած այս քաղաքականության տված տնտեսական վիթխարի վնասին, պաշտպանե խորհրդային իշխանությունն ու հանրապետությունը արտաքին ու ներքին հակահեղափոխության բոլոր ուժերի կատաղի գրոհից և սրանով ապահովե գլխավոր պայմաններ 1921 թվականից սկսած, այն է՝ պատերազմների շրջանից հետո, անցնելու նոր սկզբունքներով կատարվող խաղաղ տնտեսական շինարարության։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ XII ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. Ленин Н. Элономика и политика в епоху диктатуры пролетариата (Коминтерн. № 6)
2. ,, О продовольственном налоге (Հայերեն՝ Ն. Լենին, «Պարենհարկի մասին» Թարգմ. Թ. Ա.):
3. ,, «Очередные задачи советской власти».
4. ,, «Полное собрание сочинений» Томы XV, XVI и XVII.
5. Степанов И. «От рабочаго контроля к рабочему управлению в промышленности и селском хозяйстве».
6. Ларин и Крицман. Организация народного хозяйства».
7. Троцкий Л. «Терроризм и Коммунизм».
8. Ларин. Народное хозяйство по рубеже 4 года».
9. Стенографические отчеты и постановления всероссийских партийных с'ездов за 1918—1921 г. г.

ԳԼՈՒԽ XIII

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Ե՞ՐԲ ՈՒ Ի՞ՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑԱՎ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Խորհրդային իշխանությունը նոր տնտեսական քաղաքականությանն անցավ 1921 թվի գարնանը (մարտին), պրոլետարական մեծ հեղափոխության չորրորդ տարում։ Այս ժամանակ արդեն իրագործված եյին խորհրդային հանրապետության ռազմա-պաշտպանողական հիմնական խնդիրները։ Ջախջախվել եյին բոլոր փորձերը, որով հայրենի ու օտարերկրյա բուրժուազիան ռուսական ինքնակալության մնացորդների հետ դաշնակցած՝ կամենում եր իշխանությունը խլել բանվորների ու գյուղացիության ձեռքից։ Բացահայտ կերպարանք ունեցող քաղաքացիական պատերազմն ավարտված եր։

Քաղաքացիական պատերազմի վերջանալը նշանակում եր, որ խորհրդային Ռուսաստանին անհրաժեշտ է, և նա հնարավորություն ունի դիմելու տնտեսական շինարարության այնպիսի յեղանակների, այնպիսի տնտեսական քաղաքականության, որոնք համապատասխան լինեյին ռուսական տնտեսականությանը, ինչպես և մեր ժողովրդական տնտեսության կացությանը։

Ռուսաստանն այնպիսի յերկիր չեր, որտեղ ոչ միայն հողագործության մեջ, այլև արդյունաբերության ասպարեզում տնտեսության խոշոր ձևերը գերակշռեյին մանրերին։ Չնայած արդյունաբերության մի քանի ճյուղերի տեխնիկական շատ մեծ զարգացմանը, ինչպիսիք եյին, օրինակ, մանածագործական ու մետաղագործական արդյունաբերությունը և այլն, Ռուսաստանն ամբողջությամբ առած՝ տնտեսապես մի հետամնաց յերկիր եր, որի հասույթն ստեղծվում եր իր մանր ու տնայնագործական արդյունաբերության և մանր (յերբեմն և մանրագույն) հողագործության շատ գործոն մասնակցության շնորհիվ [1]։

Շնորհիվ այն նշանավոր դերի, որ Ռուսաստանի տնտեսականության մեջ խաղում եր մանր, անջատ, տեխնիկապես անկատար տնտեսությունը, մեր

[1]) Նախապատերազմական Ռուսաստանում (ինչպես և ներկայումս) հողագործությունը տնտեսության գլխավոր ճյուղն եր թե նրա մեջ աշխատող ու նրանով կերակրվող բնակչության թվով ու թե ժողովրդական հասույթի գումարով։ 11,8 միլիարդ ռուբլի ընդհանուր ժողովրդական հասույթից, որ ստանում եր յեվրոպական Ռուսաստանի բնակչությունը նախապատերազմական շրջանում, 6 միլիարդ 400 միլիոն ռուբլի տալիս եյին գյուղատնտեսությունը, անտառաբուծությունն ու ձկնորսությունը, իսկ 5 միլիարդ 400 միլիոն ռուբլի՝ արդյունաբերությունը, տրանսպորտը, շինարարական գործն ու առևտուրը։ Այսպիսով, ամբողջ հասույթի 54%-ը տալիս եր գյուղատնտեսությունը, իսկ 46%-ը միայն տալիս եյին արդյունաբերությունն ու ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերը։

արտադրող ուժերը թույլ էին զարգացած և բավականաչափ ամուր պատվանդան չունեին։ Բնորոշելով Ռուսաստանի տնտեսականությունը, ինչպես վոր այս կազմվել էր պատմականորեն և ինչպես վոր էր 1917 թվի հեղափոխության րոպեին, Վ. Ի. Լենինը մատնանշում է, վոր մեր տնտեսության մեջ զանազան հանրային-տնտեսական ձևեր կան։ Մինչ-հեղափոխական Ռուսաստանում իրար հետ միանում էին 1) նահապետական, այսինքն նշանավոր չափով բնատնտեսական գյուղացիական տնտեսությունը, 2) մանր ապրանքային արտադրությունը, այսինքն տնտեսությունն այն գյուղացիների, վորոնք վաճառում են հացահատիկ ու այլ արդյունքներ, 3) մանր քաղաքային արդյունաբերությունն ու արհեստը և գյուղական տնայնագործական արդյունաբերությունը, 4) խոշոր ու միջին ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունը։

Փետրվարյան ու հոկտեմբերյան հեղափոխությունը և վերջինիս հաջորդող քաղաքացիական պատերազմը Ռուսաստանի տնտեսականության վրա այն ազդեցությունը գործեցին, վոր մանր բուրժուական, փոշիացած տնտեսությունը, վոր առաջ էլ էր գերակշռում, վոչ միայն չհանձնեց իր դիրքերը, այլ և ժամանակավորապես ամրապնդվեց՝ ի հաշիվ խոշոր ու միջին տնտեսության։ Սակայն հողային հեղափոխությունը, վորը միանգամ ընդմիշտ վերջ տվեց հողի կալվածատիրական սեփականության ծառայագրական ձևերին և գյուղացիությանը հանձնեց կալվածատիրական ու պետական հողերի մեծ մասը,—չմեծացրեց գյուղացիական տնտեսության տեսակարար կշիռը, այսինքն՝ չդարձրեց այս տնտեսությունն ավելի խոշոր, ավելի լավ կազմակերպված ու տեխնիկապես ավելի կատարյալ տնտեսություն։ Ընդհակառակը, հողի այն տեղաշարժությունը (передвижка), վորը տեղի ունեցավ կալվածատերերից (մասամբ և գյուղական խոշոր համայնքներից) հողը խլելու ու վերջինս տարերային կերպով բաշխելու հետևանքով, պատճառ դարձավ, վոր գերիշխե միջակ գյուղացու տնտեսությունը, վորը իր չափերով փոքր է։ Ինչ վերաբերում է արդյունաբերությանը, ապա սկզբում իմպերիալիստական, իսկ հետո նաև քաղաքացիական պատերազմի բոլոր աղետները ծանրացան արդյունաբերության խոշոր ճյուղերի, ծանր արդյունաբերության ու թեթև արդյունաբերության մեծ մասի վրա, և հենց սրանով էլ մեծացրին տեսակարար կշիռը (յերկրի տնտեսության մեջ ունեցած նշանակությունը) մանր ու տնայնագործական արդյունաբերության, վորը մեծ դիմադրություն ցույց տվեց պատերազմի կործանարար ազդեցությանը։

Դեռ 1914—1917 թ. թ. իմպերիալիստական պատերազմը Ռուսաստանի խոշոր արդյունաբերությունը ծռել, հանել էր վերջինիս ճանապարհից՝ խանգարելով այն փոխհարաբերությունը, վոր կար նրա առանձին մասերի միջև։ Մի քանի ճյուղեր, վորոնք աշխատում էին զինվորական կարիքների համար, անչափ ուռճացան։ Ընդհակառակը, մյուս ճյուղերը, վորոնք բնակչության կարիքներին էին ծառայում, սեղմվեցին ու անկման վիճակի հասան։ Պատերազմը փակեց արտասահմանյան հում նյութը (բամբակ, կաուչուկ) Ռուսաստան ներմուծելու ճանապարհները, բոլորովին վերջ տվեց արդյունաբերությանը՝ մեքենաներ, գործիքներ ու այլ տեխնիկական կարգ ու սարք մատակարարելը, խանգարեց ապրանքների շրջանառությունը, քայքայեց տրանսպորտը և սկիզբ դրեց արտադրության ռայոնների,

վառելիքի, հում նյութի ու պարենի ռայոններից խզվելուն (Պետերբուրգի կապը Դոն-ավազանի հետ, կենտրոնական արդյունաբերական ռայոնի կապը Թուրքեստանի ու Բաքվի հետ և այլն հետզհետե ավելի ու ավելի դժվարանում էր)։ Այն հանգամանքը, վոր դեպի պատերազմ էր քաշվում ըստ վորակի ու աշխատունակության լավագույն պրոլետարիատը, և սաստիկ թափով աշխատանքի էին կոչվում ավելի հասուն տարիքի տղամարդիկ, կանայք ու դեռահասակներ, անդրադարձավ աշխատանքի արտադրողականության վրա, վորն ընկավ այն ճյուղերում, վորոնք հոգում էին քաղաքացիական բնակչության կարիքները, և բարձրացավ ռազմական ճյուղերում՝ բացառապես ի հաշիվ սաստկացրած շահագործման, վորը ուժասպառ էր անում ֆաբրիկաների ու գործարանների կենդանի ուժը։

Այսպիսով հոկտեմբերյան հեղափոխությունը ժառանգություն ստացավ մի արդյունաբերություն, վորը վոչ միայն խարխլված էր, այլ և արմատակի քայքայված։ Այսպիսի արդյունաբերությունը ուժերի աներևակայելի լարումով միայն, և հասկանալի չէ, նյութական վիթխարի զոհաբերությունով միայն կարող էր դիմանալ քաղաքացիական պատերազմին ու համապաշարման յեռամյա շրջանին։ Մեր խոշոր արդյունաբերությունն այս փորձությանը դիմացավ շնորհիվ այն անլուր հերոսության ու դիմացկունության, վոր յերևան բերին բանվորներն ու աշխատավոր գյուղացիությունը, այլ և շնորհիվ հեղափոխության աննման ղեկավարի—կոմունիստական կուսակցության անհունորեն մեծ տոկունության։ Սակայն քաղաքացիական պատերազմի վերջերին այս փորձության հետևանքն այն յեղավ, վոր խոշոր արդյունաբերության մեջ կատարվող կործանարար պրոցեսներն էլ ավելի խորացան, և յերկրի տնտեսական ասպարեզում խոշոր արդյունաբերության դերը շատ թուլացավ։

Խորհրդային հանրապետության տնտեսականությունն ահա այս վիճակն ուներ նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու նախօրյակին։

2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՉՊԻՍԻ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1914—17 թ. թ. իմպերիալիստական պատերազմը, 1918—20 թ. թ. քաղաքացիական պատերազմը, 1914—20 թ. թ. համապաշարումը (блока-да), 1921 թ. անբերրիությունը չափազանց անմիջական ազդեցություն ունեցան ժողովրդական ամբողջ տնտեսության վրա՝ շատ մեծ չափերով թուլացնելով վերջինիս արտադրող ուժերը և վիթխարի փոփոխություններ առաջ բերելով ինչպես արդյունաբերության ու գյուղական տնտեսության մեջ, այնպես և այս յերկու ճյուղերի փոխհարաբերությունների մեջ։

Բնորոշելու համար, թե մեր արդյունաբերությունն ինչ դրության մեջ էր 1921 թվի սկզբին, կանգ առնենք սրա ամենակարևոր առանձին ճյուղերի վրա։

Բամբակեղենների (хлопчатобумажныи) արտադրությունը շնորհիվ այն հանգամանքի, վոր գործվածքների արտադրության ռայոնները (կենտրոնական Մոսկվայի, Իվանովո-Վոզնեսենսկի ու Պետերբուրգի ռայոնները) կտրվել էին հում նյութի արտադրության ռայոններից (Թուրքեստանից, Կովկասից ու Ամերիկայից),—1913 թվի համեմատությամբ իր արտադրու-

թյունը կրճատեց ու հասցրեց մինչև 7%-ի: Արտադրության կրճատումն սկսվեց դեռ 1914 թվականից: Եթե 1913 թվի արտադրությունն ընդունենք 100, ապա նվազման գիծը կգնա այս կերպ. 1914 թ.—92,9, 1915 թ.—92, 1916 թ.—81, 1917 թ.—53,3, 1918 թ.—38,2, 1919 թ.—6,2, 1920 թ.—6,6: Այսպիսով բամբակեղենի արդյունաբերությունը, որ շատ մեծ նշանակություն ունի քաղաքի ու գյուղի տնտեսական կապի գործում, վիթխարի չափերով նվազել էր:

Մետաղեղենի արդյունաբերությունը նույնպես խոշոր փոփոխություններ կրեց: 1912 թվի 727 միլիոն ռուբլուց սրա արտադրությունն ընկնելով հասավ 1920 թվին մինչև 48,5 միլիոնի, այսինքն՝ նախապատերազմականի 6,7%-ին: Գյուղատնտեսական մեքենաների արտադրության ասպարեզում մենք նկատում ենք խիստ կրճատում 1921 թվի մոտերքը: Գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը 1913 թվին գնահատվում էր 6,480,000 ռուբլի: 1914 թ.—5,912,000 ռ., 1915 թ.—3,491,000 ռ., 1916 թ.—3,076,000 ռ., 1919 թ.—1,882,000 ռ. ու 1920 թ.—382,000 ռուբլու: Այսպիսով գյուղատնտեսական մեքենաների արտադրությունն ըստ իր արժեքի՝ 1921 թվի մոտերքը կրճատվել էր 17 անգամ:

Սննդեղենի, մասնավորապես ճակնդեղի ու շաքարեղենի արդյունաբերության կրճատումը հետևանք է այն հարաբերությունների, որ ստեղծել էր հողային հեղափոխությունը: Մասնավոր հողատիրությունն ու տնտեսությունը, որ ապրանքային հացահատիկի խոշոր մատակարարն էր, չքացել էր, իսկ մանր գյուղացիական տնտեսությունը սաստիկ կրճատել էր շուկային ու պետությանը հացահատիկ ու հաց տալը,—այստեղից առաջ էր գալիս այն հացահատիկի սաստիկ կրճատումը, որը ջրաղացներն էր տարվում աղալու համար: Նույնը, և էլ ավելի մեծ չափով, պետք է ասել գյուղացիական տնտեսության մյուս արդյունքների մասին էլ:

Ինչ վերաբերում է շաքարի արդյունաբերությանը, ապա վերջինս պետք է սաստիկ կրճատեր իր արտադրությունը, որովհետև այն հողերը, որ առաջ տրամադրված էին ճակնդեղի մշակությանը, այժմ հատկացվում էին պարենային հացահատիկներին: Կենդանական ծագում ունեցող նյութեղենների ու փայտի մշակումը նույնպես մեծ չափերով կրճատվել էր. առաջինը հասել էր մինչև 8,6%-ի, իսկ երկրորդը՝ մինչև 6,9%-ի:

Ամենամեծ չափերով կրճատվել էր մեր լեռնային արդյունաբերությունն էլ—հանքանյութի, ածխի, աղի արդյունաբերությունը, այլ և հանքանյութի վերամշակումը [1]:

[1]) Հետևյալ աղյուսակը տալիս է խոշոր արդյունաբերության արտադրության պատկերը 1913 թվի նկատմամբ՝ տոկոսային հարաբերությամբ: 1913 թվի արտադրությունն ընդունել ենք 100:

	1913	1918	1919	1920
Ածուխի արդյունահանությունը	100	42	29	27
Նավթի »	100	44	49	41
Հանքանյութերի »	100	0,2	—	1,6
Աղի »	100	—	10	2[illegible]
Չուգունի »	100	2,3	2,7	2,4
Բամբակեղենի արտադրություն	100	—	6,2	6,6
Բամբակյա մանած	100	—	19	27
Վուշե »	100	75	45	38
Կաշու արտադրություն	100	47	43	38
Հիմն. քիմ. թթուներ	100	—	13	12
» » ալկալիներ	100	—	2	5,6
Շաքար	100	24	6	7

Ընդհանուր առմամբ, եթե խոշոր արդյունաբերության արտադրության ընդհանուր արժեքը (այն ֆաբրիկատը, որ անմիջապես սպառողին է հասնում) 1912 թվին հավասար էր 3,700 միլիոն ռուբլու, ապա 1920 թ. այն նվազեց և հասավ 520 միլիոն ռուբլու: Արդյունաբերությունը, որ պատերազմից առաջ գյուղական բնակչությանը տալիս էր 2 միլիարդ ռուբլու արդյունքներ, 1920 թվին կարող էր նրան տալ 200-ից մինչև 250 միլիոն ոսկի ռուբլու գումարի արդյունքներ միայն:

Ինչ վերաբերվում է գյուղատնտեսությանը, ապա վերջինս էլ թեև մի քիչ ավելի պակաս, սակայն և այնպես մեծ կորուստներ ունեցավ: Ցանքսի տարածությունը, որը 1916 թվին 92,500,000 դեսյատին էր, կրճատվեց ու 1920 թվին հասավ մինչև 86,000,000 դեսյատինի: Զուգընթացաբար նվազում էր նաև բերքատվությունը: Առանձնապես սաստիկ կրճատվեց բամբակի, վուշի, կանեփի, ճակնդեղի ցանքսերի տարածությունը: Բանող ձիերը կրճատվեցին 40%-ով, կովերը՝ 20%-ով: Ցանքսերի տարածության ու անասնապահության կրճատումն այն հետևանքն ունեցավ, որ կրճատվեց գյուղատնտեսությունից ստացվող հասույթն էլ: 1913 թվին գյուղատնտեսությունը ի վիճակի յեր շուկա նետել 2 միլիարդ ռուբլի գումարի արդյունքներ. 1920 թվին գյուղացիությունը կարող էր տալ մոտ 648 միլիոն ոսկի ռուբլու արդյունքներ (հետն առած նաև պարենգրավման արժեքը): Ցանքսերի տարածության կրճատումն ու ցած բերքատվությունը ազդեցին բուն իսկ գյուղացիական տնտեսության սպառման վրա: Ինչպես հայտնի է, գյուղական բնակչության պարենային ու իբրև կեր ծառայող հացահատիկների շնչի տարեկան միջին սպառումը, պատերազմից առաջ, հավասարվում էր 26—27 փթի, որոնցից մարդկանց ամեն մի շնչին 18 փութ իսկ անասուններին՝ 8–9 փութ: 1920 թվին բնակչության ամեն մի շնչին գալիս էր միայն $18\frac{1}{2}$ փութ, եթե այն տարվա ամբողջ բերքը թողնվեր գյուղում, այնինչ, իրապես պետք է հաշվել, որ պարենգրավումն ու ազատ շուկայի կլանած հացահատիկը հանելով գյուղական բնակչության շնչին ընկնում է 13—14 փթից ոչ ավելի: Շնչագլուխ սպառումը Ռուսաստանում պատերազմից առաջ էլ բարձր չէր, իսկ նախապատերազմական նորմայի համեմատությամբ յերկու անգամ կրճատվելը չէր կարող ամենից անպաստ կերպով չանդրադառնալ գյուղացիական տնտեսության արտադրողականության վրա, այլև այն փոխհարաբերության վրա, որ կար գյուղի ու քաղաքի միջև, գյուղացիության ու բանվորության միջև, որը վարում ու իրագործում էր պարենմասնատրման քաղաքականությունը:

Այսպիսի տնտեսական կացության մեջ էին արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու նախօրյակին:

3. ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ԻՆՉ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՍՑՐԵՑ

Մի կողմից արդյունաբերության սաստիկ կրճատումը, մասնավորապես այն ապրանքներինը, որոնք անհրաժեշտ են գյուղացիական տնտեսության համար, և մյուս կողմից գյուղատնտեսության արդյունքների ար-

տադրության ու վաճառքի կրճատումը (ապրանքային արտադրությունը մինիմումի հասցնելն ու գյուղացիության գնելու ուժի (пакупательная сила) մեծապես նվազումը) խանգարեցին այն սովորական հարաբերությունը, վոր կար արդյունաբերության ու գյուղատնտեսության միջև, այլև սրանց ներսում տեղի ունեցող տնտեսական փոխանակությունը [1]։

Քաղաքի ու գյուղի միջև տնտեսական փոխանակության խանգարումը վոչ միայն կասեցնում էր վերականգնելու պրոցեսն արդյունաբերության ու գյուղատնտեսության ասպարեզներում, այլև այն հետևանքն ունեցավ, վոր ժողովրդական տնտեսության այս ճյուղերը փաստապես ընկան։ Յեթե քաղաքացիական պատերազմի 3 տարիների ընթացքում մենք այս կամ այն ճյուղի արտադրության մեջ ինչ վոր հաջողություններ նկատում էինք էլ, ապա այս հաջողությունները խաբուսիկ էին։ Այս հաջողությունները լինում էին վոչ թե արտադրողականության իրական աճման ու ռեսուրսների կուտակման հաշվին, այլ մնացորդներն ուտելու հաշվին, քաղաքացիական պատերազմի հաղթական ավարտի հաշվին, նախկին պաշարները մեծ թափով օգտագործելու հաշվին։ Յերկրի արտադրողական իրական ֆոնդը մեծ արագությամբ չքանում էր և չէր վերականգնվում արդյունաբերության համարյա և վոչ մի ճյուղում։ Անբավարար ու յերկրի կարիքներից շարու-

1) Թե ինչ փոփոխություններ տեղի ունեցան արդյունաբերության՝ գյուղատնտեսության կարիքներին ծառայելու ընդունակության ու ծավալի մեջ, ցույց է տալիս հետևյալ աղյուսակը։ Ամբողջ բնակչության սպառմանը ծառայող ու գյուղատնտեսության մեջ սպառվող առարկաների արտադրությունն արտահայտվում է հետևյալ թվերով.

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՆՈՒՆԸ	Արտադրությունը միլիոն վոսկի ռուբլով			
	1912 թվին		1920 թվին	
	Ամբողջ բնակչության սպառածը	Առանձին գյուղատնտ. սպառածը	Ամբողջ բնակչության սպառածը	Առանձին գյուղատնտ. սպառածը
Լայն սպառման առարկաներ	2,009	1400	262	175
Գյուղատնտեսական մեքենա.	39	39	4,6	4,6
Հանքային պարարտանյութ.	0,7	0,7	0,2	0,2
Ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության այլ արդյունքներ	600	300	100	50

Այստեղից յերևում է այն խզումը, վոր տեղի ունեցավ արդյունաբերության ու գյուղատնտեսության միջև 1921 թվի մոտերքը։ Գյուղատնտեսությունը 1920 թվին ստանում էր լայն սպառման առարկաների սովորական նորմայի 12%-ը միայն։ Գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքներն այլ և արհեստական պարարտանյութեր գյուղատնտեսությունն ստանում էր նույնպես 12% միայն, ընդ վորում, պետք է ասել ի դեպ, վոր 1921 թ. գյուղատնտեսությունն ստանում էր 8% միայն, իսկ 1922 թվին—5, 3%։ Այսպիսով արդյունաբերությունը համարյա դադարել էր գյուղատնտեսության կարիքներին ծառայելուց, և հենց սրանով էլ խանգարվել էր սրանց միջև յեղած արտադրական կապը։

նակ յետ մնացող արտադրության ճգնաժամի մի ծանր շրջան էր այն։ Վորքան էլ վոր յերկիրը փորձում էր սեղմելու, կծկելու իր սպառումը, վորքան էլ վոր աշխատում էր «պլանաչափ» բաշխման միջոցով արգելք լինել իրական արժեքների չքանալուն, այնուամենայնիվ յերկրի արտադրող ուժերի անկման այս պրոցեսի հիմնական հետևանքը—քաղաքի ու գյուղի կապի խզումը—ավելի ու ավելի հայտնի չէր յերևան գալիս, ավելի ու ավելի սպառնալից էր դառնում։ Քաղաքային արդյունաբերությունն ու պրոլետարիատը սկսեցին հանդիսանալ մի մեկուսացած կղզյակ, վոր ընկած էր ավելի ու ավելի ինքնամփոփ դարձող բնատնտեսական փոխանակության որենքներով ապրող մանր բուրժուական տնտեսության միջավայրում։

Սակայն վորովհետև պրոլետարական պետությունը գյուղի՝ քաղաքից մեկուսանալու այս պրոցեսի նկատմամբ չէր կարող կողմնակի հանդիսատես լինել, վորովհետև հեղափոխության նվաճումների պահպանումը պահանջում էր, վոր արդյունաբերության ու գյուղատնտեսության միջև յեղած կապն ամրապնդվի, ուստի խորհրդային իշխանությունը հարկ զգաց հաշվի առնելու այն հանգամանքը, վոր տնտեսական խզման հետևանքը կարող է լինել քաղաքացիական խզում, այսինքն քաղաքացիական պատերազմ յերկու դասակարգերի, այն է՝ պրոլետարիատի ու գյուղացիության միջև։ Այս պատերազմը կսպառնար անթիվ աղետներ խորհրդային յերիտասարդ հանրապետությանը և կը կործաներ պրոլետարիատի դիկտատուրան [1]։ Այսպես ուրեմն, արդյունաբերության ու գյուղատնտեսության արտադրողականության անկումը, վոր հետևանք էր իմպերիալիստական ու քաղաքացիական պատերազմների, հասցրեց քաղաքի ու գյուղի տնտեսական կապերի խզմանը։ Տնտեսական կապերի խզումը սպառնում էր, վոր կը խզե բանվորության ու գյուղացիության քաղաքական դաշինքը։ Արտադրող ուժերի զարգացումը կանգ էր առել և ժողովրդական տնտեսությունը հսկա քայլերով անկման էր դիմում։ Այսպիսի պայմաններում անհրաժեշտ էր, վոր խորհրդային իշխանությունը, վորքան կարելի յե շուտ վերջացնե գործը հակահեղափոխության հետ և անցնի տնտեսական շինարարության այնպիսի մեթոդների, այնպիսի տնտեսական քաղաքականության, վորը բղխում էր ռուսական տնտեսականության առանձնահատկություններից ու մեր ժողովրդական տնտեսության այն տնտեսական վիճակից, վորը հետ-պատերազմյան շրջանում համապատասխանում էր այն տնտեսականությունը։ Վրանգելի վրա տարած հաղթանակն ու Լեհաստանի հետ կնքած խաղաղությունն այս հնարավորությունը տվին 1921 թվի գարնան սկզբին, յերբ խորհրդային իշխանությունը հենց անցավ նոր տնտեսական քաղաքականությանը։

4. ԻՆՉՈ՞Վ ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ՝ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՆՑՆԵԼԸ

Վ. Ի. Լենինը խորհուրդների համառուսական IX համագումարում շոշափելով նոր տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրները՝ վերջիններս այսպես էր բնութագրում։

«Նոր տնտեսական քաղաքականության ամենից արմատական, ամե-

1) Այդպիսի քաղաքական խզման հնարավորությունը հատկապես պարզորոշ ցույց տվեց Կրոնշտադի 1921 թվի փետրվարյան խռովությունը։

նից եյական խնդիրը բանվոր դասակարգի՝ գյուղացիության նկատմամբ ունեցած հարաբերությունն է, բանվոր դասակարգի միությունն է գյուղացիության հետ։ Բանվոր դասակարգի ու գյուղացիության հարաբերությունն ուղիղ դասավորելու համար կարելի յե յերկու ճանապարհ միայն պատկերացնել, կամ խոշոր արդյունաբերությունը, յեթե ծաղկած վիճակի մեջ է, կարող է միանգամից մանր գյուղացիներին բավականաչափ արդյունքներ մատակարարել, ավելի, քան առաջ, և այսպիսով ուղիղ հարաբերություն սահմանել արդյունաբերության արդյունքների ու գյուղատնտեսական արդյունքների պաշարների միջև, վորոնք ստացվում են գյուղացիներից... Իսկ յեթե խոշոր ու ծաղկած արդյունաբերություն չկա, վոր կարող լինի մի անգամից բավարարել գյուղացիներին արդյունքներով, ապա բանվորների ու գյուղացիների միության համար, ապա այս հզոր միության աստիճանական աճման համար այլ յելք չկա, բացի առևտրի ճանապարհից, ուրիշ վոչ մի ճանապարհ չկա։ Բացարձակ անհրաժեշտությունն է մեզ հասցրել այս ճանապարհին, և հենց այս է մեր տնտեսական քաղաքականության հիմքն ու եյությունը։ Ահա թե ինչից է առաջ գալիս մեր նահանջը, ահա թե ինչու մենք պետք է նահանջենք պետական կապիտալիզմի կողմը, նահանջենք կոնցեսիաների կողմը, նահանջենք առևտրի կողմը։ Այն քայքայման պայմաններում, վորի մեջ մեզ գտանք, առանց սրան՝ մենք չենք կարող վերականգնել գյուղացիության հետ ունենալիք անհրաժեշտ կապը։ Առանց այս բանի՝ մեզ սպառնում է այն վտանգը, վոր հեղափոխության առաջավոր զորամասն այնքան առաջ ու հեռու կը գնա, վոր կը պոկվի, կանջատվի գյուղացիական մասսայից։ Նրա ու գյուղացիական մասսայի շաղկապ չի լինի, և այս կը լինի հեղափոխության վախճանը»։

Ինչպես քաղաքի, այնպես և գյուղի աղքատացման պայմաններում բանվորների ու գյուղացիների դաշինք ստեղծելու առաջին քայլը պիտի լիներ պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելը (1921 թվի մարտի 21-ի դեկրետը), պետական պարտադիր մոնոպոլիան, գյուղատնտեսական արտադրության շուկայում տեղի ունեցող ազատ շրջանառությամբ փոխարինելը (մի արտադրություն, վորից հանվում եր պետության օգտին առնըվող հարկը)։ Պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելը նշանակում եր ստեղծել այնպիսի տնտեսական պայմաններ, վորոնց ժամանակ նախ՝ գոյանում է ներքին շուկա, յերկրորդ զարգանում է դրամական պտույտը։ Թե մեկը և թե մյուսը անմիջական հետևանք է այն բանի, վոր յերկրում գերակշռում է մանր քաղաքային ու գյուղացիական տնտեսությունը։ Այս գերակշռությունը պրոլետարիատին թելադրում է վորոշ տնտեսական քաղաքականություն։ «Ռազմական կոմմունիզմ այն եր,—ասում է Լենինը,—վոր մենք գյուղացուց առնում եյինք փաստորեն բոլոր ավելցուկները ու յերբեմն եվ նույնիսկ վոչ միայն ավելցուկները, այլև գյուղացիների պարենավորման համար անհրաժեշտ մասը, վերցնում եյինք բանակի ծախսերը ծածկելու ու բանվորների ապրուստի համար։ Վերցնում եյինք մեծ մասամբ իբրև պարտք, թղթադրամով։ Ավերված մանր գյուղացիական յերկրում կալվածատերերին ու կապիտալիստներին այլ կերպ հաղթել չեյինք կարող, սակայն ռազմական կոմմունիզմը պատերազմի ու ավերածության հարկադրական արդյունքն եր։ Այն կոմմունիզմը չեր ու չեր եվ կարող լինել պրոլետարիատի տնտեսական խնդիրներին համապատասխանող քաղաքականու-

թյուն։ Մանր գյուղացիական յերկրում իր դիկտատուրան իրականացնող պրոլետարիատի ուղիղ քաղաքականությունն այն է, վոր հացահատիկը փոխանակե արդյունաբերության արդյունքներով, վորոնք անհրաժեշտ են գյուղացիությանը[1])»։ Յերբ միլիոնավոր մանր տնտեսություններ կան, այս փոխանակությունը կարող է ամենից լավ կատարվել շուկայի միջոցով ու շուկայի հետ կապված ապրանքների առուծախի միջոցով։ Պրոլետարական պետության խնդիրը վոչ թե այն է, վոր դժվարություններ ստեղծե շուկայի պտույտի, ապրանքային պտույտի, կապիտալիստական պտույտի համար, այլ այն, վոր կանոնավորե այս շուկան ու սրա հետ կապված դրամական շրջանառությանը։

Առևտրի շուկային ձևերին անցնելու հետ՝ ռազմական կոմմունիզմի շրջանում պետական մատակարարման ու բաշխման խնդիրները («ռազմական կոմմունիզմի» քաղաքականության հիմնական սկզբունքները) հետզհետե ավելի ու ավելի եյին սահմանափակվում այն ձեռնարկությունների նեղ շրջանակով, վորոնք պետական մատակարարման վրա եյին հիմնված։ Ճիշտ սրա նման եվ պետական օրգանների—Ժ Տ Բ Խ ու նահժողտնտխորհների գործունեյությունը նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու հետևանքով՝ ավելի ու ավելի պետք է վերածվեր ու դառնար զուտ կանոնավորում, իսկ արտադրական խնդիրներն ու կառավարման խնդիրները պետք է անցնեն անկախ տնտեսական կազմակերպությունների—արդյունաբերական տրեստներին։

Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում պետական արդյունաբերությունը վարելու հիմք պետք է դառնային տնտեսավարություն (хозяйственный расчет) ու համապետական պլանը, վորը հիմնված է յուրաքանչյուր պետական առանձին ձեռնարկության արտադրության ռեսուրսների հաշվառքի ու բյուջեյի վրա։ Այսպիսով արդյունաբերությունը կանոնավորելու համար խորհրդային իշխանությունը նույնպես դիմեց շուկային մեթոդներին—առուծախին, մրցմանը, առևտրական գնարկությանը (калкуляция) և այլն[2])։ Սակայն խորհրդային իշխանությունն այս շուկայում հանդես է գալիս իբրև ամենահզոր սեփականատերը, միջնորդն ու վաճառորդը։ Անմիջաբար պետության ձեռքում են կենտրոնացած արդյունաբերության արտադրող ուժերի մեծամասնությունը—ֆաբրիկաները, գործարանները, հանքերը և այլն, այլև տրանսպորտը։ Սակայն նոր տնտեսական քաղաքականության եյությունն այն է, վոր պետական տնտեսական օրգանների բուն իսկ գործունեյությունն այս ասպարեզում վերահսկողության է յենթարկվում և մեծապես ուղղություն է ստանում շուկայի կողմից, վորչափով վոր այս շուկայում հանդես է գալիս մանր ապրանք արտադրողների, այլև պետական արդյունաբերության առարկաների սպառողների վիթխարի մասսան։

Յեթե արդյունաբերությունը կանոնավորելու համար բանվորական պետությունը դիմում է շուկայի մեթոդներին ու հնարքներին, իսկ շուկան եվ փող է պահանջում, ապա նոր տնտեսական քաղաքականությունը պետք է հրապարակ մղեր դրամական շրջանառությունը վերականգնելու և ամրա-

[1]) „О Продовольственном налоге" стр. 6.

[2]) Գնարկությունը (կալկուլյացիա) արտադրության միավորի— մի արշին չթի, մեկ փութ ածուխի և այլն արժեքը ճիշտ և ուղիղ հաշվելն է։

պնդելու խնդիրն էլ, իսկ այս նշանակում էր ֆինանսական ասպարեզում վարել ռուբլու ստաբիլիզացիայի քաղաքականություն[1])։ Ռուբլու ստաբիլիզացիային հասնելու խնդիրը համապատասխան նշանակություն ստացավ, վորովհետև նոր տնտեսական քաղաքականության պայմաններում դրամական սիստեմի կայունությունը թե բյուջեն ճիշտ կազմելու, թե արդյունաբերությունը զարգացնելու հնարավորության, թե պետական առևտուրը նորմալ կերպով վարելու և թե վերջապես. քաղաքի՝ գյուղի հետ ունեցած ամուր կապի նախադրյալն է։

Այսպիսով նոր տնտեսական քաղաքականությունն արտահայտվեց նրանով, վոր պրոլետարական պետությունը չենելով յերկրի տնտեսականությունից ու ժողովրդական տնտեսության տնտեսական վիճակից՝ սոցիալիստական տնտեսություն կառուցելու ճանապարհը հարթելու նպատակով՝ բանեց կապիտալիստական տնտեսության յեղանակները, հնարներն, ու հիմնարկներն օգտագործելու ուղին (շուկա, դրամային շրջանառություն, բանկեր, վորոշ սահմաններում մասնավոր սեփականության թույլատրում, վարձակալություն և այլն)։

Այս նպատակով պետք էր բանն սկսել գյուղական տնտեսությունից, վորն ամենից հեշտ կարելի յեր վերականգնել և վորը Ռուսաստանում կազմում է ամբողջ ժողովրդական տնտեսության հիմքը։ Հարկավոր էր գյուղացիներին շահագրգռել իրենց աշխատանքի արդյունքներով՝ սրանց բարեկեցությունն ուղղակի կախման մեջ դնելով նրանց աշխատանքի հաջողակությունից։ Զարկ տալ գյուղացիական տնտեսության վերածնությանը, բարձրացնել արդյունաբերությունն այն նպատակով, վորպեսզի ի վիճակի լինի մատակարարելու տնտեսության ու տնային նիստ ու կացի համար անհրաժեշտ բոլոր առարկաներ բավարար չափով, ուղիղ ապրանքապտույտ սահմանել արհեստավորական ու գյուղացիական տնտեսությունների և քաղաքային պետական արդյունաբերության միջև,—ահա սրանք էյին նոր տնտեսական քաղաքականության խնդիրները և առանց վորոնց լուծման անհնարին է յերևակայել, թե կարելի յե ամուր պատվանդան ստեղծել սոցիալիստական տնտեսություն կառուցելու համար։

5. Ի՞ՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԷՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԽՈՒՍԱՓԵԼ

Նոր տնտեսական քաղաքականությունը տնտեսական շինարարությունն է, խորտակված ֆեոդալական տնտեսության ու կիսակործան կապիտալիստական տնտեսության տեղը նոր սոցիալիստական տնտեսության համար տնտեսական պատվանդան հիմնելն է։ Նոր տնտեսական քաղաքականությունը մանր գյուղացիական յերկրում սոցիալիստական տնտեսություն կառուցելու ուղին է։ Նոր տնտեսական քաղաքականությունը, վոր հիմնված է առևտրի, դրամական շրջանառության և այլն վրա, բանվորական պետության պայմաններում միակ հնարավոր տնտեսական կապն է տասնյակ միլիոնավոր մանր հողագործների ու արդյունաբերության միջև, յեթե այս հողագործների կողքին գոյություն չունի այնպիսի խոշոր մեքենային

1) Ռուբլու ստաբիլիզացիայի մասին տես XVII գլուխ։

արդյունաբերություն, վոր թե յուր տեխնիկական հզորությամբ, թե յուր կազմակերպությամբ, և թե տրանսպորտի վիճակով ընդունակ լիներ մանր հողագործներին մատակարարելու լավ արդյունքներ, մեծ քանակությամբ ավելի արագ ու ավելի եժան, քան կապիտալիզմի ժամանակ։

Կապիտալիստական, մինչ-պատերազմյան Ռուսաստանում այս տվյալները բացակայում էյին։ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը նույնպես յուր հետ չբերեց այս տվյալները տեխնիկական-կազմակերպչական տեսակետից։ Այնտեղ կապիտալիզմը համաշխարհային մասշտաբով առած (Ամերիկայի, Անգլիայի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Բելգիայի ու այլ յերկրների կապիտալիզմի միացումը) այս պայմաններն ունի, ի դեմս խոշոր ու հսկա չափերով զարգացած արդյունաբերության։

Հետևաբար մի այնպիսի հետամնաց կապիտալիստական յերկիր, վորպիսին է Ռուսաստանը, վորն առանձին վերցրած զուրկ էր այս պայմաններից, այսինքն զարգացած արդյունաբերությունից, այն ժամանակ միայն կարող էր միասնական պետական տնտեսության հողի վրա կապ ստեղծել միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների ու արդյունաբերության միջև, յերբ ինքը լիներ միասնական համաշխարհային տնտեսության մի բաղադրիչ մասը, և այս վերջին տնտեսությունն էլ գտնվեր պրոլետարիատի ղեկավարության տակ։ Սակայն, քանի կապիտալիստական բոլոր գանձերի բանալիները գտնվում են բուրժուազիայի ձեռքում և վոչ թե բանվոր դասակարգի ձեռքում, խորհրդային Ռուսաստանը մնում է մի մեկուսացած յերկիր, վորը չի կարող հույս դնել ավելի զարգացած յերկրների լիակատար աջակցության վրա և վոր այս պատճառով պետք է ամբողջապես հաշվի առնե յուր տեխնիկական ու տնտեսական հետամնացությունը և արդյունաբերության ու հողագործության միջև կապ ստեղծե՝ կապիտալիստական մեթոդների ու հաստատությունների վրա հիմնվելով։

Այսպիսով, ընդհանրապես ասած, յերկրագունդը կարելի յե պատկե-բացնել իբրև յերկու մասի, յերկու կոլիզի բաժանված. մեկ կոլիզը կապի-տալիստական յերկրներն են, մյուս կոլիզը՝ մնացած բոլոր հետամնաց, կի-սակապիտալիստական ու դեռ կապիտալիզմին չհասած գաղութային յերկր-ները[1])։ Առաջին կոլիզն ամբողջությամբ առած՝ դեռ պատերազմից առաջ, տեխնիկական ու տնտեսական կողմից հասունացել էր սոցիալիզմի համար, այսինքն՝ ունի մեծապես զարգացած, խոշոր մեքենային արդյունաբերություն՝ վիթխարի ու հարաճուն արտադրողականությամբ, վորն ընդունակ էր պրոլետարիատի ձեռքում վստահելի գործիք լինելու այն տնտեսական կապի համար, վոր պետք է հաստատվի քաղաքի ու գյուղի միջև, արդյունաբերական ու ագրարային յերկրների միջև։ Կարևոր չէ այն հանգամանքը, վոր այս կապիտալիստական կոլիզի ներսում բոլոր յերկրները զարգացման միևնույն մակարդակի վրա չեն գտնվում, վոր մի կողմից կան առաջադիմած արդյունաբերական յերկրներ, ինչպես, օրինակ՝ Ամերիկան, Անգլիան,

¹) Կապիտալիստական կոլիզի մեջ մենք հաշվում ենք յեվրոպական յերկրների մեծամասնությունը, ի թիվս վորոնց Ռուսաստանն էլ, այնուհետև Ամերիկան ու Ճապոնիան։ Մնացած յերկրների շարքում դնում ենք Անգլիայի, Ֆրանսիայի, Բելգիայի ու Իտալիայի գաղութային տիրապետություններն Աֆրիկայում, մի քանի ասիական պետություններ—Չինաստանը, Պարսկաստանը, Աֆղանիստանը, Տաճկաստանը, Անգլիական գաղութներն առաջավոր Ասիայում, անգլո-ֆրանսական ու հոլանդական Հնդկաստանը և այլն։

Գերմանիան, Ֆրանսիան և այլ, իսկ մյուս կողմից՝ կան հետամնաց յերկիրներ, ինչպիսիք են՝ Ռուսաստանը, Բալկանյան պետությունները, վորոշ չափով Իտալիան, Իսպանիան և այլն: Կարևորն այն է, վոր այս կապիտալիստական կորիզն ամբողջությամբ առած՝ տիրում է յերկրագնդին շնորհիվ յուր տեխնիկական ու տնտեսական հոյակապ կազմակերպության, յուր տնտեսական հզորության:

Հասկանալի յե, վոր յեթե ամբողջ կապիտալիստական կորիզի ներսում կամ նույնիսկ այս կորիզի մի քանի ամենազարգացած յերկիրներում միայն սոցիալիստական հեղափոխություն տեղի ունենար միաժամանակ, ապա սրանով աշխարհի համար ապահովված կը լիներ կոմմունիստական հասարակություն կառուցելու արագ և ուղիղ ճանապարհը, չնայած այն հանգամանքին, վոր գոյություն կունենար մյուս կորիզը, վորը քիչ է կանխապատրաստված կոմմունիզմի համար: Յեթե բուրժուազիան, վորն այս հետամնաց կորիզին պատկանող յերկիրների վրա տնտեսապես ներգործում եր հափշտակիչ ու յեսասիրական մեթոդներով, յուր տնտեսական կազմակերպության հզորությամբ նրանց հպատակության մեջ եր պահում, ապա իշխանության գլուխն անցած պրոլետարիատն էլ ավելի մեծ ազդեցություն կունենար այս հետամնաց յերկիրների վրա՝ վերջիններս դուրս քաշելով շահագործման ճիրաններից և նրանց յուր հետ աշխատակցության կոչելով փոխադարձ ոգնի ու տնտեսական առաջխմության վրա հիմնված: Այս պայմաններում, այս հետամնաց յերկիրների կուլտուրայի բարգավաճումն ու տնտեսական փոխակերպությունը վիթխարի քայլերով առաջ կը գնար:

Մյուս կողմից, յեթե պատմականորեն դասավորված հանգամանքների շնորհիվ սոցիալիստական հեղափոխությունն է կատարված տակավին վոչ թե կապիտալիստական կորիզի առաջավոր յերկիրներում, այլ հետամնաց յերկիրներից մեկում, այն է Ռուսաստանում, ապա ակներև է, վոր սոցիալիստական հեղափոխությունն այստեղ ի վիճակի չե ոգտագործելու կապիտալիզմի տեխնիկական ու տնտեսական բոլոր նվաճումները: Նման յերկիրը (ներկա դեպքում Ռուսաստանը) դուրս է նետվում արդեն կապիտալիստական կորիզի միջից և թողնվում է յուր սեփական արտադրող ուժերի բախտին, իսկ այս ուժերը, նրա մեջ առանձին վերցրած՝ թույլ են զարգացած: Այստեղից էլ բնականաբար, նրա համար առաջ է գալիս դիմանալու անհրաժեշտություն և բանվորական պետության տնտեսական դրությունը բարելավելու անհրաժեշտություն, վորն այս յերկիրը կատարում է՝ ոգտագործելով այն յեղանակները, վորով իրենց տնտեսությունն են վարում կապիտալիստական կորիզի մնացած, ավելի առաջավոր յերկիրները: Յեվ խորհրդային Ռուսաստանը կատարում է այս, մինչև վոր վրա հասնեն ոգնական ուժերը, ի դեմս բարձր զարգացած կապիտալիստական տեխնիկայի, վորը հեղափոխությունը հանձնում է պրոլետարիատի ձեռքին այն առաջավոր կապիտալիստական յերկիրներում, վորոնք հենց վորոշում են ամբողջ կորիզի՝ սոցիալիզմի՝ համար կանխապատրաստված լինելը:

Այսպիսով նոր տնտեսական քաղաքականության անհրաժեշտությունից, այն է յերկրի արտադրող ուժերի շահագործմանը մասնավոր կապիտալին մասնակցել թույլատրելու անհրաժեշտությունից Ռուսաստանը կարող եր խուսափել այն պայմաններում միայն, յեթե տնտեսական շաղկապ ունենար ավելի զարգացած արդյունաբերական յերկիրների հետ: Իսկ այսպիսի շաղ-

կապ հաստատելու համար հարկավոր եր այն, ինչ վոր արեց ռուսական բանվորությունը հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ[1]).

6. ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ Ի՞ՆՉ ԵՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼԸ

Այն ուղին, վորով ընթանում եր խորհրդային իշխանությունը յուր տնտեսական քաղաքականության միջոցին, քաղաքացիական պատերազմի սկզբից, վորոշ չափով մի ուղի յեր, դեպի վորը մեզ հրեց համաշխարհային հեղափոխությունը՝ խորհրդային Ռուսաստանի վրա կատարած յուր կատաղի հարձակումով: Բուրժուական սեփականությունը, մասնավորապես մանր ու միջակ սեփականությունը, դանդաղորեն եքսպրոպրիացիայի յենթարկելու, արդյունաբերության խոշոր ճյուղերին աստիճանաբար տիրելու, կապիտալիստական կազմակերպիչների ու տեխնիկական մասնագետների աշխատանքն ոգտագործելու քաղաքականության ընթացքում պրոլետարիատը հանդիպեց բուրժուազիայի ամենասաստիկ դիմադրությանը: Այս դիմադրությունը նյութեղեն արժեքների թաքցնելուց, սաբոտաժից, ներքին դավերից արագությամբ հասավ խորհրդային իշխանության վրա կատարվող բացահայտ հարձակման, վորի ժամանակ նրան նյութական միջոցներով ու զինված ույժերով ոժանդակում եր համաշխարհային կապիտալը:

Բանվոր դասակարգը բնազդաբար չվստահելով բուրժուազիային՝ տարերային կերպով սլանում եր շատ ավելի առաջ, քան թելադրում եյին Ռուսաստանի տնտեսական պայմանները, և բուրժուազիայի վոտքի տակից դուրս եր կորզում մեկ տնտեսական դիրքը մյուսի յետևից: Այս—մի շրջան եր այնպիսի կռվի, վոր մղվում եր պրոլետարիատի իշխանությունն ամրապնդելու համար, բայց վոչ յերբեք տնտեսական շինարարության ավելի լավ, ավելի ուժեղ ու մատչելի ճանապարհներ գտնելու համար:

Սակայն տիրելով արտադրության բոլոր միջոցներին ու գործիքներին քաղաքացիական կատաղի պատերազմի ու համապաշարման ճնշման ներքո հարկադրված լինելով դիմելու տնտեսարարության (хозяйствование) խիստ կենտրոնացած յեղանակին՝ պրոլետարիատն ու նրան ղեկավարող կուսակցությունը—կոմմունիստական կուսակցությունը—պետք է փորձ անեյին խոշոր արդյունաբերությունը վերականգնելու և մանր գյուղացիական հողագործության հետ կատարվող նրա անմիջական արդյունափոխանակությունը (продуктообмен) կարգի բերելու՝ ոգնելով այս յերկրագործության հանրայնացմանը[2]).

---

[1]) Այստեղից ի հարկե չի հետևում, վոր պրոլետարիատը, նույնիսկ առաջավոր արդյունաբերական յերկիրների մեջ հաղթություն տանելու դեպքում, պետք է հրաժարվի «նոր տնտեսական քաղաքականության» այն մասից, ըստ վորի պետք է ոգտագործել կապիտալիստական տնտեսության մի շարք ինստիտուտները, որա հաշվառքի (учет), հաշվարկության (расчет), վերահսկողության ու այլ մեթոդներ: Կապիտալիզմի այս նվաճումներից պրոլետարիատը չպետք է հրաժարվի, վորովհետև միանգամայն ակներև է, վոր կապիտալիստական հասարակարգի ու լիակատար սոցիալիզմի սահմանում անխուսափելիորեն պետք է ընկնի մի յերկարատև դարաշրջան, վորի ընթացքում պրոլետարիատը հետզհետե ավելի ու ավելի մեծ չափերով կը նվաճե շուկան, կը կենտրոնացնե այն և վերջին հաշվում կը փոխարինե միասնական տնտեսական պլանով, վորը սոցիալիստական տնտեսության հիմքն է:

[2]) Վ. Ի. Լենինը «Հոկտեմբերյան հեղափոխության քառամյա տարեդարձին» հոդվածում այսպես է լուսաբանում այն կացությունը, վորի մեջ գտնվում եյինք այն շրջանում. «Մենք, վոր

Յերեք տարվա քաղաքացիական պատերազմի փորձը ցույց տվեց, թե վորքան և ինչ ուղղությամբ հափշտակված, տարված ենք յեղել այս ճանապարհի շնորհիվ։ Յեվ այն ժամանակ, յերբ պատերազմը վերջացավ, խորհրդային իշխանության հանդեպ կանգնեց հենց նույն նախկին խնդիրը, (վորի լուծումից եր սկսել խորհրդային իշխանությունը յուր տնտեսական շինարարությունը 1917 թվի վերջին ու 1918 թվի սկզբին), այն ե՝ վոչ թե խորտակել հին հանրային տնտեսական կերտվածքը (уклад), առևտուրը, մանր տնտեսությունը, մանր ձեռնարկատիրությունը (предпринимательство), այլ կենդանացնել առևտուրը, մանր ձեռնարկատիրությունը, իսկ դրանց հետ միասին, հետևաբար, կենդանացնել նաև կապիտալիզմը՝ զգուշությամբ ու աստիճանաբար տիրանալով ու պետական կանոնավորման յենթարկելով սրանց։

Այսպիսով, մեր պրոլետարական պետության համար նոր տնտեսական քաղաքականությանն անցնելը նշանակում եր վերադարձ դեպի խորհրդային իշխանության հետ-հոկտեմբերյան քաղաքականությունը, դեպի հիմնական ըմբռնումն այն բանի, թե ինչպես պետք ե գործել, վորպեսզի տնտեսապես վոտքի կանգնեցնենք մանր գյուղացիական ավերված յերկիրը, թե ինչպես պետք ե փոխհարաբերություն սահմանենք պրոլետարիատի ու գյուղացիության միջև հետամնաց մի յերկրում, վորը գոյություն ունի դեռ ևս կապիտալիստական Արևմուտքի հետ կողք-կողքի։ Հետևաբար նոր տնտեսական քաղաքականությունը նշանակում եր վերադարձ դեպի կապիտալիզմի դանդաղ կենսազրկումը (հիշենք բանվորական վերահսկողությունը, կապիտալիստական տրեստների նշանավոր կազմակերպիչների հետ համաձայնության գալու փորձերը), մի վերադարձ, վորը, սակայն, մի եյական տարբերություն ուներ 1917—1918 թ. թ. ժամանակաշրջանի համեմատությամբ։ Այս տարբերությունն այն եր, վոր 1921 թվի մոտերքը խորհրդային իշխանությունն արդեն տեր եր յերկրի համարյա ամբողջ ժողովրդական հարստության—ֆաբրիկաների, գործարանների, հանքահորերի, յերկաթուղիների ու ջրային տրանսպորտի, հողի, սրա ընդերքի և այլն, և այլն, և վոր պրոլետարիատը, ի դեմս յուր առաջավոր զորամասի—կոմմունիստական կուսակցության—մեծապես ամրապնդվել եր այս շրջանում, վոր ինքը, խորհրդային իշխանությունը կարմիր բանակի հաղթությունների և բան-

վեր յելնք բարձրացել խանդավառության ալիքի շնորհիվ և ժողովրդի մեջ զարթեցրել յենք սկզբում համաքաղաքական, հետո ռազմական խանդավառություն, մենք հույս ունեյինք, վոր անմիջաբար այս խանդավառության վրա հիմնվելով՝ կիրականացնենք նույնքան մեծ տնտեսական խնդիրներ. (ինչպես համաքաղաքական ու ռազմական խնդիրներն եյին)։ Մենք հույս ունեյինք, կամ թերևս ավելի ճիշտ լինի ասել՝ մենք կարծում եյինք, առանց բավականաչափ հաշվարկության յենթարկելու, թե կարող ենք մանր գյուղացիական յերկրում պրոլետարական պետության անմիջական թելադրանքներով կոմմունիստորեն կարգի բերել արդյունքների պետական արտադրությունը. պետական բաշխումը։ Կյանքը ցույց տվեց մեր սխալը։ Անհրաժեշտ եյին մի շարք անցման աստիճաններ—պետական կապիտալիզմ ու սոցիալիզմ— վորպեսզի կանխապատրաստենք— մի յերկար շարք տարիների աշխատանքով կանխապատրաստենք—անցումը դեպի կոմմունիզմը։ Վոչ թե անմիջաբար խանդավառության վրա հիմնվելով, այլ մեծ հեղափոխության առաջ բերած խանդավառության օգնությամբ, անձնական շահի, անձնական շահագրգռության, տնտեսավարության վրա ջանացեք կերտելու սկզբում հաստատուն կամրջակներ, վորոնք մանր գյուղացիական յերկրում պետական կապիտալիզմի միջով տանեյին դեպի սոցիալիզմ։ Այլապես դուք չեք հասնի կոմմունիզմին։ Այսպես ասաց մեզ կյանքը։ Այսպես ասաց մեզ հեղափոխական զարգացման օբյեկտիվ ընթացքը»։

վորների ու գյուղացիների տոկունության շնորհիվ շատ ավելի ամուր դիրք եր գրավում միջազգային հարաբերությունների մեջ, և հենց այս պայմաններն արդեն այլ կերպ եյին վորոշում այն միջոցների բնույթն ու չափը, վոր արվում եր կապիտալիզմին ու մանր բուրժուական տարրերին։ Այս միջոցները սահմանափակվում եյին նախ նրանով, վոր ամբողջ հողն ու սրա ընդերքն առաջվա նման պատկանում են պետությանը, յերկրորդ նրանով, վոր ամբողջ յերկաթուղային ցանցը—63,000 վերստից ավելի—պետության սեփականությունն ե կազմում. յերրորդ նրանով, վոր արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը, իսկ խոշորներից համարյա բոլորը, պատկանում են պետությանը. չորրորդ նրանով, վոր արտաքին առևտուրն ամբողջապես կենտրոնացած ե պետության ձեռքում, և վերջապես, հինգերորդ նրանով, վոր առևտր-արդյունաբերական համարյա ամբողջ վարկը նույնպես կենտրոնացած ե պետության ձեռքում։

Ահա թե բանվորական պետության համար ինչ եր նշանակում 1921 թվին նոր տնտեսական քաղաքականությանն անցնելը։

7. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ Ի՞ՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՆՑՆԵԼԸ

Նոր տնտեսական քաղաքականությանն անցնելը քաղաքի ու գյուղի, պրոլետարիատի ու գյուղացիության միության ձևի ու բովանդակության փոփոխությունն ե, մի միություն, վորը մեր հեղափոխության ու մեր սոցիալիստական շինարարության հիմքն ե։

Քանի շարունակվում եր քաղաքացիական պատերազմը, անխուսափելի յեր պարենի մասնատրման քաղաքականությունը, այսինքն գյուղացիներից գյուղատնտեսական արդյունքների բոլոր ավելցուկները վերցնելը, վորովհետև այլ յեղանակներով չեր կարելի ապահովել, վոր պետությունն ստանա այն պարենը, վոր անհրաժեշտ եր կարմիր բանակը, բանվորներին ու ծառայողներին պահելու համար, վորոնց վրա հենվում եր պետությունը՝ հակահեղափոխության դեմ կռվելիս և հանրային շինարարության միջոցին։

Վորչափով վոր այս քաղաքականությունն անխուսափելի յեր, այնչափով խորհրդային իշխանությունը հարկադրված եր գիտակցաբար դիմելու դեպի գյուղացիական տնտեսության սաստիկ աղքատացման հնարավորությունը։ Խորհրդային իշխանությունը քաղաքացիական պատերազմի շրջանում այս աղքատացմանը հակազդելու միջոցներ չուներ։ Միակ բանը, վոր կարող եր անել, այս այն եր, վոր բոլոր ջանքերը գործադրելով զորահավաքի յենթարկե աշխատավորների ամբողջ յեռանդը՝ քաղաքացիական պատերազմն արագորեն ու հաղթությամբ լուծելու համար, վորպեսզի հնարավորություն ստանա գյուղացիության հետ ունեցած փոխհարաբերությունները կառուցել այնպիսի հիմունքների վրա, վորոնք ավելի յեն համապատասխանում մանր տնտեսության շահերին և տանում են դեպի այս տնտեսության արտադրող ուժերի բարձրացումն ու զարգացումը։

Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, թե հենց վոր քաղաքացիական պատերազմը հաղթությամբ ավարտվեց և խորհրդային իշխանությունը հնարավորություն ստացավ խաղաղ տնտեսական շինարարության անցնելու, նա պետք ե սկսեր մի քաղաքականությունից, վորի նպատակը պիտի լիներ ռուսական յերկու հիմնական դասակարգերի—պրոլետարիատի ու աշ-

խատավոր գյուղացիության— քաղաքական ու տնտեսական միության ամրապնդումը, մի միություն, վոր խարխլել եյին այն ծանրությունները, վոր քաղաքացիական պատերազմի ընթացքում զանազան չափերով բաժին եյին ընկել թե բանվորներին ու թե գյուղացիներին:

Նման միություն յերևակայելի յե միայն այն պայմաններում, յեթե գյուղացիական տնտեսության բարեկեցությունը վերականգնվի և բարգավաճե, վորովհետև սրանով յերկու նպատակի յենք հասնում—թե գյուղացիությունը վստահում է խորհրդային հանրապետության ղեկավար դասակարգի ստեղծագործ ուժերին, այսինքն՝ պրոլետարիատին ու սրա առաջավոր զորամաս կոմմունիստական կուսակցությանը, և թե ամրապնդվում է յերկրի ամբողջ տնտեսական կյանքը, վոր հիմնվում է խորհրդային հանրապետության զարգացման տվյալ աստիճանի վրա և ամենից առաջ գյուղացիական տնտեսության վրա:

Կոմմունիստական կուսակցության համար պարզ եր, վոր յեթե այն հասարակակարգը, վորի մեջ ապրում ենք, կարելի յե պահպանել բանվորների ու գյուղացիների միությամբ միայն, ապա այս միության ձևերն ու բովանդակությունը պետք է փոփոխվեն հեղափոխության ընթացքում: Հոկտեմբերյան հեղափոխության առաջին քայլերից սկսած՝ այս միությունն ամրապնդվեց նրանով, վոր ամբողջ հողը տրվեց աշխատավոր գյուղացիներին օգտագործելու: Այնուհետև այս միությունը պահպանվում եր բանվորների ու գյուղացիների միատեղ կռվի շնորհիվ, վոր սրանք մղում եյին կալվածատիրական ու բուրժուական հարձակման դեմ, վորն սպառնում եր գյուղացիներից խլել նրանց հիմնական նվաճումը—հողը, իսկ բանվորներից՝ ֆաբրիկաներն ու գործարանները:

Սակայն հեղափոխական անցքերի արագ հաջորդականության ընթացքում պարզվեց, վոր այս հիմքերը դեռ բավական չեն միության համար, վորովհետև հողի ստացումն իսկ ու գյուղացիության ամենաաղքատ խավերի մի քիչ ամրապնդված դրությունը պահանջում եյին տնտեսարարության այնպիսի պայմաններ, վորոնք կապված են առևտրի ազատության հետ, վորը մանր, անջատ տնտեսության հիմքն ե: Հաշվի առնելով կարիքներն այս մանր տնտեսության, վորի ամրապնդումն անհրաժեշտ եր պրոլետարիատի ու գյուղացիության միությունը հաստատուն դարձնելու համար, խորհրդային իշխանությունը պետք է փոփոխեր այս միության բովանդակությունն ու ձևը՝ պարենի մասնատրումից անցնելով պարենհարկին:

Սակայն նոր տնտեսական քաղաքականությունը պրոլետարիատի ու գյուղացիության միություն չե միայն: Նոր տնտեսական քաղաքականության հետ միասին՝ տնտեսական հրապարակում, իբրև ակտիվ դասակարգ, հանդես է գալիս բուրժուազիան ել, վորը նույնպես աշխատում է փոխադարձ շահերի վրա հենվելով միաձուլվել գյուղացիության հետ, մանավանդ սրա վերին, ամենից ունևոր խավերի հետ: Գյուղացիությունը մեծ դժվարությամբ է դուրս մագլցում յուր քայքայված տնտեսության խանդակից, և բնական ե, վոր բուրժուազիան ամեն կերպ օգտվում է խորհրդային իշխանության ամեն մի անփույթ քայլից, ամեն մի սխալից, վորպեսզի բորբոքի բանվորների ու գյուղացիների միջև դասակարգային տարաձայնությունները, վորոնք հիմնված են այնպիսի մանր բուրժուական մի մասսայի տատանվող բնույթի վրա, վորպիսին է գյուղացիությունը:

Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում անխուսափելի յեն գյուղացիական մանր բուրժուական մասսայի այս տատանումները, վորոնք լինում են մեկ դեպի պրոլետարիատի դիկտատուրայի կողմը և մեկ ել սրանից հեռանալով՝ դեպի բուրժուազիայի կողմը: Այս տատանումների հիմքը վորոնումն է այնպիսի տնտեսակարգի, վոր ավելի լավ կպաշտպաներ գյուղացիական շահերը, վորոնք աճում, զորանում են ուռճացող ու ամրապնդվող տնտեսության կարիքների հողի վրա, տնտեսակարգ, վոր կընձեռեր հարկի ավելի թեթև ու հարմար ձևեր, ավելի եժան ու ձեռնտու վարկ, հացահատիկների բավականաչափ բարձր գներ, ֆաբրիկա-գործարանային եժան արդյունքներ և այլն: Գյուղացիության տնտեսական բարորության աճումը միևնույն ժամանակ նրա դասակարգային ինքնագիտակցության աճումն ե: Յեթե պրոլետարական պետությունը չկարողանա գյուղացիական տնտեսությանն առողջ բարգավաճում ապահովել, յեթե գյուղացիության վրա ընկնող պետական ծախսերի ծանրությունը մինիմալ չափերի չհասցնե, ապա գյուղացիության ուշն ու միտքը անխուսափելի կերպով ուղղված կը լինի նոր կառավարություն փնտռելու կողմը, և բուրժուազիան մենշևիկների ու ես-երների հետ միասին կօգնեն նրան այս խնդրում:

Ահա թե ինչու խորհրդային իշխանության համար նոր տնտեսական քաղաքականությունն այն նշանակությունն ունի, վոր սրա հիման վրա ստեղծվում են պրոլետարիատի ու գյուղացիության ավելի ամուր ու ճկուն հարաբերություններ, ստեղծվում են այնպիսի պայմաններ, վորոնք հնարավորություն են տալիս յուր ժամանակին հաշվի առնելու գյուղական տնտեսության կարիքները և զորախաղեր կատարելու գյուղացիության, այլ և բանվորության հասունացող կարիքների համեմատ:

Սակայն նոր տնտեսական քաղաքականությունը զարգացնում է այնպիսի ուժեր, վորոնք գործում են վոչ միայն հօգուտ խորհրդային իշխանության ու աշխատավորության, այլ և թշնամի յեն սրանց: Նոր տնտեսական քաղաքականության թթխմորը ուռճացնում է բուրժուազիային: Տնտեսական ձևերի զարգացումը պահանջում է, վոր միշտ ուշադիր վերաբերմունք ցույց տրվի գյուղացիության տնտեսական կարիքներին, վորպեսզի յուր ժամանակին մեջտեղից հեռացվեն ամեն տեսակի հասունացող արգելքներ, վորոնք կարող են խոչընդոտ լինել բանվորների ու գյուղացիների միության շարունակվելուն ու գյուղացիական տնտեսության զարգացմանը:

Յեվ մենք տեսնում ենք, վոր խորհրդային իշխանությունը իրոք յուր ժամանակին վերացնում է այսպիսի արգելքները: Պարենի մասնատրումը պարենհարկով փոխարինելն արդեն մի վիթխարի առաջադիմական քայլ եր այն գործի ասպարիզում, վորի նպատակն է թեթևացնել գյուղական բնակչության՝ հօգուտ պետության կատարվող ծառայությունների բեռը: Միասնական բնահարկը 1922—1923 թվերին հետագա քայլն եր թեթևացման այս ճանապարհին: Սակայն այս ել դեռ բավական չեր: Հենց վոր իրականում պարզվեց, վոր այս միջոցն ել ունի թերություններ, վորոնք վորոշ տեսակետից ծանր են աղդում գյուղացիական տնտեսության վրա, խորհրդային իշխանությունը վճռապես ընթացավ բարելավման ուղիով և 1923 թվին ընդունեց միասնական գյուղատնտեսական հարկը, վորը ցույց ե տալիս,

թե, պետությունն աստիճանաբար բնահարկումից (натуральное обложение) անցնում է դրամականին, վորը պետք է մեծապես դյուրացնե գյուղացիական տնտեսության զարգացումը և նպաստե նրա ապրանքայնության (товарность) արագ աճմանը [1]:

Այսպիսով նոր տնտեսական քաղաքականության հիմունքները խորհրդային իշխանությանը լիակատար ազատ ասպարեզ ու հնարավորություն են տալիս քաղաքական ու տնտեսական զորախաղեր անելու այն նպատակով, վորպեսզի ավելի ու ավելի ամրապնդե քաղաքի ու գյուղի գործավորների միությունը: Այս միությունը ամենալիակատար յերաշխիքն է այն բանի, վոր խորհրդային իշխանությունը կայուն և հզոր է, այլ և, հետևաբար, խորհրդային հանրապետության սոցիալիստական շինարարության համար ուղիներ ու միջոցներ ապահովված են:

8. ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՆՑՆԵԼՈՒՑ Ի՞ՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՅԻՆ ԱՌԱՋ ԳԱԼԻՍ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Նոր տնտեսական քաղաքականությանն անցնելով՝ խորհրդային իշխանությունը կրկնակի խնդիր եր դնում յուր առաջ: Առաջին մեծագույն խնդիրն այն եր, վոր մեր յերկիրը հաներ արտադրող ուժերի զարգացման ուղին. աշխատավոր բնակչության բարորությունը բարձրացնելու ուղին, տնտեսական բարիքների իրական ու ընդլայնված վերարտադրության ուղին, այսինքն՝ արտադրությունը մշտապես մեծացնելու ու յերկրի կարիքներն ավելի ու ավելի մեծ չափերով բավարարելու ուղին [2]: Յերկրորդ— ամենագլխավոր ու ավելի հեռավոր—խնդիրն այն եր, վոր արտադրող ուժերի վերելքը, վորը պետք է հետևանքը լիներ նոր տնտեսական քաղաքականության, ուղղվի վոչ թե դեպի մասնավոր կապիտալիստական տնտեսությունը շարունակաբար ավելի ու ավելի զարգացնելու հունը, այլ դեպի բանվորական խորհրդային պետության հունը, այսինքն դեպի սոցիալիստական ուղին:

Առաջին խնդիրը շատ կարևոր է, սակայն այս խնդիրը դրվում ու լուծվում է զուտ կապիտալիստական հասարակության պայմաններում. շուկայի ու սրա հետ կապված ապրանքա-դրամական հարաբերությունների վրա հիմնվելով կարող են զարգանալ և զարգանում են արտադրող ուժերը, վո՛ր կապիտալիստական յերկրում վոր ուզես [3]: Յեվ յեթե խորհրդային իշխանությունը նոր տնտեսական քաղաքականության ակտիվը, այսինքն դրական նվաճումները գնահատեր արտադրական հաջողություններն ու շուկայի ընդլայնված ապրանքայնությունը հաշվի առնելով միայն, և առանց ստուգելու, թե ինչ ուժեր են աճում ու զորանում այս հողի վրա,—արդյոք կապիտալիզմի՞, այսինքն մանր տնայնագործի, արհեստավորի, խոշոր մաս-

[1]) Միասնական գյուղատնտեսական հարկի տնտեսական նշանակության մասին տես «Ֆինանսական քաղաքականություն» վերնագրով գլուխը, 31, 32, 33 հարցեր:

[2]) «Արդյունքների քանակի մեծացումն ընթացիկ տնտեսական մոմենտի բարձրագույն որենքն է: Այս է նոր կուրսի ամբողջ իմաստությունը, նրա հիմքը»— Ն. Ի. Բուխարինի հոդվածից, վոր լույս է տեսել „Правда“-ի № 172-ում 1921 թվի ոգոստոսին:

[3]) Տես Լ. Դ. Տրոցկու «Արդյունաբերության մասին» զեկուցումը, վոր արել է կուսակցության 12-րդ համագումարում 1923 թ. ապրիլին:

նավոր արդյունաբերողի ուժերը, թե՞ պետության, ազգայնացրած խոշոր արդյունաբերության, այսինքն սոցիալիզմի այս սաղմերի ուժերը, ապա այս կլիներ մի մեծագույն սխալ, խորհրդային պետության զարգացման հեռանկարի վտանգավոր կորուստ ու անտեսում:

Արտադրող ուժերի բարձրացումը ե՛ և պետք է լինի մի միջոց բանվորական պետության ձեռքում, վորպեսզի վերջինս մեր զարգացող տնտեսությունն ուղղե դեպի սոցիալիստական շինարարության ջրանցքը: Ահա նոր տնտեսական քաղաքականության հիմնական ու ամենապատասխանատու խնդիրը, ահա նրա արդարացումը:

Այս խնդիրները լուծվում են վո՛չ թե պետական իշխանության ապարատի միջոցով, վո՛չ թե բանակի միջոցով, վո՛չ թե պետական արտատնտեսական (вне-экономический) հարկադրանքի միջոցով, այլ այն պայքարի միջոցով, վոր շուկայի հրապարակում մղում են պետությունն ու մասնավոր կապիտալը: Յեթե 1922 թվին տնայնագործական ու արհեստային արդյունաբերությունը, վոր աշխատում եր գլխավորապես գյուղացիության կարիքների համար, տվեց 450—500 միլիոն ռուբլու արտադրություն, իսկ խոշոր ու միջին, այսինքն գլխավորապես պետական արդյունաբերությունը տվեց 960 միլիոնի արտադրություն, այսինքն միայն յերկու անգամ ավելի, քան առաջինը, այն ինչ յուր հզորությամբ կարող եր տասնյակ անգամ ավելին տալ,— ապա մենք այս գնահատում ենք իբրև նոր տնտեսական քաղաքականության առայժմ պասիվ, այսինքն բացասական արդյունք: Սակայն սրանից ամենևին չի կարելի այն յեզրակացությունն անել, թե մենք պետական հարկադրանքի վորևե միջոցներով պետք է տնայնագործական ու արհեստային արդյունաբերության արտադրությունը նվազեցնենք, վորպեսզի խոշոր ու միջին արդյունաբերության արտադրությունը գերազանցե առաջինից շատ ավելի անգամ: Ընդհակառակը, մենք չպետք է սահմանափակենք տնայնագործական ու մանր մասնավոր արդյունաբերության զարգացումը, վորը յերկրի ապրանքային պտույտի մեջ իրական արժեքների վորոշ գումար է հոսեցնում, լցնում, այլ մեր ջանքերը պետք է կենտրոնացնենք մյուս խնդրի, այսինքն այն բանի վրա, վոր մեզ թըշնամի մանր կապիտալիստական տարրերի զարգացման կողքին՝ կրկնապատկենք, յեռապատկենք, տասնապատկենք ու նույն չափով էլ արագացնենք խոշոր պետական արդյունաբերության զարգացումը՝ չփակելով նաև խոշոր մասնավոր արդյունաբերության զարգացման ճանապարհները, մի արդյունաբերություն, վորը մենք այնուամենայնիվ գերադասում ենք մանր մասնավոր արդյունաբերությունից:

Սրանք են այն խնդիրները, վորոնք բղխում են նոր տնտեսական քաղաքականությանն անցնելուց:

9. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ Ի՞ՆՉ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐՈՎ ՊԻՏԻ ԸՆԹԱՆԱՐ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նախընթաց դրվագում (параграф) մատնանշած նոր տնտեսական քաղաքականության խնդիրները վո՛չ վո՛ք յուր մտքից չի հնարել, ինչպես կարծում են վոմանք, կամ կարծում եյին մանավանդ սկզբում: Խորհրդային իշխանության՝ նոր տնտեսական քաղաքականության անցնելը մարքսիս-

տորեն հիմնավորված եր։ Խորհրդային իշխանությունը ղեկավար ունենալով կոմունիստական կուսակցությունը՝ նոր տնտեսական քաղաքականությունը մտցնում եր մեր յերկրում գերակշռող մանր արտադրության տնտեսական զարգացման օրենքների տեսակետից։ Կոմունիստական կուսակցությունը, վոր յուր քաղաքականությունը կերտում ե դասակարգային հարաբերությունների իրական հաշվառքի հիման վրա, մեծագույն ուտոպիա չեր համարում մանր արտադրողների բազմամիլիոն մասսան մի անգամից սոցիալիստական շինարարության շրջանակների մեջ բերելը [1]։

Հանրային տնտեսական պայմանների գնահատության ժամանակ, մարքսիստական ըմբռնման գործիքը կիրառելով՝ կոմունիստական կուսակցությունը ռազմական կոմունիզմի ժամանակաշրջանում անհրաժեշտ եր համարում, վոր ամբողջ տնտեսական կյանքը խիստ ու անշեղ կենտրոնացման յենթարկվի և ստորադասվի մեկ հիմնական խնդրի, այն ե՝ բուրժուազիայի դիմադրությունը ճնշելու խնդրին։ Իսկ յերբ քաղաքացիական պատերազմի դարաշրջանը վերջացավ, կոմունիստական կուսակցությունը պետք ե հաշվի առներ այն, վոր մանր արտադրողը «կարոտել ե» ազատ շուկային, վոր նա պահանջում ե վորոշ ազատություն յուր տնտեսության զարգացման համար, և վոր այս զարգացումը կընթանա կապիտալիստական հարաբերությունների կողմը։

Այս հասկանալի յե։ Յերկրի միլիոնավոր մանր արտադրողների գոյությունը կապված ե մասնավոր, վոչ-պետական փոխանակության, այսինքն առևտրի զարգացման հետ, իսկ առևտուրը անխուսափելիորեն կապ ունի կապիտալիզմի զարգացման հետ։

Խորհրդային իշխանության խնդիրը վոչ թե այն ե, վոր արգելե, սահմանափակե կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, այլ այն, վոր այս կապիտալիստական հարաբերությունները, վորոնք մանր տնտեսություն ունեցող յերկրում զարգանում են սպեկուլյացիայի ու տնտեսության չկազմակերպված ձևերի կողմը, ուղղվեն այնպիսի ձևերի

[1]) Մի անգամ ել ենք կրկնում. Սոցիալիստական հաջողակ զարգացումը, նույնիսկ այնպիսի մի յերկրում, վորտեղ մանր տնտեսության մեծ քանակություն կա, հնարավոր ե խոշոր, մեծապես զարգացած, ծաղկող արդյունաբերություն լինելու պայմանում միայն։ Համաշխարհային մասշտաբով այսպիսի արդյունաբերություն գոյություն ունի։ Այս արդյունաբերությունը — անգլիական, գերմանական, ամերիկյան ու մասամբ ֆրանսիական արդյունաբերությունը — 1914—1918 թ. թ. յեվրոպական պատերազմի ժամանակ ցույց տվեց իր վիթխարի հզորությունը, վոր ծառայում եր ավերածության գործին։ Սակայն ինքն ըստ ինքյան հասկանալի յե, թե հիշյալ արդյունաբերության տեխնիկական հիմքերն այնպես են, վոր թերևս այս ավելի մեծ հզորություն կարող ե յերևան հանել նաև այն դեպքում, յերբ սրա ուժերը ուղղվեն ստեղծագործ աշխատանք կատարելու։ Յեվ յեթե ամենազարգացած արդյունաբերական յերկրներից մի քանիսում կամ նույնիսկ մեկի մեջ — Անգլիայում կամ Գերմանիայում — բանվոր դասակարգը խլեր կապիտալիզմի արտադրող ուժերի բանալիները բուրժուազիայից, և ինքն սկսեր կերտել իր կյանքը, ապա տեխնիկապես մեծապես զարգացած արդյունաբերական այսպիսի յերկրի ստեղծագործ ջանքերի միացումը Ռուսաստանի հետ, վոր ունի անչափ բնական հարստություններ, 2 միլիարդ դեսյատին տարածություն, կապիտալիզմի կապանքներից ազատագրված 140 միլիոն բնակչություն, հնարավորություն կտար սոցիալիստական զարգացման գործն արագորեն առաջ տանելու նաև Ռուսաստանում, չնայած այն հանգամանքին, վոր այստեղ կա մանր, փոշիացած տնտեսություն։ Այս պայմաններում խոշոր տնտեսության՝ մանր տնտեսությունն արագ կուլ տալու հիմքը կլիներ ելեկտրիֆիկացիան, վորի ստեղծագործական վերափոխիչ հզորությունը կարող եր օգտագործվել շատ ավելի կարճ ժամկետում, քան այժմ, յերբ Ռուսաստանը թողնված ե սեփական ուժերին։

կողմը, վորոնք նպաստում են արտադրող ուժերի զարգացմանը, վորոնք այս կապիտալիստական հարաբերությունները յենթարկում են պետությանը։ Այսինքն՝ խորհրդային իշխանության խնդիրն այն ե, վոր այս կապիտալիստական հարաբերություններն ուղղե պետական կապիտալիզմի կողմը։

Այս ուղին — պետական կապիտալիզմի ուղին — բնականաբար բղխում ե հենց նոր տնտեսական քաղաքականության անցնելուց։

10. ՆԵՊ և ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ

Յերբ մենք խոսում ենք պետական կապիտալիզմի մասին, ապա պետք ե նկատի ունենանք, վոր թեև կարելի յե համեմատել կապիտալիստական հասարակարգի պետական կապիտալիզմը, յերբ իշխում ե բուրժուազիան, ու խորհրդային հանրապետության պետական կապիտալիզմը, յերբ իշխում ե բանվոր դասակարգը, սակայն վոչ մի կերպ չի կարելի նույնացնել առաջինն ու յերկրորդը։ Չի կարելի այն պատճառով, վոր թե մեկ և թե մյուս դեպքում տնտեսական կյանքի զարգացման ուղիները միանգամայն տարբեր են։

Բուրժուական հասարակարգի պետական կապիտալիզմը յենթադրում ե, վոր կապիտալիստական պետությունը տնտեսական կյանքին միջամտում ե վոչ թե կապիտալիստների շահերի հակառակ, այլ ընդհակառակը, հենց կապիտալիստների շահերի օգտին։ Պետության՝ տնտեսական կյանքին այսպես միջամտելը, վորի եությունը կապիտալիստական տնտեսության ղեկավարումն ու մասամբ նաև կառավարումն ե, կապիտալիստական հասարակության մեջ կատարվում ե կապիտալիստների ու կապիտալիստական արտադրական հարաբերությունների, այսինքն սեփականության տիրապետությունն ապահովելու, ընդլայնելու ու խորացնելու համար։ Թեորիապես մտածելով՝ պետք ե ասել, վոր կապիտալիստական հասարակարգի պետական կապիտալիզմը ֆինանսական կապիտալի զարգացման յեզրափակող եջն ե, նրա վերջին բարձրագույն հարկը [1]։

Խորհրդային հանրապետության պետական կապիտալիզմը միայն արտաքուստ, կապիտալիստական տնտեսակարգին հատուկ հիմնարկների գոյության փաստերով միայն կարելի յե համեմատել այն պետական կապիտալիզմի հետ, ինչպիսին յենթադրվում ե մի հասարակության մեջ, վորտեղ իշխում ե բուրժուազիան։ Ըստ եյության պետական կապիտալիզմի այս յերկու ձևերը շատ տարբեր են։

Ամենից առաջ, մինչդեռ բուրժուական հասարակարգում կապիտալիզմը

[1]) Պետական կապիտալիզմն ամենից ավելի աչքի ընկնող արտահայտություն ունեցավ Գերմանիայում, մանավորապես պատերազմի շրջանում, յերբ պետությունը կանոնավորում եր կապիտալիստական տնտեսությունը պատերազմի շահերի տեսակետից։ Արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը կարգավորում եր վոչ թե շուկան, իբրև այդպիսին, այլ պետությունը, վորը վորոշում եր արդյունաբերության առանձին խմբերի արտադրության բնույթն ու չափը։ Պետությունը ամենախոշոր պատվիրատուն (заказчик) եր «շուկայում»։ Պետությունն եր թելադրում գները, բաշխում պատվերները, մատակարարում հում նյութ, ֆինանսավորում ու նույնիսկ ապահովում բանվորական ուժով։ Նույնիսկ մանր արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը պետության կարգավորող գործունեությանը յենթարկվեցին, վորովհետև նրանց աշխատանքը նույնպես ծառայում եր պատերազմի շահերին և հետևաբար խոշոր արդյունաբերությանը օժանդակող մի աշխատանք եր։ Հասկանալի յե, վոր «խաղաղ» ժամանակ այսպիսի խորը կանոնավորում դեռ չկա և չի յել կարող լինել կապիտալիստական հասարակարգի օրոք։

բուրժուազիայի հզորության բարձրագույն ձևն է, մեզանում պետական կապիտալիզմը չէ և չի էլ կարող լինել բուրժուազիայի այդպիսի ամենակուլ տիրապետության հիմքը, վորովհետև նախ՝ պետական իշխանությունը գտնվում է բանվոր դասակարգի ձեռքում, վորը տեր է արտադրության միջոցների, և հավելյալ արժեք կորզում է վոչ թե կապիտալիստների դասակարգը, այլ բանվորական պետությունը՝ արտադրությունն ընդլայնելու և սոցիալիստական կուտակում կատարելու նպատակներով: Յերկրորդ՝ խորհրդային հանրապետության մեջ իրականանում և զարգանում են կապիտալիզմի այն առանձին մասերը միայն, վորոնք զարգանալով կարող են լոկ ուժեղացնել բանվորական պետությունը: Մի դեպքում պետական կապիտալիզմը բուրժուազիայի հզորագույն, բարձրագույն կենտրոնացած ձևը, բուրժուազիայի դիկտատուրայի յեզրափակող ժամանակաշրջանն է նշանակում, մյուս դեպքում պետական կապիտալիզմը նշանակում է կապիտալիզմին թշնամի դասակարգի տիրապետություն, նշանակում է պրոլետարիատի դիկտատուրայի զարգացման ժամանակաշրջաններից մեկը:

Խորհրդային ռեժիմի, պրոլետարական դիկտատուրայի ռեժիմի պայմաններում, պետական կապիտալիզմը նշանակում է, թե կապիտալիստներին (վարձակալներին, կոնցեսսիոներներին, առևտրականներին) թույլատրվում է, վոր սրանք, ժողովրդական տնտեսության վորոշ մասնակի ասպարեզը շահագործելու միջոցով, վաստակ (հավելյալ արժեք) դուրս կորզեն: Այն նյութական աղբյուրների ծավալը, վորոնք յենթակա յեն մասնավոր կապիտալի շահագործման, վորոշում է վոչ թե կապիտալի ինքնաճումը, (самовозрастание), այսինքն վոչ թե իրենք, կապիտալիստները, այլ բանվորական պետությունը, վորը սոցիալիզմին մոտենալու շահերի տեսակետից կանոնավորում է թե մասնավոր կապիտալի կիրառման ասպարեզը և թե այն իրավական հարաբերությունները, վորոնք գոյություն ունեն կապիտալի ու աշխատանքի միջև: Մեզանում կապիտալիստները լինելով արտադրության միջոցների սեփականատերեր՝ կարող են վաստակ կորզել, կապիտալը մինչև անգամ կարող է աճել, մեծանալ, սակայն խորհրդային հանրապետության մեջ նրա այս աճումը վոչ թե կապիտալիստական զարգացման ներքին, այսինքն վոչ վոքի կողմից չկանոնավորվող ուժերի արգասիք է, այլ խորհրդային իշխանության նպատակավոր (целевой) քաղաքականության հետևանք, հետևանք այն բանի, վոր բանվորական պետությունը, գիտակցաբար, յերկրի արտադրող ուժերն ամենալավ կերպով ոգտագործելու շահերի տեսակետից, թույլ է տալիս կապիտալին մուտք գործել այս կամ այն ասպարեզը: Յեթե այս դեպքում արտաքուստ մենք տեսնում ենք հին կապիտալիստական արտադրական հարաբերությունների ձևեր, ապա, ըստ էության, այս արդեն մի նոր բան է: Այս ձևերը նոր, հակադիր հարաբերությունների կրող են դառնում, վորչափով վոր կապիտալիզմի պետական ձևերի զարգացումը ամրապնդում է բանվորական պետության տնտեսական հզորությունը և ուժեղացնում շինարարության սոցիալիզմում պլանաչափության սկզբունքը, իբրև հակակշիռ տարերային, անիշխանական սկզբունքի:

II. ԻՆՉՈ՞Ւ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԸ ՄԻ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԷՏԱՊ Է ԿՈՄՄՈՒՆԻԶՄԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ռուսական տնտեսականության ու Համամիութենական խորհրդային հանրապետության մեկուսացած գոյության պայմաններում (այսինքն առանց առաջավոր արդյունաբերական յերկրների տեխնիկա-տնտեսական աջակցության) պետական կապիտալիզմը տնտեսական շինարարության անհրաժեշտ ու անխուսափելի մի ձև էր: Ի հարկե, տնտեսության պետական-կապիտալիստական ձևերին դիմելն ապարդյուն կլիներ, յեթե բանվոր դասակարգի ու գյուղացիության հաղթությունից հետո մենք միանգամից իրականացնեյինք արտադրության ու բաշխման սոցիալիստական կարգերը: Բայց չէ՞ վոր այս բանը չի յեղել և գոյություն էլ չունի: Բանվոր դասակարգի հաղթության շնորհիվ մենք մտել ենք անցման հասարակարգի դարաշրջանը, վորի բնորոշ առանձնահատկությունն այն է, վոր առանձին ժամանակաշրջանում այստեղ ամբողջովին պահպանվում է նախկին մինչ-հեղափոխական տնտեսականությունը (վորը, բացի սրանից, թուլացել է քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանի հետևանքով): Իսկ ինչ է նշանակում մեզ համար նախկին մինչ-հեղափոխական տնտեսականություն: Այս նշանակում է, թե գյուղում ու քաղաքում գոյություն ունի մանր, հետամնաց արտադրություն, թե գերակշռում է գյուղական տնտեսության դերը, թե կան չզարգացած կապիտալիստական հարաբերություններ, կա մանր բուրժուական տարերք, վորը չի սահմանափակված վոչ վոքի կողմից, չի կազմակերպված և թշնամի յե պետական տնտեսության կենտրոնացած մեթոդներին:

Տնտեսության այս բոլոր հետամնաց ձևերը չեն կարող լուծարքի (լիկվիդացիայի) յենթարկվել խորհրդային իշխանության դեկրետների միջոցով, ներկայումս չեն կարող փոխարինվել խոշոր կոմմունիստական ձևերով հենց միայն այն պատճառով, վոր մեզանում այս ձևերը գոյություն չունեն: Այնինչ տնտեսության կոմմունիստական ձևերի և մանր—քաղաքային ու գյուղական—արտադրության արանքում կան տեխնիկապես ու կազմակերպչորեն ավելի զարգացած ձևեր, վորոնք խորհրդային իշխանության աջակցությամբ կարող են կլանել այս մանր, ամենից հետամնաց ձևերը:

Համեմատելով Ռուսաստանում գտնվող տնտեսական ձևերի այս խայտաբղետ պատկերը՝ սկսած ամենահետամնաց, մինչ-կապիտալիստական տնտեսություններից մինչև զարգացած կապիտալիստական ձևերը (Ռուսաստանում պետական կապիտալիզմի ձևերն են՝ կոնցեսսիաները, արենդը կոոպերացիան),—մենք պետք է գանք այն յեզրակացության, վոր մեր նպատակի— սոցիալիստական տնտեսություն կառուցելու—տեսակետից մեր շինարարությունն ամենից ավելի դժվարացնող, մեզ համար ամենից ավելի վտանգավոր են վոչ թե խոշոր կապիտալիստական ձեռնարկությունները, այլ մանր, հետամնաց արտադրությունը, վոր թեքում ունի դեպի բնատնտեսական ինքնամփոփ ձևերը: Խոշոր ձեռնարկությունն այնպես դժվար չէ վերահսկողության տակ առնել, հաշվառքի յենթարկել, պայմանագրային հարաբերություններն իրականացնել, այնինչ, մանր, փոշիացած, ինդիվիդուալիստական արտադրությունը վոչ հաշվառքի և վոչ էլ պայմանագրա-

յին կարգավորման և չենթարկվում թե այն պատճառով, վոր այսպիսի տնտեսությունները անչափ բազմաթիվ են, և թե այն պատճառով, վոր սրանք ձգտում են վորքան կարելի յե հեռու մնալ պետությունից։

«Ո՞ւմ և ում միջև է կռիվ տեղի ունենում...,— ասում է Վ. Ի. Լենինը։ — Պետական կապիտալիզմի ու սոցիալիզմի՞ միջև։ Ի հարկե վոչ։ Մեզանում վոչ թե պետական կապիտալիզմն է կռվում սոցիալիզմի դեմ, այլ մանր բուրժուազիան, պլյուս մասնատիրական կապիտալիզմը միասին միաժամանակ կռվում են թե՛ պետական կապիտալիզմի ու թե սոցիալիզմի դեմ։ Մանր բուրժուազիան հակառակում է ամեն մի պետական միջամտության, հաշվառքի ու վերահսկողության, լինեն սրանք պետական-կապիտալիստական, թե պետական-սոցիալիստական [1]»)։

Ահա թե ինչու, յերբ խորհրդային իշխանությունը դեմ առ դեմ կանգնած է մանր բուրժուական տարերքի առաջ, պետք է աշխատե հենվել ավելի խոշոր ու կազմակերպված տնտեսության այն ձևերի վրա, վորոնք ըստ մեր արտադրող ուժերի մակարդակի ու կացության՝ մատչելի յեն մեզ, այն է՝ պետք է հենվի պետական-կապիտալիստական ձևերի վրա։ Այսինքն՝ պետք է մասնավոր կապիտալը քարշ դեպի ժողովրդական տնտեսության այն ճյուղը, վոր մենք ի վիճակի չենք մեր ուժերով բարձրացնելու։ Այս ճյուղերի թվին պատկանում են մեր լեռնային հարստությունների, անտառային հարստությունների; խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների շահագործումն՝ ըստ խորհրդային իշխանության ընտրության ու կապիտալիստների համաձայնության։

Պրոլետարական դիկտատուրայի պայմաններում պետական կապիտալիզմ նշանակում է, վոր ամենախոշոր սեփականատերը պետությունն է, և հավելյալ արժեքի մեծ մասը հասնում է պետությանը, իսկ հավելյալ արժեքի այն մասը, վորը կորզում է կապիտալիստը, բաժանվում է յերկու մասի, մի մասը մտնում է կապիտալիստի գրպանը, իսկ մյուս մասը հասնում է պետությանը, այսինքն՝ ընկնում է պրոլետարիատի ձեռքը—յերկրի տնտեսությունը վերականգնելու համար։ Պետական կապիտալիզմն այն պատճառով է կոմմունիզմի ճանապարհին մի անհրաժեշտ էտապ, վոր նրա օգնությամբ ու պետական վերահսկողության ներքո՝ հզորանում են տնտեսության խոշոր ձևերն ընդդեմ մանրերի, առաջադեմ տնտեսությունն՝ ընդդեմ ձեռքով կատարածի, շատանում է խոշոր արդյունաբերության արդյունքների քանակը պրոլետարիատի ձեռքում, ամրապնդվում են պետականորեն կարգավորված տնտեսական հարաբերությունները՝ հակակշիռ կազմելով մանր բուրժուական անկազմակերպ հարաբերություններին։ Պետական կապիտալիզմը նշանակում խորհրդային Ռուսաստանի վերելքը, մինչև ավելի բարձր տեխնիկա-տնտեսական աստիճանը, վորը տեղի յե ունենում կապիտալիստների ուժերը, միջոցներն ու կուտակված փորձը օգտագործելու միջոցով, ընդ վորում պրոլետարիատի պետությունը չի կորցնում յուր տիրապետող դիրքերը [2]։

[1]) В. И. Ленин. «О продовольственном налоге», стр. 5.

[2]) Այն հանգամանքը, վոր նոր տնտեսական քաղաքականության յերկու տարվա ընթացքում մենք փաստապես շատ առաջ չենք գնացել պետական-կապիտալիստական ձևերը պատվաստելու ասպարեզում, վոր վոչ արենդը, վոչ կոնցեսիաները, վոչ խառն ընկերությունները քիչ թե շատ աչքի ընկնող հետևանքներ չեն տվել, իսկ մենք կամաց կամաց հենց ինքներս սկսեցինք կարգի գցել արդյունաբերությունը, այս բոլորը չի տատանել այն հիմնական թեզերը, թե մեր արտադրող ուժերի արագ զարգացման համար անհրաժեշտ ու օգտակար է կապիտալը, մասնավորապես ոտարերկրյա կապիտալը քաշել գործի մեջ, այլ և վերջինս օգտագործել իբրև բարձր տեխնիկան ու կազմակերպությունը մարմնացնող ու իրականացնող գործոն։

12. ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԻՆՉ ՁԵՎԵՐ ԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանում պետական կապիտալիզմի ձևերն են՝ կոնցեսիաները, արենդը, խառն ընկերություններն ու կոոպերացիան։

Խորհրդային հանրապետության մեջ պետական կապիտալիզմի ամենապարզ ու հասկանալի ձևը կոնցեսիաներն են։ Ոտարերկրյա կապիտալիստների հետ կոնցեսիաներ կնքելով՝ խորհրդային իշխանությունն առաջավոր արդյունաբերական յերկրների կապիտալի հետ վորոշ պայմանագիր է հաստատում։ Թե ինչ է վորոնում կոնցեսիաների մեջ կապիտալիստը— այս հասկանալի յե։ Նա վորոնում է կամ բարձր վաստակ, կամ այնպիսի հում նյութ, վորը դժվարությամբ է ձեռք բերում մի այլ վայրում։ Ի՞նչ է վորոնում կոնցեսիայի մեջ խորհրդային իշխանությունը։— Վերջինս վորոնում է կապիտալ, տեխնիկական միջոցներ, վորոնք կօժանդակեյին յերկրի կուսական հարստությունները կյանքի կոչել, բարձրացնել արտադրող ուժերը, վերականգնել կործանված արդյունաբերությունը և կարգավորել կապը վիթխարի յերկրում։

Կարո՞ղ է արդյոք խորհրդային իշխանությունն այս հիման վրա համաձայնության գալ կապիտալիստների հետ։ Ձեռնտո՞ւ յե արդյոք այս կապը պրոլետարական պետությանը։ Հասկանալի յե, վոր խորհրդային իշխանությունը կարող է թե՛ համաձայնության գալ կապիտալիստների հետ (թեև այս այնքան էլ հեշտ չե) և թե հոգալ յուր օգտի մասին։ Օգտագործելով ոտարերկրյա կապիտալի բարձր տեխնիկան, կազմակերպված լինելն ու խոշոր միջոցները՝ խորհրդային իշխանությունն ամրապնդում է պրոլետարիատի դիկտատուրան՝ սոցիալիստական տնտեսության շինարարությանը վորոշ չափով նյութական պատվանդան ընձեռելով (պատվանդանի մեծ մասն ստեղծում է պետական արդյունաբերությունը)։ Ինչ վերաբերում է այն արժեքներին, վոր մեզանում ձեռք կբերեն կապիտալիստները, ապա «Քանի ուրիշ յերկրներում հեղափոխություն չկա, մենք պետք է դուրս մագլցենք մեր հետամնացության ու փլուզման միջից՝ տասնամյակներ շարունակ, և այստեղ մենք չպետք է ափսոսանք հարյուրավոր միլիոններ, թերևս և միլիարդներ զիջելու մեր անհուն հարստություններից, մեր հում նյութի աղբյուրներից, միայն թե յուր ժամանակին ստանանք առաջավոր խոշոր կապիտալիզմի օգնությունը» [1])։

Արենդը պետական կապիտալիզմի մյուս ձևն է։ Այս տարբերվում է նույն դրական հատկություններով, վորչափով վոր այս ճանապարհով մասնավոր նախաձեռնություն ու միջոցներ են գրավում դեպի պետական ձեռնարկությունների այն խմբի կողմը, վորը պետությունն առայժմ չի կարողանում վարել յուր սեփական ուժերով։ Արենդի կապիտալիզմը մեծացնում

[1]) Վ. Ի. Լենինի «Բնահարկ» վերնագրով զեկուցումից, վոր կարդացել է Ռ. Կ. Կ. 10-րդ համագումարում, 1921 թ. մարտի 15-ին։

է յերկրի ընդհանուր արտադրողականությունը, և վորչափով վոր այս կապիտալիզմը մանր, ձեռքի աշխատանքին հակադրում է մեքենային տեխնիկան և դուրս է մղում ձեռքի աշխատանքը, այնչափով այն կատարում է, թեկուզ և փոքր մասշտաբով, հենց նույնպիսի դեր, ինչպիսին կատարում են կոնցեսիաները:

Կոնցեսիաների տիպին պատկանում են խառն ընկերությունները, վորոնք կազմակերպվում են պետական ու մասնավոր կապիտալի մասնակցությամբ:

Կոոպերատիվ կապիտալիզմը պետական կապիտալիզմի տարբերակն է (разновидность)։ Արհեստագործական (промысловый) ու գյուղատնտեսական կոոպերացիան, վորը միացնում է մանր տնտեսատերերին, ապրանքարտադրողներին, յուր գործունեյության մի կողմով, անշուշտ, առաջ է բերում կապիտալիստական հարաբերություններ, նպաստում է սրանց զարգացմանը, ամրապնդում է մանր կապիտալիստներին: Սակայն կոոպերատիվ կապիտալիզմը տարբերվելով մասնատիրական կապիտալիզմից՝ պետական կապիտալիզմի մի տեսակն է խորհրդային իշխանության ժամանակ, և այս տեսակետից վորոշ չափով նպաստավոր է պետությանը, վորովհետև հեշտացնում է հաշվառքը, վերահսկողությունը, հսկողությունը, այլ և պետության ու մանր արտադրողների միջև տեղի ունեցող պայմանագրային հարաբերությունները: Կոոպերացիան այն հաստատությունն է, վոր պետական ազդեցությունը, պետական պլանային առաջադրությունները հաղորդում է մանր, անջատ արտադրողների մասսային: Սպառողական կոոպերացիան իբրև առևտրի ձև՝ ավելի նպաստավոր ու օգտակար է, քան մասնավոր առևտուրը, վորովհետև դյուրացնում է բնակչության վիթխարի մասսայի միավորությունը, իսկ այս հանգամանքը պետական կապիտալիզմից հետագայում կոմմունիզմին անցնելու տեսակետից խոշոր առաջադիմական քայլ է[1]։

13. ՎՈ՞ՐՆ Է ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՆԱԴԻՐՔԸ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Վ. Ի. Լենինը յուր ճառերից մեկում նոր տնտեսական քաղաքականությանն անցնելը բնութագրել է իբրև դիրքերի փոփոխություն, յերբ ճակատային գրոհից (վոր տեղի յեր ունենում կապիտալիզմի դեմ) անցնում են յերկարատև ու դժվարին, պաշարողական գործողություններ ծավալելուն:

Այս գործողությունների դժվարությունն ու յերկարատևությունն առաջ է գալիս նրանից, վոր խորհրդային Ռուսաստանի ամենից առաջավոր ու հեղափոխական դասակարգը, վորը միակ դասակարգն է, վոր ընդունակ է անլուր դժվարությունների միջով ճանապարհ հարթելու դեպի կոմմունիզմ, այսինքն պրոլետարիատը ու նրան ստեղծող ու սնող խոշոր արդյունաբերությունը ծանր վիճակի մեջ են գտնվում: Սրա հետևանքով Ռուսաստանի տնտեսականության մեջ առաջնակարգ նշանակություն ունի գյուղա-

[1]) Կոնցեսիաների, արենդի ու խառն ընկերությունների մասին մանրամասն տես գրքիս «Արդյունաբերություն» գլխում: Կոնցեսիաների մասին՝ §§ 49—54, իսկ խառն ընկերությունների մասին՝ § 55:

կան տնտեսությունը, չնայած այն հանգամանքին, վոր վերջինս դեռ ևս տեխնիկական ստորին մակարդակի վրա յե գտնվում: Գյուղացիությունը մի դասակարգ է, վորի հետ շատ մեծ չափով կապված է խորհրդային հասարակարգի բաղդը: Անցման դարաշրջանում — նոր տնտեսական քաղաքականության դարաշրջանում — գյուղացիության հետ միություն կնքելու համար պայքարում են պրոլետարիատն ու բուրժուազիան: Տնտեսական կյանքի վորոշ ասպարեզը մասնավոր կապիտալիզմին զիջելով պրոլետարիատն ու խորհրդային իշխանությունը կորցնում են իրենց՝ գյուղացիության նկատմամբ ունեցած մոնոպոլիստական դիրքը: Նոր տնտեսական քաղաքականությունը պետության ու մասնավոր կապիտալի միջև տեղի ունեցող կռվի այն հրապարակն է, վոր մենք ճանաչել ենք օրենսդրական կարգով: Այս հրապարակի վրա յե կատարվում գյուղի միջին ու վերին շերտերի (համփայության) ու քաղաքային բուրժուազիայի մերձեցումը:

Պրոլետարական պետության անելիքն այն է, վոր աճող բուրժուազիայի դեմ մղած այս կռվում հրապարակ մղե յուր հիմնական հիմնադիրքը (опорная позиция), վորը խոշոր պետական արդյունաբերությունն է:

Այն հարաբերությունները, վորոնք խորհրդային յերկրում գոյություն ունեն բանվոր դասակարգի ու գյուղացիության միջև, հենվում են այն հարաբերությունների վրա, վոր կան արդյունաբերության ու գյուղատնտեսության միջև:

«Բանվոր դասակարգը յուր ղեկավար դիրքը վերջի վերջո կարող է պահպանել ու ամրապնդել վո՛չ թե պետության ապպարատի միջոցով, վո՛չ թե բանակի միջոցով, այլ արդյունաբերության միջոցով, վորը վերարտադրում է հենց ինքը, պրոլետարիատը»[1]։

Գյուղացիական, նույնիսկ սաստիկ հզորացած գյուղացիական տնտեսության պատվանդանի վրա չի կարելի կոմմունիզմ կառուցել: Վերջինս կարելի յե կառուցել միայն ամրակուռ, տեխնիկապես սաստիկ զարգացած արդյունաբերության հիմքի վրա, վորը պրոլետարիատի դիկտատուրայի միակ հաստատուն բազան է: Այս բազան կարող է ստեղծվել միայն նրանով, վոր յերկրի ամբողջ տնտեսականության կենտրոնը գյուղացիական տնտեսությունից փոխադրվի արդյունաբերության մեջ:

«Մեր յերկրի ընդհանուր տնտեսական կառուցվածքի միջոցին, պետական արդյունաբերության վերածնությունն անհրաժեշտորեն ամենասերտ կախումն է ունենալու գյուղատնտեսության զարգացումից: Նախ քան այն, վոր արդյունաբերությունը կարողանա մի վճռական առաջադիմական քայլ անել, գյուղատնտեսության մեջ պետք է գոյանան անհրաժեշտ շրջանառության միջոցներ: Այս միջոցներն առաջ կգան այն ժամանակ, յերբ գյուղատնտեսական արդյունքները կգերազանցեն գյուղի սպառումից, և սրա հետևանքով ավելցուկներ կգոյանան: Սակայն նույնքան կարևոր է, վոր պետական արդյունաբերությունը հետ չմնա հողագործությունից, վորովհետև վերջինիս հիման վրա կառաջանար մասնավոր արդյունաբերություն, վորին վերջի վերջո կուլ կգնար և վորի մեջ կծծվեր, կչքանար պետական արդյունաբերությունը»[2]։

[1]) Արդյունաբերության վերաբերող բանաձև, վոր ընդունել է Ռ. Կ. Կ. 12-րդ համագումարը ընկեր Տրոցկու զեկուցման համաձայն:

[2]) Արդյունաբերության վերաբերող բանաձև, վոր ընդունված է Ռ. Կ. Կ. 12-րդ համագումարում 1923 թ. ապրիլին:

Այսպիսով նոր տնտեսական քաղաքականության պայմաններում պրոլետարիատի հիմնական հենակետը խոշոր պետական արդյունաբերությունն է, հատկապես ծանր արդյունաբերությունը: Դեպի սոցիալիստական հանրայնացրած հասարակարգը տանող ճանապարհը անցնում է պետական արդյունաբերության վրայով:

14. ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏՆ Ի՞ՆՉ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԴԵՄ ՄՂԱԾ ԿՌՎՈՒՄ

Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում քաղաքի ու գյուղի, արդյունաբերության ու գյուղատնտեսության կապն իրականանում է շուկայի միջոցով: Սակայն ազատ շուկայում գործում է ո՛չ միայն պետական արդյունաբերությունը, այլ և մասնավոր կապիտալն—առևտրային ու արդյունաբերական կապիտալը,—որ մրցում է պետական կապիտալի դեմ:

Այս կռվի մեջ պրոլետարիատը տնտեսական հսկա առավելություններ ունի, որոնք հիմք են տալիս պնդելու, թե շուկայի հրապարակում տեղի ունեցող կռվի մեջ լիակատար ու վերջնական հաղթություն կտանեն պրոլետարիատն ու սրա պետությունը: Հասկանալի չէ, որ այս հաղթությունը տեղի կունենա ո՛չ թե ավտոմատիկորեն, այլ ակտիվ արտադրական քաղաքականության հետևանքով, որի համար պետք է գործադրվեն պրոլետարիատի, սրա կուսակցության ու արհմիությունների բոլոր ուժերը:

Այս առավելությունների թվում ամենից առաջ պետք է հաշվել խոշոր ազգայնացրած արդյունաբերությունն ու տրանսպորտը: Ազգայնացրած խոշոր արդյունաբերություն նշանակում է, թե իբրև դասակարգ կազմակերպված պրոլետարիատի ձեռքումն են կենտրոնացած արտադրության բոլոր միջոցները: Յեթե գնահատենք այն վիթխարի ուժը, որը արդյունաբերության ազգայնացման շնորհիվ կենտրոնացած է պրոլետարական պետության ձեռքում, յեթե հաշվառքի չենթարկենք ու թվերի վերածենք մեքենաների, հաստոցների (станок) ու շարժիչների ուժերը, որոնք այս ազգայնացման շնորհիվ այժմ կենտրոնացած են բանվորագյուղացիական պետության ձեռքում, ապա մենք այն ժամանակ կհասկանանք, թե ինչ վիթխարի ուժ է գտնվում մեր ձեռքում: Այս ուժերի համեմատությամբ, օրինակ՝ այն փաստի համեմատությամբ, որ խորհրդային Միության մեջ յեղած ամբողջ նավթի, բոլոր հանքերի, ամբողջ մետաղի, ամբողջ չուգունի, ամբողջ պողպատի տերը պետությունն է, որը կարգադրում է այս բոլոր ձեռնարկությունները, ապա այս ուժի համեմատությամբ, ամեն մի այլ մասնավոր կապիտալիստական ուժ, մի չնչին ուժ է հանդիսանում: Բանվորական պետության այս նյութական հզորության հետ համեմատած՝ այն բոլոր միջոցները, գումարներն ու արժեքները, որ կարող են մեր դեմ հանել կապիտալիստները, չնչին են: Շուկայի հրապարակում մենք կարող ենք և պետք է հաղթենք մասնավոր կապիտալին, յեթե կարողանանք ճիշտ գործադրել այն վիթխարի միջոցները, որ ունենք, և որոնք մինչև այժմ դեռ չափազանց քիչ արդյունքներ են տալիս մեզ:

Այնուհետև գալիս է տրանսպորտի ազգայնացումը: Հսկայական նշանակություն ունի այն հանգամանքը, որ պետությունը տեր է և յուր ձեռքում կենտրոնացնում է հաղորդակցության բոլոր միջոցները, որոնք նրան հնարավորություն են տալիս կանոնավորելու ամբողջ շարժումը, հետևաբար և ամբողջ ապրանքաշրջանառությունը, որի միջոցով նա կարող է թելադրել ո՛չ միայն այս կամ այն բեռների ուղղությունը, այլ և փաստորեն այս բեռների գներն էլ: Հարկավոր է միայն գործադրել սովորել տրանսպորտի այս վիթխարի ապարատը, որը դադարել է մասնավոր քաղաքականության գործիք լինելուց, և այս օգտագործել տնտեսության պետական ձևերին զարկ տալու նպատակով՝ տրանսպորտին հաղորդելով անհրաժեշտ ճկունությունն ու շարժունությունը:

Մյուս առավելությունը բանվորական պետության հարկային քաղաքականությունն է և վարկային հիմնարկների միավորությունը նրա ձեռքում, որը ամենազորեղ գործիքն է հանդիսանում տնտեսության պետական ձևերի՝ մասնավոր կապիտալիստական ձևերի նկատմամբ ունեցած գերակշռությունն ապահովելու համար, այսինքն՝ վերջին հաշվում տնտեսության սոցիալիստական ձևերի գերակշռությունն ապահովելու համար: Հարկային քաղաքականությունը հնարավորություն է տալիս մասնավոր կապիտալիստական հասույթների հարաճուն մասը փոխադրել պետական տնտեսության մեջ և սրանով ավելի ու ավելի ամրապնդել վերջինս:

Արտաքին առևտրի՝ բանվորական պետության ձեռքում պահելու մոնոպոլիան պակաս կարևոր առավելություն չէ այն կռվի ընթացքում, որ մղվում է հանուն տնտեսական շինարարության պլանային սկզբունքների:

Արևմուտքի հետ ունեցած առևտրային հարաբերությունների ժամանակ մենք արդեն տեսել ենք այսպես կոչված տնտեսական համապաշարման մի շարք փորձեր: Մենք դիմացանք վոսկե համապաշարմանը, որի էությունն այն էր, որ կապիտալիստական կառավարությունների ֆինանսական գլխավոր հիմնարկների համերաշխ գործողությունների միջոցով աշխատում էին արվեստական կերպով ձգել մեր վոսկու կուրսը: Արտահանող առևտրի ասպարեզումն էլ մենք դիմացանք այն համապաշարմանը, որ ուղղված էր նավթային արդյունքների, վուշի դեմ: Այժմ նկատվում է վորոշ արշավանք մեր հացահատիկների դեմ և այլն: Այս պայմաններում անհրաժեշտ է մեծագույն ճկունություն ցուցահանել՝ խուսափելով արտաքին առևտրի մեր մոնոպոլիայի հիմքերի վորևէ ստատանումից: Արտաքին առևտրի մոնոպոլիան մի անխախտելի պատնեշ է այն ճանապարհին, որով ուզում է, առանց վերահսկողության, մեր յերկիրը խուժել օտարերկրյա կապիտալը, որպեսզի օգտագործե մեր աղքատությունը և չնչին գներով գնե այն ռեսուրսները, որ դեռ ունենք: Մենք չենք առարկում օտարերկրյա կապիտալի՝ մեր յերկիրը գալու դեմ, թեկուզ և այն լինի առևտրային կապիտալի ձևով, միայն թե կազմակերպվի պայմանագրային պայմաններով, և պետությունը լիակատար վերահսկողություն ունենա նրա նկատմամբ:

Այս շահերի պաշտպան է կանգնած հենց արտաքին առևտրի մոնոպոլիան:

15. ԱՐԴՅՈՔ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՎԵՐԱՆՈ՞ՒՄ Է ՊԼԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Նոր տնտեսական քաղաքականությունն առաջ յեկավ այն հանգամանքի շնորհիվ, վոր մանր գյուղացիական տնտեսության վիթխարի մասսաները ձգտում եյին դեպի տնտեսության շուկային ձևերը։ Յուր իրավունքներն ստանձնելով՝ այս քաղաքականությունը յուր հերթին ընդլայնում եր շուկայի շրջանակները և վերականգնում շուկային ձևերն այն փոխհարաբերությունների, վորոնք գոյություն ունեյին վոչ միայն քաղաքի ու գյուղի միջև, այլ և պետական արդյունաբերության առանձին ճյուղերի միջև ու առանձին ձեռնարկությունների միջև։

Յեվ այս հասկանալի յե։ Կապիտալիզմի միջև, յերբ արտադրության միջոցները մասնավոր անձանց սեփականությունն են, և յերբ շուկան է կարգավորում բոլոր տնտեսական հարաբերությունները, և լիակատար սոցիալիզմի միջև, վորը պլանաչափ հանրային տնտեսություն է վարում, անցման մի շարք աստիճաններ կան։ Նոր տնտեսական քաղաքականությունն այս անցման աստիճաններից մեկն է։

Սակայն խորհրդային Ռուսաստանում շուկայի գոյությունը թույլատրելու անհրաժեշտությունը դեռ չի նշանակում, վոր մենք կուրորեն հպատակվում ենք շուկային տարերքին և ազատ մրցման բուրժուական մեթոդներն սկզբունք ենք դարձնում։ Այո, անցման դարաշրջանի ընթացքում ուրաքանչյուր ձեռնարկություն ու ձեռնարկությունների յուրաքանչյուր խումբ պետք է մեծ կամ փոքր աստիճանով կապվի շուկայի հետ, հաշվի առնի շուկան և յուր աշխատանքն ստուգի շուկայի միջոցով։ Շուկային հարմարվելու այս որիենտացիայի միջոցով պետական արդյունաբերությունը պետք է ամրապնդվի, վորպեսզի պետական կապիտալիզմից դեպի կոմմունիզմ տանող ճանապարհին անցնե ու հասնե ավելի բարձր աստիճանի։ Սակայն շուկայի գոյությունը թույլատրելով՝ խորհրդային իշխանությունը պետք է սրա հետ միաժամանակ կազմակերպված միջամտե շուկային տարերքին և նույնիսկ մոտակա ժամանակաշրջանում չհրաժարվի տնտեսության պլանային սկզբունքից։ Մենք լավ գիտենք, վոր շուկայում տեղի ունեցող ազատ մրցումը պահանջի ու առաջարկի հիման վրա կատարվող, այսպես կոչված տարերային կարգավորումը վերջի վերջո հասցնում է, կապիտալիստական յերկրների նման, կրիզիսների, վորոնք առաջ են գալիս արտադրության չհամերաշխած լինելուց։ Մենք նման կրիզիսներ թույլատրել չենք կարող, մանավանդ վոր մեր արդյունաբերության յերակն առանց այն էլ կանոնավոր չի խփում, իսկ սրա պատճառները վորոշ չափով դուրս են գտնվում նրանց վրա ներգործելու մեր հնարավորության սահմաններից։ Այսինքն՝ արդյունաբերության զարկերակի այս անկանոնությունները առաջ են գալիս նրանից, վոր յերկիրն աղքատացել է, վոր բնակչությունը բավականաչափ գնողականություն չունի, վոր մենք ժամանակավորապես անօգնական ենք առևտրի ասպարեզում և այլն։

Արդեն հենց միայն այն փաստը, վոր ամբողջ յերկաթուղային ցանցն ու արդյունաբերական ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունը պահվում է անմիջապես պետության հաշվին, և պետությունն է նրանց ֆինանսավորում, անհրաժեշտ է դարձնում, վոր այս ձեռնարկությունների նկատմամբ գոյություն ունեցող պետական վերահսկողությունը կենտրոնանա և շուկայի ինքնաբերական (самопроизвольный) վերահսկողության հետ կողք կողքի պահպանվի։

Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում, մանավանդ առաջին շրջանում, տնտեսության պետական պլանը ամենևին անիրագործելի խնդիրներ չէ առաջադրում իրեն, այսինքն՝ շուկային պահանջի ու առաջարկի տարերային խաղը չի աշխատում փոխարինել համայնապարփակ պլանով, վորը վաղորոք ցույց է տալիս ժողովրդական տնտեսության բոլոր հիմնական մասերի միջև յեղած հարաբերությունը։ Ամենևին վոչ։ Ընդհակառակը, յելնելով շուկայից, իբրև գլխավոր հրապարակից, վորտեղ կատարվում է տնտեսական արժեքների բաշխումը և այս արժեքների արտադրության կանոնավորումը, պետության տնտեսական իրական պլանն այն է, վոր վարկային, հարկային, արդյունաբերական ու առևտրային քաղաքականության միացմամբ ապահովե պետական ձեռնարկությունների՝ շուկայում ամենամեծ չափերով տիրապետող հանդիսանալը։ Տնտեսական պլանն անհրաժեշտ է այն պատճառով, վոր հնարավոր է դարձնում պետական ձեռնարկությունների փոխհարաբերությունների մեջ աշխատանքի մեծագույն համերաշխում մտցնել, միմյանց կարիքներին փոխադարձաբար ծառայելու այն ամենաբարձր աստիճանին հասցնել, վոր հնարավոր է տվյալ ժամանակաշրջանում և մրցման համար արած անարտադրական ծախսերը մինիմումին իջեցնել։ Աստիճանաբար զարգացող տնտեսական պլանի իրագործումը կյանքում այն հետևանքին է հասցնում, վոր շուկայի վրա հենվելով և կապիտալիստական շրջանառության մեթոդներն ու կազմակերպչական ձևերն օգտագործելով (դրամ, բորսա, բանկեր, ինքնարժեքի առևտրական հաշվառք, այսինքն գնարկություն) բանվորական պետությունը հետզհետե ավելի ու ավելի մեծ չափերով է տիրում շուկային, կենտրոնացնում ու միացնում շուկան և հենց սրանով էլ, վերջին հաշվում, վերացնում է շուկան՝ վերջինս փոխարինելով կազմակերպված տնտեսության կենտրոնացած պլանով։

Այսպիսով նոր տնտեսական քաղաքականության ժամանակ, պլանային տնտեսության վոչ անհրաժեշտությունն է վերանում ու վոչ էլ հնարավորությունը։

16. ՎՈ՞ՐՆ Է ՊԼԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Տնտեսության պլանային կազմակերպությունն այն ժամանակ չի վերջանում դեռ, յերբ պետական արդյունաբերության ներսում համապատասխան փոխհարաբերություններ են ստեղծվում։ Սոցիալիզմը միասնական պլանով շաղկապում է թե արդյունաբերական և թե գյուղական տնտեսությունը։ Սակայն գյուղացիությունը պետական պլանային, այսինքն սոցիալիստական տնտեսության մեջ քաշելը շատ ավելի բարդ ու յերկարատև խնդիր է, քան համապատասխան խնդիրն արդյունաբերության նկատմամբ։

Վորպեսզի հարթենք այն ճանապարհը, վորը համապետական խնդիրների կատարման հիման վրա արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը միացնելով՝ տանում է արդյունաբերությունից դեպի գյուղատնտեսությունը, անհրաժեշտ է, վոր մեծապես զարգանա կոոպերացիան, իսկ պետությունը վերջինս կարգավորե ու հսկողության յենթարկե։ Սակայն վոչ մի, նույնիսկ ամենազարգացած կոոպերացիա, վոր ծառայում է գյուղացիության շահերին, կազմակերպչական բավականաչափ հզոր գործոն չի հանդիսանալ և գյուղացիական գյուղատնտեսությունը չի քաշիլ պետական պլանային տնտեսության մեջ, յեթե տեխնիկապես կմնա զարգացման հին ուղիների վրա, այսինքն՝ յեթե լայն չափերով չի կիրառիլ ելեկտրիֆիկացիան, վորը մահացու հարված միտի հասցնե գյուղի սարսափելի մեկուսաց-

մանը, այն գյուղի, վորը ինդիվիդուալիստական սովորություններ է սնուցանում և արգելք է լինում տնտեսության կոլլեկտիվ ձևերի լայն զարգացմանը։

Սակայն պետական արդյունաբերությունն էլ նոր տնտեսական քաղաքականության պայմաններում այնքան ավելի արագ կկարողանա պլանային սկզբունքի հաղորդիչը հանդիսանալ գյուղատնտեսության մեջ և վերջինս անքակտելի կապերով միացնել իր հետ, վորքան ավելի շատ արդյունքներ կարողանա հասցնել գյուղին՝ կոոպերացիայի միջոցով։ Սակայն միանգամայն աներևակայելի յե, թե այս բանին հասնել կարելի յե, առանց լայն ու հանրակողմանի հեղաշրջում առաջ բերելու կապիտալիզմից ժառանգած տեխնիկայի մեջ, այսինքն առանց էլեկտրիֆիկացիա մտցնելու արդյունաբերության բազմաթիվ ու, ընդ սմին, ամենակարևոր ճյուղերում։ Այսպիսով էլեկտրիֆիկացիայի ծրագիրը կազմում է ընդհանուր պետական տնտեսական պլանի ամենակարևոր բաղադրիչ մասը։ Քանի զարգանան խորհրդային տնտեսության արտադրող ուժերը, սրան զուգընթաց՝ այս բաղադրիչ մասն անշեղ աճելով, պետք է հետագայում ավելի ու ավելի մեծ գերակշռություն ունենա, մինչև վոր դառնա ամբողջ սոցիալիստական տնտեսական պլանի հիմքը։

Հետևաբար նոր տնտեսական քաղաքականության պայմաններում մեր խնդիրը պետք է լինի վոչ միայն տնտեսությունը սոսկ բարձրացնելը, վոչ միայն աշխատանքի արտադրողականությունը մեծացնելը, այլ այն, վոր լիովին փոփոխենք այս տնտեսական բարգավաճման պատվանդանը, այսինքն լիովին ու խորապես փոխակերպենք կապիտալիստական տեխնիկան էլեկտրիֆիկացիայի հիման վրա, վորը կլինի տեխնիկայի նոր, սոցիալիստական ձևը։

Այսպես, ուրեմն, նոր տնտեսական քաղաքականության պայմաններում պլանային տնտեսության հիմքը էլեկտրիֆիկացիան է։ Հոկտեմբերյան հեղափոխությունից նոր տնտեսական քաղաքականության միջոցով էլեկտրիֆիկացիայի հիման վրա դեպի կոմմունիզմ,— ահա պրոլետարիատի ուղին, ստեղծագործական ու աշխարհը հեղափոխականորեն փոխակերպող ուղին։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ XIII ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

1. В. И. Ленин. Доклад на X с'езде РКП 8—16 марта 1921 г.
2. В. И. Ленин. К вопросу о новой экономической политике (Статьи „К четырехлетней годовщине октябрской революции" и „Значение золота тепер и после победы социализма"
3. В. И. Ленин. „О продовольственном налоге". Госиздат. 1921.
4. В. И. Ленин. „От штурма к осаде"—Реч на 7 губ. партконференции 29-го октября 1921 г. Госиздат. 1921.
5. В. П. Милютин. —„Новый курс экономической политики". Доклад на 4 с'езде совнархозов 18 мая 1921 г. Изд. ВС-IX.
6. А. Дембо. «Наша новая экономическая политика». Госиздат. 1922 г.
7. Г. М. Кржижановский. „Хозяйственные проблемы РСФСР и работа государственной общеплановой комиссии". Вып. I стр. 7—25.
8. И. Степанов. „Электрификация РСФСР в связи с переходной фазой мирового хозяйства". стр. 145—180.
9. Л. Троцкий. «Новая экономическая политика советской России и перспектива мировой революции» (доклад на IV конгрессе Коминтерна). Изд. М. Раб. 1923 г.
10. П. И. Попов. „Народно-хозяйственная связь сельского хозяйства с промышленностью». и „На новых путях" Изд. СТО. Вып. III. 1923, стр. 190—202.
11. Л. Троцкий. «Доклад о промышленности на XII с'езда РКП».
12. Ю. Ларин. „Итоги, пути, выводы новой экономической политики", стр.13—25.

ՀԱՎԵԼՎԱԾ VIII ԳԼԽԻ

I

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ԻՆՉՊԵՍ ԵՐ ԿԱՌԱՎԱՐՎՈՒՄ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ՄԻՆՉ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը Անդրկովկասը կառավարվում էր այն ընդհանուր օրենքներով, վորոնք կային ցարական Ռուսաստանում։

Դա —կալվածատիրական-միապետական մի իշխանություն էր, վոր Անդրկովկասում ևս հենվում էր կալվածատեր դասի, իշխանների, բեգերի, խաների, այլև խոշոր առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի վրա։

Անմիջական կառավարական տեսակետից Անդրկովկասը կազմում էր փոխարքայություն, ունէր ռազմա-վարչական «ինքնուրույնություն։ Սակայն այդ «ինքնուրույնությունը» խպառ չէր բղխում տեղական ժողովրդի սոցիալ-տնտեսական առանձնահատուկ իրական պահանջներից, այլ ունէր գերազանցապես վոստիկանական-պահնորդական կոչում։

Կենտրոնական Ռուսաստանում գործող ընդհանուր օրենքներն առավել ևս խստացվել, դաժան էյին դարձվել, վարչական-քաղաքական ապարատն ավելի ևս բռնակալական էր։ Փոխարքայությունը նույն գեներալ-նահանգապետությունն էր, միայն ավելի անհանդուրժելի։

Անդրկովկասը իր աշխարհագրական դիրքով հենակետ ցարական Ռուսաստանի աշխարհակալական արշավի դեպի հարավը և ազգագրական տեսակետից խայտաբղետ մի զանգված—ստեղծել էր այդ ռազմական-վոստիկանական ինքնուրույնության անհրաժեշտությունը։

Անտեսելով յերկրի և ժողովրդի տնտեսական թե կուլտուրա ան զարգացման պահանջները, բազմաթիվ ազգերի ուրույն գոյության, կենցաղի ու հառաջադիմության կարիքները, բանվորի ու գյուղացու սոցիալական վիճակի բարվոքման վորևէ հնարավորությունը՝ փոխարքայությունը վորդեգրել էր մի հետևողական քաղաքականություն—բաժանիր, վոր տիրես։

«Թրքասեր» Գոլիցինը, «հայասեր» Վորոնցովը, թե «վրացասեր» Նիկոլայ Նիկոլաևիչը բոլորն էլ անխտիր, ինչպես և նրանց նախորդները՝ վարել են անընդհատ այդ քաղաքականությունը—ազգամիջյան փոխադարձ ատելության, կռիվների միջոցով մթագնել աշխատավորի դասակարգային գիտակցությունը, կասեցնել ընթացքը և կամ թուլացնել թափը բանվորի ու գյուղացու հեղափոխական պայքարի ընդդեմ ցարիզմի։

Այսպես էր կառավարվում Անդրկովկասը մինչև 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը։

Փետրվարյան հեղափոխությունից հետո ևս Անդրկովկասը մնաց վորպես վարչական ուրույն միավոր, սակայն նախկին փոխարքայական իշխանությունը տեղի տվեց «Զակոմի»-ն և «Ոզակոմ»-ին։ Այդ անուններով եյին հայտնի այն «լիազոր» իշխանությունները, վորոնք ներկայացնում եյին Լվով-Կերենսկու ժամանակավոր Կառավարությունն Անդրկովկասում։ Այդ իշխանությունները տեղական ժողովրդի ընտրովի ներկայացուցիչներ չեյին, այլ Ժամանակավոր Կառավարության նշանակովի լիազորներ։ Վորպեսզի առերևույթ «ազգային» ներկայացչության կերպարանքն ունենան՝ այդ լիազորները տեղական ժողովուրդներին ցեղակիցներ եյին հանդիսանում—Ջաֆարով, Չխենկելի, Պապաջանյան և այլք։ Այսպիսի քաղաքական դիմագիծ ուներ այդ «ներկայացուցչությունը»։

Փետրվարյան հեղափոխությունն ու ժամանակավոր Կառավարությունը ազգամիջյան խաղաղություն. միջազգային յեղբայրություն չբերեց Անդրկովկասում։

Ընդհակառակը նոր ձևերով առավել ևս թափ առին ազգային փոխադարձ ինտրիգներ, դանոսներ և իշխանությունը փաստորեն անցավ «Ազգային Խորհուրդներին»։ Իսկական կառավարությունը հանդիսանում եյին այդ «Ազգային Խորհուրդները», բայց վոչ «Զակոմ-Ոզակոմները», վորտեղ նստած «ներկայացուցիչները» սոսկ կամակատարն եյին իրենց «Ազգային Խորհուրդների»։

Իսկ այդ «ազգային» իշխանությունները գտնվում եյին տիրող կուսակցությունների ձեռքում՝ մենշևիկյան, դաշնակցական և մուսավաթական։

Այս յերրյակ մուսավաթից յուրաքանչյուրը մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը կանգնած եր «մի և անբաժան Ռուսաստանի» գոյության ու պաշտպանության տեսակետի վրա և միշտ փոխադարձաբար մեղադրելով մեկ-մեկու, վոր «ընդհանուր», «մեծ» հայրենիքի շահերը ուրիշներն անտեսում են։

Այսպես եր Անդրկովկասի քաղաքական-կառավարական դրությունը մինչ այն որը, յերբ Ռուսաստանի բանվոր դասակարգը կատարեց Հոկտեմբերյան հեղափոխությունը։

2. Ի՞ՆՉՊԵՍ ԵՐ ԿԱՌԱՎԱՐՎՈՒՄ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՄԻՆՉԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՎԵԼԸ

Անդրկովկասյան տիրող ազգային կուսակցությունները Հոկտեմբերյան հեղափոխությունն ընդունեցին թշնամաբար և միաժամանակ վորպես քաղաքական անցողակի մի «արկածախնդրություն»։

Սոցիալիստական հեղափոխությունը համարելով «բոլշևիկյան անարխիա» և գուշակելով նրան շատ կարճատև կյանք—Անդրկովկասյան հակախորհրդային-քաղաքական այդ կուսակցությունները ստեղծեցին սոսկ ժամանակավոր իշխանություն, տեղական կառավարություն, վոր կոչվում եր Անդրկովկասի կոմիսարիատ։ Մնալով դարձյալ անբաժան Ռուսաստանի միասնական ճակատի, «մեծ հայրենիքի» անմասնատելիության տեսակետի վրա, Անդրկովկասյան այս ժամանակավոր իշխանությունը իր գոյությունը օրինականացրեց համառուսական Հիմնադիր ժողովի անունով։ Հիմնադիր

ժողովի ընտրված պատգամավորների թիվը բազմապատկելով—տիրող կուսակցությունները ստեղծեցին Անդրկովկասյան Սեյմը, վորը նույնպես իրեն պաշտպան հայտարարեց միասնական ու անբաժանելի Ռուսաստանի գաղափարի։

Այսպես շարունակվեց մինչև 1918 թ. ապրիլի 9-ը, յերբ Անդրկովկասը հայտարարեց իրեն «անկախ», սուվերեն իշխանություն։

Պատմական-քաղաքական այս փաստն արդյունք եր յերկու դրությունների—միջազգային, արտաքին և ներքին—սոցիալ-քաղաքական։

Թյուրք-գերմանական իմպերիալիզմը, կամենալով ջլատել խորհրդային Ռուսաստանը, ողակել նրան իր ազդեցության յենթակա ծայրագավառային «ազգայնորեն ինքնորոշված» պետություններով՝ թելադրեց հայտարարել Անդրկովկասի «վեհապետությունը», «անկախությունը»։

Իսկ այդ թելադրանքին ներդաշնակեց տիրող կուսակցությունների կամքը՝ անջատվել սոցիալիստական Ռուսաստանից, խորհրդային աշխարհից, և արգելքներ կառուցել հյուսիսից ծավալվող հեղափոխական ալիքի առաջ։

Թյուրք-գերմանական իմպերիալիստական հեռանկարները և ազգային-բուրժուական կուսակցությունների վախը սոցիալիստական հեղափոխությունից, խթանեցին 1918 թ. ապրիլի 9-ի «անկախությունը»։

Սակայն նույն այդ իմպերիալիստական ուժը «Ազգային Խորհուրդների» տարամերժ քաղաքականությունը, կենտրոնախույս-անջատական տրամադրությունները վերջ տվին Անդրկովկասյան Սեյմին, միասնական Անդրկովկասյան «պետության»։

1918 թ. մայիսի 26—28 Վրաստանն, Ադրբեջանն ու Հայաստանը իրար հետևից հայտարարում են իրենց «անկախ» և բռնում իրենց «ինքնուրույն» գոյության ճանապարհը։

Մենշևիկյան Վրաստան, մուսավաթական Ադրբեջան, թե դաշնակցական Հայաստան—«ազգային անկախություն» հայտարարելով հանդերձ ընդունեցին ամբողջապես ցարական կալվածատիրական Ռուսաստանի իրավունքն այն փոփոխություններով, վոր մտցրել եր Ժամանակավոր Կառավարությունն ու Անդրկովկասյան Սեյմը։

Պետական ապարատի կողմից այս յերեք «դեմոկրատիկ» հանրապետություններն ևս ընդօրինակեցին բուրժուական պարլամենտարիստական պետականության ձևը։

Ընդօրինակելով այդ պետական ձևը, միաժամանակ նել առավել աղճատեցին, յուրացնելով պարլամենտական կրետինիզմի վատթարագույն արտահայտությունները։

Իշխանության ղեկն ամբողջովին անցել եր կալվածատիրական-բուրժուական-կուլակային խավերի ձեռքը, վորոնք շահագործում, ճնշում եյին պրոլետարիատին ու աշխատավոր գյուղացիության։

Հայցել հովանավորությունը իմպերիալիստական ուժերի, դառնալ նրանց կամակատարը, պայքարել խորհրդային հեղափոխության դեմ, միջպետական անընդհատ ընդհարում-պատերազմներ—ահա հիմնական ուղեգիծը այդ «անկախ» հանրապետությունների արտաքին քաղաքականության ասպարեզում։

Աշխատավորության շահագործում, սոցիալ-տնտեսական դեգրադացիա,

քաղաքացիական անազատ վիճակ, ազգային անլուր հալածանք, ջարդեր և այլն—ահա ղեկավար սկզբունքներն այդ գերիշխան հանրապետությունների:

Ազգային «դեմոկրատիկ» պետությունների ընդունած այս քաղաքականությունն անխուսափելի դարձրեց այն ապստամբությունների շարանը, վորը վերջ ի վերջո հիմքից խորտակեց այդ հանրապետությունները:

Հեղափոխական բանվորությունն ու գյուղացիությունը ապստամբելով տիրող կառավարությունների դեմ և ոգնություն ստանալով խորհրդային Ռուսաստանի յեղբայրական Կարմիր բանակից, հաստատում են խորհրդային իշխանություն—Ադրբեջանում 1920 թ. ապրիլի 28-ին, Հայաստանում 1920 թ. նոյեմբերի 29-ին և Վրաստանում 1921 թ. փետրվարի 25-ին:

3. Ի՞ՆՉՊԻՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵՑ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ԿԱԶՄՎԵՑ ՆՐԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ցարական կառավարությունը և մանավանդ «ազգային» կառավարությունները չափազանց ծանր ժառանգություն թողեցին Խորհրդային իշխանության:

Սով, կազմալուծված տնտեսություն, կուլտուրական վայրենացում, ազգային փոխադարձ ատելություն, լարված արտաքին դրություն, ռազմական լքյալ վիճակ և այլն:

Վոչ մեկն Անդրկովկասյան հանրապետություններից չեր կարող իր ուժերին ապավինած ապաքինել իր ցավերը, տալ բավարարություն անհետաձգելի ու անհրաժեշտ պայմաններին:

Յեվ խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ որվանից փոխադարձ ոգնության են հասնում յեղբայրական Հանրապետությունները և հատկապես խորհրդային Ռուսաստանը:

Պարենավորման առատ ու շտապ ոգնությունը վերջ և տալիս սովին, Կարմիր բանակի գոյության փաստն ապահովում և արտաքին վտանգներից և ներքին հակահեղափոխությունից, խորհրդային Հանրապետությունների ոգնության պատրաստակամությունը ինքնին յերաշխավորում և ինքնուրույն գոյության հնարավորությունը, արդյունաբերական կենտրոնների ուժանդակությունը ստեղծում հնարավորություն հետամնաց շրջանների տնտեսական զարթոնքի, զարգացման, խորհրդային իշխանության ընդգրկած ու կենսագործած ազգային քաղաքականությունն ու աշխատավորների դասակարգային համերաշխության ընթացքը՝ հաստատում և ազգամիջյան խաղաղություն, ազգային անդորրություն ու վստահություն, իսկ այս ամենը իր հերթին իր կողմից ստեղծում և լավագույն յերաշխիքները տնտեսական և կուլտուրական վերածննդի:

Փոխադարձ, անընդհատ, մշտական ու ծրագրված ոգնությունը, ուժանդակությունն արդեն ինքնին ստեղծում են **իրական միությունը**, փաստական, de facto ֆեդերացիա, թողնելով հետագային սոսկ հիմնավորումն ու սահմանադրական-իրավական ձևակերպումը:

Առավելապես անհրաժեշտ և միաժամանակ հնարավոր եր մշտական փոխադարձ ոգնությունը Անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների մեջ:

Անդրկովկասը, վորպես մերձավոր Արևելքի տիրակալող բարձունքներին սահմանակից—ռազմաքաղաքական առավելագույնս խոցելի եր և Բաքվի նավթը, Վրաստանի մարգանեցը և այլն,տնտեսական ձգողական ուժեքներ են միջազգային իմպերիալիզմի և ֆինանսական կապիտալի համար:

Աշխարհագրական-քաղաքական այս հատուկ դիրքին ավելանում և նաև վարչական-տնտեսական այն ընդհանրականությունը, վոր ներկայացրել և անցյալում և ունի ներկայիս Անդրկովկասը:

Իսկ այս ռազմա-քաղաքական և սոցիալ-տնտեսական շահերի ընդհանրականության ավելանում և նաև քաղաքական մի այլ հրամայական՝ վերացնել ազգային անվստահության վոգին և ստեղծել ազգային խաղաղություն ու յեղբայրական համերաշխություն:

Իսկ դա հնարավոր կդառնար, յեթե ստեղծվեյին աշխատակցության, գործակցության, փոխադարձ ոգնության միայուն կազմակերպչական ձևեր:

Իրական կյանքի պահանջներն ամեն անգամ, առանձին դեպքերում հարկադրում եյին ձևակերպել ընդհանուր քայլեր, ձեռնարկություններ, համաձայնություններ, նույնիսկ կազմակերպչական ձևեր:

Այսպիսով ստեղծվում եր միություն-համաձայնություն փոստ-հեռագրական, յերկաթուղագծերի, պարենավորման, նավթի մթերման, ֆինանսական և այլն:

Տեղի յեն ունենում այնպիսի կազմակերպված միասնական ելույթներ, ինչպես որինակ Ղարսի դաշնագիրը կնքելիս և այլն:

Սակայն այս ամենը կրում եր թեև շատ իրական, սակայն հատվածական բնույթ, դիպվածական ձևակերպում:

Չկար միասնական կազմակերպված իշխանություն-որգանիզմ, ընդհանրական քաղաքական միայուն կառուցվածք:

Անդրկովկասյան աշխատավորության լայն խավերն այդ միասնական ընդհանրական կազմակերպության պահանջը զգում եյին ամեն քայլափոխում:

Ահա այդ պահանջի արդյունքն և լինում 1922 թ. մարտի 12-ի դաշինքը, վորը հաստատում և Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների **Միությունը**:

Միության այս դաշինքն առաջին և հիմնական քայլն եր դեպի Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Ֆեդերացիան:

Համաձայն 1922 թ. մարտի 12-ի այդ դաշինքի՝ Միության բարձրագույն որգանը հանդիսանում եր լիազոր խորհրդակցությունը՝ կազմված դաշնագրվող հանրապետությունների Կենտգործկոմների 25-ական ներկայացուցիչներից:

Վորպես մշտական գործադիր որգան հանդիսանում եր Դաշնակցային Խորհուրդը, վոր ուներ յերեք հոգուց բաղկացած նախագահություն և 8 անդամ: Այս վերջին ութը անդամները գլխավորում են՝ ա. Ռազմական գործերի ժողովրդական կոմիսարիատը, բ. Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատը, գ. Փոստ-հեռագրական ժողովրդական կոմիսարիատը, դ. Արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարիատը, ե. Բանվորա-գյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատը, զ. Հաղորդակցության ճանապարհների վարչությունը և է. Արտակարգ հանձնաժողովը:

Հիշատակված կոմիսարիատների գործառնության յենթակա խնդիրները հենց կազմում են միության իրավասությունը։

Սակայն բացի այս հարցերից՝ Միության իրավասության են վերապահված նաև արտաքին քաղաքականության հարցերը և դաշնակից հանրապետությունների տնտեսական քաղաքականության ղեկավարությունը։

Արտաքին քաղաքականության ղեկավարության համար չի ստեղծվում ուրույն կոմիսարիատ և նա անցնում է Դաշնակցային Խորհրդին։

Իսկ ինչ վերաբերում է տնտեսական քաղաքականության ղեկավարության, դրա համար ստեղծվում է Բարձրագույն Տնտեսական Խորհուրդ, վորի կազմակերպությունն ու գործառնություններն արժանանում են հատուկ ու մանրամասն սահմանավորման։

Սակայն դաշինքը չի սահմանում լիազոր կոնֆերենցիայի կազմակերպությունն ու գործառնությունները, ինչպես և անորոշ է թողնում Դաշնակցային Խորհրդինը։

1922 թ. մարտի 12-ի դաշինքը պատասխան չի տալիս նաև այն խընդիրներին, թե ինչ լիազորություններ ունի Միության իշխանությունը դաշնակից հանրապետությունների օրենքների ու վորոշումների առկայման կամ թե չե բեկանման առթիվ։

Այս և այլ բացերին տալիս է պատասխան 1922 թ. դեկտեմբերի 13-ի սահմանադրությունը, վորն ընդունվել է Անդրկովկասյան Սոցիալիստական Հանրապետությունների Խորհուրդների առաջին համագումարում։

Այս սահմանադրությամբ Հանրապետությունների Միությունը, վերածվում է Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության։

Անդրկովկասյան խորհրդային սահմանադրությունը հաստատվելուց հետո՝ հիմքն է դրվում Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միության, վորի ընդունած սահմանադրության շնորհիվ Անդրկովկասյան խորհրդային սահմանադրությունը վերախմբագրվում է ու հաստատվում է 1924 թ. սեպտեմբերին II-րդ հրավերի Անդրկենտգործկոմի 2-րդ նստաշրջանում և վավերացվում է Խորհուրդների III-րդ համագումարում՝ 1925 թ. ապրիլին։

Իսկ բյուջեյի իրավունքի լրացումը կատարվում է Անդրկենտգործկոմի III հրավերի 2-րդ նստաշրջանում Յերևանում 1926 թ. հունվարին։

4. Ի՞ՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ՅԵՆԹԱԿԱ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ

Համաձայն սահմանադրության՝ Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետության իրավասության յենթակա յեն հետևյալ խնդիրները.—

1. Սահմանադրության հաստատումը, փոփոխումն ու լրացումը։
2. Այլ խորհրդային հանրապետությունների ընդունելությունը Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ, այլ և անջատվելու թույլատրությունը։
3. Ժողովրդական տնտեսության հիմունքների և ընդհանուր նախագծի սահմանումը։
4. Անդրկովկասյան Հանրապետության միասնական բյուջեյի հաստատումը։

5. Անդրկովկասյան գերագույն դատարանի կազմակերպումը։
6. Սահմանումը հողաշինարարության ու հողոգտագործման հիմունքների։
7. Անդրկովկասյան հանրապետության մեջ մտնող հանրապետությունների խորհուրդների համագումարների, կենտրոնական գործադիր կոմիտեների և ժողովրդական կոմիսարների խորհրդի այն վորոշումների բեկանումը, վորոնք կհակասեն ներկա սահմանադրության։
8. Ներումն Անդրկովկասի սահմաններում։
9. Դատարանակազմության ու դատավարության, ինչպես և քաղաքացիական ու քրեական օրենսդրության հիմունքների սահմանումը։
10. Կնքումը ներքին ու արտաքին փոխառությունների՝ թույլատվությամբ Խորհրդային Միության։
11. Ժողովրդական լուսավորության, ժողովրդական առողջապահության հիմունքների սահմանումն։
12. Աշխատանքի օրենսդրությունը։
13. Ներքին առևտրի ղեկավարությունը։
14. Առանձին հանրապետությունների մեջ ծագած վեճերի լուծումն և այլն։

Այս բոլոր հարցերը յենթակա յեն թե Խորհուրդների Համագումարի և թե Կենտգործկոմի իրավասության։

Սակայն սահմանադրության հիմնական սկզբունքների հաստատման, լրացումի և փոփոխության բացառիկ իրավունքը պատկանում է Խորհուրդների Համագումարին։

5. ՄՆ՞ՈՒՄ ԵՆ ԳԵՐԻՇԽԱՆ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կազմելով Անդրկովկասյան ֆեդերատիվ հանրապետություն՝ առանձին հանրապետությունները չեն զրկվում իրենց գերիշխանությունից։

Նախ և առաջ առանձին խորհրդային հանրապետությունները միանգամայն գերիշխան են այն բոլոր խնդիրներում, վորոնք նրանց են վերապահված։

Յերկրորդ՝ առանձին հանրապետությունների համար պարտադիր չե Միության մեջ մնալը։

Յերրորդ՝ առանձին հանրապետությունների սահմանները չեն կարող փոփոխվել առանց նրանց առ այդ համաձայնության։

Չորրորդ՝ ֆեդերացիայի դեկրետներն ու այլ օրենսդրությունները տըպագրվում են առանձին հանրապետությունների մայրենի լեզվով՝ հայերեն, վրացերեն, թուրքերեն, այլ և միջազգային-ընդհանուր լեզվով՝ ռուսերեն։

Հինգերորդ՝ Ֆեդերացիայի վորոշումների առանձին անմիջական կիրառողը առանձին հանրապետությունների իշխանությունն է։

6. Ի՞ՆՉՊԵՍ Է ԿԱԶՄՎՈՒՄ ՀՐԱՎԻՐՎՈՒՄ ՈՒ ԳՈՐԾՈՒՄ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆ ՈՒ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԸ

Անդրկովկասյան խորհրդային հանրապետության գերագույն մարմինը հանդիսանում է Անդրկովկասի Խորհուրդների Համագումարը, իսկ մի հա-

մագումարից մինչ մյուսը—Անդրկովկասի Կենտրոնական Գործադիր Կոմիտեն։

Խորհուրդների Համագումարը կազմում են պատգամավորները՝ ընտրված քաղաքային խորհուրդների կողմից՝ 3000 ընտրողին մի պատգամավորի հաշվով և գավառական խորհուրդների համագումարի կողմից—15.000 բնակչին մի պատգամավորի հաշվով։

Խորհուրդների Համագումարը հրավիրում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեն տարինը մի անգամ, իսկ արտակարգ համագումարներ կարող է հրավիրել Կենտգործկոմն իր անմիջական նախաձեռնությամբ կամ հանրապետություններից չեկող մի Կե..ործկոմի պահանջով։

Կենտգործկոմը արտակարգ արգելառիթ պայմաններում կարող է առկա ել Խորհուրդների Համագումարի հրավիրումն։

Անդրկովկասյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեն բաղկացած է 210 անդամից և 117 փոխանդամից, վորոնք ընտրվում են Խորհուրդների Համագումարում։

Կենտգործկոմը հանդիսանալով օրենսդրական, կարգադիր ու վերահսկիչ մարմին, տալիս է ընդհանուր ուղղություն Անդրկովկասի բանվորագյուղացիական իշխանության, հրատարակում է դեկրետներ և այլ օրենսդրություններ։

Կենտգործկոմը պատասխանատու և հաշվետու յե Խորհուրդների Համագումարի առաջ, վորին և զեկուցանում է իր գործունեյության և ընդհանուր քաղաքականության մասին։

Կենտգործկոմը հրավիրվում է Նախագահության միջոցով տարեկան 3 անգամ, իսկ արտակարգ նստաշրջաններ հրավիրում է Նախագահությունը իր նախաձեռնությամբ, կամ Կենտգործկոմի անդամների $^{1}/_{3}$-ի պահանջով և կամ թե հանրապետություններից մեկն ու մեկի Կենտգործկոմի պահանջմամբ։

Կենտգործկոմն ընտրում է իր Նախագահությունը՝ 15 հոգուց բաղկացած, վորոնց թվում նաև 3 Նախագահ՝ Անդրկովկասյան Ֆեդերացիայի մեջ մտած հանրապետությունների թվի համեմատ, ինչպես և ընտրում է Կենտգործկոմի մի քարտուղար ու 8 փոխանդամներ Նախագահության։

Կենտգործկոմն է ընտրում նաև Ֆեդերացիայի ընդհանուր կառավարության համար Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ։

7. Ի՞ՆՉՊԵՍ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՈՒ ԱՇԽԱՏՈՒՄ ԿԵՆՏԳՈՐԾԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԸ

Կենտգործկոմի մի նստաշրջանից մինչև մյուսը օրենսդրական, գործադիր ու կարգադիր օրգանը հանդիսանում է Նախագահությունը, վորը պատասխանատու յե Կենտգործկոմի առաջ։

Կենտգործկոմի Նախագահությունը—

ա. Առաջարկությամբ Ժողկոմխորհի՝ նշանակում է առանձին ժողովրդական կոմիսարներին.

բ. Հրատարակում է դեկրետներ և այլ օրինագրություններ, քննում ու հաստատում է օրինագրությունների, դեկրետների նախագծերը.

գ. Ներումն է շնորհում և պարգևատրում աշխատանքի և կարմիր դրոշակների.

դ. Առկայում և բեկանում է Ֆեդերացիայի Ժողկոմխորհի ու առանձին ժողկոմների, այլ և առանձին հանրապետությունների Կենտգործկոմների ու Ժողկոմխորհների վորոշումները, ինչպես և իրավունք ունի առանձին հանրապետությունների Խորհուրդների վորոշումներն առկայելու, ներկայացնելով դրանք ի քննություն և հաստատումն Կենտգործկոմի։

ե. Լուծումն է տալիս Ֆեդերացիայի Ժողկոմխորհի ու առանձին ժողկոմների մի կողմից և առանձին հանրապետությունների Կենտգործկոմների ու նրանց նախագահությունների փոխ-հարաբերություններին։

Ինչ վերաբերում է Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին—վերջինս հանդիսանում է Կենտգործկոմի գործադիր ու կարգադիր օրգանը։

Ժողկոմխորհի կազմն է—

1. Նախագահ և յերկու տեղակալներ
2. Ֆինանսների ժողովրդական կոմիսար
3. Ներքին առևտրի ժողովրդական կոմիսար
4. Բանվորագյուղացիական տեսչության ժողկոմիսար
5. Աշխատանքի ժողովրդական կոմիսար
6. Արտակարգ հանձնաժողովի Նախագահ։

Բացի դրանից՝ Կենտգործկոմի վորոշմամբ՝ վճռական թե խորհրդակցական ձայնով Խ. Ս. Հ. Մ. լիազորները—

7. Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի
8. Ռազմա-ծովային ժողովրդական կոմիսարիատի
9. Արտաքին առևտրի ժողովրդական կոմիսարիատի
10. Հաղորդակցության ճանապարհների ժողկոմիսարիատի
11. Փոստ-հեռագրական ժողովրդական կոմիսարիատի։

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը պատասխանատու յե Կենտգործկոմի և նրա նախագահության առաջ, վորոնք և իրավազոր են առկայել ու բեկանել նրա վորոշումները։

Առանձին հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեներն ու նրանց նախագահություններն իրավունք ունեն բողոքարկել Ֆեդերացիայի Ժողկոմխորհի դեկրետներն ու օրենսդրությունները—հաչս Ֆեդերացիայի Կենտգործկոմի Նախագահության։

Ժողկոմխորհին կից հիմնվում է Տնտեսական բարձր Խորհուրդ, վորի կոչումն է ուղղություն տալ ինչպես Ֆեդերացիայի, նույնպես և առանձին հանրապետությունների տնտեսական կյանքին ու քաղաքականության։

8. Ի՞ՆՉ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ԵՆ ԳՏՆՎՈՒՄ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՅԵՎ ԱՌԱՆՁԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ

Անդրկովկասյան ֆեդերացիայի սահմանադրությունը միաժամանակ տալիս է կազմակերպչական հիմնական սխեմը առանձին հանրապետությունների բարձրագույն հիմնարկությունների, վորպիսիք հանդիսանում են հանրապետությունների խորհուրդների համագումարներն ու կենտրոնական գործադիր կոմիտեները։

Կենտգործկոմն ընտրում է իր նախագահությունը, ինչպես և Ժողկոմխորհը։

Այս հիմնարկությունների կազմակերպության, իրավասության ու ֆունկցիաների մասին—ներքևը, Հ. Ս. Խ. Հ. սահմանադրության մասին խոսելիս։

Ֆեդերացիայի և առանձին հանրապետությունների փոխ-հարաբերությունները սահմանվում են վերևը հիշված սկզբունքներով։

Սահմանադրության համաձայն առանձին հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեներին վերապահվում է ներման ու ռեաբիլիտացիայի իրավունք այն բոլոր քաղաքացիների վերաբերմամբ, վորոնք դատապարտված են յեղել տվյալ հանրապետության դատական ու վարչական օրգանների կողմից։

ՀԱՎԵԼՎԱԾ *)

II

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

9. ՅԵ՞ՐԲ ՅԵՎ Ի՞ՆՉՊԻՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁԱՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ

Այն հարցի մասին, թե յերբ է հայտարարված Հայաստանը խորհրդային հանրապետություն—կա յերկու տեսակետ։ Առաջին տեսակետը պաշտպանում են դաշնակցականները, վորոնք ասում են, վոր Հայաստանում վոչ մի հեղափոխություն չի յեղել, վոր 1920 թ. դեկտեմբերի 2-ին նախկին կառավարությունը, Վրացյանի նախագահությամբ, իր հոժար կամքով փոխանցել է իշխանությունը զինվորական հրամանատարության ի դեմ Դրոյի, վորն իր կողմից հանձնել է Հեղափոխական Կոմիտեյին, այսպիսով տեղի չի ունեցել իշխանության խաղաղ, անարյուն հաջորդականություն, առանց հեղափոխական ընդհատման։

Հակառակ այս տեսակետի՝ հեղափոխական-կոմմունիստական քաղաքագիտությունն ու խորհրդային իշխանությունն արձանագրում են այն իրական-պատմական փաստը, վոր Հայաստանը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն հայտարարվել է 1920 թ. նոյեմբերի 29-ին, յերբ Հայաստանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները, յեղբայրական ոգնությամբ Խորհրդային Ռուսաստանի փոքրաթիվ զորամասի, տապալված են հայտարարում Վրացյանի կառավարությունը, կատարում են հեղաշրջում, իշխանության հեղափոխական ընդհատում և Խորհրդային Հայաստանի գերագույն իշխանությունը հանձնում Հեղափոխական Կոմիտեյին՝ նախագահությամբ ընկ. Ս. Կասյանի և մասնակցությամբ ընկ. ընկ. Ա. Մռավյանի, Ավիսի, Տեր-Գաբրիելյանի, Ա. Բեկզադյանի և Ս. Դովլաթյանի։

Հեղափոխական այս նոր իշխանությունը, իր գոյության և իրավունքի միակ աղբյուրը ճանաչելով Հայաստանի հեղափոխական բանվորի ու գյուղացու կամքը—վերջ է տալիս նախախորհրդային իրավակարգին, ամբողջ պետական ապարատը, չեղյալ է հայտարարում մինչ խորհրդային իշխանությունը կայացած ամեն մի համաձայնություն, պայմանագիր, դաշինք։

Նոյեմբերի 29-ի հեղափոխությունն իշխանությունը տալիս եր նոր դասակարգի՝ պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության՝ վերջ տալով յեվրոպական իմպերիալիզմի առևտրա-չարչիական և կուլակային տարրերի դասակարգային տիրապետության, վորոնց ներկայացուցիչն եր Դաշնակցությունը։

*) Սույն հավելվածը կազմելիս խմբագրությունը առաջնորդվել է այն սահմանադրությամբ, վոր Համկենտգործկոմն ընդունել է՝ 1925 թ. մարտին. վերջնական խմբագրությունը թողնելով նախագահության։

Այսպիսով կատարվում է իշխանության հեղափոխական, բռնի գրավումը նոր դասակարգի կողմից։

Նոյեմբերյան հեղափոխությունը առերևույթս անարյուն էր, վորովհետև նախընթաց կառավարությունը, շնորհիվ իր վարած ներքին թե արտաքին քաղաքականության—զրկել էր իրեն սոցիալական կայուն բազայից, կորցրել ինքնապաշտպանության հնարավորությունը։

Արտաքին պատերազմներ, ազգամիջյան կռիվներ, իմպերիալիստական ու միլիտարիստական անսանձ քաղաքականություն—արնաքամ էյին դարձրել յերկիրն ու ժողովուրդը, վոր հասել էր ծայր աստիճանի քայքայման, կազմալուծման, սովամահության, անխուսափելի բնաջնջման։

Մայիսյան հերոսական և արյունալից ապստամբությունը խոշորագույն հեղափոխական փորձն էր վերջ տալ այս դրության, վորպիսին շարունակվեց շնորհիվ իմպերիալիստական պետությունների նյութական աջակցության և մաուզերիստական-խմբապետական ուժերի բռնության։

Սակայն մայիսյան արյունալի պարտված հեղափոխությունը հնարավոր դարձրեց նոյեմբերյան անարյուն հաղթական հեղափոխությունը։

10. Ի՞ՆՉՊԵՍ ԷՐ ԿԱՌԱՎԱՐՎՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՆՉԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆՎԵԼԸ

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանը հայտարարվեց գերիշխան, անկախ խորհրդային սոցիալիստական հանրապետություն։ Խորհրդային յեղբայրական այլ հանրապետություններ և հատկապես խորհրդային Ռուսաստանը տալով հանդերձ խորհրդային Հայաստանին ամեն տեսակի ոգնություն, թե ռազմական ու դիվանագիտական, թե ֆինանսա-տնտեսական, թե պարենային և այլն—յերբեք ձեռնամուխ չեն յեղել նրա սուվերեն, անկախ իրավունքների մեջ։

Մինչև սահմանադրությունն ընդունվելը խորհրդային Հայաստանը կառավարվում էր Հեղափոխական Կոմիտեների սիստեմով։

Յերկրի գերագույն իշխանությունը, ինչպես որենսդրական, կարգադիր, նույնպես և կատարողականը, կենտրոնացած էր Հայաստանի Հեղափոխական Կոմիտեյի ձեռքում։

Հայաստանի Հեղափոխական Կոմիտեն իր կողմից նշանակում էր գավառային հեղափոխական կոմիտե, գավառայինը՝ գավառակայինն և գավառակայինը՝ գյուղական։

Խորհրդային իշխանությունը մտահոգված էր 1921 թ. գարնանից հենց անցնել խորհուրդների ընտրության, սակայն փետրվարյան ավանտյուրան զրկեց այդ հնարավորությունից։

Արտաքին ապահովության՝ կայունությունը, ներքին հակահեղափոխության վերջնական լիկվիդացիան և յերկրի տնտեսական պարենային վիճակի լավացումը ստեղծեցին հնարավորություն 1921 թ. աշնանն անցնել խորհուրդների ընտրության։

Հայաստանի խորհուրդների անդրանիկ համագումարը, 1922 թ. փետրվարի 2-ին ընդունելով սահմանադրությունը—տվեց իրավական հիմնական ձևակերպումն ամբողջ իշխանության՝ գերագույն թե յենթարկյալ, կենտրոնական թե տեղական։

11. Ի՞ՆՉՊԵՍ ԿԱԶՄՎԵՑ Հ. Ս. Խ. Հ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ Ի՞ՆՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄՏՑՐՎԵՑ

Խորհրդային իշխանությունը հեղափոխական-սոցիալիստական իշխանություն է և վորպես այդպիսին, յուրաքանչյուրը խորհրդային հանրապետություններից՝ թե դասակարգային էությամբ, թե ընդգրկած քաղաքականությամբ և թե պետական ապարատի կազմակերպչական հիմունքներով՝ համերաշխ են։ Բոլոր խորհրդային հանրապետություններն իրենց կազմակերպության հիմնական աղբյուր ընդունում են խորհրդային Ռուսաստանի իրավակարգը։

Խորհրդային Հայաստանն ևս իր գոյության առաջին իսկ որվանից, պահելով հանդերձ իր բովանդակ սուվերենիտետը, գերիշխանությունը—նախատիպար ընդունեց խորհրդային Ռուսաստանի սահմանադրությունը և այլ որենսդրությունը։

Դեռ Հայհեղկոմը, 1920 թ. դեկտեմբերի 18-ին, համարելով վերացած նախախորհրդային հակահեղափոխական բովանդակ որենսդրությունը—ընդունեց խորհրդային Ռուսաստանի որենքները վորպես գործող նաև խորհրդային Հայաստանում, հետագայի փոփոխություններն և ինքնուրույն որենսդրությունն ամբողջովին վերապահելով արդեն Հայաստանի որենսդրական իշխանության։

Հ. Ս. Խ. Հ. սահմանադրությունը մշակելիս իբր հիմք է ընդունված, նախատիպար է ճանաչված Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. սահմանադրությունը։ Սակայն այդ սահմանադրությունը, վոր ընդունված էր դեռ 1918 թ., կազմակերպչական և գործառնական խնդիրներում հետագային յենթարկվել էր մի շարք փոփոխությունների։

Հ. Ս. Խ. Հ. սահմանադրությունը մշակելիս—հաշվի են առնվել նաև այդ փոփոխությունները։

Յեթե Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. հանդիսացել է խորհրդային Հայաստանի սահմանադրության աղբյուր—դա չի նշանակում, թե մեր սահմանադրությունը սոսկ փոխադրություն է հանդիսանում։

Սահմանադրության հիմնական սկզբունքները մշակելիս՝ ճշտվել է հարևանների հետ խաղաղ-չեզոքային համակեցության անհրաժեշտությունը—վորպես հակադրություն այն քաղաքականության, վոր նախախորհրդային դաշնակցական կառավարությունն է վարել։

Վորպես լրացում մտցրվել է նաև իրավունքի ու արդարադատության հիմունքների սահմանումը, վորպիսին Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. սահմանադրության մեջ այդ ժամանակ դեռ չէր ձևակերպված։

Ինչ վերաբերում է իշխանության կազմակերպչական սիստեմին—հաշվի է առնվել Հայաստանի առանձնահատկությունը, վորպես փոքր յերկրի։

Հետագային՝ Անդրկովկասյան Ֆեդերացիայի և խորհրդային Միության սահմանադրությունների ընդունվելուց հետո, կարիք զգացվեց կատարել նոր փոփոխություններ ու լրացումներ։ Սակայն այդ փոփոխությունները վերաբերում են սահմանադրության այն մասերին, վոր վերաբերում են Հ. Ս. Խ. Հ. գերագույն և կենտրոնական մարմինների իրավասության ու գործառնություններին։

Ինչ վերաբերում է տեղական իշխանության—նա մնում է հիմքում անփոփոխ։

12. ՎՈՐՈ՞ՆՔ ԵՆ Հ. Ս. Խ. Հ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Սահմանադրությունը սոսկ ձևակերպումն է այն սոցիալ-իրավական սիստեմի, վոր կոչվում է խորհրդային իշխանություն։ Խորհրդային իշխանությունը և նրա ընդգրկած քաղաքականությունը—դա յե կազմում բովանդակությունն ու հիմքը բոլոր խորհրդային սահմանադրությունների, նաև խորհրդային Հայաստանի սահմանադրության։

Սահմանադրության ձևակերպմամբ ևս՝ խորհրդային իշխանությունը արտահայտությունն է պրոլետարիատի դիկտատուրայի և վորպես այդպիսին—իշխանությունը, տեղերում թե կենտրոնում, պատկանում է բանվորների, աշխատավոր գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորական խորհուրդներին, խորհուրդների համագումարին և գործադիր կոմիտեներին։

Իշխանությունն ամբողջովին ու բացառապես վերապահվում է բանվորներին ու գյուղացիներին, առանց ազգի, դավանանքի խտրության, իսկ շահագործող դասակարգերը զրկվում են ընդհանրապես քաղաքական իրավունքներից և հատկապես քաղաքական պաշտոնակալության իրավունքից։

Աշխատավորներին քաղաքացիական ազատությունները՝ խոսքի, մամուլի և այլն իրապես ապահովելու համար՝ տրվում են բոլոր կազմակերպչական-տեխնիկական և նյութական հնարավորությունները, գիտության և դաստիարակության համար տրվում են լիակատար, բազմակողմանի կրթության բոլոր հնարավորությունները։

Յեկեղեցին՝ անջատվում է պետությունից և դառնում հավատացյալների մասնավոր գործ. քաղաքացիներին վերապահվում է ազատ իրավունք կրոնական թե հակակրոնական պրոպագանդ վարելու։

Դպրոցն իսպառ անջատվում է յեկեղեցուց և դառնում է սոցիալիստական դաստիարակության որգան՝ կիրառելով արտադրական աշխատանքը վորպես միջոց կրթության։

Ազգային և միջազգային քաղաքականության ասպարեզում սահմանադրությամբ յերաշխավորվում է—

ա. Քաղաքացիների իրավունքների հավասարություն՝ առանց ցեղի և ազգության խտրության. սահմանադրության հակառակ է ճանաչվում ամեն մի ազգային սահմանափակում կամ թե չէ առանձնաշնորհում։

բ. Քաղաքական ու կրոնական հալածանքի յենթակա բոլոր ոտարերկրացիներին տրվում է ապահովություն և պաշտպանություն։

գ. Բոլոր ոտարերկրացի աշխատավորներին տրվում է քաղաքացիության իրավունք։

դ. Իսպառ վերացումն նախկին կառավարությունների կնքած բոլոր միջազգային դաշինքների, վճռականորեն մերժումն վորևէ ազգային-հարձակողական քաղաքականության հարևան յերկրների ու ժողովուրդների վերաբերմամբ, գաղտնի դիվանագիտության և ընդհակառակը՝ հաստատումն ու ամրապնդումն հարևանների հետ բարեկամական դրացիության։

Ճանաչելով ու յերաշխավորելով հանդերձ այս բոլոր իրավունքները՝ Հ. Ս. Խ. Հ. սահմանադրությունը չի անտեսում թե՛ ներքին հակախորհրդային ուժերի գոյության ու գործունեության հնարավորությունները և թե արտաքին ռազմական-քաղաքական ցնցումները խորհրդային իշխանության դեմ՝ իմպերիալիստական պետությունների կողմից։

Ահա այսպիսի նախատեսությամբ և սոցիալիստական հեղափոխության շահերից յելնելով Հ. Ս. Խ. Հ. սահմանադրությունն ևս կառավարությանը վերապահում է իրավունք զատ-զատ անձանց ու խմբերին զրկել այն իրավունքներից, վոր նրանք ոգտագործում են ի վնաս սոցիալիստական հանրապետության շահերին։

Պրոլետարիատի դիկտատուրան պաշտպանելու համար՝ իսպառ վերացվում են խորհրդային իշխանության նախորդող հակահեղափոխական կառավարությունների ամբողջ որենսդրությունն ու արդարադատությունը և հակառակ դրան՝ սահմանվում պրոլետարական իրավունքն ու խորհրդային-հեղափոխական արդարադատությունը։

Իսկ արտաքին ու ներքին հակահեղափոխության դեմ պայքարելու և պաշտպանելու նպատակով՝ կազմվում է Կարմիր բանակը, բոլորի համար դարձնելով զինվորական ծառայությունը պարտադիր, սակայն սոցիալիստական հայրենիքը զենքով պաշտպանելու պատվավոր իրավունքը պատկանում է միայն աշխատավորներին, իսկ չաշխատող տարրերի վրա դրվում են ռազմական այլ պարտականություններ։

Խորհրդային իշխանությունը՝ նպատակ ունենալով վերջ տալ մարդու շահագործման՝ մարդու ձեռքով—

ա) Գրավում է անհատական, մասնատիրական, կրոնական հաստատությունների և այլն հողը և աշխատանքային ոգտագործության հիմունքներով բաշխում գյուղացիներին, ինչպես և վերապահում կոլլեկտիվների ու խորհրդային տնտեսությունների մշակույթին։

բ) Պետականացվում են գործարանները, բանկերը, յերկաթուղիները և ընդհանրապես խոշոր արտադրության միջոցները, մենաշնորհ է հայտարարվում արտաքին առևտուրը և այլն։

Այս ամենը խորհրդային իշխանությունը, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի արտահայտիչ, կատարում է այս անցման պատմական շրջանի միջոցին։

Մեր սահմանադրությունն ևս, ինչպես և այլ խորհրդային սահմանադրություններ, շեշտում է, վոր պրոլետարիատի դիկտատուրան կոչումն ունի վերջ տալու կապիտալիստական հանրակարգին և իրականացնել սոցիալիզմը։ Իսկ կոմմունիստական կարգերի իրականացմամբ վերջ է տրվում դասակարգերի գոյության, վերացվում է անհրաժեշտությունը դասակարգային դիկտատուրայի, քաղաքական իշխանության։

Սահմանադրությամբ շեշտված ու քաղվածորեն արտահայտված այս սկզբունքներով է առաջնորդվում Հ. Ս. Խ. Հանրապետությունն իր կազմակերպության, գործառնությունների ու գործունեության խնդիրներում։

13. ԳԵՐԻՇԽԱ՞Ն ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ Է Հ. Ս. Խ. Հ. ՅԵՎ Ի՞ՆՉ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՆ ՆՐԱ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՅԵՆԹԱԿԱ

Սոցիալիստական շինարարությունը և ազգային զարգացման ազատությունն ապահովելու, կապիտալիստական ողակի հանդեպ խորհրդային

միասնական ճակատ ստեղծելու նպատակով—խորհրդային Հայաստանը յերբայրական սերտ աշխատակցության հիմունքներով մտնում ե Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության մեջ, իսկ վերջինիս միջոցով, վորպես նրա իրավահավասար մասը՝ կազմում ե միացյալ պետություն՝ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միություն։

Միասնականությունն աշխատանքի, շինարարության ու պայքարի անհրաժեշտություն ե ստեղծել նաև ընդհանրական կառավարական իշխանության, պետական-քաղաքական ապպարատի և ընդհանուր հիմնական իրավական սիստեմի։

Սակայն այդ ընդհանրական քաղաքական իշխանությունը և միասնական իրավական սիստեմը վոչ թե բռնադատ սահմանափակումն ե այլ հոժարակամ, ազատ ինքնասահմանափակումն։

Այդ ինքնասահմանափակումն կատարում ե վոչ միայն Հայաստանը, այլ և խորհրդային Ռուսաստանը, վորը նույն հավասարության հիմունքներով կատարում ե այդ ինքնասահմանափակումը, մտնելով ընդհանուր խորհրդային Միության մեջ։

Բացի այդ՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը—

ա) Ազատ իրավունք ունի անջատվելու խորհրդային Միությունից և վերջինս չի կարող հակառակել ու բռնանալ։

բ) Անդրկովկասյան խորհրդային Հանրապետությունն ու խորհրդային Միությունը սահմանադրական պարտականություն ունեն պաշտպանել խորհրդային Հայաստանի գերիշխանությունը։

գ) Հայ լեզուն՝ համարվում ե վոչ միայն Հայաստանի հանրապետության պետական լեզու, այլ և խորհրդային մեծ Միության պետական-գործածական լեզու, վորպիսին անհրաժեշտ կերպով այլ իրավակարգում։

դ) Քաղաքական-իրավական ինքնասահմանափակումը կատարվում ե միայն այն խնդիրների վերաբերմամբ, վորոնք վերապահված են Անդրկովկասյան խորհրդային Հանրապետության և խորհրդային Միության։

Իսկ ինչ վերաբերվում ե իրավասության այն ընդարձակ շրջանակին այլ և անմիջական կառավարչության, վոր ամբողջովին վերապահված ե դաշնակից հանրապետություններին, ներկա դեպքում խորհրդային Հայաստանին, ահա այդ սահմաններում Հ. Ս. Խ. Հանրապետությունն անվերապահորեն գերիշխան ու անկախ ե։

Այդ գերիշխանության ու անկախության նախանձախնդիր ե հենց ինքը՝ խորհրդային Միությունը, վորն այդ նախանձախնդրությունն սահմանադրությամբ ե ձևակերպել։

Հ. Ս. Խ. Հ. իրավասության են յենթակա՝ հանձինս իր գերագույն մարմինների—հետևյալ խնդիրները.

ա) Խորհրդային Հայաստանի սահմանադրական հաստատումը, լրացումն ու փոփոխումը։

բ) Ընդհանուր ղեկավարությունը Հանրապետության ներքին քաղաքականության։

գ) Հ. Ս. Խ. Հանրապետության կազմի մեջ այլ հանրապետություններ ընդունելը, Հանրապետության սահմանների վորոշումն ու փոփոխումը, այլ և նրա մասերի, ինչպես և Հանրապետության պատկանող իրավունքների տարածումն։

դ) Հանրապետության ընդհանուր վարչական միավորների ներքին վերաբաժանումները։

ե) Հ. Ս. Խ. Հ. ժողովրդական Տնտեսության ընդհանուր ծրագիր սահմանելը, այլ և Հայաստանի սահմաններում իրագործումն ժողովրդական տնտեսության հիմունքների ու ծրագրի, վոր սահմանում են Ա. Ս. Ֆ. Խ. Հ. և Ս. Խ. Հ. Միության գերագույն Մարմինները։

զ) Ս. Խ. Հ. Միության կողմից Հայաստանի անունից վերջինիս սահմաններում գտնվող ձեռնարկությունների վերաբերյալ կնքվելիք կոնցեսիոն պայմանագրերի նախնական քննությունը և հանրապետական նշանակություն ունեցող կոնցեսիոն պայմանագրերի հաստատությունը։

է) Հ. Ս. Խ. Հ. բյուջեյի սահմանումը, այլ և միութենական ու ֆեդերատիվ օրենսդրության համաձայն հարկեր և տուրքեր սահմանելը։

ը) Միութենական օրենսդրության ընդունած սկզբունքների համաձայն դատարանակազմության, դատավարության և քրեական ու քաղաքացիական օրենսդրության սահմանումը։

թ) Միութենական օրենսդրության հիման վրա քաղաքացիության իրավունք տալն ու այդ իրավունքից զրկելը և այդ առթիվ Հ. Ս. Խ. Հ. սահմաններում վորոշումներ հրատարակելը։

ժ) Հ. Ս. Խ. Հանրապետության սահմաններում, Հանրապետության դատական և վարչական մարմինների կողմից դատապարտվածներին ընդհանուր և մասնակի ներում, նաև առանձին քաղաքացիներին ներումն շնորհելը և նախկին վիճակի մեջ հաստատելը։

ժա) Ա. Ս. Ֆ. Խ. Հ. և Ս. Խ. Հ. Մ. գերագույն մարմինների համաձայնությամբ արտաքին և ներքին փոխառությունների կնքումն։

ժբ) Միութենական և ֆեդերատիվ օրենսդրության սկզբունքների հիման վրա՝ օրենսդրություն սահմանելը՝ աշխատանքի մասին, ինչպես և հողաշինարարության, հողօգտագործման, անտառների, ջրերի և ընդերքի օգտագործման վերաբերյալ։

ժգ) Հ. Ս. Խ. Հ. սահմաններում ժողովրդական լուսավորության և ժողովրդական առողջապահության սկզբունքները և ընդհանուր ծրագիր սահմանելը։

ժդ) Ա. Ս. Ֆ. Խ. Հ. և Ս. Խ. Հ. Մ. Ժողկոմխորհի դեկրետների և վորոշումների դեմ Անդրկենտգործկոմի նախագահության առաջ բողոք տալը և այլն, և այլն։

Ահա շրջանակն այն կարևորագույն խնդիրների, վորոնց լուծումը վերապահված ե Հ. Ս. Խ. Հանրապետության գերագույն իշխանության։

Ազգային-քաղաքական ինքնորոշման ու անկախության տեսակետից՝ արդեն ինքնին պարզ ե, վոր շատ են լայն այս սահմանները։

14. Ի՞ՆՉ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ ՀԻՄՔ ԵՆ ԿԱԶՄՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՍԻՍՏԵՄԻ

Խորհրդային իշխանության կազմակերպչական հիմնական սկզբունքը—

դա դասակարգային սկզբունքն է։ Խորհրդային իշխանությունը և նրա գաղափարական-քաղաքական ղեկավար կուսակցությունը՝ կոմմունիստական կուսակցությունը միշտ չեշտում են այս դրությունը, հակառակ բուրժուական իրավակարգի ու բուրժուական կուսակցությունների, վորոնք «ժողովրդապետություն», «ընդհանրական կամք», «ազգային իշխանություն» և այլ խաբուսիկ արտահայտություններով քողարկում են բուրժուական պարլամենտարիզմի դասակարգային բնույթը։ Խորհրդային իշխանությունը վորպես գերազանցապես աշխատավոր մեծամասնության իրավակարգ—այդպիսի քողարկման կարիքը չունի։

Խորհրդային պետականության կազմակերպության, ինչպես և գործունեության յերկրորդ հիմնական սկզբունքը նրա լայն մասսայական բնույթն է։ Բուրժուական պարլամենտարիստական կարգերում՝ «ժողովուրդը» քանի տարին մի անգամ ընտրում է իր պատգամավորներին, «ներկայացուցիչներին», վորոնք և հետագայում անհաշիվ ու անպատասխանատու իրենց ընտրողների առաջ «կառավարում» են «յերկիրն ու պետությունը» վոչ վորպես ընտրողների ներկայացուցիչ, այլ վորպես «համաժողովրդական կամքի» արտահայտիչներ։

Հակառակ այս դրության՝ խորհրդային իրավակարգում, վորտեղ՝ ա) ընտրությունները կատարվում են անհամեմատ ավելի շուտ. բավական է ասել, վոր հանրապետության գերագույն մարմինը՝ Պատգամավորական Խորհուրդների Համագումարն ընտրվում է տարին մի անգամ. բ) պատգամավորները պատասխանատու և հաշվետու յեն իրենց ընտրողների առաջ, պարտական են մշտական հաշիվ-զեկուցում տալ իրենց գործունեության. գ) ընտրողներն իրավունք ունեն անարժան պատգամավորին յետ կանչելու և նրա տեղը նորն ընտրելու և այլն։

Յերրորդ հիմնական սկզբունքը—դա բովանդակ խորհրդային իշխանության, կազմակերպչական սիստեմի, կառուցվածքի միասնականությունը, ներդաշնակությունն է, օրգանական ու անանջատելի ամբողջությունն է։

Հակառակ բուրժուական պետականության, վորտեղ պարլամենտը՝ քաղաքական իշխանությունն է, իսկ տեղական իշխանություններն սոսկ «հասարակական ինքնավարություններ», կենտրոնը համաժողովրդական, իսկ գյուղի, քաղաքի իշխանությունը՝ սոսկ տեղական և այլն—խորհրդային պետականությունն այլ պատկեր է ներկայացնում։

Խորհրդային հանրապետություններում՝ տեղն ու կենտրոնն իրարից անջատ չեն, վոչ էլ «քաղաքական» իշխանությունը հակադրվում է «հասարակական ինքնավարության»։ Խորհրդային իշխանության ամենաներքին բջիջը՝ գյուղխորհուրդը և հանրապետության գերագույն մարմին՝ Խորհուրդների Համագումարը, կազմում են ընդհանրական օրգանական ամբողջություն։ Այսպես՝ գյուղխորհուրդ ընտրելով՝ աշխատավոր գյուղացին վոչ միայն գյուղական իշխանությունն է ընտրում, այլ և ամբողջ հանրապետության՝ տեղական, կենտրոնական թե գերագույն իշխանությունը. գյուղխորհուրդների պատգամավորները կազմում են գավառակի պատգամավորական Խորհուրդների Համագումար, վորից ընտրված պատգամավորները կազմում են գավառի պատգամավորական Խորհուրդների Համագումարը և այս վերջինիս կողմից ընտրված պատգամավորներից է կազմվում Հանրապետության գերագույն իշխանությունը՝ Համագումարը։

Չորրորդ հիմնական սկզբունքը խորհրդային իշխանության կազմակերպչական սիստեմի՝ դա դեմոկրատիկ կենտրոնացումն է, վորի էությունը կայանում է նրանում, վոր մեր պետականության բովանդակ իշխանությունն ընտրովի յե և վոչ նշանակովի, բյուրոկրատական, և երկրորդ՝ ստորադիր ընտրովի մարմինը՝ յենթարկվում է բարձրադիր ընտրովի իշխանության վորոշումներին։ Դեմոկրատիկ կենտրոնացման շնորհիվ հնարավոր է դառնում իշխանության գործունեության և՛ արագացումը, և՛ ներդաշնակությունը, միակամությունը և միաժամանակ վերացումն բյուրոկրատիզմի։

Ինչ վերաբերում է այն խնդրին, թե ինչպես են կատարվում խորհրդային ընտրությունները Հայաստանում—այս հարցում էլ մենք առաջնորդվում ենք խորհրդային իրավակարգի դասակարգային էությամբ և հեղափոխական ղեկավարության պահանջից։

Խորհրդային Հայաստանում էլ ընտրվելու և ընտրելու իրավունք ունեն բոլոր 18 տ. լրացած աշխատավորները՝ անկախ ազգությունից, դավանանքից, նստակեցությունից։ Ընտրական ցենզը—դա արտադրական աշխատանքի, աշխատանքի գերիշխանության սկզբունքն է, վորից յելնելով և զրկվում են ընտրական իրավունքից սոցիալական շահագործող, պարազիտ տարրերը։

Խորհրդային ընտրական իրավունքում կարևոր լրացումը, վոր սահմանել են մեր հիմնական Օրենքները—դա նա յե, վոր մեր Հ. Ս. Խ. Հ. սահմանադրության համաձայն ընտրական իրավունքից. զրկված են նաև մաուզերիստներն ու խմբապետներ, վորոնք ամենափայլուն արտահայտիչներն էյին դաշնակցական պետականության, քաղաքական թե ռազմական իշխանության։

Ընդհանուր աշխատավորական ցենզի սահմաններում խորհրդային ընտրական իրավունքը կարող է ընդլայնվել ու սահմանափակվել, նայած միջազգային ու քաղաքական դրության, ինչպես և նոր կազմավորվող սոցիալական ույժերի փոխ-հարաբերություններին։

15. Ի՞ՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ՅԵՎ Ի՞ՆՉ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղի և քաղաքի սահմաններում բարձր իշխանությունը հանդիսանում են պատգամավորական Խորհուրդները, իսկ գավառակի և գավառի սահմաններում համապատասխան Խորհուրդների Համագումարները։

Տեղական իշխանության հիմնական ֆունկցիաներն են՝—

ա. Տեղական նշանակություն ունեցող բոլոր խնդիրների ինքնուրույն լուծումը, ինչպես և տվյալ յերկրամասի սահմաններում խորհրդային ամբողջ գործունեության միացումը։

բ. Համապատասխան յերկրամասը կուլտուրապես ու տնտեսապես բարձրացնելու բոլոր միջոցների գործադրությունը և միաժամանակ՝

գ. Խորհրդային իշխանության համապատասխան մարմինների վճիռների կենսագործումը և այլն։

Տեղական իշխանությունն ունի հետևյալ կազմակերպությունը—

Գյուղական պատգամավորական խորհուրդը կազմվում է 100 բնակչին

մի պատգամավորի հաշվով, իսկ քաղաքի—500 բնակչին. այս ընտրական նորմերը փոփոխելի չեն։

300-ից պակաս բնակչություն ունեցող գյուղերում կառավարական գործերը սահմանադրության համաձայն վճռում են ընտրողների ընդհանուր ժողովի կողմից անմիջաբար և գործադրվում նախագահի միջոցով։

Գավառամասի սահմաններում բարձր իշխանությունը հանդիսանում է պատգամավորների խորհուրդների գավառամասային համագումարը, որը կազմվում է գյուղական խորհուրդների ներկայացուցիչներից, ըստ որում 500 բնակիչ տալիս է մի պատգամավոր։

Գավառի սահմաններում՝ բարձր իշխանությունը հանդիսանում է պատգամավորական խորհուրդների գավառային համագումարը, որը կազմվում է գավառամասային համագումարի և քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներից։

Պատգամավորական խորհուրդների համագումարներն ընտրում են համապատասխան գործադիր կոմիտեներ, որոնք հանդիսանում են մի համագումարից մինչև մյուս համագումարը տվյալ յերկրամասի բարձր իշխանությունը և իրենց գործունեության համար հաշվետու և պատասխանատու յեն համագումարի առաջ։

Քաղաքային խորհուրդները իրենց առանձին գործադիր կոմիտեներ չունեն, այլ օգտվում են գավառական գործադիր կոմիտեներից, ավելի ճիշտ գավառա-քաղաքային գործադիր կոմիտեներից։

Գործադիր կոմիտեներին կից կազմակերպվում են համապատասխան բաժանմունքներ՝ վարիչների գլխավորությամբ, որոնք կարող են և չլինել գործադիր կոմիտեյի անդամ։

Բաժանմունքները յենթարկվում են ինչպես տվյալ գործադիր կոմիտեյին, նույնպես և ավելի բարձրադիր իշխանության համապատասխան մարմինների հրամաններին ու կարգադրություններին։

16. Ի՞ՆՉՊԵՍ Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ՈՒ ԳՈՐԾՈՒՄ Հ. Ս. Խ. Հ. ԳԵՐԱԳՈՒՅՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գերագույն իշխանություն ասելով հասկանում ենք պետական-քաղաքական այն մարմինը, որ արտահայտում է պետության գերիշխանության, սուվերենիտետի իրավունք, որը ինքը ոչ ոքից կախում չունի, իսկ կենտրոնական իշխանությունը՝ այն մարմինն է, որի իրավասությունը տարածվում է ամբողջ հանրապետության վրա։

Թե խորհրդային Միության և թե Հ. Ս. Խ. Հանրապետության սահմանադրությունների համաձայն՝ Հայաստանի նախնական ու հիմնական գերագույն իշխանությունը հանդիսանում է Հայաստանի պատգամավորական Խորհուրդների Համագումարը, որը կազմվում է գավառի պատգամավորական խորհուրդներից ընտրված պատգամավորներից։

Այս համագումարի իրավասության յենթակա յեն այն բոլոր խնդիրները, որոնք վերևում հիշատակվեցին, որպես Հ. Ս. Խ. Հանրապետության իրավասության յենթակա։ Այդ բոլոր խնդիրները յենթակա են նաև Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի իրավասության՝ բացառությամբ սահմանադրության հիմնական սկզբունքների հաստատման, լրացման ու փոփոխման։

Հայաստանի Խորհուրդների հերթական Համագումարը հրավիրում է Կենտրոնական Գործադիր կոմիտեն տարեկան մի անգամ, իսկ արտակարգ համագումարները՝ վերջինիս որոշմամբ և կամ թե պահանջմամբ գավառական խորհուրդների՝ ազգաբնակության 1/5-ից ոչ պակաս մասն ընդգրկող վայրերի։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեն արգելաւթ արտակարգ հանգամանքների դեպքում կարող է նաև հետաձգել Խորհուրդների Համագումարի հրավիրումը։

Խորհուրդների Համագումարների միջանկյալ շրջանում՝ Կենտրոնական Գործադիր Կոմիտեն է հանդիսանում հանրապետության գերագույն իշխանությունը, սակայն, նա պատասխանատու և հաշվետու յե իր գործունեության համար համագումարի առաջ։

Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեն օրենսդիր, տնօրեն ու վերահսկիչ մարմին է և որպես այդպիսին—

ա. Հրատարակում է դեկրետներ, կարգադրություններ, այլև քննում ու հաստատում է համապատասխան դեկրետների ու կարգադրությունների նախագծերը։

բ. Ընդհանուր ուղղություն է տալիս բանվորագյուղացիական կառավարության գործունեության։

գ. Հսկում, որ գործադրվեն ինչպես Հ. Ս. Խ. Հ. այնպես և Ա. Ս. Ֆ. Խ. Հ. և Ս. Խ. Հ. Մ. սահմանադրությունները, այնպես և Խորհուրդների Համագումարների ու Կենտրոնական Գործադիր Կոմիտեների որոշումները։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նստաշրջանները գումարում է նախագահությունը տարեկան յերեք անգամ, իսկ վերջինիս նախաձեռնությամբ և կամ Կենտգործկոմի անդամների 1/3-ի պահանջմամբ՝ նաև արտակարգ նստաշրջաններ։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նստաշրջանն ընտրում է իր Կենտր. Գործ. Կոմիտեյի նախագահությունը, ինչպես և կազմում Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ։

Կենտգործկոմների նստաշրջանների միջանկյալ շրջանում նախագահությունն է հանդիսանում օրենսդրական, գործադիր և տնօրեն բարձրագույն մարմինը։

Նախագահությունը իր գործունեության համար հաշվետու և պատասխանատու յե Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի առաջ։

Կենտգործկոմի նախագահության իրավասության յենթակա յեն հետևյալ հիմնական խնդիրները՝—

ա. Դեկրետների ու որոշումների քննությունը, հաստատումը։

բ. Վերահսկողություն, որպեսզի գործադրվեն Հ. Ս. Խ. Հ. և Ա. Ս. Ֆ. Խ. Հ ու. Ս. Խ. Հ. Մ. սահմանադրությունները և Խորհուրդների ու Կենտգործկոմների բոլոր որոշումները։

գ. Լուծումն այն բոլոր վեճերի, որ առաջանում են ինչպես կենտրոնական մարմինների իրար մեջ, նույնպես և կենտրոնական ու գավառական իշխանությունների մեջ։

դ. Ներման, կարմիր դրոշակի նշանով, ինչպես և ռազմապարգևատրման ու աշխատանքի դրոշակի շքանշանով պարգևատրելու իրավունքը։

ե. Կասեցումն ու չնջումը Ժողկոմխորհի և ժողկոմատների վորոշումների, ինչպես և չնջումն գավառական համագումարների ու գործադիր կոմիտեների վորոշումների և այլն։

Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահությունը իրավունք ունի բողոքներ տալ Ա. Ս. Ֆ. Խ. Հ. Ժողկոմխորհի դեկրետների ու վորոշումների դեմ Անդրկենտգործկոմի Նախագահության, առանց սակայն կասեցնելու բողոքարկված դեկրետների ու վորոշումների կատարումը։

Հ. Ս. Խ. Հ. կառավարչական գործերի ընդհանուր ղեկավարության համար կազմվում ե Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդ՝ վորը հանդիսանում ե գործադիր և կարգադիր մարմինը Հայաստանի Կենտգործկոմի։

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն ունի հետևյալ կազմը՝—

Նախագահ.

Նախագահի յերկու տեղակալ.

Ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահ.

Հողագործության ժողովրդական կոմիսար.

Աշխատանքի ժողովրդական կոմիսար.

Ներքին գործերի ժողովրդական կոմիսար.

Լուսավորության ժողովրդական կոմիսար.

Առողջապահության ժողովրդական կոմիսար.

Սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսար.

Ֆինանսների ժողովրդական կոմիսար.

Բանվորա-գյուղացիական Տեսչության ժողովրդական կոմիսար.

Այլև Կենտգործկոմի Նախագահության վորոշմամբ խորհրդակցական կամ վճռական ձայնի իրավունքով Անդրներքառևտրի ժողկոմիսարի լիազորն ու Արտակարգ Հանձնաժողովի Նախագահը։

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն իր բովանդակ գործունեության համար պատասխանատու և հաշվետու յե Հայկենտգործկոմի և նրա Նախագահության առաջ։

Ժողկոմխորհին առընթեր կազմվում ե Տնտեսական Խորհուրդ, վոր տալիս ե ուղղություն ՀՍԽՀ տնտեսական քաղաքականության և ղեկավարում տնտեսական կոմիսարիատների և պետական այլ տնտեսական որգանների աշխատանքը։

Վերոհիշյալ կոմիսարիատներից՝ Աշխատանքի, Ֆինանսների և Բանվորագյուղացիական տեսչության կոմիսարիատները միացյալ են և վորպես այդպիսին ղեկավարության ցուցմունքներ ստանում են ԱՍՖԽՀ համապատասխան կոմիսարիատներից։

Իսկ մյուս կոմիսարիատները հանրապետական ու անկախ են։

Յուրաքանչյուր կոմիսարին առընթեր և վերջինիս նախագահությամբ կազմվում ե կոլեգիա, վորի անդամներին նշանակում ե Ժողկոմխորհը։

Ժողկոմիսարը իրավասու յե միանձնաբար վորոշումներ կայացնել, տեղեկացնելով այդ մասին կոլեգիային, վորը միասնաբար, ինչպես և առանձին առանձին անդամները իրավունք ունեն բողոքարկելու այդ վորոշումները Ժողկոմխորհ, առանց սակայն կասեցնելու նրանց կատարումը։

Ժողովրդական կոմիսարները պատասխանատու յեն իրենց գործունեության համար Ժողկոմխորհի, Կենտգործկոմի և Կենտգործկոմի Նախագահության առաջ։

ՑԱՆԿ

Գլուխ	եջք.	յերես
I.—Քաղաքատնտեսության հիմնական գաղափարները	1–39	1
II.—Կապիտալիզմի զարգացումը մինչև ֆինանսական կապիտալի դարաշրջանը	1—19	20
III.—Ֆինանսական կապիտալն ու իմպերիալիզմը	1—30	34
IV. Պատերազմն ու կապիտալիզմի ճակատագիրը	1—20	66
V.—Տնտեսական ձևերի զարգացումը	1—38	91
VI.—Կոմմունիստական հասարակությունն ու անցման հասարակարգը	1—24	136
VII.—Ուսմունք պետության մասին	1–51	162
VIII.—Խորհրդային իշխանությունն ու խորհրդային Հանրապետության կազմակերպությունը	1—59	188
IX.—I և II Ինտերնացիոնալները	1—26	223
X.—III Ինտերնացիոնալը	1–41	248
XI.—Ռկկ (բոլշևիկների) պատմությունը	1—32	29[illegible]
XII.—Խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականության հիմունքները ռազմական ժամանակաշրջանում	1—22	329
XIII.—Նոր տնտեսական քաղաքականության ծագումն ու հիմունքները	1—16	345
Հավելված VIII գլխի.—I հավելված. Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության Սահմանադրությունը		377
Հավելված. II Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Սահմանադրությունը		387
Ցանկ		400

ԴԵՊԻ ՌԿԿ (բ) ՏԱՆՈՂ ՈՒՂԻՆ

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ—ՄԻՆՉԵՎ Ռ.Ս.-Դ.Բ.Կ. 1898 ԹՎԻ I ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

զմակերպությունները։ Ծնունդն ու զարգացումը բանվորական առաջին հեղափոխական կազմակերպությունների, վորոնք խզեցին իրենց կապերը Նարոդնիկության հե
Ռուսական Բանվորների Հյուսիսային Միությունը», վորի գլուխ եր կանգնել ատաղձագործ Ստեպան Խալտուրինը 1878 թվին ու «Հարավ-Ռուսական Բանվորական
կազմակերպված եր «Հող և Ազատություն» («Земля и Воля») կուսակցության մեջ (1876 թ.) գյուղացիական շարժում ու ապստամբություն առաջ բերելու անպտո
սակցությունների (1879 թ.) «Նարոդնայա Վոլյա» ու «Չյորնի Պերեդել»։ «Նարոդնայա Վոլյա»-ի մենամարտը ինքնակալության հետ՝ տեռորիստական գործողո
ռավարության հալածանքների շնորհիվ։
երբև վտարանդի՝ (եմիգրանտ) անցնում են արտասահման։
ություն» խմբակը՝ գլուխ ունենալով Գ. Պլեխանովին։ Խմբակը քննադատում է նարոդնիկական մանր բուրժուական սոցիալիզմը և պայքարում է բանվորական, սոցի

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ։

դյունաբերական կենտրոններում։ Մարքսիստական ու սոցիալ դեմոկրատական խմակների զարգացումը Ռուսաստանում։ Ընկեր Լենինը 1893 թ. Սամարայի խմբա
կան կենտրոններում։ Խմբակներն աճում են և սոցիալ դեմոկրատիան խմբակների մեջ պրոպագանդ անելուց անցնում է բանվորական մասսաների մեջ ագիտացի

... միությունները» անունով սոցիալ դեմոկրատական կազմակերպությունն մի շարք խոշոր քաղաքներում (Պիտերում, Մոսկվայում և այլն)։ Ընկեր Լենին

...իալ դեմոկրատական կազմակերպությունների աճումը և սրանց մեջ հաստատվող կապի զարգացումը։ Համառուսական մասշտաբով միասնական կու
...բերալ բուրժուազիայի ձեռքով)։ Հին Նարոդնիկության լիակատար անկումը։ Ընկեր Լենինի Սիբիր աքսորվելը 3 տարով։

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՔԱՂՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

III ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ

IV ՎԼ. ԻԼՅԻՉ ԼԵՆԻՆԸ

V ՄԵՆՇ...

Ռ. Ս. Դ. Բ. Կ. 1918 թ. I համագումարից մինչև 1903 թվի II համագումարը

լիբերալ բուրժուազիայի, Նարոդնիկության ու «Էկոնոմիզմի» դեմ պրոլետարիատի հեղափոխական կուսակցություն ստեղծելու համար

1. Ռ Ս Դ Բ Կ I համագումարը Մինսկում 1898 թվի մարտի 14 ին. I համագումարի աշխատանքները՝ 1) ՌՍԴԲԿ մանիֆեստի ընդունումը: 2) համառուսական մասշտաբով միասնական կուսակցության հայտարարելը, Կ. Կ.-ի ընտրությունը. Համարյա ամբողջ I համագումարի կազմի ձերբակալությունը յեվ կուսակցության ու սրա կազմակերպությունների ջնջումը. «Էկոնոմիզմի» աճումը կուսակցության շարքերում. «Էկոնոմիզմը» ցարիզմի դեմ մղվող քաղաքական կռիվը վաղաժամ է համարում յեվ պաշտպանում է բանվորների՝ կապիտալիստների դեմ մղվող

...ում
...սան-

1. Կյանքը Սիբիրի աքսորում։ Վ. Իլյիչին իր բացակայության ընտրում են Կ. Կ.-ի անդամ ու կուսակցության կենտրոնական որգանի խմբագիր։ Մի շարք գիտական աշխատություններ։ Վերադարձ աքսորավայրից 1900 թվին։ Խմբագրումն ու «Իսկրա»-յին աշխատակցելը։ Պայքար «էկոնոմիզմի» ու Նարոդնիկության դեմ։

1. Մենշևիզմ,
թյան առանձին
գոյացել. Նրա փ
գլխ Նրա Նախ
մը», վոր հրաժա
դեմ մղվող քաղա
ժերկրպագում է
րայնության առա
նում բանվորակա
դես բերելով կազ
պարիզում տնա

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0070099

A $\frac{111}{3856}$